

**ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**НАГОРНО-КАРАБАХСКАЯ РЕСПУБЛИКА**  
**THE NAGORNO-KARABAKH REPUBLIC**

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ**  
**ВЕСТНИК УНИВЕРСИТЕТА МЕСРОП МАШТОЦ**  
**MESROP MASHTOTS UNIVERSITY BULLETIN**

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հրատարակվում է Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի և Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդների որոշմամբ:  
Հրատարակվում է 2006 թվականից:

Публикуется по решению ученых советов Университета Месроп Маштоц г.Степанакерта и Ереванского государственного университета.  
Издается с 2006 года.

It is approved by Stepanakert Mesrop Mashtots University and Yerevan State University Science Councils.  
It is published since 2006.

Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու: Գիտական հոդվածների պարբերական ժողովածու:  
«Լիմուշ» հրատարակչություն, 2017 թ., 500 էջ:

ԳԼԽԱԿՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Վարդանյան Արարատ, պատմ.գիտ.թեկ., դոցենտ  
ԳԼԽԱԿՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մարգարյան Լուսինե, բան.գիտ.թեկ., դոցենտ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Նախագահ՝**

Աթոյան Կորյուն  
Աղասյան Արարատ

Ավետիսյան Պավել

Ավետիսյան Հայկ

Բարսեղյան Տարիել

Խանյան Սոկրատ

Հայրապետյան Էլեոնորա

Հովհաննիսյան Լավրենտի  
Ղարախանյան Լուսինե

Մինասյան Էդիկ

Միրզախանյան Ռուբեն  
Միրզոյան Լավրենտի  
Մկրտչյան Արթուր

Ծաղիկյան Ստեփան

Պետրոսյան Գեղամ

Պետրոսյան Վահրամ

Սարինյան Սերգեյ  
Սաֆրաստյան Ռուբեն

**Գաբրիելյան Ղոնարա**

**ՄՄՀ ռեկտոր, մանկ. գիտ.թեկ., դոցենտ**

ՀՊՏՀ ռեկտոր, տնտ.գիտ.դոկ., պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն,  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ,  
պատմ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պատվավոր վարիչ,  
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի պրոֆեսոր, բան.  
գիտ. դոկտոր

ԱրՊՀ հայոց լեզվի, գրականության և օտար լեզուների  
ֆակուլտետի դեկան, մանկ.գիտ.թեկ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ  
ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ,  
հոգ.գիտ.թեկ.

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան,  
պատմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

ՀՊՄՀ ռեկտոր, պատմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

ՀՃՇԱՀ, մանկ.գիտ.թեկ., դոցենտ

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան,  
փիլիսոփ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր

ՀՌՀ քրեական իրավունքի և քրեական դատավարության  
իրավունքի ամբիոնի վարիչ, իրավ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր.

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան  
պատմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության  
ամբիոնի վարիչ, ԵՊՀ ՀՀԻ հայ-քրդական առնչությունների բաժնի  
վարիչ, պ.գ.թ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն,

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

**ГЛАВНЫЙ РЕДАКТОР**  
**ЗАМЕСТИТЕЛЬ ГЛАВНОГО РЕДАКТОРА**

**Варданян Арарат, к.и.н., доцент**  
**Маркарян Лусинэ, к.ф.н., доцент**

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ:**

**Председатель:** **Габриелян Донара**  
**Ректор УММ, к.п.н., доцент**

Агасян Арарат	Директор Института искусств НАН РА, д. искусств.н., профессор
Аветисян Павел	Директор Института археологии и этнографии НАН РА, член-корреспондент НАН РА
Аветисян Гайк	Зав.кафедрой археологии и этнографии ЕГУ, д.и.н., профессор
Атоян Кориюн	Ректор АГЭУ, д.э.н., профессор
Айрапетян Элеонора	Декан факультета армянского языка, литературы и иностранных языков АрГУ, к.п.н., доцент
Барсесян Тариел	Почетный зав.кафедрой гражданского права ЕГУ, д.ю.н., профессор
Караханян Лусине	Кафедра педагогики и психологии АрГУ, к.псх. н., доцент
Минасян Эдик	Декан факультета истории ЕГУ, д.и.н., профессор
Мирзаханян Рубен	Ректор АГПУ, д.и.н., профессор
Мирзоян Лаврентий	НУАСА, к.п.н., доцент
Мкртчян Артур	Декан факультета социологии ЕГУ, д.филос.н., профессор
Оганесян Лаврентий	Член-корреспондент НАН РА
Петросян Ваграм	Зав.кафедрой международных отношений и дипломатии ЕГУ, руководитель отдела армяно-курдских отношений ИАИ, к.и.н., доцент
Петросян Гегам	Декан факультета международных отношений ЕГУ, д.и.н., профессор
Саринян Сергей	Академик НАН РА
Сафрастян Рубен	Директор Института востоковедения НАН РА, академик НАН РА
Цагикян Степан	Зав.кафедрой уголовного права и уголовно-процессуального права РАУ, д.ю.н., профессор
Ханян Сократ	Профессор кафедры литературы и журналистики АрГУ, д.ф.н.

**EDITOR-IN-CHIEF**  
**DEPUTY EDITOR-IN-CHIEF**

**Ararat Vardanyan, Candidate of Historical Sciences, Docent**  
**Lusine Margaryan, Candidate of Philology, Docent**

**EDITORIAL BOARD**

**Chairman:** **Donara Gabrielyan**  
**MMU Rector, Candidate of Pedagogic Sciences, Docent**

Ararat Aghasyan	Director of Institute of Arts of NAS RA, Candidate of Art Criticism
Koryun Atoyan	Rector of ASUE, Doctor of Economic Sciences, Professor
Pavel Avetisyan	Director of Institute of Archaeology and Ethnography of NAS RA, Correspondent member of NAS RA
Hayk Avetisyan	Head of Chair of YSU Archeology and Ethnography, Doctor of Historical Sciences, Professor
Tariel Barseghyan	Honoured Head of YSU Civil Law Chair, Doctor of Law, Professor
Eleonora Hayrapetyan	Dean of ASU Armenian Language, Literature and Foreign Languages Faculty, Candidate of Pedagogic Sciences, Docent
Lavrenti Hovhannisyan	Correspondent member of NAS RA
Sokrat Khanyan	Professor Chair of ASU Literature and Journalism, Doctor of Philology
Lusine Gharakhanyan	ASU Pedagogy and Psychology Chair, Candidate of Psychological Sciences, Docent
Edik Minasyan	Dean of the YSU Faculty of History, Doctor of Historical Sciences, Professor
Ruben Mirzakhanyan	ASPU Rector, Doctor of Historical Sciences, Professor
Lavrenti Mirzoyan	NUACA, Candidate of Pedagogy, Associate Professor
Artur Mkrтчyan	YSU Sociology Faculty Dean, Doctor of Philosophy, Professor
Gegham Petrosyan	Dean of the Faculty of International Relations, Doctor of Historical Sciences, Professor
Vahram Petrosyan	Head of the Chair of International Relations and Diplomacy, Head of the Department of Armenian - Kurdish Relations of IAS, YSU, Candidate of History, Associate Professor
Sergey Sarinyan	NAS RA Academician
Ruben Safrastyan	Director of NAS RA Institute of Oriental Studies, NAS RA Academician
Stepan Tsaghikyan	Head of RAU Criminal Law and Criminal Procedure Law Chair, Doctor of Law, Professor

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ,**  
**ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԲԱՂԱԲԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,**  
**ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ**

**«ՂԱՐԱԲԱՂ» ԿՈՄԻՏԵԻ ԶԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ\***

**Հրանտ Աբրահամյան**

**Բանալի բառեր՝** երկրաշարժ, փրկարարական աշխատանք, աղետի գոտի, մամուլ, տեղեկություն հավաքել, ղեկավար մարմիններ, ակտիվիստների հետապնդում, բռնություններ:

1988 թ. դեկտեմբերի 7-ի ժամը 11 անց 41 թուպեին աշխարհացունց երկրաշարժը մեծ և ավերիչ հետևանք թողեց Խորհրդային Հայաստանի վրա: Մի քանի թուպե անց ամբողջ աշխարհն իմացավ այդ մասին: Բոլոր տեղերից իրենց ցավակցությունն էին հայտնում և օգնության ձեռք մեկնում ողբերգության մեջ գտնվող հայ ժողովրդին: Տարերային աղետն ընդգրկել է ավելի քան 700 հազար բնակչությամբ տարածք: Դեկտեմբերի 9-10-ին Հայաստանում, իսկ 10-ին ամբողջ երկրում սուգ հայտարարվեց: Դեկտեմբերի 8-ին Իրապարակվեցին Հայկոմկուսի կենտկոմի, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի դիմումը և հայտարարությունը հանրապետության բոլոր աշխատավորներին: Երկրաշարժի հետևանքները վերացնելու համար ստեղծվում է կառավարական հանձնաժողով, որը կուսակցական և կառավարական մարմինների հետ միասին անհրաժեշտ միջոցներ էր ձեռնարկում փրկարար աշխատանքներ կազմակերպելու և տուժածներին օգնություն ցույց տալու համար: Ստեղծվում է նաև ԽՍՀԿ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնաժողով՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Հ. Ի. Ռիժկովի գլխավորությամբ: Իր այցելությունն ԱՄՆ ընդհատեց ԽՍՀԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ.Ս. Գորբաչովը և վերադարձավ, իսկ արդեն դեկտեմբերի 10-ին աղետի գոտում էր:

Այդ ժամանակ ի նչ էր տեղի ունենում Երևանում: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի («Ղարաբաղ») անդամները փրկարարական լայն աշխատանք էին ծավալել: Երկրաշարժի օրը կոմիտեականները գրողների միության շենքում երեք սենյակ էին զբաղեցրել, ստեղծել շտաբ և սահմանել շուրջօրյա հերթապահություն, որտեղից հրահանգներ էին ուղարկում իրենց ենթակա կոմիտեներին, կապեր հաստատում բազմաթիվ կազմակերպությունների և հիմնարկությունների հետ:

Կոմիտեականներն այդ օրերին հանրահավաք, գործադուլ կամ այլ բնույթի պահանջեր չէին կարող առաջ քաշել: Համբարձում Գալստյանը հետագայում՝ 1989 թ. ապրիլի 18-ին, Բուտիրկայում գրած «Երկրաշարժը և Ղարաբաղյան շարժումը» աշխատանքում նշել է, որ «Ղարաբաղյան շարժումը միառժամանակ մոռացնել տվեց Արցախի և մնացած բոլոր այլ հիմնահարցերը»: Նա վկայում է, որ «դեկտեմբերի 8-ի առավոտյան կոմիտեն դիմել է հանրապետության ղեկավարությանը՝ առաջարկելով նրան տնօրինել շարժման տրամադրության տակ եղած բոլոր ուժերն ու հնարավորությունները, սակայն այս, ինչպես նաև այլ բնույթի հետագա բոլոր դիմումները ղեկա-

\* Հոդվածն ընդունվել է 08.12.16:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՍՀ պատմության ամբիոնը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

վարությունն անպատասխան թողեց» [1]: Չնայած մերժմանը՝ շտաբում հավաքում էին հազուստ, սննդամթերք, դեղեր և այլ անհրաժեշտ իրեր: Բնակչությունը խմբերով գալիս էր շտաբ՝ տեղեկություններ համալու երկրաշարժի գոտուց: Կոմիտեականները նաև կենտրոնացնում էին ավտոմեքենաներ, հավաքագրում ջոկատներ՝ աղետի գոտի ուղարկելու համար: Նրանց արածը մի կաթիլ էր օվկիանոսում: Մինչդեռ աղետի գոտում հսկայական աշխատանքներ էին պահանջվում:

1988 թ. դեկտեմբերի 8-ին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն հանդես եկավ երկու հայտարարությունով, որոնցից մեկը պահանջում էր վերացնել պարետաշին ժամը Երևանում, որը մտցվել էր նոյեմբերի 25-ին, անհապաղ փակել Հայկական ատոմակայանը, Ադրբեջանից Հայաստան բռնագաղթածների մի մասին տեղավորել Լեռնային Ղարաբաղում: Մյուսում՝ դիմելով ողջ աշխարհի երկրների կառավարություններին, հասարակական կազմակերպություններին և բարի կամքի տեր մարդկանց, ուժեր պատրաստակամություն էին հայտնել նյութական օգնություն ցույց տալ Հայաստանի աղետյալներին, խնդրվում է հրաժարվել ԽՍՀՄ Արտաքին առևտրի բանկին տարադրամ փոխանցելուց և առաջարկվում է Եվրոպայում ու Ամերիկայում ստեղծել օգնություն կազմակերպող երկու կենտրոն[2]: Այդ փաստաթղթերում պարզորոշ երևում է կոմիտեականների կողմից ընդհանուր իրավիճակի ոչ ճիշտ գնահատում:

Երկրի առաջին դեմքի՝ Մ. Գորբաչովի երևալը Լենինականում և Երևանում ժողովուրդը դիմավորեց ոչ բարեհաճ: Երբ բնակչությունը նրան ուղղեց Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հարցեր, նա զարմացավ: Կենտրոնական և Հայաստանի հեռուստատեսության թղթակիցների հետ դեկտեմբերի 11-ին ունեցած հարցազրույցում նա պատմում է. «Երեկ Երևանում ինձ հարց տվեցին, թե ինչպիսին կլինեն հարաբերությունները, մենք ինչպես երկխոսություն կհաստատենք ոչ պաշտոնական կազմակերպությունների հետ: Նորից Ղարաբաղի թեման... Եվ առաջին հերթին ասացի՝ կանգ առեք... Այժմ այսպիսի դժբախտություն է, ուր ամբողջ երկիրը, ամբողջ աշխարհն է տազնապում նրա համար, ինչ տեղի է ունեցել Հայաստանում, ինչ պատահել է հայ ժողովրդի հետ...»: Այս անդրադառնալով Ղարաբաղյան հիմնախնդրին նշում է. «Բայց գիտեք, այժմ Ղարաբաղի թեման օգտագործում են անազնիվ մարդիկ, քաղաքական դեմագոգները, արկածախնդիրները, ավելին՝ կաշառակեր հանրությունը... Այստեղ ստեղծել են սև բաձկոնավորներ, սպիտակ բաձկոնավորներ, մուրուքավորներ՝ թե՛ Ադրբեջանում և թե՛ Հայաստանում: Ճնշում են գործադրում դեպուտատների վրա, ճնշում են գործադրում կառավարության վրա... Ես կարծում եմ նրանք չեն խուսափի պատասխանատվությունից: Մենք արդեն ձեռնամուխ ենք եղել այդ գործին, այն կհասցնենք մինչև վերջ... Իսկ Ղարաբաղի պրոբլեմը կգրավի իր տեղը, որպիսին այն պետք է լինի» [3]: Մ. Գորբաչովը չթաքցրեց, որ պատասխանատվության կենթարկվեն «քաղաքական դեմագոգները, արկածախնդիրները... կաշառակեր հանրությունը»: Երկրի ղեկավարի այդ հայտարարությունը դատարկ խոսք չէր: Հենց այդ օրն էլ նոր պարետ նշանակված գեներալ-լեյտենանտ Ա. Մ. Մակաշովը գրահամեքենաների և մի քանի հազար սպառազեն զինվորների, դեսանտային զորամիավորումների օգնությամբ գորղների տանը ձերբակալեց Վազգեն Մանուկյանին, Լևոն Տեր-Պետրոսյանին, Բաբկեն Արարքցյանին, Սամվել Գևորգյանին և Ալեքսան Հակոբյանին: Այդ օրը ձերբակալվում է 22 մարդ, որոնք ենթարկվում են 30 օրվա վարչական կալանքի: Նրանք ձերբակալվել էին իբրև «հատուկ գոտու և պարետային ժամի ռեժիմը խախտելու» համար, բայց թե ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ պայմաններում էր կատարվել այդ չարագուշակ «խախտումը», դեռևս մնում է գաղտնիք: Այդ անօրեն ձերբակալություններից փողոց դուրս եկած բնակչությունը Լենինի և Հոկտեմբերյան անունը կրող պողոտաներում ներքին ծառայության մեքենայացված զորամասերի կողմից ենթարկվեցին

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

դաժան ծեծի: Շարժման հասեցին հորինվում էին նորանոր «անբարոյական մեղադրանքներ» [4]: Դրանում առաջնությունը պատկանում էր «Սովետական Հայաստանե թերթին, որը հայտարարում է, թե կոմիտեականները և ոմանք «փորձում են համաժողովրդական վշտից քաղաքական կապիտալ ստեղծել», «ծգտում են հանրապետության աշխատավորներին ցույց տալ, որ իրենք և միայն իրենք են գլխավոր դերը խաղում երկրաշարժի հետևանքների վերացման գործում»: Թերթը շարունակում է, որ կոմիտեականներն իրենց աշխատանքին պատկառելի տեսք տալու համար շտաբ են ստեղծում գրողների միության շենքում՝ զբաղեցնելով երեք սենյակ: Թերթն այնուհետև կեղծում է, թե Համբարձում Գալստյանը «կոչ է անում չենթարկվել հասարակական կարգ ու կանոնը պահպանող ուժերին», իսկ Աշոտ Մանուչարյանը ասում է՝ «Մենք կստիպենք մեզ վրա կրակել», Վանո Սիրադեղյանն էլ հորդորում է բանակցություն չվարել զինվորականների հետ[5]:

«Ղարաբաղ» կոմիտեի դեմ ոչ միայն հանրապետական մամուլն էր ստեր հորինում և վարկաբեկում, այլև կենտրոնականը: «Պրավդա», «Իզվեստիա», «Սոցիալիստիչեսկայա ինդուստրիա», «Կրասնայա զվեզդա», «Սովետական կուլտուրա» և այլ կենտրոնական թերթեր ու լրատվամիջոցներ կոչ էին անում հեռու մնալու կոմիտեականներից: «Պրավդա»-ի դեկտեմբերի 16-ի համարում թերթի թղթակից Միրոսլավ Բուժկովիչը «Մարտահրավեր բանականությանը և պատվին» հողվածում հայտարարում է, թե «Ղարաբաղ» կոմիտեի պարագլուխները «հանդես են գալիս ընդդեմ հանրապետության և միութենական կառավարությունների բոլոր գործողությունների», փորձում են ցույց տալ, թե իբրև «հենց իրենք են կրում հասարակ մարդկանց հոգսերի գլխավոր ծանրությունը»: Մ. Բուժկովիչը գրում է, թե «Ղարաբաղ» «կոմիտեի պրոպագանդաները... Կոմիտեի անդամները ժողովրդի համար «անհանգստացած» լույս են ընծայում ինֆորմացիոն բյուլետեններ, դիմումներ, խնդրագրեր և ուղարկում ՄԱԿ: Ահա այսպես է թխվում «Ղարաբաղ» կոմիտեի պարագլուխների աշխատանքի «ցուցամուլությունը», պարագլուխներ, որոնք փորձում են ապակողմնորոշել հասարակական կարծիքը»: Իսկ «ժամանակ» հաղորդումը գերազանցում էր բոլորին: Դեռևս ազատության մեջ գտնվող Աշոտ Մանուչարյանը, հանդես գալով «Ինչպես այդ եղավ» հողվածով, պատասխանում է այդ հերյուրանքներին, բացատրում է, որ երկրաշարժի օրը Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի համարյա բոլոր անդամները մեկնել են աղետի վայրը: Վերադառնալուց հետո նույն երեկոյան գրողների տանը ստեղծում են շտաբ աղետի շրջանում շարժման մասնակիցների աշխատանքները համակարգելու համար: Աշոտ Մանուչարյանը նշում է, որ իրենք այդ ժամանակ իրենց պատկերացնում էին կառավարական հանձնաժողովի օգնականներ: Կապվում են կառավարության հետ և պայմանավորվում իրենց գործողության մասին: Սակայն, ինչպես նշվել է, դեկտեմբերի 8-ի երեկոյան պարզ է դառնում, որ աղետի գոտում աշխատանքների կենտրոնացված կազմակերպման մասին խոսք լինել չէր կարող, որովհետև հարյուրավոր ձեռնարկություններ իրենց շարասյուները տեխնիկայով, մեքենաներով, մարդկանցով ուղարկվել են աղետի վայրերը, սակայն տեղում աշխատանքները կազմակերպող չկար: Ըստ Աշոտ Մանուչարյանի՝ երկրից և աշխարհի բոլոր ծայրամասերից եկած օգնությունը ստեղծված քառսի պատճառով չէր հասնում այնտեղ, ուր անհրաժեշտ էր: Շատ դեկավարներ բացարձակ անընդունակ էին դեկավարելու այդ վիճակը: Ելնելով այդ ամենից՝ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն իր տեղական կազմակերպությունների միջոցով լայն աշխատանք է ծավալում, կազմակերպում է կամավորական ջոկատներ, ամեն օր միջին հաշվով 60-70 ավտոբուս կամավորներ է ուղարկում աղետի շրջան, դուրս բերված բնակիչներին տեղավորում է գրողների տանը հերթագր-

ված բնակիչների տներում: Հարյուրավոր կանայք դեկտեմբերի 10-ին հավաքվել էին գրողների տան մոտ՝ իրենց հուզող հարցերի պատասխանները իմանալու: Շրջանի պարետի հետ համաձայնեցնելով՝ Աշոտ Մանուչարյանը ելույթ է ունենում հավաքվածների առաջ և տալիս մի շարք հարցերի պատասխաններ: Մարդիկ դժվարությամբ էին ցրվում, տեղեկությունների կարիք ունեին: Այնուհետև պատմում է շրջանի պարետի կոպտությունների ու անտակտության մասին: Ազատ մնացած կոմիտեականները Թատերական հրապարակում հավաքված մի քանի հազար մարդկանցից պահանջում են հեռանալ և ամեն կերպ խուսափել բանակի հետ ընդհարումից: «Ռոսիա» կինոթատրոնի մոտ մարդկանց ճանապարհը փակում են տանկերը: Սակայն բնակչության երթը շարունակվում է: Երկաթուղային կամուրջի մոտ անսպասելիորեն հարձակվում են զինվորականները: Տեղի է ունենում ընդհարում զինվորների մեղքով: Եվ այդ ամենը բարդում են կոմիտեի զլխին: Դրա համար Ա. Մանուչարյանը մեղադրում է հանրապետության դեկավարությանը:

Ասվել է, որ երկրաշարժի առաջին օրվանից կոմիտեականներն օգնում էին փրկարարական աշխատանքներին. այդ օրերին շարժումը որևէ միտինգ չի կազմակերպել, դեկտեմբերի 7-ից հետո դարաբաղյան հարցով որևէ պահանջ առաջ չի քաշվել, կոմիտեն երբեք էլ դեմ չի եղել երկրաշարժից տուժածներին երկրի առողջարանները հանգստի ուղարկելուն: Այդ ժամանակ ի՞նչ իշխանության ձգտում. դա լիովին հորինվել է: Աշոտ Մանուչարյանը պնդում և հավատացնում է, որ մեր ժողովուրդը «ոտքի կկանգնի, նորից կդրսևորի իրեն՝ որպես արդարության, մարդասիրության և ազատամտության ճանապարհին ամուր կանգնած մի անպարտելի համախումբ հանրություն» [6]:

Այստեղ կոպիտ սխալ է թույլ տրվել Հայկոմկուսի կենտկոմի և խորհրդային իշխանության դեկավար մարմինների կողմից, անշուշտ, ոչ առանց միութենական իշխանավորների ինսցուբյան: Օրինակ՝ ինչո՞ւ չօգտագործվեց կոմիտեականների ուժը, չընդունեցին նրանց առաջարկությունը, չընդգրկեցին կառավարական հանձնաժողովում: Փորձեցի այդ հարցի պատասխանը գտնել Սուրեն Հարությունյանի «Անցյալի և ներկայի մասին» գրքում, սակայն իզուր: Այդ, անհրաժեշտ էր կոմիտեականների բոլոր ուժերն ու հնարավորությունները օգտագործել, այլապես շուրջ վեց ամիս նրանք մուկոսյան բանտերում չէին գտնվի և մարդկային այդքան հոգեկան տառապանքներ չէին կրի: Թե՛ Մ. Գորբաչովին և թե՛ մյուս պաշտոնյաններին ուղղված հարյուրավոր նամակներ մնում էին անպատասխան [7]: 1989թ. ամանորին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, դիմելով հայրենակիցներին, կոչ է անում հավատարիմ մնալ Ազատության հրապարակում տրված երդմանը. Պայքար, պայքար մինչև վերջ: Նաև ասված է՝ «Մենք ինչպես Ավարայրում և Սարդարապատում, այնպես էլ հիմա պետք է միավորվենք ու հաղթահարենք, որովհետև միասնական և նպատակամղված ժողովուրդն անպարտելի է...» [8]:

Կոմիտեականների և շարժման ակտիվիստների հետապնդումը շարունակվում է: Թե՛ միութենական և թե՛ հանրապետական դատախազությունների կազմակերպած խմբերը որոնում էին նրանց: Ադրբեջանի մամուլը հաղորդում է, թե Իգոր Մուրադյանը ձերբակալվել է Կիրովաբադում: Դա բացարձակ սուտ էր: Իգոր Մուրադյանի մայրը 1988 թ. դեկտեմբերի 18-ին ԽՍՀՄ Կենտկոմ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին ուղարկած հեռագրում հաղորդել է, որ իր որդի Իգոր Մուրադյանին ձերբակալել են ոչ թե Կիրովաբադում, այլ Երևանի իր տանը, դեկտեմբերի 15-ին՝ ժամը 22-ին, և տարել անհայտ ուղղությամբ [9]:

Մինչև 1989 թ. հունվարի 7-ը շարժման առաջամարտիկներից ձերբակալվել էին

12 հոգի, որոնցից «Ղարաբաղ» կոմիտեի անդամ չէր Խաչիկ Ստամբուլյանը[10]: Ձերբակալությունները կատարվել են առանց որևէ պատճառաբանության և դատախազի սանկցիայի, առանց հարազատներին տեղեկացնելու և նրանց գտնվելու տեղի մասին հայտնելու: Դա քաղաքական պատվեր էր, հայ ժողովրդին նսեմացնելու անմիտ քայլ: Այդ գործողության համար հայ պաշտոնյաները կարող էին իրենց համաձայնությունը չտալ: Սակայն ՀԽՍՀ դատախազ Վ. Նազարյանի 1988 թ. հունվարի 3-ին ստորագրած թ. 6 հրամանի համաձայն՝ իբր դատախազության տեղական մարմինները, մանավանդ խառն բնակչություն ունեցող շրջաններում, ոչինչ չեն արել արձակված «Ղարաբաղ» կոմիտեի գործունեության դեմ, որոնց ակտիվության պայմաններում թույլատրվել են բռնություններ, ջարդեր, հրդեհներ, սպանություններ: Այդ հրամանով աշխատանքից ազատվում է Արթուրյանի շրջանային դատախազ Վ. Վասիլյանը[11]:

Երկրի բարձր պաշտոնյա իշխանավորները, մամուլը, հեռուստատեսությունը և լրատվության մյուս միջոցները շարունակում էին կեղծել, որ իբր կոմիտեականները և շարժման առաջնորդները հայերին գրգռել են աղրբեջանցիների դեմ, փորձել են իշխանությունը գրավել, նրանք հայ ժողովրդի թշնամիներն են, կաշառակերներ, կողոպտիչներ, որոնք երկրաշարժի տարածքում զբաղվել են դիակապուտությամբ, դիտավորյալ խանգարել փրկարար աշխատանքները, ցույցեր են կազմակերպել, ծեծել զինվորներին: Կոմիտեականներին մեղադրում էին նաև չթույլատրված միտինգներ կազմակերպելու, փողոցային անկարգություններ, ազգամիջյան թշնամանք հրահրելու մեջ: Ձերբակալված կոմիտեականների կանայք վերադաս իշխանություններ ուղարկած իրենց բողոքում ժխտելով այդ ամենը՝ շեշտում են, որ «Ղարաբաղ» կոմիտեի իրենց ամուսինները ձգտել են ընդառաջելու Լեռնային Ղարաբաղի բնակչությանը և սահմանադրական, խաղաղ եղանակով հասնելու Հայաստանի ու Ղարաբաղի վերամիավորմանը, նրանք նաև օգնել են Աղրբեջանից բռնազաղթվածներին, տեղահանվածներին, ինչպես և երկրաշարժից տուժածներին: Սա է միակ ճշմարտությունը...

Հիմա մեր ամուսինների նկատմամբ պատրաստում են դատական ներկայացում, հաշվեհարդար: Մեզ ծանոթ են մեր երկրում կատարված այդպիսի շատ ներկայացումներ ու հաշվեհարդարներ, որոնց զոհ են դարձել տասնյակ միլիոնավոր անմեղ մարդիկ[12]:

Ազատագրական շարժման պայքարի առաջամարտիկների ձերբակալության դեմ իրենց ձայնը բարձրացրին հազարավոր մարդիկ, որոնց շարքերում կարելի է առանձնացնել գրող, սոցիալիստական աշխատանքի հերոս, ՍՍՀՄ ժողովրդական դեպուտատ Սերո Խանգադյանին, որն իր բողոքը դեկտեմբերի 18-ին ուղարկեց «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությանը: Գրող-հրապարակախոսը համոզված էր, որ իր բողոքը չի հրապարակվի, չնայած շատ ցանկալի կլիներ: Նա խարազանում է թերթի «Դժբախտության ժամ և պատասխանատվության ժամ» խմբագրականը, որտեղ փորձ է արվում վարկաբեկել, մերժել հայ ժողովրդի համար ոչ պակաս մի ցավ՝ Լեռնային Ղարաբաղը Աղրբեջանական ԽՍՀ-ի ստրուկտուրայից փրկելու, այդ հանրապետության հայկական շրջաններից աղրբեջանցի շովինիստների ձեռքով բռնությամբ իր հող ու տնից վտարված 360 հազար հայերի ողբերգության ցավը»: Գրողը հարցնում է, թե ինչո՞ւ մոռանալ մի քանի ամիս առաջ մեր ազգի գլխին սրով ու հրով թափված աղետը՝ Սունգայիթի, Մինգեչաուրի, Խոջալուի, Կիրովաբադի հարյուրավոր անմեղ հայերի կոտորածը..., Շուշի քաղաքից հայ մարդկանց վտարումը...»: Ապա անդրադառնալով «Ղարաբաղ» կոմիտեին՝ նշում է, թե իբր նրանք «փորձում են համաժողովրդական վշտից քաղաքական կապիտալ ստեղծել»: Այսպես մտածողները հեռու են ժողովրդական ցավը տեսնելուց: Հարցնում են ձեզ՝ որն է այդ «քաղաքական կապիտալը»: Չեք



## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ասում: Դրանից էլ ձեր այս բնորոշումը ստահող ու անհիմն լինելով, թշնամական է»: Ս. Խանգաղյանը չի ժխտում, որ կոմիտեականները, որոնք «10 ամիս կրակի մեջ այրվում են», անշուշտ, սխալներ են թույլատրում: Եվ փոխանակ այդ մասին հստակ ասելու, դուք նրանց «գող եք հռչակում, ուրիշի հաշվին ապրող: Ո՛ր է ձեր խիղճը», գինվորներն ի՞նչ իրավունքով են ներխուժում գրողների տունը, կոմիտեականներն այնտեղ ի՞նչ վատ բան են արել: Կոմիտեականների մասին ձեր տպագրածները երբեք էլ հարիր չէ հայ կոմունիստների օրգանում»[13]: Իսկ վերջում՝ «Երբեք էլ հայ ժողովրդի ազգային, մարդկային արժանապատվությունը այսքան ոտնահարված չի եղել, որքան արվում է այս մեզ համար ողբերգական օրերին»[14]:

Այդ հարցում Սերո Խանգաղյանը միակը չէր: Արխիվներում պահվում են նման հարյուրավոր նամակ-բողոքներ: Հայրենական պատերազմի և աշխատանքի վետերան, Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Ռաֆայել Ղազարյանը 1988 թ. դեկտեմբերի 19-ին Ս. Գորբաչովին գրած ծավալուն նամակում նշում է, որ Երևանից նրա թռչելուց առաջ տված հարցազրույցից հայ ժողովուրդը հուսահատության դառնություն և արդարադատության վերջին հույսերի անկում է ապրում: Այդ մեծ գիտնականը նշում է, որ շարժման առաջամարտիկները իշխանության չեն ձգտել, նրանք կանգնած են եղել բյուրոկրատիային, կաշառակերներին մերկացնելու պատվանդանի վրա: Որոշ ընտրական օկրուգներում կոմիտեականների ազնիվ պայքարում տարած հաղթանակի համար ժողովրդական մասսաները նրանց սիրում և հարգում են:

1988 թ. դեկտեմբերի 26-ին տեղի ունեցած Հայաստանի Սովետական հանրազատարանի աշխատողների ընդհանուր ժողովը նշել է, որ Ղարաբաղյան շարժման ակտիվիստներին հետապնդում են, վարկաբեկում, այն դեպքում, երբ ոչ շատ առաջ կոմիտեի ղեկավարները հանրապետության ղեկավարության հետ բազմիցս համատեղ հանդես են եկել շարժման ակտիվիստների կողմից իրավիրված միտինգներում: Իսկ դա առաջ է բերել ժողովրդի վրդովմունքը: Ղարաբաղյան շարժման, հայկական կոմիտեի ղեկավարները իշխանության ձգտող ավանտյուրիստներ չեն, այլ համոզված հայրենասերներ բառի ամենալայն իմաստով: Ժողովուրդը պահանջում է դադարեցնել ակտիվիստների նկատմամբ իրագործվող բռնությունները և պահպանել օրինականությունը [15]:

Ֆիզիկայի ինստիտուտի աշխատավորների 1989 թ. հունվարի 18-ին տեղի ունեցած կոնֆերանսում նշվել է, որ միանգամայն անհասկանալի է, թե ինչու «Ղարաբաղ» կոմիտեի պահանջները բավարարելու համար սկսված շարժման մասնակիցները ձերբակալվում են: Հայտարարված երեսուներորդ փուլի վարչական ձերբակալումը դարձել է բանտային կալանավորում՝ առանց որևէ մեղադրանք ներկայացնելու: Լայն հասարակությունն այդ մասին տեղեկացված չէ: Ապա նշվում է, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները հայ ժողովրդի լայն շրջանների ներկայացուցիչներ են, նրանք Հայաստանի բնակչության մեծամասնության շահերի և սպասումների արտահայտիչ են, ԼՂԻՄ հայերի սահմանադրական պահանջների պաշտպան: Հայ ժողովրդի ողբերգության օրերին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները գտնվել են առաջին օգնություն ցույց տվողների շարքերում: Հնարավոր է, որ կոմիտեականները իրենց գործունեության ընթացքում թույլ են տվել սխալներ: Սակայն «Ղարաբաղ» կոմիտեի նկատմամբ կիրառվող գործողությունները ֆիզիկայի ինստիտուտի կոլեկտիվը գնահատում է որպես հակաժողովրդական և Հայաստանի համար հակաբարոյական ու ողբերգական: Կոնֆերանսը պահանջում է անհապաղ ազատել «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին և շարժման ակտիվիստներին [16]:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Համանման որոշումներ են ընդունել հանրապետության հարյուրավոր հասարակական կազմակերպություններ, հիմնարկ-ծեռնարկություններ, ընկերություններ, Երևանի «Հիդրոապրատուրա», «Քարի և սիլիկատների» զԱՄ, «Նեյրոն» ԱՄ, Հնագիտության և ազգագրության, Արևելագիտության, Լեզվի, Քիմիական ֆիզիկայի, ֆիզիոլոգիայի ինստիտուտներ, Էսթետիկական դաստիարակության հանրապետական կենտրոն, Էլեկտրատեխնիկական տեխնիկում և այլն: Շատ կազմակերպություններ ԽՍՀՄ - Պերագույն խորհրդի ընտրությունների համար պատգամավորներ են առաջադրում կոմիտեականներին: Դրանցից են Մեխանիկայի ինստիտուտը, Քիմիական ֆիզիկա, Փորձարարական բիոլոգիա, Բազալտ ԱՄ, «Ազատ» զԱՄ և այլն[17]: Սակայն Երևանի քաղկոմի բյուրոն մերժում է այդ բոլոր առաջարկությունները:

«Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալումը երբեք էլ իրավիճակը չփոխեց հանրապետությունում, ընդհակառակը, ավելի ծանրացրեց: 1989 թ. ապրիլի 28-29-ը տեղի ունեցած Երևանի քաղկոմի 2-րդ պլենումում ունեցած իր ելույթում Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ Լենդրուշ Խուրշուդյանը նշել է, որ եթե շատերը մտածում են, թե դեկտեմբերին, երբ «ձերբակալվել են «Ղարաբաղ» կոմիտեի անդամները, վիճակը քաղաքում կարգավորվել է, ապա նրանք սխալվում են... Հանրապետության ղեկավարությունը խորշում է մտավորականությունից»[18]:

Հանրապետությունում հարյուրավոր կազմակերպություններ, հիմնարկություններ, ընկերություններ իրենց ժողովներում քննարկում էին բանտված կոմիտեականների հարցը և իշխանություններից պահանջում նրանց անհապաղ ազատ արձակել: Այդ ժամանակ Մոսկվան վարում էր հետևյալ քաղաքականությունը. չպետք է լինի հաղթող և պարտվող, հավասարակշռություն պահել երկու հանրապետությունների միջև: Օրինակ, երբ դեկտեմբերին ձերբակալություններն սկսվեցին Հայաստանում, նույնը կատարվում էր նաև Ադրբեջանում: «Դրոշակի» հաղորդման համաձայն՝ այդ ժամանակ Ադրբեջանում պաշտոնազրկվել և ձերբակալվել է 2500 մարդ [19]:

Մ. Գորբաչովի ասածներից ոգևորվել էին Հայաստանի իշխանավորները: Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ս. Հարությունյանը դեկտեմբերի 17-ին հեռուստատեսությամբ նույնպես բացասաբար է արտահայտվել կոմիտեականների հասցեին, և վարկաբեկել շարժման առաջամարտիկներին: Նա հայտարարում է, որ Ղարաբաղի հարցի արդարացի լուծման պահանջների քողի ներքո «կոմիտեականները բացահայտ պայքար են մղում իշխանության համար» և կոչ է անում «պատասխանատվության կանչել բոլոր նրանց, ովքեր գործում են ժողովրդին հակառակ» [20]: Դեկտեմբերի 19-ին Երևանում տեղի ունեցած մամուլի ասուլիսում կոմիտեականների մասին զրպարտիչ արտահայտություններ է թույլ տվել նաև ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովը [21]: 1989 թ. հունվարի 7-ին Երևանի քաղկոմի հաշվետու-ընտրական կոնֆերանսում ունեցած իր ելույթում Ս. Հարությունյանը մի անգամ ևս կրկնում է կոմիտեին տված իր գնահատականը. «Այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեի քաղաքական արկածախնդիրները ոչ մի միջոցից չէին խորշում, օգտագործում էին ապակողմնորոշումն ու հերյուրանքը, չհամաձայնողներին վարկաբեկում էին որպես «ազգի դավաճանների», ճնշում էին գործադրում դեպուտատների վրա, պիկետներ էին կազմակերպում գործարանների մուտքի մոտ, շրջափակում էին վարչական շենքերը... Բանը հասել էր նրան, որ պայթուցիկ նյութեր և զենքեր էին պահեստավորում: Իրենց բնակարաններից հեռացնում էին մարդկանց:

Հարկավոր էր պարզորոշ տեսնել Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի և «Ղարաբաղ»

ինքնակոչ կոմիտեի պարագլուխների պրոպոկանդիոն խաղերի միջև ընկած անջրպետը...»[22]:

Հունվարի 17-ին Հայկոմկուսի կենտկոմի պլենումում Ն. Ռիժկովը հայտարարել է, թե «Ղարաբաղ» կոմիտեի ակտիվիստները իբրև «ճակատագրական դեր են խաղացել ազգամիջյան կրքերը բորբոքելու, ազգային հողի վրա անկարգություններ կազմակերպելու, հայրենի տներից միանգամայն հազարավոր անմեղ քաղաքացիներ արտաքսելու, հանրապետությունում սոցիալ-քաղաքական լարվածություն բորբոքելու գործում»:

Ոչ միայն պաշտոնյաները, այլև հասարակության շրջաններում կային մարդիկ, որ չէին զլանում վարկաբեկել կոմիտեականներին: Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ամբիոնի վարիչ Կ. Ազատյանի 1989 թ. հունվարի 24-ին ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ս. Հարությունյանին ուղարկած «Բաց նամակում», գրում է, թե «... սաղրիչների վրա միայն մատ թափ տալը քիչ է, բռնուցք պետք է թափահարել, նրանց ոչ միայն աստամները, զուլխները պետք է ջարդել, որ Ղարաբաղի տեղն էլ մոռանան»[23]: Զարմանալի է այդ ապիկարի դատողությունը բռնագաղթված հայրենակիցների մասին, որոնց բնորոշում է «հումորի զգացմունք չունեցող խղճուկ վախկոտներ», որոնք «լուրջ ընդունելով մեր բարեկամների «մահ հայերին» կատակ լոզունգները, տուն-տեղ թողած, ոտաբոբիկ, սարսափահար եկել լցվել են մեր հայրենիքը: Դրանց բոլորին, մինչև վերջին մարդը, պետք է դուրս վռնդել Հայաստանից, թող գնան և իրենց վախկոտության համար պատասխան տան այնտեղ, որտեղ գրանցված են: Մեր քաջարի ղեկավարների իշխանության տակ վախկոտներ չպետք է ապրեն»[24]: Եզրակացությունը թողնում ենք ընթերցողին:

1989 թ. հունվարի 4-ի «Սովետական Հայաստան» թերթի թիվ 3-ում հրապարակված Արմենպրեսի հաղորդագրության մեջ նշված է, որ կոմիտեականները երկար ժամանակ դիմում էին չարտոնված միտինգների և հավաքների, որտեղ մշտապես բորբոքվում էին կրքերը և դրանց հետևած խմբակային խուլիգանական գործողությունները, որոնք ուղեկցվում էին շանտաժով, սպառնալիքներով, ֆիզիկական հաշվեհարդարներով, քաղաքացիների կյանքի ու արժանապատվության նկատմամբ ոտնձգություններով, իշխանությունների ներկայացուցիչներին դիմադրությամբ»:

1989 թ. հունվարի 10-ի «Սովետական Հայաստան»-ը հրապարակվել է «Հայկական ՍՍՀ ներքին գործերի մինիստրությունում» հաղորդումը, որտեղ շարադրված է 1988 թ. փետրվարից մինչև դեկտեմբերի կեսերը հանրապետությունում տեղի ունեցած գործողությունների ֆոնի վրա Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի գործունեության ընդհանուր պատկերը: 1988 թ. նոյեմբերի 25-ից Երևանում մտցվել է պարետային ժամ, քաղաքացիների կյանքի անվտանգության երաշխավորման նպատակով դեկտեմբերի 5-ից հանրապետության 16 շրջաններում պարետային ժամ է սահմանվել: Հանրապետության 28 քաղաքներում և շրջաններում տեղի էին ունենում միտինգներ, 8 շրջանում՝ ընդհարումներ: Այս ամենի հետևանքով նախազգուշացվել է 275 անձ, վարչական կարգով կալանվել է 6 և տուգանվել 17 մարդ, կարգը խախտելու համար ներքին գործերի մարմիններ է տարվել հինգ հազար մարդ, վարչական կարգով կալանվել է ավելի քան 270 մարդ, առգրավվել է 39 միավոր հրազեն և 27 միավոր սառը զենք: Ադրեսի օրերին երկրաշարժի տարածք են գործուղվել «Ղարաբաղ» կոմիտեի որոշ անդամներ, Երևանի տարբեր վայրերում կազմակերպվել են միտինգներ, որոնց մասնակցել են մինչև հինգ հազար մարդ: Այս ամենը հաղորդելով՝ ներքին գործերի նախարարությունը մեղադրանք չի ներկայացնում կոմիտեականներին [25], որը զարմանալի է:

Դեռևս 1988-ի նոյեմբերին «Ղարաբաղ» կոմիտեի որոշմամբ ընդլայնվել էր կոմիտեականների կազմը՝ Ալբերտ Բաղդասարյան, Երջանիկ Աբգարյան, Ավետիս Իշխան-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

յան, Դավիթ Շահնազարյան, Արշակ Սարգսյան: Նրանք համարվում էին պահեստային կոմիտեականներ: Այդ մասին մինչև կոմիտեականների ձերբակալումը չէր հայտարարվել, պահվում էր գաղտնի: Նրանց ձերբակալությունից հետո ստեղծվել է նախաձեռնող խումբ՝ Ալբերտ Բաղդասարյանի գլխավորությամբ: «Հայք» թերթին տված հարցազրույցում նա նշում է, որ իրենք ամեն ինչ անում էին ձերբակալված կոմիտեականներին ստցնելու 1989 թ. մարտի 26-ին ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների ընտրական ցուցակում, սակայն Մոսկվայի կողմից չի ընդունվել: 1989թ. փետրվարի 23-ին ազատության մեջ գտնվող կոմիտեականները, հանդես գալով հայտարարությամբ, նշել են, որ «իրենց ազգն ու արմատները անվերադարձ կորցրած հանրապետության դեկավարություն կոչվող պաշտոնատերերի ու կաշառակերների ոհմակը բռնությունների մի նոր ալիք է բարձրացրել... և փորձում է կասեցնել Հայոց համազգային շարժումը...»: Հանրապետության բնակչությանը կոչ է արվում մասնակցել սումգայիթյան ցեղասպանության տարեդարձի առթիվ կազմակերպվող համազգային միտինգներին և բոլորին տեղյակ պահել, որ «ՀՀ-ն չի շեղվի Արցախի պահանջատիրությունից և սահմանադրական պահանջներից»[26]:

Չէին դադարում բնակչության բողոք-մամակները: Նրանք իշխանություններից պահանջում էին կալանքից ազատել կոմիտեականներին: 1989 թ. գարնանը կազմակերպվել է ձերբակալված կոմիտեականների հասարակական պաշտպանության խորհուրդ, որը հայտնի էր «14-ի խորհուրդ» անունով: Կոմիտեն խնդիր ուներ կապ պահպանելու ձերբակալված կոմիտեականների ընտանիքների հետ, նրանց ցույց տալու բարոյական և նյութական օգնություն, համակարգելու հասարակական կազմակերպությունների և աշխատավորական կոլեկտիվների կողմից ընտրված հասարակական պաշտպանների նախապատրաստումը և այլն: Հասարակական պաշտպանություն կազմակերպելու նպատակով հավաքել գործին առնչվող փաստաթղթեր, ամեն կերպ օգնել ձերբակալվածներին, հարցաքննությունների խախտման մասին դիմել հասարակական կարծիքի օգնությանը, համագործակցել նույն նպատակը հետապնդող հասարակական կազմակերպությունների հետ, կոմիտեի գործունեության մասին լայն ինֆորմացիա տալ հասարակությանը և այլն[27]: «14-ի կոմիտեն» 1989 թ. մայիսին հանդես է գալիս «Բաց նամակով»: Նշելով, որ մինչև հիմա Արցախյան համաժողովրդական շարժման դեկավարները գտնվում են անօրինական ձերբակալության մեջ. նրանք գիտնականներ են, գրողներ, լրագրողներ, գերագույն խորհրդի դեպուտատներ, որոնք ժողովրդի ընտրյալներն են և բարձր մտավորականներ, նստեցնել նրանց մեղադրյալի աթոռին, «նշանակում է նույն աթոռին նստեցնել ողջ հայ մտավորականությանը, ողջ հայ ժողովրդին»[28]:

Հանրապետության քաղաքներում և գյուղական բնակավայրերում շարունակվում էին միտինգներն ու ցույցերը: Դեռևս 1988 թ. դեկտեմբերի 19-ին Մատենադարանի մոտ տեղի ունեցած հանրահավաքը միջնորդել էր ռազմական պարետ գեներալ Ա. Մակաչևին, հանրապետության Ն. Գ. նախարար Հ. Հարությունյանին և Հայկական ԽՍՀ դատախազ Վ.Նազարյանին՝ պահանջել միութենական համապատասխան մարմիններից բանտից ազատել Մատենադարանի գիտական աշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Լևոն Հակոբի Տեր-Պետրոսյանին շեշտելով, որ նա տաղանդավոր բանասեր է և պատմաբան, Հայաստանի գործող արևելագետ, միակ հեղինակն է սիրիա-հայկական պատմական և գրականագիտական կապերի[29]:

Ձերբակալված «Դարաբաղ» կոմիտեի համար խիստ անհանգստացած էին նաև հանրապետությունում բնակվող եզդիները, որոնց ազգային երրորդ համագումարը պահանջում էր անհապաղ ազատ արձակել կոմիտեականներին[30]:

«Ղարաբաղ» կոմիտեի ջերմ պաշտպան Գալինա Ստարովոյտովան 1989 թ. ամանորի առթիվ ուղարկած հեռագրում գրում է. «Այս ամանորի գիշերը մենք չենք կարող իրար շնորհավորել: Մենք մարել ենք լույսը և ի հիշատակ մեզանից հեռու գտնվողներին, կվշտակցենք նրանց: 1915 թվականից հետո եղել է ավելի նզովյալ տարի, քան այս: Արիացեք, հայեր, հարազատներս: Ցավում եմ կոմիտեի անդամներին: Այս պահին մենք կանգնած ենք բանտի դռներին...»[31]:

Ձերբակալված Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի մասին հոգում էր նաև աշխարհասփյուռ հայությունը: Բերենք, թեկուզ, ֆրանսահայերի օրինակը: Փարիզում տպագրվող «Յառաջ» թերթի հաղորդումից իմանում ենք, որ «Սոլիտարիթե Ֆրանքո-Արմենիկեն կազմակերպությունը մարտի 7-ին կազմակերպել է ասուլիս՝ սվիդված «Ղարաբաղ Կոմիտեի ձերբակալութեան ու Հայաստանի քաղաքական կացութեան նուիրում»[32]: Թերթը բացատրում է, որ «Ղարաբաղ Կոմիտեի 11 անդամներուն, ինչպես նաև անոնց հետ խ. Ստամբուլցեանի ու Ի. Սուրատեանի արգելափակման անընդունելի պարագաները, կազմակերպիչ միութիւնը մասնակցելու հրավիրեր էր կոմիտեի անդամների ընտանիքների կազմը, պաշտպան փաստաբան նշանակված Տ. Ժաքոպի, Ի. Լորէն, Քաթրին Քէսէճյան, ինչպես նաև պրոֆեսորներ՝ Ժ. Փ. Մահէ և Հ. Քարթանե[33]: Պրոֆեսոր Քարթան իր ելույթում վրդովմունք է հայտնել խորհրդային դեսպանություն ուղարկված նամակը անպատասխան թողնելու կապակցությամբ: Պրոֆեսոր Մահէն պատմել է, որ իր նախածեռնությամբ կազմակերպվել է ստորագրահավաք, որին արձագանքել են Եվրոպայի և Միացյալ Նահանգների հայագետների ավելի քան 60 հոգի: Նաև նշել է, որ «Մոնտի» թերթի փետրվարի 9-ի համարում բազմաթիվ ստորագրություններով հողված է տպագրվել ի պաշտպանություն կոմիտեականների, կազմակերպվել են բազմաթիվ միտինգներ, հավաքներ, հանդիպումներ և ասուլիսներ [34]: Հետզհետե ավելի ընդլայնվում էր «Ղարաբաղ» կոմիտեի պաշտպանության հարցը: 1989 թ. հունվարին հրապարակվում է Մովսես Գորգիսյանի հրատարակած «Մեղադրվում են» հավաքածուն, որն արժանի պատասխան էր հանրապետության պարագլուխներին: Ի պաշտպանություն բանտված կոմիտեականների հանդես է գալիս ակադեմիկոս Ա.Սախարովը: Բանտ այցելելուց բացի նաև Ստարովոյտովան ելույթներ են ունենում հրապարակայնորեն և պաշտպանում կոմիտեականներին: Մեծ թվով դիմումներ են ուղարկվում գլխավոր դատախազ Սուխարևի անունով և պահանջում ազատել նրանց: Ազգությամբ հրեա գրող Կիմ Բակշին «Օգոնյոկում» նամակ է հրապարակում (թարգ. տե՛ս «խորհրդային Հայաստան», թ. 237, 07.10.1989), որտեղ նշված է, որ «Ժողովրդին չի կարելի ոչխարի տեղ դնել. այդ մոլորությունը շատ թանկ է նստում: Ինձ համար անմտություն է, դաժանություն է ներկայացնում «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալման, առանց դատ ու դատաստանի նրա անդամներին ամիսներով կալանքի տակ պահելու փաստը: 24<sup>օ</sup> որ ժողովուրդն է նրանց առաջ քաշել: Սա հայ ժողովրդին չճանաչելու, նրա ազգային բնավորությունը չգիտենալու հետևանքն է»[35]:

Հայաստանի պետական անվտանգության կոմիտեի նախագահ Վ. Բաղամյանցի 1989 թ. փետրվարի 2-ին Հայկոմկուսի կենտկոմ ուղարկած գաղտնի հաղորդագրության մեջ ասված է, որ «պրակտիկորեն սփյուռքի ամբողջ ուժերը բացասաբար են ընդունել «Ղարաբաղ» կոմիտեի անդամների 30-օրյա վարչական կալանավորումը և դրան հաջորդած ներկայացված մեղադրանքը»: Ապա հաղորդում է, որ Հայկական բարեգործական ընկերությունը Լուիզ Սիմոնյանի ստորագրությամբ 1988 թ. դեկտեմբերին նամակ է ուղարկել խորհրդային ղեկավարությանը՝ պահանջելով հանդիպում ունենալ ԽՍՀՄ դեսպանի հետ՝ բողոք ներկայացնելու «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալության հարցով և նախազգուշացնել, որ «ԽՍՀՄ-ում հայկական բնակչության

ճնշման դեպքում «ամբողջ աշխարհում կազմակերպվելու է բողոքի ակցիա»[36]:

Սվազ է Մոսկվայի բանտերում գտնվող Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամների բանտային առօրյայի մասին նյութերը: Շատ թե քիչ տեղեկություններ են հաղորդել Ռ. Ղազարյանն ու Հ. Գալստյանը իրենց հրապարակած նյութերում: Ռաֆայել Ղազարյանի կին՝ Գրիգորյա Ղազարյանը կարողանում է «ձեռքել» արգելքները և 1989 թ. մայիսի 16-ին Բուտիդյան բանտում տեսակցել ամուսնու հետ: Տեսակցությունը տեղի է ունեցել հեռախոսով երկշերտ ապակյա միջնապատով սենյակում և տևել է մեկ ժամ: Ըստ նրա՝ Ռաֆայելի տեսքը շատ վատ էր, սարսափելի նիհարած, հողացավերի պատճառով հազիվ էր քայլում: Ռաֆայելին սկզբում տեղավորել էին մարդասպան ռեցիդիվիստների հետ: Դրա համար հացադուլ է հայտարարել և զգուշացրել, որ եթե իրեն չտեղափոխեն, ինքնասպանություն կգործի: Փետրվարի 20-ին նրան հայտնել են ազատ արձակելու մասին, սակայն նա պատասխանել է, որ ինքը դուրս չի գա, եթե չազատեն կոմիտեի մյուս անդամներին: Այնուհետև նրան հարցաքննության չեն կանչել: Նա կրկին հացադուլ է հայտարարել ու պահանջել իր հանդիպումը եղբոր՝ Վազգենի հետ: Ապրիլի 24-ին նորից հացադուլ է հայտարարել պահանջելով հարցաքննություն: Չստանալով բժշկական ոչ մի օգնություն՝ հասել էր մահամեծ վիճակի: Նամակ է գրել Մ. Գորբաչովին՝ նշելով, որ եթե նա Ղարաբաղի հարցը չլուծի, ապա պերոստրոյկան կխրվի նրա կոկորդը: Իսկ Սուրեն Հարությունյանին գրած նամակում նշել է, թե գոնե մի անգամ մարդ եղիր և զբաղվիր երկրաշարժից տուժած շրջանների վերականգնման աշխատանքով: Նա հրաժարվել է փաստաբանից [37]: Մնացածների մասին այլ տեղեկություններ չունենք:

Կոմիտեականների ձերբակալության ժամանակ անդուլ գործում էին կոմիտեականների կանայք: Ռաֆայել Ղազարյանը գրում է, որ հատկապես բուռն ու հանդուգն պայքար էր ծավալել «կանանց ջոկատի խմբապետը»՝ Վազգեն Մանուկյանի կինը՝ Վարդուհին: Նա ելույթներ էր ունենում միտինգներում, նամակներ հղում տարբեր հասցեներով, տալիս հարցազրույցներ, հանդիպումներ ունենում հասարակական և քաղաքական գործիչների հետ, ստորագրություններ հավաքում և այլն: Վարդուհու և կոմիտեականների կանանց թիկունքում էին Թամար Բաբայան-Հաճյանը (Բոստոն), Լյուսի Ղանիեյանը և Սալբի Ղազարյանը (Լոս-Անջելես) և շատ ու շատ ուրիշներ: Պակաս ակտիվ չէր նաև Ռաֆայել Ղազարյանի կինը՝ Գրիգորյան, որը կարողացավ երկու անչափահաս երեխաների ձեռքերից բռնած՝ հանդիպել հանրապետության գլխավոր դատախազ Վ. Նազարյանի, Հուսիկ Հարությունյանի և Մոսկվայից ժամանած քննչական խմբի ղեկավար, գեներալ Տիտովի հետ: Հետաքրքիր է նաև այն, որ նա, հանդիպելով ակադեմիկոսների հետ, նրանցից պահանջում է ստորագրել Մոսկվա և արտասահման ուղարկած տասնյակ բողոքները և հեռագրերը[38]:

Կոմիտեականների ձակատագիրը նախ և առաջ կախված էր հանրապետության ընդհանուր քաղաքական վիճակից: «Ղարաբաղ» կոմիտեն արդարացվել է շնորհիվ ամողջ հայ ժողովրդի ակտիվ գործունեության և նրա մտավորականության ներկայացուցիչների նվիրվածության: Այդ պայքարին շատ օգնել է ակադեմիկոս Ա. Սախարովը: Դրանում հայ ժողովրդին սատարել են ԽՍՀՄ և ամբողջ աշխարհի ազնիվ մարդիկ[39]:

Հայկոմկուսի կենտկոմի քարտուղար Սուրեն Հարությունյանը 1989 թ. մայիսի 23-ին «Խորհրդային Հայաստան» թերթին տված հարցազրույցում ստիպված էր խոստովանելու, որ վերջին ժամանակներում իրադրությունը հանրապետությունում խիստ լարված է և սրվող: Նշել է, որ կոմիտեականներին մեղադրանք է ներկայացված: «Բայց, հաշվի առնելով մի շարք աշխատավորական կոլեկտիվների, երիտասարդության ներկայացուցիչների և բնակչության այլ խավերի ցանկությունները, ես դիմել եմ

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Յու. Սուխարևին՝ միջնորդելով մարդասիրական մոտեցում ցուցաբերել «Ղարաբաղ» կոմիտեի անդամների նկատմամբ: Կարծում եմ, որ մոտ օրերս ԽՍՀՄ դատախազությունը կարծազանքի մեր միջնորդությամբ»[40]:

Մի քանի օր անց մամուլում հրապարակվեց հաղորդում, որ, հանրապետության ղեկավարության դիմումի համաձայն, ԽՍՀՄ գլխավոր դատախազությունը «Ղարաբաղ» կոմիտեի գործը հանձնել է Հայկական դատախազության վարույթ, որը մայիսի 31-ին որոշում է ընդունել փոխել կասեցման միջոցը «Ղարաբաղ» կոմիտեի անդամների նկատմամբ և նրանց ազատել կալանքից: Նման որոշում է ընդունվել նաև Իգոր Մուրադյանի նկատմամբ[41]:

Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն կալանքից ազատվել է 1989 թ. մայիսի 31-ին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համբարձում Գալստյան, Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ..., Եր., 2002, էջ 415:
2. Մեղադրվում եմ, Երևան, 1989, էջ 53-54, 55:
3. «Սովետական Հայաստան», թ. 292, 12.12.1988 թ.:
4. Համբարձում Գալստյան, նշվ.աշխ, էջ 419:
5. «Սովետական Հայաստան», թ. 293, 13.12.1988 թ.:
6. Տե՛ս Մեղադրվում եմ, էջ 70-78: Կոմիտեի հինգ անդամները ձերբակալվելուց հետո երկու շաբաթ կոմիտեն միանձնյա ներկայացնում էր կոմիտեական Ռաֆայել Ղազարյանը և կոորդինացնում դեռևս ազատության մեջ գտնվող ակտիվիստների գործունեությունը (Ռաֆայել Ղազարյան, Հաշվետու եմ..., Եր., 2003, էջ 225):
7. Տե՛ս «Հայրենիք» (Ազգային ինքնորոշում միավորում), 1989, թ. 7, էջ 40-41:
8. ՀԱԱ (Հայաստանի ազգային արխիվ), ֆ. 1159, ց. 3, գ. 55, թ. 5:
9. «Հայրենիք», թ. 7, էջ 38-39:
10. ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 122, թ. 4-6: 1989 թ. հունվարի 10-ին Երևան-Մոսկվա Իլ-76 տրանսպորտային ինքնաթիռով Մոսկվա են տարվում Վանո Սիրադեղյանը, Սամսոն Ղազարյանը, Ղավիթ Վարդանյանը, Ռաֆայել Ղազարյանը, Աշոտ Մանուչարյանը, Խաչիկ Ստամբուլցյանը և փակում Բուտիրկայում, իսկ Լևոն Տեր-Պետրոսյանին, Բաբկեն Արաքցյանին, Վազգեն Մանուկյանին, Սամվել Գևորգյանին և Իգոր Մուրադյանին տարել էին մի քիչ շուտ և նետել Մատրոսկայա տիշինա բանտը:
11. Նույն տեղում, ց. 2, գ. 19, թ. 1-3:
12. Նույն տեղում, ց. 1, գ. 122, թ. 4-6:
13. Նույն տեղում, թ. 3:
14. Նույն տեղում, թ. 6:
15. ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 698, թ. 3:
16. Նույն տեղում, ֆ. 1, ց. 127, գ. 698, թ. 22-23:
17. Նույն տեղում, ֆ. 157, ց. 67, գ. 69:
18. Նույն տեղում, գ. 66, թ. 10:
19. «Դրօշակ», ժժ տարի, թիվ 22-23, 1 մարտի 1989, էջ 24:
20. «Սովետական Հայաստան», թ. 298, 18.12.1988:
21. Նույն տեղում, թ. 302, 22.12.1988:

22. Նույն տեղում, ն.7. 08.01.1989:
23. ՀԱԿ-ի ընթացիկ արխիվ, թղթ. 3, թ. 36:
24. Նույն տեղում, թ. 39:
25. «Սովետական Հայաստան», թ. 8-9, 10.01.1989:
26. ՀԱԿ-ի ընթացիկ արխիվ, թղթ. 3, թ. 50:
27. Նույն տեղում, ֆ. 1159, ց. 1, գ. 140, թ. 2:
28. ՀԱԿ-ի ընթացիկ արխիվ, թղթ. ն.4, թ. 12:
29. Նույն տեղում, թղթ. ն. 6, թ. 1:
30. Նույն տեղում, թղթ. ն. 3, թ. 21:
31. Նույն տեղում, թ. 6-7:
32. «Յառաջ», 09. 03. 1989:
33. Նույն տեղում:
34. Նույն տեղում:
35. Տես Խորհրդային Հայաստանե, թ. 237, 07.10.1989:
36. ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 34, թ. 18:
37. «Հայրենիք», 1989, թ. 8, էջ 73-74: «Ղարաբաղ» կոմիտեի հարցաքննությունների 20 հատորանոց նյութերը պահվում են հանրապետության դատախազության չհրկիզվող պահարանում, շուրջ 28 տարի: Իմ բոլոր դիմումներին իրավունք տալ օգտվել այդ նյութերից, պատասխանել են մերժումով:
38. Ռաֆայել Ղազարյան, նշվ. աշխ., էջ 256:
39. С. А. Амбарцумян, նշվ. աշխ., էջ 92:
40. «Խորհրդային Հայաստան», ն. 124, 24.05.1959:
41. Նույն տեղը, թ. 131, 01.06. 1989:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

#### **«Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալության շուրջ Հրանտ Աբրահամյան**

1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած Սպիտակի աշխարհացունց երկրաշարժից Խորհրդային Հայաստանը մեծ վնաս կրեց: Օգտվելով առիթից՝ երկրի բարձրագույն իշխանության հանձնարարությամբ ձերբակալվում են Ղարաբաղյան շարժման Հայաստանի «Ղարաբաղ» կոմիտեի անդամները և տարվում Մոսկվայի բանտերը: Երկրի լրատվամիջոցներն ամեն կերպ վարկաբեկում են բանտարկված կոմիտեականներին և հազար ու մի արարքներ ու կեղծիքներ վերագրում նրանց: Կոմիտեականներին վարկաբեկելու և մեղադրելու գործում քիչ մեղք չունեին նաև հանրապետության և Միության մի շարք բարձր պաշտոնյաներ: **Արդյունքում՝ 1989 թ. մայիսի 31-ին ազատ են արձակվում կոմիտեականները:**



**РЕЗЮМЕ**  
**Об аресте комитета “Карабах”**  
**Грант Абраамян**

**Ключевые слова:** землетрясение, спасательные работы, зона бедствия, пресса, сбор информации, органы управления, преследования активистов, насилие.

Советская Армения понесла огромные потери в результате всемирно ошеломляющего землетрясения в Спитаке 7 декабря 1988г. Пользуясь случаем, члены комитета Армения («Карабах») карабахского движения были арестованы и доставлены в различные тюрьмы Москвы комиссией верховной власти страны. СМИ страны любым возможным способом дискредитировали арестованных и приписывали им тысячу и одно действие и фальсификации. Многие чиновники Союза и Республики имели достаточную вину в дискредитации и обвинении членов. В результате, члены Комитета были освобождены 31 мая 1989г.

**SUMMARY**  
**On the arrest of the “Karabakh” Committee**  
**Hrant Abrahamyan**

**Keywords:** *earthquake, rescue operations, disaster area, press, information gathering, administration, the persecution of activists, violence*

Soviet Armenia has incurred big losses in the result of world-stunning earthquake in Spitak on December 7, 1988. On this occassion, the members of Armenia Committee ("Karabakh") of Karabakh movement were arrested and taken to different prisons of Moscow by the commission of the country's supreme authority. Country's mass media discredited the imprisoned members using all the possible means and ascribed to them numerous actions and falsifications. Many officials of the Union and the Republic were responsible for discrediting and blaming the members. In the result, the Committee members were set free on May 31, 1989.

## МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО: АНАЛИЗ НЕКОТОРЫХ ПОДХОДОВ К НАЗВАНИЮ ОТРАСЛИ\*

Нарек Абгарян

**Ключевые слова:** международное гуманитарное право, право вооруженных конфликтов, вооруженный конфликт, право Женевы, право Гааги.

Этимологически термин война (war) исходит из Высокого немецкого языка, где существовало слово *warre*, имеющее значение беспорядок, разногласие или борьба[1]. На первый взгляд это логично, так как основой для войны становятся серьезные разногласия между сторонами, а с началом войны зачастую прерываются дипломатические отношения между странами, начинаются изменения во многих сферах общественной жизни. В мае 1992 года один из делегатов Международного Комитета Красного Креста (далее – МККК) констатировал: “Все, кто пережил войну, особенно войну нашего времени, знают, что разгул насилия означает прежде всего искоренение норм поведения и правовых систем[2]. Этот человек буквально через несколько дней после произнесенных им слов был убит возле города Сараево. Его не спасла даже предназначенная для защиты эмблема МККК.

Вышеизложенные строки могут укрепить читателя во мнении, что сколько бы не говорилось о международном праве, оно перестает действовать во время вооруженных конфликтов и уступает место законам и обычаям войны. Для непосвященного человека эти законы и обычаи мало чем отличаются от варварских традиций и ассоциируются с негативными последствиями, однако, как бы парадоксально для них это не звучало, война тоже имеет свои правила и здесь как никогда кстати фраза “even wars have limits” (даже у войны есть пределы), которую активно лоббирует МККК в рамках своей гуманитарной деятельности[3].

Войны сопровождают человечество еще с древних времен, что, однако, не дает повода полагать, что с самых ранних пор конфликты, при которых участники прибегали к оружию, устанавливали для сторон правила поведения. Как справедливо замечает профессор Эрик Давид, изначально у войны не было никаких правил кроме закона силы и принципа “горе побежденным” (*vae victis* – лат)[4]. Однако с течением времени начали формироваться правила поведения, которыми должны были руководствоваться сражающиеся. Изначально в древние века эти правила вытекали из священных писаний, что отнюдь не гарантировало их гуманности[5]. В дальнейшем, особенно на территории Европейского континента, церковь продолжала играть важную роль в вопросе установления правил для сражающихся сторон. Так соборы в Шарру (989), Ансе (994) и Лиможе (997) провозгласили неприкосновенность и иммунитет церквей, монастырей, бедняков, духовных лиц, торговцев, паломников, земледельцев и их имущества[6], а Божий мир, введенный Эльнским собором (1027), запрещал военные действия во время христианских праздников и с 15:00 субботы до 6:00 понедельника[7]. Развитие законов и обычаев войны постоянно продолжалось, однако серьезный толчок в своем развитии отрасль получила только во второй половине XIX века. Во-первых, в июне 1863 года был основан МККК, отправной точкой для создания которого послужили впечатления, полученные швейцарским предпринимателем Анри Дюнаном во время битвы при Сольферино, ставшей одним из самых кровопролитных сражений австро-итало-французской войны 1859 года. Следом за этим в 1864г. по инициативе правительства

\* Հոդվածն ընդունվեց 18.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՀՌԱՀ միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնը:

Швейцарии вырабатывается документ, ставящий перед собой цель защитить раненых и больных во время войны. Этот документ становится первым документом международного гуманитарного права, в котором реализовалась идея А. Дюнана[8].

За прошедшее с 1864 года время прошло более 150 лет. Этот отрезок ознаменовался стремительным развитием правовых норм, регулирующих положение лиц, участвующих, а также пострадавших в результате вооруженного конфликта. Немаловажную роль в вопросе защиты жертв войны стали играть четыре Женевские конвенции, подписанные в 1949г. Кроме того, с развитием различных методов и средств ведения войны, многие документы стали относиться и к регулированию вопросов запрета или допущения применения того или иного оружия на поле боя. Так в XX веке появился термин «Право Гааги»[9]. Однако, несмотря на стремительное развитие отрасли, до сих пор среди ученых нет единого мнения о том, как, во-первых, называется отрасль международного права, регулирующая вопросы, связанные с вооруженными конфликтами, и, во-вторых, входят ли все нормы, относящиеся к вооруженным конфликтам в одну отрасль международного права или же, в зависимости от сферы регулирования, та или иная норма, применяемая в ситуациях вооруженных конфликтов, может входить в разные отрасли международного права. Основываясь на вышеуказанной информации, следует проанализировать подходы различных ученых и организаций, рассматривающих проблематику названия отрасли.

Основной подход, принятый подавляющим большинством ученых и организаций: называть отрасль международным гуманитарным правом (МГП)[10]. Согласно данной точке зрения, международное гуманитарное право – это отрасль международного права, состоящая из норм (правил), которые в ситуации вооруженного конфликта направлены на защиту лиц, не являющихся участниками вооруженного конфликта либо прекративших участие в нем, а также норм, ограничивающих применение методов и средств вооруженного конфликта[11]. В некоторых источниках формулировка может частично отличаться от вышеуказанной, но это не меняет две краеугольные сферы, указанные в определении: защиты жертв конфликта, и ограничение методов и средств. Немаловажен и тот факт, что и МККК также придерживается указанной формулировки. Этот термин считается на сегодняшний день наиболее распространенным и часто встречается в учебниках по международному публичному праву[12], что, однако, не дает оснований полагать, что он является единственным верным.

Второй подход выделяет нормы, касающиеся вооруженных конфликтов, в отрасль международного права под названием “Право вооруженных конфликтов”. Здесь, однако, стоит рассмотреть термин более детально, так как в различных источниках под правом вооруженных конфликтов понимают неодинаковый объем правовых норм. Так, упоминавшийся уже в работе профессор Брюссельского университета Эрик Давид применяет два подхода к определению права вооруженных конфликтов (ПВК). *Lato sensu* (в широком смысле), по его мнению, ПВК включает нормы, которые регулируют различные ситуации. Это *jus ad bellum*, *jus contra bellum*, *jus in bello*, нормы о нейтралитете и т.д. В противовес этому в узком смысле ПВК представляет собой *jus in bello* и подразделяется на две категории норм..., нормы, регулирующие ведение военных действий (методы и средства ведения войны) и... нормы, относящиеся к обращению с лицами, оказавшимися во власти неприятеля[13]. Далее отмечается, что указанные выше группы норм также часто определяют как «право Гааги» и «право Женевы», что, на наш взгляд, не совсем обоснованно, так как принятие двух Дополнительных протоколов 1977г. к Женевским Конвенциям от 12 августа 1949г. фактически стерло границы различия между данными понятиями. Это было обусловлено необходимостью добавления в протоколы как норм, регулирующих защиту лиц, права и интересы которых затрагивают конфликты, так и

норм, определяющих дозволенные методы и средства ведения военных действий, с учетом изменений, произошедших в период с 1949г. по 1977г. Аналогичных подходов в своих работах придерживались И.Н. Арцибасов, который считал, что предметом права вооруженных конфликтов являются общественные отношения между субъектами международного права по поводу использования ими средств нанесения вреда неприятелю, а также по защите личности в период вооруженной борьбы[14], а также Л.И. Савинский, включавший в ПВК нормы и принципы, относящиеся к временным и пространственным границам вооруженных конфликтов, регламентирующие статус их участников, охрану мирных объектов и защиту жертв войны: запрещающие методы и средства ведения вооруженной борьбы; определяющие способы и формы приостановления и окончания вооруженной борьбы; устанавливающие статус нейтралитета в процессе войны[15].

Существует также иная интерпретация термина ПВК, наиболее часто встречающаяся в русскоязычной литературе. Так А.Я. Капустин отмечает, что к ведению ПВК относятся такие вопросы, как временные и пространственные границы вооруженных конфликтов, ограничение или запрещение способов, методов и средств ведения вооруженной борьбы, способы и формы приостановления и окончания вооруженной борьбы, статус нейтралитета, ответственность за военные преступления[16]. Данная позиция разделяет термины ПВК и МГП, оставляя последнему лишь сферу защиты прав человека в ситуациях вооруженного конфликта, но никак не вопросы ограничения методов и средств, используемых в военных ситуациях. Однако, на наш взгляд, данный подход является отчасти тупиковым. Это обусловлено несколькими причинами, главная из которых в том, что на сегодняшний день (особенно с учетом отказа от терминов “право Гааги” и “право Женевы”) нормы, регулирующие средства и методы ведения военных действий, закрепляющие рамки дозволенного для сторон в конфликте, зачастую переплетаются с нормами, основная цель которых защита прав людей, чьи права и здоровье каким-либо образом затронула война. Такие международно-правовые документы, как Дополнительный Протокол I или Дополнительный Протокол II к Женевским конвенциям, затрагивают большой спектр проблемных вопросов, связанных с вооруженными конфликтами, в том числе и некоторые принципы, непосредственно считающиеся методами ведения боевых действий, а также гарантии защиты некоторых категорий лиц, участвующих в конфликте. Для данных документов мы используем термин источник МГП, что ясно подчеркивает отсутствие необходимости разделения норм из устаревшего принципа “гаагские” и “женевские” нормы.

В теории существуют также и иные подходы к классификации международно-правовых норм, регулирующих вооруженные конфликты в единую отрасль. В числе прочих выделяются такие названия, как “оперативное право”[17]. Другая проблема на которую можно наткнуться, исследуя юридическую литературу, это включение некоторых норм МГП в право международной безопасности[18], однако такого рода подходы встречаются редко, и, в большинстве своем, сводятся к единичным мнениям авторов. Исходя из всего вышеуказанного, мы приходим к выводу, что наиболее полно и объективно существующие реалии отражает термин “международное гуманитарное право”. Данный термин многогранен. Он включает в себя большой спектр норм, который в случае вооруженного конфликта регулирует, как уже было отмечено в начале работы, вопросы, относящиеся к защите лиц, не являющихся участниками вооруженного конфликта, либо прекративших участие в нем, а также ограничивает применение некоторых методов и средств в ходе вооруженного конфликта. Немаловажен и тот факт, что в данном случае само название отрасли указывает на ее гуманистический характер, а идея гуманизма, как известно, является краеугольным принципом, на котором строится вся отрасль. Что же касается термина “право вооруженных конфликтов”,

*следует отметить, что, на наш взгляд, он является синонимом термину МГП, что подтверждают многие исследования в данной сфере[19]. Следовательно, и юридические материалы, которые посвящены праву вооруженных конфликтов могут быть рассмотрены как посвященные международному гуманитарному праву.*

### **СПИСОК ЛИТЕРАТУРЫ**

1. Dennen, J. M. G. V. D. “The origin of war: the evolution of a male-coalitional reproductive strategy”, University of Groningen, 1995. p. 69.
2. Maurice, F., «L’ambition humanitaire», RICR, 1992, p. 386.
3. Even wars have limits: health care workers and facilities must be protected. <https://www.icrc.org/en/document/hcid-statement>; Syria: Even wars have limits <https://www.icrc.org/en/document/syria-even-wars-have-limits>
4. Эрик Давид, Принципы права вооруженных конфликтов. М., 2011, ICRC. стр. 40.
5. Второзаконие 20: 10–18. — Библия. Книги Священного Писания Ветхого и Нового Завета.
6. Marin M.A. “The Evolution and the Present Status of the Laws of War”, RCADI, 1957, II, t. 92, p. 655
7. Goyau G. “L’Eglise catholique et le droit des gens”, RCADI, 1925, I, T. 6, pp. 150-151
8. Котляров И.И. “Международное гуманитарное право”, М., Закон и Право, 2013, стр. 10
9. Бюньон, Франсуа. Право Женевы и право Гааги // МЖКК: Сборник статей. 2001, стр. 137.
10. “What is International Humanitarian Law?”, Advisory Service on International Humanitarian Law; [https://www.icrc.org/eng/assets/files/other/what\\_is\\_ihl.pdf](https://www.icrc.org/eng/assets/files/other/what_is_ihl.pdf)
11. См. выше; International Humanitarian Law: Answers to Your questions. [http://www.redcross.org/images/MEDIA\\_CustomProductCatalog/m22303661\\_IHL-FAQ.pdf](http://www.redcross.org/images/MEDIA_CustomProductCatalog/m22303661_IHL-FAQ.pdf)
12. Гасанова К.К., Шалягин Д.Д., Международное право, второе издание, Закон и Право, М., 2010, стр.355, 358; Лукашук И.И., Международное право, особенная часть, учебник для студентов юридических факультетов и вузов, издание 3-е. Wolters Kluwer, М., 2005, стр. 318.
13. Эрик Давид, Принципы права вооруженных конфликтов, стр. 76.
14. Арцибасов И.Н., Егоров С.А. Вооруженный Конфликт: право, политика, дипломатия. М., 1989, стр. 19.
15. Полторацкая А.И., Савинский Л.И. Вооруженные конфликты и международное право. М., 1978, стр. 79.
16. Капустин А.Я., Мартыненко Е.В. Международное гуманитарное право, учебное пособие. М., 1991, стр. 23.
17. Соковых Ю.Ю. Реализация международного гуманитарного права в законодательстве Российской Федерации: состояние и перспективы// Государство и право. № 9. 1997, стр. 85-86.
18. Колосова Ю.М., Кривчикова Э.С., Международное право, учебник, 2-ое издание, М., Международные отношения, 2007, стр. 404-405.
19. Эрик Давид, Принципы права вооруженных конфликтов, стр. 36; Antoine A. Bouvier, International Humanitarian Law and the Law of Armed Conflict; Peace operations training institute, 2012, Lesson 1, page 12.

РЕЗЮМЕ

Международное гуманитарное право:  
анализ некоторых подходов к названию отрасли.  
Нарек Абгарян

Настоящая статья посвящена анализу некоторых подходов к наименованию отрасли *Международное гуманитарное право*: рассматривается круг вопросов, связанных с этой отраслью, а также исследуются альтернативные названия, предложенные различными учеными.

В процессе исследования проводится исторический очерк международного гуманитарного права и анализ последующего развития и интерпретации названия отрасли исследователями. В работе рассмотрена как русскоязычная юридическая литература, так и труды некоторых авторов, пишущих на английском и французском языках.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Միջազգային մարդասիրական իրավունք.  
նլորտի անվանման որոշ մոտեցումների հետազոտություն  
Նարեկ Աբգարյան

*Բանալի բառեր՝ Միջազգային մարդասիրական իրավունք, զինված ընդհարումների իրավունք, զինված ընդհարում, ժնկի իրավունք, Հաագայի իրավունք:*

Սույն հոդվածը նվիրված է Միջազգային մարդասիրական իրավունք ճյուղի անվանման հետ կապված որոշ մոտեցումների հետազոտությանը: Աշխատանքում ուսումնասիրվում են որոշ հարցեր, որոնց անդրադառնում է ՄՄԻ-ը, ինչպես նաև հետազոտվում են միջազգային իրավունքի այս ճյուղի այլընտրանքային անվանումները՝ առաջարկված տարբեր գիտնականների կողմից:

Ուսումնասիրության ընթացքում անցկացվում է ինչպես ՄՄԻ-ի պատմական ակնարկ, այնպես էլ ուսումնասիրվում են հետազոտողների կողմից ՄՄԻ անվանման հետագա զարգացումը և մեկնաբանությունը: Աշխատանքում ուսումնասիրվում են ինչպես ռուսալեզու իրավաբանական գրականություն, այնպես էլ ֆրանսերենով և անգլերենով ստեղծագործող ու որոշ հեղինակների աշխատություններ:

SUMMARY

International Humanitarian Law:  
the analysis of some of the approaches to the branch name  
Narek Abgaryan

*Keywords: International Humanitarian Law, Law of Armed Conflicts, Armed Conflict, Law of Geneva, Law of the Hague.*

This article is dedicated to the analysis of some approaches to the nomination of the branch of International Humanitarian Law. It analyses some issues tied to IHL sphere, as well as examines alternative names given to the branch by different scholars.

The article presents the historical overview of International Humanitarian Law as well as future development and interpretation of the title by scientists. It also considers Russian academic literature together with the works of some scholars who wrote in English and French.

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ\***

**Նանա Առուստամյան**

**Քանալի բառեր`** Եվրասիականություն, քաղաքակրթություն, նույնականացում, Վ. Լամանսկի, Ն. Դանիելևսկի, ռուսական կայսրություն, զարգացման վայր:

*Եվրասիականության հայեցակարգի ուսումնասիրության համատեքստում հատկապես կարևորվում է եվրասիական քաղաքակրթական առանձնահատկությունների (նույնականացման) խնդիրը:*

*Մասնագիտական գրականության մեջ ընդունված է համարել, որ եվրասիական քաղաքակրթության տեսությունը ստեղծվել է եվրասիականության սոցիալ-փիլիսոփայական և մշակութաբանական դպրոցի ներկայացուցիչների կողմից (Ն. Կարսավին, Գ. Վերնադսկի, Լ. Գումիլով, Լ. Կարսավին, Ն. Տրուբեցկոյ, Պ. Սավիցկի): Նշված հեղինակների աշխատանքներում եվրասիական պետության ստեղծումը և գոյությունը հիմնավորվում է աշխարհագրական, սոցիալական, պատմական, կրոնական գործոններով:*

*Քաղաքակրթությունը սահմանվում է հասարակության որակական, հոգևոր, նյութական, մշակութային, արժեքային համակարգի որոշակի չափանիշներով:*

*Եվրասիական քաղաքակրթությունն ընկալվում է որպես Եվրասիայի ժողովուրդների ընդհանրություն, որոնք միավորված են ընդհանուր զարգացման վայրով, պատմությամբ, մշակութային ավանդույթներով, լեզվով, կրոնով: «Զարգացման տարածք»[1] Եվրասիա (Ռուսաստան- Եվրասիա) եվրասիականները անվանում էին Ռսկե Հորդայի, Ռուսական կայսրության և ԽՍՀՄ տարածքի հետ զրեթե լիովին համընկնող տարածքը:*

*Ըստ եվրասիականների` Եվրասիան ոչ թե Եվրոպայի և Ասիայի համադրություն է, այլ «միջին մայրցամաք» է նրանց միջև: Գ. Վերնադսկին նշում էր, որ չկա երկու Ռուսաստան` Եվրոպական և Ասիական.գոյություն ունի միայն մեկ եվրասիական Ռուսաստան կամ Ռուսաստան-Եվրասիա:[2]*

*Կարելի է տարանջատել եվրասիական քաղաքակրթության մի քանի պատմական շրջաններ: [3]*

*Առաջինը քոչվորների պետությունն է (1-ին հազարամյակից մինչև 15-րդ դար), երբ հաջորդաբար իրար են փոխարինում սկյութների, թյուրքերի և մոնղոլների կայսրությունները: Կառավարող շերտը քոչվորներն էին, գաղափարախոսությունը` հեթանոսությունը:*

*Եվրասիականները հատկապես կարևորում էին մոնղոլների պետությունը` Ռսկե Հորդան` նշելով, որ դրա աշխարհաքաղաքական հետնորդը Մոսկովյան իշխանությունն է: Եվրասիականները, չժխտելով մոնղոլական արշավանքների բացասական դերը, տեսնում էին նաև դրականը` կրոնական հանդուրժողականությունը:*

*Եվրասիական քաղաքակրթության զարգացման երկրորդ շրջանը Եվրասիայում ռուսական գերիշխանության` Մոսկովյան իշխանության և Ռուսական կայսրության ժամանակահատվածն է ընդգրկում (15-րդ դարից մինչև 1917թ.): Եվրասիականները շեշ-*

\* Հոդվածն ընդունվել է 09.02.17

Հոդվածը տպագրության է երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Ա.Ենգոյանը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱՍԱՌԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

տոււմ էին, որ վերջիններս Մոնղոլական Հորդայի «ժառանգներն» են:

Երրորդ շրջանը՝ Խորհրդային Միությունն է (1917-1991թթ.): Բոլշևիկները վերականգնեցին պետությունը որպէս գերտերություն՝ ստեղծելով ուժեղ, ավտորիտար պետություն:

Եվրասիական քաղաքակրթությունը Եվրասիայի տարածքում բնակվող սլավոնական և թուրանական ժողովուրդների ամբողջությունն է, որոնք միավորվում են պատմական ճակատագրով, մշակութային, բնակլիմայական պայմանների նմանությամբ:

Անդրադառնալով քաղաքակրթական նույնականացման խնդրին՝ նշենք, որ այն նույնականացման ավելի լայն ու ռացիոնալիզացված ձևն է, որը սերտորեն կապված է լոկալ քաղաքակրթության պատկանելության գիտակցմամբ:

Քաղաքակրթական նույնականացումն ունի համախմբող ու «մենք և ուրիշները» բաժանող գործառնայթ:

Լոկալ քաղաքակրթությունների տեսության[4] շրջանակներում իրագործվող քաղաքակրթական նույնականացման զարգացումն ուներ մի շարք առանձնահատկություններ:

Ռուսաստանում լոկալ քաղաքակրթությունների տեսության հիմնադիրները Սլավոնաֆիլներն էին: Նրանք ձգտում էին նոր շունչ տալու (վերականգնել) պատմության կրոնական փիլիսոփայությանը և այդ տեսական հիմքի վրա ստեղծելու Ռուսաստանի կերպարը:

Ն. Դանիելսկին՝ մշակութապատմական տիպերի հայեցակարգի հիմնադիրը՝ «Ռուսաստան և Եվրոպա» աշխատության հեղինակը, լոկալ քաղաքակրթությունների տեսության մեջ կարևոր նորամուծություն է կատարել՝ անդելով, որ բոլոր մշակութապատմական տիպերը համարժեք են իրենց յուրահատկությամբ:

Ն. Դանիելսկու նորարարությունը սահմանափակվում էր տեսության շրջանակներով, քանի որ Ռուսաստանի և Եվրոպայի համեմատական վերլուծությունը սլավոնաֆիլական գաղափարների ուժեղ ազդեցության տակ էր կատարվում: Դա արտահայտվում էր նաև նրանում, որ, նշելով ռուսական քաղաքակրթության բազմէթնիկությունը, դրան հատուկ ուշադրություն չէր դարձնում: Ըստ նրա՝ այդ բազմազանությունը վերանում է ռուսական գործոնի գերիշխանության պայմաններում: Հարկ է նշել, որ նա նաև պնդում էր, որ պետականություն չստեղծած և որևէ մշակութապատմական տիպի մեջ մտնող ժողովուրդները որոշակի փուլում կարող են ձևավորել իրենց մշակութապատմական տիպը:[5] Այսպիսով՝ մշակութապատմական տիպերի հայեցակարգը հիմք էր ռուսական քաղաքակրթության մասին առավել բարդ և ռեալիստական պատկերացումների ձևավորման համար:

Ռուսաստան-Եվրասիա հայեցակարգի ձևավորման գործում առավել կարևոր քայլ է կատարել էթնոգրաֆ և սլավոնագետ Վ.Լամանսկին: Իր «Ասիական-Եվրոպական մայրցամաքի 3 աշխարհները»(1892) գրքում նա իր առջև խնդիր էր դրել ցույց տալ Ռուսաստանի ինքնակերպությունը լայն պատմական համատեքստում: Վ. Լամանսկին ընդծում է, որ հենց Եվրասիան է խոշոր քաղաքակրթությունների առաջացման հիմնական «օջախը»(բնօրրանը): Բացառություն են կազմում միայն Եգիպտոսը և Մեզոպոտամիայի հնագույն քաղաքակրթությունները: Եվրասիական աշխարհամասի յուրօրինակությունը բացատրվում է աշխարհագրական պայմանների բարենպաստ լինելու հանգամանքով:[6] Հսկայական Եվրասիական տարածությունը Վ.Լամանսկին բաժանում էր երեք մասի՝ հիմք ընդունելով աշխարհագրական, էթնիկ, մշակութապատմական առանձնահատկությունները: Դրանք են՝ Եվրոպա, Ասիա և Ռուսաստան, որը սահմանվում է որպէս «Միջին աշխարհ, ոչ Եվրոպա, ոչ էլ Ասիա»:



Պետք է նշել, որ Վ. Լամանսկու մոտ քաղաքական միասնության գործոն, իր կարևորությամբ հանդերձ, չի խոչընդոտում Ռուսաստանի քաղաքակրթական ինքնակերպության ավելի լայն ընկալումը՝ շեշտելով նրա մշակութային և էթնիկ բազմազանությունը (տարասեռությունը): Ռուսաստանը հստակորեն բաժանվում է 2 մասի՝ եվրոպական և ասիական: Ասիական Ռուսաստանը կազմում է եվրոպականի բնական շարունակությունը. դա բացատրվում է նրանով, որ ռուսական Ասիան, ի տարբերություն արևելյան Ասիայի, բնակեցված էր «բարբարոսության» (զարգացման ցածր) մակարդակում գտնվող հարաբերականորեն քիչ ցեղերով: Դրանով է բացատրվում եվրոպական Ռուսաստանի տիրապետող դերը: Ռուսաստանի եվրոպական մասը Վ. Լամանսկին նմանեցնում էր Արևմտյան Եվրոպային՝ դիտարկելով կրոնի և բարոյական իդեալների ընդհանրությունը և հունահռոմեական քաղաքակրթության ազդեցությունը: Ըստ նրա՝ Արևմուտքը և Միջին աշխարհը կազմում են մեկ քրիստոնեական ընդհանրություն, որը ասիականի հակադրությունն է: Ասիան, Արևելքը Լամանսկին դիտարկում է որպես «ծերության, անցյալի, փլատակների աշխարհ», որն առանց հոգևոր վերածնման ի վիճակի չէ յուրացնելու Եվրոպայի և Ռուսաստանի համար ընդհանուր նորմերը: Եվրասիական աշխարհամասում ուժերի հարաբերակցությունը հետևյալ կերպ է կատարվում. Արևելքի մի մասը պասիվ կերպով «ծերանում է», մյուսը՝ նույն կերպ ռուսիֆիկացվում: [7] Քաղաքակրթական զարգացման գործում առաջատար դեր են խաղում Ռուսաստանը և Եվրոպան:

Վ. Լամանսկու ամենամեծ ու կարևոր նորամուծությունն այն էր, որ Ռուսաստանը սահմանում էր բազմէթնիկ քաղաքակրթություն, որտեղ առկա են ասիական էթնոսների և մշակույթի տարրեր: Այս առումով Լամանսկին առաջինն էր Ռուսաստանն ընդունում որպես Եվրասիա: Ասիական կողմի պասիվության բնութագրմամբ Վ. Լամանսկին Ն.-Դանիելսկու նման կարևորում է Ռուսաստանի սլավոնաֆիլ կերպարը որպես սլավոնական և ուղղափառ քաղաքակրթություն:

Եվրասիականները հիմնվում էին համաշխարհային պատմական գործընթացի միասնական հայեցակարգի վրա, որի առանցքը «բազմուղղվածությունն» էր: Հատկանշական է, որ եվրասիականների առաջին հրատարակությունները, որտեղ խոսվում էր պատմական գործընթացի՝ որպես ազգային մշակույթների տարբեր ուղղություններով ցիկլիկ զարգացման մասին, գրեթե միաժամանակ են հայտնվում Օ.Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» աշխատության հետ:

Համաշխարհային պատմական գործընթացի «բազմուղղվածության» գաղափարի տեսական հիմնավորման միակ փորձը Ն. Տրուբեցկոյի «Եվրոպան և մարդկությունը» (1920) գիրքն էր: Ն. Տրուբեցկոյն առաջընթացը դիտարկում էր որպես տարբեր մշակույթներում առկա բազմազան հնարավորությունների իրագործում:

Ինչպես Ն. Դանիելսկուն, այնպես էլ եվրասիականներին գրավում էր «բազմուղղվածության» հայեցակարգի միտումը դեպի մշակույթի յուրօրինակություն, անկրկնելիություն: Հիմնականում եվրասիականների մոտ պատմական գործընթացը զուրկ է ընդհանուր օրհանաչափություններից (բացի ցիկլիզմի օրենքը). օրինակ՝ տարբեր մշակույթների մեկը մյուսին փոխարինելը, որոնք ըստ նշանակության համարժեք են, իսկ զարգացման ուղղվածությամբ՝ տարբեր:

Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» ընկալվում էր որպես ցիկլիզմի իսկությունը ապացուցող դրույթ:

Սլավոնաֆիլները և նրանց հետնորդները նախ և առաջ ձգտում էին ապացուցելու Ռուսաստանի ինքնաբավության իրավունքը: Եվրասիականների առջև այլ խնդիր էր դրված՝ բացահայտել 1917թ. Հեղափոխության պատճառները, որը ավանդական ռու-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

սական մշակույթը քայքայեց:

Եվրասիականները զարգացրին Ն. Դանիելյանի այն գաղափարը, որ եվրոպական կողմնորոշումը, նրան կրկնօրինակելու հիվանդությունը կարող է տանել կործանման: Այս առումով հատկանշական է Պ.Սավիցկու «Երկու աշխարհ»(1922) հոդվածը, որտեղ, հղում կատարելով Շպենգլերին, նա դիտարկում է հեղափոխության պատճառները և մատերիալիզմի ու արժեզանի գաղափարների տարածումը որպես քաղաքակրթության կործանման տանող միտումներ: Ըստ Պ. Սավիցկու և այլ եվրասիականների սոցիալիզմի գաղափարը օտար է, արևմուտքի կողմից պարտադրված:

Եվրասիականները, «օտար» հոգևոր արժեքների յուրացումը համարելով կործանարար, հետաքրքրություն էին ցուցաբերում մշակույթի ինքնաբուխ, օրգանական զարգացման հարցի նկատմամբ: Ն. Տրուբեցկոյն իր «Եվրոպան և մարդկությունը» գրքում, հիմնվելով Գ.Տարդի տեսության վրա, պնդում էր, որ մշակութային գործընթացը նոր արժեքների ստեղծում է, որը ի հայտ է գալիս «կոմբինացված նմանակման» արդյունքում: Օտար մշակութային ավանդույթի ներդրումը քայքայում է մշակույթի «օրգանականությունը» և այս առումով առավել վտանգավոր է Եվրոպան: Ռոմանոզերմանական քաղաքակրթության հոգևոր էքսպանսիան Ն. Տրուբեցկոյը դիտարկում է որպես ցանկացած ինքնաբավ մշակույթի համար աղետ:

Եվրոպականացումը խախտում է ժառանգականությունը և հասարակության մեջ պառակտում է մտցնում: Խորանում է մտավորական էլիտայի(որը հեշտությամբ ընկալում և յուրացնում է արևմտյան գաղափարները) և ժողովրդի(որը հակված է դեպի ավանդական մշակույթը) միջև անդունդը: Նոր և ավագ սերնդի միջև պառակտում է սկսվում: Մշակույթի ստեղծագործական հնարավորությունները փոքրանում են, քանի որ հին մշակութային ֆոնդի հետ կապը խզվում է, իսկ նորը դեռ ձևավորվում է:

Եվրասիականների հակաեվրոպակենտրոնությունը պայմանավորել է նաև Եվրասիա հասկացության հատուկ մեկնաբանությունը: Առաջին հռչակագրում նշվում էր, որ Եվրասիան ոչ թե եվրոպականի և ասիականի միացում է, այլ հատուկ «աշխարհամաս», որը տարբերվում է Եվրոպայից և Ասիայից:

Առավել քննադատական էր վերաբերմունքը Արևմտյան Եվրոպայի նկատմամբ: Եվրասիականները ոչ մի դրական կողմ չէին տեսնում եվրոպական ազդեցության մեջ: Եվրոպայի և Ռուսաստանի հարաբերակցությունը եվրասիականների մեծամասնությունը դիտարկում էր սլավոնաֆիլների և Դանիելյանի ոգով:

Արևելքի նկատմամբ վերաբերմունքը ավելի բարդ ու ոչ միանշանակ էր: «Հնդկաստանի կրոնները և քրիստոնեությունը» հոդվածում Ն.Տրուբեցկոյը կոշտ քննադատության էր ենթարկում բուդդիզմը և հինդուիզմը:

Եվրասիականների նպատակն էր ցույց տալ ասիական ժողովուրդների կրոնի և մշակույթի կառուցողական դերը ռուսական քաղաքակրթության ձևավորման և զարգացման գործում և հիմնավորել բազմէթնիկ Ռուսաստան-Եվրասիայի մշակութային միասնության հնարավորությունը:

Մոնղոլական ցեղերը դիտարկվում էին որպես եվրասիական ծագմամբ և պատմական գործունեության բնույթով. նրանք սլավոնների նման մասնակցում էին Ռուսաստան-Եվրասիայի քաղաքակրթական տարածության յուրացմանը և պետականության ստեղծման գործընթացին: Եվրասիականները կարևորում էին պետության դերը որպես ուժեղ քաղաքակրթական ուժ, որն ամրացնում և մեկ միասնության մեջ է ծուլում մշակութային գործունեության բոլոր ձևերը, որպես «կոլեկտիվ անհատականության»՝ եվրասիական ժողովրդի արարող էներգիայի արտահայտումներից մեկը:

Մոնղոլ-թաթարական լծի մասին Պ. Սավիցկին նշում էր, որ եթե նրանք չլինեին,

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

չէր լինի և Ռուսաստանը. ռուսական պետականության մարմինը ստեղծեցին մոնղոլ-թաթարները, իսկ հոգին՝ սլավոնները: [8] Նա Ռուսաստանն ընկալում էր որպես հզոր հորդա, կենտրոնացված պետություն, Չինգիզխանի տերության ժառանգ, և դա նրա Ռուսաստան-Եվրասիայի հայեցակարգի կարևորագույն մասն էր:

Հարկ է նշել, որ «Ելք դեպի Արևելք»-ը իրագործվում էր նաև այլ ձևերով: Ասիական և թուրանական մշակույթներն սկսեցին դիտարկվել որպես Ռուսաստան-Եվրասիայի հոգևոր մշակույթի անբաժանելի մաս: Տեսական հիմքը «սիմֆոնիկ անհատականություն» եվրասիական հայեցակարգն էր, որի հիմքերը դրել էր Լ. Կարսավինը: «Սիմֆոնիկ անհատականության» [9] հայեցակարգով եվրասիականները բարձրացրին նաև ռուսաստանի բազմակրոն լինելու խնդիրը:

Չնայած եվրասիականների հայեցակարգերի թույլ և հակասող կողմերին՝ «Եվրասիա» գաղափարը նոր մեկնաբանությունն էր ստանում: Եվրասիականների ձեռքբերումներից կարելի էր համարել այն, որ սլավոնականությանը չէին դիտարկում որպես միակ մշակութային ստեղծ ուժ Եվրասիայի պատմության մեջ և կարևոր քայլ են կատարել Ռուսաստանի՝ որպես բազմէթնիկ և բազմակրոն հետերոգեն քաղաքակրթության ընկալման ուղղությամբ:

Այս համատեքստում հետաքրքիր է անդրադառնալ Պ. Բիցիլիի «Արևելք» և «Արևմուտք» Հին աշխարհի պատմության մեջ» հոդվածին, որտեղ ստեղծում է Արևելք-Արևմուտք-Ռուսաստան հայեցակարգը:

Եվրասիական աշխարհամասի քաղաքակրթական կառուցվածքում Պ. Բիցիլին առանձնացնում է մերձծովային-ծայրամասային և կենտրոնական շրջաններ, որոնք էականորեն տարբերվում են իրարից. մերձծովային-ծայրամասային «աշխարհները» (Եվրոպա, Հնդկաստան, Իրան, Չինաստան) առավել ակտիվ դեր են ունեցել մշակութային պատմական զարգացման գործընթացում, մինչդեռ «կենտրոնը»՝ քոչվորների հատուկ աշխարհը, բաժանված էր տարբեր մշտապես փոփոխվող, իրար դեմ պատերազմող կազմավորումների: [10]

Ռուսաստան-Եվրասիայի խնդիրը, ըստ Պ. Բիցիլիի, Հին աշխարհի քաղաքակրթական կառուցվածքի, նրա մշակութային միասնության վերականգնումն է: Այս գործում հատուկ դեր տրվում Ռուսաստանին: [11]

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը, կարող ենք նշել հետևյալը.

1. Եվրասիականները համոզված են, որ Ռուսաստանն ունի իր սեփական զարգացման ուղին, որը չի համընկնում արևմտյան քաղաքակրթության հիմնական ուղղության հետ: Վերջին հազարամյակի համաշխարհային պատմությունը ցուցադրում է եվրասիական աշխարհի և արևմտյան քաղաքակրթության հակադրությունը՝ կամ ռուսները, կամ նրանք:

2. Եվրասիական աշխարհամասը դիտարկվում է որպես բարդ քաղաքակրթական կառույց՝ կազմված մի շարք ինքնաբավ լոկալ քաղաքակրթություններից, որոնց միջև դարեր շարունակ գոյություն են ունեցել ամուր տնտեսական, քաղաքական և մշակութային կապեր, որոնք իրագործվում էին համաշխարհային կայսրությունների շնորհիվ:

3. Ռուսաստան-Եվրասիայի գաղափարը անբակտելիորեն կապված է ինքնաձանաչման, քաղաքակրթական նույնականացման գործընթացների հետ և դրա ձևերից մեկն է:

Եվրասիականությունը, փորձելով Ռուսաստանը դիտարկել որպես բազմէթնիկ և բազմակրոն քաղաքակրթություն, գտնվում էր 19-րդ դարի քաղաքակրթական մտքի ազդեցության տակ:

4. Ներկայումս եվրասիականության համար յուրահատուկ հնարավորություն է ըն-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

*ձեռնվելի վերածնվելու: Ժամանակակից Եվրասիականության հիմքում ինտեգրացիան է, որը պետք է ծառայի որպես մասնակից երկրների տնտեսությունների արդիականացման, անվտանգության ապահովման և այլ խնդիրների լուծման կարևոր գործոն: Եվրասիական միությունը ստեղծվելու է որպես Մեծ Եվրոպայի մաս, ունիվերսալ ինտեգրացիոն սկզբունքների հիման վրա, միավորված ազատության, դեմոկրատիայի և շուկայական օրենքների միասնությամբ:*

*Եվրասիական միության ձևավորումը և զարգացումը ենթադրում է ժամանակակից աշխարհակարգի միջպետական և միջազգային հարցերի քաղաքակիրթ լուծում:*

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Россия–Евразия, срединная земля — П.Н. Савицкий <http://rusgeopolit.com/?p=452>
2. Вернадский Г. В. Начертание русской истории. - СПб.: Издательство "Лань", 2000, стр. 5-6
3. Рустем Вахитов — Евразийская цивилизация <http://nevmenandr.net/vaxitov/eurocivil.php>
4. Լոկալ քաղաքակրթությունների տեսությունը դրա էությունը քաղաքակրթական մոտեցման սկզբունքների հիման վրա բացահայտող հայեցակարգերի ամբողջություն է: Ավելի մանրամասն տես՝ Понятие «Теория локальной цивилизации» <http://histrf.ru/uploads/media/default/0001/08/f13a2e24ab97310112d4695ed64671cbda4b6654.pdf>
5. Данилевский Н.Я. Россия и Европа. М., 1991. стр. 89
6. Ламанский В.И. Три мира Азийско-Европейского материка. СПб., 1892. стр. 2.
7. Տե՛ս նույն տեղում էջ 14:
8. Савицкий П.Н. Степь и оседлость <http://gumilevica.kulichki.net/SPN/spn03.htm>
9. Савицкий П. Евразийство как исторический замысел. Прага. 1927 // <http://eurasian-movement.ru/archives/3939>
10. Бицилли П.Н. «Восток» и «Запад» в истории Старого Света <http://evraz-info.narod.ru/3.htm>
11. Ерасов Б.С. Цивилизации. Универсалии и самобытность. М., 2002, стр. 451, 455.

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### Եվրասիականության քաղաքակրթական առանձնահատկությունների մասին Նանա Առուստամյան

Հոդվածը նվիրված է Եվրասիական քաղաքակրթական առանձնահատկությունների խնդրի ուսումնասիրությանը:

Եվրասիական քաղաքակրթությունն ընկալվում է որպես Եվրասիայի ժողովուրդների ընդհանրություն, որոնք միավորված են ընդհանուր զարգացման վայրով, պատմությամբ, մշակութային ավանդույթներով, լեզվով, կրոնով:

Տարանջատվում են Եվրասիական քաղաքակրթության մի քանի պատմական շրջաններ:

Եվրասիան հանդես է գալիս որպես բարդ քաղաքակրթական կառույց՝ կազմված մի շարք ինքնաբավ լոկալ քաղաքակրթություններից:

Եվրասիական միության ձևավորումը և զարգացումը ենթադրում են ժամանակակից աշխարհակարգի միջպետական և միջազգային հարցերի քաղաքակիրթ լուծում:

РЕЗЮМЕ

О цивилизационных особенностях Евразийства  
Нана Арустамян

**Ключевые слова:** *евразийство, цивилизация, идентификация, В. Ламанский, Н.Данилевский, российская империя, месторазвитие.*

Статья посвящена изучению цивилизационных особенностей Евразийства. Евразийская цивилизация воспринимается как совокупность народов, существующих в месторазвитии Евразия, объединенных общим местоположением, историей, культурными тенденциями, языками, религиями.

Выделяются несколько исторических периодов евразийской цивилизации. Евразия рассматривается как сложная цивилизационная структура, состоящая из ряда самобытных локальных цивилизаций. Формирование и развитие Евразийского союза предполагает цивилизованное решение межнациональных и межгосударственных проблем современного миропорядка.

SUMMARY

About Civilizational Peculiarities of Eurasianism  
Nana Arustamyan

**Keywords:** *eurasianism, civilization, identification, V.Lamanski, N.Danilevski, Russian Empire, place - development*

The article deals with the investigation of civilizational peculiarities of Eurasianism. Eurasian civilization is perceived as a sum of people, living in Eurasia, united by common location, history, culture, language and religion.

Several historical periods of Eurasian civilization are distinguished. Eurasia is considered as a complicated civilizational structure, which consists of a number of original local civilizations.

The formation and the development of Eurasian Union suppose the civil solution of the interstational and international problems of contemporary world order.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐՈ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ  
ԳՈՐԾՆԹԱՑԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ\*

Կատերինա Ալբունյան

**Բանալի բառեր՝** քաղաքական էլիտա, քաղաքական կուսակցություն, էլիտաների հավաքագրում, խորհրդարանական էլիտա, էլիտայի հավաքագրման կառուցակարգեր, հավաքագրման բաց համակարգ, կուսակցությունների ինստիտուցիոնալացում, ներկայացուցչական ժողովրդավարություն, կուսակցական համակարգ:

Հասարակության կառավարման որևէ օղակում ընդգրկվել հնարավոր չէ՝ առանց կազմակերպության մաս կազմելու: Կառավարող էլիտաների ուսումնասիրություններով զբաղվող դասական տեսաբանների համոզմամբ՝ քաղաքական էլիտայի հավաքագրումը բաց համակարգով ապահովում են կուսակցությունները: Դրանց շնորհիվ պայքարն իշխանության համար ընթանում է ոչ թե բացառապես արիստոկրատիաների, այլ իշխող էլիտայի և կոնտրէլիտայի միջև, որոնցից յուրաքանչյուրը ապավինում է ընտրազանվածի աջակցությանը[1]: Այս իմաստով ժամանակակից քաղաքական կուսակցությունների ստեղծման հիմնաքարը առաջին անգամ դրվել է էլիտաների դասական հայեցակարգի շրջանակներում: Հայազգի գիտնական Մ. Մինասյանը, ով փաստացի տարանջատել է քաղաքական էլիտան և իշխանությունները, նշում է, որ քաղաքական էլիտան ինչպես քաղաքականության մեջ հաստատված, այնպես էլ սեփական քաղաքականությունն ունեցող ուժն է հասարակության մեջ[2]: Քաղաքագետ Մ. Մարգարյանը, քաղաքական էլիտայի հավաքագրման ուղիներ ասելով, նկատի ունի դեպի քաղաքական պաշտոնակարգության զազաթ տանող ճանապարհները: Այդ կարգի ինստիտուցիոնալ ուղիների շարքին նա դասել է պետական ապարատը, ՏԻՄ-ը, բանակը, **քաղաքական կուսակցությունները**, կրթական համակարգը: Լինելով սելեկտիվ (տեսակավորման) ու էլեկտիվ (ընտրական) կառուցակարգերի համապարփակ գործընթաց՝ քաղաքական էլիտայի հավաքագրումը, մեր կարծիքով, ենթադրում է հետազոտության լայն դաշտ ու բազմաթիվ դերակատարներ: Բացի քաղաքական և պետական կառույցներից ու դրանց դերակատարներից՝ ժողովրդավարական հասարակական-քաղաքական համակարգերում առկա է դերակատարների լայն ընտրանք (անկախ լիդերներ, քաղաքացիական հասարակության ակտիվիստներ, հասարակական-քաղաքական ու բիզնես-կազմակերպությունների ղեկավարներ և այլն), որոնք, լինելով քաղաքականության վրա ազդող, թեև դե յուրե կառավարողների ու իշխանության համակարգից դուրս գործող ուժեր, նույնպես մասնակցում են քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացին: Ելնելով վերոնշյալ մոտեցման տրամաբանությունից՝ կուսակցությունները կարող են դասվել դերակատարների ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դասին: Այդուհանդերձ, կուսակցությունները՝ որպես քաղաքական էլիտայի հավաքագրման ֆորմալ կառուցակարգեր, կոչված են ոչ միայն լինելու քաղաքականության մեջ, այլև կատարելու որոշակի քաղաքական գործառույթներ: Ժամանակակից քաղաքագիտության շրջանակներում քաղաքական էլիտայի հավաքագրման ուղիների ուսումնասիրության տեսանկյունից կարևորվում են ոչ այնքան ընտրությունները, որքան կուսակցություններն ու դրանց գործառույթները: Ավե-

\* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

լին՝ կուսակցության ինստիտուտն ավելի հին է, քան ընտրությունների ինստիտուտը: Կուսակցությունը՝ որպես քաղաքական համակարգի առանցքային դերակատար, ներկայացուցչական ժողովրդավարության տեսության դիրքերից կատարում է քաղաքական էլիտայի հավաքագրման և իշխող էլիտայի քաղաքական սոցիալիզացման, իսկ որպես քաղաքացիական ինստիտուտ՝ հանրային շահերի արտիկուլացման, քաղաքական ծրագրերի առաջաքաշման, քաղաքական վարչակարգի լեգիտիմացման գործառնությունները: Վերջիններս ընդգծվում են նաև Ռ. Հանթերի ու Լ. Դայմոնդի կողմից առաջ քաշված դասակարգման շրջանակներում, համաձայն որի՝ առանձնացվում են գործառնությունների ներկայացուցչական (քաղաքականության մշակման գործընթացը) և ինստիտուցիոնալ (խորհրդարանական ու կառավարական գործունեություն) տեսակները [3]: Գործառնությունների վերոնշյալ դասակարգումներից ելնելով՝ կուսակցությունը արդի քաղաքական համակարգերում ունի թե՛ քաղաքացիական, թե՛ քաղաքական ինստիտուտի կարգավիճակ ու գործառնություններ: Երկրորդի գործառնությունը, մասնավորապես ժողովրդավարական վարչակարգերում, ուղղակիորեն կապված է քաղաքական համակարգի առանցքային ինստիտուտների՝ խորհրդարանի ձևավորման, ընտրությունների կայացման գործընթացների հետ: Ըստ այդմ՝ կուսակցության որպես քաղաքացիական և քաղաքական ինստիտուտի գործառնությունները ոչ միայն տարբերվում են, ինչպես Ռ. Միխելսոն է նշում, այլև նվազում կամ ավելանում են՝ ելնելով կուսակցության՝ հասարակական-քաղաքական համակարգում զբաղեցրած դե յուրե կարգավիճակից կամ ինստիտուցիոնալացման մակարդակից [4]:

Կուսակցությունները՝ որպես քաղաքական էլիտայի հավաքագրման ուղիներ, բացառիկ դեր ունեն ինչպես խորհրդարանական, այնպես էլ նախագահական հանրապետություններում: Այն կարծիքը, թե նախագահական հանրապետություններում կուսակցություններն իշխանության չեն գալիս ու չեն կառավարում՝ չկատարելով քաղաքական էլիտայի հավաքագրման հիմնական խողովակի դեր, այնքան էլ ճիշտ չէ: Կուսակցությունը նախագահական հանրապետություններում կարող է իշխանության գալ, օրինակ, նախագահական ընտրություններում առանձին թեկնածու առաջադրելու միջոցով: Բացի դրանից՝ քաղաքական ցանկացած առաջնորդի կամ առաջնորդների խմբի մոտ վաղ թե ուշ ի վերջո ծագում է քաղաքական կուսակցության վրա հենվելու օբյեկտիվ պահանջմունքը (եթե, իհարկե, նախագահն անկուսակցական է): Կուսակցությունների դերակատարության ու քաղաքական ակտիվության թերագնահատումը նախագահական հանրապետություններում, մասնավորապես քաղաքական էլիտայի ձևավորման և կառավարման գործընթացի տեսանկյունից, գործնական հիմնավորում չունի, ավելին՝ նման հիմնավորում փնտրելն անհիմաստ է, որովհետև դա հակասում է ժողովրդավարական կառավարման տեսությանն ու սկզբունքներին: Ինչն է, շատ չխորանալով նախագահական կառավարման ձևում կուսակցության՝ քաղաքական էլիտայի հավաքագրման գործառնության իրականացման խնդրի մեջ՝ նշենք, որ նախագահական կառավարման ձևում կուսակցության քաղաքական համակարգի լեգիտիմացման գործառնությունը սահմանափակված է ու էականորեն զիջում է խորհրդարանական հանրապետությունների պրակտիկային:

Կուսակցական համակարգերի, կայուն ու ժողովրդավարական քաղաքական էլիտայի ձևավորման ու հավաքագրման հաջողված փորձ ունեն գլխավորապես խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրները: Քաղաքական իշխանության համար պայքարը խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում ի սկզբանե սկսվել է խորհրդարանից՝ հաշվի առնելով նաև պատմական այն իրողությունը, որ կուսակցությո-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

յունների ստեղծման պահին համընդհանուր ընտրական իրավունքը չի եղել (վերջինս ընդունվել է միայն 1867 թ.), բայց այսօր արդեն չի սահմանափակվում միայն խորհրդարանով: Հաշվի առնելով, որ պարտոզենեզի պատմությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) և արևմտաեվրոպական խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրների մեծ մասում սկսվել է խորհրդարանական միություններից, քաղաքական էլիտան ու իշխանությունն այստեղ ասոցացվում են խորհրդարանական կուսակցությունների ձևավորման, կայացման և համախմբման գործընթացների հետ: Քաղաքական կուսակցություններն ու պետական իշխանությունը դրանցում նույնացվում են, իսկ խորհրդարանական հանրապետություններին տրվում է փոխաբերական իմաստ՝ «կուսակցապետություններ» բնորոշմամբ:

Խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում քաղաքական էլիտայի հավաքագրման կառուցակարգերի մասին հետազոտական հարուստ էմպիրիկ նյութ կարելի է գտնել անցումազիտությունում (տրանզիտալոգիա) [5]: Գիտակարգը հագեցած է տարբեր երկրներում (այդ թվում՝ ԿԱԵ և նախկին Խորհրդային Միության (ՆԽՄ)) ավտորիտար քաղաքական վարչակարգերի փոփոխման և ժողովրդավարական անցման տեսություններով, դրանցում ձևավորված քաղաքական էլիտաների մոդելային սխեմաներով, հավաքագրման խողովակների վերլուծություններով և այլն: Մեծ մասամբ արևմտյան տեսաբանների մոտեցումներն արտացոլող այդ հսկայածավալ նյութը մշակվել է «հարևան հայացքի» սկզբունքով: Միայն վերջին երկու տասնամյակների ընթացքում ԿԱԵ և ՆԽՄ համակարգի երկրներում լայնածավալ ուսումնասիրություններ են արվել ժողովրդավարական անցման գործընթացների, անցման պայմանների, քաղաքականության հիմնական դերակատարների, այդ թվում՝ քաղաքական էլիտաների ձևավորման ու արդիականությունը չկորցրած այլ թեմաների ու խնդիրների վերաբերյալ [6],[7]: Այդ ուսումնասիրությունները շարունակվում են մինչ այսօր, և հնարավորություն են տալիս ներքին գնահատականներ տալու այն բոլոր քաղաքական գործընթացներին, որոնք տեղի են ունեցել 20-րդ դարի վերջերին աշխարհաքաղաքական այդ լանդշաֆտի պետություններում: Ժողովրդավարական անցման վերոհիշյալ բազմավեկտոր հետազոտություններում քաղաքական վարչակարգերի փոփոխությունը, ժողովրդավարական համախմբման մոդելների, սցենարների նմանությունների ու տարբերությունների, անցման պայմանների ու զարգացման հետազոտի համեմատությունը թե՛ ԿԱԵ ու թե՛ ՆԽՄ երկրներում արժեքավոր են հատկապես քաղաքական էլիտայի ձևավորման և հավաքագրման ինստիտուցիոնալ խողովակների վերլուծության տեսանկյունից: Հատկանշականն այն է, որ ԿԱԵ երկրներում խորհրդային կարգերի փլուզումից ի վեր, քաղաքական էլիտայի հավաքագրման բաց համակարգի հաստատման և ժողովրդավարական համախմբման (կոնսոլիդացիայի) գործընթացի հաջողությունը կապում են կուսակցությունների ինստիտուցիոնալացման, կուսակցական համակարգերի կայունացման հետ: Պատմահամեմատական մեթոդը թույլ է տվել մեզ առանձնացնել վերոնշյալ գործընթացի երկու փուլեր և դրանց հատկանշական կրիտերիաներ: Առաջին փուլում կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացման գործունե կառուցակարգեր են եղել՝


- ինքնին անցումը խորհրդարանական կառավարման ձևին,
- բազմակուսակցական համակարգի ներդրումն ու կուսակցությունների իրավական կարգավիճակի սահմանումը,
- կուսակցությունների սոցիալական հենքի ստեղծումը՝ էլիտայի հավաքագրման ներքևից վերև սկզբունքով իրականացման նպատակով,
- քաղաքականության ու «խաղի կանոնների» չափազորիչների, քաղաքական էլի-



## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

տայի պրոֆեսիոնալիզմը գնահատելու չափանիշների (խորհրդարանական աշխատանքի ստաժ, կրթություն, ընտրարշավային փորձ, խորհրդարանի «մասնագիտական ավագանի» և այլնի) սահմանումը՝ էլիտայի ներսի և դրսի հատվածները տարանջատելու նպատակով:

ԿԱԵ երկրների մեծ մասում բազմակուսակցական համակարգի հաջողությունը պայմանավորվել է քաղաքական կուսակցությունների գործունեության լեգալացման և կուսակցությունների մասին օրենքների ընդունման գործընթացով: Այստեղ առանցքային է ընդգծել հենց վերոնշյալ հիմնադրույթները և ոչ թե պլուրալիզմի հանդեպ քաղաքական հանդուրժողականության բարձր մակարդակը, քանի որ պլուրալիզմը դեռ չի երաշխավորում քաղաքական իշխանության ձևավորման ու որոշումների ընդունման գործընթացին բոլորի մասնակցությունը: Քաղաքական համակարգի էլիտայաստեղծ գործառույթ են իրականացնում, ինչպես վերը նշեցինք, բացառապես իշխանության մաս հանդիսացող քաղաքական կուսակցությունները: Այս իմաստով Լայփհարտը տարանջատել է «կուսակցությունների թիվ» և «կուսակցական համակարգ» հասկացությունները [8]: Խորհրդարանական հանրապետություններում քաղաքական էլիտայի հավաքագրման տրամաբանությունը բխում է, ընդհանուր առմամբ, կուսակցական համակարգերի տիպաբանությունից: Միակուսակցական համակարգերում գործում է քաղաքական էլիտայի հավաքագրման փակ համակարգ ոչ միայն մի կուսակցության կառավարման, այլ նաև իշխանություն-սեփականություն միասնության սկզբունքից ելնելով: Երկկուսակցական համակարգերում քաղաքական էլիտայի հավաքագրումն իրականացվում է երկու կուսակցությունների միջև՝ առաջնորդվելով քաղաքական մեծամասնության, իշխանություն-ընդդիմություն սկզբունքով: Բազմակուսակցական համակարգերում քաղաքական էլիտան հավաքագրվում է փաստացի խորհրդարանական խմբակցություններ (ֆրակցիաներ) ունեցող կուսակցություններից: Խորհրդարանական խմբակցություններ ունեցող կուսակցությունների թիվը, օրինակ, ԿԱԵ երկրների դեպքում, բազմակուսակցական համակարգին անցնելուց ի վեր, պահպանվում է 5-7-ի միջակայքում (տես **Գծապատկեր 1**) [9]: Բազմակուսակցական համակարգերում քաղաքական էլիտայի հավաքագրման բաց համակարգի ապահովման խնդիրը, ի տարբերություն առաջին երկու կուսակցական համակարգերի, պայմանավորված է ոչ միայն կուսակցությունների թվով, այլև կուսակցական դաշինքներ կազմելու, ընտրական համակարգի առանձնահատկություններով: Դրան զուգահեռ՝ կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացը պայմանավորող գործոններ են նաև կուսակցության կազմակերպական կառուցվածքը, կադրային քաղաքականությունը, կուսակցության ներսում ժողովրդավարության ավանդույթների հաստատման, ճյուղավորման, ներկայացուցչական և այլ չափանիշներ, որոնց կանդրադառնանք մի փոքր ներքևում:



Կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացը, որի հաջողությամբ աչքի են ընկնում խորհրդարանական կառավարման ձև ունեցող հանրապետությունները, կառուցվածքային, գործառութային փոփոխություններին զուգահեռ, ուղեկցվել է նաև կուսակցական գործունեության օրենսդրական կարգավորման ու վերահսկման համապատասխան փոփոխություններով: ԿԱԵ երկրների մեծ մասում, ինչպես նաև խորհրդարանական կառավարման ձև ունեցող արևմտաեվրոպական երկրներում, կուսակցությունների մասին օրենքներում հստակ սահմանագիծ է անցկացվում խորհրդարանում ընդգրկված և այդպիսին չհանդիսացող կուսակցությունների միջև: Ըստ վերոնշյալի՝ քաղաքական համակարգի էլիտայաստեղծ գործառույթ են իրականացնում բացառապես իշխանության ու քաղաքական համակարգի մաս կազմող քաղաքական կուսակցությունները: Քաղաքական համակարգի մաս կազմել, ըստ Կ.Բերատայի, նշանակում է լիիրավոր են մասնակցել քաղաքական որոշումների ընդունման, քաղաքականության մշակման և պետական կառավարման մարմինների ձևավորման գործընթացներին [10]: Հասարակական-քաղաքական գործընթացներին մասնակցելու կուսակցության իրավունքներն ու պարտականություններն առհասարակ նախատեսվում են նաև սահմանադրությամբ, օրենքներով և իրավական այլ ակտերով: Հատկանշական է այստեղ այն, որ ամբողջ աշխարհում, անկախ կառավարման ձևից, օրենսդրական կարգավորման բարձր մակարդակով աչքի է ընկնում հատկապես կուսակցությունների արտախորհրդարանական ու ընտրական գործունեությունը (ներառում է կուսակցական մարմինների ստեղծման, ֆինանսավորման, պետական և քաղաքական պաշտոններին թեկնածուների առաջադրման, ընտրարշավներին մասնակցության և մրցակցության օրենսդրական կետերը): Մինչդեռ կարգավորման անհամեմատ թույլ մակարդակ ունի կուսակցությունների խորհրդարանական և կառավարչական գործունեությունը (ներառում է խորհրդարանական խմբակցությունների, ազգային, տարածքային և տեղական մարմիններում քաղաքական կուսակցությունների գործունեությունը): Վերոնշյալից կարելի է պարզապես մի հետևություն անել, որ, թեև կուսակցությունների ինստիտուցիոնալացման ու գործունեության օրենսդրական կարգավորման նման կառու-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ցակարգերը նպաստել են ընդհանուր առմամբ, քաղաքական էլիտայի հավաքագրման ավելի բաց համակարգի ձևավորմանը՝ քաղաքական խաղի կանոնների և էլիտայի ներսի ու դրսի հատվածների սահմանման տրամաբանությունից ելնելով, այնուամենայնիվ օրենսդրական դաշտում շարունակում է բաց մնալ հատկապես խորհրդարանական և կառավարչական գործունեության շրջանակներում քաղաքական կուսակցությունների քաղաքական պատասխանատվության խնդիրը և գործունեության կարգավորման մի շարք այլ ասպեկտներ: Քաղաքական կուսակցությունների ինստիտուցիոնալացման խնդրի համակողմանի ուսումնասիրության բաղկացուցիչ մաս են կազմում դրանց կառուցվածքային ու կադրային քաղաքականության որոշ ասպեկտներ: Քաղաքական կուսակցություններից են ձևավորվում պետության գործադիր, օրենսդիր, պետական կառույցների ղեկավար կադրերը: Կուսակցությունը՝ որպես քաղաքական էլիտայի հավաքագրման ինստիտուցիոնալ հիմնական խողովակ ճանաչող ներկայացուցչական ժողովրդավարություններում, քաղաքական բյուրոկրատիան ձևավորվում է կուսակցականության սկզբունքով: Այդ պատճառով, խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններին, առհասարակ, տիպական է քաղաքական և վարչական պաշտոնների համատեղման փորձը: Կուսակցության կադրերի հավաքագրումը կատարվում է՝ խորհրդարանական և կառավարական բարձր պաշտոնների նշանակման հեռանկարից ելնելով: Հաշվի առնելով այդ նպատակի առաջնայնությունը՝ նույնիսկ ժողովրդավարական կառուցակարգերով իրականացվող կադրային քաղաքականությունը չի կարող արդյունավետ լինել՝ առանց կադրային ներքին գտիչների (կուսակցության շարքերում կատարված աշխատանքներ, կադրային հատուկ դպրոցներ, բյուրոկրատիա և այլն): Քաղաքական կուսակցությունների դասական կառուցվածքը՝ բաղկացած կուսակցական ղեկավարությունից, խորհրդարանականների և շարքային անդամներից, էականորեն փոխվել է: Ժամանակակից կուսակցությունները կառուցվածքային բարդ համակարգ ունեցող ինստիտուտներ են, որի մեջ մտնում են կուսակցության գործադիր մարմնի մշտական աշխատակիցները, ընտրովի մարմինների անդամները, մասնագետները (փորձագետներ, ռեֆերենտներ), տեխնիկական անձնակազմը և այլն: Սակայն քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը պայմանավորող որոշիչ գործոններից մեկը ոչ թե ինքնին ստորակարգային (հիերարխիկ) կառուցվածքի ուսումնասիրությունն է, այլ կուսակցության կենտրոն-ծայրամաս հարաբերությունների կարգավորման մեթոդներն ու կառուցակարգերը: Խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում քաղաքական էլիտայի հավաքագրման բաց համակարգը, ըստ Վելինգտոնի համալսարանի պրոֆեսոր Ք.Էյխբաումի, ենթադրում է պետական մարմինների ու քաղաքական կուսակցությունների միջև կադրային ռոտացիայի կառուցակարգերի ստեղծումը[11]:

Քաղաքական կուսակցությունների կադրային քաղաքականության արդյունավետության ու հանրային պատասխանատվության բարձրացման կառուցակարգերը կայացած կուսակցական համակարգեր ունեցող պետություններում ևս կարգավորվում են օրենքով և իրավական այլ ակտերով: Այս իմաստով օրինակելի է Մեծ Բրիտանիայում ներդրված խորհրդարանական ընտրությունների կուսակցական ցուցակների կազմման գործընթացը վերահսկող ու կարգավորող վերկուսակցական մարմնի ստեղծումը: Սկսած 2001 թ-ից՝ խորհրդարանական թեկնածուների հավա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

քաղաքում ու հաստատման գործընթացը բրիտանական կուսակցությունների պրակտիկայում իրականացվում է խորհրդարանի գնահատման պալատի կողմի [12]: Բազմակուսակցական համակարգ ունեցող արևմտաեվրոպական այնպիսի երկրներում, ինչպիսին է Գերմանիան, նման կառուցակարգերից է կուսակցական ցուցակներում առանձին թեկնածուներ ընտրելու հնարավորությունը: Ինչ վերաբերում է ԿԱԵ երկրներին, ապա կադրային քաղաքականությունն ու կուսակցական ցուցակների կազմման գործառույթները շարունակում են մնալ կուսակցության առաջնորդների կոմպետենտության շրջանակներում:

Ամփոփելով կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացի առավել կարևոր ասպեկտները, ինչպես նաև մեր կողմից հնչեցված խնդիրներն ու հարցադրումները քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի համատեքստում, որի ընթացքում նկատի է առնվել նաև ԿԱԵ երկրներում ինստիտուցիոնալացման ու անցման գործընթացի հաջողությունը պայմանավորած գործոնների ու պրակտիկայի վերաբերյալ համապարփակ նյութը՝ կուսակցությունների ինստիտուցիոնալացման երկրորդ փուլի (ըստ էության, այն նշանավորեց նաև ժողովրդավարական համախմբման գործընթացը) արդյունքները կարելի է թվարկել կետերով: Այսպես՝ երկրորդ փուլի արդյունքում՝

- սահմանվել է խորհրդարանական կուսակցությունների կայուն թիվը,
- մշակվել է խորհրդարանական էլիտայի հավաքագրման բաց համակարգ,
- ընդգծվել է քաղաքականության իրականացման թիմային սկզբունքի կարևորությունը՝ քաղաքականությունն անձերից դեպի թիմը փոխադրելու համար,
- ընդլայնվել է կուսակցությունների սոցիալական հենքը հիմնականում ռեգիոնալ ու միջազգային ինտեգրման կառուցակարգերի միջոցով,
- ձևավորվել է արհեստավարժ քաղաքական էլիտա հիմնականում նախարարական և խորհրդարանական պաշտոնների համատեղման սկզբունքից հրաժարվելու միջոցով:

Թվարկված հիմնասկզբունքները կոնսոլիդացված քաղաքական կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ստեղծման անհաժեշտ պայմաններ են բոլոր այն երկրների համար, որտեղ կուսակցությունները հանդիսանում են քաղաքական էլիտայի հավաքագրման հիմնական ինստիտուցիոնալ խողովակը կամ ուղին: Քաղաքական կուսակցությունների որպես էլիտայաստեղծ խողովակի ուսումնասիրությունն այսօր առավել քան երբևէ արդիական է մեզ համար, չնայած կուսակցությունների հետազոտության թեման նոր չէ հայ քաղաքագիտական մտքի շրջանակներում [13], [14], [15]: Բազմակուսակցականության սկզբունքը որպես ՀՀ-քաղաքական էլիտայի հավաքագրման սկզբունք, իր օրենսդրական ամրագրումը ստացավ հետխորհրդային առաջին իսկ տարիներից (1991 թ. փետրվար): Այդուհանդերձ, կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացն ամբողջությամբ ավարտված չէ մեր իրականության մեջ: Այս իմաստով հողվածում մատնանշված իրողությունների ու խնդիրների շուրջ հարցադրումները կարող են նոր հորիզոններ բացել՝ գործընթացն ավարտին հասցնելու ակնկալիքով:

Համեմատելով ՀՀ և ԿԱԵ երկրների պարտոգենեզի պատմությունը՝ առանձնացրել ենք որոշ ընդհանրություններ: Ինչպես ԿԱԵ երկրներում, այնպես էլ ՀՀ-ում, խորհրդային միակուսակցական վարչակարգից անցում է կատարվել բազմակու-

սակցական վարչակարգի: Ընդ որում՝ կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացը երկու դեպքում էլ բնութագրվում է քաղաքական կուսակցությունների ստեղծման ուղիների ընդհանրությամբ, այլ բնորոշմամբ՝ պատմական կուսակցությունների վերածնման, նոր կուսակցությունների ստեղծման ու կոմունիստական կուսակցության կերպափոխման միջոցով: Կուսակցությունների ներքին տարբերական գործընթացի արդյունքում խոշոր քաղաքական միություններից ու դաշինքներից ածանցվեցին բազմաթիվ փոքր ու միջին քաղաքական ուժեր: Այնուամենայնիվ, կուսակցությունների ինստիտուցիոնալացման բարեփոխումները (գործառութային, կառուցվածքային և օրենսդրական) դեռևս շարունակվում են: Հատկանշական են մյուս կողմից ԿԱԵ երկրների ու ՀՀ միջև տարբերությունները՝ պայմանավորված գլխավորապես պետական կառավարման տարբեր ձևերի, կուսակցական ու ընտրահամակարգերի ընտրությամբ: Բազմակուսակցականությունն ու քաղաքական կուսակցությունների գործառությունը ՀՀ-ում չպսակվեց քաղաքական համախմբման հաջողությամբ՝ խորացնելով քաղաքական դաշտում գործող ուժերի բևեռացումն ու հատվածականությունը: Ավելին՝ կուսակցությունները չստանձնեցին քաղաքական էլիտայի հավաքագրման հիմնական խողովակի դերը, որովհետև ՀՀ-ն, ի տարբերություն ԿԱԵ երկրների մեծ մասի, խորհրդային վարչակարգից անցավ նախագահական կառավարման ձևի: Բացի դրանից՝ ՀՀ-ն այդպես էլ չմշակեց (ոչ էլ առաջարկվեց) քաղաքական էլիտայի հավաքագրման մոդել՝ ի տարբերություն ԿԱԵ երկրների, որոնք ինտեգրեցին ու ադապտացրին «Եվրոէլիտայի» մոդելը:

Վերջերս լայն ժողովրդականություն ու տարածում է գտել այն կարծիքը, թե քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը դուրս է եկել առհասարակ ինստիտուտների (կուսակցությունների, ընտրությունների) գործառության տրամաբանական շրջանակներից՝ հղում անելով գլխավորապես դրանց անարդյունավետության վրա: Փոխարենը ոճային է քաղաքական էլիտայի հավաքագրման ոչ ինստիտուցիոնալ խողովակների, սոցիալական բարեկեցության սկզբունքների արդյունավետության մասին տեսակետները: Կուսակցության ինստիտուտի անարդյունավետության, կամ գուցե ավելի ճիշտ կլինի նշել, արդյունավետության անկման մասին պնդումը սոցիալական հետևորդներ է հավաքում նաև ներկայացուցչական ժողովրդավարություններում: Դա պայմանավորված է գլխավորապես քաղաքականության այլ ակտորների ազդեցության մեծացման, այլընտրանքային կազմակերպությունների՝ հասարակական շարժումների ու կազմակերպությունների, շահերի խմբերի, քաղաքական ակցիաների պրակտիկայի տարածման և մի շարք այլ գործոններով [13]: Չի կարելի չհամաձայնել, որ քաղաքականության մշակման և քաղաքական որոշումների ընդունման գործընթացի տեսանկյունից, անշուշտ, կուսակցության ինստիտուտը գործառության արդյունավետության անկում է ապրում ամենուր, սակայն որպես քաղաքական էլիտայի հավաքագրման ինստիտուցիոնալ խողովակ կուսակցությանը փոխարինող ինստիտուցիոնալ այլ ձևաչափ դեռևս չկա, այնպիսի ձևաչափ, որը թույլ կտա քաղաքական գործիչներին աշխատել թիմով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Mosca G.**, The Ruling Class (Elementi di ScienzaPolitia), Translated by Hannah D.Khan, New York and London,1939, McGREW-HILL Book Company, p. 154, Michels R., Political Parties: A Sociological Study of the Oligarchical Tendencies of Modern Democracy, Translated by Eden and Ceder Paul, Kitchener, Batoche Books, 2001, p. 219
2. **Մինասյան Մ.**, Քաղաքական էլիտա, Եր., 2005, էջ 204:
3. **Diamond L., Gunter R.**, Political Parties and Democracy, The Johns Hopkins University Press and the Natioanl Endowment for Democracy: A Journal of Democracy book, Baltimore and London, 2001, p. 55-57
4. **Michels R.**, Political Parties: A Sociological Study of the Oligarchical Tendencies of Modern Democracy, Translated by Eden and Ceder Paul, Kitchener, Batoche Books, 2001, p. 124-125
5. **Huntington S. P.**, The Third Wave: Democratization in the Late Twentieth Century, 1991, Political Parties and Party Types-Conceptual Approaches to the Institutionalization of Political Parties in Transitional States: The Case of the Philippines: Published by Konrad-Adenauer-Sifting, 2010
6. **Bugaiski J.**, Political Parties of Eastern Europe: A Guide to Politics in the Post-Communist Era, The Centre for Strategic and International Studies, 2002
7. **Шеворский А.**, Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке, «Российская политическая энциклопедия» (РОССПЕН), М., 2000
8. **Lijphart A.**, Patterns of Democracy: Government Forms and Performance in Thirty-Six Countries, Yale University Press, 1999, p. 368
9. Տվյալների հիմնական աղբյուրը՝ Parliamentary Elites in Central and Eastern Europe: Recruitment and Representation, Ed. by Semenova E., Edinger M., Bset H., by Routledge, N.Y., 2014, -318
10. **Casa-Berato F., Piccio D. R., Rashkova E. R.**, Party Law in Comparative Perspective: The Legal Regulation of Political Parties, Working Paper 16, March 2012, p. 12
11. **Eichbaum Ch., Shaw R.**, Partisan Appointess and Public Servants: An International Analysis of the Role of the Political Adviser, Edward Elger Publishing, Inc.: USA, 2010, p. 10-12
12. **Williams R., Paun A.**, Party People: How do- and how should-British Political Parties select their Parliamentary Candidates?, Institute for Government, 2011, p. 15
13. **Քեռյան Գ.**, Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Եր., «Վան Արյան», 2002, էջ 288
14. **Քեռյան Գ.**, Կուսակցությունների տիպավորման գաղափարաքաղաքական սկզբունքի կիրառման հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», N 3(144), էջ 47-59
15. **Մխիթարյան Մ.**, Քաղաքական ինստիտուտների ձևավորումը ՀՀ-ում, ,21-րդ ԴԱԼԵ, N 1 (5), Եր., 2007, էջ 119-127
16. Political Parties in Conflict-Prone Societies: Regulation, Engineering and Democratic Development, Ed. by Benjamin Reilly and Per Nordlund, Centre for Democratic Institutions (CDI), International Institute for Democracy and Electoral Assistance (IDEA) and United Nations University (UNU), 2008, p. 27

ԱՄՓՈՓԱԳԻՐ  
Կուսակցությունը քաղաքական էլիտայի հավաքագրման  
գործընթացի համատեքստում  
Կատերինա Ալթունյան

Հոդվածում քննվում է քաղաքական կուսակցությունը որպես քաղաքական էլիտայի հավաքագրման հիմնական և առանցքային ինստիտուտ: Կուսակցությունների կայացման և ինստիտուցիոնալացման խնդիրը քաղաքական էլիտայի հավաքագրման համակարգերի առանձնահատկությունները պայմանավորող գլխավոր գործոններից են: Վերոնշյալ խնդիրների համապարփակ ուսումնասիրության ժամանակ հոդվածում անդրադարձել ենք կուսակցությունների գործառույթներին և գործառույթան որոշ այլ ասպեկտների, ինչպիսիք են՝ կառուցվածքը, կուսակցությունների գործունեության օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները: Հաշվի առնելով կուսակցությունների գործառույթան արդյունավետության անկման միտումներն ամբողջ աշխարհում՝ կարծում ենք՝ հոդվածում բարձրացված խնդիրները ոչ միայն արդիական են, այլև օրակարգային:

РЕЗЮМЕ

Роль политических партий в контексте рекрутинга политических элит  
Катерина Алтунян

*Ключевые слова:* политическая элита, политическая партия, рекрутирование элит, парламентская элита, механизмы рекрутирования элит, открытая система рекрутирования, институционализация партий, представительная демократия, партийная система.

Политические партии являются неотъемлемой частью процесса рекрутирования политических элит. В рамках статьи сам процесс включает изучение трех основных аспектов проблемы: основные функции партий, современную структуру и законодательное урегулирование деятельности политических партий. Подчеркивая функциональную роль политических партий как в президентской, так и парламентской формах правления, основное внимание было сосредоточено на последнем. Учитывая тот факт, что роль политических партий, как основных институциональных каналов рекрутирования политической элиты переживает кризис эффективности, в том числе и в армянской действительности, вышеподнятые вопросы являются не только своевременными и актуальными, но и стоят в политической повестке дня.

**SUMMARY**

**The Role of Political Parties in the Framework of Political Elites Recruitment**  
**Katerina Altunyan**

**Keywords:** *political elite, political system, recruitment of political elites, parliamentary elite, mechanisms of recruitment of political elites, system of elite recruitment, institutionalization of political parties, participatory democracy, party system.*

The study of Political party is an integral part of the process of recruitment and selection of political elites. A framework of current research includes three main elements of that process: the basic functions, the contemporary structure and legislative regulation of political parties' action. Emphasizing the role of political parties both in presidential and in parliamentary forms of government, the attention primarily is focused on the latter. Taking into consideration the fact that the role of political parties as key institutional channels of recruitment of the political elite is facing a crisis of efficiency, also in the Armenian reality, the issues raised above are not only timely and relevant, but are on the agenda.



**ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ\***

**Հոսիկ Ավանեսով**

**Քանակի բառեր`** Կիրովականի մանկավարժական ինստիտուտ, ինքնապաշտպանության ուժեր, Ազգային լեզուն, «Արծիվ-3»:

*Արցախյան ազատագրական պատերազմն (1988-1994թթ.)\*\* առաջացել է Ադրբեջանի ռազմական ագրեսիայի արդյունքում, որ 1988-ից մինչև 1991թ-ի ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածն այն կրել է հիմնականում տեղային բնույթ: Հետագայում Ադրբեջանը ձեռնարկեց կազմակերպված ու բացահայտ ռազմական ներխուժում, որն ընթանում էր տարածքների զավթումով ու հայ բնակչությանը բռնի տեղահանումներով, որին դիմակայելու ու հայրենի երկրամասը պաշտպանելու նպատակով սկիզբ առավ Արցախյան ազատամարտը, որը, հիրավի, ռազմաքաղաքական կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի նորագույն պատմության համար: Շնորհիվ համազգային պայքարի, մեր հայրենիքի մի հատվածի վրա վերականգնվեց հայկական պետականությունը:*

*Պատմաբան Մ. Ա. Հարությունյանի կարծիքով` Արցախի Հանրապետության կազմավորման գործընթացն ունեցել է իրավաքաղաքական երեք հանգրվան.*

**1988 թ. փետրվարի 20-ից 1991թ. սեպտեմբերի 2.**

**1991 թ. սեպտեմբերի 2-ից դեկտեմբերի 10.**

**1991թ. դեկտեմբերի 10-ից 1992թ. հունվարի 8 [1]:**

*Արցախյան ազատամարտի կարևորագույն ձեռքբերումներից է Հայոց բանակի կազմավորումը: Գործընթաց, որն ընթացել է մի քանի փուլով` կամավորական-աշխարհագրային ջոկատների կազմավորումից մինչև կանոնավոր բանակի ձևավորումը, տեղի է ունեցել մարտական գործողություններին զուգընթաց ու Արցախի դեմ Ադրբեջանի կողմից կատարված էթնիկ զտումների և ագրեսիայի արդյունքում առաջացած ծանր պայմաններում:*

*Միանգամայն ակնհայտ է, որ կանոնավոր ու մարտունակ բանակի կազմավորումը ժամանակի հրամայական էր և թելադրված էր նյութատեխնիկական ու մարդկային ռեսուրսներով մի քանի անգամ գերակշռող Ադրբեջանի ագրեսիային ու պետական ահաբեկչական քաղաքականությանը արդյունավետորեն դիմագրավելու և իր բնօրրանում արցախահայության ապրելու ու արարելու անքակտելի իրավունքը պաշտպանելու անհրաժեշտությունից [2]:*

*1994թ. Հայաստանի և ադրբեջանականի միջև ստորագրվել է գինադադար: Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի և Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի միջնորդությամբ Հայաստանի, Ադրբեջանի և Արցախի խորհուրդների խոսնակները ստորագրել են Արցախի պատերազմում արդեն բանակցված և Բիշկեքում*

\* Հոդվածն ընդունվել է 30.01.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.թ., դոցենտ Մ.Հարությունյանը:

\* Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՄՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 16.10-007 գիտական թեմայի շրջանակներում:

\*\* Մասնագիտական գրականության մեջ հանդիպվում է նաև Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (ՂԱՊ), Արցախյան պատերազմ կամ ազատամարտ, Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտություն և այլ եզրույթներով:

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

(Ղրղզստան) ստորագրված արարողակարգը: Բանակցություններում Արցախն առաջին անգամ ճանաչվել է որպես առանձին քաղաքական և տարածքային միավոր:

Ժամանակի ընթացքում յուրաքանչյուր դարակազմիկ իրադարձություն ունենում է իր վերահիմաստավորման պահանջը: Այդ ճանապարհին ստեղծվում են զանազան աշխատանքներ՝ հուշագրությունների, վկայությունների, ակնարկների տեսքով, որոնք ընդհանրացնելու և գիտական ուսումնասիրության նյութ դարձնելու անհրաժեշտություն է առաջանում: Ակնհայտ է, որ միայն վկայություններով, հուշագրություններով հնարավոր չէ լիարժեք գիտական ուսումնասիրություն կատարել: Ղրա համար պահանջվում են նաև համապատասխան արխիվային, փաստավավերագրական նյութեր, տվյալ ժամանակի պարբերական մամուլի հրատարակումների ընդհանրացում, տարբեր հիմնահարցերի շուրջ մասնակիցների ու ակնատես գործիչների պարզաբանումները և կարծիքները: Նշված գործնառնակի համակարգման արդյունքում մի շարք աշխատություններ են հրատարակվում Արցախյան պատերազմին նվիրված: Այդ աշխատանքների շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ուսումնական հաստատություններում սովորողների ունեցած ներդրման մասին հրատարակումները:

Գրականագետ **Ս. Խանյանն[3]** իր ուսումնասիրություններում անդրադարձել է ազգային - ազատագրական պայքարում ԱրԴՀ-ի ունեցած դերակատարությանը:

Հոդվածում քնարկվող մի շարք հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են **Լ. Գրիգորյանի[4]**, **Ս. Սարգսյանի[5]**, **Ռ. Բալայանի [6]** աշխատությունները: **ԱրԴՀ** ուսանողների սխրանքը բացահայտելու և նրանց հիշատակը հավերժացնելու կոչված առաջին ամբողջական ժողովածուի[7] հրատարակումը միաժամանակ նպատակ է հետապնդել՝ ստեղծելու անհրաժեշտ հիմքեր երկրորդ լրամշակված հրատարակությունն իրականացնելու համար 2009 թվականին, Երևանում «Ձանգակ-97» հրատարակչությունում [8]:

Խնդրո առարկա թեմային առանձին հոդվածներով անդրադարձել է նաև պատմաբան **Մ.Ա. Հարությունյանը [9]**, որոնցում հեղինակը լուսաբանել է ԱրԴՀ-ն Արցախյան ազատամարտի տարներին, առանձին դրվագներով ներկայացրել է նաև Արցախի մայր բուհի ուսանողության մասնակցությունը հայրենիքի պաշտպանությանը, ազգային-ազատագրական նորոյա պայքարում Արցախի մայր բուհին առնչվող հիմնահարցեր:

Արցախյան գոյամարտին ուսանող ազատամարտիկների մասնակցության վերաբերյալ նյութեր կան նաև պարբերական մամուլում[10]: Ուսանողության մասնակցությունը Հայոց հայրենական պատերազմին առանձին ակնարկային հոդվածի նյութ է դարձել ազգային-ազատագրական պայքարին նվիրված մեկ հատորից բաղկացած հանրագիտարանում [11]:

Սույն ուսումնասիրության վերաբերյալ նյութեր կան նաև «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվում [12]:

Արցախյան ազգային ազատագրական պայքարում իրենց ուրույն դերակատարությունն են ունեցել միջնակարգ, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողները, որոնք սկզբնական շրջանում ծավալում էին ընդհատակյա գործունեություն, այդ թվում նաև հրատարակչական:

**Աշակերտների մասնակցությունը ազգային ազատագրական պայքարին**

Խնդրո առարկա թեմային առնչվող նյութերի բացարձակ մեծամասնության մեջ անդրադարձ է կատարվում հիմնականում Արցախյան ազատամարտում ունեցած ուսանողության դերակատարության մասին, որն էլ այնպիսի տպավորություն է ստեղծում, թե աշակերտները որևէ ներդրում չեն ունեցել ազգային ազատագրական պայքարում: Մեր կողմից կատարված սույն հետազոտությունում հաշվի առնելով վերոնշ-

յալ հանգամանքը՝ ադրադարձել ենք նաև աշակերտների ունեցած դերակատարությանը՝ դրանով մեր համեստ ներդրում ունենալով վերոհիշյալ բացի լրացման գործում:

1988 թ. սկզբներին Շուշիի Խաչատուր Աբովյանի անվան համար 3 միջնակարգ դպրոցի բարձր դասարանցիները հիմնել են ընդհատակյա խմբակ, որի նպատակն էր համախմբել ազգությամբ հայ համաքաղաքացիների ջանքերը Մայր Հայաստանին Արցախի վերամիավորման ուղղությամբ:

Աշակերտական ընդհատակյա խմբակը լույս է ընծայել նաև «Վանա լիճ» աշակերտական քաղաքական ամսաթերթը: Անդրանիկ համարը թվագրված է 1988 թ. մայիսի 10-ով: Խմբագիր-հրատարակիչն էր Միեր Հարությունյանը: Թերթն ունեցել է «Հայ ժողովուրդ, ազատությունդ քո միասնության մեջ է» բնաբանը:

1988 թ. հունիսի 1-ի համարը կրել է «Հայերի համայն աշխարհի, միացե՛ք» բնաբանը: Թերթը քարոզել է ազգային գաղափարներ, Արցախյան շարժումը դիտարկել որպես գերագույն նպատակին՝ Արևմտյան Հայաստանին վերատիրելու սկիզբ:

Շուշիի հայ բնակչության բռնագաղթից հետո [13] Ստեփանակերտում ապաստան գտած աշակերտները վերսկսեցին իրենց ընդհատակյա գործունեությունը՝ իրենց խմբակը վերանվանելով «Արևմտյան Հայաստան» կազմակերպություն: Այն հրատարակել է «Արևմտյան Հայաստան» աշակերտական, քաղաքական ընդհատակյա շաբաթաթերթը: Առաջին համարը լույս է տեսել 1989 թ. հունվարի 19-ին՝ Միեր Հարությունյանի խմբագրությամբ ու ջանքերով:

Կրել է «Հայ ժողովուրդ, փրկությունդ քո միասնության մեջ է» բնաբանը\*:

Ստեփանակերտ, 1989թ. մայիսի 5-ին թերթը լույս է տեսել նոր զլխագրով՝ «Ծովից ծով Հայաստան»: Աշակերտական, քաղաքական ընդհատակյա շաբաթաթերթի խմբագիր-հրատարակիչն էր Միեր Հարությունյանը: Դատելով «Հայաստանի ժողովուրդական կուսակցության» մարմնի գրառումից՝ կարող ենք ենթադրել, որ այն ունեցել է լուրջ և հեռագնա նպատակներ:

Կրել է «Լինենք բռունցք» խորագիրը [14]:

Ազգային գաղափարախոսության տարածման ու հրատարակչական գործնետնությունից բացի՝ աշակերտներն ակտիվորեն մասնակցել են ազգային ազատագրական պայքարին ինչպես տարբեր ջոկատների կազմում, այնպես էլ առաձին աշակերտական ջոկատներով: Վերջներից հայտնի է Ազգային լեգեոնը:

«Ազգային լեգեոն» կամավորական ջոկատը կազմավորվել է 1989 թվականին Երևանում մայրաքաղաքի տարբեր դպրոցների 9-10-րդ դասարանի աշակերտներից:

1992թվականին ջոկատը համալրվել է Մասիսի և Միսիանի նույն տարիքի կամավորականներով: Ունեցել է շտաբ, դրոշ, զինանշան: Մինչև 1992 թվականի հունվարը՝ «Ազգային լեգեոնը» մասնակցել է ուսումնամարզական հավաքների: 1992 թվականի աշնանը ջոկատի հիմքի վրա կազմավորվել է «Արծիվ-3» կամավորական գումարտակը: 1992-1994 թվականներին «Ազգային լեգեոնը» մասնակցել է ՀՀ Գորիսի (Շուռնուխ, Աղբուլաղ, Կոռնիձոր), Կապանի, Միսիանի և Արցախի Հանրապետության Ասկերանի, Մարտակերտի (Հոռաթաղ, Չլդրան, Մաղավուզ, Հակոբ Կամարի, Տոնաշեն, Մադաղիս), Որոտանի (Կուբաթլուի), (Սեյթաս, Մագրա, Վերին Ջիբիբլի, Ներքին Ջիբիբլի), Բերձորի (Ծաղկաբերդ, Կուշչի) շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Հրամանատարներ՝ Ս. Հակոբյան, Լ. Գևորգյան (մարտական հրամանատար), շտաբի պետ՝ Հ. Գերոյան [15]:

\* Պահպանվել է սևագիր ու անավարտ օրինակը:

**Ուսանողների մասնակցությունը Հայոց հայրենական պատերազմին**

Դեռևս 1986թ. ապրիլից ընդհատակում գործող «Արցախական միության» աշխատանքներին մասնակցում էին հայ ուսանողներ, որոնք պայքարի փորձ ձեռք բերեցին ու ազատագրական պայքարի կրողներ դարձան՝ հետագայում ստանձնելով ողջ ուսանողության ներուժի համակարգման ու կազմակերպման, գաղափարական կողմնորոշման և իրենց հետևից տանելու առաքելությունը [16]:

1988թ. գարնանը ձեռնարկվեցին ուսանողությանը կազմակերպելու և ջանքերը համախմբելու քայլեր: Դրա համար անհարժեշտ էին միավորող գաղափար և ծրագրված ու նպատակաուղղված գործելակերպ, որը կանոնակարգված պիտի լիներ կանոնադրությամբ: Այդ խնդիրը լուծելու համար ՀԸԱԿ, որն առաջադրել էր ռազմաքաղաքական խնդիրներ: Ակտիվիստ ուսանողները 1988-ի մարտ ամսում երդվեցին ՀԸԱԿ-ի ծրագրի, կանոնադրության, զենքի և եռագույն դրոշի վրա: Դա, փաստորեն, դարձավ նրանց զինվորական ու կուսակցական երդումը: Կուսակցության շարքերն ընդլայնելու նպատակով գաղափարական աշխատանք ծավալվեց ուսանողության շրջանում:

Ուսանող-ակտիվիստները գործում էին շատ զգույշ՝ ՊԱԿ-ի լրտեսներից գաղտնի մնալու և պատահական մարդկանցից զերծ մնալու նպատակով: Իսկ ընտրությունը կատարվում էր խիստ չափանիշներով: Մի քանի ամիս անց արդեն ԿՄԻ Ստեփանակերտի բաժանմունքում զգալի էր ընդհատակյա կազմակերպության աշխատանքը [17]:

ՀԸԱԿ-ի հետքերը թաքցնելու նպատակով որոշվում է ստեղծել երիտասարդական կազմակերպություն, որը կոչված էր նոր անդամներով համալրելու կուսակցությունը և փոխարինելու արդեն իսկ հեղինակազրկված կոմերտմիությանը: Այդպես ստեղծվում է ԱՌԵՄ: Ակտիվիստներից Ալիկ Սարգսյանի վկայությամբ՝ մինչև 1989թ. աշունը ձևավորվել էր նաև ուսանողական ջոկատը, որը դեռ գործողություն չէր սկսել: Ուսանողական ջոկատի գործնելության սկիզբ կարելի է համարել 1989թ. աշունը, երբ, կապ հաստատելով Բիւս-ի հետ, 10-15 մարդուց կազմված առանձին խմբերով, շինջոկատի պատրվակի տակ, ուսանողները 10-20 օրով մեկնում էին Բերդաձոր ու զինված հերթապահություն տանում ենթաշրջանի 4 գյուղերում: Այն ժամանակ մշտական հրամանատար չկար, այլ ընտրվում էր առաջադրանքը կատարելուց առաջ, հենց առաջադրանքը կատարելու վայրում: Ընդհանուր հրամանատարը Արկադի Կարապետյանն էր, որի հետ համաձայնեցվում էր ամեն մի գործողություն, իսկ որոշում կայացնելիս հաշվի էր առնվում բոլոր մասնակիցների կարծիքը: Գաղափարական գործողություններից բացի՝ ուսանողներն զբաղվում էին նաև պարտիզանական գործողություններով, ավելի հաճախ զենքի ու զինամթերքի հայթայթումով և տեղափոխմամբ, դիվերսիոն գործողություններով սահմանամերձ բնակավայրերում, ուր նաև շփումների մեջ էին մտնում տեղի բնակիչների հետ՝ վստահելի մարդիկ գտնելու նպատակով [18]: 1990թ. օգոստոսի 11-ին ՀԸԱԿ-ի աջ թևի հիմքի վրա Հ.Խաչատրյանի նախաձեռնությամբ հիմնադրվել է ՀԱՃ ռազմաքաղաքական կազմակերպությունը, որի գաղափարախոսության հիմքը Գարեգին Նժդեհի «Ցեղակրոն» ուսմունքի հիմնադրույթներն էին: Կազմակերպության մեջ ընդգրկվել են մեծ թվով ուսանողներ, որոնք, գաղափարական աշխատանքներից բացի (1990-91թթ. հրատարակվել է «Ավետյաց երկիր» թերթը)[19]: Ուսանողական ջոկատը 1990-93-ին մասնակցել է Մարտունիի (Ղարադաղլու), Ասկերանի (Փառուխ, Ղահրավ, Սառնաղբյուր), Շուշիի (Բերդաձորի ենթաշրջան), Մարտակերտի (Տոնաշեն, Թալիշ, «Պուշկեյնյալ» և հեռուստաաշտարակի բարձունքներ, Դրմբոն, Առաջածոր) շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: 1993-ի մարտի 13-ին ջոկատը լուծարվել է, ազատամարտիկներն ընդգրկվել են ԼՂՀ ԻՊՈւ տարբեր ստորաբաժանումներում: Տարբեր ռազմական գործողությունների ժամանակ հրամանա-

տարներ են եղել Մ. Բաղդյանը, Շ. Խաչատրյանը և Ա. Աբրահամյանը [20]:

Այսպիսով՝ Արցախի մայր բուհն իր մասնակցությունն է ունեցել մեր հանրապետության պաշտպանության ու կայացման գործում: Ուսանողներն ու դասախոսներն աչքի են ընկել բոլոր ուղղություններում մղված մարտական գործողություններում, զինվորական կառույցներ ու ստորաբաժանումներ ստեղծելու և ղեկավարելու գործում: Ուսանողներ Է. Բարսեղյանի [21], Լ. Կարապետյանի, Ի. Հասրաթյանի և այլոց անձնվեր օրինակն ու խիզախումները ոգեշնչման աղբյուր էին բազմաթիվ ազատամարտիկների համար, ովքեր տոգորվում էին անարգ թշնամուն ջախջախելու, Արցախի սահմաններից հեռու շարտելու վճռականությամբ [22]:

Արցախյան ազատամարտում իր ուրույն դերակատարությունը ունեցավ նաև ԵՊՀ-ն:

ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմն իր ժողովներում և ԽՄԿԿ Կենտկոմին ուղղված դիմումներում բողոք և անհամաձայնություն էր հայտնում Արցախի հարցում Կրեմլի որդեգրած քաղաքականությանը:

Խորհրդային ինտերնացիոնալիզմից անցում էր կատարվում հայոց ազգային գաղափարախոսությանը:

Համալսարանականներն առաջին շարքերում էին ոչ միայն խոսքով, այլև գործով: Արցախում և Հայաստանի մյուս սահմանամերձ շրջաններում Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմն ստիպեց մի շարք ֆակուլտետների ուսանողներին կիսատ թողնելու համալսարանական ուսումնառությունը, ստեղծելու կամավորական ջոկատներ և մեկնելու Արցախ, ինչպես նաև Հայաստանի մյուս սահմանամերձ շրջաններ, իսկ նրանք, ովքեր մնացին համալսարանում, ամեն կերպ աջակցում էին մարտնչող Արցախին: Միայն 1988-1989 թթ. ընթացքում համալսարանականները կազմակերպեցին 10-ից ավելի ուղղաթիռային չվերթ՝ Արցախ հասցնելով հազուստ, սննդամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ:

1989թ. կեսերից համալսարանում ստեղծվել և գործում էր հատուկ հանձնաժողով, որը հիմնականում զբաղվում էր Հայաստանի սահմանամերձ շրջաններին և Արցախի ինքնապաշտպանական ջոկատներին պարեն, հազուստ և զենք-զինամթերք մատակարարելու հարցով: Համալսարանում բոլորն, ինչ-որ ձևով փորձում էին օգնել Արցախի հայությանը: Օրինակ՝ ֆիզիկայի ֆակուլտետում հրացանների համար կոտորակ էին պատրաստում, կապարե զնդակներ ձուլում Արցախ ուղարկելու համար, իսկ քիմիայի ֆակուլտետի դասախոսները առաջինն էին, որ Հայաստանում սինթեզեցին հրթիռային վառելանյութ[23]: Բացի վերոնշյալ ուսումնական հաստատություններից՝ Արցախյան գոյապայքարին մասնակցել է նաև ՀՊՏՀ-ը:

1988 թվականին, երբ սկսվեց Արցախյան շարժումը, հայաստանյան բուհերը, ուսումնական կառույցներ լինելուց բացի, դարձան գաղափարական և կազմակերպչական լուրջ օջախներ և ձեռնամուխ եղան Արցախի անկախացման կազմակերպմանը: Այս ամենից անմասն չմնաց նաև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ նախկին ժողինստիտուտը: Հենց այստեղ էլ մի խումբ ուսանողների ջանքերով 1989 թվականին ձևավորվեց «Նժդեհ» կամավորականների ջոկատը, որը հատուկ և գաղտնի գործողություններ էր իրականացնում: Ջոկատի գերխնդիրը մարտնչող Արցախին օգնություն հասցնելն էր: Կամավորականներն իրականացնում էին բազմաբնույթ աշխատանքներ՝ հավաքագրում էին զենք, սնունդ, հազուստ և անհրաժեշտ պարագաներ կազմակերպում այդ բեռների անվնաս տեղափոխումը Արցախ: Սկզբնական շրջանում ջոկատն իր գործունեությունը ծավալում էր Երևան քաղաքում, իսկ, 1990 թվականից սկսած, ուսանողական շինջոկատի անվամբ քողարկվելով, մի քանի անգամ մեկնում է Արցախ ու ՀՀ սահմանամերձ այլ բնակավայրեր և մասնակ-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ցում ռազմական գործողությունների: 1990 թվականի ապրիլ ամսից **ԽՍՀՄ** հատուկ ծառայությունների ուշադրությունը սևեռվում է «Նժդեհ» կամավորականների ջոկատի վրա, ինչի պատճառով ջոկատը փաստացի դադարում է գոյություն ունենալուց և անցնում է ընդհատակյա գործունեության [24]:

Արցախյան պատերազմում իր ակտիվ մասնակցություն է ունեցել նաև **Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը (ԵՊԻԻ)**. ներկայումս այն կոչվում է **ՀԱՊՀ**:

Հարկ ենք համարում նշել, որ ապրիլյան պատերազմի ժամանակ ևս տարբեր ուսումնական հաստատություններում սովորողներն ակտիվորեն մասնակցում էին թիկունքում ծավալված բոլոր աշխատանքներին:

Այսպիսով՝ 2016թ. ապրիլի սկզբին, երբ Ադրբեյջանի ռազմաքաղաքական դեկավարությունը պատերազմ սանձագերծեց Արցախի դեմ և թիրախավորեց խաղաղ բնակչությանը և հասարակական նշանակության կառույցները՝ ցույց տալով իր ահաբեկչական ձեռագիրը, ուսումնական հաստատություններում սովորողներն Արցախյան ազատամարտում մասնակցած իրենց սերնդակիցների օրինակով կամավորագրվեցին ձևավորված կամավորական շարժմանը ու կանգնելով հայ զինվորի կողքին՝ անառիկ պահեցին հայրենի երկրամասի սահմանը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարությունյան Մ.Ա., Լեռնային Ղարաբաղ. տասնամյա պայքարի հիմնական փուլերը: ԼՂՀ անկախության տասնամյա տարելիցին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, ԵՊՀ պատմութ. ֆակուլտետ, Եր., 2001, էջ 15-18, տես նույնի՝ Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., Շուշի «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2015, էջ 39-40:
2. Հարությունյան Մ., ԼՂՀ Պաշտպանության բանակի մի քանի առանձնահատկությունների մասին, Ստեփ., 2010, էջ 3-4:
3. Խանյան Ս., Արցախի պետական համալսարանը ազգային-ազատագրական պայքարում/«Արցախի համալսարան» ԱրՊՀ պաշտոնաթերթ, փետրվար-մարտ 1998թ.: Նույնի՝ Ազգային-ազատագրական պայքարի թեժ օջախը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփ., 2007 N2, էջ 3-6:
4. Գրիգորյան Լ., Ընդհատակում//«Արցախի համալսարան» ԱրՊՀ պաշտոնաթերթ, փետրվար-մարտ 1998թ.:
5. Սարգսյան Ս., Ուսանողներն ու Արցախյան գոյամարտը //«Հայ զինվոր» ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ, 2000թ., 5-12 օգոստոս, թիվ 31:
6. Բալայան Ռ., Արցախի գոյապայքարում մեր ուսանողներն են// «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 1998 N1, էջ 73-76: Տես նաև նույնի՝ ԱրՊՀ շրջանավարտների հայրենասիրական խիզախումները, Արցախյան ազատամարտում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Եր., 2005 N 5-6, էջ 126-131, նույնի՝ ԱրՊՀ մտավորականությունը և Արցախյան հերոսամարտը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Եր., 2006 N3-4, էջ 96-97:
7. Բալայան Վ.Ռ., Բալայան Ռ.Ա., Հարությունյան Մ.Ա., Հուշամատյան սխրանքի (կենսագրական պատումներ), Ստեփանակերտ 2002, 80 էջ:
8. Բալայան Վ.Ռ., Բալայան Ռ.Ա., Հարությունյան Մ.Ա., Անկախության նվիրյալները, ԱրՊՀ ուսանողները Արցախյան ազգային-ազատագրական պայքարի ուղիներին, Եր., 2009, 92 էջ:

9. Հարությունյան Մ. Ա., ԱրՊՀ-ն Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին// ԱրՊՀ գիտական ընթերցումներ/ Ձեկուցումների հիմնադրույթներ 20-21 ապրիլի 2009: Եր., 2009, էջ 6-8, նույնի՝ Արցախի մայր բուհի ուսանողությունը հայրենիքի պաշտպանության դիրքերում, «Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն»։ ԼՂՀ և ՀՀ անկախությանը նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2011, էջ 235-244: Տես նաև նույնի՝ Ազգային ազատագրական նորոթյա պայքարում Արցախի մայր բուհի դերի մասին, «Մետրոպ Մաշտոց Համալսարանի լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Եր., 2015, էջ 93-105:
10. «Ապառաժ» 2003թ. 1-28 փետրվարի N3-4, «Հայրենյաց պաշտպան», մարտ 2003թ., «Հայ զինվոր» ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ, 2000թ., 5-12 օգոստոս, թիվ 31, «Արցախի համալսարան» ԱրՊՀ պաշտոնաթերթ, փետրվար-մարտ 1998թ.:
11. Ուսանողությունը և դարաբաղյան ազատագրական պատերազմը, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ. հանրագիտարան մեկ հատորով, Հ.Այվազյանի խմբ., Եր., 2004, էջ 639-650:
12. «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, գործ 18, թ. 1, եր.ա, «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, գործ 18, թ. 1, եր.բ:
13. Факты о политике этнической чистки и государственного террора в отношении армян, проводимой властями Азербайджанской ССР в конце 80-х – начале 90-х годов XX века. Свидетельства очевидцев о преступлениях, совершенных азербайджанцами в отношении мирного армянского населения г. Шуши (документы и материалы).- Состав., отв. ред., авт. вступ. статьи: М. А. Арутюнян// “Качар”, Ежегодник научного центра «Качар», книга 2 Шуши, Издательство научного центра «Качар», 2014.
14. Հարությունյան Մ., Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874-2009թթ.): Պատմաքննական ներածությամբ, ծանոթագրություններով և մեկնաբանություններով, Ստեփ., 2010, էջ 66-68:
15. Վարդանյան Հ., Ազգային լեզուն//Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ. հանրագիտարան մեկ հատորով, Հ.Այվազյանի խմբ., Եր., 2004, էջ 42-43: Տես նաև՝ Ավանեսով Հ., Աշակերտների մասնակցությունը Արցախյան ազգային ազատագրական պայքարին//«Հայրենյաց պաշտպան» հունվար 2017թ. N183, էջ 4:
16. Բալայան Վ.Ռ., Արցախի պետական համալսարանի պատմությունը (1969-2009թթ.), Ստեփ., 2009, էջ 20:
17. Ավանեսով Հ., ԼՂԻՄ գոյության վերջին տարիներին հայ ազգաբնակչության զինված ինքնապաշտպանության կազմակերպման մասին //Մետրոպ Մաշտոց Համալսարանի լրատու», գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Եր., 2016, էջ 59-60:
18. Բալայան Վ.Ռ., Բալայան Ռ.Ա., Հարությունյան Մ.Ա., Անկախության նվիրյալները, ԱրՊՀ ուսանողները Արցախյան ազգային-ազատագրական պայքարի ուղիներում, Եր., 2009, էջ 11:
19. Հարությունյան Մ., Ազգային ազատագրական նորոթյա պայքարում Արցախի մայր բուհի դերի մասին //Մետրոպ Մաշտոց Համալսարանի լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Եր., 2015, էջ 100:
20. Հարությունյան Մ., «Ցեղակրոն»//Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ., հանրագիտարան 1 հատորով, էջ 635:

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

21. Հարությունյան Մ., Ասկերան. հերոսության հասցեներ, Ասկերան 2005, էջ 34:
22. Հարությունյան Մ., Արցախի մայր բուհի ուսանողությունը հայրենիքի պաշտպանության դիրքերում//Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն».  
ԼՂՀ և ՀՀ անկախությանը նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2011, էջ 243:
23. Երևանի պետական համալսարանը Արցախյան զոյապայքարում / ԵՊՀ, Հայագիտ. հետազոտ. ինստիտուտ: Աշխ. խմբի ղեկ., գլխ. խմբ.՝ Ա. Սիմոնյան: Կազմ. և հրատ. պատրաստեց Ժ. Մանուկյանը.- Եր.: ԵՊՀ հրատ., 2011, էջ 7-8:
24. «Նժդեհ» ջոկատ, [https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%AA%D5%A4%D5%A5%D5%B0\\_%D5%BB%D5%B8%D5%AF%D5%A1%D5%BF](https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%AA%D5%A4%D5%A5%D5%B0_%D5%BB%D5%B8%D5%AF%D5%A1%D5%BF)[վերջին դիտումը 16.11.2016].

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ**

- ԱՀ-Արցախի Հանրապետություն
- ԱրՊՀ- Արցախի Պետական Համալսարան
- ԱՈՒԵՄ-Արցախյան Ռեսանողաերիտասարդական Միություն
- ԲԻՆ-Բերդաձորի Ինքնապաշտպանության Խորհրդ
- ԵՊՀ-Երևանի Պետական Համալսարան
- ԻՊՈւ- Ինքնապաշտպանության Ուժեր
- ԼՂԻՄ-Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ
- ԼՂՀ- Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
- ԽՄԿԿ-Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցություն
- ԿԳՄՆ-Կրթության Գիտության ու Սպորտի Նախարարություն
- ԿՄԻ- Կիրովականի Մանկավարժական Ինստիտուտ
- ՀԱՃ- Հայ Ազգայնականության Ճակատ
- ՀԱՊՀ-Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
- ՀԸԱԿ-Հայոց Ընկերավարական Արցախական Կուսակցություն
- ՀՀ-Հայաստանի Հանրապետություն
- ՊԱԿ- Պետական Անվտանգության Կոմիտե
- ՀՊՏՀ-Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան
- ՊՆ-Պաշտպանության Նախարարություն
- ССР- Советская Социалистическая Республика

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Ուսումնական հաստատությունների սովորողների մասնակցությունը  
արցախյան ազգային ազատագրական պայքարին  
Հովիկ Ավանեսով**

Արցախյան ազատագրական պատերազմը հայ ժողովրդի նորագույն պատմության փառավոր էջերից է: Այդ պայքարի շնորհիվ վերականգնվեց Հայոց պետականությունը: Ղարակազմիկ այս պատմական իրադարձությանն իրենց ուրույն դերակատարությունն ունեցան ուսանող ազատամարտիկները:



**РЕЗЮМЕ**

**Участие студентов учебных заведений в Арцахской освободительной борьбе  
Овик Аванесов**

*Ключевые слова:* Педагогический институт Кировакана, Силы самообороны, «Национальный легион», Арцив -3.

Арцахская освободительная война – одна из доблестных страниц новейшей истории армянского народа. Благодаря этой борьбе была восстановлена Армянская государственность. В формировании этой исторической действительности важнейшую роль сыграли студенты -освободители.

**SUMMARY**

**The Participation of Students from Educational Institution in  
the Artsakh National Liberation Movement  
Hovik Avanesov**

*Keywords:* Pedagogical institute of Kirovakan, Self-Defense forces National Legion «Arciv -3».

The Artsakh Liberation War is one of the most glorious pages in the modern history of the Armenian people. As the result of this struggle the Armenian statehood was restored. Student freedom-fighters had their essential role in this historical event.

## ՇՈՐԹՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ\*

### Էրիկ Արզումանյան

**Քանալի բառեր`** շորթում, շորթման առարկա, շորթման օբյեկտիվ կողմ, պահանջ, սպառնալիք, հարկադրանք, բռնություն, ազատ կամահայտնություն:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է շորթման հասկացությունը, որի համաձայն` շորթումը անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, ինչպես նաև անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձի, նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու պահանջն է:

Վերոհիշյալ հասկացության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ շորթման օբյեկտիվ կողմը դրսևորվում է հանցավորի կողմից տուժողին պահանջ ներկայացնելով` հանձնել իրեն գույք կամ գույքի նկատմամբ իրավունք կամ իր օգտին կատարել գույքային բնույթի այլ գործողություններ: Ընդ որում, այդ պահանջը պետք է ամրապնդվի սպառնալիքով, որի տեսակները հստակ կանխորոշված են քննարկվող հոդվածով: Դրանք են` անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ նրանց իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, անձի կամ նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքները:

Մասնագիտական գրականության մեջ համակողմանի քննարկման առարկա են դարձվել շորթման հանցակազմի օբյեկտիվ կողմը, ինչպես նաև առարկային վերաբերող մի շարք խնդրահարույց հարցեր, որոնցից մի քանիսին հարկ ենք համարում անդրադառնալ նաև սույն հոդվածում:

Շորթման հանցակազմի առարկա են, ինչպես հետևում է վերոհիշյալ հոդվածից, գույքը, գույքի նկատմամբ իրավունքը, գույքային բնույթի այլ գործողությունները:

Մի շարք հեղինակներ գտնում են, որ շորթման առարկայի նման ձևակերպումը, մասնավորապես` դրա բաժանումն ու առանձին տեսակներով ներկայացումը, այնքան էլ նպատակահարմար չէ:

Ինչպես գիտենք, գույք է համարվում նյութական աշխարհի այն իրը (առարկան), որում նյութականացվել է մարդկային աշխատանքը, և որը հանդես է գալիս շարժական կամ անշարժ գույքի ձևով և ունի դրամական գնահատման արժեք[1]:

Հանցակազմի դիսպոզիցիայում հատուկ նշվում է շորթման առարկա հանդիսացող գույքի իրավաբանական յուրահատկությունը. այն է` շորթողի համար գույքը պետք է լինի ուրիշինը, չգտնվի իր տնօրինության կամ պահպանության տակ: Այս հանգամանքը, իհարկե, չի նշանակում, որ հանցավորի կողմից պահանջները կարող են ներկայացվել միայն գույքի սեփականատիրոջը:

\* Հոդվածն ընդունվել է 30.01.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Առաքելյանը:

Որոշ հեղինակների կարծիքով՝ «գույք» հասկացությունն իր մեջ ընգրկում է գույքի նկատմամբ իրավունք հասկացությունը, ուստի այս երկու հասկացությունների առանձնացումը գուրկ է տրամաբանական որևէ հիմքից [2]: Վ. Ն. Սաֆրոնովի կարծիքով՝ շորթման առարկա հանդիսացող գույքի նկատմամբ իրավունքի խորը ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ այն իրենից ներկայացնում է գույք կամ գույքային բնույթի գործողություն[3]:

Լյնուամենայնիվ, որոշ հեղինակներ այն կարծիքին են, որ գույքի նկատմամբ իրավունքի՝ որպես շորթման առանձին առարկայի նախատեսումը արդարացված է, քանի որ «գույքային իրավունք» և «գույք» հասկացությունները նույնական չեն այն պատճառով, որ գույքային իրավունքը կոչված է սահմանելու գույքի իրավական կարգավիճակը՝ հիմնականում հանդես գալով փաստաթղթի տեսքով և ամենևին չի ներառվում գույք հասկացության մեջ:

Ինչ վերաբերում է գույքային բնույթի այլ գործողությանը, ապա դրա տակ հարկ է հասկանալ տուժողի այն գործողությունը, որը պայմաններ է ստեղծում կամ խոչընդոտներ է վերացնում շորթողի անօրինական հարստացման համար: Գործողությունները կարող են տարաբնույթ լինել՝ ծառայությունների անհատույց մատուցում, բարձր վարձատրվող պաշտոնի նշանակում՝ առանց համապատասխան իրավական հիմքի և այլն[4]:

Հարկ է նկատել, որ օրենսդիրը, «գույքային բնույթի այլ գործողություն»-ը նախատեսելով որպես շորթման առարկա, փաստորեն, գույքի կամ գույքային իրավունքի հանձնումը դիտարկել է որպես գույքային բնույթի գործողություն, որպիսի պարագայում կարծես թե վերջինների առանձին նախատեսումը իմաստագրվում է:

Լյսախտով՝ բազմաթիվ են կարծիքները, որ շորթման առարկայի տարբեր տեսակների սահմանումը և առանձնացումը միայն խնդիրներ է առաջացնում իրավակիրառողի համար, քանի որ վերջինս ստիպված է նշելու, թե յուրաքանչյուր դեպքում ոտնձգությունը կոնկրետ որ առարկայի դեմ է ուղղված, այսինքն՝ առարկայի մի տեսակը հստակորեն տարբերակել մյուսից այն պարագայում, երբ դրանց տարբերությունը որևէ կերպ չի անդրադառնում ինչպես արարքի հանրային վտանգավորության աստիճանի, այնպես էլ դրա քրեաիրավական որակման վրա:

Որպես խնդրի լուծման հնարավոր տարբերակ՝ առաջարկվում է շորթման հանցակազմի առարկան սահմանել մեկ ընդհանուր հասկացությամբ: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տուժողի կողմից գույքի կամ գույքային իրավունքի հանձնումը կամ գույքային բնույթի այլ գործողության կատարումը հանցավորի համար ոչ այլ ինչ է, քան գույքային բնույթի օգուտ, և հանցավորի արարքը միտված է հենց գույքային բնույթի օգուտ ստանալուն՝ առաջարկվում է շորթման առարկան սահմանել որպես «գույքային բնույթի օգուտ», ինչը հնարավորություն կտա խուսափելու վերը նշված խնդիրներից: Քննարկվող հնարավոր տարբերակներից մեկն էլ «գույքային բնույթի գործողություն» հասկացության նախատեսումն է, որը, ինչպես նշվեց, իր մեջ ներառում է նաև գույքի և գույքային իրավունքի հանձնումը:

Հարկ է նշել սակայն, որ այդ դեպքում, ինչպես և այժմ, քննարկվող հանցակազմի կարգավորման տիրույթից դուրս կմնան այն դեպքերը, երբ հանցավորը տուժողից պահանջում է ձեռնպահ մնալ իր գույքային իրավունքների իրացումից (օրինակ՝ ժառանգության ստացման համար օրենքով սահմանված ժամկետում դիմում ներկայացնելուց կամ փոխառության գումարը հետ պահանջելուց)՝ իր այդ պահանջը զուգորդելով սպառնալիքով: Մինչդեռ, ակներև է, որ նշված դեպքերում հանցավորի արարքը շորթման հանցակազմով որակվելի է կարող, քանի որ ինչպես ներկայումս, այնպես էլ

առաջարկվող փոփոխության պայմաններում հանցավորի՝ տուժողին ուղղված որոշակի գործողություն կատարելուց ձեռնպահ մնալու պահանջը հանցակազմի առարկա չի հանդիսանում: Ուստի, կարծում ենք, որ հանցակազմի դիսպոզիցիան պետք է կառուցվի այնպես, որ իր մեջ ներառի նաև վերը քննարկված իրավիճակները: Մասնավորապես, գտնում ենք, որ շորթման պահանջը քննարկվող հոդվածում պետք է ձևակերպվի հետևյալ կերպ. «(...) գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի իրավունքների իրացումից ձեռնպահ մնալու պահանջը»:

Անդրադառնալով շորթման օբյեկտիվ կողմին՝ պետք է արձանագրել, որ տեսական գրականության մեջ այն բնութագրվում է որպես երկու՝ միմյանցից տարբեր գործողությունների համակցություն:

Ըստ Լ. Դ. Գաուխմանի և Ս. Վ. Մաքսիմովի՝ շորթումը օբյեկտիվ կողմից միշտ արտահայտվում է երկու՝ բովանդակությամբ, էությամբ և ուղղվածությամբ միմյանցից տարբեր գործողություններով[5]: Պահանջներն ուղղված են հանցակազմի անմիջական օբյեկտի դեմ, իսկ սպառնալիքները՝ լրացուցիչ օբյեկտի: Վերջիններս կոչված են ապահովելու հիմնական օբյեկտի դեմ ուղղված ոտնձգության իրականացումը[6]:

Պրոֆեսոր Նեգամովայի կարծիքով՝ շորթումը օբյեկտիվ կողմից իրենից ներկայացնում է բարդ, բազմատարր հանցագործություն՝ գույքի, գույքի նկատմամբ իրավունքի, գույքային բնույթի գործողության կատարման պահանջ՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ հոգեբանական բռնության գրծադրում[7]:

Ս. Մ. Կոչոյին գտնում է, որ շորթման օբյեկտիվ կողմի բնութագրական հատկանիշը միայն պահանջն է՝ հանձնել գույք կամ գույքի նկատմամբ իրավունք կամ կատարել գույքային բնույթի այլ գործողություններ[8], իսկ Լ. Ա. Պրոխորովը և Մ.Լ. Պրոխորովան ընդգծում են, որ շորթման օբյեկտիվ կողմը հանցավորի կողմից տուժողին գույք, գույքի նկատմամբ իրավունք իրեն հանձնելու կամ գույքային բնույթի գործողություն կատարելու պահանջի մեջ է, որը զուգորդվում է որոշակի բովանդակությամբ սպառնալիքով[9]:

Շորթման օբյեկտիվ կողմի վերը նշված մեկնաբանությունների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում հանգելու հետևյալ եզրակացությանը՝ իհարկե, որոշակի տարակարծություններով, այնուամենայնիվ, այս բոլոր բնորոշումները համախմբվում են այն հանգամանքի շուրջ, որ շորթման հասկացության մեջ ելակետային նշանակություն ունի «պահանջ» եզրույթը՝ չնայած այն հանգամանքին, որ որոշ հեղինակներ այդ պահանջը (հանձնել գույք, կամ գույքային իրավունք կամ կատարել գույքային բնույթի այլ գործողություն) դիտարկում են այլ գործողությունների հետ միասնության մեջ (տարատեսակ սպառնալիքներ)՝ տալով դրանց հավասարաթեք նշանակություն, իսկ հեղինակների մյուս մասը գտնում է, որ հենց և բացառապես պահանջի մեջ է շորթման էությունը (ինչպես, օրինակ, ավագակության դեպքում հարձակումը):

Պահանջը տեսական գրականության մեջ բնորոշվում է որպես վճռական, կտրուկ կերպով տրված հրահանգ, վերջնագիր: Մասնավորապես՝ Յու. Ի. Շևցովը պահանջը բնորոշում է որպես հանցավորի վճռական, իմպերատիվ կերպով արված կոչ իրեն գույք կամ գույքի նկատմամբ իրավունք հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու մասին[10]:

Իրականում, սակայն, հնարավոր են դեպքեր, երբ գույքային պահանջները կտրուկ և իմպերատիվ կերպով չհնչեն: Քողարկված այդ պահանջները կարող են դրսևորվել բարեկիրթ խնդրանքի, ակնարկի, գործնական առաջարկի տեսքով: Ուստի ակներև է, որ շորթման իրականացումը հնարավոր է նաև նշված եղանակներով, սակայն նման դեպքերը չեն կարող որակվել շորթման հանցակազմով: Այսինքն՝ պահանջի՝ որպես շորթման հանցակազմի պարտադիր հատկանիշի սահմանումը էապես նեղացնում

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

է հանցակազմի օբյեկտիվ կողմը, որպիսի հանգամանքը տեսական գրականության մեջ դարձել է համընդգրկուն քննարկման առարկա:

Այս կապակցությամբ Վ.Վ.Վեկլենկոն արդարացիորեն նշել է, որ շորթումը, բնորոշելով որպես ուրիշի գույքը հանձնելու պահանջ, օրենսդիրն անհիմն նեղացրել է դրա օբյեկտիվ կողմը, քանի որ պահանջը ենթադրում է վճռական հայտարարություն, հրաման, վերջնագիր[11]: Դրա հետ կապված իրավակիրառ պրակտիկայում երբեմն ոչ միանշանակ են լուծվում այն դեպքերը, երբ անձի գործողությունները անմիջականորեն գույք կամ գույքային իրավունք հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություն կատարելու պահանջներ չեն պարունակում, կամ օրինակ՝ սպառնալիքը առկա չէ, սակայն դրա թաքնված գոյությունը պայմանավորված է պահանջին նախորդող իրադրությամբ (օրինակ՝ չվճարման համար նախկինում ենթարկվել է բռնության):

Ինչ վերաբերում է հանցավորի՝ անօրինական պահանջի ամրապնդմանն ուղղված սպառնալիքին, ապա հարկ է նկատել, որ դրա տեսակների սպառնիչ թվարկումը ևս խնդրահարույց է: Ինչպես նշվեց, միայն անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ նրանց իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, անձի կամ նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի դեպքում է, որ անձի արարքը, իհարկե, հանցակազմի մյուս հատկանիշների առկայության պայմաններում, կարող է որակվել շորթման հանցակազմով:

Անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող տեղեկություն են համարվում այն տեղեկությունները, որոնց հրապարակումը կարող է նվաստացնել անձի պատիվն ու արժանապատվությունը: Տեղեկությունը կարող է լինել սուտ (չհամապատասխանել իրականությանը) կամ իրականությանը համապատասխանող, սակայն բոլոր դեպքերում վարկաբեկող (հանցագործության մեղսագրում, հիվանդություն, հոգեկան կամ ֆիզիկական արատ ունենալու մասին տեղեկություն և այլն):

Ինչ վերաբերում է անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելուն, ապա կարծում ենք, դրա տակ պետք է հասկանալ այնպիսի տեղեկությունը, որն անձը չի ցանկանում հայտնի դարձնել երրորդ անձանց և որի բացահայտումը կարող է իրեն էապես վնասել:

Հարց է առաջանում, թե արդյո՞ք շորթումն ավարտված համարելու համար տեղեկատվության հայտարարմամբ տուժողին հասցվելիք վնասը պետք է էական լինի և՛ տուժողի, և՛ հանցավորի համար, և ինչպե՞ս վարվել այն դեպքերում, երբ հանցավորը սխալվում է տեղեկության հրապարակմամբ հասցվելիք վնասի տուժողի համար էական լինելու հարցում, և արդյո՞ք այս դեպքում գործ ունենք շորթման փորձի հետ, կամ արդյո՞ք հնարավոր է գնահատել դեռևս չհրապարակված տեղեկության ապագայում հասցնելիք վնասի էական կամ ոչ էական լինելը:

Կարծում ենք, որ էական վնասի և առհասարակ դեռևս չհասցված վնասի գնահատումը սույն պարագայում գրեթե անհնարին է՝ պայմանավորված հանցակազմի ձևական լինելով: Ուստի, գտնում ենք, որ առավել նպատակահարմար է քննարկվող հոդվածում անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքի փոխարեն նախատեսել տեղեկությունների հրապարակման սպառնալիքը, որն ուղղված է անձին կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին վնաս պատճառելուն:

Անդրադառնալով բռնության գործադրման սպառնալիքին՝ առաջին հերթին հարկ է նշել, որ բռնության օրենսդրական ձևակերպումը բացակայում է, գրականության մեջ

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՄԱՐՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

այն բնութագրվում է որպես ֆիզիկական հարկադրանք, որը կարող է արտահայտվել ֆիզիկական բռնության ցանկացած եղանակով՝ ծեծ, մարմնական վնասվածք կամ առողջությանը այլ վնաս հասցնել և այլն: Որոշ աղբյուրներում բռնություն հասկացությունն իր մեջ ներառում է նաև հոգեկան հարկադրանքի գործադրումը<sup>[12]</sup>: Այս առումով հետաքրքրական է հարցի կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը: Իր` 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը բռնությունը բնորոշել է որպես դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք:

Ինչ վերաբերում է գույքի ոչնչացման կամ վնասման սպառնալիքին, ապա այն պետք է լինի իրական, իսկ գույքը պետք է համարվի տվյալ անձինը (ում տրվում է սպառնալիքը) կամ նրա մերժավորինը` անկախ նրանից` որտեղ և ում մոտ է գտնվում այդ գույքը:

Վերը նշված բոլոր դեպքերում սպառնալիքը կարող է տրվել տարբեր ձևերով` բանավոր, նամակով, գրությամբ, կապի այլ միջոցներով, անմիջական կամ միջնորդավորված եղանակով` երրորդ անձանց միջոցով: Դրա արտահայտման ձևը արարքի որակման տեսանկյունից որևէ իրավական նշանակություն չունի: Սպառնալիքի գնահատման տեսանկյունից արժևորվում է սպառնալիքի կոնկրետությունը և իրական լինելը: Տվյալ դեպքում կոնկրետությունը ենթադրում է այն հանգամանքի հստակեցում, թե ինչպիսի վնաս է սպառնում պատճառել հանցավորը` սպանել, առողջությանը ծանր վնաս պատճառել, թե խոշոր չափի գույքային վնաս հասցնել: Ընդ որում սպառնալիքի իրականացման եղանակների մասին հայտարարելը արարքի որակման համար նույնպես նշանակություն չունի:

Սպառնալիքն իրական է համարվում այն դեպքում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում վախենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած` տուժողը պետք է կարծի, որ սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Հատկանշական է այն հանգամանքը, որ թեև սպառնալիքի իրական լինելը հավաստելու համար տուժողի սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, սակայն արարքի որակման համար այն ածանցյալ նշանակություն ունի: Առաջնային օբյեկտիվ իրադրության գնահատումն է: Հնարավոր են դեպքեր, երբ օբյեկտիվ իրադրությունը հիմք չի տալիս սպառնալիքն իրական գնահատելու համար, սակայն անձն իր հոգեկան լարված վիճակի, հոգեկան առանձնահատկությունների կամ այլ պատճառներով իրականությունը խեղաթյուրված է ընկալում` կարծելով, թե սպառնալիքն իրական է: Օբյեկտիվ իրադրության գնահատումը ենթադրում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են սպառնալիքի բովանդակությունը, սպառնալիք տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, հանցավորի և տուժողի միջև հարաբերությունների բնույթը, հանցավորի անձը և այլն:

Ամփոփելով վերոգրյալը` հարկ է նշել, որ պահանջը և սպառնալիքը հարկադրանքի, այսինքն` տուժողի կամքի հաղթահարման միակ ուղիները չեն: Հարկադրանքը իրականում կարող է արտահայտվել այլ` ավելի մեղմ եղանակներով: Ուստի տուժողի կամքի վրա ներազդումը հնարավոր է հարկադրանքի այնպիսի եղանակներով, որոնք ուղղակի չարտահայտվեն սպառնալիքով ամրապնդված պահանջով:

Այս առումով շորթման հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների սպառիչ թվարկումը անհարկի նեղացնում է դրա կիրառման շրջանակը: Ինչպես ար-

դեն նշվեց, քիչ չեն իրավիճակները, երբ հանցավորը իր պահանջը ներկայացնում է այլ ձևով, քան նշված է հանցակազմի դիսպոզիցիայում, ինչի հետևանքով էլ վերջինիս արարքը դուրս է մնում քննարկվող հոդվածի կարգավորման տիրույթից:

Մասնավորապես՝ եթե գույքի, գույքային իրավունքի փոխանցման կամ գույքային բնույթի այլ գործողությունների կատարման պահանջը եղել է, սակայն սպառնալիք, որպես այդպիսին, չի եղել, կամ այն կրել է այլ բնույթ, քան նշված է հոդվածի դիսպոզիցիայում, նշանակում է, որ անձի արարքը քննարկվող հանցակազմով չի կարող որակվել, քանի որ բացակայում է հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից մեկը:

Շորթողները, որպես կանոն, իրենց պոտենցիալ տուժողների հետ վերաբերում են չափազանց քաղաքավարի և իրենց գործողություններում անչափ գրագետ են: Քննարկենք մի քանի իրավիճակներ:

**Իրավիճակ 1.** «Ներեցեք խնդրում եմ, մենք իմացել ենք, որ դուք զբաղվում եք ձեռնարկատիրական գործունեությամբ, և քաղաքում բոլորը մեզ վճարում են, հաջորդ ամսից սկսած դուք ևս ամեն ամիս պետք է վճարեք 50.000 ՀՀ դրամի չափով գումար:»: Ձեռնարկատերը, իմանալով, որ խոսում է հանցավոր խմբի անդամի հետ, համաձայնում է առաջադրված պահանջին: Ակներև է, որ քննարկված դեպքում հանցավորը որևէ սպառնալիքով չամրապնդեց իր պահանջը, սակայն թաքնված սպառնալիքի գիտակցումը տուժողին հարկադրեց կատարելու պահանջը:

**Իրավիճակ 2.** «Եթե մեզ չվճարես, ապա գալու են ուրիշները և նրանք այսպես չեն խոսելու»: Ձեռնարկատերը համաձայնում է վճարել՝ վախենալով հնարավոր վտանգից: Այս դեպքում ևս շորթողների արարքը չի կարող որակվել ԼԴՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածով:

**Իրավիճակ 3.** Ծննդատանը բուժքույրը սպառնում է փոխել նորածին երեխային՝ պահանջելով մորը վճարել որոշակի չափի գումար: Միաժամանակ նա խոստանում է երեխային փոխել՝ առանց վերջինիս որևէ վնաս պատճառելու, այլ ընդհակառակը՝ նրբորեն և խնամքով:

Ինչպես տեսնում ենք, քննարկված դեպքերում հանցավորը հարկադրանքի այլ միջոցներով կարողանում է հասնել տուժողի կամքի ճնշմանը և իր հանցավոր մտադրության իրականացմանը, սակայն նրա արարքում «դե յուրե» բացակայում է քննարկվող հանցակազմը:

Հաշվի առնելով, որ տուժողի կամքի վրա ներագդելու մեխանիզմները կարող են տարբեր լինել ու, գտնում ենք, որ սպառնալիքների տեսակների սպառնիչ թվարկումը 188-րդ հոդվածի դիսպոզիցիայում նպատակահարմար չէ: Անհրաժեշտ է ԼԴՀ քրեական օրենսգրքի դիսպոզիցիան ընդարձակել և «կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր բառերով՝ «կամ հարկադրանքի այլ եղանակներով»:

## **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., Խաչիկյան Հ., Ղազինյան Գ. և ուրիշներ: ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս (երրորդ իրատարակություն՝ փոփոխություններով), Եր., 2007, էջ 353-354:
2. Кочои С. Ответственность за корыстные преступления против собственности. М., 1998, стр.90-91:
3. Сафонов В. Организованное вымогательство (уголовно-правовой и

*Во время 12-мильного конфликта 1958–1961 Британия направила военные корабли для защиты рыболовных судов в исландские воды, и хотя серьезных столкновений между фрегатами тогда не произошло, но общая ситуация оставалась довольно накаленной. Во время 50-милевого 1972–1973гг и 200-милевого конфликтов исландские военные корабли использовали специальное оружие для порчи рыболовных сетей. В ответ британские фрегаты нападают на корабли береговой охраны Исландии, к счастью, обходится без жертв. Во время 200-мильного конфликта Исландия разрывает дипломатические отношения с Британией. Это единственный случай, когда страны-члены НАТО разрывают дипломатические отношения во время холодной войны.*

*Все четыре конфликта закончились, как принято говорить, исландской победой, так как Соединенное Королевство уступило на столе переговоров. [1]*

*При изучении тресковых войн возникают некоторые интересные вопросы. Во-первых, как эти конфликты повлияли на НАТО и отношения внутри альянса? Почему возник конфликт между двумя натовскими союзниками и почему обе стороны были так непреклонны? Что мешало НАТО действовать и разрешить конфликты, используя свой авторитет? Почему США вели себя настолько пассивно? Что получил Советский Союз от всего этого и почему он не использовал возможность вбить клин между странами НАТО?*

*Во время Второй мировой войны рыбным промыслом в районе Исландии занимались в основном исландские рыбаки и британские траулеры с Фарерских островов, опасаясь нападения германских подводных лодок.*

*После окончания войны международные компании, занимающиеся рыбным промыслом вернулись к берегам Исландии, и со временем появилась опасность уничтожения популяции трески в регионе. Исландское правительство среагировало быстро; во-первых, в 1948 году принят закон о научном сохранении Континентального шельфа, а в 1952 году – расширению рыболовной зоны до 4 миль. Эти действия были основаны на декларации Трумэна 1945 года и решении Международного суда в Гааге 1951 года в связи с англо-норвежским спором о рыболовстве. Британское, Бельгийское, Французское и Голландское правительства протестовали против продления, но ничего они не могли бы сделать, так как действия Исландии были в соответствии с нормами международного права. В Великобритании, с другой стороны, рыбная промышленность решила наложить эмбарго на свежую исландскую*

\* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

рыбу. Это не было действиями правительства, хотя многие считают, что было одобрено именно им. По крайней мере, можно быть уверенным, что правительство не сделало ничего против наложения эмбарго. Исландцы отметили, что эмбарго нарушило ряд договоров и международных обязательств Британского правительства, но безрезультатно. Целью, вероятно, было заставить исландцев подписать двустороннее соглашение, которое позволило бы британским тральщикам продолжать рыбную ловлю в пределах 4 миль, несмотря на постановление Международного суда.[2]

Исландцы реагируют путем поиска новых рынков. Рынки соленой трески в Италии и Португалии открылись еще в 1952 году, и расширился экспорт замороженных рыбных филе в США, но самое главное, в 1953 году Исландия, первая из стран НАТО подписала долгосрочное торговое соглашение с Советским Союзом, и очень скоро он стал одним из самых важных торговых партнеров Исландии вплоть до распада СССР.[3]

Торговое соглашение было подписано в то время, когда торговые и культурные отношения между Восточным и Западным блоками были на подъеме после смерти Сталина. Советское правительство было очень заинтересовано в рыбной продукции Исландии, и, одновременно, хотело продать все виды товаров, которые интересовали бы исландцев; масло, машинное оборудование, древесина и автомобили. Исландские представители согласились с тем, что основным мотивом Советов в переговорах была торговля, но легко предположить, что Советское правительство, воспользовавшись тем, что между Исландией и Великобританией возникли натянутые политические и экономические отношения в связи с эмбарго. В меморандуме от 1950 года министр иностранных дел СССР Андрей Вышинский заявил, что торговые отношения с Исландией должны поощрять позитивные тенденции в исландской экономике и оказывать поддержку Социалистической партии. Помимо вопроса, было ли это целью или нет в 1953 году, но советско-исландская торговля вызвала, в том числе, длительное раздражение в штаб-квартире НАТО и Пентагона.[4]

После длительных переговоров по инициативе ОЕЭС эмбарго было окончательно отменено в 1956 году. Продолжительность времени между расширением лимита рыболовства и отмены эмбарго указывает на то, что англичане были невосприимчивы к аргументации, что их поведение могло бы навредить НАТО. Там нет никаких указаний на то, что НАТО официально оказывала давление на британцев, чтобы достичь соглашения, хотя давление может быть применено за кулисами.

В том же году, когда англичане сняли эмбарго, на парламентских выборах в Исландии победили левые и центральные партии: Социал-демократы, Народный альянс и Прогрессивная партия, и они сформировали новое правительство. Это было первое правительство в странах НАТО, куда входили министры, принадлежащие к партиям, дружным с Советским Союзом, то есть Народный альянс. На повестке дня нового правительства был пересмотр оборонного договора между Исландией и США и увеличение исключительной экономической зоны от 4-х до 12-ти миль. В течение некоторого времени были предприняты попытки достичь международного соглашения о границах рыболовства и береговой юрисдикции. Несколько государств уже объявило 12 или 200 миль юрисдикции, и правительство Исландии стремилось расширить свою зону исключительного экономического интереса до 12-и миль. Расширение Исландией официального предела рыболовной зоны и пересмотр оборонного соглашения вызвали в последующие годы озабоченность в штаб-квартире НАТО и у западных правительств.[5]

Конфликт 1952–1956гг. еще часто называют «прото тресковой войной», так как события, произошедшие в период 1952–1956гг. стали основной для возникновения последующих конфликтов. Исландская дипломатия добилась тех результатов, которые требовали от нее исландские траулеры. Политическая ситуация во время холодной войны оказалась благоприятной для Исландии. Советский Союз, стремясь увеличить влияние



в Исландии, начал приобретать исландскую рыбу. Соединенные Штаты, опасаясь усиления советского влияния в Исландии, также начали закупать исландскую рыбу и уговорили Испанию и Италию приобрести исландскую рыбу.[6] Советское и американское вмешательство привело к ослаблению карательных последствий британского эмбарго. Так же, как и другие тресковые войны, конфликт 1952–1956гг. закончился тем, что Исландия достигла своих целей, а исландские 4 мили (7 км) были признаны в Соединенном Королевстве в соответствии с решением Организации европейского экономического сотрудничества в 1956 году.[7]

В течение лета 1958 года премьер-министр Исландии Герман Джоначассонанд и Министр иностранных дел Гудмундур И. Гуомундсон угрожали выходом Исландии из НАТО и выводом вооруженных сил США с их военной базы в Кеблавике, если британское правительство направит Королевский флот к берегам Исландии в пределах 12 миль. Генеральный секретарь НАТО, Спаак, предпринимал попытки примирить спорящие стороны, но безуспешно. Официальный представитель исландской стороны в этих переговорах пожаловался в Министерство иностранных дел, что официальные представители НАТО не имеют ни малейшего представления о положении Исландии, поддерживают англичан и не ведут себя как представители от международной и нейтральной организации.[8]

Когда стало ясно, что переговоры не дадут никакого результата, исландский министр рыбного хозяйства, подписал распоряжение об увеличении рыболовного лимита до 12 миль на 1 сентября 1958 г. Первые английские фрегаты вошли в 12-мильную зону мгновенно для оказания помощи траулерам в их конфронтации с судами исландской береговой охраны. В течение следующих двух лет война нервов бушевали в исландских водах.

Весной 1960 года ООН организовала конференцию по ограничениям рыболовства и береговой юрисдикции в Женеве. Там канадская и американская делегации представили предложение, называемое «предложение 6 + 6». В соответствии с этим, прибрежные государства могут претендовать на рыболовную деятельность в пределах 12-мильной зоны, но государства с историческими правами в спорных водах могли ловить рыбу в пределах 6 миль в течение определённого количества лет.

Гудмундур И. Гудмундссон, исландский министр иностранных дел, позднее заявлял, что он мог бы принять «предложение 6 + 6», и это привело бы к улучшению отношений с НАТО и Великобританией. Но парламентское большинство принадлежало другой партии, и настроенные на запад партии не смогли провести в парламент «предложение 6 + 6».[9]

Переговоры были очень трудными и затянулись до февраля 1961 г. Это продолжалось, пока британцы не признали все пункты и не приняли предложение 1958 года с некоторыми поправками. Оно также включало гарантии, что не будет никакого дальнейшего одностороннего расширения исландцами и что разногласия между странами в отношении ограничений рыболовного промысла могут быть рассмотрены в Международном суде в Гааге.[10]

Британская рыбная промышленность не была довольна результатами, но министр иностранных дел сэр Александр Дуглас-Хьюм и сэр Кристофер Сомс, секретарь по вопросам рыболовства и пищевой промышленности, просто заявили, что оборона НАТО в Северной Атлантике и баланс в силе более важны, чем интересы рыбаков и владельцев траулеров. Соглашение было настолько выгодным для исландцев, что даже заядлые сторонники расширения в правительственных кругах могли принять его. С другой стороны, оппозиционные партии отметили, что пункт в соглашении о праве британской стороны обращаться в Международный суд может быть вредным для интересов Исландии и объявили, что соглашение было подписано под давлением, и, когда они будут у власти, не собираются блюсти его и разорвать, если это необходимо.[11]

Нет никаких сведений о том, что НАТО или правительство Соединенных Штатов оказало давление на исландцев или на англичан. Они проявляли осторожность. В британских документах есть признаки того, что некоторые косвенные давления на британцев были сделаны правительствами других государств-членов НАТО. Британские чиновники утверждали, что другие государства НАТО не были бы рады, если действия ВМФ Британии в исландских водах принудили Исландию уйти из альянса.

Исландцы грозили выйти из НАТО много раз. Как говорилось выше, об этом заявляли премьер-министр Джо Нассон и министр иностранных дел Гуомундсон в 1958 году, а летом 1960 года Бьярни Бенедиктссон, министр юстиции, повторил угрозу американскому послу, а министр иностранных дел Гудмундссон сказал сэру Патрику Рейли, переговорщику с британской стороны, то же самое осенью.

В сентябре 1960 года премьер-министры Гарольд Макмиллан и Олафур Торс встретились в аэропорту Кеблавика и обсудили проблемы, стоящие перед ними. По словам Торса, он даже был согласен с Макмилланом, но не мог сотрудничать, потому что в таком случае коммунисты захватили бы лидерство в парламенте. Министр иностранных дел также позже сказал, что если правоцентристское правительство ушло в отставку, новое правительство попросило бы Советский Союз о помощи. Конечно, это все на неофициальном уровне. Официальная исландская политическая позиция заключалась в том, что англо-исландский спор не имел связи с НАТО или американской военной базой в Кеблавике, если НАТО или Соединенные Штаты не могли бы помочь в решении конфликта.[12]

Несомненно, исландские правоцентристские политические силы так же, как и другие лидеры НАТО, боялись, что, если Исландия выйдет из НАТО и расторгнет оборонное соглашение с Соединенными Штатами, тресковая война нарушила бы баланс сил в Северной Атлантике. Но из-за внутривнутриполитической ситуации в Исландии невозможно было согласовать позиции с британской стороной. Дело в том, что в сознании исландских политиков внутренняя политика всегда имеет приоритет над общими интересами Запада времен холодной войны, и они часто используют уникальное положение Исландии продвигать свою позицию.

А что насчет советской позиции, то Советский Союз утвердил 12-мильную юрисдикцию и поэтому поддерживал исландскую сторону. Были ли какие-нибудь планы в случае, если Исландия вышла бы из НАТО - неизвестно, но в британских документах есть намеки на то, что Советский Союз не имел никакого особого интереса к конфликту и что СССР выступал против расширения исландского предела рыболовства дальше, чем на 12 миль.

Партия 'Правительство для реконструкции' находилась у власти до 1971 года, и во время этого периода не было никаких дополнительных расширений. В 1969 году, однако, исландский парламент принял закон о суверенном праве Исландии на континентальном шельфе по всей стране.[13]

Данный конфликт или серия конфликтов привлекает к себе такой интерес потому, что фактически такая маленькая страна, по сравнению с Великобританией, как Исландия, смогла путем переговоров и намеков на политический шантаж добиться положительного результата для себя. Безусловно, важнейшим фактором в переговорах было стратегическое значение местоположения в Атлантике Исландии. В этом островном государстве располагалась также военная база НАТО. И хотя во время переговоров это особо не цитировалось, но своими действиями на рынке и на международной арене (контакты с СССР на разных уровнях) исландская сторона показала, что готова идти до конца, даже на сближение с СССР, ради защиты своих государственных интересов.[14]

Особенно такие открытые действия исландские политики применяли во время второй тресковой войны 1958–1961гг. Советский Союз со своей стороны не показывал интереса к

вовлечению в данные конфликты, но поддерживал активные контакты с исландскими представителями. Данная политика Исландии сильно насторожила других стран-членов НАТО, которые стремились обезопасить Атлантику от советского присутствия. И хотя, как уже говорилось, нет никаких доказательств, что НАТО или США как-то повлияли на процесс переговоров и их результат, но все сводится к тому, что без вмешательства стран-лидеров НАТО Великобритания вряд ли уступила свои позиции маленькой Исландии.

Данные конфликты доказывают, что неважно насколько мало государство и малы его возможности. Правильно воспользовавшись международной политической ситуацией, собственными геополитическими преимуществами и участием в оборонительных структурах и организациях, можно защитить свои интересы даже от могущественных держав и политических сил.

Актуальность данной темы еще связана с тем, что происходит на данный момент в Европе и Исландии в связи с проблемами с внешним долгом островного государства. Многие европейские издания такие, как *Independent*, *Lafigaro*, *Telegraph*, часто упоминают тресковые войны в своих статьях, чтобы обратить внимание на ту дипломатию, которую может и способна применять Исландия во время кризисных для себя ситуаций. Более того, в связи глобальным потеплением большие стаи тресковых рыб мигрируют в северные части Атлантики, что в свою очередь неблагоприятным образом сказывается на рыболовную индустрию южноевропейских стран, а для исландских рыболовов данная проблема имеет положительный характер. Уже сейчас рассматривается возможность пересмотра ранее достигнутых договоренностей об исландской рыболовной зоне. В этих переговорах активное участие принимает Европейский Союз и, вероятно, будет поддерживать позицию Великобритании несмотря на брексит.

## **СПИСОК ЛИТЕРАТУРЫ**

1. Habeeb, William. Power and Tactics in International Negotiations: How Weak Nations Bargain with Strong Nations. Johns Hopkins University Press. 1988. Chapter 6.
2. Там же; Jóhannesson, Gudni Thorlacius (2004-11-01). "How 'cod war' came: the origins of the Anglo-Icelandic fisheries dispute, 1958–61". *Historical Research*. 77 (198)
3. Sverrir Steinsson, University of Iceland, "The Cod Wars: a re-analysis". Article in *European Security*, March 2016; DOI: 10.1080/09662839.2016.1160376
4. Guðmundsson, Guðmundur J. "The Cod and the Cold War". *Scandinavian Journal of History*. 2006. <http://www.tandfonline.com/doi/abs/10.1080/03468750600604184>
5. Там же.
6. Jóhannesson, Gudni Thorlacius, "Troubled Waters" 2007, NAFHA; Thór, Jón Th. *British trawlers and Iceland*, Denmark, 1995.
7. Jóhannesson, Gudni Thorlacius "Troubled Waters". NAFHA. *British Sea Fishing*, 2007. "The Cod Wars"; <http://britishseafishing.co.uk/the-cod-wars/>
8. Jóhannesson, Gudni Thorlacius (2004-11-01). "How 'cod war' came: the origins of the Anglo-Icelandic fisheries dispute, 1958–61". *Historical Research*. 77 (198)
9. BBC Programme, "History of the Cod Wars" 5 December 2010, <https://www.youtube.com/watch?v=qkZq11wigEk&feature=related/>
10. Guðmundsson, Guðmundur J. "The Cod and the Cold War". *Scandinavian Journal of History*. 2006. <http://www.tandfonline.com/doi/abs/10.1080/03468750600604184>
11. Там же; Jóhannesson, Gudni Thorlacius (2004-11-01). "How 'cod war' came: the origins of the Anglo-Icelandic fisheries dispute, 1958–61". *Historical Research*. 77 (198)
12. Guðmundsson, Guðmundur J. "The Cod and the Cold War". *Scandinavian Journal of History*.

2006. <http://www.tandfonline.com/doi/abs/10.1080/03468750600604184>

13. Sverrir Steinsson, University of Iceland, "The Cod Wars: a re-analysis". Article in European Security, March 2016; DOI: 10.1080/09662839.2016.1160376

14. The ultimate history project, "A Serious Joke: Britain and Iceland Go to War"; <http://www.ultimatehistoryproject.com/cod-war-britain-and-iceland-go-to-war-over-fishing.html>

## РЕЗЮМЕ

### Исландская дипломатия во времена конфликтов 1950-ых и начала 1960-ых гг. Арамаис Григорян

В начале 1950-ых гг. Исландия решила расширить границы исключительной экономической зоны. Данное решение было по экономическим интересам Великобритании и странам, которые занимались рыболовным промыслом в северных водах Атлантического океана. Против Исландии была задействована политика экономического давления, эмбарго на ввоз рыбы. Данная политика привела к тому, что Исландское правительство пошло на сближение с СССР, что весьма озадачило государств-членов НАТО. В итоге Исландия добилась своего, и границы исключительной экономической зоны были увеличены от 4-х до 12 морских миль. Данный конфликт широко известен под названием «тресковые войны».

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### Իսլանդական դիվանագիտությունը 1950-ական թթ. և 1960-ական թթ. սկզբի հակամարտությունների ժամանակ Արամայիս Գրիգորյան

*Քանալի բառերը: Իսլանդիա, ծողաձկնային պատերազմներ, ՆԱՏՕ, փոքր պետություն, ձկնորսություն, հատուկ տնտեսական գոտի, Կեֆլավիկ, Սառը պատերազմ, իսլանդա-բրիտանական հակամարտություն:*

1950-ական թթ. սկզբին Իսլանդիան որոշում է ընդարձակել հատուկ տնտեսական գոտու սահմանները: Այս որոշումը հարվածում էր Մեծ Բրիտանիայի և այլ երկրների տնտեսական շահերին, որոնք ձկնորսություն էին իրականացնում Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային ջրերում: Ի պատասխան այդ քայլի՝ Իսլանդիայի դեմ սկսվում է կիրառվել տնտեսական ճնշումների քաղաքականություն, ձկան ներմուծման էմբարգո է հայտարարվում: Նման քաղաքականությունը հանգեցնում է նրան, որ իսլանդական կառավարությունը Խորհրդային Միության հետ մերձեցման քայլի է դիմում, ինչը բավական անհանգստացուցիչ էր ՆԱՏՕ-ի անդամ-պետությունների համար: Արդյունքում Իսլանդիան հասնում է իր նպատակին՝ ընդարձակելով իր հատուկ տնտեսական գոտին 4-ից 12 մղոնի: Այս հակամարտությունը առավել հայտնի է «ծողակնային պատերազմներ» անվանմամբ:

SUMMARY

**The Diplomacy of Iceland during the Conflicts of  
1950s and the beginning of 1960s  
Aramayis Grigoryan**

**Keywords:** *Iceland, Cod wars, special economic zone, fishing, fish embargo, small states' diplomacy, trawlers, Iceland-Britain conflict, Keflavik, North-Atlantic Aliens, Cold War.*

In early 1950s Iceland decided to expand boundaries of the special economic zone. This decision hit the economic interests of the UK and other countries which fished in the northern waters of the Atlantic Ocean. In response, they applied a policy of economic pressure on Iceland and declared an embargo on fish imports. Such policy led to the fact that the Icelandic government made steps to move closer to the Soviet Union, which was enough to arise concerns for NATO member-states. As a result, Iceland reached its goal of expanding its special economic zone from 4 to 12 miles. This conflict is widely known as Cod wars.

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ\***

**Տաթև Զորյան**

**Բանալի բառեր՝** Եվրոպական Միություն, Հարավային Կովկաս, ռազմավարական շահ, երկկողմ հարաբերություններ, քաղաքական ձգնաժամ, փափուկ ուժ:

*Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասի համար ստեղծվեց անորոշության մի երկարատև ժամանակաշրջան: Իրենց անկայիության առաջին տասնամյակում տարածաշրջանի նորանկախ երկրները գտնվում էին քաղաքական ու սոցիալական անկայուն վիճակում՝ զուգորդված թույլ զարգացած ժողովրդավարական համակարգերով: Պետական կառույցների և ինստիտուտների ձևավորման և կոնսոլիդացիայի գործընթացն ուղեկցվում էր տարածաշրջանի անվտանգությանը սպառնացող մարտահրավերներով և էթնիկ ու անջատողական հակամարտություններով:*

*Խորհրդային Միության անկումից հետո Հարավային Կովկասը դարձավ տարածաշրջանային (Ռուսաստան, Իրան, Թուրքիա) և արտատարածաշրջանային (Միացյալ Նահանգներ, Եվրոպական Միություն, ՆԱՏՕ, Չինաստան, Կենտրոնական Ասիայի երկրներ, արաբական պետություններ) շահերի բախման թատերաբեմ: Դա բնութագրվում էր որպես ջրային տարածքների և Սև ու Կասպից ծովերի ռեսուրսների նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար մղվող պայքար, մասնավորապես այն պատճառով, որ Հարավային Կովկասը համարվում էր կարևոր տարանցիկ երթուղի էներգետիկ ռեսուրսների տեղափոխման համար (Կենտրոնական Ասիայից և Մերձավոր Արևելքից դեպի Եվրոպա):*

*Այս շրջանում Եվրոպական Միությունը Հարավային Կովկասը դիտարկում էր որպես բազմաթիվ խնդիրներով մի «էկզոտիկ» տարածաշրջան, որն աշխարհագրական առումով հեռու էր Եվրոպայից: Սա էր պատճառը, որ տարածաշրջանի նկատմամբ ԵՄ-ի հետաքրքրությունը մեծ չէր: Հարավային Կովկասի նկատմամբ ԵՄ-ի վարած պասիվ քաղաքականությունը պայմանավորված էր նաև արտաքին և ներքին մի շարք այլ գործոններով, որոնց թվում էին անլուծելի համարվող բարդ ռեգիոնալ խնդիրները, տարածաշրջանի մասին խորքային տեղեկատվության պակասը, Միության ներսում Հարավային Կովկասի նկատմամբ հետաքրքրությունը խթանող պրոպագանդայի բացակայությունը, տարածաշրջանում արտաքին դերակատարների գերիշխող ներկայությունը, ԵՄ-ի առջև ծառայած տնտեսական հիմնախնդիրները և հատկապես Բալկաններում տիրող իրավիճակը, որն այդ շրջանում ԵՄ-ի հիմնական մտահոգությունն էր: Այնուհանդերձ, երբ տարածաշրջանի երկրներում սկսվեց դեպի շուկայական տնտեսության և ժողովրդավարության անցման գործընթացը, և երբ տարածքային կոնֆլիկտներն ու նավթային գործոնը սկսեցին դերակատարում ունենալ Հարավային Կովկասի քաղաքական կյանքում, ԵՄ-ն մեծացրեց իր ակտիվությունը՝ տարածաշրջանին ցուցաբերելով մոտ մեկ միլիարդ դոլարի մարդասիրական և տեխնիկական օժանդակություն մի շարք ծրագրերի շրջանակներում[1]:*

*Հարկ է նշել, որ Եվրոպական Միության ընդհանուր արտաքին և անվտանգային*

\* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

քաղաքականության բացակայության հիմնահարցը տևական ժամանակ քաղաքական ու փորձագիտական շրջանակների մտահոգության առարկան էր: Լիսաբոնի պայմանագրի կնքումից հետո, սակայն, նկատվեց որոշակի դրական տեղաշարժ ԵՄ-ի արտաքին և էներգետիկ քաղաքականության զարգացման առումով, որի դրսևորում կարելի է համարել վերջինիս ռազմավարությունը Հարավային Կովկասում: Եվրոպական երկրների հարաբերությունները Հարավային Կովկասի հետ ունեցել են բավականին հետաքրքիր էվոլյուցիա: Այս հարաբերությունների մեկնակետը դրվել է նախքան ԽՍՀՄ փլուզումը՝ 80-ականների վերջերին՝ պայմանավորված էթնիկ հակամարտությունների խորացմամբ: Եվրոպական երկրներում հայկական սփյուռքը մեծապես նպաստել է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դրական իմիջի ձևավորմանը: Սակայն, նախքան ԽՍՀՄ փլուզումը և դրանից որոշ ժամանակ անց, ԵՄ-ի ռազմավարությունը Հարավային Կովկասի նկատմամբ էական փոփոխությունների չի ենթարկվել:

Հարավային Կովկասի երկրներն իրականացնում են բազմավեկտոր արտաքին քաղաքականություն՝ իրենց ինտեգրման ուղին կապելով հաճախ իրար հակասող դաշինքների, կազմակերպությունների և ծրագրերի հետ: Տարածաշրջանի երկրներից Վրաստանն ու Ադրբեյջանը «ժողովրդավարության և տնտեսական համագործակցության կազմակերպության» (ՎՌՈԱՄ) անդամներ են, մինչդեռ Հայաստանը՝ պրոռուսական «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության» (ՀԱՊԿ) անդամ է[2]: Հայաստանն ու Ադրբեյջանը նաև «Անկախ Պետությունների Համագործակցության» (ԱՊՀ) անդամ են, իսկ Վրաստանը 2008թ. ռուս-վրացական պատերազմից հետո դուրս եկավ կառույցի կազմից:

Հարավային Կովկասում միջազգային հարաբերությունների խորացման համար լրացուցիչ խոչընդոտ են առկա տարածաշրջանային հակամարտությունները և մի շարք անկախ, չճանաչված պետությունների (Հարավային Օսեթիա, Աբխազիա, ԼՂՀ) առկայությունը: Եվրոպան 1992թ-ից ի վեր ակտիվորեն մասնակցում է մշակած հակամարտությունների կարգավորման գործընթացին: Գերմանիան, Իտալիան, Ֆրանսիան հենց սկզբից ներգրավվեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակների մեջ: 1997 թվականից Ֆրանսիան դարձավ Մինսկի խմբի համանախագահող երկիր: Ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև Ֆինլանդիան և Շվեդիան:

Հարավային Կովկասում ԵՄ-ի քաղաքականության կոնստիտուցիոնալ հիմքերը դրվեցին 1993-94թթ[3]: Մասնավորապես 1993թ. Բյուսելում սկիզբ առավ «Եվրոպա-Կովկաս-Ասիա» տրանսպորտային միջանցքի ծրագիրը (TRACECA), որի մասն էր կազմում մեկ այլ հայտնի ծրագիր՝ «Տեխնիկական աջակցություն անկախ պետությունների համագործակցությանը» (TACIS): Հարավկովկասյան երեք երկրները ներգրավվեցին ծրագրի շրջանակների մեջ: Արդեն այդ ժամանակվանից հայտնի դարձավ Հարավային Կովկասի նկատմամբ ԵՄ-ի ռազմավարության հիմնական նպատակը. այն է՝ Ռուսաստանը շրջանցող միջանցքի ստեղծում՝ նպատակ ունենալով դիվերսիֆիկացնել կենտրոնացված առևտրի և տրանսպորտի ավանդական ուղիները և ձևավորել դեպի Եվրոպա գնացող այլընտրանքային ուղիներ[4]:

1994-1995թթ. Եվրոպական հանձնաժողովը մշակեց և Եվրոպական Պառլամենտին ու Խորհուրդին ներկայացրեց «Հարաբերություններ կովկասյան հանրապետությունների հետ» անունը կրող փաստաթուղթը, որը, ըստ էության, ԵՄ-ի հարավկովկասյան ռազմավարությունն էր: Փաստաթղթում ընդհանուր ռազմավարության մշակումը հիմնավորվում էր էներգետիկ շահերով: Հենց այս շրջանում էլ սկսում են ձևավորվել ակտիվ հարաբերություններ ԵՄ-ի և տարածաշրջանի երկրների միջև: 1996թ. Հարավային Կովկասի երեք երկրների հետ ստորագրվում է «Գործընկերության և համագործակցության համա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ծայնագիրը», որն ուժի մեջ է մտնում 1999թ-ից[5]: Այդ ժամանակից ի վեր ԵՄ-ի քաղաքականությունը զարգանում է երկու ուղղություններով.

1. Փոխգործակցություն ազգային պետությունների հետ:

2. Տարածաշրջանն ընդգրկող համապարփակ ռազմավարության ձևավորման փորձեր:

Երկրորդ հարաբերությունների զարգացման առումով կարևոր էր 2003թ. Հարավային Կովկասում ԵՄ-ի հատուկ ներկայացուցչի պաշտոնի ներդրումը: Այն առաջին անգամ ստանձնեց Ռուսաստանում Ֆինլանդիայի նախկին դեսպան, Մինսկի խմբում Ֆինլանդիայի ներկայացուցիչ Հելկե Թալվիտինեն [6]:

Հարավային Կովկասի երկրների ներառումը «Եվրոպական հարևանության քաղաքականության» ծրագրի մեջ 2003թ-ին, հաստատում էր Եվրոպական Միության պատրաստակամությունը երկրորդ հարաբերությունների խորացման առումով: ԵՀԶ-ն մի գործիք է, որը ներառում է Միության համագործակցային ծրագրերը և ընդգրկում այն երկրները, որոնք աշխարհագրորեն գտնվում են Եվրոպայում կամ վերջինիս սերտ հարևանությամբ, սակայն չունեն շոշափելի ապագայում ԵՄ-ին անդամակցելու հեռանկարներ: Այս ծրագրով ԵՄ-ն իր հարևաններին առաջարկում է արտոնյալ հարաբերություններ՝ հիմնված փոխադարձ հանձնառության և համընդհանուր արժեքների վրա՝ ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն, շուկայական տնտեսության սկզբունքներ, կայուն զարգացում: ԵՀԶ-ի ռազմավարական նպատակները հարավկովկասյան երեք երկրների նկատմամբ ընդհանուր առմամբ նույնն են, ինչ մյուս երկրների դեպքում: Ծրագրի նպատակն է կանխել նոր բաժանարար գծերի առաջացումը Եվրոպայում՝ հարևան երկրներին առաջարկելով քաղաքական, տնտեսական, մշակութային և անվտանգային սերտ համագործակցություն: 2006թ. քննարկվեցին և ընդունվեցին «Գործողությունների պլաններ» երեք երկրների հետ՝ ԵՀԶ-ի շրջանակներում: Բարեփոխումների դիմաց ԵՄ-ն խոստանում էր համապարփակ տնտեսական ինտեգրում և քաղաքական երկխոսություն՝ հարավկովկասյան երկրների հետ հարաբերություններում հանդես գալով որպես նորմատիվ ուժ:

Գործողությունների պլանի սկզբունքները երեք երկրների դեպքում գրեթե նույն էին և վերաբերում էին հետևյալ հիմնահարցերին[7].

- Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքեր.

- Ժողովրդավարության ամրապնդում՝ միջազգային պահանջներին համահունչ արդար և թափանցիկ ընտրական գործընթացների միջոցով.

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում՝ ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում.

- Օրենքի գերակայության ամրապնդում՝ դատաիրավական համակարգի բարեփոխումների, խարդախության և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցով.

- Տնտեսական զարգացմանը, աղքատության կրճատմանը և սոցիալական հանախմբվածությանն ուղղված ջանքեր.

- Արդարադատության, անվտանգության և սահմանային կառավարման ոլորտում համագործակցության խորացում:

Չնայած ակնկալվում էր, որ կարճ ժամանակում ԵՀԶ-ն կարող է հանդես գալ որպես վերափոխող գործիք տարածաշրջանում կայունության, անվտանգության, ժողովրդավարության և համագործակցության ապահովման առումով (Արևմտյան Բալկանների օրինակով), սակայն մինչ օրս այդ ուղղությամբ շոշափելի արդյունքներ չեն արձանագրվել:



## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ԵՄ-ի ռազմավարությունը Հարավային Կովկասում 1992-2004թթ. կարելի է բնորոշել «տատանվող մերձեցման տասնամյակ» անունով: Տարածաշրջանի երկրներն զբաղված էին իրենց առջև ծառայած կենսական խնդիրների լուծմամբ և շատ թույլ էին ԵՄ-ի հետ համագործակցությունից օգուտներ քաղելու համար, իսկ Միությունը չափազանց զբաղված էր Բալկանյան հիմնախնդրով: Այս շրջանում ԵՄ-ն չունեի հետևողական միասնական ռազմավարություն տարածաշրջանի նկատմամբ, ուստի 90-ականներն ավելի շուտ կարելի է բնորոշել տարածաշրջանում Միացյալ Նահանգների, քան ԵՄ-ի ակտիվության փուլ: Այս շրջանում զգալի էր նաև տարածաշրջանի անվտանգության հարցերին եվրոպական միջամտությունը, քանզի ԱՄՆ-ի և Ռուսաստանի դոմինանտ ուժի պարագայում ԵՄ-ն պատրաստ էր որոշիչ գործոն դառնալ և կանխել տարածաշրջանին սպառնացող բացասական միտումները: ԵՄ-ի ռազմավարությունը հարաբերությունների առաջին տասնամյակում ունեցել է հետևյալ էվոլյուցիան.

Տարածաշրջանի «հետխորհրդային» սուբյեկտիվ ընկալման փուլից անցում դեպի երեք երկրների հետ տարբերակված ռազմավարական հարաբերությունների հաստատման փուլ.

- Տեխնիկական աջակցության ծրագրերի փուլից անցում տնտեսական ու քաղաքական ինտեգրման փուլի՝ եվրոպական համագործակցային ծրագրերի միջոցով.

- Տարբերակված անհատական մոտեցումներ Հյուսիսային և Հարավային Կովկասի, Կենտրոնական Ասիայի նկատմամբ,

- Հրաժարում «նախ Ռուսաստանը» մոտեցումից, տարածաշրջանից այլ խաղացողներին դուրս մղելու ցանկության ամրապնդում.

- Էներգամատակարարման և քաղաքական ազդեցության տարածման այլընտրանքային ուղիների որոնում:

2008թ. տարածաշրջանում ստեղծվել էր բարդ և յուրահատուկ իրավիճակ: Քաղաքական ազդեցության առումով շարունակում էին դոմինանտ մնալ ԱՄՆ-ն և Ռուսաստանը: Վրաստանն աջակցում էր ԱՄՆ-ի վարչակազմին և ոչ պակաս ակտիվությամբ հակամարտում Ռուսաստանի դեմ: ԵՄ-ի և ԱՄՆ-ի հարաբերությունները հարավկովկասյան մյուս երկրների՝ Հայաստանի և Ադրբեջանի հետ որոշ չափով փչացել էին ընտրական գործընթացներից հետո, որոնք նշանավորվել էին ընդդիմության նկատմամբ բռնաձևումներով և բազմաթիվ խախտումներով:

Ռուս-վրացական հնգօրյա պատերազմը լրջորեն փոխեց տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը: Այս պատերազմը Լիսաբոնի պայմանագրի կնքումից հետո առաջին լուրջ իրադարձությունն էր, որ ԵՄ-ի առջև խնդիր դրեց արագ և արդյունավետ գործարկել կառավարչական ինստիտուտներն արտաքին քաղաքականության ոլորտում: Այդ կոնֆլիկտը և դրան հաջորդած իրադարձությունները լուրջ մարտահրավեր էին Միության համար: Եվրոպական դիվանագետներն ու քաղաքական գործիչները ակտիվ մասնակցություն ունեցան ռազմական գործողությունների դադարեցման և դրան հաջորդած բանակցային գործընթացում:

ԵՄ-ի «փափուկ ուժի» կիրառումը տարածաշրջանում ակնհայտ դարձավ 2008թ. նոյեմբերին «Արևելյան գործընկերության» մեկնարկով: ԵՄ-ն սահմանեց նոր քաղաքական նշանոդ, որն արդյունք էր ստեղծված քաղաքական ձգնաժամի: Արդեն 2009թ. մայիսին ստորագրվեց համատեղ հռչակագիր «Արևելյան գործընկերության ծրագրի համատեղ իրականացման մասին»: Նույն թվականի դեկտեմբերին Եվրոպական Խորհուրդը Բրյուսելում նախաձեռնեց Հարավային Կովկասի երկրների հետ ասոցացման համաձայնագրերի կնքման շուրջ բանակցություններ: 2010թ. մայիսի 10-ից համաձայնություն ձեռք բերվեց ասոցացման համաձայնագրերի կնքման վերաբերյալ[8]: Այդ գործընթացը շա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

րունակվում է մինչ օրս: Այդ շրջանում ԵՄ-ն աջակցում էր նաև Հայաստանի և Թուրքիայի միջև քաղաքական երկխոսությանը՝ «Ֆուտբոլային դիվանագիտության» շրջանակներում:

Անվտանգությունը 2008-2014թթ. Հարավային Կովկասում ԵՄ-ի գործունեությունը, որը կարելի բնորոշել որպես «ակտիվ մերձեցման փուլ», պետք է նշել մի քանի հիմնարար փոփոխություններ՝ նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ: ԵՄ-ի դերի մեծացումը չսառեցված հակամարտությունների կարգավորման և միջազգային բանակցային գործընթացներում: Արդարության համար հարկ է նշել, որ դրան նպաստեց նաև Ռուսաստանի իշխանությունների համեմատաբար հանդուրժող արձագանքը:

- ԵՄ-ի «փափուկ ուժի» ամրապնդումը՝ հետպատերազմական Վրաստանի տնտեսության վերականգնման մեջ ունեցած ակտիվ դերակատարությամբ և «Արևելյան գործընկերության» ծրագրի մեկնարկով պայմանավորված:

- Տարածաշրջանում ԱՄՆ-ի դիրքերի թուլացումը և նախկին խորհրդային տարածքում Ռուսաստանի դիրքորոշման հստակեցումը:

- Տարածաշրջանի երկրների նկատմամբ «հավասար հարաբերությունների» սկզբունքի կիրառումը:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ, 2008թ-ից սկսած, ԵՄ-ի ազդեցությունը տարածաշրջանում զգալիորեն մեծացել է՝ հիմնականում էներգետիկ շահերով պայմանավորված: Հարավային Կովկասի տարածաշրջանը դիտարկելով որպես էներգետիկ անվտանգության համակարգի բաղկացուցիչ՝ Եվրոպական Միությունը մեծապես կարևորում է տարածաշրջանային հակամարտությունների խաղաղ ճանապարհով լուծումը, անվտանգության, կայունության և ժողովրդավարության ամրապնդումը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Sascha Tamm. Weakness as an opportunity: EU Policy in the South Caucasus. Working Paper, Germany, p. 3
2. Юматов К.В., Эволюция политики Европейского Союза на Южном Кавказе. Вестник местного государственного университета № 1(17), стр. 126-127
3. Marchel de Haas, Andrej Tibold, Vincent Cillesen. Geo-strategy in the South Caucasus: Power Play and Energy Security of States and Organisations. Clingendael Institute, November 2016, pp. 63-66
4. Mariam Dekanozishvili. The EU in the South Caucasus: By What means, To What Ends?. Georgian Foundation for Strategic and International Studies, Occasional Paper #2:2004, January 2004, pp. 27-29
5. George Mchedlishvili. Changing Perception of the West in the South Caucasus, Adoration No More. Russia and Eurasia Programme, February 2016, p. 16
6. Laure Delcour, Hubert Duhot. Bringing South Caucasus Close to Europe: Achievements and Challenges in ENP Implementation. College of Europe, Department of European Interdisciplinary Studies, March 2011, p. 5
7. Walski Krzysztof. The European Union's Eastern Neighbourhood: The Eastern Partnership as a Strategy of EU Engagement and Security. Penn McNair Research Journal, Volume 2/ Issue 1, Article 5, November 2010, pp. 11-13
8. Rakutiene Sima. The EU's Eastern Partnership as International Governance: What is the Role of the Civil Society? Vytautas Magnus University, Faculty of Political Science and Diplomacy, Lithuania, April 2014, pp. 51-53

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Եվրոպական Միության ռազմավարական շահերը Հարավային Կովկասում.  
հարաբերությունների զարգացման դինամիկան  
Տաթև Զորյան**

Հոդվածում քննարկվել են Հարավային Կովկասի հետ Եվրոպական Միության հարաբերությունների երկու՝ պասիվ և ակտիվ փուլերը, ԵՄ-ի ռազմավարական շահերի զարգացման դինամիկան, 2000-ականներից Միության քաղաքական օրակարգում Հարավային Կովկասի ձեռք բերած կարևորության ներքին և արտաքին պատճառները: Ինչպես նաև քննարկվել է Հարավային Կովկասի դերը Եվրոպական Միության էներգետիկ ռազմավարության և տարածաշրջանում վերջինիս քաղաքական ազդեցության ամրապնդման տեսանկյունից:

**РЕЗЮМЕ**

**Стратегические интересы Европейского Союза в Южном Кавказе:  
динамика развития отношений  
Татев Зорян**

*Ключевые слова: Европейский Союз, Южный Кавказ, стратегические интересы, двусторонние отношения, политический кризис, мягкая сила, региональная безопасность.*

В статье рассмотрены активные и пассивные этапы взаимоотношений Европейского Союза с Южным Кавказом, динамика развития интересов ЕС, внешние и внутренние причины преобладания актуальности Южного Кавказа в политической повестке ЕС с начала XXI века. Также рассмотрена роль Южного Кавказа в энергетической стратегии ЕС в контексте / укрепления политического влияния в регионе.

**SUMMARY**

**The EU's Strategic Interests in the South Caucasus:  
The dynamics of the development of relations  
Tatev Zoryan**

*Keywords: European Union, South Caucasus, strategic interests, bilateral relations, political crisis, soft power, regional security*

The article discusses both passive and active phases of European Union's relations with the South Caucasus, the dynamics of the European Union's strategic interests in the field of security, main internal and external factors of the increased importance of the South Caucasus region in the EU's political agenda in the beginning of the XXI century. It also considers the role of the South Caucasus in the context of European Union's energy strategy and increasing political influence in the region.

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ  
XVII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII Դ. ՍԿԶԲԻՆ\*

Մարինե Հարությունյան

**Քանալի բառեր՝** Գյուլիստան, Արցախ, Շոշ, Տոդ, տապանաքար, խաչքար, եկեղեցի, քանդակագործություն, ձեռագիր, արձանագրություն:

Հայկական արվեստի կարևոր և հատկանշական բնագավառներից է քանդակագործությունը: Քննարկվող շրջանում առկա են եղել քանդակագործության երկու ենթատեսակներ՝ բոլորաքանդակ (երբ ստեղծագործությունը մշակվում է բոլոր կողմերից և դիտելի է բոլոր կողմերից) և ռելիեֆ (երբ քանդակային պատկերը փորագրվում է, կամ մեծ թե փոքր ձևաչափերով կերտվում է նրա ֆոնը հանդիսացող հարթության վրա և դիտելի է միայն դիմացից, մասամբ՝ կողքերից):

Քանդակագործության արվեստի մի շարք փայլուն օրինակներ են՝ XVII-XVIII դդ. Արցախում կառուցված եկեղեցիների արտաքին պատերի, ճակտոնների, մուտքերի, պատուհանների շրջանակների ու գոտիների, զանգակատների, թմբուկների վրա արված գեղաքանդակները: Ուշագրավ են Գյուլիստանի[1] (Սք. Ամենափրկիչ վանք[2], 1641 թ.), Դրախտիկի (Սք. Գրիգոր Նարեկացի եկեղեցի[3], 1645 թ.), Թողանի[4], Խաչակապի (նաև՝ Խաչակապ, Դուշչի, թաղակապ եկեղեցին կառուցվել է 1650 թ. [5]), Ավեսարանոցի (Սք. Աստվածածին եկեղեցի[6], 1651 թ.), Խաչմաչի (Սք. Ստեփանոսի թաղակապ եկեղեցի[7], 1651 թ.), Շոշի (Սք. Ստեփանոսի եկեղեցի[8], 1655 թ.), Վարանդայի Հերիեր գյուղի (Սք. Գրիգորիս եկեղեցի[9], 1667-1676 թթ.), Առաջածոր գյուղի (Սք. Աստվածածին եկեղեցի[10], 1668 թ.), Պտկաթաղի (1670 թ. [11]), Ղազանչիի (Սք. Գևորգ եկեղեցի, 1671թ.), Խանձք գյուղի եկեղեցի[12], 1673 թ.), Վարդաշենի (նաև Միրզիկ, Սք. Գաբրիել եկեղեցի[13], 1674 թ.), Հակի (ԼՂՀ Քաշաթաղի շրջանում, 1675 թ.), Բերդաշենի (նաև՝ Ղզղալա, ԼՂՀ Մարտունու շրջանում, Սք. Նահատակ եկեղեցի, 1676 թ.), Մարտունաշենի (նաև՝ Ղարաբուլաղ, Արցախի հյուսիսային հատվածում, ներկայումս՝ Ադրբեջանի Խանլարի շրջանում, Սք. Աստվածածին եկեղեցի, 1675 թ. [14], 1676 թ. [15]), Գետաշենի (Սք. Նահատակ կամ Ավագ Սք. Նշան եկեղեցի [16], 1677 թ.), Կուսապատի (Սք. Աստվածածին եկեղեցի[17], 1686 թ.) և այլ վայրերի եկեղեցիների՝ տարբեր հատվածներում արված հարդարանքները: Հիշատակության արժանի է Երից Մանկանց վանքի եկեղեցու քանդակաշարը: Բազմաթիվ և գեղեցիկ քանդակների մեջ աչքի է ընկնում արևի ժամացույցը՝ քարի վրա կերտված[18]: Իր հնատիպ քանդակաշարով առանձնանում է Եղիշա վանքի եկեղեցին, որի պատերի մեջ տեղադրվել են գեղեցիկ խաչքարեր, կենցաղային և այլ տեսակի հետաքրքիր զարդաքանդակներ, նույնիսկ գերեզմանաքարեր, որոնց վրա քանդակված են երկրագործական գործիքներ, վար ու ցանքի, հացահատիկի կալսման տեսարաններ, խաղողի ոռոգույցներ և այլն[19]:

Քանդակագործության մեջ հատուկ ենթախումբ են կազմում տարբեր ժանրերի մանրաքանդակները («մանր պլաստիկա», «փոքր ձևերի քանդակագործություն»): Մանր պլաստիկայի առանձնահատուկ բնագավառին են պատկանում ոսկերչական քանդակավոր կերտվածքներն: Այս տեսակետից ուշագրավ են բազմաթիվ ձեռագրե-

\* Հոդվածն ընդունվել է 25.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մ.Հարաթյան:

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

րում արված գարդամոտիվները: Ձեռագրերի կազմերի վրա առկա են բազմաթիվ գարդաքանդակներ՝ կիսազնդիկներ, անկյունային և եզրային մետաղապատումներ, կողային պատվածքներ, արծաթյա խաչ, արծաթյա գարդաքանդակ, խաչելությանք, Տիրամոր դիմաքանդակով և այլն: Հարկ է նշել, որ մետաղապատ մասն են կազմում կապիչները կամ նրանց մասերը՝ կոճակ, ամրակ կամ փականակ, զանազան տեսակի շղթաներ, կարտուշներ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, եզրածողեր կամ անկյունային պատվածքներ[20]: Հատկանշական են Մատենադարանի N 3196 (Պանծակ, Քարահատ, 1655), N 3994 (Պանծակ, Հերցանկիս, 1683) ձեռագրերի կազմերը: Առաջինի կազմը մետաղագարդ տախտակ է՝ «Տերունական» նկարով (լատիներեն մակագրությամբ) և «խաչելության» բազմաֆիգուր ու դիմամիկ քանդակով, երկրորդի կազմի վրա պատկերված է ականակուռ արծաթյա խաչ:

N 5636 (Պանծակ, Քարահատ, 1676 թ.) ձեռագիրն արծաթ-ոսկեջրած կազմով է՝ ոսկեջրած գարդաքանդակներով: Կազմի վրա Տիրամոր վեհաշուք ֆիգուրն է՝ Մանուկը ձեռքին: Բարձրաքանդակ ծավալաձևերով այդ աշխատանքն աչքի է ընկնում համամասնությունների անթերի մեկնաբանությամբ: Այս կազմի երկրորդ փեղկի վրա <<խաչելության>> փայլուն կերտվածքն է:

Իրենց ինքնատիպ մանրաքանդակներով աչքի են ընկնում Մատենադարանի N 6746 (Ղաստիկյուր, 1671-1673 թթ.), N 6771 (Պանծակ, Գուլլար, 1667թ.) ձեռագիր-մատյանների կազմերն: Առաջինի կազմը՝ կոստղապատ է՝ ականակուռ խաչով, երկրորդինը՝ արծաթյա գարդաքանդակ է՝ կրկնակազմով, խաչելությամբ, «Տիրամոր» դիմաքանդակով: Ուշագրավ է N 7840 (Խանածախ, 1693 թ.) ձեռագրի կազմը, որն արծաթապատ է: Վերջինիս վրա պատկերված են «Տերունական» քանդակներ, որոնք ունեցել են սրբապատկերային նշանակություն: Բարձրաքանդակային սահուն հնարներով ցույց են տրված կերպարների դժվարին շարժումները: Տպավորիչ են հատկապես ֆոնի և ֆիգուրների հիասքանչ համադրությունը:

Մանր գարդաքանդակների փայլուն օրինակներ են ձեռագիր-մատյանների դրոշմազարդ[21], շերտազարդ[22] և վանդակազարդ[23] կտավները: Գեղարվեստական հարդարանքներով է գարդարված N 10660 ձեռ. (Պանծակ, Քարահատ, 1691 թ.), որի կտավը ծաղկազարդ է:

Ինչպես վերն ընդգծվեց քանդակագործության բնագավառում իր ուրույն տեղն է ունեցել գարդարվեստը: Ջարդարվեստը հայկական արվեստի հնագույն ճյուղերից մեկն է, որը ձևավորվել էր դեռևս նախնադարում: Ջարդարվեստի մոտիվները տարաբնույթ են: Ա. Մնացականյանը, հանգամանորեն ներկայացնելով գարդարվեստի մոտիվների ծագման ու գաղափարական բովանդակության հետ առնչվող հարցերի մեկնաբանությունը, նշում է, որ, հնագույն ժամանակներից սկսած, մարդիկ գարդարել են հագուստները, բնակարանները, տնային կահ-կարասին, գործիքները, մարդկային մարմինները, ձեռագրերն ու գրքերը, պատմաճարտարապետական զանազան հուշարձանները, գերեզմանաքարերը, նույնիսկ անասունների մարմինները, ծածկոցները և այլն[24]: Հայկական գարդարվեստում կարևոր մաս են կազմում բուսական և կենդանական մոտիվները:

Ջարդաքանդակի մոտիվներն արտացոլվել են նաև տապանաքարերի վրա: Մեծ, տափակ, սպիտակավուն տեսակներից են Տող գյուղի Պետրոս Պապի[25] (1649 թ.) Մելիքսեթ եպիսկոպոսի[26] (Ջրվշտիկ կամ Եղիշե առաքյալի վանքում, 1651 թ.), Աղուանից Գրիգոր կաթողիկոսի[27] (Պանծասարի վանքում, 1653 թ.), Ծարի պր.ն Ջհանգիր բեկի (1676 թ.), Մելիքսեթ եպիսկոպոսի ավագ եղբոր՝ Մեսրոբի[28] (Ջրվշտիկ, 1713 թ.), Ջհանգիր բեկի կողակից Շայամի[29] (Ծարում, 1717 թ.) տապանաքարերը:

Իրենց ինքնատիպ պատկերաքանդակներով առանձնանում են Գետաշենում գտնված տապանաքարերը. Պետոսի տապանաքարն (1643 թ.) օրորոցածն է, հարավային կողմին նվազածու և պարող: Մյուսը մեծ, թանքածն է, հարավային երեսին հեծյալ սուրը ձեռքին, սանձից բռնած պատանի: Պատկերված է պարող մի ձեռքին գավ, մյուսին՝ բլիթ, երկու մարդ, շրջանակներին հինգ տող. «Սուրբ խաչս բարէխոս Հախնազարին, կողակից Նանահին, որդի Եավրին, Հարութինին : ՌՃԱ: (1652)»[30]:

Հիշատակության արժանի է Փարաջանց գյուղում(Լաչինի շրջան) գտնված տապանաքարը (1658 թ.), որն օրորոցածն է. հյուսիսային երեսին կենցաղային տեսարան, վերևի թեքության վրա փորագրված արձանագրություն, արևմտյան ճակատին խարույկ, որից վեր միայն թվականը [31]:

Զարդաքանդակի գեղեցիկ նմուշ է Երեմիա կաթողիկոսի տապանաքարը: Այն մեծ և տափակ է, սպիտակ մարմարից, շրջանակներին շղթայածն զարդեր, երեսին գեղեցիկ քանդակներ և հովվական գավազան: Տապանաքարի վրա գրված է. «Այս է տապան Երեմիա կաթողիկոսին Աղուանից, յազգէն Զալալ Դօլին»: ՌՃԽԾ : (1700) թուին[32]: Իրենց ինքնատիպությամբ առանձնանում են Մելքիսեթ եպիսկոպոսի եղբոր՝ Մեսրոբի (Զրվշտիկ կամ Եղիշե Առաքյալի վանքում, 1713 թ.), մելիք Եզանի հոր՝ Գտչավանքի վանահայր Ղուկաս վարդապետի տապանաքարերը (Տող գյուղի սբ. Հովհաննես եկեղեցում): Վերջինիս տապանաքարի վրա կա հետևյալ արձանագրությունը. «Այս է տապան Մելիք Եկանի հայր Ղուկաս վարդապետի, ով կարդայ ողորմի ասէ. թվին :ՌՃԿԴ: (1716)» [33]:

Գեղեցիկ քանդակներ են արվել մելիք Բեգի (նաև՝ Պեկի) կողակից Շայամինի[34] (Ծար-Ձառ գյուղի սբ. Սարգիս կոչվող թաղածածկ մատուռի մերձակայքում, ԼՂՀ Քարվաճառի, նախկին՝ Բյալբաջարի շրջան, 1717 թ.), Խոճա Եվրինի[35] (Հին Մոխրաթաղ գյուղում, Մարտակերտի շրջան, 1720 թ.), առաջածորցի տեր Գրիգորի (1722 թ.), Մեսրոպ վարդապետի որդի տեր Սիմեոնի տապանաքարերի վրա: Վերջինիս վրա կա հետևյալ արձանագրությունը. «Այս է տապան տէր Սիմէօնի որդի Մեսրոբ վարդապետին, թվին ՌՃՀԲ (1723): Լուսահոգի մելիք Եկանն ձեռնադրել տվաւ եպիսկոպոս, կարգեց Կտիչոյ վանքին առաջնորդ: Որ եկի հաստատեցի սուրբ աթոռս թվին ՌՃՂԶ - ին(1747), ով որ կարդայ, մէկ բերան Աստուած ողորմի ասէ»[36]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում նմանատիպ տապանաքարեր են տեղադրվել Գանձասարում (Մինաս վարդապետի, 1724 թ.), Հացի գյուղի մատուռում (Խմիշի որդու Սարգիսի[37], 1725 թ., ԼՂՀ Մարտունու շրջան):

Իր գեղազիտական քանդակաշարով աչքի է ընկնում Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան Զալալյանցի տապանաքարը՝ 1728 թ.: Այն մեծ և տափակ է, սպիտակ մարմարից, շրջանակներին շղթայածն զարդեր, երեսին գեղեցիկ քանդակներ և հովվական գավազան: Տապանաքարի վրա գրված է. «Այս է տապան Եսայի կաթողիկոսին Աղուանից որ է ազգէն Զալալ Դօլին :ՌՃՀԷ: (1728) թուին»[38]:

Հետաքրքիր գարդարվեստի մոտիվներ առկա են Մելիք Շահնազարի տապանաքարի վրա (Ավետարանոցում): Այն սպիտակավուն է: Տապանաքարի մեկ երեսին պատկերված է սազ նվագող, դիմացը՝ երեք պարողներ, երկու ֆիգուր. մեկի ձեռքին՝ հայելանման իր, իսկ մյուսին՝ կենաց ծառ: Մյուս երեսին՝ երեք հեծյալ և մի թանքած ձի, որի վրա պատկերված է թռչուն: Տապանաքարի վրա գրված արձանագրությունը օղակածն է. «Այս է տապան մելիք Շահնազարի որդի մելիք Յիսէին, թվ: ՌՃՁԵ: (1736): Ռգեմ զբանս գովեստի ի վերայ մելիք Հուսէյնի, զօր գրեցի այս տապանի... »[39]:

Քանդակագործության արվեստի գեղեցիկ նմուշներ են Արցախի եկեղեցիների

շրջակայքում կանգնեցրած խաչքարերը: Լինելով ժամանակաշրջանի գեղարվեստական մտածելակերպի ինքնատիպ մարմնավորում՝ խաչքարերն[40] իրենց մեջ համադրում են բոլոր տեսակի թեմատիկ և գաղափարական խնդիրները՝ ոճական և արտահայտչական կոնկրետ ձևերով, որոնք կապված են պատմական զարգացման ընթացքի, տվյալ ժամանակաշրջանին բնորոշ գեղարվեստական ճաշակի, կերտող վարպետների անհատականության և այլ գործոնների հետ:

Խաչքարային արվեստի ձևաչափերը նոր շրջանում դրսևորվում են նոր սկզբունքներով՝ իրենց մեջ պահպանելով ավանդական մեթոդների նրբությունները: Ինչպես նշում է Հ. Պետրոսյանը, 15-րդ դարի վերջից ձևավորվում է հորինվածքային մի կայուն հիմնածև, որը դառնում է գերակշիռ և հարատևում մինչև 18-րդ դարի 20-ական թվականները: Քանդակագարդման տեսակետից այն համադրում է բազմախաչությունն ու սալի համակ զարդապատումը, պարզ հյուսվածքը, ուղղանկյուն սեգմենտներն ու բազմաթիվ աստղերը: Քանդակը դառնում է մակերեսային, ելնդավոր գիծն ավելի է լայնանում և տափալում, ինչը ողջ հորինվածքին որոշակի հարթատեսքություն է հաղորդում [41]:

Իրենց հետաքրքիր գեղաքանդակներով առանձնանում են Մուրթունիսի եկեղեցու բակում (Թողան գյուղում, 1639 թ.), Շոշ գյուղի սբ. Ստեփանոսի եկեղեցու (1651 թ., 1655 թ., 1712 թ.)[42], Ճարտար գյուղի **Եղիշե Կուսի** անապատի(1654 թ.)[43], Զրվշտիկ կամ Եղիշե Առաքյալի վանքերի շրջակայքում (1642 թ.[44], 1728 թ. [45]), Սբ. Մինաս եկեղեցու[46] բակում (1681 թ.)[47], Գտչա վանքի բակում (կանգնեցվել է տողեցի Սարգսի որդի Սայունու և նրա կնոջ՝ Հերիքնագի կողմից, 1717 թ. [48]), Գիշի գյուղում (1723 թ.)[49] և այլ վայրերում տեղադրված խաչքարերը: Վերջիններիս հմայքը զարդամոտիվների ու համամասնությունների ներդաշնակության մեջ է:

Խաչքարային արվեստի արժեքավոր նմուշ է Ներքին Շենի գերեզմանատան հին մասում տեղադրված խաչքարը, որի վրա փորագրված արձանագրությունից երևում է, որ այն կանգնեցվել է 1641 թ.[50]: Այն ունի ուշագրավ սյուժետային զարդաքանդակներ. պատկերված է ծի, թամբի վրա՝ թռչուն, առջևում՝ մարդկային երկու պատկերներ և այլն [51]: Խաչքարային գեղեցիկ հարդարանքներ են եկեղեցիների ճակտոնները: Այս առումով հետաքրքիր է Երից Մանկանց եկեղեցու ճակտոնները, որոնք հարդարված են գեղեցիկ քանդակագարդ խաչքարերով[52]:

Այսպիսով՝ 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարի սկզբին Արցախում քանդակագործությունը շարունակել է զարգանալ՝ չնայած պատմաքաղաքական աննպաստ զարգացումներին: Ուսումնասիրությունը կարևորվում է այն առումով, որ քննարկվող հուշարձանների մի մասը գտնվում է Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքներում:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տարածքը հայտնի է դեռևս վաղ անցյալից: X դարից սկսած՝ այն մտել էր հզորացող Խաչենի իշխանության կազմի մեջ, իսկ XVII-XVIII դդ.՝ Գյուլիստանի մեկիքության: Գյուղից 3 կմ հեռավորության վրա, սեպածև ժայռաբլրի վրա, գտնվում է Գյուլիստանի բերդը, որը 1632 թ. Մելիք Բեգլար Ա վերանորոգել է : Այստեղից էլ առաջացել է համանուն գյուղը (տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1986, հ.1, էջ 906):
2. Տե՛ս Լալայան Ե., Նշանավոր վանքեր, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1899,

- գիրք Ե (№ 1), էջ 348:
3. Բարխուտարեանց Ս., Արցախ, Բաքու, 1895, էջ 88: Տե՛ս նաև Դիվան հայ վիճագրության, պր. 5 (Արցախ), Եր., 1982, էջ 172: <http://www.monuments.nkr.am/index.php?al=home&act=filter&mtype=12>
  4. Ալիշան Ղ., Արցախ, Եր., 1993, էջ 106: Տե՛ս նաև Ջալալեանց Ս., Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 210:
  5. Նոր Ղար, Թիֆլիս, 1886, 6 մայիսի (N 65,) էջ 1:
  6. Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 148: Տե՛ս նաև Հարությունյան Վ., Հայ ճարտարապետության պատմություն, Եր., 1992, էջ 401:
  7. Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 159:
  8. Նույն տեղում, էջ 145-146:
  9. Բարխուտարեանց Ս., Պատմություն Աղուանից, հ. Ա, Թիֆլիս, 1901, էջ 170 -174: Տե՛ս նաև Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 164: Ջալալեանց Ս., Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 317:
  10. Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 87: Տե՛ս նաև Ջալալեանց Ս., նշվ. աշխ., մասն Բ, էջ 240-241:
  11. Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 402:
  12. Մկրտումյան Լ., Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձբեցի կաթողիկոսի օրոք (1653-1678թթ), Լրաբեր հասարակական գիտությունների, 2000, N 1, էջ 96:
  13. Տեղադրված է Արցախի հյուսիսային հատվածում Գանձակից մոտ 20 կմ հարավ-արևմուտք: Ներկայումս գտնվում է Ադրբեջանի Հանրապետության Խանլարի շրջանում (Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Եր., 2004, էջ 394-396: Լալայան Ե., Հայոց նշանավոր գյուղեր, Ազգագրական հանդես, 1899, N 5, էջ 315: Տե՛ս նաև Արծազանք, 1886, N 20, 25 մայիսի, էջ 295):
  14. Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 378:
  15. Դիվան հայ վիճագրություն, պր. 5, էջ 239:
  16. Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 321:
  17. Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 93: Ջալալեանց Ս., նշվ. աշխ., էջ 180:
  18. Տե՛ս Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Եր., 1980, էջ 53:
  19. Տե՛ս Մկրտչյան Շ., Մարտունու շրջանի պատմական հուշարձանները, էջմիածին, 1976, N 6, էջ 63:
  20. Մանրամասն տե՛ս, Մատենադարանի արծաթապատ կազմերով ձեռագրերը, Եր., 2011:
  21. Տե՛ս ՄՄ, ձեռ. N 223, N 713, N 2067, N 2277, N 3541, N 3542, N 3647, N 4228, N 4281, N 5072, N 5143, N 8678, N 9043 :
  22. Տե՛ս ՄՄ, ձեռ. N 968, N 4053, N 7980, N 8549 :
  23. Տե՛ս ՄՄ, ձեռ. N 6746, N 7687, N 10472:
  24. Տե՛ս Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 7:
  25. Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 179:
  26. Նույն տեղում, էջ 108:
  27. Բարխուտարեանց Ս., Արցախ, էջ 176: Տե՛ս նաև Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 66:
  28. Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 110:



29. Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 406: Տե՛ս նաև Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 222:
30. Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 236:
31. Նույն տեղում, էջ, 196:
32. Նույն տեղում, էջ 65: Տե՛ս նաև Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 176:
33. Նույն տեղում, էջ 178: Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 75:
34. Դիվան հայ վիճագրության, պր. 5 , էջ 222:
35. Նույն տեղում, էջ 94:
36. Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 82: Տե՛ս նաև Ս. Ջալալեանց, նշվ. աշխ., մասն Բ, էջ 258: Դիվան հայ վիճագրության, պր. 5 , էջ 185:
37. Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 127:
38. Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 176: Տե՛ս նաև Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 64:
39. Տե՛ս Րաֆֆի, Խամսայի մեկի թվությունները, էջ 49: Տե՛ս նաև Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 149:
40. Այս մասին մանրամասն տե՛ս Հայկական խաչքարեր, Եր., 1973:
41. Պետրոսյան Հ., Խաչքար (ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը), Եր., 2008, էջ 203:
42. Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 146:
43. Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 116:
44. Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 109:
45. Նույն տեղում, էջ 111:
46. Տեղադրված էր պատմական Մեծ Հայքի Արցախ նահանգի Կողթ գավառում: Ներկայումս՝ Ադրբեջանի Խանլարի շրջանում:
47. Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 232:
48. Ջալալեանց Ս., նշվ. աշխ., մասն Բ, էջ 258: Տե՛ս նաև Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 82:
49. Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 159:
50. Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, Գիրք Ա, Եր., 1993, էջ 77:
51. Նույն տեղում:
52. Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 400:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

#### **Քանդակագործությունն Արցախում XVII դ. երկրորդ կեսին և XVIII դ. սկզբին Մարինե Հարությունյան**

Հոդվածում որոշակի պատկերացում է տրվում XVII դ. երկրորդ կեսին և XVIII դ. սկզբին Արցախում քանդակագործության զարգացման վերաբերյալ: Նպատակն է՝ Մատենադարանի ձեռագրերի, պատմագիտական գրականության հիման վրա ևս մեկ անգամ ընդգծել պատմական այն ճշմարտությունը, որ, չնայած պատմական բարդ ժամանակաշրջանին, Արցախում մշակույթի տարբեր ճյուղերի կողքին քանդակագործությունը շարունակել էր առաջընթաց ապրել:

Հոդվածը կարևորվում է նաև նրանով, որ կասկածի տակ էր դրվում Ադրբեջանի կողմից բռնագավթված տարածքների ձարտարապետական կոթողների հայկականությունը:

**РЕЗЮМЕ**  
**Скульптура в Арцахе в XVII-XVIII вв.**  
**Марине Арутюнян**

**Ключевые слова:** Гюлистан, Божий, распятие, надгробие, хачкар, церковь Св. Григория Нарекаци, церковь Св. Минас, Монастырь Гтча, деревня Гиши.

В статье дается определенное представление о прогрессе скульптуры в Арцахе в XVII-XVIII вв. Цель - на основании рукописей Матенадарана, материалов, опубликованных в периодической прессе и литературе, еще раз подчеркнуть ту историческую правду, что, несмотря на сложный исторический период, скульптура, наряду с разными отраслями культуры в Арцахе, продолжала переживать определенное возрождение, что тесно было связано с другими отраслями культуры.

Одной из задач является—на основании фактических материалов показать, что вышеуказанные культурные ценные экземпляры были созданы в Арцахе, и несомненно, армянские. Речь идет об архитектурных монументах северной части Арцаха, которые в настоящее время находятся на территориях, оккупированных Азербайджаном, и которые квалифицируются ими.

**SUMMARY**  
**The Sculpture in Artsakh in XVII - XVIII centuries**  
**Marine Harutyunyan**

**Keywords:** *Gulistan, divine, crucifix, gravestone, khachkar, St. Grigor Narekatsi Church, St. Minas Church, Gatcha monastery, Gishi village.*

The article gives a clear idea about the progress of sculpture in Artsakh in the XVII - XVIII centuries. The aim of the article is to emphasize the historical truth that despite the difficult historical period, sculpture continued to develop in Artsakh alongside with other cultural branches. This is being proved through manuscripts of the Matenadaran, materials of periodical press and literature.

On the basis of factual material it becomes possible to show that these valuable cultural samples were created in Artsakh and are certainly considered to be Armenian. This refers to the architectural monuments of the northern part of Artsakh, which are currently on the territories occupied by Azerbaijan and qualified as theirs.

**ԱՖՐԻԿԱՆ ՄԱՅՐՑԱՄԱՔՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ  
ՄԻՋԱՍՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ\***

**Ժաննա Հարությունյան**

**Բանալի բառեր՝** Ֆրանսիա, Աֆրիկա, ռազմական միջամտություն, ազդեցության ոլորտ (prz carrn), քաղաքական շահ, տնտեսական շահ, իրավապայմանագրային հիմք:

Աֆրիկայի նկատմամբ հետաքրքրությունը համակել է աշխարհի այնպիսի մեծ խաղացողների, ինչպիսիք են՝ ԱՄՆ, Չինաստանը և եվրոպական պետությունները. որոշները՝ մեծ չափով, որոշները՝ փոքր: Մասնավորապես, Պեկինի աֆրիկյան քաղաքականության հիմքում ընկած է տնտեսական էքսպանսիան: Ինչ վերաբերում է եվրոպական պետություններին, ապա նրանք վաղուց զարգացած հարաբերություններ ունեն Աֆրիկյան նախկին գաղութների հետ և դա մեծ չափով վերաբերում է Ֆրանսիային: Ֆրանսիան լծակներ ուներ աֆրիկյան շուկաներում, և մեծապես շահագրգռված էր իր ապրանքը այնտեղ յուրացնելու գործում, իսկ մշակութային կապը պահում էր ֆրանսերենի միջոցով, որը շատ աֆրիկյան պետություններում համարվում էր պետական լեզու: Բայց ամեն դեպքում Ֆրանսիան մտահոգված էր, որ իր ազդեցությունը Աֆրիկայում նվազում է ԱՄՆ-ի և Չինաստանի ազդեցության աճի հաշվին: Աֆրիկյան մայրցամաքը և՛ տնտեսական, և՛ ժողովրդագրական առումով զարգացման մեծ պոտենցիալ ունի, ուստի Աֆրիկայի համար պայքարն ընթանում էր լայն հարթակով և տասնամյակներ շարունակ Աֆրիկյան Ֆրանսիայի համար եղել է ազդեցության ոլորտ (prz carrn)[1]

Ֆրանսիան Աֆրիկայում իր քաղաքականության հիմքում դնում էր տնտեսական և քաղաքական շահերը.

1. Աֆրիկյան նավթի և մետաղների կարևոր մատակարար է Ֆրանսիայի համար.
2. Ֆրանսիայի արտահանության 5 տոկոսը բաժին է ընկնում Աֆրիկյան մայրցամաքին.
3. Այդ տարածաշրջանում ապրում է շուրջ 240.000 ֆրանսիացի:

Ֆրանսիական քաղաքական գործիչները շահագրգռված են տարածաշրջանը պահել Ֆրանսիայի հետաքրքրությունների սահմանում՝ նշելով, որ «Աֆրիկյան մայրցամաքը մեր հարևանն է, և երբ այն ցնցվում է հակամարտություններից, ապա ցնցվում ենք նաև մենք», - ասել է Ֆրանսիայի խորհրդարանի ներկայացուցիչ Անդրե Դուլան[2]: Այնուամենայնիվ, Ֆրանսիայի քաղաքական ներկայացուցիչները միակարծիք չեն Ֆրանսիայի համար Աֆրիկայի դերի հարցում, և շատերը կարծում են, որ այն ռեսուրսները, որ ծախսվում են Աֆրիկայի վրա, շատ ավելի նպատահարմար էր տեղակայել Ասիայում և Հյուսիսային Ամերիկայում, որտեղ Ֆրանսիայի տնտեսական ապագան էր: Նրանք, ովքեր դեմ էին Ֆրանսիայի ռազմական ներկայությանը մայրցամաքում, համարում էին այն ոչ արդյունավետ և հակաժողովրդավարական [3]: Ամեն դեպքում Ֆրանսիայի ռազմական հետաքրքրությունը Աֆրիկայի նկատմամբ անժխտելի է, և Ֆրանսիային դժվար էր ձեռնպահ մնալ աֆրիկյան էթնիկ հակամարտություններին և, ընդ-

\* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

հանրապետ, Աֆրիկայի քաղաքական կյանքին ներգրավվածությունից:

Ֆրանսիայի աֆրիկյան նախկին գաղութային պետությունների հետ ռազմական համագործակցությունը երկու ուղղություն ուներ. առաջինը՝ դա մայրցամաքում ռազմական ռիսկերի կրճատումն էր: Ֆրանսիան կոմնակից էր ժողովրդավարությանը և իրավական պետությունների կայացմանը: Դրանից ելնելով՝ առաջարկում էր աֆրիկյան պետություններին ռազմական պայմանագրեր կնքել Ֆրանսիայի հետ և կրճատել աֆրիկյան ռազմական ուժերը՝ Աֆրիկյան դարձնելով անվտանգ գոտի[4]: Երկրորդը վերաբերում էր Ֆրանսիայի ռազմական ներխուժումներին և մայրցամաքում Ֆրանսիայի ռազմական ներկայությանը: Ֆրանսիան ռազմական ներխուժումներ է իրականացնում՝ մայրցամաքում խաղաղության և կայունության պահպանման պատրվակով, ինչն էլ Ֆրանսիայում հակասությունների տեղիք է տալիս:

1962-1995 թթ. ընթացքում Ֆրանսիան 19 անգամ ռազմական ներխուժում է կատարել աֆրիկյան տարբեր պետությունների տարածք[5]: Ներխուժումների մեծ մասը նպատակ է ունեցել «պաշտպանել Ֆրանսիայի ժողովրդին և պայքարել անօրինական կառավարությունների դեմ»[6]: 1960թ. 14 ֆրանսիական գաղութներ (Արևմտյան և Էկվատորիալ Աֆրիկայում, ներառյալ Մադագասկարում) անկախություն ստացան: Մինչ այդ՝ Ֆրանսիան քայլեր էր ձեռնարկում պահպանելու Ֆրանսիական գաղութային տարածքը օրինական ճանապարհով: 1958թ. Ֆրանսիական նոր Սահմանադրության ընդունումից հետո անկախացած գաղութները մտան արդեն ստեղծված Ֆրանսիական Միության կազմի մեջ (բացի Գվինեայից)՝ բաժանվելով երկու տարածաշրջանային խմբերի՝ Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկա և Ֆրանսիական Էկվատորիալ Աֆրիկա (ներառյալ Մադագասկարը): Տարածաշրջանները ղեկավարում էին բարձր հանձնակատարները՝ գեներալները[7]: Երկու տարի անց Սահմանադրությունը կրկին փոխվեց, և Միության բոլոր անդամները անկախացան[8]: Հինգերորդ Հանրապետության հիմնադիր-նախագահ Շառլ դը Գոլը, իր համախոհների և Աֆրիկյան առաջնորդների հետ ստեղծեց Ֆրանկաֆրիկյան (Françafrique) կառույցը, որն աֆրիկյան պետությունների անկախությունից հետո համագործակցության նոր հարթակ էր ֆրանսիայի և իր նախկին գաղութների միջև[9]:

Այսպիսով՝ Ֆրանսիան դե յուրե ճանաչեց իր նախկին գաղութների անկախությունը, բայց դե ֆակտո շարունակում էր համակարգել գաղութների գործունեությունը, այսինքն՝ գաղութների կյանքին ուղղակի միջամտությունը փոխվեց անուղղակի միջամտության: Անկախացած գաղութներից որոշները ռազմական աջակցության և համագործակցության երկկողմ պայմանագրեր կնքեցին Ֆրանսիայի հետ, որոնք էլ դարձան Ֆրանսիայի ռազմական քաղաքականության փաստաթղթային հիմքերը: Որոշ պայմանագրեր մինչ այժմ գործում են: Աֆրիկյան պետությունների հետ կնքված ռազմական բնագավառում համագործակցության պայմանագրերը երկու տեսակ էին. համապարփակ երկկողմ պայմանագիր պաշտպանության վերաբերյալ, որը նշանակում էր, որ Ֆրանսիան իր վրա պատասխանատվություն է վերցնում պաշտպանելու այդ պետությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական սպառնալիքներից[10]: Երկրորդ խմբին էին պատկանում ռազմատեխնիկական աջակցության պայմանագրերը: Այս պայմանագիրը կնքվեց բոլոր 14 նախկին գաղութների հետ՝ բացառությամբ Գվինեայի: Այնուհետև այսպիսի պայմանագրեր կնքվեցին նաև նախկին բելգիական գաղութների հետ (Կահիրե, Բուրունդի, Ռուանդա) և նախկին պորտուգալական գաղութ Գվինեա-Բիսաուի հետ[11]: Շուրջ 25 աֆրիկյան պետությունների հետ ռազմական ոլորտում համագործակցության պայմանագրերը Ֆրանսիային լայն հնարավորություն էին տալիս իրականացնելու իր ռազմական քաղաքականությունը՝ օգտագործելով իր ռազմական ուժերը: Այս ամենը թույլ էր տալիս Ֆրանսիային պահպանել իր գլխավոր խաղացողի

դերը նախկին գաղութային տարածաշրջանում:

Ֆրանսիան աֆրիկյան մայրցամաքի այդ հատվածում ձգտում էր միայնակ գործելու՝ հուսալով ստանալ աֆրիկյան պետությունների աջակցությունը: Շառլ դը Գոլի կառավարման տարիներին ֆրանսիան ոգևորված չէր աֆրիկյան ազգային բանակների ստեղծմամբ: 1959թ. փետրվարի 9-ին Շառլ դը Գոլը ուղղակիորեն հայտարարեց, որ «Բանակը, որ պետք է պաշտպանի Միությունը՝ մեկն է: Մեկ հրամանատարության մեջ»[12]: Ֆրանսիական բանակը կար և մնում էր Աֆրիկայի անվտանգության միակ երաշխավորը, և այդ ամենը քաջ գիտակցում էին և՛ Աֆրիկայում և՛ Ֆրանսիայում: Սակայն անհրաժեշտություն առաջացավ փոխելու աֆրիկյան անվտանգության համակարգը, և ստեղծվեց նոր անվտանգության համակարգ: Ֆրանս-աֆրիկյան ռազմական պայմանագրերից ելնելով՝ աֆրիկյան պետություններում ռազմական աջակցության կենտրոններ էին ստեղծվել, որի գործողությունը կազմակերպում էր 1961թ.-ին ստեղծված համագործակցության նախարարությունը[13]: Այս պայմանագրերը Ֆրանսիային արագ արծազանքման հնարավորություն էին տալիս, որոնք էլ Ֆրանսիան իրականացնում է Սև Աֆրիկայում տեղակայված իր ռազմական բազաների օգնությամբ, որոնք ցրված էին զրեթե բոլոր ռազմավարական նշանակություն ունեցող վայրերում, և, իհարկե, օդուժը, որը ամեն պահի պատրաստ էր միջամտելու հակամարտություններին[14]: Աֆրիկյան պետությունների մոտ հինգ հազար զինայից բաղկացած ազգային բանակները կարևոր տեղ էին զբաղեցնում ֆրանկոֆոն աֆրիկայի անվտանգության համակարգում: Ազգային բանակները, որոնց զենք-զինամթերքը բավականացնում էր ինքնապաշտպանական գործողություններ իրականացնելու համար, խնդիր ունեին կադրերի ապահովման գործում: Բանակի շարքային կազմը ապահովում էին աֆրիկացիները, իսկ հիմնական սպայական կազմը՝ ֆրանսիացիները: Նախապատվությունը չէր տրվում աֆրիկյան սպաներին, բայց արդեն 1960-ական թթ. այն հրատապ դարձավ: 1956-1965թթ. Ֆրանսիայի և Ալժիրի ռազմական ինստիտուտները տվեցին 275 շրջանավարտ-սպաներ. նրանցից միայն 77 էին աֆրիկացի[15]:

Ֆրանսիան ամբողջ ֆրանկոֆոն[16] Աֆրիկյան բաժանել էր երկու ռազմավարական շրջանի՝ Արևմտյան և Կենտրոնական Աֆրիկայի պետությունները և Հնդկական օվկիանոսի հարող պետությունները՝ ներառյալ Մադագասկար և Ջիբութի: Կենտրոնաֆրիկյան շրջանն իր հերթին բաժանվել էր երեք գոտիների, որոնց կենտրոնակայանները գտնվում էին Դաքարում, Աբուջանում և Բրազզավիլում: Աֆրիկայում ռազմական գործողություններ ծավալելու համար Ֆրանսիական ուժերի մեկ մասը գտնվում էր աֆրիկյան բազաներում, իսկ մյուս՝ հիմնական զանգվածը գտնվում էր Ֆրանսիայում՝ պատրաստ լինելով իսկույն տեղափոխվելու աֆրիկյան մայրցամաք: Առավել կարևոր բազաներ էին Դակարն, Ֆորտ-լամը Նջամենայում, Պուենտ-Նուարը Բրազզավիլում, Դիեգո-Սուարեսը Մադագասկարում, որտեղից Ֆրանսիական զորքերը հեռացան 1974թ.[17]: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Ֆրանսիան Աֆրիկայում ստեղծել էր ռազմական համակարգ՝ հիմնվելով ռազմական բազաների (կենտրոնակայանների) վրա, որտեղ գերակշռում էին ֆրանսիական ռազմական ուժերը: Համաձայն 1958 թ Սահմանադրության՝ աֆրիկյան բազաները գտնվում էին Ֆրանսիայի նախագահի անմիջական հրամանատարության տակ, և նախագահը (1958թ. Շառլ դը Գոլը) կարող էր այն կիրառելու որոշում կայացնել:[18]: Շառլ դը Գոլից հետո այդպիսի հարցերով զբաղվում էր վարչապետ Ժորժ Պոմպիդուն (1964-1968թթ.): Սակայն, որպես կանոն, այդպիսի հարցերը քննարկվում էին հատուկ խորհրդում, որի կազմի մեջ մտնում էին պաշտպանության, ներքին գործերի, արտաքին գործերի, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարները: Հատուկ խորհրդի նիստերը հրավիրվում էին տարին երեք կամ չորս անգամ՝ ռազմական

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

նախարարի հրավերով (Պիեռ Մեսսենռա 1960-1969թթ. ), բայց ամեն դեպքում վերջնական խոսքը Աֆրիկյան հարցերով դը Գոլի գլխավոր խորհրդական Ժակ Ֆոկկարին էր պատկանում, որին կարելի է համարել Ֆրանկաֆրիկայի հիմնադիր[19]: Այսպիսի ռազմական քաղաքականությունը նախ` թույլ էր տալիս խուսափել նախկին գաղութների վրա ռազմական ճնշում գործադրելուց և հետո` Աֆրիկայում այդքան ռազմական բազաների տեղակայումը լուրջ ռազմական ծախսեր էր ակնկալում: Ամեն դեպքում Աֆրիկայում տեղակայած ուժերը թույլ էին տալիս Ֆրանսիային ռազմական գործողությունների դեպքում արագ ուղղորդել ուժերը անհրաժեշտ ուղղությամբ` մինչ կհասնեին ֆրանսիական ուժերը: Ֆրանսիան կազմել էր աֆրիկյան երկրների այնպիսի նեղ խումբ, որտեղ Ֆրանսիան առաջինը կմտներ անհրաժեշտության դեպքում. Փղոսկրյա ափը, Գաբոն, Սենեգալ, Կամերուն և որոշ մասերով Տոգոն: Երկրորդ խմբի պետությունների թվում էին Նիգերը, Չադը, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը(ԿԱՀ): Այստեղ թույլ էին Ֆրանսիայի մշակութային կապերը, փոխարենը մեծ էր տնտեսական հետաքրքրությունը: Այսպես` Ֆրանսիայի ռազմական ներխուժումները Աֆրիկա ունեցել են և` քաղաքական, և, տնտեսական հիմքեր: Հիմք ընդունելով ֆրանս-աֆրիկյան ռազմական պայմանագրերը` Ֆրանսիան իրականացնում էր ռազմական ներխուժումներ` միջամտելով կառավարությունների դեմ ապստամբություններին:

Առաջին ռազմական ներխուժումը, որ արժանի է հիշատակության, 1964թ. էր, երբ ռազմական հեղաշրջումից հետո Ֆրանսիան դեսանտը իջեցրեց Աֆրիկա (Lion Mba): Այնուհետև 1964թ. Գաբոն, Երկրորդ օրինակը 1967թ. Բիաֆրայի պատերազմն է Նիգերիայում: Ֆրանսիան պաշտպանեց Բիաֆրայի գործերը` ընդդեմ Նիգերիայի պետական իշխանության: Քաղաքացիական պատերազմը տվեց մոտ երկու միլիոն զոհ:

1970թ Ֆրանսիան ընդարձակեց իր ռազմական դասավորությունը Աֆրիկայում, որպեսզի իր ազդեցության ոլորտում ներառի Բելգիայի նախկին գաղութներին` Բուրունդի, Ռուանդա, Կահիրե (Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը): Հիշատակության են արժանի 1969 թ. [20] և 1978թ. [21] Ֆրանսիական միջամտությունը Չադում. Չադը Հյուսիսային Աֆրիկայից Սև աֆրիկա տանող սահմանին էր, 1977-1978թթ. [22] Կահիրե), (1979թ. Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում): Ֆրանսիայի համար կարևոր էր նաև Կոնգոն (Բրազզավիլ), Կոնգո(Կահիրե), Մալի, Գվինեա և Մավրիտանիան[23]: Այն պետությունները, որոնք Ֆրանսիայի համար կենսական նշանակություն ունեն` Ֆրանսիայի կողմից ապահովվում են ֆինանսական և ռազմական աջակցությամբ: Սակայն իրողությունը ցույց է տալիս, որ Ֆրանսիայի ռազմական ներխուժումները ոչ այնքան նպատակ ունեին պաշտպանելու աֆրիկյան պետություններին և օրինականություն հաստատել այնտեղ, որքան ամրապնդելու իրենց ներկայությունն այդ պետություններում և կայունացնել իր դիրքերն աշխարհում, որպես հզոր պետություն: Այնուամենայնիվ Շառլ դե Գոլի և Պոմպիդուի ժամանակաշրջանում Ֆրանսիան ավելի շատ ձգտում էր խորացնելու տնտեսական և դիվանագիտական հարաբերությունները, քան ռազմական ներխուժումներ իրականացնելու: Կոշտ ուժի քաղաքականությունը Աֆրիկայում տեսանելի եղավ արդեն ասպագաղութացումից հետո: Սակայն Ֆրանսիայի երկարատև ներկայությունն Աֆրիկայում առաջացրեց Աֆրիկյան պետությունների դժգոհությունը

Վալերի Ժեսկար դ'էստենը կառավարման տարիներին (1974-1981թթ.) Ֆրանսիան ռազմական ներխուժում իրականացրեց Արևմտյան Սահարա, Կահիրե, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Չադ` նպատակ ունենալով զսպել արտաքին ագրեսիան:

Արդեն 1980-ական թվականների առաջին կեսերին Ֆրանսիան զգալի մեծացրեց

զենքի արտահանումը դեպի Աֆրիկա՝ նպատակ ունենալով դառնալու այդ տարածաշրջանին ամենամեծ զենք մատակարարող պետությունն աշխարհում: Ֆրանսիայի զենքի արտահանման մեկ երրորդը բաժին էր հասնում իր նախկին գաղութներին[24]: Դրանով Ֆրանսիան ուզում էր մեծացնել Աֆրիկայի կախվածությունը Ֆրանսիայից՝ միևնույն ժամանակ նվազեցնելով այլ պետությունների ազդեցությունը Աֆրիկյան մայրցամաքում: Անգամ 1981-1985 թթ տնտեսական դժվարությունների պարագայում Ֆրանսիան շարունակում էր պահել իր առաջնակարգ դիրքերը Աֆրիկայում: Ռազմական քաղաքականությանը զուգահեռ ֆրանսիայի վարած արտարժույթի քաղաքականությունը թույլ տվեց Ֆրանսիային 1960-1990թթ. պահել իր դիրքերը տարածաշրջանում:

Այնուամենայնիվ, Միտերանի կառավարությունը երկու անգամ ներխուժեց Չադ՝ 1983, 1986թթ. երկու անգամ Կահիրե և երեք անգամ Ռուանդա և 1990թ. կրկին Գաբոն: Միտերանի կառավարությունը ավելի հաճախ ռազմական ներխուժումներ իրականացրեց Աֆրիկա, քան իր նախորդները և ի գործու չէր, որ նախկին ռազմական նախարար Պիեռ Մեսերը նրան անվանում էր «Աֆրիկայում ռազմական ակնարկների մանյակ»[25]:

1980-ականներից մինչև 1995 թթ.՝ Ֆրանսուա Միտերանի կառավարման տարիներին, Ֆրանսիան որդեգրել էր «չմիջամտելու քաղաքականություն», սակայն ռազմական ներխուժումները շատացան: Պատճառները երկուսն էին. նախ այն, որ նրանք կառավարեցին երկար և հետո, այդ ընթացքում (1990-2005թթ) Աֆրիկյան անհամեմատ ավելի անկայուն էր: Ռազմական ներխուժումները նպատակ ունեին պաշտպանելու Աֆրիկայում ապրող Ֆրանսիայի քաղաքացիների շահերը (Լիբիա-Չադ պատերազմ և 1994թ Ռուանդայի ցեղասպանությունը): «Ֆրանսիան պետք է հատուկ ուշադրություն դարձնի Երրորդ աշխարհի խնդիրներին», -ասել է Միտերանը[26]: Ի տարբերություն իր նախորդների վարած քաղաքականության՝ սոցիալիստները տարբերվում էին միայն հռչակագրերով: Հարկ է նշել, նաև որ Աֆրիկայում ռազմական քաղաքականություն իրականացնելիս Ֆրանսիան առաջնորդվում էր ոչ միայն իր շահերով, այլ ելնելով նաև ՆԱՏՕ-ի նպատակներից և առաջնահերթություններից [27]: Այդպես հայտարարում էր Ֆրանսիական ռազմական հրամանատարությունը: Ժակ Շիրակի կառավարման տարիներին ևս Ֆրանսիայի ներխուժումներն առաջնորդվում էին Ֆրանսիայի քաղաքացիների պաշտպանությամբ: Ներխուժումները գտնվում էին ՄԱԿ-ի անմիջական վերահսկողության ներքո[28]:

Այսպիսով՝ Ֆրանսիայի ռազմական քաղաքականությունն Աֆրիկայում հենվում էր երեք հիմքերի վրա. քաղաքական, տնտեսական, իրավապայմանագրային: Քաղաքական առումով կարելի է եզրակացնել, որ Ֆրանսիայի վերաբերմունքը Աֆրիկայի նկատմամբ անփոփոխ է. այն շարունակում է Ֆրանսիայի համար մնալ որպես ազդեցության ոլորտ: Ֆրանսիան մեծ ջանքեր է գործադրում այդ ազդեցությունը պահելու համար, քանզի այն հնարավորություն է տալիս Ֆրանսիային ամրապնդելու իր դիրքերն աշխարհում և մնալու որպես մեծ խաղացող ԱՄՆ և Չինաստանի հետ մրցակցության նույն ոլորտում: Հաջորդ հիմքը տնտեսականն է, քանզի Աֆրիկյան իր մեծ տնտեսական պոտենցիալով դարձել է մրցակցության օբյեկտ նաև այլ զերտերությունների համար, և ռազմական ներխուժումների հաջողության դեպում Ֆրանսիան կունենար ոչ միայն քաղաքական այլև տնտեսական դիվիդենտներ: Ֆրանսիան գտնում էր, որ անգամ ապագադրությամբ պետք է շահած դուրս գալ [29]: Եվ, վերջապես, երրորդ հիմքը իրավապայմանագրայինն էր, որը կոչված էր ծառայելու առաջին երկուսին. Երկկողմ ռազմական պայմանագրերի հիմքով ներխուժումներ իրականացնելով՝ Ֆրանսիան փորձում էր քաղաքականապես և տնտեսապես շահած դուրս գալ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Le Monde, 23 avril 2003.
2. Andrew Hansen, The French Military in Africa, February 8, 2008.
3. Le Monde, 13 juillet 1995.
4. Справочник по практике Совета Безопасности. Дополнение за 1996–1999 годы, Организация Объединенных Наций, Подписание Договора о зоне, свободной от ядерного оружия, в Африке (Пелиндабский договор), Нью-Йорк, 2016, стр. 862
5. Griffin Ch. French Military Interventions in Africa: French Grand Strategy and Defense Policy since Decolonization. Los Angeles: University of Southern California School of International Relations, 2009. p 22
6. Коновалов И., Военные операции Франции в Африке, Центр стратегической конъюнктуры, 2014, глава 1, стр.14
7. Մույն տեղում:
8. Archives Nationales de la France, Série AG, 5 AG 1, Papiers des chefs de l'État, État général des fonds, Charles de Gaulle, Président de la République (1959-1969)
9. Մույն տեղում:
10. Пастернак Р., Роль Франции в разрешении вооруженных конфликтов в Африке <http://www.modernarmy.ru/article/425/rol-francii-v-afrike>
11. Archives Nationales de la France, Série AG, 5 AG Foccart (FPR/FPU) Archives du secrétariat général pour les Affaires africaines et malgaches.
12. Chaigneau P. La politique militaire de la France en Afrique, Paris: Centre des Hautes Etudes sur L' Afrique et L'Asie Modernes, 1984. p. 107
13. Пастернак Р., Роль Франции в разрешении вооруженных конфликтов в Африке <http://www.modernarmy.ru/article/425/rol-francii-v-afrike>
14. Archives Nationales de la France, Série AG, 5 AG Foccart (FPR/FPU) Archives du secrétariat général pour les Affaires africaines et malgaches
15. Մույն տեղում:
16. Ֆրանկոֆոն են այն երկրները, որոնք օգտագործում են ֆրանսերենը՝ մասամբ կամ ամբողջությամբ, և ծանոթ են նրա մշակույթին և պատմությանը: Ֆրանկոֆոնիա բառը 1-ին անգամ շրջանառվել է 1880 թվականին աշխարագրագետ Օնեգիմ Ռեկլուի կողմից, որի նպատակն էր աշխարհի բնակչության դասակարգումը՝ ըստ նրանց լեզվական չափանիշների:
17. Chaigneau P. La politique militaire de la France en Afrique, Paris: Centre des Hautes Etudes sur L' Afrique et L'Asie Modernes, 1984. p. 109
18. la Constitution du 4 octobre 1958, Titre II: Le Président de la République (articles 5 à 19)
19. Archives Nationales de la France, Série AG, 5 AG Foccart (FPR/FPU) Archives du secrétariat général pour les Affaires africaines et malgaches
20. Le Monde, 14 Mai, 1969
21. Le Monde, 21 avril 1978
22. Մույն տեղում:
23. Коновалов И., Военные операции Франции в Африке, глава 1, стр.63
24. Ндоноджи П., Политика Франции в отношении стран Центральной и Западной Африки в 80-е гг., автореф. канд.истор.н., Киев, 1993.
25. “un maniaque de la gesticulation militaire en Afrique.” Messmer, Les blancs s'en vont, 239.
26. L'Etat de la France 95-96. p.591.
27. Trachtenberg M., France and NATO, 1949-1991, Journal of Transatlantic Studies Vol. 9,



No. 3, September 2011, 184194

28. Kratz I., French-African relations: a historical perspective (1885-1994), 2014

29. Дузь С., Колониальная Африка и французский интерес, <http://www.warandpeace.ru/ru/news/view/86078/>

### ԱՄՓՈՓԱԳԻՐ

#### Աֆրիկյան մայրցամաքում Ֆրանսիայի ռազմական միջամտության քաղաքականության հիմքերը ժաննա Հարությունյան

Ֆրանսիայի ռազմական քաղաքականությունը Աֆրիկայում հենվում էր երեք հիմքերի վրա. քաղաքական. Ֆրանսիայի համար Աֆրիկյան աշխարհում իր դիրքերն ամրապնդելու կարևոր գործոն էր: Տնտեսական, Ֆրանսիան լծակներ ուներ աֆրիկյան շուկաներում, և մեծապես շահագրգռված էր իր ապրանքը այնտեղ յուրացնելու գործում, և իրավապայմանագրային. այս դաշտն ապահովում էին ֆրանս-աֆրիկյան ռազմական պայմանագրերը, որոնք հիմք էին Ֆրանսիայի ռազմական ներխուժումների համար: Իրականում իրավապայմանագրային հիմքը գործիք էր Ֆրանսիայի տնտեսական և քաղաքական ձգտումներն իրագործելու համար:

### РЕЗЮМЕ

#### Основы политики военного вмешательства Франции в африканском континенте Жанна Арутюнян

*Ключевые слова:* Франция, Африка, военное вмешательство, сфера влияния (*pré carré*), политические интересы, экономические интересы, договорно-правовая основа

Французская военная политика в Африке имеет три основы: *политическая*— для Франции Африка важна для укрепления своих позиций в мире; *экономическая*— маркетинговая политика Франции имеет более глубокие связи в Африке, и Франция стремится продать свои товары на рынках Африки; *договорно-правовая*— в соответствии с этим Франция выполняет свои военные интервенции, чтобы получить политические и экономические дивиденды.

### SUMMARY

#### Basis of France's military intervention policy in African continent Zhanna Harutyunyan

*Keywords:* France, Africa, military intervention, sphere of influence (*pré carré*) political interests, economic interests, legal basis

France military policy in Africa has three bases: France uses Africa in order to reinforce its position in the world; France marketing policy has deeper ties in Africa and France is really interested in selling its goods in African markets; which consists of France-African military agreements, according to which France fulfills its military intervention so as to get political and economic dividends.

ՄԻ ԷՋ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԹԻԿՈՒՆՔԻ  
2006 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ\*\*

ՄԻԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Բանալի բառեր՝** թիկունք, Պաշտպանության բանակ, Արցախ, թիկունքի կազմակերպման կատարելագործում, ռազմական շինարարություն, կառավարման մարմիններ, մարտունակություն, նյութատեխնիկական ապահովում

Թիկունքը զինված ուժերի բաղկացուցիչ մասն է և ներկայացնում է *գորքերի(ուժերի) թիկունքային ապահովման համար նախանշված կառավարման մարմինների, ուժերի ու միջոցների համակարգ: Թիկունքը լայն առումով՝ պատերազմող երկրի ամբողջ տարածքը (բնակչությամբ ու տնտեսական պաշարներով)՝ առանց ռազմական գործողությունների գոտու, նեղ առումով՝ գորամասերի, ստորաբաժանումների և զինվորական հիմնարկների այն ամբողջությունն է, որը պատերազմի և խաղաղ պայմաններում գորքին ապահովում է նյութական, փոխադրական, տեխնիկական, ճարտարագիտաօդանավակայանային, բժշկական առևտրակենցաղային, ֆինանսական և այլ միջոցներով [1]: Պաշտպանության բանակի թիկունքի հիմնական խնդիրն է ապահովել գորքերի հուսալի, ձկուն, տնտեսապես շահավետ, արագ մատակարարումներն ու անհրաժեշտ ծառայությունների մատուցումը: Ռազմական գրականության մեջ թիկունքային ապահովումը համարվում է մարտական գործողությունների ապահովման այն տեսակը, որը «ներառում է գորքերի նյութական, տրանսպորտային, կենցաղային և այլ պահանջմունքների բավարարմանն ուղղված մարտական պատրաստության վիճակում նրանց պահելու, առաջադրված կամ առօրեական խնդիրները կատարելու համար իրագործվող միջոցառումների համակարգը»[2]:*

Պաշտպանության բանակի թիկունքն իր ուրույն տեղն ու դերն է ունեցել Արցախում ռազմական շինարարության ասպարեզում: Արցախում զինված ուժերի թիկունքի ծառայության առանձնահատկությունն այն էր, որ ստորաբաժանումների նյութատեխնիկական ապահովումը կատարվում էր դաժան շրջափակման պայմաններում, հակառակորդի մշտական նշանոցի տակ: Թիկունքային ծառայության նախակարապետը հանդիսացավ 1989 թ. մարտի 5-ին Ստեփանակերտում հիմնադրված և մինչև 1992 թ. սեպտեմբերը գործած «Ամարաս» հասարակական բարեգործական միությունը[3], որի հիման վրա հետագայում ձևավորվեց ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի թիկունքի ծառայությունը:

ԼՂՀ Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահի 1992 թ. օգոստոսի 14-ի հրամանագրով ՊՇ-ների ստեղծումից հետո վերակառուցվել է նաև թիկունքային ծառայությունը: Ստեղծվել են նյութական ապահովման ստորաբաժանումներ, կենտրոնացվել ու համակարգվել են առանձին գործող հասարակական կազմակերպությունների աշխատանքները: 1992 թ. հոկտեմբերի 10-ի հրամանով ստեղծված ինքնապաշտպանության ուժերի վարչության հաստիքային-կազմակերպական կառուցվածքի մեջ ստեղծվել էր նաև թիկունքը, որը ղեկավարելու էր Ինքնապաշտպանության կոմիտեի

\* Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 16.10-007 գիտական թեմայի շրջանակներում

\*\* Հոդվածն ընդունվել է 25.12.16:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՍՀ պատմության ամբիոնը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

նախագահի՝ թիկունքի գծով տեղակալը[4]:

Համաձայն ԼՂՀ Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահի 1993 թ. օգոստոսի 1-ի հմ. 766 հրամանի՝ կազմավորվել է նյութական ապահովման առանձին գումարտակը՝ տարբեր նշանակության և նյութական միջոցների անխափան առբերումն ապահովելու նպատակով:

Հասկանալով, որ զորքերի կենսագործունեության ու մարտունակության պատշաճ նակարդակ ապահովելու կարևոր երաշխիքներից մեկը հուսալի թիկունք ունենալն է՝ ՊԲ-ում հետևողական աշխատանքներ են տարվել թիկունքի կազմակերպումը կատարելագործելու ուղղությամբ:

Ամեն տարի նորանոր խնդիրներ են դրվում բանակի թիկունքի ծառայությունների առջև, որոնց լուծումը յուրաքանչյուր թիկունքային ծառայող իր բարոյական պարտքն է համարում: Սույն հոդվածում ներկայացված են ՊԲ թիկունքի 2006 թ. ձեռքբերումները, բանակի թիկունքային ծառայությունների կատարած աշխատանքը և առկա նյութատեխնիկական ապահովման վիճակը, հիմք ընդունելով արխիվային նյութերի հավաստի տվյալները:

Թիկունքի ծառայություններին անդրադարձել են Պաշտպանության բանակի պատմության ու զորատեսակների անցած ուղու առանձին հարցեր շոշափած հեղինակները[5], որոնք, սակայն, հպանցիկ են ներկայացրել ընդհանրապես թիկունքային ապահովման և մասնավորապես՝ բանակաշինության գործընթացում կարևոր ձեռքբերումներով աչքի ընկած 2006 թ. խնդրո առարկա ոլորտի առաջնահերթություններն ու գործունեության ծավալները, նամանավանդ՝ խնդիրները:

ՊԲ Ռազմական խորհրդի 2007 թ. ապրիլի 27-ի որոշման մեջ բանակի թիկունքի 2006 թ. վիճակը բնորոշվել է որպես գործնական զգալի ձեռքբերումների և տեսական առաջընթացի ժամանակահատված:

Բանակային թիկունքի առանցքային խնդիրներ հանդիսացող զորքերի նյութատեխնիկական ապահովումը, բանակային և զորային առբերումների իրականացումը, նյութական միջոցների պահպանումը և դրանց սպառման կազմակերպումն իրականացվել են պլանային կարգով, դեկավար փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ օժանդակելով զորքերի մշտական բարձր մարտական պատրաստակունությանը, զինանձնակազմի սննդի և կենցաղի բավարար պայմանների ստեղծմանը: 2006 թ. թիկունքի հիմնական խնդիրներից են եղել զինանձնակազմի սոցիալ-կենցաղային պայմանների բարելավումը, ռազմական տեխնիկայի և սպառազինության շահագործման թիկունքային առումով ապահովումը և անձնակազմի առողջության ամրապնդմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը: Տարվա կարևոր նորամուծություններից հատկանշելի են թիկունքի ստորաբաժանումների մարտական պատրաստակունության հանկարծակի ստուգումները, որոնց ընթացքում հայտնաբերված թերությունների վերացման գործընթացին ցուցաբերվել է մեթոդական և գործնական օժանդակություն:

Ուսումնական գործընթացի ծրագրումն ու իրականացումը նպատակաուղղվել են մարտավարաթիկունքային պատրաստության բարձրացմանը, տեսական և գործնական հմտությունների կատարելագործմանը: Իրականացվել են ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները, անհրաժեշտությունից ելնելով անցկացվել են մի շարք արտապլանային, մասնավորապես՝ անձնակազմի սննդի և կենցաղի բարելավման, նյութատեխնիկական միջոցների պահպանման, հաշիվ-հաշվառման կատարելագործման, վաշտային տնտեսության կայացման հրահանգամեթոդական և ցուցադրական պարապմունքներ: Առաջավոր փորձի փոխանակման արդեն ավանդույթ դարձան

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

պարապմունքները, վաշտերի (մարտկոցների) հրամանատարների հետ անցկացված հավաքների ընթացքում թիկունքային պատրաստությանը հաղորդել են դրական տեղաշարժ:

Թիկունքի բաժնի անմիջական մասնակցությամբ միավորումների և զորամասերի թիկունքի ծառայություններում որակապես նոր ձևով են մշակվել հրամանատարների՝ թիկունքի գծով տեղակայների և թիկունքի ծառայությունների պետերի՝ զորամասը լրահամալրմամբ մարտական պատրաստականության բերելու մասնակի պլանները, մարտական գործողությունների թիկունքային ապահովման կազմակերպման համար անհրաժեշտ հիմնական, օժանդակ և տեղեկատվական, ինչպես նաև ամենօրյա գործունեությունը պլանավորող փաստաթղթերն ու հաշվարկները: Օպերատիվ և մարտավարական օղակներում անցկացված զորավարժությունների արդյունքներն ապացուցել են, որ ՊԲ թիկունքային ծառայություններն ու ստորաբաժանումները գործնականում պատրաստ են բարձր մակարդակով կատարելու իրենց առջև դրված մարտական խնդիրները:

Մարտական և հրամանատարական պատրաստության պարապմունքների արդյունքում զգալիորեն բարձրացել է թիկունքայինների տեսական գիտելիքների և առօրյա գործունեության կազմակերպման գործնական հմտությունների մակարդակը:

Օպերատիվ և մարտավարական օղակներում անցկացված զորավարժությունների համապատկերի վրա նյութաապահովման ստորաբաժանումները ցուցաբերել են բավարար գործնական պատրաստականություն: Ավարտին են հասցվել նյութատեխնիկական միջոցների ծրագրված առբերումները: Հատկացված ֆոնդերը յուրացվել են լրիվ ծավալով:

Տնտեսական գործունեության պլանավորումը և իրականացումը համապատասխանեցվել է ՊՆ 2003 թ. մարտի 19-ի հմ. 164 հրամանի պահանջներին, և առավել առանցքային են համարվել ձմռան նախապատրաստման, կապիտալ շինարարության և կոսմետիկ վերանորոգումների, հակատուրբերկույրոզային և անառային ժամանակաշրջանում բուժկանխարգելիչ միջոցառումների, ՍՌՏ սեզոնային շահագործման փոխադրումների, ինժեներական արգելափակոցների կատարելագործման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքային պլանների կատարումը, մասնավորապես՝ դրանց իրագործման թիկունքային ապահովումը:

Պլանային այս բոլոր միջոցառումներն իրականացվել են անթերի, որի համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման գործընթացը կազմակերպվել է համաձայն գործող բավարարման նորմերի, կատարվել են նաև ՊԲ հրամանատարի և վերադաս պետերի կողմից առաջադրված արտապլանային խնդիրները:

2006 թ. առաջին կիսամյակում ՊԲ վառելիքի ծառայության գործունեությունն ուղղված է եղել վառելիքի հատկացվող չափաքանակների առբերմանը, դրանց բաշխմանը և նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողությանը՝ խնդիր ունենալով ապահովել ուսումնական գործընթացի, մարտական հերթապահության, ինժեներական արգելափակոցների կատարելագործման, բոլոր տեսակի տնտեսական աշխատանքների իրագործման և առբերումների նյութատեխնիկական ապահովման պատրաստականությունը:

2005 թ. և 2006 թ. առաջին կիսամյակում վառելիքի հատկացումները կատարվել են պարբերաբար խախտումներով, սակայն ի հաշիվ բանակային ռեզերվների՝ ենթակա զորամասերն ըստ պահանջարկի ապահովվել են վառելիքաքսուքային նյութերով: 2006 թ. բանակում առկա այդ կարևորագույն նյութական միջոցի անձեռնամխելի պաշարները կազմել են պահանջարկի մոտ 35 %-ը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Կատարվել են հակաօդային պաշտպանության զորամասի մարտական հերթապահություն իրականացնող ստորաբաժանումների 24-ժամյա անընդհատ աշխատանքի համար անհրաժեշտ վառելիքի պաշարների ստեղծման և պահպանման վերաբերյալ հրամանի պահանջները:

Կարգավորվել է ՄՏ-10 հավելանյութի լցավորման գործընթացը, որը վառելիքի տնտեսման հիմնական աղբյուրն է համարվել:

Իրականացված կարևորագույն միջոցառումների շարքում հատկանշելի են ՄՌՏ - շահագործման տարբեր փուլերի փոխադրումները և դրանց ընթացքում անհրաժեշտ քանակությամբ յուղերով և քսուքներով ապահովման նշանակությունը: Այն բարձր մակարդակով կազմակերպելու նպատակով յուրաքանչյուր փուլում միավորումների և զորամասերի ՎՔՆ ծառայությունների պետերի հետ անցկացվել են պարապմունքներ: Սեզոնային փոխադրման համար անհրաժեշտ նյութերը հատկացվել են լրիվությամբ, ծնունդային դիզվառելիքը՝ միայն բարձր լեռնային տեղանքում տեղակայված և հակաօդային պաշտպանության զորամասերին: Նախատեսված մարտական և շարային խմբերի մեքենաների յուղերի փոխարինումն իրականացվել է ՊԲ հրամանատարի կողմից հաստատված ժամանակացույցի, անհրաժեշտ յուղերը լրիվությամբ հատկացվել են:

Տարվա ընթացքում վառելիքի ծառայությունն ապահովել է զորքերի կենսագործունեության համար անհրաժեշտ վառելիքաքսուքային նյութերը, ծրագրված ինժեներական աշխատանքների իրականացումը, ՄՌՏ-ի փոխադրումները սեզոնային շահագործման ռեժիմների և մարտական ու շարային խմբերի մեքենաների յուղերի փոխարինումը, զորամասերն ըստ հաստիքացուցակների, մարտական դիրքերն էլ ըստ անհրաժեշտության համալրվել են ՎՔՆ ծառայության տեխնիկական միջոցներով և գույքով: Ստացվել և զորամասերին են հատկացվել փայտամթերման աշխատանքների, կարտոֆիլի և բանջարեղենի մթերման, կացարանների ջեռուցման համար անհրաժեշտ վառելիքաքսուքային նյութերը:

Ծառայության առավել աչքի զարնող թերությունները մնում էին տեխնիկական միջոցների, վառելիքի փոխադրամիջոցների, պահեստների և լցակայանների ծավալային անբավարարությունն, ավտոտրանսպորտի երկրորդ բաքերի բացակայությունը, տանկերի որոշ մասի մոտ արտաքին բաքերի բացակայությունը և մեծ մասի մոտ դրանց միացման համակարգերի անսարքությունը, որի պատճառով չէին լցավորվում անհրաժեշտ մեկ լիցքի չափով: Ի դեպ, վառելիքի փոխադրամիջոցների անբավարարության հարցն առավել զգալի էր դառնում այն պատճառով, որ զորամասերի բենզատարները շահագործման տրանսպորտային խմբից փոխադրվել էին շարային խումբ, որի պատճառով առբերման ենթակա ՎՔՆ-ի ծավալների փոխադրման համար առաջացել էր մոտոռեսուրսների դիֆիցիտ:

Ջորամասերում իրականացվող ստուգումների վերլուծությունը ցույց է տվել, որ արժանագրված առավել մեծ պակասորդները կազմել են հովացուցիչ հեղուկի կորուստները՝ հին ավտոմեքենաների հովացման համակարգերի հնամաշության պատճառով, իսկ ավտոբենզինի և դիզվառելիքի պակասորդները, հիմնականում, այդ մեքենաների գերծախսի արդյունք են(տես հմ. 1 և հմ. 2 աղյուսակները[6]):

2004-2006 թթ. ՊԲ թիկունքի ծառայությունների նյութատեխնիկական միջոցների պակասորդների գումարային արժեքի վերաբերյալ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Տարիները	Պակասորդների գումարային արժեքը (դրամ)				Վերականգնված գումարները (դրամ)				Ենթակա է վերականգնման (դրամ)			
	ՎՔՆԾ	ՊԾ	ԻԾ	Ընդամենը	ՎՔՆԾ	ՊԾ	ԻԾ	Ընդամենը	ՎՔՆԾ	ՊԾ	ԻԾ	Ընդամենը
2004 թ.	9307437	5463345	8238875	23009657	9232923	5463345	8238875	22935143	74514	-	-	74514
2005 թ.	4837399	7040284	7553149	19430832	4208888	7040284	7504069	18753241	628511	-	49080	677591
2006 թ.	3880162	2075104	2462007	8417273	3954433	2075104	1671405	7700942	74271	-	790602	790602
Ընդամենը	18024998	14578733	18254031	50857762	17396244	14578733	17414349	49389326	628754	-	839682	1542707

Ծանոթություն: ՎՔՆԾ՝ վառելիքաքսուքային նյութերի ծառայություն, ՊԾ՝ պարենային ծառայություն, ԻԾ՝ իրային ծառայություն

Թիկունքի ծառայությունների պակասորդների հայտնաբերման վերաբերյալ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Տարեթիվը	Ծառայությունը	Ում կողմից է հայտնաբերված, դրամ			
		ՀՀ ԹԿ	ՊԲ ԹԾ	Ջորամասերի հանձնաժողովներ	Ընդամենը
2004թ.	ՎՔՆ ծառայություն	5533070	1843942	1930425	9307437
	Պարենային ծառայություն	2030368	1960350	1472627	5463345
	Իրային ծառայություն	995351	5337021	1906503	8238875
	Ընդամենը	8558789	9141313	5309555	23009657
2005թ.	ՎՔՆ ծառայություն	1575710	1254330	2007359	4837399
	Պարենային ծառայություն	2193630	2063584	2783070	7040284
	Իրային ծառայություն	608175	2619799	4325175	7553149
	Ընդամենը	4377515	5937713	9115604	19430832
2006թ.	ՎՔՆ ծառայություն	5120	2209500	1665542	3880162
	Պարենային ծառայություն	1364325	458852	251927	2075104
	Իրային ծառայություն	559095	1344130	558782	2462007
	Ընդամենը	1928540	4012482	2476251	8417273
Ընդամենը բոլոր ծառայություններում		14864844	19091508	16901410	50857762

Ի տարբերություն նախորդ տարիներից՝ ողջ զրահատեխնիկական և մարտական խմբի ավտոտեխնիկական լցավորվել են ձմեռային դիզվառելիքով: Բանակային պաշարների սպառումից հետո թարմացվել են ավտոբենզինի անձեռնմխելի պաշարները համապատասխան տեխնիկաների բաքերում և պահեստներում:

2006 թ. և սնձնակազմի պարենային բավարարման խնդիրներն առանցքային են համարվել և՛ բանակի, և՛ զորամասերի հրամանատարության համար: Անձնակազմի պարենային բավարարումը կազմակերպվել է համաձայն գործող ուղեցույց փաստաթղթերի և բավարարման չափաքանակների:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Պարենային ծառայության հիմնախնդիրներից էին անձնակազմի սննդամթերքով բավարարումը, անհրաժեշտ նյութական միջոցների առբերումը, ստացիոնար ճաշարանների, գումարտակային պարենային կետերի, հացի փռերի անխափան գործունեությունը, ծառայության տեխնիկական միջոցների վերանորոգումը: Բավականին խիստ վերահսկողություն է սահմանվել սննդի որակի, սննդի օբյեկտների նկատմամբ: Բուժծառայության հետ համատեղ ստուգայցների և հանկարծակի ստուգումների արդյունքում գործառնաբերում բարելավվել է ծառայության օբյեկտների սանիտարահիգիենիկ վիճակը:

Պլանավորված ծնունդն նախապատրաստման միջոցառումների կարևորագույն բաղկացուցիչն են ձմեռային մթերումներին պահեստարանների և թթվեցման կետերի նախապատրաստումը և մթերման աշխատանքների իրականացումը: Վերակահավորման աշխատանքներ են կատարվել հիմնականում Արցախի Հանրապետության հյուսիսում տեղակայված գործառնաբերում:

Ստեփանակերտի ու Ասկերանի կայազորների համար Ստեփանակերտի հացի գործարանում կենտրոնացված հացաթխումը նկատելիորեն բարելավել է այդ կարևոր սննդամթերքի որակը և մատակարարումը: 2005 թ. երկրորդ կիսամյակի ընթացքում թիկունքի վարչության կողմից մի շարք գործառնաբերում անցկացված հանկարծակի ստուգումները սննդի կազմակերպման, ճաշարաններում սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման ու շինությունների շահագործման վերաբերյալ բացահայտել են մի շարք թերություններ և խախտումներ, որոնց վերացմանը և գործընթացի կանոնակարգմանն էր վերաբերում պաշտպանության նախարարի 2006 թ. փետրվարի 21-ի հրամանը: Բանակի հրամանատարությունն արձանագրված թերությունների վերացման գործընթացը խթանելու նպատակով անցկացրել է մի շարք համալիր միջոցառումներ, այդ թվում՝ ցուցադրական պարապմունքներ, գործեր ուղարկել առանձին ցուցումներ և հրամաններ: ՊԲ հրամանատարի 2006 թ. մարտի 6-ի հմ. 68 հրամանի պահանջների կատարումը, որտեղ հատկանշված էր բավականին խստապահանջ լինելու անհրաժեշտությունը, բանակի և գործառնաբերի հանձնաժողովների վերահսկողության ուժեղացմամբ զգալի առաջընթաց է նկատվել անձնակազմի պարենային բավարարման հարցերում, ինչպես մշտական տեղակայման վայրերում, այնպես էլ մարտական հերթապահությունում:

«Ձորամասերի ՄՏՎ»-ներում և մարտական հերթապահությունում անձնակազմի սնունդը սահմանված կարգով կազմակերպելու մասին» ՊՆ 2006 թ. փետրվարի 21-ի հմ. 211 և ՊԲ հրամանատարի 2006 թ. մարտի 6-ի հմ. 68 հրամանները լուրջ նախասկիզբ են հանդիսացել մի շարք համալիր միջոցառումների ձեռնարկման, ուսուցման և մշտական վերահսկողության խստացման համար:

Բանակում և գործառնաբերում տեղծված հանձնաժողովները պարտադիր ստուգումներ են իրականացրել մշտական տեղակայման վայրերում, մարտական դիրքերում՝ նպատակ ունենալով բացառել սննդի նորմաների, չափաբաժինների խախտումները, մշտապես պահպանել սանիտարահիգիենիկ կայուն վիճակ, վերահսկել պատրաստի սնունդը տաք և որակյալ վիճակում անձնակազմին հասցնելը:

Վերանորոգվել կամ վերակառուցվել են մի շարք գործառնաբերի պարենային կետերն ու զինվորական ճաշարանները:

Առաջնային գծի համար գործողության մեջ է դրվել նոր պարենային նորմա, որի համաձայն՝ նախատեսված են շուտ պատրաստվող կիսաֆաբրիկատներ առաջին ճաշատեսակի համար, բազմատեսակ մսաբուսական պահածոներ՝ երկրորդ ճաշատեսակի

\* Մշտական տեղակայման վայր

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

համար, կարագը, պանիրը, երշիկը, թխվածքաբլիթը, շաքարավազն անձնակազմին են հասցվել փաթեթավորված վիճակում: Այս ամենը հնարավորություն է տվել սնունդն առանց առանձնակի դժվարությունների պատրաստելու անմիջապես մարտական դիրքերում, որի նպատակով հատկացված են անհրաժեշտ խոհանոցային պարագաներ: Առաջնային զծի բոլոր գումարտակներին հատկացվել են մարտական դիրքերի անձնակազմի կողմից սպառվող սննդամթերքի հաշվառման ամփոփագրեր, ընթացքավորվել է մարտական հերթապահությունում սննդի կազմակերպման կանոնակարգի մշակումը: Ավարտվել է մարտական դիրքերում ջրի չժանգոտվող տարաների տեղադրումը, սկզբնավորվել է սննդամթերքի պահպանման մետաղյա պահարանների հատկացման գործընթացը:

Բավարար են գնահատվել 2006 թ. ձմեռային մթերումների նախապատրաստման և իրականացման աշխատանքները: Ջորամասերում ջրամատակարարման հարցի կարգավորման նպատակով հինգ միավոր ջրատարներ են հատկացվել հյուսիսային ուղղությունում գործող միավորումներից մեկի վարչությանը, կենտրոնական ուղղության բնագծերի ՊՇ-ներին, հրետանային զորամասերից մեկին:

Կենտրոնացված հացաթխում է իրականացվել Ստեփանակերտի և Մարտունիի հացի գործարաններում, որոնք հացով ապահովում էին ՊԲ բոլոր զորամասերը՝ բացառությամբ հյուսիսային ուղղությունում գործող միավորումներից մեկի:

Անձնակազմը, համաձայն գործող նորմերի, լրիվությամբ ապահովվել է հանդերձանքով, իսկ զորամասերը՝ այլանով նախատեսված գույքային և անկողնային պարագաներով: Մի շարք զորամասերի նորակառույց զորանոցներին հատկացվել է նոր իրային գույք: Բանակում առկա բոլոր ներքնակների համար հատկացվել են ծածկաշապիկներ: Բանակի անձնակազմի իրային ապահովման հիմքը հանդիսացել է ծառայության զծով նյութատեխնիկական ապահովումը, դրանց ներկրումն ու բաշխումը, սոցիալ-կենցաղային պայմանների բարելավումը, բաղնիք-լվացքատնային սպասարկումը: 2006 թվականին անձնակազմի հանդերձավորումն իրականացվել է լրիվ ծավալով:

Իրային ծառայության նկատմամբ լիարժեք վերահսկողությամբ զորային տնտեսության բազմաբնույթ խնդիրների հաջող իրականացմանը հասնելու, նյութական միջոցների անօրինական ծախսերն ու կորուստները բացառելու նպատակով տարվել են նպատակապահ աշխատանքներ: Ծառայության կազմակերպման, նյութական միջոցների հաշվառման և դրոշմավորման գործընթացում որակական առաջընթաց ապահովելու նպատակով փորձի փոխանակման պարապմունքի և վաշտերի (մարտկոցների) հրամանատարների հավաքների ընթացքում մասնակիցներին մանրակրկիտ պարզաբանվել են վաշտային տնտեսության վարման, նյութական միջոցների առկայության և շարժի հաշվառման, անձնակազմի տեղաբաշխման, նրա կենցաղային և սանիտարա-հիգիենիկ պահանջներին վերաբերվող դրույթները:

Անձնակազմի բաղնիք-լվացքատնային սպասարկումն իրականացվել է լիարժեք: Ստեփանակերտի և Մարտունիի լվացքատներում կենտրոնացված կարգով կատարվող լվացքի, անձնակազմի հանդերձանքի և անկողնային պարագաների ախտահանման որակը գնահատվել է բավարար: Նոր ախտահանիչ սարքավորում է հատկացվել հրետանային զորամասերից մեկին: Վերանորոգվել են 5-րդ ՊՇ, առանձին ինժեներասակրավորային գումարտակի և շահագործման հանձնվել զենիթաիրթիռատանային զորամասի 3-րդ դիվիզիոնի բաղնիքները: Անձնակազմի բաղնիք-լվացքատնային սպասարկումը լիարժեք է իրականացվել Ստեփանակերտի կայագրի զորամասերում: Կենտրոնացված լվացքատան մատուցող ծառայությունների որակն անհամեմատ բարձրացվել է:



## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Ավարտվել է մարտական դիրքերի սպունգե ներքնակների փոխարինումը, մարտական հերթապահությանը ներգրավված անձնակազմը լրիվությամբ ապահովվել է անհատական քնապարկերով:

Ջորանոցներում գործող կենցաղսպասարկման սենյակները մշտապես համալրվել են անհրաժեշտ գույքով: ՊԲ իրային ծառայության կողմից մշակվել է ստորաբաժանումներում կենցաղսպասարկման սենյակի և պահասսենյակի կահավորման կարգի վերաբերյալ ուսումնական ձեռնարկ, 3-րդ ՊՇ-ում դրանք օրինակելի տարբերակով կահավորվել են, որտեղ և առաջավոր փորձի փոխանակման նպատակով անցկացվել է ցուցադրական պարապմունք:

Ռազմական խորհուրդը նաև հատկանշել է, որ թիկունքի ոլորտում առկա թերությունները միանշանակ ծնվել են ոչ լիարժեք վերահսկողության և հետևողական աշխատանքի, պաշտոնատար անձանց կողմից գործառության պարտականությունները ոչ լրիվ ծավալով կատարելու պատճառով: Թերություններից, մասնավորապես, նշվել են թիկունքի ստորաբաժանումների հրամանատարների աշխատանքային քարտեզների ու անձնական պլանների, մարտական հաշվարկների, ստորաբաժանումների կիրառումը կանոնակարգող կարգադրությունների բացակայությունը, գրեթե բոլոր զորամասերում թիկունքային ստորաբաժանումների տեղաբաշխման շրջանների ինժեներական առումով չկահավորվածությունը: Թույլ է համարվել որոշ զորամասերի նյութապահովման ստորաբաժանումների հրամանատարների՝ ստորաբաժանման խնդիրների իմացությունը: Ջորամասերից մեկում անբավարար է գնահատվել ճաշարանի սանիտարական վիճակը, խախտվել են բավարարման նորմաները և սննդի պատրաստման տեխնոլոգիաները:

2006 թ. ժամանակահատվածում ՊԲ-ում սանիտարահամաճարակային իրավիճակը գնահատվել է բավարար: Վերահսկվել են բոլոր վարակիչ հիվանդությունները, իրականացված մեծածավալ կանխարգելիչ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների արդյունքում վիրուսային հիվանդությունները հասցվել են նվազագույնի, նվազել են տուբերկուլյոզի, մաշկային և նյարդային հիվանդությունների, աղիքային ինֆեկցիաների դեպքերը: Այդ ուղղությամբ բուժօժանդության և թիկունքի ծառայությունների անմիջական վերահսկողության ներքո զորամասերի հրամանատարության կողմից տարվել է մեծ աշխատանք:

ՊԲ բուժօժանդության կողմից վերահսկողության տակ են վերցվել բոլոր աղբյուրները, պարբերաբար ստուգվել է ջրի որակը ինչպես շրջանային, այնպես էլ հանրապետական սանիտարահակահամաճարակային կայաններում(ՍՀԿ):

Շնորհիվ թիկունքային և բուժօժանդությունների համատեղ աշխատանքի, անձնական հիգիենայի կանոնների պահպանման վերահսկման ճիշտ կազմակերպման, հուսալիտակներում և զորամասերում դեզինֆեկցիոն և առաջնային գծում շրջանային ՍՀԿ-ների հետ դեզինսեկցիոն աշխատանքների հստակ իրականացման՝ զգալի նվազել են մաշկային հիվանդությունների, այդ թվում՝ ոջլոտության դեպքերը:

Ջորամասերի մշտական տեղակայման վայրերում և առաջնային գծում ՊՆ սանիտարական ծառայության և քաղաքացիական շրջանային ՍՀԿ-ների հետ համատեղ դեզինսեկցիոն և դեռատիզացիոն աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ մեծ աշխատանք է տարվել: Հաջող համագործակցությունը շարունակելու համար շրջանային ՍՀԿ-ների հետ կնքվել են զորամասերում դեզինֆեկցիոն, դեզինսեկցիոն և դեռատիզացիոն աշխատանքներ, ջրի և սննդամթերքի անալիզներ, սննդի բլոկի աշխատողների կանխարգելիչ հետազոտություններ կատարելու վերաբերյալ նոր պայմանագրեր:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Հաշվի առնելով առաջնային գծում դեզինֆեկցիոն-դեզինսեկցիոն աշխատանքների իրականացման դժվարությունները՝ անհրաժեշտ են համարվել ռազմաբժշկական վարչության կողմից այդ նպատակով չոր կամ ակրոզոլ դեզինսեկտանտների ձեռքբերումը և օգտագործումը, ինչպես նաև ստացիոնար ճաշարաններում, հացի փոշերում, պահեստներում, աղբահորերում և դրանց հարակից տարածքներում ճանձերի և կրծողների դեմ պայքարի արդյունավետ նյութեր հատկացնելը:

Ձորանոցներում ավելորդ խոնավությունից և փոշուց անձնակազմին զերծ պահելու նպատակով, որոնք, ի դեպ, տուբերկուլյոզի առաջացման պատճառներից են, նպատակահարմար է համարվել փոշեկուլյուների օգտագործումը, ինչը հնարավորություն կտա փոշեզերծել նաև անկողնային պարագաները:

Պլանային և հանկարծակի ստուգումների ընթացքում հայտնաբերված թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ ցուցաբերվել է մեթոդական և գործնական օգնություն, որի արդյունքում գործնասերի սանիտարահամաձարակային իրավիճակը զգալիորեն բարելավվել է:

Հոսպիտալներում ստացիոնար բուժում են ստացել 2349 զինծառայող: Կատարվել են 115 վիրահատություններ, որոնցից 34-ը՝ անհետաձգելի ցուցումներով[7]:

Շարունակվել են ՊԲ անձնակազմի պլանային ֆյուրորգրաֆիկ, սպաների և ենթասպաների դիսպանսեր հետազոտությունները: Հիվանդների վաղ հայտնաբերման նպատակով մարտական հերթափոխից առաջ հոսպիտալների կողմից իրականացվել են անձնակազմի ստուգումներ:

Ուզանական խորհուրդը նշել է, որ թեև, ընդհանուր առմամբ, ՊԲ-ում սանիտարահամաձարակային վիճակի բարելավման ուղղությամբ նկատելի աշխատանքներ են կատարվել, բայց դեռևս չեն վերացվել բոլոր թերություններն ու բացթողումները: Դրանցից փաստաթղթում նշվել են աղիքային, ՍՇՀ-ների, ջրծաղկի և այլ վարակիչ հիվանդությունների բռնկման դեպքերը: Պատասխանատուների ուշադրությունն է հրավիրվել այն հանգամանքին, որ բաց է մնցել ջրծաղկի դեմ պատվաստանյութի ձեռքբերման հարցը: Անցած ժամանակահատվածում արձանագրվել է ջրծաղկի 1198 դեպք, տվյալ պահին հոսպիտալներում բուժում էին ստանում ջրծաղկիկով հիվանդ 12 զինծառայողներ: Տազնապահարույց էր թռքաբորբի ավելացումը, որը ծագում էր զանգվածայնորեն՝ յուրաքանչյուր զորակոչից հետո. 2006 թ. ընթացքում արձանագրվել է 284-ից ավելի դեպք[8]:

Այլ թերությունների շարքում նշվել են ոջլոտության դեպքերը հատկապես բարձրլեռնային ու անտառային տեղանքներում մարտական հերթապահություն տանող զորամասերում, ջրի բացակայության պատճառով ճաշարանի, զորանոցների սանիտարական անհրաժեշտ վիճակի, վերակարգի անձնական հիգիենայի չպահպանումը, ճաշարանից վերցված լվացուկներում հայտնաբերված աղիքային ցուպիկի աճը, զորանոցներում զինծառայողների բնակեցման բարձր խտությունը, ինչը հանգեցրել է համաձարակների արագ տարածմանը, սանիտարական օրերի կազմակերպմանը հրամանատարության և բուժճառայության կողմից անհրաժեշտ ուշադրության, սանիտարական օրվա պլանի բացակայությունը:

2006 թ. բժիշկ-մասնագետների զորակոչը, ընտրությունը, բաշխումը, երբեմն էլ տեղափոխությունները կատարվել են առանց ՊԲ բուժճառայությանը տեղյակ պահելու և մասնագետների կարծիքն իմանալու, ինչի հետևանքով նրանց քանակական և որակական կազմն անբավարար էր: Այսպես՝ աշնանային զորակոչի 23 բժիշկներից 8-ն ա-

\* Սուր շնչառական հիվանդություն

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

տամնաբույժ էր, 1-ը՝ մերսող, 1-ը՝ վիճակագիր, 1-ը՝ սպորտային բժիշկ:

Բժշկական սարքավորումներով և ունեցվածքով ապահովման զգալի տեղաշարժ չի արձանագրվել, ցածր է եղել դեղորայքով, բիոքիմիական և կլինիկական լաբորատորիաների ռեակտիվներով ապահովման մակարդակը:

Չորքերի նյութատեխնիկական ապահովումը, բանակային և գորային առքերուների իրականացումը, նյութական միջոցների պահպանումը, զինանձնակազմի սննդի ու կենցաղի բավարար պայմանները հաջող կազմակերպելու, զինծառայողների առողջական վիճակը պահպանելու, զորքերի մշտական բարձր մարտական պատրաստականությանը օժանդակելու և բարեխիղճ ծառայության համար ՊԲ Ռազմական խորհրդի որոշմամբ մի խումբ զինծառայողներ արժանացել են պարգևների:

Այսպիսով՝ 2006 թ. ՊԲ թիկունքային ծառայություններն իրականացրել են մեծածավալ աշխատանքներ անձակազմի համակողմանի ապահովման, մարտական խնդիրների և մարտական պատրաստության գործընթացի կազմակերպման համար նյութատեխնիկական միջոցների մատակարարման, թիկունքայինների տեսական գիտելիքների ու գործնական հմտությունների կատարելագործման ուղղությամբ՝ այդպիսով իրենց նպաստը բերելով բանակի մարտունակության և մեր հանրապետության պաշտպանունակության բարձրացմանը:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարությունյան Մ., Թիկունք: Տես Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ. Հանրագիտարան մեկ հատորով, Եր., 2004, էջ 209:
2. Военный энциклопедический словарь, М., 2002, стр. 1302:
3. Հարությունյան Մ., «Ամարաս»: Տես Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ. Հանրագիտարան մեկ հատորով, էջ 57:
4. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության արխիվ(այսուհետև՝ ԱՀ ՊՆԱ), Приказы ПКСО, дело N 4. Нач. 01.01.1993 г.-оконч. 30.12.1993 г., 99 л., Գույքահամար 9: (Инв. N 15/2-9), հրաման հմ. 01, թ. 175-185:
5. Հասրաթյան Ա., ՊԲ զորատեսակները, ծառայությունները և առանձին ստորաբաժանումները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստ., 2010, էջ 170-178: Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը(համառոտ ուրվագիծ), Եր., 2012, էջ 103:
6. «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆոնդ հմ. 222(ՊԲ թիկունքը), գործ հմ. 5 (ելույթներ, զեկուցումներ, հաշվետվություններ). «Պաշտպանության բանակի թիկունքային ապահովման վիճակն ու բարելավման ուղիները», ՊԲ հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալ, գնդապետ Ա. Ղահրամանյանի զեկույցը, թ. 6:
7. «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆոնդ հմ. 222(ՊԲ թիկունքը), գործ հմ. 1. Պաշտպանության բանակի Ռազմական խորհրդի որոշում (27.04.2007թ.), թ. 3:
8. Նույն տեղում, թ. 4:

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**  
**Մի էջ պաշտպանության բանակի թիկունքի**  
**2006 թ. գործունեության տարեգրությունից**  
**Միեր Հարությունյան**

Թիկունքը զինված ուժերի բաղկացուցիչ մասն է և ներկայացնում է զորքերի(ուժերի) թիկունքային ապահովման համար նախանշված կառավարման մարմինների, ուժերի ու միջոցների համակարգ: Պաշտպանության բանակի թիկունքն իր ուրույն տեղն ու դերն է ունեցել Արցախում ռազմական շինարարության ասպարեզում: Ջորքերի կենսագործունեության ու մարտունակության պատշաճ մակարդակն ապահովելու համար ՊԲ-ում հետևողական աշխատանքներ են տարվել թիկունքի կազմակերպումը կատարելագործելու ուղղությամբ:

Ամեն տարի բանակի թիկունքի ծառայությունները նորանոր խնդիրներ են լուծում, ինչը յուրաքանչյուր թիկունքային ծառայող իր բարոյական պարտքն է համարում: Սույն հոդվածում, հիմք ընդունելով արխիվային նյութերի հավաստի տվյալները, ներկայացված են ՊԲ թիկունքի 2006 թ. ձեռքբերումները, բանակի թիկունքային ծառայությունների կատարած աշխատանքը և նյութատեխնիկական ապահովման վիճակը:

**РЕЗЮМЕ**

**Страница из летописи деятельности тыла Армии обороны в 2006 г.**  
**Мгер Арутюнян**

***Ключевые слова:** тыл, Армия обороны, Арцах, усовершенствование организации тыла, военное строительство, органов управления, боеготовность, материально-техническое обеспечение*

Тыл является составной частью ВС и представляет систему органов управления, сил и средств, предназначенных для тылового обеспечения сил войск. Тыл АО НКР имел свое особое место и роль в сфере военного строительства. Для надежного обеспечения достойного уровня жизнедеятельности и боеготовности войск в АО велись последовательные работы по усовершенствованию организации тыла.

Каждый год службы тыла армии выполняют новые и новые задачи, решение коих каждый военнослужащий тыла считает своим моральным долгом. В данной статье на основе достоверных сведений архивных материалов представлены достижения тыла АО 2006 г., выполненные работы тыловых служб армии и состояние материально-технического обеспечения.

**SUMMARY**

**A Page from the Chronology of the Defense Army Rear Work in 2006  
Mher Harutyunyan,**

**Keywords:** *rear, Defense Army, Artsakh, improving the rear organization, the military building, a system of management, fighting ability, material-technical provision*

The rear is the constituent part of any armed forces and it is actually a system of management bodies, forces and means envisaged for providing the rear.

Defense Army Rear has had its special part and role in the military building sphere of Artsakh. The NKR Army has consistently worked on improving the rear organization and spared no efforts for securing the proper level of the army's effective functioning and fighting ability.

Annually the services of the army's rear solve many tasks and every officer or professional worker of the rear considers it to be his debt of honor.

In the given article we base on authentic archival facts and represent the achievements of the NKR Defense Army Rear in 2006, the work done by the army's rear department and the state of material-technical provision.

**1991Թ. ՀՀ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ  
ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ\***

**Նժդեհ Հոկտեմբեր**

**Բանալի բառեր՝** նախագահական ընտրություններ, Հայաստանի երրորդ հանրապետություն, հետխորհրդային տրանսֆորմացիա, ԽՍՀՄ փլուզում, քաղաքական կուսակցություններ:

**ՆԱԽԱՐԱՆ**

1991թ. անկախության ձեռք բերմանը զուգահեռ՝ բազմակուսակցական համակարգի հաստատման կարևորագույն քայլը Հայաստանում իշխանության ձևավորումն էր ժողովրդավարական ճանապարհով: Ժողովրդավարության հաստատման ճանապարհին, բնականորեն, բազմակուսակցական համակարգի զարգացման հաջորդ արարը գործադիր և օրենսդիր իշխանությունների տարանջատումն էր: Անկախության շրջանի հայաստանյան քաղաքական ընտրախավը հարցի լուծումը տեսավ Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնի ներմուծման ճանապարհով: Հարկ է արժանագրել, որ նախագահական պաշտոնի համար ներհայաստանյան մրցավազքն իսկապես համահունչ էր բազմակուսակցականության սկզբունքներին: Երբ հաշվի ենք առնում, որ երկրում այլևս գործունեություն էին ծավալում տասնյակ կուսակցություններ, որոնցից յուրաքանչյուրն էլ ուներ իր ընդգծված քարիզմատիկ առաջնորդը, պարզ է դառնում, թե որքան բազմերանգ էր քաղաքական պայքարը: Բնականաբար, միջկուսակցական հարաբերությունների հստակեցման ու նոր հարաբերակցության հաստատման համար թերևս անհնար էր ավելի համապատասխան առիթ փնտրել, քան Հայաստանի առաջին նախագահական ընտրություններն էին:

Ըստ էության, բազմակուսակցական համակարգի շրջանակներում միջկուսակցական հարաբերությունների ճշգրտման հրաշալի հարթակ դարձան նույն տարվա հոկտեմբերի 16-ին կայացած նախագահական ընտրությունները: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991թ. հունիսի 25-ին որոշում էր կայացրել հիմնելու նախագահի պաշտոն, որի համար ընտրությունը պիտի կայանար մինչև 1991թ. դեկտեմբերի 31-ը՝ ՀՀ քաղաքացիների ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ:[1] Նախագահի պաշտոնի ստեղծումը բխեցվում էր անկախության հռչակագրի ըմբռնումից, ըստ որի՝ իշխանության կազմակերպման հիմքում պետք է դրվեր դրա տարանջատման սկզբունքը:[2] Վերջապես, խնդիրն առնչվում էր նաև երկրում ձգնաժամային կառավարման իրավիճակին, որից բխում էր պաշտոնի պահպանումն ու ուժեղացումը:[3] Բազմակուսակցական համակարգի պայմաններում հայ ժողովուրդն իր ողջ պատմության ընթացքում առաջին անգամ ուղղակի ընտրության միջոցով ընտրում էր հանրապետության նախագահ: Իրենց աննախադեպությամբ հանդերձ՝ նախագահական ընտրություններն ընդգծվում էին մեկ այլ հատկանշական հանգամանքով: Դրանց մասնակցում էին քաղաքական կողմնորոշումներ ներկայացնող քաղաքական կուսակցությունները՝ իրենց կողմից առաջադրած թեկնածուներով: Եթե Առաջին հանրապետության, ապա և ՀԽՍՀ-ում երկրի ղեկավարությունն իրականացվում էր խորհրդարանական կառավարման եղանակով,

\* Հոդվածն ընդունվել է 05.02.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Է.Մինասյանը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

արդեն 1991թ., նախկին խորհրդային հանրապետությունների օրինակով, հիմք էր դրվում կառավարման նոր համակարգի, որտեղ իրենց դիրքը հստակեցնելու համար պիտի պայքարի դուրս գային տարբեր զաղափարական հենք և համոզմունքներ ունեցող կուսակցություններ։[4] Օրինաչափորեն թե ոչ, խորհրդային «համայնավարության ու զանգվածների ամենակարողության» մասին կարգակոչերից հիասթափված հայ ժողովուրդն ու նրա նորահայտ քաղաքական ընտրանին պիտի հայացք ձգեին դեպի կառավարման ու քաղաքական համակարգի ձևավորման հակառակ կերպին։ Ի վերջո, 1990-91թթ. հանրապետությունում դասական իմաստով ոչ նախագահական, ոչ էլ խորհրդարանական կառավարում էր, ինչը շփոթությունների և մասնավորապես՝ պատասխանատվության տարորոշման լուրջ տեղիք էր տալիս։ Եվ հենց թրծված կուսակցությունների բացակայությունն էլ ընտրախափ մեծամասնությանը հակում էր նախագահական համակարգի կողմը։[5]

### ՄԻԶԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ

Ըստ էության, նախագահի պաշտոնի հիմնական հավակնորդները ելնում էին իրենց կուսակցությունների քաղաքական կշիռը ու տիրակալյաժ դիրքերից։ Տասնամյակներով երկրի քաղաքական մենաշնորհին տիրապետող Կոմունիստական կուսակցությանը լուրջ մարտահրավեր նետած, խորհրդարանում զգալի տեղեր նվաճած և Հանրապետության ղեկավարությունը ստանձնած Հայոց համազգային շարժումը նախագահական ընտրություններում առաջադրեց ՊԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը։ Որպես փոխնախագահի թեկնածու՝ Տեր-Պետրոսյանի հետ պիտի քվեարկվեր ՊԽ նախագահի տեղակալ, նախկինում ՀԿԿ կենտկոմի սոցիալ-տնտեսական բաժնի վարիչ, ԿԿ նախկին առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի առաջին օգնական Գագիկ Հարությունյանը։[6] Շեշտելի է, որ Տեր-Պետրոսյանը հանդես էր գալիս թե՛ համաժողովրդական շարժումն առաջնորդող կուսակցության, թե՛ իր անձնական՝ երկրի ներսում և արտերկրում վայելած բարձր հեղինակության դիրքերից։[7] Եվ սա, անշուշտ բնական էր, քանզի նա, լինելով «Ղարաբաղ» կոմիտեի առանցքային անդամներից մեկը, արդեն ավելի քան մեկ տարի էր, ինչ զբաղեցնում էր հանրապետության առաջին դեմքի կարգավիճակը։[8] Ուշագրավ է, որ ՀՀԸ-ի ներկայացուցիչը լինելով հանդերձ՝ Տեր-Պետրոսյանի հաջողության գրավականը զգալիորեն կապված էր ժողովրդի մեջ նրա անձի ընկալումից։ Վերջապես, մեկ տարվա ընթացքում Տեր-Պետրոսյանը հաստատուն կապեր էր ստեղծել թե՛ Խորհրդային միության հանրապետությունների ղեկավար շրջանակների, թե՛ արևմտյան երկրների քաղաքական վերնախավի ներկայացուցիչների հետ։[9]

Այս համատեքստում լիովին օրինաչափ էր Տեր-Պետրոսյանի՝ ընտրություններում հաղթողի ամենաիրական հավակնորդը լինելու պարագան։ Ընտրություններին Տեր-Պետրոսյանը մասնակցեց որպես իշխանության ներկայացուցիչ և նրա օգտին կատարված քվեարկությունը, ինչ-որ իմաստով, նաև գնահատական էր փաստացի մեկամյա անկախությանը։ Լևոն Տեր-Պետրոսյանին համարելով համազգային թեկնածու՝ նրան սատարելու կոչով հանդես եկավ նաև սփյուռքի հայ ավանդական քաղաքական կազմակերպություններից Ռամկավար ազատական կուսակցությունը՝ ընդգծելով, որ թեև սփյուռքահայությունը չի կարող մասնակցել քվեարկությանը, սակայն կուսկացությունն արտահայտում է «սփյուռքահայ զանգվածների զգացումները»՝ Լևոն Տեր-Պետրոսյանին թիկունք կանգնելով։[10] Նկատելի է, որ ՀՀԸ-ի թեկնածուին ավելի վաղ պաշտպանեց նաև Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունը։ 1991թ. սեպտեմբեր-

րի 9-ին ՀՈԱԿ հանրապետական վարչության համապատասխան որոշմամբ՝ կուսակցությունն իր կողմից հանրապետության նախագահի թեկնածու էր առաջադրում Լևոն Տեր-Պետրոսյանին: [11]

Արձանագրելի է, որ Լևոն Տեր-Պետրոսյանն ու Պապիկ Հարությունյանը նախընտրական քարոզարշավ, որպես այդպիսին, չվարեցին: ՀՀ-ի երկուսուկես տարվա գործունեությունն ինքնին խոսում էր ընտրություններում այս քաղաքական ուժի գաղափարների ու հայացքների փոխարեն: Այդ հանգամանքով էլ պայմանավորված՝ Տեր-Պետրոսյանը հասարակության դատին չներկայացրեց իր նախընտրական ծրագիրը: Ըստ նրա՝ իր օգտին քվեարկելիս ընտրողներն առաջնորդվել են ոչ թե խոստումների ու գեղեցիկ ծրագրերի առկայությամբ, այլ արդեն իսկ կատարվածի գիտակցությամբ: [12] Խուսափելով մյուս թեկնածուների հետ բանավեճի մեջ մտնելուց և նախընտրելով զսպվածությունը՝ նա չներքաշվեց հակարշավի մեջ: [13]

Հարկ է հավելել, որ նախագահական ընտրություններին ինքնառաջադրվել էր նաև Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը, որի փոխնախագահի թեկնածուն Պետ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ղափիս Վարդանյանն էր: Հատկանշական է, որ քաղաքական կապիտալի և նախագահական ընտրարշավի հաջողության ապահովմանն էր միտված Մանուկյանի և Վարդանյանի համատեղ ջանքերով ՀՀ-ից անջատ նոր ուժի՝ Ազգային ժողովրդավարական միության ստեղծումը: Հետագայում՝ 1990-ական թթ., ԱԺՄ-ն դարձավ հայաստանյան քաղաքական ամենաազդեցիկ կուսակցություններից մեկը: Ի հեճուկս 1996թ. նախագահական ընտրություններում ՀՀ-ին լրջագույնս նետված մարտահրավերի՝ կուսակցությունն այնուհետ բռնեց անկման ուղին՝ 2001թթ. դաժան պառակտման ենթարկվելով: Ինչևէ, 1991թ. սեպտեմբերի 26-ին Վ. Մանուկյանը Պետրոսյան խորհրդին ներկայացրեց իր հրաժարականը վարչապետի պաշտոնից՝ միաժամանակ նահանջելով նախագահական ընտրություններում քվեարկվելուց: Մանուկյանն իր հրաժարումը բացատրում էր քաղաքական պայքարը չթեժացնելու և Հայաստանում քառսային վիճակ չստեղծելու մտահոգությունից ելնելով: [14]

Հանրապետությունում քաղաքական զգալի կշիռ ունեցող կուսակցություններից մյուսը՝ Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ), նորանկախ Հայաստանի առաջին նախագահական ընտրություններում առաջադրել էր կուսակցության նախագահ Պարույր Հայրիկյանի թեկնածությունը: Հայրիկյանը, լինելով խորհրդային շրջանի ամենահայտնի այլախոհներից մեկը, մեծագույն համբավ էր ձեռք բերել ամբողջատիրական համակարգի դեմ իր բազմամյա պայքարով: Նա ընդհանուր առմամբ 17 տարի էր անցկացրել խորհրդային բանտերում՝ հետամուտ լինելով Հայաստանի անկախության գաղափարի իրականացմանը: [15] Պ. Հայրիկյանն ուներ կուսակցական-կազմակերպչական աշխատանքի զգալի փորձ՝ 1967 թվականից մասնակիցը լինելով Ազգային միացյալ կուսակցության կազմավորմանը, ինչպես նաև արդեն 1987թ. հիմնելով ԱԻՄ-ը: [16] Խորհրդային իշխանությունների հարուցած զանազան խոչընդոտները Հայրիկյանին տևական ժամանակ զրկել էին հայրենիքում գործելու իրավունքից, և միայն հանրապետությունում ժողովրդավարական կարգերի ներմուծումը հնարավոր դարձրեց նրա վերադարձը: Հարկ է ավելացնել, որ Պարույր Հայրիկյանը նշյալ պատմափոխում ՀՀ վարչության անդամ էր լինելով ԱԻՄ նախագահ: ՀՀ-ի կազմում իր լինելը նա բացատրում էր ԱԻՄ-ի չկայացավածությամբ և ՀՀ-ի՝ ԱԻՄ-ացման հավանականությամբ: Նա հակված էր կարծելու, որ ՀՀ-ի ճիշտ զարգացման ուղին պիտի անցներ «Ղարաբաղ» կոմիտեից ձերբազատվելով ու ԱԻՄ-ի պես «ազգային-քաղաքական



## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

լուրջ կազմակերպություն» դառնալով: [17] Թերևս ՀՀ-ի հետ առաջանալու բոլորատեսակ հնարավորությունների վերջնական խորտակումից հետո Հայրիկյանը նախընտրեց կենտրոնանալ սեփական քաղաքական ուժի կայացման գործի վրա՝ դրա ճանապարհներից մեկն էլ համարելով Հանրապետության նախագահի ընտրություններին մասնակցելը:

Պարույր Հայրիկյանը նախագահական առաջին ընտրությանը որպես թեկնածու առաջադրվեց ԱԽՄ-ի նախագահի կարգավիճակով, իսկ ահա փոխնախագահի համար իր հետ քվեարկության ներկայացրեց Հայաստանի քրիստոնեա-ժողովրդավարական միության նախագահ Ազատ Արշակյանին: [18] Սեպտեմբերի 27-ից մեկնարկած նախընտրական ամբողջ քարոզարշավում Հայրիկյանը քննադատում էր ՀՀ-ին ու իշխանության թեկնածուներին՝ շեշտելով հատկապես անկախության հասնելու գործում վերջիններիս թույլ տված վրիպումները: Նրա կարծիքով՝ նախագահական ընտրություններն էին լինելու այն վճռորոշ կետը, որից պիտի մեկնարկեր անկախության ամրապնդման գործը: [19] Անտարակույս, նա իրեն էր տեսնում այդ գործը հավուր պատշաճի կազմակերպելու ունակ միակ գործչի դերում՝ որպես «անկախության առաջնորդի»: [20]

Նախագահի ընտրությանն իր մասնակցությունը բերեց նաև հայ ավանդական կուսակցություններից Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ): Վերջինս Առաջին հանրապետության անկումից հետո հարկադրաբար լքել էր Հայաստանը և իր գործունեությունը ծավալում էր սփյուռքահայ գաղթօջախներում: 1988թ. մեկնարկած Արցախյան շարժման անմիջականորեն մասնակից չլինելով՝ ՀՅԴ-ն հայաստանյան իրողություններին հարմարվելու խնդիրը սկսեց լուծել արդեն 1990թ. օգոստոսից, երբ կուսակցությունը հայտարարեց հայրենիքում իր կազմակերպական ներկայությունն ապահովելու մտադրության մասին: ՀՅԴ-ն ստեղծեց իր Կենտրոնական կոմիտեն, հիմնեց պաշտոնաթերթն ու մամուլ կենտրոնը: [21]

Ներքաղաքական պայքարում ՀՅԴ-ն պարտավոր էր, իր ինքնուրույնությունն ի ցույց դնելով՝ մասնակցել բազմակուսակցական համակարգի հաստատումից ի վեր առաջին համաժողովրդական ընտրությանը: Հ.Յ. Դաշնակցության Բյուրոյի և Հայաստանի Կենտրոնական կոմիտեի 1991թ. օգոստոսի 21-ին կայացած համատեղ նիստում որոշվեց «Հայ հեղափոխական դաշնակցություն» հասարակական-քաղաքական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրել սիրված դերասան, «Հայ ազգային միություն» հասարակական կազմակերպության նախագահ Սոս Սարգսյանին: [22] Ընդգծելի է, որ կուսակցությունը, դեմ լինելով կառավարման նախագահական համակարգին, այդուհանդերձ, մասնակցեց նախագահի ընտրությանը՝ գիտակցելով դրանց կարևորությունը հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի զարգացման համատեքստում: Նախագահական պաշտոնական ընտրարշավի ժամանակահատվածի մոտենալուն զուգահեռ նաև հայտարարեց փոխնախագահի իր թեկնածուին՝ ՀՅԴ Կենտրոնական կոմիտեի անդամ Վահան Հովհաննիսյանին: Միննույն ժամանակ նախագահ ընտրվելու ոչ այնքան բարձր հնարավորությունները հաշվի առնելով՝ ՀՅԴ-ի թեկնածուն գործընթացին ներգրավվեց ժողովրդավարության ամրապնդման միտվածությամբ՝ մեկ թեկնածուի ընտրապայքարում միայնակ չթողնելու շահագրգռվածությամբ: [23] Նկատենք, որ Ա.Սարգսյանն ու ՀՅԴ մյուս ներկայացուցիչները Հայաստանի մարզերում ընտրողների հետ ունեցած հանդիպումների ընթացքում պարզաբանում էին կուսակցական սկզբունքները, իդեալները, դիրքորոշումն ու քաղաքական ծրագրերը: Այդ շարքում առանցքային տեղ էր զբաղեցնում իշխանության և մասնավորապես՝ ՀՀ-ի հետ ունե-

**ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

ցած գաղափարական հակադրությունը, մասնավորապես՝ քաղաքական տեսլականը անկախության հիմնախնդրի, Արցախի հարցի, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ոլորաններում: [24]

Նախագահական ընտրություններին մասնակցեց նաև Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ)՝ որպես թեկնածու առաջադրելով կուսակցության առաջնորդ Աշոտ Նավասարդյանին: ՀՀԿ-ի նախագահական թեկնածուի հետ որպես փոխնախագահ առաջադրվեց Սահմանադրական իրավունք միության (ՄԻՄ) նախագահ Հրանտ Խաչատրյանը: [25] Նավասարդյանի ու Խաչատրյանի քաղաքական ծրագրերը առնչվում էին «ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի» կերտման գաղափարին՝ ընդգծելով ՀՀԸ-ի թեկնածուի հետ իրենց ունեցած գաղափարական անհամաձայնությունները: Ավելացնենք, որ նախագահական ընտրություններին մասնակցեցին նաև ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Ջորի Բալայանը (փոխնախագահության թեկնածու՝ Հարություն Մարգարյան) և «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Ռաֆայել Ղազարյանը (փոխնախագահության թեկնածու՝ Սուրեն Ջոյան): [26] Հետաքրքիր է, որ Ռ. Ղազարյանն ու Ս. Ջոյանը հետագայում ձևավորեցին Հայաստանի գիտաարդյունաբերական և քաղաքացիական միությունը՝ մասնակցելով 1995 և 1999 թթ. խորհրդարանական ընտրություններին:

Բազմակուսակցական համակարգի ներդրումից հետո առաջին համաժողովրդական ընտրություններում նախընտրական պայքարը ընթանում էր լուրջ մեկ ուղղությամբ: Ընդդիմադիր կուսակցությունները քննադատում էին Գև նախագահի ու նրան սատարող կուսակցության քաղաքական գիծը՝ առավելապես կենտրոնացնելով իրենց ուշադրությունը հանրապետության սոցիալ-տնտեսական դժվարին իրավիճակի, հայ-թուրքական հարաբերությունների զարգացման և Արցախի հարցում ունեցած դիրքորոշման հիմնահարցերի վրա:

Հարկավ, ՀՀԸ-ի ներկայացուցիչների և մյուս կուսակցությունների ներկայացրած թեկնածուների միջև քաղաքական ռեսուրսների հարաբերակցությունը նույնպիսին չէր: Տեր-Պետրոսյան-Հարությունյան զույգը հանդես էր գալիս իշխանության կարգավիճակով՝ դրանից բխող դրական և բացասական հետևանքներով: Եթե նրանք ունեին քաղաքական հսկայական բազա և երկուսուկես տարվա համար ու հաջողությամբ պսակված քաղաքական պայքարի փորձ, ապա մյուս թեկնածուները հասկանալիորեն չունեին հանրային նույնանման ներկայացվածություն կամ ձանաչվածություն: Ուստի իշխանության թեկնածուի՝ նախընտրական քարոզչություն չիրականացնելու որոշումը կարող էր և հնարավորություն հանդիսանալ նախագահության մյուս հավակնորդների համար՝ ազատորեն և անկաշկանդ կերպով հաղորդակցվելու ընտրողների հետ՝ ելնելով հավասար մրցակցության սկզբունքից:

1991թ. հոկտեմբերի 16-ին կայացան նախագահական առաջին ընտրությունները, որոնց մասնակցեց ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ավելի քան 72 տոկոսը: Հայաստանի առաջին նախագահ ընտրվեց ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը՝ ստանալով քվեարկողների ավելի քան 83 տոկոսի աջակցությունը, իսկ ՀՀ փոխնախագահ դարձավ Գագիկ Հարությունյանը: [27] ՀՀԸ-ի թեկնածուին կողմ էր քվեարկել 1.260.433 քաղաքացի, դեմ՝ 209.417: Երկրորդ տեղում հայտնվեց ԱԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանը՝ 7.2 տոկոս կամ 109.438 կողմ և 1.360.412 դեմ ձայներով: Հայ հեղափոխական դաշնակցության թեկնածու Սոս Սարգսյանը ստացավ 4,33 տոկոսի աջակցությունը՝ 65.757 կողմ և 1.404.093 դեմ: Ջորի Բալայանը ստացավ 0,45 տոկոս ձայն (կողմ՝ 6.899, դեմ՝ 1.462.951), Ռա-

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

Ֆայել Ղազարյանը՝ 0,39 (կողմ՝ 5.941, դեմ՝ 1.463.909), իսկ ՀՀԿ-ի նախագահ Աշոտ Նավասարդյանը՝ 0,16 (կողմ՝ 2.467, դեմ՝ 1.467.383): [28] Նախագահի բազմակուսակցական ընտրությանը հաջորդեց արդեն Գև նախագահի նույնանման, բայց մի քանի փոփոխությամբ կայացած ընտրությունը, որին մասնակցում էին ՀՅԴ-ից՝ Մելիսյա Գաբրիելյանը, ԱժՄ-ից՝ Ղազարյանյանը, ԱԻՄ-ից՝ Պարույր Հայրիկյանը, ՀՀԸ-ից՝ Գև նախագահի տեղակալ Բաբկեն Արարքյանը: Վերջինիս էլ վիճակված էր դառնալու վերջին Գերագույն խորհրդի վերջին նախագահը:

Ելնելով նախագահական ընտրությունների արդյունքներից՝ եզրակացնելի է, որ սովյալ ժամանակափուլում հանրապետության քաղաքական ասպարեզի առաջատար ուժը ՀՀԸ-ն էր, որին իրենց կշռով հաջորդում էին ԱԻՄ-ը, ՀՅԴ-ն, ՀՀԿ-ն, ԱԻՄ-ը և այլն: Բայց և այնպես, նախագահական ընտրությունների քվեարկությունը հաճախ կախված է թեկնածուի անձից և անհատական հատկանիշներից: Ուստի պատահական չէ, որ այս ընտրություններից հետո հաճախ էին հնչում կարծիքներ, ըստ որոնց՝ ՀՀԸ-ն այդքան բարձր տոկոսներ չէր ստանա, ինչպես որ ստացավ Տեր-Պետրոսյանը՝ պայմանավորված իր անձնական հեղինակությամբ: [29] Բացի այդ, ՀՀԸ-ի գաղափարախոս Վազգեն Մանուկյանի և նրա կողմնակիցների՝ կուսակցությունից հեռանալու գործընթացը դեռ վերջնականապես ավարտին չէր հասել: Միով բանիվ՝ նախագահական ընտրություններին կուսակցությունը մոտեցել էր դեռևս վերջնականապես չպառակտվածի կարգավիճակով:

Ուշագրավ է, որ Հանրապետության առաջին նախագահի ընտրության արդյունքը չվիճարկվեց հետագայի հայաստանյան քաղաքական ավանդույթներով, երբ հաղթող չհռչակված թեկնածուի կողմնակիցները հավաքվում էին մայրաքաղաքի հրապարակներում՝ պահանջելով ընտրության արդյունքների չեղարկում: Նախագահական այս ընտրությունների արձանագրված արդյունքները որևէ մեկի կողմից չվիճարկվեցին, թերևս - բացառությունը երկրորդ տեղում հանգրվանած ԱԻՄ ղեկավար Պարույր Հայրիկյանն էր: Մյուս թեկնածուներն ավելի ըմբռնողական մոտեցում ցուցաբերեցին: ԱԻՄ նախագահի հետ ընտրություններին որպես փոխնախագահի թեկնածու առաջադրված ՀԲԺՄ ղեկավար Ազատ Արշակյանը հայտարարում էր, որ Տեր-Պետրոսյանի հաղթանակը պարզապես նախորդ իրողությունների վավերացումն էր: [30] Ռաֆայել Ղազարյանը ևս անակնկալի չէր եկել ընտրությունների արդյունքներից: [31] Իսկ ՀՀԿ թեկնածու Աշոտ Նավասարդյանը իրադրությանը մոտենում էր իրատեսորեն՝ պնդելով, որ ինքը հաղթելու հույս չի էլ ունեցել: Ըստ նրա՝ հետընտրական իրադարձությունների կիզակետում պիտի լինեին առողջ ընդդիմություն ստեղծելը, որը նախագահին սատար կկանգներ և կմատնանշեր նրա թերությունները: [32] ՀՅԴ կուսակցությունն իր պաշտոնաթերթի՝ «Երկիրի» խմբագրականի միջոցով շնորհավորեց Լևոն Տեր-Պետրոսյանին ՀՀ առաջին նախագահ ընտրվելու կապակցությամբ՝ մաղթելով, որ «համայն հայ ժողովրդի ուժերով հաջողվի լուծել մեր ազգի առջև ծառայած բոլոր հիմնահարցերը»: [33]

Պարույր Հայրիկյանն ու նրա կողմնակիցներն էլ, հայտարարություններից ու կոչերից զատ, բավարարվեցին սոսկ սև դրոշներ ծածանելով, սգո երթ անցկացնելու քայլով՝ ի նշան նախագահական ընտրություններում իրենց առաջնորդի պարտության: [34] ԱԻՄ-ի Վերահսկիչ հանձնաժողովը նաև հայտարարություն էր տարածել՝ շեշտելով, որ «ընտրություններն ուղեկցվել են «ՀՀ նախագահական ընտրությունների մասին» օրենքի և միջազգային ընդունված չափանիշների կոպիտ խախտումներով: Ընտրություններն ապօրինի են և հետևաբար՝ անվավեր»: Դրա հետ մեկտեղ՝ ԱԻՄ-ը ձեռնամուխ էր լինելու կազմակերպչական հարցերի կարգավորմանը, Հայաստանում մասնաճյուղեր բացելու գործին: [35]

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Արձանագրելի է, որ բազմակուսակցական համակարգի հաստատումից անմիջապես հետո անցկացվեց նախագահի առաջին ընտրությունը՝ ուրվագծելով այն ուղին, որով պիտի ընթանար հանրապետության քաղաքական կյանքի զարգացումը: Նախագահական 1991թ. ընտրությունները բազմակուսակցական համակարգի առաջին քննությունն էին, որին մասնակցող եւ 1-3-րդ հորիզոնականները զբաղեցրած թեկնածուները ներկայացնում էին քաղաքական բեմի ազդեցիկ կուսակցությունները՝ Հայոց համագգային շարժումը, Ազգային ինքնորոշում միավորումը և Հայ հեղափոխական դաշնակցությունը: Այս ընտրությունը Երրորդ հանրապետության պատմության մեջ մտավ «ամենաարդար» մակդիրի ուղեկցությամբ՝ ի համեմատություն կամ նույնիսկ ի հակադրություն հետագա քվեարկությունների: Ցավալիորեն, երկրորդ տեղը զբաղած թեկնածուն չընդունեց ընտրությունների արդյունքների վավերականությունը ու այդպես էլ չընդունեց ընտրյալ նախագահին: Այս հանգամանքը թողեց իր բացասական նախադեպը Հայաստանի քաղաքական կյանքի զարգացման ընթացքի վրա: Թեպետ ընտրությունը լիովին օրինական էր և հատկապես՝ լեգիտիմ, այսինքն՝ լիովին ընդունելի հասարակության մեծամասնության դիտանկյունից, սակայն քաղաքական մշակույթի հիմք դնող, ավանդույթ ձևավորող այդչափ նշանակալից քայլը, այնուամենայնիվ, ի կատար չածվեց: Հարկ է արժանին մատուցել ՀՅԴ-ին, որ գաղափարական բուռն հակադրության մեջ լինելով ՀՀԸ-ի և անհատապես Տեր-Պետրոսյանի հետ, իր մեջ ուժ գտավ շնորհավորելու նրա հաղթանակը:

Ամփոփելով՝ հիմնավոր է թվում այն կարծիքը, որ նախագահական կառավարմամբ պետություններում բազմակուսակցական համակարգի արմատավորումն ավելի բարդ է, քան երկկուսակցականինը:<sup>36</sup> Այս առումով Հայաստանը կարծես բացառություն չկազմեց, եթե հաշվի ենք առնում պարագան, որ բազմակուսակցական համակարգի ներդրումից 8 ամիս անց հանրապետությունն ընտրեց իր առաջին նախագահին՝ աստիճանաբար հեռանալով կառավարման խորհրդարանական կերպից: Գուցե հայաստանյան առանձնահատկությունները, ինչպես օրինակ՝ հարևաններ Ադրբեջանի հետ խորացող ռազմական հակամարտությունը, Թուրքիայի հետ անընդհատ փոթորկվող հարաբերությունները, աշխարհաքաղաքական զանազան գործոնների հետ համատեղմամբ, արդարացնում էին ուժեղ նախագահական ինստիտուտ ունենալու ձգտումը: Այնուամենայնիվ, բազմակուսակցական համակարգի արմատավորման առումով նախագահական կառավարումը հաստատապես շատ ավելի դրական դերակատարություն չունեցավ՝ ներքաղաքական ձգնաժամերի հաղթահարման քաղաքական արդյունավետ մեխանիզմների ու գործիքների ներդրման տեսնակյունից: Շեշտելի է, սակայն, անհատականությունների դերը, որ ավելի է ընգծվում նախագահական համակարգում: Միով բանիվ՝ բազմակուսակցական համակարգի առաջին քննությունը Հայաստանը հանձնեց հենց այս ընտրությամբ՝ հանձին ակտիվ ընտրարշավի, քաղաքական ու գաղափարական սուր պայքարի, ինչպես նաև ընտրության խաղաղ ելքի:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. «Հայաստանի Հանրապետություն», 26 հունիսի 1991:
2. «Հայաստանի Հանրապետություն», 10 օգոստոսի 1991:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ:

- Ընդհանուր խմբագրությամբ` Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. Եր., 2010, էջ 31:
4. Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Եր., 2013, էջ 132:
  5. Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում (Ելույթների և հոդվածների ժողովածու), «Վ.Ի.Վ. Այսօր և վաղը», Եր., 2002, էջ 248:
  6. Հարությունյան Ս., Անցյալի և ներկայի մասին, Եր., 2011, էջ 334:
  7. "Независимая газета" (Собрание), No 13, 1991.
  8. Cristian Science Monitor, 7 May 1991.
  9. Սարգսյան Ա., Լևոն Տեր-Պետրոսյան` Հիմնադիր-Նախագահ Հայաստանի Հանրապետության, Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, 665-709, էջ 678:
  10. «Ազգ», 16 սեպտեմբերի 1991:
  11. Մանրամասն տես` Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 53:
  12. Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի (Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Երևան, 2006, էջ 242:
  13. Նույն տեղում:
  14. «Արաբատ», Բեյրութ, հոկտեմբեր 1991:
  15. Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերները. Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր; թարգմ. Հ. Հարությունյան, <Արմատե ԺԲՀԶԿ, Երևան, Նաիրի, 1999, էջ 18:
  16. Պարույր Հայրիկյան, Ինքնակենսագրություն, 2013: Հասանելի է` [www.hayrikyan.com/index.php/2013-11-15-08-21-03/](http://www.hayrikyan.com/index.php/2013-11-15-08-21-03/) (առ` 07.09.2016):
  17. «Հայք», 27 փետրվարի 1991:
  18. Մանրամասն տես` Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183. ց. 1, գ. 58:
  19. «Երկիր», 10 սեպտեմբերի 1991:
  20. «Հայք», 8 հոկտեմբերի 1991:
  21. Մանրամասն տես` Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 207, ց. 64, գ. 240:
  22. «Երկիր», 27 օգոստոսի 1991:
  23. «Հայք», 8 հոկտեմբերի 1991:
  24. «Երկիր», 20 սեպտեմբերի 1991:
  25. Մանրամասն տես` Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 55:
  26. Մանրամասն տես` Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 54:  
Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 56:
  27. Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 132:
  28. Ամբողջական պատկերը, կից արձանագրություններով և համապատասխան այլ փաստաթղթերով, Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 52:
  29. Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 248:
  30. «Երկիր», 18 հոկտեմբերի 1991:
  31. Նույն տեղում:
  32. Նույն տեղում:
  33. «Երկիր», 18 հոկտեմբերի 1991:
  34. Ա. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 682:
  35. «Երկիր», 24 հոկտեմբերի, 1991:
  36. Mainwaring S., Presidentialism, Multy-Party systems, and Democracy: The Difficult Equation, Kellogg Institute, The Helen Kellogg Institute for International Studies, 1990, p. 3.
  37. Epstein L., Political Parties in Western Democracies. New York: Praeger. 1967, p. 23-24:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

1991թ. ՀՀ հախագահական ընտրությունները՝ որպես բազմակուսակցական համակարգի առաջին քննություն Նժդեհ Հովսեփյան

Հայաստանում բազմակուսակցական համակարգի ներդրումից կարճ ժամանակ անց՝ 1991թ. հոկտեմբերի 16-ին, կայացան նախագահական առաջին ընտրությունները՝ դառնալով ներմուծված նոր ժողովրդավարության առաջին փորձությունը: Հայոց նոր պետականությունը ոչ միայն կարողացավ հաղթահարել անմիջական ժողովրդավարության առաջին ալիքը, այլև ազգային միասնության լրջագույն նվաճում արձանագրել: Ասպարեզում գտնվող բոլոր կուսակցություններն իրենց առաջնորդներին առաջադրեցին որպես նախագահի թեկնածու՝ քաղաքացիներին ներկայացնելով պետության կառուցման սեփական տեսլականը:

SUMMARY

Presidential Elections of Armenia in 1991 as an Earliest Trial For Multi-Party System  
Nzhdeh Hovsepian

**Keywords:** presidential elections, multi-party system, the Third Republic Of Armenia, Post-Soviet transformation, USSR collapse, political parties

Shortly after the foundation of multi-party system in Armenia, the country held its first presidential election on October 16, 1991, which became the earliest test of a newly implemented democracy. The newly established Armenian statehood not only succeeded in overcoming first wave of direct democracy, but also achieved a new level of national unity.

РЕЗЮМЕ

Президентские выборы Армении в 1991 году в качестве первого экзамена  
многопартийной системы  
Нжде Овсепян

**Ключевые слова:** президентские выборы, многопартийная система, Третья Армянская Республика, постсоветская трансформация, распад СССР, политические партии

Вскоре после создания многопартийной системы в Армении, в стране прошли первые президентские выборы 16 октября 1991 года, которые стали самым ранним испытанием внедренной демократии. Почти все наиболее представительные политические деятели принимали активное участие в этих выборах. Политические партии представили свои перспективы и стратегию развития государства, давая населению надлежащую возможность выбирать среди них.

**ՔԵԹՐԻՆ ՄԱՔԱՈՒԼԵՅ, «ԴԻՄՈՒՄ` ԱՆԳՒԻԱՅԻ, ՇՈՏԼԱՆԴԻԱՅԻ ԵՎ ԻՈՒԼԱՆԴԻԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԼՈՐ ՀԱՐՑԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ»\***

**Էլյա Դիսայան**

**Բանալի բառեր`** գաղութային քաղաքականություն, հանրապետություն, դեմոկրատական համակարգ, ազատություն, սահմանադրություն:

18-րդ դարում Մեծ Բրիտանիան սկսում է զարգանալ աննախընթաց կերպով, որը պայմանավորված էր մի շարք գործոններով:

Երկրի զարգացման համար հատկապես հատկանշական էին արդյունաբերական հեղաշրջման ազդեցությունը, առևտրի զարգացումը և գաղութների ավելացումը:

Արդեն 1756թ-ին Անգլիան ներքաշվում է յոթնամյա պատերազմի մեջ: Պատերազմի արդյունքում նրանց հաջողվում է գրավել մի շարք ֆրանսիական գաղութներ: Գաղութների նվաճումը մեծ նշանակություն է ունենում Մեծ Բրիտանիայի առևտրի և տնտեսության զարգացման համար: Սակայն միևնույն ժամանակ երկիրը պատերազմի մեջ է ներքաշվում ամերիկյան իր գաղութների հետ:

Տվյալ ժամանակաշրջանում բեկումնային իրողություն էր Անգլիայում լուսավորական գաղափարների սաղմնավորումը, որով հիմք է դրվում Լուսավորության դարաշրջանը: Այն համարվում է Եվրոպայի պատմության առանցքային փուլերից մեկը, որը կապված էր գիտական, փիլիսոփայական և հանրային մտածողության վերելքի հետ:

Անգլիայի պատմության այս շրջադարձային ժամանակահատվածում պատմության թատերաբեմում իր գործունեությամբ մեծ ներդրում է ունենում Քեթրին Մաքաուլեյը:

Անգլիական և ամերիկյան պատմագրության ներկայացուցիչները կատարել են նշանակալից քայլեր Մաքաուլեյի կյանքի և ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության ճանապարհին: Մ. Ա. Բարզը բնութագրել է հեղինակին որպես անգլիական պատմագրության ակնառու ներկայացուցիչ` նշելով վերջինիս անալիտիկ, վերլուծական միտքը և աչքի ընկնող գրականագիտական շնորհը [1]:

Քեթրին Մաքաուլեյը դարձել է Անգլիայի պատմության առաջին հետազոտողներից մեկը, ով ուսումնասիրել է Մեծ Բրիտանիայի պատմությունը արմատական-ժողովրդավարական տեսանկյունից: Նրա «Դիմում Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի ժողովուրդների ներկայիս կարևոր հարցերի վերաբերյալ» աշխատությունը գրված է հանրապետականների դիրքից, որը բնորոշ չէր տվյալ ժամանակահատվածի պատմագրության ներկայացուցիչների համար:

Դիտարկելով այս աշխատությունում Մաքաուլեյի հայացքները` Ն. Ս. Կրեյենկոյին նշում է, որ Մաքաուլեյը պատկանում էր այն փոքր խմբին, որը ներկայացնում էր «ձևավորվող արդյունաբերական հասարակական դասի» շահերը և նրա աշխատությունը արտացոլում է արտահայտված դեմոկրատական գաղափարներ [2]:

Անգլիայի պատմությանը նվիրված իր «Դիմում` Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի ժողովուրդների ներկայիս կարևոր հարցերի վերաբերյալ» գրքում Մաքաուլեյը ներկայացնում է Անգլիայի կառավարման ձևի և կայսրության գաղութային քաղաքականության մասին: Նա անդրադառնում է երկու կարևորագույն հիմնահարցի` տալով միա-

\* Հոդվածն ընդունվել է 05.02.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ստեփանյանը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՄԱՐՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ժամանակ նաև համոզիչ պատասխան հողվածում ներկայացվող դրանց վերաբերյալ ենթահիմնահարցերին: Առաջին հիմնահարցը, որին անդրադառնում է հեղինակը, վերաբերում է կայսրության կառավարման ձևին: Այս հիմնահարցի շրջանակներում հեղինակը ներկայացնում է կամքի ազատությանն ու պետական գործիչների գործունեությանը վերաբերող ենթահիմնահարցը, որը կապված է իր հայրենակիցների կամային հատկանիշների դրսևորումների հետ: Երկրորդ հիմնահարցը կապված է կայսրության գաղութային քաղաքականության հետ: Տվյալ հիմնահարցի հետ աղերսվող ենթահիմնահարցում հեղինակն անդրադարձել է գաղութների բնակիչների հիմնարար իրավունքներին:

Հեղինակն իր «Դիմում Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի ժողովուրդների ներկայիս կարևոր հարցերի վերաբերյալ» աշխատությունում առաջին հիմնահարցը ներկայացնելիս միաժամանակ խոսում է պետության կառավարման մի քանի տեսակների մասին, մասնավորապես անդրադառնում է ժողովրդավարությանը, հանրապետությանը, միապետությանը և դրանց տարատեսակներին՝ ներկայացնելով նաև իր նախընտրած կառավարման մոդելը՝ կառավարման հանրապետական ձևը: Նրա արտահայտած գաղափարներից կարելի է եզրահանգել, որ նա ներկայիս տերմիններով արտահայտված լիբերալ-դեմոկրատիա հայեցակարգը պատկերացնում է ժամանակակից ընկալումներով:

Առաջին հիմնահարցը ներկայացնելիս Քեթրին Մաքաուլեյը իր աշխատանքում մեջբերումներ է կատարել Պոլիբիոսի աշխատություններում ներկայացված կառավարման քաղաքական համակարգերի տարատեսակներից՝ միաժամանակ վերլուծելով դրանք, քանի որ իր աշխատության մեջ նշում է, որ այս հեղինակի քաղաքական համակարգերի վերաբերյալ Պոլիբիոսի ներկայացրած նկարագրությունները և բացատրությունները ամենաճշգրիտներից է համարում և փաստերով ապացուցում է, որ դրանք ամենամոտն են իր ժամանակաշրջանի քաղաքական համակարգերին: Քեթրին Մաքաուլեյը Պոլիբիոսի սման նշում է, որ որոշ հեղինակների կողմից կառավարման երեք հասարակ տեսակների՝ թագավորական իշխանության, արիստոկրատիայի և ժողովրդավարության առանձնացումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ այս ձևերի կողքին գոյություն ունեն երեք այլ ձևեր, որոնք միաժամանակ և՛ տարբերվում են, և՛ նման են դրանց[3]:

Կարծում ենք՝ Մաքաուլեյն այս համակարգերը ներկայացնելիս կրել է նաև իր ժամանակաշրջանի ազդեցությունը, քանի որ մինչև իր նախընտրած կառավարման համակարգին անդրադառնալը, նկարագրում է եվրոպական այլ երկրների քաղաքական մոդելները և հետո միայն, հաշվի առնելով Անգլիայի յուրահատկությունները, ապացուցում է կառավարման հանրապետական մոդելի առավելությունները: Հետաքրքրական է, որ նա դեմոկրատիան ներկայացնում է որպես մեծամասնության կարծիքի գերակայություն:

Հետաքրքրական է այն փաստը, որ, ճիշտ է, Մաքաուլեյը չի արտահայտել որոշակի շեշտված կարծիք պետական կառավարման վեց ձևերի հաջորդականության մասին, սակայն իր աշխատանքում ներկայացնում է դրանք:

Ուսումնասիրելով աշխատանքը՝ ես կարող եմ եզրակացնել, որ նա այստեղ ամբողջությամբ համակարծիք է Պոլիբիոսի հետ: Չնայած նա ոչ մի բացահայտ դիրքորոշում չի ներկայացնում, սակայն իր նկարագրություններն ինձ հնարավորություն են տալիս հիմնավորելու, որ կառավարման առանձին ձևերի ներքին զարգացումն անցնում է հինգ էտապներ՝ *δύμιον* [ἄρχαι καὶ γενέσεις], զարգացում [αὐξήσις], ծաղկում [ἄκμῆ]; փոփոխություն [μεταβολή] և վերջ [τέλος][4]:

Հեղինակը ներկայացնում է պետական կառավարման խառը տիպի վերլուծությունը, այսինքն՝ ձև, որտեղ միացվում են լավագույն պետական ձևերի առավելությունները



որ և որտեղ, շնորհիվ փոխադարձ վերահսկողության, ոչ մեկը չի զարգանում մյուսներից առավել: Այս իրողությունը հետաքրքրական փաստ է, քանի որ Լուսավորության դարաշրջանի մի շարք հեղինակներ հանգում են այս տեսակետին, սակայն ի հակադրություն քչերի, Մաքաուլեյը քաջատեղյակ էր, որ այս վերլուծությունը, անտիկ ժամանակաշրջանի ընդհանուր քաղաքական տեսության մի մասն է[5]:

Հեղինակն իր աշխատությունում պետության կառավարման ձևերին հակիրճ անդրադառնալուց հետո առաջին հիմնահարցում ոչ բացահայտ ձևով նշում է, որ նա կառավարման հանրապետական մոդելի կողմնակից է: Չնայած Քեթրին Մաքաուլեյը բացահայտորեն չի անդրադարձել ազատության բնույթին մինչև իր կյանքի վերջը, այնուամենայնիվ, իր աշխատանքը ցայտուն կերպով ցուցադրում է հանրապետական ազատության առավելությունները[6]:

Իր աշխատանքում նա ցայտուն կերպով արտահայտում է իր հակումը ժողովրդավարության նկատմամբ: Նա կարծում է, որ հանրապետական կառավարման ձևի տարբեր մոդելներից, որոնք կիրառվել են մարդկության պատմության ընթացքում, միայն լավ բալանսավորված դեմոկրատական համակարգն է, որը կարող է ապահովել հասարակության ազատությունը և ուրախությունը: Այս աշխատանքում օգտագործված «լավ բալանսավորված դեմոկրատական համակարգ» արտահայտությունից ես ենթադրեմ եմ, որ նա «արիստոկրատական հանրապետության» կողմնակից է [7]:

Պետական կառավարման հանրապետական համակարգին անդրադառնալիս Քեթրին Մաքաուլեյը իր գաղափարները խարսխում է Լուսավորության դարաշրջանի ռահվիրաներից մեկի՝ Ջոն Լոկի պետության մասին արտահայտած գաղափարների վրա: Որպես ազատական գաղափարական հոսանքի ներկայացուցիչ հեղինակը համակարծիք է Լոկի հետ, որ պետությունը ստեղծված է բնական իրավունքի և օրենքների երաշխավորմամբ (կյանք, ազատություն, սեփականություն)[8]:

Հեղինակը գտնում է, որ բնական վիճակը լիակատար ազատության և հավասարության վիճակն է սեփականության և կյանքի տնօրինման հետ մեկտեղ: Մաքաուլեյն իր աշխատանքում ներկայացված կառավարման ձևի հենասյուներից մեկը համարում է ազատության իրավունքը, որը մերժում է անձնական կախվածության ցանկացած հանգամանք: Հետևաբար աշխատանքում բերված բոլոր օրինակները հանգեցնում են քաղաքական ստրկության մերժմանը[9]: Ներկայացված բոլոր փաստերը մեզ թույլ են տալիս եզրահանգել, որ ճիշտ է Մաքաուլեյը բացահայտ չի արտահայտել իր հանրապետական կառավարման մոդելին կողմնակի լինելու փաստը, սակայն նա այս կառավարման համակարգի ջատագով է :

Մեր կարծիքը գալիս է հիմնավորելու այն փաստը, որ, համաձայն Քեթրին Մաքաուլեյի, ստրկական կախվածությունը և անհավասարությունը այն գործոններից են, որոնք խեղում են ժողովրդի ամբողջականությունը միտված հավաքականության գաղափարը՝ մղելով վերջինիս գործել ընդդեմ հավերժական բարոյական ճշմարտությունների[10]:

Պետական կառավարման կարևորագույն հիմնահարցի հետ է աղերսվում կամքի ազատության ու պետական գործիչների գործունեության ենթահիմնահարցը, որը կապված է իր հայրենակիցների կամային հատկանիշների դրսևորումների հետ: Նա իր աշխատությունում անդրադարձել է այս խնդրին՝ ցանկանալով շեշտադրել, որ հանրապետական-դեմոկրատական ամուր կառավարման համակարգ ունենալու համար իր հայրենակիցները պետք է ունենան կամային ազատություն և արդար պետական գործիչներ: Հաշվի առնելով սա նրա ուսումնասիրությունները հետազոտողներից մեկը՝ Մարտինա Ռեուտերը, գտնում է, որ՝ Քեթրին Մաքաուլեյը առաջարկում է ռացիոնալ

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

համապատասխանության[11] տարբերակը, այնինչ մյուսները ենթադրում են, որ նա համոզված դետերմինիստ կամ ժամանակակից Կալվինիստ է[12]:

Նա քննադատում է այն պետական գործիչների գործունեությունը, ովքեր իրենց քայլերով նպաստում են երկրի տարբեր ոլորտների քայքայմանը: Հեղինակն իր աշխատանքում նրանց նկարագրում է հետևյալ կերպ. «Լյս մարդիկ փորձում են համոզել ձեզ, որ նրանք, ովքեր հանդես են գալիս որպես իրենց երկրի անվտանգության համար ամենաշատը մտահոգվողները, ամենաքիչն են հետաքրքրված վերջինիս բարօրությանը: Նա պնդում է, որ, օրինակ, այս մարդիկ ժողովրդին ասում են, որ Կանադային վերաբերող փաստաթուղթը երաշխավորում է բնակիչների իրավունքները, և որ այս նահանգի բնակիչների արտոնությունները շնորհված են բրիտանական թագի կողմից»[13]: Նրանք ներկայացնում են, որ մարդկանց անսահմանափակ ենթարկվածությունը սահմանված է պետության կողմից պաշտպանության ընդունման անհրաժեշտությունից: Նա իր կարծիքը հիմնավորում է հետևյալ կերպ. «Վեճի էության վերաբերյալ ձեր գաղափարները խառնելու և մարդկային զգացմունքները ձեր մեջ ճնշելու համար, նրանք ասում են ձեզ, որ օրինակ ամերիկացիները չնայած հարկվել են համապատասխան կամ անհամապատասխան ձևով, ձեզ նման հայտնվում են նույն տիպի, անախորժ դրության մեջ»[14]:

Ամփոփելով հեղինակի այս հիմնահարցի և ենթահիմնահարցի վերաբերյալ իր աշխատությունում արտահայտած տեսակետները, կարծում ենք, որ նա հանրապետական մոդելի կողմնակից է, միաժամանակ, մեծապես ազդված լինելով Լուսավորության դարաշրջանի գաղափարախոսներից կարևորում է ազնիվ պետական գործիչների դերակատարությունը, ինչպես նաև իր հայրենակիցների՝ որպես քաղաքացիների կամային հատկանիշների դրսևորումները՝ խրախուսելով վերջիններիս պայքարել իրենք իրավունքների համար:

Հաջորդ հիմնահարցը, որին անդրադարձել է հեղինակը, աղերսվում է կայսրության գաղութային քաղաքականությանը: Հեղինակը հանդես է գալիս ազատական շարժման գաղափարներով, որոնք նա կայսրության գաղութային քաղաքականության մեջ մեծապես հակադրում է պահպանողական թևի գաղութային քաղաքականության վերաբերյալ սկզբունքներին: Տվյալ հիմնահարցի հետ աղերսվող ենթահիմնահարցում հեղինակն անդրադարձել է գաղութների բնակիչների հիմնարար իրավունքներին:

Որպես ազատականության (լիբերալիզմ) քաղաքական փիլիսոփայության ներկայացուցիչ՝ նրա աշխարհայացքը հիմնված է ազատության ու հավասարության գաղափարների վրա: Հետաքրքրական է այն փաստը, թե ինչպես է Մաքսուելը իր աշխատությունում ներկայացնում կայսրության գաղութային քաղաքականությանը վերաբերող գաղափարները: Նա ընտրել է հետևյալ մոդելը: Նա ներկայացնում է պահպանողական գաղափարական հոսանքի հենասյուներից մեկի՝ Բյորկի[15] գաղափարները այս հիմնահարցի վերաբերյալ, այնուհետև նույն հիմնահարցի շուրջ կատարում է իր վերլուծությունը և հակադրում մեկը մյուսին՝ վերջում ապացուցելով կայսրության զարգացման համար հանրապետական-դեմոկրատական կառավարման մոդելի հետ կապված գաղութային քաղաքականության առավելությունները:

Ճիշտ է հեղինակը ներկայացրել է Բյորկի տեսակետները իր գաղափարներին մոտ դիտանկյունից, սակայն ավելի խոր ուսումնասիրության դեպքում կարելի է եզրահանգել, որ նա իրականում հանդես է գալիս դրանց դեմ և իր աշխատանքում դրանք ներկայացնում է ոչ թե հիմնավորելու, այլ հակադրելու իր գաղութային գաղափարներին և ապացուցելու իր գաղափարների ճշմարտացիությունը: Բյորկը, ի տարբերություն Մաքսուելի, միապետության ջատագով է և միաժամանակ կայսրության գաղու-

թային քաղաքականության հարցում արդարացնում է իշխող գահակալների իրականացրած միջոցառումները:

Մաքաուլեյն իր աշխատությունում ներկայացնում է Բյորկի՝ որպես պահպանողական թևի ներկայացուցչի գաղութային քաղաքականությունը՝ շեշտադրելով այն իրողությունը, որ անկախության համար ամերիկյան պատերազմի դրդապատճառները հիմնավորապես հակոտնյա են իր գաղափարներին: Հետաքրքրական է այն փաստը, որ Մաքաուլեյը ընտրել է մի քանի հեղինակների և իր աշխատությունում մեծապես կիրառում է նրանց տեսակետները: Սա իհարկե ունի իր պատճառը: Նա ընտրել է աշխատանքային այս մեթոդը, քանի որ բացահայտորեն չի ներկայացրել իր տեսակետներն այս հիմնահարցերի և դրանց ենթահիմնահարցերի վերաբերյալ և համեմատությունների կամ վերջիններիս կարծիքները ներկայացնելու միջոցով հիմնավորել է իր տեսակետները: Մաքաուլեյը մեջբերում է Բյորկի կարծիքը ամերիկյան գաղութների հետ անգլիական կառավարության կոնֆլիկտի վերաբերյալ՝ նշելով, որ անկախության համար Ամերիկյան գաղութների հետ կոնֆլիկտի ամենակարևոր պատճառներից մեկը անգլիական կառավարության հովանավորչական միջոցառումներն են առևտրի ոլորտում: Բյորկը հատկապես կտրուկ քննադատում էր «արհեստական առևտրի» այս քաղաքականությունը, որը կարգավորվում էր ոչ թե առաջարկի և պահանջարկի գործընթացով, այլ պետական հարկադրանքի միջոցներով[16]:

Նա իր աշխատությունում նշում է, որ Բյորկն ընդունում էր մարդկային մտքի միջոցով Աստվածային օրենքի ընկալման հիմնական դրույթների հնարավորությունը, սակայն դրա հետ մեկտեղ նկատի ուներ ոչ թե առանձին անհատի գիտակցությունը, այլ ազգի կոլեկտիվ գիտակցությունն ընդհանուր առմամբ, որը կարող է սերունդ առ սերունդ կուտակել Աստվածային իմաստության կարևորագույն գիտելիքը[17]: Հեղինակը, մեր կարծիքով, ներկայացնում է իր և պահպանողական ուղղության այս մտածողի գաղութային քաղաքականության վերաբերյալ առևտրային և համամարդկային բնական օրենքի գաղափարների տարբերությունները՝ ցանկանալով դրանց միջոցով ներկայացնել պետության կառավարման հանրապետական ձևի և դրա հետ ածանցվող գաղութային քաղաքականության առավելությունները:

Երկու հեղինակների իրարամերժ տեսակետները արտահայտվում են նաև հետևյալում: Իր գրքում հեղինակը ներկայացնում է, որ, ի տարբերություն իրեն, Բյորկը մերժում էր Լուսավորության դարաշրջանում մեծ տարածում ունեցող հասարակական դաշինքի տեսությունը, համաձայն որի հասարակությունը և պետությունը առաջացել են առանձին անհատների գիտակցված որոշման հետևանքով[18]:

Դիտարկելով յուրաքանչյուր պետություն որպես ստեղծագործական ջանքերի արդյունք և վերջինիս բոլոր սերունդների քաղաքացիների ժառանգական սեփականություն՝ Բյորկը, ի տարբերություն Մաքաուլեյի, հատկապես մեծ նշանակություն էր տալիս ժառանգականության սկզբունքին քաղաքականության և իրավունքի մեջ: Միապետական գաղափարների և այս համակարգի գաղութային քաղաքականության միտաբանության ասպացուցման համար Մաքաուլեյը մեջբերում է Բյորկի հետևյալ կարծիքը. «Հոգ չի տանի իր սերնդի մասին այն ժողովուրդը, որը հայացք չի նետում նախնիների վրա... Շնորհիվ սահմանադրական քաղաքականության մենք ստանում, պահպանում և փոխանցում ենք մեր սեփականությունը և կյանքը մեր սերունդներին[19]: Քաղաքական ինստիտուտները և սեփականությունը տրվում և վերցվում են մեզանից նույն ճանապարհով»[20]:

Վերլուծելով Քեթրին Մաքաուլեյի «Դիմում՝ Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի ժողովուրդների ներկայիս կարևոր հարցերի վերաբերյալ» գիրքը պարզորոշ նկատվում է, որ ըստ նրա, ազատ մարդիկ պետք է կառավարվեն ոչ թե կամայական այլ

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

մարդու էությունից բխող օրենքներով, որը համապատասխանում է իրականությանը և հնարավոր է ընկալել պատճառահետևանքային կապի միջոցով[21]: Այս աշխատության մեջ նա բացատրում է, թե ինչպե՞ս պետք է գաղութների բնակիչները պահպանեն իրենց ազատությունը՝ ընդդեմ Ստյուարտների արքայատոհմի հավակնությունների և կամայական իշխանության հարկադրանքի:

Հեղինակը կիրառում է այն սկզբունքը, որ իրավունքները, եթե դրանք ընդհանրապես գոյություն ունեն, տիեզերական են և զարմանալի չէ, որ նա փորձում է ցույց տալ իր հայրենակիցներին գաղութների հարկման անարդարացիությունը՝ զուգահեռաբար շեշտելով, որ դրանց իրավունք չի տրվում ներկայացուցիչ ունենալ բրիտանական պառլամենտում: Նա բացատրում է իր հայրենակիցներին, թե ինչպիսի կորուստ կլինի, եթե նրանք զրկվեն ամերիկյան գաղութների հետ առևտրական բոլոր արտոնություններից: Բայց իր հիմնական բողոքն ուղղված է ոչ թե իր հայրենակիցների անձնական շահերի ու նկրտումների դեմ, ովքեր կարծում են, որ իրենց սեփական հարկման բեռը թեթևանում է այն ամերիկացիների վրա ավելի շատ դնելով, այլ այն սկզբունքն է առաջադրում, որ, ուրիշների իրավունքները պաշտպանելով, որևէ մեկը կարող է երկարատև ժամանակահատվածի համար ապահովել իր սեփական իրավունքները: Նա շեշտում է, որ կամայական հարկման ձևը (ըստ stamp act-ի[22]) դիմադրության չհանդիպեց իր հայրենակիցների կողմից՝ բացառությամբ նրանց ովքեր մասնավորապես մտահոգված են Մեծ Բրիտանիայի և իր գաղութների միջև առևտրական փոխշահավետ համագործակցության ընդհատմամբ: Պառլամենտի գործունեությունը առևտրի ոլորտում ցայտուն կերպով ներկայացվում է վերջինիս կողմից ընդունված երկու այլ փաստաթղթերով, մասնավորապես Բոստոն նավահանգստի վերաբերյալ փաստաթղթերով[23]: Մեկ այլ փաստաթղթում նշվում է, որ նրանք զրկված են Ասամբլեա և Երդվյալ ատենակալների դատարան ունենալու իրավունքից և տարազան այլ օրենքներ, որոնց կիրարկմամբ Քվեբեկը ավելի վատ վիճակում է հայտնվում, քան այն նախկինում էր՝ Ֆրանսիայի տիրապետության տակ:

Մաքաուլեյի և Բյորկի տարբեր քաղաքական հայացքները դրսևորվում են նաև հետևյալում: Մաքաուլեյը բացահայտորեն կոչ է անում բրիտանացիներին, մասնավորապես գաղութների բնակիչներին, պայքարել իրենց հիմնարար իրավունքների համար՝ հակադրվելով միապետական նկրտումներին:

Մեկնաբանելով գաղութային քաղաքականության առանձնահատկությունները՝ Քեթրին Մաքաուլեյը իր աշխատանքում նշում է գաղութների հետ Մեծ Բրիտանիայի համագործակցության արդյունավետության կարևորագույն հիմնահարցը:

Հեղինակը Բրիտանիայի գաղութային քաղաքականությունը ներկայացնում է հետևյալ ձևով. «Քվեբեկ նահանգի համար փաստաթղթի յուրաքանչյուր տողում մենք նկատում ենք բռնապետության տարրեր: Համաձայն 1763թ. թագավորական հռչակագրի՝ կանադացիները բրիտանական թագի բոլոր արտոնություններից և իրավունքներից օգտվելու փոխարեն զրկված են խղճի ազատությունից և ենթարկվում են թագավորին և՛ քաղաքացիական և՛ հոգևոր տիրույթներում և համեմատաբար ավելի վատ վիճակում են, քան երբ գտնվում էին Ֆրանսիայի տիրապետության տակ»[24]:

Իր աշխատության մեջ Քեթրին Մաքաուլեյը ցույց է տալիս, որ բրիտանական կառավարությունն այն կարծիքին է, որ գաղութների հարկման և վերջիններիս բնակիչներին ստրկական կախվածության մեջ զգելու ամենաարդյունավետ եղանակը նրանց առևտրային կապերով պարտավորեցնելն է:

Հեղինակը շեշտում է, որ բրիտանական կայսրությունն իր գաղութների հետ վերաբերվում է ավելի վատ, քան նվաճված երկրների: Ո՛չ Ուելսը և ո՛չ էլ Իռլանդիան չեն

հարկվում այնպես, ինչպես գաղութները և ներկայացուցիչներ են ուղարկում բրիտանական պառլամենտ՝ ի տարբերություն վերջիններիս[25]:

Իր աշխատանքում հեղինակը կատարում է հետևյալ մեջբերումը. «Մինչև պառլամենտում ներկայացուցիչներ չունեցող ամերիկյան գաղութներին հարկելը կառավարությունը պետք է նվազեցնի չափից ավելի բարձր աշխատավարձերը, իջեցնի անհանաչափ արտոնությունները, վերացնի ապօրինի նպաստները, նախընտրական քարոզարշավին հատկացվող ծախսերը, պառլամենտում ծայների համար հատկացվող կաշառքները և այլն: Այս միջոցառումներով գահակալը տաս անգամ ավելի շատ եկամուտ կունենա, քան հարկումից և անարդարացի գործողություններից գաղութների նկատմամբ»[26]:

Նա այն կարծիքին է, որ, եթե բրիտանական գաղութները քաղաքացիական պատերազմ սկսեն կայսրության դեմ, Բրիտանիան կկործանի և՛ իրեն, և՛ Ամերիկյան իր գաղութներին, իր հերթին ամերիկյան իր գաղութները դանդաղորեն ձեռք կբերեն անկախություն: Սա կհանգեցնի նրան, որ բրիտանական հսկայածավալ կայսրությունը կգրկվի այն բոլոր արտոնություններից և առավելություններից, որոնք գալիս էին գաղութներից: Այս դեպքում երկիրը կպարսիակվի իր սահմանների մեջ և անսահման իշխանությամբ օժտված բռնապետի տիրակալությամբ նույնիսկ կկանգնի եվրոպական հզոր այլ երկրի ենթակայության տակ ընկնելու վտանգի առջև[27]:

## **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Барг М. А., Образ Великой французской революции в современной ей английской радикальной публицистике (защита революции историком Кэтрин Маколей)//От Просвещения к революции: из истории общественной мысли нового времени. М., 1990. стр. 85-86
2. Креленко Н. С., Кэтрин Маколей - леди Фукидид XVIII века // Историографический сборник. Межвузовский сборник научных трудов. Вып. 17. Изд-во Саратовского университета, 1998. стр. 82
3. Clarke, Randolph, 2000, “Incompatibilist [Nondeterministic] Theories of Free Will”, The Stanford Encyclopedia of Philosophy (Fall 2000 Edition), Edward N. Zalta [ed.], p. 75
4. Pocock, J. G. A. 1998. “Catherine Macaulay: patriot historian.” In Women writers and the early modern British political tradition, edited by H. Smith. Cambridge: Cambridge University Press, p. 13
5. Мирзаев С. Б., Полибий. [Серия «Из истории политической и правовой мысли»]. М., Юрид. лит, 1986, Самохина Г. С. Полибий: эпоха, судьба, труд. СПб., Изд-во СПбГУ, 1995, Фриц К. фон. Теория смешанной конституции в античности: критический анализ политических взглядов Полибия, Издательство СПбГУ, 2007, стр. 63
6. Skinner, Quentin, 1998, Liberty before Liberalism, Cambridge: Cambridge University Press, p. 71
7. Т. Р. Peardon, The Transition in Historical Writing (1933), p. 66
8. Ashcraft, Richard, 1986. Revolutionary Politics & Locke's Two Treatises of Government. Princeton: Princeton University Press. Discusses the relationship between Locke's philosophy and his political activities, p. 29
9. Locke, John, 1689, Two Treatises of Government, 2nd edition, Cambridge: Cambridge University Press, 1967.
10. Skinner, Quentin, 1998. Liberty before Liberalism, Cambridge: Cambridge University Press, p. 23

11. Ապակողմնորոշիչ կլինի հատկորոշել ազատ կամքի հստակ սահմանումն այս գաղափարին նվիրված փիլիսոփայական աշխատանքներում, քանի որ սրա վերաբերյալ կան տարբեր գաղափարներ: Հիմնականում փիլիսոփաները գտնում են, որ մարդկանց անհրաժեշտ է բարոյական առումով պատասխանաուլիները իրենց վարքի համար (O'Connor, Timothy, 2002. "Free Will", The Stanford Encyclopedia of Philosophy [Spring 2002 Edition], Edward N. Zalta [ed.]):
12. Reuter, Martina. 2007. "Catharine Macaulay and Mary Wollstonecraft on the Will", In *Virtue, Liberty and Toleration, Political Ideas of European Women 1400–1800*, edited by J. Broad and K. Green. Dordrecht: Springer, p. 64
13. Macaulay, Catharine, 1783. *A Treatise on the Immutability of Moral Truth*, London: A. Hamilton, p. 25; Hill, Bridget, 1992, *The Republican Virago: The Life and Times of Catharine Macaulay, Historian*. Oxford: Clarendon Press, p. 57
14. Macaulay, Catharine, 1778. *History of England from the Revolution to the Present Time in a Series of Letters to a Friend*, Bath: R. Cruttwell, p. 10; Macaulay, Catharine, 1775. *Address to the People of England, Scotland, and Ireland on the Present Important Crisis of Affairs*. London: Dilly, p. 29, p. 14
15. Чудинов А.В. Размышления англичан о Французской революции: Э. Бёрк, Дж. Макинтош, У. Годвин. М.: Памятники исторической мысли, 1996, стр. 26
16. Robert Eccleshall, *English Conservatism since the Restoration* [London: Unwin Hyman, 1990], p. 18
17. Cone, Carl B. *Burke and the Nature of Politics* (2 vols, 1957, 1964), a detailed modern biography of Burke; somewhat uncritical and sometimes superficial regarding politics, p. 39
18. Lock, F. P. *Edmund Burke*. Volume I: 1730–1784 (Clarendon Press, 1999), p. 28
19. Burke, Edmund, *The Writings and Speeches of Edmund Burke* [9 vol 1981– ] vol 1; vol 2; vol 6 India: *The Launching of the Hastings Impeachment, 1786–1788*, p. 35
20. Burke, Edmund, *The Writings and Speeches of Edmund Burke* [9 vol 1981– ] vol 1; vol 2; vol 6 India: *The Launching of the Hastings Impeachment, 1786–1788*, p. 49
21. Macaulay, Catharine, 1775. *Address to the People of England, Scotland, and Ireland on the Present Important Crisis of Affairs*. London: Dilly, p. 19
22. Բրիտանական պառլամենտի կողմից 1765թ. ընդունված փաստաթուղթ: [Morgan, Edmund S. and Morgan, Helen M. *The Stamp Act Crisis: Prologue to Revolution*. (1963), "The Stamp Act of 1765 – A Serendipitous Find" by Hermann Ivester in the *Revenue Journal*, the Revenue Society, Vol. XX, No.3, December 2009, pp. 87–89.]
23. Բրիտանական պառլամենտի կողմից 1774թ. ընդունված առևտրային փաստաթուղթ, որը օրենք դարձավ 1774թ. մարտի 31-ին, որի հիմնական նպատակն էր ապահովել Մեծ Բրիտանիայի իրավասությունները ամերիկյան իր դոմինիոնների նկատմամբ: [Frothingham, *Rise of the Republic* [Boston, 1872]; Halsey, *Boston Port Bill* (New York, 1904):
24. [http://www.specific-claims-law.com/index.php?option=com\\_content&view=article&id=12%3Aroyal-proclamation-1763&catid=5&Itemid=8](http://www.specific-claims-law.com/index.php?option=com_content&view=article&id=12%3Aroyal-proclamation-1763&catid=5&Itemid=8)
25. Hay, Carla H. 1994, "Catharine Macaulay and the American Revolution." *The Historian*, 56(2), p. 16
26. Macaulay, Catharine, 1775. *Address to the People of England, Scotland, and Ireland on the Present Important Crisis of Affairs*. London: Dilly, p. 21
27. *Ibid.*, p. 28

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Քեթրին Մաքաուլեյ. «Դիմում Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի  
ժողովուրդների ներկայիս կարևոր հարցերի վերաբերյալ»  
Էլյա Դիասյան

Իր «Դիմում Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի ժողովուրդների ներկայիս կարևոր հարցերի վերաբերյալ» գրքում Քեթրին Մաքաուլեյը ներկայացրել է կայսրության կառավարման ձևի և գաղութային քաղաքականության բացահայտման վերաբերյալ վերլուծությունները:

Հեղինակը մեկնաբանել է Բրիտանական կայսրության գաղութային քաղաքականությունը: Միաժամանակ նա փորձում է բացատրել իր համաքաղաքացիներին, որ այս տիպի կառավարությունը կարող է բազմաթիվ բացասական հետևանքներ ունենալ ամբողջ կայսրության համար:

SUMMARY

**Catharine Macaulay, *Address to the People of England, Scotland, and Ireland on the Present Important Crisis of Affairs*  
Elya Ghiasyan**

**Keywords:** *Colonial politics, Republic, Democratic System, Freedom, Constitution*

In her book «*Address to the People of England, Scotland, and Ireland on the Present Important Crisis of Affairs*» Catharine Macaulay submitted the analyses of the form of the government and revealed the colonial politics of the empire.

The author demonstrated the colonial politics of the British Empire. Simultaneously, she was trying to explain to her citizens that this particular kind of government can have many negative consequences for the whole Empire.

РЕЗЮМЕ

**Катарина Маколей, «Обращение к народу Англии, Шотландии и Ирландии о  
нынешнем кризисе важных дел»(1775)  
Эля Гиасян**

**Ключевые слова:** *колониальная политика, республика, демократическая система, свобода, конституция*

В своей книге «*Обращение к народу Англии, Шотландии и Ирландии о нынешнем кризисе важных дел*» Катарина Макаулей показывает анализы, касающиеся формы правления в Британии и колониальную политику правящего класса.

Автор показывает колониальную политику Британской империи. В то же время она пытается объяснить своим согражданам, что этот тип госуправления может иметь ряд негативных последствий для всей империи.

ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ԶԵՎԱԶԱՓՈՒՄ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ  
ԳՆԱՀԱՏՈՒՄ\*

Հայկ Ղուլյան

*Քանայի բառեր՝ անվտանգություն, զինված ուժեր, հակամարտություն, կողմ, բանակցություններ, ինքնորոշում, տարածքային ամբողջականություն, խաղաղություն, միջնորդություն:*

Հայ ժողովրդի անվտանգության համար կենսական նշանակություն ունեցող Ղարաբաղյան հիմնահարցն աչքի է ընկնում հակամարտությանը ներգրավված սուբյեկտների բազմազանությամբ, կարգավորման դինամիկայի վրա ազդող ներքին և արտաքին գործոնների բարդ համակցությամբ, տարածաշրջանում անընդհատ և արագ փոփոխվող աշխարհաքաղաքական վերադասավորումներով, որոնք, իրենց հերթին, որոշակիորեն ազդում են հակամարտության վրա՝ կարգավորման տեսանկյունից այն դարձնելով ավելի բարդ ու տևական:

Միջազգային հանրության անունից Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ փաստացի լիազորված էր զբաղվել ԵԱՀԽ-ն, որը մինչ այդ նման գործունեությամբ չէր զբաղվել և այդ ժամանակ կարող էր օգտագործել Ղարաբաղյան հակամարտությունը՝ նմանատիպ հիմնախնդիրների լուծման բնագավառում իր հեղինակությունը ապացուցելու նպատակով: ԵԱՀԽ-ի գործունեությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում ընդունված է կապել Մինսկի խմբի գործունեության հետ, որը տարբեր գնահատականների է արժանացել: Մինսկի խումբը ստեղծվեց այնպիսի պայմաններում, երբ Իրանի նախաձեռնած միջնորդական առաքելությունն արդեն որոշակի առաջընթաց էր արձանագրել:

Որպես Արցախի Հանրապետության բնակչության անվտանգության երաշխավորի՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մեջ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ և արդար կարգավորման խնդիրն ունի առանցքային նշանակություն: Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն աջակցելու առաքելությունը կողմերի համաձայնությամբ վստահվել է ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ Ռուսաստանի, ԱՄՆ և Ֆրանսիայի համանախագահությամբ: Հայաստանի Հանրապետությունը կարևորում է խնդրի կարգավորման շուրջ ծավալվող քննարկումների մասնակիցների փորձագիտական բարձր մակարդակը: Հայաստանի Հանրապետությունը նպատակահարմար չի համարում խնդրի կարգավորման վերաբերյալ այլ կառույցների կողմից հայտարարությունների քննարկումն ու ընդունումը, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների ներգրավումը կարգավորման գործընթացներին: Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է հակամարտության կարգավորմանը միայն խաղաղ և փոխզիջումային ճանապարհով: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման իրավական հիմքերն անխոցելի են: Մշտապես ելնելով այն սկզբունքից, որ ցանկացած վերջնական համձայնություն կամ վերջնական փաս-

\* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:



տաթուղթ պետք է ստանա նաև դարաբաղյան կողմի հավանությունը՝ Հայաստանն ընդունելի է համարում կարգավորման միայն այն տարբերակները, որոնք ուղղված կլինեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստացի գոյության անշրջելի իրողությունն ամրագրելուն [1]:

Չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում հակամարտության կարգավորման միջազգայնորեն ընդունված ձևաչափով տարվող բանակցություններին և դրանք Մինսկի գործընթացի շրջանակներում ընթանալու պայմանավորվածություններին՝ Ադրբեջանը, խեղաթուրելով հակամարտության էությունն ու հետևանքների բուն պատճառները, նաև փորձեր է ձեռնարկում հակամարտության կարգավորման մեջ ներքաշելու այլ միջազգային կազմակերպությունների ու բանակցային գործընթացը խոչընդոտող և քարոզչական նպատակներ հետապնդող զուգահեռ գործընթացներ է նախաձեռնում մասնավորապես ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայում ու Եվրոպայի խորհրդում:

Ադրբեջանի վարած ռազմատենչ ագրեսիվ քարոզչությունը ևս կասկածի տակ է դնում փոխգիշուրմային կարգավորման հասնելու Ադրբեջանի ցանկությունը, հայտարարությունները, ստանձնած հանձնառություններն ու դրանց լրջությունը: Անտեսելով զինադադարի մասին եռակողմ համաձայնությունը՝ Ադրբեջանը մինչ օրս չի դադարում գնդակոծել ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության սահմանները: Եվ պատահական չէ, որ Ադրբեջանի իշխանությունները բացահայտ մերժում են միջնորդների՝ դիպլոմատներին շփման գծից հեռացնելու և միջադեպերի հետաքննման մեխանիզմներ ստեղծելու առաջարկները, նույնիսկ հրաժարվում են 2012 թվականին Սոչիում իրենց իսկ կողմից ստորագրված հայտարարությամբ ստանձնած վստահության ամրապնդման միջոցառումներն իրագործելուց [2]: Ադրբեջանը նավթային եկամուտներից ստացված գումարները շարունակում է ուղղել ռազմական բյուջեի ավելացմանը և մեծ քանակությամբ հարձակողական սպառազինությունների ձեռքբերմանը՝ կոպտորեն ոտնահարելով անվտանգության ու ռազմաքաղաքական ոլորտի մի շարք համաձայնագրեր և պարտավորություններ:

Միս-ի ստեղծմամբ ու գործունեությամբ աշխարհի առաջատար դերակատություն ունեցող երկրները, իրենց տարակարծություններով հանդերձ, կարողացան հաստատվել բնական պաշարներով հարուստ Արևմուտքի և Արևելքի խաչմերուկներում գտնվող կասպիական տարածաշրջանում: Չնայած 1992 թվականի հունվարի 30-ին Հայաստանը և Ադրբեջանը դարձան ԵԱՀԿ-ի անդամներ և ԵԱՀԿ գործող նախագահին խնդրեցին պատվիրակություն ուղարկել տարածաշրջան՝ ԼՂՀ հիմնախնդրի լուծման ուղիներն ուսումնասիրելու նպատակով, սակայն միջազգային հանրության ներգրավմանը Ադրբեջանը հենց սկզբից բացասաբար արձագանքեց, քանզի Ղարաբաղյան խնդիրը համարում էր Ադրբեջանի ներքին գործը՝ պնդելով, թե Ադրբեջանն ինքը պետք է լուծի այդ հարցը:

Այլ էր Հայաստանի դիրքորոշումը, որը հիմնախնդրի միջազգայնացումը դիտում էր որպես դրա լուծման պարտադիր նախապայման՝ շեշտը դնելով մարդու իրավունքների պաշտպանության և ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքների վրա: Ղարաբաղյան կողմը հիմնախնդրի միջազգայնացումը դիտում էր միջոց՝ միջազգային հանրության ուշադրությունը ԼՂ-ում տիրող ողբերգական իրադարձություններին սևեռելու համար: ԼՂՀ իշխանությունները հարցի միջազգայնացմամբ փորձում էին հասնել ապաշրջափակման, արտաքին աշխարհի հետ կապի հաստատման և վերջնարդյունքում՝ անկախության հաստատման՝ հիմնվելով ՄԱԿ-ի կանոնադրությամբ ու ԵԱՀԿ-ի Հելսինկյան եզրափակիչ ակտով նախատեսված ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի վրա:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Ղարաբաղյան հակամարտության մեջ ներգրավված կողմերի դիրքորոշումների իրարամերժության պայմաններում՝ ԵԱՀԽ-ն, առանց հապաղելու, օգտագործեց առաջին իսկ հնարավորությունը և հանձն առավ հիմնախնդրի լուծման նախաձեռնությունը: 1992 թվականի փետրվարի 12-18-ը ԵԱՀԽ գործող նախագահի հանձնարարությամբ կազմակերպության պատվիրակությունն այցելեց Հայաստան, Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ, որից հետո զեկույց ներկայացրեց տարածաշրջանում ստեղծված իրավիճակի մասին [3]:

Այդ ժամանակաշրջանում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման տարբերակներ էին առաջարկել ոչ միայն միջազգային միջնորդները, այլև գիտական շրջանակների ներկայացուցիչները: Օրինակ՝ առաջարկված տարբերակներից մեկի հեղինակն է ԱՄՆ-ի պետդեսպարտամենտի նախկին աշխատակից Փոլ Գոբլը, համաձայն որի՝ Ղարաբաղը մնում էր Ադրբեջանի կազմում, իսկ Հայաստանը դեպի Ղարաբաղ ելք էր ստանում Լաչինի միջանցքով: Բայց դրա փոխարեն Ադրբեջանին էր անցնում Մեդրիի միջանցքը, և Ադրբեջանը ելք էր ստանում դեպի Նախիջևան: Այդ և նման առաջարկները չի կարելի լուրջ ընդունել, քանի որ դրանք միանշանակ անընդունելի են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի համար:

ԵԱՀԿ ղեկավարությունը և տարբեր մարմիններ իրենց մշտական ուշադրության կենտրոնում են պահել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը: Դեռևս 1992 թվականի մարտին ԵԱՀԽ-ի Հելսինկիում տեղի ունեցած Նախարարների խորհրդի նիստում ԼՂ - հակամարտության կարգավորման վերաբերյալ ընդունվեց որոշում՝ հրավիրել կոնֆերանս Մինսկում: Կոնֆերանսի նախագահ նշանակվեց Իտալիայի ներկայացուցիչ Մարիո Ռաֆայելին: Խաղաղության այդ համաժողովը, որը պետք է գումարվեր Մինսկում և հրավիրեին ԼՂ ընտրված ու այլ ներկայացուցիչներ, կոչված էր լուծումներ գտնելու հակամարտությանը: Հետագայում միջազգային հանրությունն այս կոնֆերանսի կազմակերպման տեղի անունով գործընթացն ու ընդգրկված պետություններին կոչեց Մինսկի խումբ:

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման առաջին սկզբունքը Հայաստանի և Ադրբեջանի տարածքային ամբողջականության ապահովումն էր, երկրորդ սկզբունքը՝ համաձայնագրով ամրագրված Լեռնային Ղարաբաղի այնպիսի կարգավիճակն էր, որը հիմնված կլիներ Ադրբեջանի Հանրապետության կազմում ԼՂ-ին ամենաբարձր աստիճանի ինքնավարություն ապահովող ինքնորոշման վրա: ԵԱՀԿ Գործող նախագահի հայտարարության հետ մեկտեղ լիսաբոնյան հանդիպման փաստաթղթերում ներառվեց Հայաստանի պատվիրակության հայտարարությունը, որտեղ մտահոգություն կար այն առումով, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահի հայտարարությունը չի արտացոլում Մինսկի խմբի մանդատի ոգին, ինչը ենթադրում է բանակցություններ՝ քաղաքական համաձայնության հասնելու նպատակով:

Կարգավիճակի հիմնախնդիրը քննարկման առարկա է եղել ուղիղ բանակցությունների ընթացքում, որոնք դեռ չեն ավարտվել: Նշվում է, որ գործող նախագահի հայտարարությունը կանխորոշում է ԼՂ կարգավիճակը, ինչը հակասության մեջ է մտնում ԵԱՀԿ Նախարարների խորհրդի 1992 թվականի որոշման հետ, որը այդ հարցը վերապահել էր ԵԱՀԿ Մինսկի կոնֆերանսին: Հայկական կողմը համոզմունք է հայտնում, որ հիմնախնդրի լուծումը կարող է գտնվել միջազգային իրավունքի և ԵԱՀԿ հելսինկյան Եզրափակիչ ակտում ամրագրված սկզբունքների հիման վրա ու, նախևառաջ, ազգերի ինքնորոշման սկզբունքի: ԵԱՀԿ լիսաբոնյան գազաթաժողովում հակամարտության կարգավորման այդ բանաձևն իր հիմքում ուներ նաև հիմնախնդրի բնույթի մասին անբացահայտ կանխադրույթներ, քանի որ ԵԱՀԿ-ն, առանց խնդրի պատմաքաղաքական

և իրավական հիմքերին մանրամասն ծանոթանալու, Լեռնային Ղարաբաղը դիտում էր Ադրբեջանին պատկանող տարածք, ինչը միանշանակ անընդունելի մոտեցում էր [4]:

Մեջբերման ձևով հարկ է նաև փաստել, որ Ադրբեջանի և Վրաստանի ներկայիս Սահմանադրությունները չեն ներառում էթնիկական փոքրամասնությունների ինքնորոշման օրենսդրական նորմեր: Իրենց սահմանադրական օրենքներով այդ պետությունները միանման են և նախկին խորհրդային ինքնավար հանրապետությունների՝ Աբխազիայի, Հարավային Օսեթիայի (Վրաստանի Սահմանադրության 1-ին գլխի 2-րդ - հոդվածը [5]) և Լեռնային Ղարաբաղի (Ադրբեջանական Հանրապետության Սահմանադրության «Պետության հիմք» վերտառությամբ 2-րդ գլխի 7-րդ և 11-րդ հոդվածները [6]) բնակչությանը գործնականում թույլ չեն տալիս բնակչության շրջանում հայտ ներկայացնելու՝ իր ներկայիս բնակության վայրերում ինքնորոշման հանրաքվեներ անցկացնելու վերաբերյալ: Հայաստանի դիրքորոշումները ամենապարզ կերպով կարելի է ներկայացնել, որ հակամարտության կարգավորումը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմք պետք է հանդիսանա Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման ձանաչումը, ԼՂ-ն Հայաստանի հետ պետք է ունենա հայկական կողմի իրավագործության տակ գտնվող անխափան ցամաքային կապ, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգությունը պետք է միջազգայնորեն երաշխավորված լինի: Այս սկզբունքների ընդունումն ու պայմանագրային ամրագրումը հնարավորություն կընձեռնեն հասնելու հիմնախնդրի համալիր կարգավորմանը:

Կարևոր պատմական նշանակություն ունեն 1994թ. դեկտեմբերի 5-6-ը կայացած ԵԱՀԽ Բուդապեշտի գագաթաժողովը, որի ժամանակ ԵԱՀԽ-ն վերջնականապես կազմավորել է ԵԱՀԿ-ի, և որտեղ առաջին անգամ սկսեց քննարկվել ԵԱՀԿ սեփական խաղաղարար ուժերի ստեղծման հարցը՝ Եվրոպայում և հետխորհրդային տարածքում հակամարտությունների գոտիներում խաղաղարար գործառույթներ իրականացնելու համար [7]: Գագաթաժողովի եզրակիսիչ փաստաթղթի երկրորդ՝ «տարածաշրջանային խնդիրներ» բաժնում անդրադարձ կար Ղարաբաղյան հակամարտությանը, որի կետերից մեկով նախատեսվում էր հակամարտության գոտում ԵԱՀԽ բազմազգ ուժեր ծավալել: Վիեննայում պետք է ստեղծվեր Բարձր մակարդակի ծրագրավորման խումբ, որի վրա էին դրվելու խաղաղապահ ուժերի կազմավորման և ղեկավարման պարտականությունները [8]: Նախատեսվում էր ստեղծել ԵԱՀԽ հավաքական միջազգային ուժեր, որոնք ՄԱԿ-ի Մև համապատասխան բանաձևի ընդունումից և հակամարտող կողմերի համաձայնությունից հետո պետք է տեղակայվեին հակամարտության գոտում: Օրակարգից հանվեց ԱՊՀ խաղաղապահ ուժեր տեղակայելու ռուսական առաջարկը:

Փաստացի, Արցախյան հիմնախնդրի լուծումը երկակի տպավորություն էր թողնում: Մի կողմից՝ լուծման առաջարկվող նախագծում կոշտ ձևով հաստատվում էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, սակայն Հայաստանը կիրառեց իր վետոյի իրավունքը՝ թույլ չտալով Բուդապեշտի գագաթաժողովի Ամփոփիչ փաստաթղթի տեքստի մեջ ներառել այս բացահայտ հակահայկական կետը, քանի որ ԵԱՀԿ-ի ղեկավարությունը նման ձևակերպմամբ փորձում էր Արցախը տարածքային առումով ամրագրել Ադրբեջանին: Մյուս կողմից՝ դա անուղղակիորեն հաստատեց այն, որ Արցախյան հիմնախնդրի կարգավորման առանցքային հարցը, ընդհանուր առմամբ, ԼՂՀ-ի պետական-քաղաքական վերջնական կարգավիճակի հարցն է: Մեկ այլ կողմից ԵԱՀԿ-ի Բուդապեշտի գագաթաժողովի Ամփոփիչ փաստաթղթում Արևմուտքը և Ռուսաստանը փաստորեն ընդունեցին, որ որպես հակամարտության երրորդ, առանձին

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

կողմ հանդես է գալիս հենց ԼՂ-ն: Այսինքն՝ Ստեփանակերտին պաշտոնապես ամրագրվեց հակամարտության մեջ հայտնի ռազմաիրավական կարգավիճակը, ինչը հանրապետությանը և նրա ղեկավարությանը, ինչպես նաև Հայաստանին հնարավորություն տվեց Ադրբեջանի հետ իրավահավասարության սպասումներ ունենալու համենայն դեպս կարգավորման ռազմատեխնիկական և ռազմաքաղաքական հարցերի շուրջ և որոնք հետագայում ամբողջովին արդարացան՝ ԱՊՀ անդամ երկրների Միջխորհրդարանական Ասամբլեայի շրջանակներում (1994թ. մայիս) Բիշքեկի խաղաղության արձանագրությունը կազմելու և ստորագրելու ժամանակ:

Բուդապեշտի գազաթաժողովի արդյունքում մասնակիցները եկան այն եզրակացության, որ Ռուսաստանը հատուկ դերակատարություն ունի Արցախ-ադրբեջանական հակամարտության կարգավորման հարցում, ուստի Մինսկի գործընթացում նպատակահարմար է համանախագահների ինստիտուտ ստեղծել, որոնցից մեկը, ինչպես և նախկինում, կներկայացնի ԵԱՀԿ-ն (մշտական ռոտացիայի սկզբունքի հիման վրա), մյուսը՝ ՌԴ-ն, ընդ որում մշտական հիմունքներով, եթե նրա փոփոխությունը չցանկանա Մոսկվան: Այսպես՝ Բուդապեշտից անմիջապես հետո ռուսական համանախագահներ նշանակվեցին ԵԱՀԿ ՄԿ-ում՝ Վ.Լոգինսկին, իսկ ԵԱՀԿ ՄԽ-ում՝ Վ. Կազիմիրովը: Ըստ էության, հենց սա էլ հանդիսացավ ԵԱՀԿ-ի շրջանակներում Արցախյան հիմնախնդրի կարգավորման խաղաղարար գործընթացի գլխավոր արդյունքը 1992-1994թթ. ընթացքում:

1995թ. հունվարին ձևավորվեց Մինսկի խմբի համանախագահությունը, որով մեղմվեցին հակասությունները Ռուսաստանի և Արևմուտքի միջև: Պրահայում նույն թվականի մարտի 30-31-ը ԵԱՀԿ ավագ պաշտոնատար անձանց հանդիպմանը վերահաստատվեց, որ Լեռնային Ղարաբաղը հակամարտության կողմ է, բանակցությունների բոլոր փուլերի, ներառյալ Մինսկի խորհրդաժողովի մասնակիցը: Սակայն, Ադրբեջանը չէր ընդունում այդ ձևաչափը և պնդում էր, որ կարգավորման բանակցություններում պետք է ներկայացված լինեն երկու Հայաստան և Ադրբեջան, կամ չորս կողմեր՝ Հայաստան, Ադրբեջան, ԼՂ հայկական համայնք, ԼՂ ադրբեջանական համայնք:

Նկատենք, որ համաշխարհային այս երեք բևեռների ներկայացվածությունը Մինսկի խմբում ունեցել է նաև իր բացասական ազդեցությունը դարաքաղյան հարցի կարգավորման գործընթացի վրա, քանի որ շատ դեպքերում նրանց դիրքորոշումների չհամընկնելու և անհամապատասխանության հետևանքով գործընթացում որևէ առաջընթաց չի նկատվել:

1997թ. հուլիսին ԵԱՀԿ ՄԽ համանախագահների կողմից առաջարկվեց ԼՂ հարցի կարգավորման փաթեթային տարբերակը, որն Ադրբեջանը մերժեց: Բաքուն պնդում էր հակամարտության փուլային լուծման տարբերակը, որով նախատեսվում էր սկզբից ետ քաշել ԼՂ պաշտպանական բանակի ուժերը բուֆերային գոտուց և հետո միայն համաձայնություն տալ հանրաքվեի անցկացմանը ԼՂ կարգավիճակի վերաբերյալ [9]: Նույն թվականի դեկտեմբերի 2-ին համանախագահներն առաջարկեցին ԼՂ կարգավորման փուլային տարբերակը, որը, սակայն, մերժեց ԼՂ-ն: Մերժումը պայմանավորված էր նրանով, որ փուլային տարբերակը չէր պատասխանում գլխավոր հարցին՝ ինչպիսին պետք է լինի ԼՂ վերջնական քաղաքական կարգավիճակը: 1995-1997թթ. ժամանակահատվածում պարզ դարձավ, որ ԵԱՀԿ ՄԽ-ի գործունեության պրակտիկայում գոյություն ունի ընդհանուր առմամբ իրար նման, սակայն զաղափարապես միմյանցից տարբերվող կարգավորման երկու տարբերակ՝ «փուլային» և «փաթեթային»: Ռուսաստանյան ղեկավարության դիրքորոշումը հիմնվում էր կարգավորման «փաթեթային» տարբերակի վրա, ուստի, ընդհանուր առմամբ, պետք է ընդունել, որ ռուսա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

կան կողմը 1995-1996թթ. էլ չի շեղվել այս դիրքորոշումից, իսկ Արևմուտքի երկրները ԱՄՆ-ի գլխավորությամբ պնդում էին կարգավորման «փուլային» տարբերակը: Նկատի առնելով այն, որ դեռևս ԵԱՀԿ Բուդապեշտի գազաթափոցովում ընդունվեց, որ կարգավորման հիմնական հարցը հենց ԼՂՀ կարգավիճակի խնդիրն է, ապա պետք է ընդունել նաև, որ Մոսկվայի դիրքորոշումն այն է, որ հակամարտության կողմերը պետք է համաձայնության գան հատկապես հենց այս հարցի շուրջ: Դրանից հետո միայն ԵԱՀԿ ՄԽ-ի համանախագահները կամրագրեն ձեռք բերված համաձայնությունները և հանդես կգան որպես դրանց իրականացման երաշխավորներ, այդ թվում նաև հակամարտող գործերի փոխադարձ հեռացման, իրենց մշտական բնակության վայրերը ժամանակավոր տեղափոխված անձանց ու փախստականների հավանական վերադարձի և այլ հարցերի շուրջ:

«Փուլային» տարբերակը նախ ենթադրում էր կարգավորման երկրորդական, «տեխնիկական» միջոցառումների իրականացում՝ գործերի հեռացում, նրանց միջև խաղաղարար միջազգային ուժերի տեղակայում, հակամարտության գոտու ապառազմականացում, ժամանակավոր տեղափոխվածների ու փախստականների վերադարձ և այլն: Ընդ որում, երբ խոսք էր գնում ժամանակավոր տեղափոխվածների ու փախստականների մասին, ապա ԵԱՀԿ ՄԽ-ի առաջարկություններում ինչ-որ պատճառով տեղ էին գտնում միայն ադրբեջանական կողմի պահանջները:

Կարևորվում է նաև մասնագետների կողմից Ղարաբաղյան հակամարտության համեմատականների անցկացումը Կոստվոյի հակամարտության հետ: Այդ համեմատականների ուսումնասիրությունը նաև կարող է հետաքրքրական լինել այն փորձագետների և քաղաքական գործիչների համար, որոնք փորձում են նմանություններ գտնել Հարավային Կոստվոյում հակամարտային իրավիճակների և Կոստվոյում ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշումների լույսի ներքո ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի կողմից Կոստվոյում ՄԱԿ-ի ժամանակավոր առաքելության ու ԵԱՀԿ-ի առաքելության միջոցով գործարկված ինքնորոշումային գործընթացների միջև [10]: Ելնելով այն մտտեցումից, որ համաշխարհային արժեհամակարգում «<ազգերի ինքնորոշման իրավունքը>> իր բարձրագույն տեղն ունի, վերոնշյալ օրինակով կարելի է և միջազգային հանրությունը պետք է նախաձեռնի Ղարաբաղյան և նմանօրինակ մյուս հակամարտությունների արդարացի կարգավորման կառուցակարգերի առաջարկում կողմերին ու իրագործումը:

Այստեղ հարկ է ընդգծել, որ հիմնախնդրի կարգավորման ռազմաքաղաքական գիտավերլուծական հենքի ստեղծմանն ուղղված հայ քաղաքագետների ջանքերը հիմնականում հանգում են այն հետևության, որ Կոստվոյում և նմանատիպ մյուս հակամարտություններում ՄԱԿ-ի և ԵԱՀԿ ժամանակավոր առաքելությունների դասերի ու փորձի օգտագործմամբ կարելի է լուծել նաև Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունները՝ իհարկե, որպես խնդրի հարթման ճանապարհ ընտրելով ինքնորոշման իրավունքի արձանագրումը այդ ժողովուրդների շրջանում անցկացվող հանրաքվեների միջոցով [11]:

Ըստ էության, Ադրբեջանը տապալում է նաև կողմերի միջև վստահության անրապնդմանն ուղղված տնտեսական, քաղաքական, ռազմական ու մարդասիրական բնույթի բոլոր նախաձեռնությունները: Մասնավորապես, Ադրբեջանը մերժում է տարածաշրջանային համագործակցություն ծավալելու հայկական կողմի և շփման գծից դիպուկահարների հետքաշման Մինսկի խմբի համանախագահների կատարած առաջարկությունները: Եվ իհարկե, որպես եզրահանգում ընդգծվում է, որ Ղարաբաղյան հակամարտության մասին խոսելիս հարկավոր է հակամարտությունը դիտարկել տարածաշրջանային և միջազգային զարգացումների շրջանակներում: Անհրաժեշտ է նշել

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

նաև, որ, ընդհանուր առմամբ, Արևմուտքը ձգտում է Հարավային Կովկասի տարածաշրջանում ձևավորելու այնպիսի հաստատություններ և ներդնել այնպիսի համակարգ, որը կնպաստի տվյալ տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացների հաստատուն զարգացմանը: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն այսօր տարածաշրջանի ամենակարևոր նման գործոններից մեկն է, որը կարող է ապակայունացնել ողջ տարածաշրջանը, չնայած հակամարտության հարցում status-quo-ի ցանկացած փոփոխություն կարող է դրականորեն ազդել հայ-թուրքական հարաբերությունների վրա, որն էլ իր հերթին լավ հնարավորություններ կստեղծի Հարավային Կովկասում ինտեգրացիոն ծրագրերի համար:

Որպես ամփոփում հարկ է ընդգծել, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարներն առավել ցայտուն կարելի է բացահայտել վերլուծության երկու չափանիշների՝ բանակցային գործընթացի հիմնական բաղադրատարրերի և կարգավորման ձևաչափի չափանիշների կիրառման օգնությամբ: Բնականաբար, բանակցային գործընթացի բաղադրատարրերը կարող են շատ բազմազան լինել՝ ընդգրկելով ինչպես բանակցային հիմնական կողմերի մոտեցումների ճշգրտման, այնպես էլ բանակցությունների նախապատրաստման, կազմակերպման և անմիջական վարման հիմնահարցերը:

Ինչ վերաբերում է կարգավիճակի հիմնահարցին, ապա Ղարաբաղյան հակամարտության կարգավորման առանցքային հիմնահարցերից մեկն է մնում ԼՂ կարգավիճակի որոշման հարցը: Ըստ առաջին միջնորդական նախաձեռնությունների՝ մասնավորապես ԵԱՀԿ Մինսկի խմբի մանդատի շրջանակներում ենթադրվում էր ԼՂ կարգավիճակի հարցը քննարկել Մինսկում հրավիրվելիք Ղարաբաղյան կարգավորման խաղաղ բանակցությունների ժամանակ: Այնպես որ, իրական բանակցություններից առաջ ի վերուստ Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակը կանխորոշելու յուրաքանչյուր փորձ հակասում է ԵԱՀԿ նախնական մանդատի տառին և ոգուն: Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում բանակցային բաղադրատարրերից մեկի՝ ԼՂ կարգավիճակի առաջնայնության հարցն ունեցել է որոշակի վայրիվերումներ՝ մերթընդմերթ հանդիսանալով կարգավորման առանցքային հիմնահարցը՝ միաժամանակ նաև որոշ դեպքերում իր կարևորության տեղը զիջելով կարգավորման այլ բաղադրատարրերին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ Նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007, 3-րդ գլուխը
2. ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը ՀՀ պաշտպանության նախարարությունում տեղի ունեցած ընդլայնված նիստում, 15.01.2013թ., <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/01/15/President-Serzh-Sargsyan-speech-session-Ministry-of-Defense/>
3. Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թվականներին, Եր., 2004, էջ 54:
4. Մանասյան Ա., Ղևոնդյան Ա., Լեռնային Ղարաբաղ. ինչպես է դա եղել, Եր., 2010թ., էջ 155-156:
5. The Constitution of Georgia, <http://members.tripod.com/ggdavid/georgia/const8.htm>
6. The Constitution of Georgia Azerbaijan Republic, [http://confinder.richmond.edu/admin/docs/local\\_azerbaijan.pdf](http://confinder.richmond.edu/admin/docs/local_azerbaijan.pdf)

7. Շաքարյանց Ս., Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, Եր., 2009, էջ 211:
8. Հակոբյան Թ., Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2011, էջ 261:
9. Խաչատրյան Ա., Ղարաբաղյան հակամարտությունը. ԵԱՀԿ Մինսկի խումբ, Եր., 2011, էջ 54:
10. Հարավային Կովկասում էթնիկական հակամարտությունները. տարածայնություններ և տարածաշրջանային հակասությունների բանալին // Քոթանջյան Հ.Ս., Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 663:
11. Հարավային Կովկասի պետությունների ինտեգրումը եվրատլանտյան հանրությանը. մոտեցումների առկա հակասությունների հաղթահարում // Քոթանջյան Հ.Ս., Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 681, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 681:

### **ԱՄՓՈՓՈՒԳԻՐ**

#### **Մինսկի խմբի ձևաչափում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման որոշ մոտեցումների ու տարբերակների գնահատում Հայկ Ղուլյան**

Վերջին շրջանում ԼՂ հակամարտության բանակցային գործընթացը շարունակում է մնալ ակտիվ մակարդակի վրա, ինչը, սակայն, չի հանգեցնում հակամարտության խաղաղ կարգավորման հարցում էական առաջընթացի: Հայկական կողմը շարունակում է միջնորդական գործունեության նախապատվությունը տալ ԵԱՀԿ Մինսկի խմբին: Ադրբեջանական կողմի մերժողական դիրքորոշման պատճառով միջնորդական բոլոր նախաձեռնությունները չեն հանգեցնում լուրջ գործնական քայլերի արձանագրման: Եվրոպական արժեհամակարգում «ազատությունն» իր բարձրագույն տեղն ունի, ինչը կարող է հանդիսանալ ԼՂ հակամարտության կարգավորման բանալին:

### **РЕЗЮМЕ**

#### **Оценка некоторых подходов и вариантов регулирования Карабахского конфликта в формате Минской группы Гайк Гулян**

***Ключевые слова:** безопасность, вооруженные силы, конфликт, сторона, переговоры, самоопределение, территориальная целостность, мир, посредничество.*

В последнее время переговорный процесс Нагорно-карабахского конфликта продолжает оставаться на активном уровне, которая, однако, не приводит к существенному прогрессу в мирном регулировании конфликта. Армянская сторона продолжает уделять приоритетное внимание посреднической деятельности Минской группы ОБСЕ. Из-за негативного отношения азербайджанской стороны все посреднические инициативы не приводят к зафиксированию практических результатов. В европейской ценностной системе «свобода» имеет особенное место, которая послужит основным ключом к регулированию Нагорно-карабахского конфликта.

**SUMMARY**

**Some Approaches and variants of the Karabakh Conflict Settlement within the framework of the OSCE Minsk group**  
**Hayk Ghulyan**

**Keywords:** *security, military forces, conflict, side, negotiations, self-determination, territorial integrity, peace, intermediary mission.*

The process of the Nagorno-Karabakh conflict regulation has remained in the active level, which, however, does not lead to substantial progress in the peace process. The Armenian part keeps giving priority to the intermediary activity of the OSCE Minsk group. Because of the negative position of the Azerbaijan all intermediary initiatives don't lead to serious practical results. The freedom has the main place in the European value system, which can be the key for the regulation of the Nagorno-Karabakh conflict.



**ԳՂՀ ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՐՈ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԲՐԱՆՂԵՆՔՈՒՐԳԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ\***

**Վարդան Մակիչյան**

**Բանալի բառեր`** Հայոց ցեղասպանություն, Գերմանիայի հայկական համայնք, հայամետ ուժեր, թուրքամետ ուժեր, հայկական լոբբինգ, Բրանդենբուրգի երկրամաս, հայկական սփյուռք:

*Հայկական սփյուռքի համար Հայոց ցեղասպանությունը թերևս դասվում է համայնքային ամենակարևոր թեման: Աշխարհասփյուռ հայությունը բավականին մեծ ռեսուրսներ և ջանքեր է գործադրում իրենց համայնքներում այդ հարցի արծարծման և ձանաչման համար: Այդ հարցում բացառություն չեն կազմում Գերմանիայի Դաշնային Հանրապետության հայ համայնքը ու հայամետ ուժերը: Նրանք դեռ հարցի ստեղծման օրվանից սկսած գործունեություն են ծավալում Գերմանիայում և փորձում են ավելի լայն շրջանակներին իրազեկել դրա վերաբերյալ:*

*Հարցը հանրային դարձնելու վերաբերյալ իրականացվել են տարբեր միջոցառումներ և գործողություններ, բայց ամենաարդյունավետներից էին հարցի արծարծումը դպրոցական և բուհական միջավայրում:*

*Իհարկե, Գերմանիայի տարբեր ուսումնական հաստատություններին կից կան կառույցներ և անհատներ, որոնք զբաղվում են այդ խնդրով, սակայն պետական մակարդակում այդ հարցի ներառումը գտնվում էր պասիվ վիճակում:*

*Հայոց ցեղասպանության մասին հիշատակումը, ԳՂՀ կրթության ոլորտի պետական համակարգում, ներառվեց 2002թ. Բրանդենբուրգի երկրամասի միջնակարգ դպրոցների ուսումնական ծրագրում, այն էլ միայն մեկ նախադասությամբ ու փակագծերի մեջ[1]:*

*Աշակերտները «Պատերազմ, տեխնիկա և քաղաքացիական հասարակություն» առարկայի շրջանակներում պետք է տեղեկանային Ցեղասպանության մասին հետևյալ նախադասությամբ. «Ընաջնջում/Ցեղասպանություն (ինչպես, օրինակ, Փոքր Ասիայի հայ բնակչության Ցեղասպանությունը)» [2]:*

*Այս ամենն իրականացվել էր Շտեֆան Ռայխեի կողմից: Նա եղել էր Բրանդենբուրգի երկրամասի կրթության, սպորտի և երիտասարդության հարցերի գծով նախարարը[3]: Ռայխեն սերտ կապերի մեջ էր գտնվում հայամետ բազմաթիվ գործիչների հետ:*

*Շտեֆան Ռայխեն իր պաշտոնավարման տարիներին հաջողությամբ դիմակայում էր թուրքական կողմի ճնշումներին: Նա դեմ էր Բրանդենբուրգի տարածաշրջանի ուսումնական պլանից Ցեղասպանության հիշատակման կրճատմանը: Թուրքական կողմն այդ ուղղությամբ ակտիվ աշխատանքներ սկսեց իրականացնել Ռայխեի՝ պաշտոնից հրաժարվելուց անմիջապես հետո[4]:*

*2002թ. Բրանդենբուրգի երկրամասի վարչապետ նշանակվեց Մաթթիաս Պլատցեկը[5], ով պաշտոնավարման սկզբնական շրջանում հայանպաստ աշխատանքներ էր իրականացնում: Սակայն 2005թ. հունվարին տեղի տվեց թուրքական սպառնալիքներին (խոսքը վերաբերում է սպանության սպառնալիքներին, որին նա առերեսվել էր*

\* Հոդվածն ընդունվել է 18.02.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Է.Գ.Մինասյանը:

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

շուրջ 2 տարի), և գնաց թուրքերի հանդեպ զիջողական քայլերի[6]:

2005թ. հունվարի առաջին կեսին՝ ընթրիքի ժամանակ, թուրքական գլխավոր հյուպատոս Այդին Դուռուսայր Բրանդենբուրգի վարչապետ Մաթթիաս Պլատցեկից և նրա ենթակայության տակ գտնվող կրթության, սպորտի և երիտասարդության հարցերով նախարար Հոլգեր Ռուպրեշտից պահանջեց հանել Հայոց Ցեղասպանության վերաբերյալ նախադասությունը տարածաշրջանի դպրոցական ուսումնական ծրագրից: Նա այդ ամենը պատճառաբանում էր որ Բրանդենբուրգում թուրքերի հանդեպ իշխում էր անելության մթնոլորտ[7]:

Ի վերջո Պլատցեկը որոշում ընդունեց Ցեղասպանության մասին հատվածը հանել դասագրքերից, որը լուրջ դժգոհություններ առաջ բերեց իրենց ֆրակցիայում: Ֆրակցիայի գլխավոր քարտուղար Սվին Պետքն ընդդիմացավ այդ որոշմանը դեմ և մեղադրեց Պլատցեկին՝ թուրքական կողմի ճնշումներին տեղի տալու համար: Նա այդ որոշումը բնորոշեց որպես «անընդունելի» քայլ և մերժեց ուսումնական ծրագրից հանել Ցեղասպանության մասին հատվածը[8]:

Որոշումը, ի վերջո, կյանքի կոչվեց «Դպրոց և մամուլ դաշնային ինստիտուտի» (LISUM) կողմից՝ կրթության նախարարության հանձնարարականով: Պաշտոնապես այդ ամենը հիմնավորվեց այն դիրքորոշմամբ, որ այնտեղ շահարկվում էր միայն Հայոց ցեղասպանության թեման[9]:

Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը դեպքերի նման ընթացքը բնորոշեց որպես «խայտառակություն» և Բրանդենբուրգի կառավարությունից պահանջեց այդ որոշումը ենթարկել սրբագրության[10]: ԳԿԽ-ն փորձում էր լրատվամիջոցների միջոցով հասարակայնացնել այդ երևույթը: Նրա նախաձեռնությունը օժանդակության արժանացավ մի շարք լրատվամիջոցների կողմից:

Կոնֆլիկտի մեջ ներառվեց և ուսումնական ծրագրից Ցեղասպանության վերաբերյալ հատվածի դուրս մղման դեմ արտահայտվեց նաև ԳԴՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Կարինե Ղազինյանը: Նա 2005թ. փետրվարի 8-ին Պոտսդամում հանդիպեց Պլատցեկին և կոչ արեց աշխատանքներ իրականացնել այն ուսումնական ծրագրում կրկին ներառելու ուղղությամբ: ՀՀ դեսպանի դիվանագիտական հմտությունների և բանակցելու բարձր կարողությունների շնորհիվ Պլատցեկ համաձայնեց նորից Ցեղասպանության թեման արդեն նոր ուսումնական տարվանից կրկին ներառել Բրանդենբուրգի դպրոցական ուսումնական ծրագրերում[11]:

Հայերի, ինչպես նաև այլ ցեղասպանությունների թեման կրկին ուսումնական ծրագրում ներառելու մտադրությունը առաջացրեց թուրքական բողոքի հերթական ակիբը: Այս անգամ հատկապես իր ակտիվությամբ աչքի ընկավ Բադեն Կյուրթենբերգի «Թուրք ակադեմիկոսների եվրոպական ասամբլեան»(EATA): Թուրքուտ Սւլանը, ով 2005թ. ընթացքում ակտիվ աշխատանքներ էր իրականացրել Բունդեսթագի կողմից իրականացված Հայոց ցեղասպանության քննարկումների դեմ, այդ առթիվ իր դժգոհությունը հայտնեց Պլատցեկին, որ իրենք խորապես ցավում են այդ որոշման կայացման համար, քանի որ այն կայացվել է հայկական դեսպանության ճնշումների և նրանց կողմից իրականացված լոբբինգի պատճառով[12]:

Պլատցեկն իր հետ հանդիպման նաև հրավիրեց ԳԿԽ-ի ղեկավարությանն ու Բեռլինի ու հարակից շրջանների Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչներին[13]:

Միջոցառման ժամանակ քննարկվեցին և խստագույնս քննադատվեցին հայկական բնակչության հանդեպ կատարված Ցեղասպանության հիշատակմանն ուղղված հակաքայլերի իրականացումը: Բացի դրանից՝ միջոցառման ներկաները կոչ արեցին Հայոց ցեղասպանությունն ուսումնական ծրագրում ներառելու ոչ միայն դաշնային, այլ

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՄԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

նաև պետական մակարդակով[14]:

Ի վերջո, Սոցիալիստների կուսակցության և Քրիստոնյա-դեմոկրատական միության կառավարական կոալիցիան միաձայն հավանություն տվեց Ցեղասպանության թեմայի` Բրանդենբուրգի տարածաշրջանի ուսումնական ծրագրում ներառման առաջարկին: Եվ արդեն 2005/2006թթ. ուսումնական տարվա սկզբից Հայոց ցեղասպանության թեման կրկին ներառվեց Բրանդենբուրգի ուսումնական ծրագրում: Բացի Հայոց ցեղասպանությունից` ծրագրում ներառվեցին նաև այլ ժողովուրդների հանդեպ կատարված ցեղասպանություններն ու բռնաճնշումները[15]:

Դպրոցներն ստացան 103 էջից կազմված մի ձեռնարկ, որը վերնագրված էր հետևյալ կերպ. «Ցեղասպանությունները և պետական իշխանությունների բռնաճնշումները 20-րդ դարում»: Առանձին բաժին կար Հայերի ցեղասպանության համար, որը կազմել էր Միհրան Դաբաղի կողմից[16]:

Դաբաղն իր հողվածում այլ հարցերի հետ միասին անդրադարձել էր նաև Թուրքիայի ժխտողական տեսակետի ներկայացմանը: Նա այնտեղ նշում էր, որ Թուրքիան միշտ նույն տեքստի միջոցով է բնորոշում Ցեղասպանությունը և դրանք կոչում է 1915/1916 թվականների իրադարձություններ, որին զոհ են գնացել միաժամանակ և` թուրքեր, և` հայեր[17]:

Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը կոչով հանդես եկավ այդ ձեռնարկի հրապարակայնացման օգտին և առաջարկեց գնել այդ ձեռնարկը և այն նվիրել իրենց երեխաների պատմության ուսուցիչներին, համալսարաններին կամ էլ քաղաքային գրադարաններին: Նրանց կարծիքով այդ փոքրիկ օգնությունը կարող է հսկայական ազդեցություն ունենալ[18]:

2009թ. Գերմանիայի թուրքական համայնքի ղեկավար Քենան Կոլատը ևս մեկ անգամ փորձ կատարեց դուրս մղել Ցեղասպանության թեման Բրանդենբուրգի ուսումնական ծրագրից: Նա նշեց, որ նմանատիպ ուսումնական ծրագիրը ձևում է գործադրում թուրք աշակերտների հոգեբանության վրա և բացասական ազդեցություն է ունենում նրանց ընդհանուր կրթական որակի վրա[19]:

Կոլատը ջանում էր հանդիպում ունենալ Պլատցեկի հետ, որպեսզի հասներ դրա դուրսմղմանը: Սակայն այդ քայլերը ապարդյուն էին և չտվեցին իրենց սպասված արդյունքը:

Այսպիսով` Ցեղասպանության 90-րդ տարելիցը Գերմանիային կանգնեցրեց 2 այլընտրանքների առջև` շարունակել հետազայում ևս լժել և դրանով ռիսկի տակ դնել այս հարցի հետ կապված «մեկուսացվածությունը» կամ շարժվել առաջ և վերագնահատել նախկինում ունեցած դիրքորոշումը: Ի վերջո հանգեցին երկրորդ տարբերակին, որն էլ գերմանահայերի համար մի քանի կարևորագույն հարցերի սկիզբ ու լուծում տվեց:

Խոսելով Հայոց ցեղասպանությունը ուսումնական պլանում ներառելու գործընթացի մասին` կարելի է ասել, որ հայամետ բոլոր ուժերը, միասնական կեցվածք ցույց տալով և համագործակցելով, կարողացան հասնել այս հաղթանակին: Իհարկե, չի կարելի առանձնացնել միայն հայերին, քանի որ այս գործի հաջողության համար մեծ ավանդ ունեն գերմանացի հայամետ գործիչները[20], և զուգահեռ այնտեղ է նշել նաև գերմանական մամուլի դերը, որն սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել Հայոց ցեղասպանության ու նրա ճանաչման գործընթացի լուսարանմանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Frankfurter Allgemeine Zeitung, Brandenburg: Völkermord an Armeniern vom Lehrplan genommen, 25.01.2005, Nr. 20, S. 33, տե՛ս նաև <http://www.faz.net/aktuell/feuilleton/brandenburg-voelkermord-an-armeniern-vom-lehrplan-genommen-1208914.html>:
2. Տե՛ս նույն տեղում:
3. Տե՛ս <http://www.spd-brandenburg.de/landesverband/geschichte-der-spd-brandenburg/personen/steffen-reiche.html>:
4. 2004թ. նրան այդ պաշտոնում փոխարինեց Հոլգեր Ռուփեյսը: Տե՛ս <http://www.holger-rupprecht.de/holger-rupprecht.html>:
5. Տե՛ս <https://www.munzinger.de/search/portrait/Matthias+Platzeck/0/19769.html>:
6. Տե՛ս Der Spiegel, UNTERRICHT: Bosphorus in Brandenburg?, 31.01.2005, Nr. 5, S.42, տե՛ս նաև <http://www.spiegel.de/spiegel/print/d-39178605.html>:
7. Տե՛ս Die Potsdamer Neueste Nachrichten, Völkermord an Armeniern gestrichen, 25.01.2005, տե՛ս նաև <http://www.pnn.de/titelseite/88279/>:
8. Տե՛ս TAZ, *Der Konsul schreibt, Brandenburg spurt*, 26.01.2005, տե՛ս նաև <http://www.taz.de/!649409/>:
9. Տե՛ս Potsdamer Neueste Nachrichten, Völkermord an Armeniern gestrichen, 25.01.2005, տե՛ս նաև <http://www.pnn.de/titelseite/88279/>:
10. Տե՛ս նույն տեղում:
11. Տե՛ս Die Welt, Armenien im Lehrplan: Platzeck rudert zurück, 08.02.2005, տե՛ս նաև <https://www.welt.de/print-welt/article423654/Armenien-im-Lehrplan-Platzeck-rudert-zurueck.html>, տե՛ս նաև՝ Der Tagesspiegel, Armenier empört über Platzeck, 05.02.2005, տե՛ս նաև <http://www.tagesspiegel.de/armenier-empoert-ueber-platzeck/582632.html>:
12. Տե՛ս <http://www.eata.info/bawue/media/ermeni/Platzeck050214.pdf>, տե՛ս նաև Der Tagesspiegel, Armenier empört über Platzeck, 05.02.2005, տե՛ս նաև <http://www.tagesspiegel.de/armenier-empoert-ueber-platzeck/582632.html>:
13. Տե՛ս Die Potsdamer Neueste Nachrichten, Armenische Diözese sucht Gespräch „Völkermord nicht aus Lehrplan streichen“, 02.02.2005, տե՛ս նաև <http://www.pnn.de/brandenburg-berlin/118554/>:
14. Տե՛ս նույն տեղում:
15. Տե՛ս Der Tagesspiegel, Völkermord kommt wieder in Lehrplan Fraktionen für Hinweis auf Genozid an Armeniern, 08.02.2005, տե՛ս նաև <http://www.tagesspiegel.de/voelkermord-kommt-wieder-in-lehrplan-fraktionen-fuer-hinweis-auf-genozid-an-armeniern/583534.html>:
16. Տե՛ս Die Potsdamer Neueste Nachrichten, Völkermord wieder auf dem Lehrplan, 08.07.2005, տե՛ս նաև <http://www.pnn.de/brandenburg-berlin/143376/>:
17. Տե՛ս Frankfurter Allgemeine Zeitung, Armenier-Genozid: Brandenburg ist belehrbar, 22.07.2005, Nr. 168, S. 31, տե՛ս նաև <http://www.faz.net/aktuell/feuilleton/debatten/armenier-genozid-brandenburg-ist-belehrbar-1250886.html>:
18. Տե՛ս <http://www.zentralrat.org/de/node/560>:
19. Տե՛ս Frankfurter Allgemeine Zeitung, Völkermord im Lehrplan: Die armen Schüler, 07.08.2005, տե՛ս նաև <http://www.faz.net/aktuell/feuilleton/voelkermord-im-lehrplan-die-armen-schueler-1838263.html>:
20. Հերման Գոլցը Հայոց ցեղասպանության թեման Բրանդենբուրգի երկրամասի ուսումնական ծրագրում ներառելու գործում բավական ակտիվ գործունեություն է ծավալել՝ օգտագործելով անձնական կապերը ու լծակներ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**ԳԴՀ հայկական համայնքի դերը Հայոց ցեղասպանությունը Բրանդենբուրգի երկրամասի ուսումնական ծրագրում ներառելու համատեքստում  
Վարդան Մակիչյան**

Հայոց ցեղասպանության մասին հիշատակումը ԳԴՀ կրթության ոլորտի պետական համակարգում ներառվեց 2002թ. Բրանդենբուրգի երկրամասի միջնակարգ դպրոցների ուսումնական ծրագրում:

Թուրքամետ ուժերը քննադատեցին ուսումնական ծրագրում նմանատիպ ներառումը՝ պատճառ բերելով այն հանգամանքը, որ նմանատիպ ուսումնական ծրագիրը ճնշում է գործադրում թուրք աշակերտների հոգեբանության և բացասական ազդեցություն է ունենում նրանց ընդհանուր կրթական որակի վրա:

2005թ. հունվարին Բրանդենբուրգում այդ հարցերով զբաղվող կառույցները թուրքական ճնշումներին տեղի տվեցին և Ցեղասպանության մասին հիշատակումը հանվեց ուսումնական ծրագրից: Սակայն, նույն թվականին, հայամետ ուժերի գործողությունների շնորհիվ հաջողվեց 2005/2006թթ. ուսումնական տարվա սկզբի համար Հայոց ցեղասպանության թեման կրկին ներառել Բրանդենբուրգի ուսումնական ծրագրում:

РЕЗЮМЕ

**Роль армянской общины ГДР в вопросе введения темы Геноцида армян в учебных программах школ Бранденбургской земли  
Вардан Макичян**

***Ключевые слова:** Геноцид армян, Армянская община в Германии, проармянские силы, протурецкие силы, армянское лобби, земля Бранденбург, армянская диаспора.*

Упоминание Геноцида армян в государственной структуре образования ГДР началось в 2002г. в образовательных программах средних школ бранденбургской земли.

Протурецкие силы ГДР подвергли критике подобное введение в образовательную программу, объясняя это тем, что последнее оказывает давление на психологию турецких школьников и отрицательно влияет на их общий уровень образования.

В январе 2005г. бранденбургские структуры, занимающиеся этими вопросами уступили турецким давлениям, и упоминание о Геноциде армян было снято из образовательной программы. Однако благодаря действиям проармянских сил на начало учебного года 2005/2006 удалось ввести тему Геноцида армян в бранденбургскую образовательную программу.

**SUMMARY**

**The Role of Armenian Community of Germany in the inclusion of the Armenian Genocide Issue in Brandenburg educational programme.  
Vardan Makichyan**

**Keywords** - The Armenian Genocide, Armenian community in Germany, pro-Armenian forces, pro-Turkish forces, Armenian lobby, Land of Brandenburg, Armenian Diaspora.

The reference about the Armenian Genocide in the state educational system in Germany was involved in the school programme in Brandenburg in 2002.

This inclusion was highly criticized by pro-Turkish actors stating that this fact of inclusion of this kind of educational program has pressure on the psychology of Turkish students and negative impact on the overall quality of their education.

In January 2005 the organizations responsible for this issue removed the remark about the Genocide from the educational programme under the pressure of the Turks. However, during the same year, due to the efforts of pro-Armenian forces the issue of Armenian Genocide was again included in the 2005-2006 educational programme of Brandenburg.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑՈՒՄ ԻՐԲԵՎ  
ԱՄԵՐԻԿԱԿԱՅ ԼՈՐԲԻՆԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ\*

Լիանա Մամյան

**Բանալի** բառեր՝ Հայոց ցեղասպանություն, լոբբինգ, լոբբիստական կազմակերպություններ, Ամերիկայի հայ դատի հանձնախումբ, Ամերիկայի հայկական համագումար, բանաձև:

*Հայոց ցեղասպանությունը կազմակերպվում և իրականացվում է շուրջ երեք տասնամյակների ընթացքում՝ թուրքական երեք վարչակարգերի կողմից՝ համիդյան, երիտթուրքական և քեմալական:*

*Ցեղասպանության առաջին և խոշոր հետևանքը թերևս հայրենագրվումն էր, երբ մեկուկես միլիոն հայեր զոհ են գնում թուրքական ջարդարարների վայրագություններին, իսկ հայության մի ստվար հատված էլ բռնագաղթվում է իր պատմական հայրենիքից՝ սփռվելով աշխարհի տարբեր երկրներում: Ցեղասպանությունից հետո Հայկական հարցը ստանում է Հայ դատ, Հայկական պահանջատիրություն անունները: Հայ դատը, կամ Հայոց պահանջատիրությունը գործընթացների մի ամբողջություն է, որի վերջնական նպատակը մեր ազգի համար բնական և կենսական այնպիսի պայմաններ ապահովելն է, որոնք կբացառեն ցեղասպանության կրկնությունը կամ սպառնալիքը, և կապահովեն հայ ժողովրդի բնականոն կյանքն ու զարգացումը մեր պատմական Հայրենիքում:*

*Մեծ եղեռնից հետո համայն հայության գերխնդիրն է դառնում Ցեղասպանության միջազգային ճանաչումը: Այդ նպատակով աշխարհի տարբեր երկրներում ստեղծվում են գանազան կառույցներ, կազմակերպություններ և շարժումներ:*

*1965 թվականին՝ Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցին, աշխարհի տարբեր երկրներում բնակվող հայության հատվածները, նոր ուժով իրենց բողոքի ձայն են բարձրացնում՝ պահանջելով աշխարհից ճանաչել և դատապարտել թուրք ոճրագործների կողմից 1915-1922 թվականներին կազմակերպված և իրականացված Հայոց եղեռնը:*

*«1965 թվականին՝ Մեծ եղեռնի 50-ամյակին, ուժգին թափով մը, հայ ժողովուրդի բոլոր հատուածները մէկ նարդու պէս ձայն բարձրացուցին եւ իրենց մեռելները, նահատակները արժանավայել շուքով յարգեցին ու մեր իրաւունքները պահանջեցին»[1]:*

*Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը հասնելու գործում կարևոր դերակատարություն ունեն ամերիկահայ երկու խոշոր լոբբիստական կառույցներ՝ Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը և Ամերիկայի հայկական համագումարը (Ասամբլեա):*

*Երկու կազմակերպությունների նպատակները, թեև առաջին հայացքից նույնական են թվում, սակայն իրականում միանգամայն տարբեր են: ԱԱՀ-ի կայքի «Առաքելություն» բաժնում պարզ երևում է, որ այն հիմնականում կենտրոնանում է հայ համայնքում իր դերի և ամերիկահայերին ԱՄՆ-ի ժողովրդավարական գործընթացում ներառելու ջանքերի վրա: Ավելի կոնկրետ, քաղաքական լոբբինգը հայտնվում է ԱԱՀ-ի քաղաքական առաջնահերթությունների միայն 4-րդ և 5-րդ կետերում, որոնք են «Ընդլայնել կազմակերպության առաջատար գիտակրթական և քարոզչական արշավները Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման համար և ապահովել ամբողջ Սփյուռքի համաձայնությունը,*

\* Հոդվածն ընդունվել է 15.02.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտ.դեկավար պ.գ.թ., պրոֆեսոր Է.Գ.Մինասյանը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

որպեսզի «Հ Կառավարությունը հաղթահարի մարդկության հանդեպ իրականացված այս ոճրագործության հետևանքները, ինչպես նաև աջակցել ԱՄՆ-Հայաստան և ԱՄՆ-Ղարաբաղ հարաբերությունների խորացմանը՝ հիմնված ժողովրդավարության, օրենքի գերակայության, ազատական շուկաների, տարածաշրջանային և ազատ առևտրի ընդ-հանուր տեսլականի վրա»[2]:

Մինչդեռ Հայ դատի ամերիկյան հանձնախմբի հիմնական նպատակները հետևյալն են՝ «նպաստել հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը՝ հոգուտ ազատ, միավորված և անկախ Հայաստանի, ազդել ԱՄՆ-ի քաղաքականության վրա և կողմնորոշել այն հոգուտ Ամերիկայի հայ համայնքի շահերի, ներկայացնել ամերիկահայերի հավաքական հայացքները պետական քաղաքականության հարցերի շուրջ՝ ծառայելով որպես միջանկյալ օղակ համայնքի և նրանց կողմից ընտրված պաշտոնյաների միջև»[3]:

Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումը:

Ինչպես և մյուս երկրներում, այստեղ ևս գործընթացի հիմնական երկրորդ փուլն սկսվել է 1965 թվականին, սակայն, ինչպես շատ այլ երկրներ, ԱՄՆ-ն ևս անձանորթ չէր խնդրին: Այն իր գործուն, անգամ բացառիկ մասնակցություն էր ունեցել Հայոց եղեռնի միջազգային ճանաչման գործընթացի առաջին փուլում, ընդ որում՝ թեև պաշտոնական վավերագրերի մակարդակով ցեղասպանության փաստն արձանագրելու և դրա վերաբերյալ տեղեկատվությունն աշխարհում տարածելու, թեև ցեղասպանության գործընթացին միջամտելու և վերապրածներին օգնություն ցույց տալու առումներով:

Միաժամանակ ԱՄՆ-ն, ելնելով ինչպես զուտ մարդասիրական, այնպես էլ քաղաքական ու տնտեսական շահերից, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Հայոց ցեղասպանության դատապարտման և Արևմտյան Հայաստանը ներառող հայկական պետականության ստեղծման խնդրին առավել ուժգին հետամուտ եղած պետություն էր, քանի դեռ ներքաղաքական ու աշխարհաքաղաքական նոր իրողությունների բերումով խնդիրը չէր կորցրել իր արդիական հնչեղությունը: Բացի այդ՝ ԱՄՆ-ն ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի հետ միաժամանակ առիթ էր ունեցել արժարժելու հայկական ջարդերի և փոխհատուցման խնդիրն արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին: Արդեն 1965 թվականից հետո ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը հայտնվել է մարդու իրավունքների և արտաքին քաղաքական գերակայությունների խաչաձևման բարդ հոլովույթում: Այսպես՝ մի կողմից՝ ԱՄՆ-ն իրեն հռչակել է մարդու իրավունքների անխախտելիության սկզբունքի վրա հիմնված պետություն և ամբողջ աշխարհում մարդու իրավունքների առաջատար պաշտպան, մյուս կողմից՝ ժամանակակից աշխարհում ցեղասպանությունը դիտարկվում է հենց մարդու իրավունքների առումով, և ցեղասպանության՝ անցյալի դեպքերի ճանաչումն ու դատապարտումը կարևորվում է ապագայում մարդկությանը նմանատիպ հանցագործություններից ձերբազատելու համատեքստում:

Այս իմաստով ԱՄՆ-ն չի կարող խուսափել պարբերաբար Հայոց ցեղասպանության խնդրին բախվելուց: Եվ իսկայես, ԱՄՆ-ում բավական ուժեղ է Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման միտումը, և ԱՄՆ-ն, իրոք, ընթանում է այս ճանապարհով: Սակայն, պետք է խոստովանել, որ հարցը չի կարող չդիտարկվել նաև զուտ քաղաքական հարթությունում: Այս առումով խնդիրը բարդանում է, քանի որ ենթադրվում է, որ ցեղասպանության ճանաչմանը հետևելու է փոխհատուցման խնդրի արժարժումը, ինչը ծանր կացության մեջ է դնելու Թուրքիային:

Հայտնի է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր Թուրքիան ԱՄՆ-ի



## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ռազմավարական դաշնակիցն է ու տարածաշրջանում նրա հենարանը՝ սկզբում ԽՍՀՄ-ի, ապա նաև արմատական մահմեդական արաբական աշխարհի դեմ պայքարում, ինչպես նաև լուրջ այլընտրանք է եվրոպական գերտերությունների՝ էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցում հավանական ոչ ամերիկամետ դիրքորոշման դեպքում: Այս պայմաններում Հայոց ցեղասպանությունը ԱՄՆ-ում պաշտոնապես ճանաչելու և դատապարտելու ուղղությամբ առաջին լուրջ քայլերը կատարում են առանձին նահանգային և քաղաքային իշխանություններ:

Քաղաքական բնույթ կրելով և իրավական ակտերի ուժ ունենալով հանդերձ՝ նահանգային օրենսդրական ներկայացուցչական մարմինների ընդունած բանաձևերն ու նահանգապետերի հայտարարությունները, այնուամենայնիվ, ավելի շատ պարզապես բարի կամքի դրսևորում էին: Բացի այդ՝ ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման երկրորդ փուլի սկզբում հայ համայնքը դեռևս բավական թույլ էր թեև իր անդամների թվաքանակի առումով, թեև երկրի կյանքի այս կամ այն ոլորտում առաջատար դիրքեր զբաղեցնելու և ազդեցիկ քաղաքացիներ լինելու առումով: Ուստի այն դեռևս չէր կարող լուրջ նշանակություն ունենալ և ազդել դաշնային իշխանությունների իրավասությունների դաշտում ընթացող գործընթացների վրա: Այս համատեքստում միանգամայն բնական է, որ տարեցտարի Հայոց ցեղասպանությունը ճանաչող և հետազայում պարբերաբար ցեղասպանության զոհերին ոգեկոչող նահանգների թվում առաջին տեղերում էին այն նահանգները, որոնցում հայ համայնքի ներկայությունն ավելի զգալի էր: Այսպես՝ Հայոց ցեղասպանության ճանաչման առաջին իսկ քայլերից մինչև օրս ցեղասպանության ճանաչման ամենաեռանդուն ջատագովը եղել և մնում է Կալիֆորնիա նահանգը:

Գրեթե նույն ուժգնությամբ Հայոց եղեռնը ճանաչել, ապա նաև այդ ճանաչումը վերահաստատել ու վերահաստատում են Նյու Յորքը և Ռոդ Այլենդը: Հայոց ցեղասպանության ճանաչման ու զոհերի հիշատակի հավերժացման գործընթացը բավական մեծ թափով ընթացել և ընթանում է նաև Վիրջինիա, Փենսիլվանիա, Միչիգան, Մերիլենդ, Նյու Ջերսի, Կոլորադո, Իլինոյս, Այսակա, Արիզոնա, Նյու Հեմփշիր, Օկլահոմա, Ֆլորիդա և այլ նահանգներում[4]: Այսպիսով՝ դաշնային իշխանությունների կողմից հարցի արժարժման արդյունքում առանձին նահանգներում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը դեռևս շարունակվում է:

1965 թվականին հաջորդած ժամանակաշրջանում, երբ ԱՄՆ-ի Կոնգրեսը և երկրի նահանգները միայն խիստ երկարատև ընդմիջումներից հետո էին անդրադարձնում Հայոց ցեղասպանության խնդրին, ամերիկյան նահանգները շարունակում էին մեկը մյուսի հետևից ճանաչել և դատապարտել XX դարում մարդկության դեմ գործված առաջին հանցագործությունը:

Հայոց ցեղասպանության ճանաչման տեսակետից թերևս ուշագրավ էր 1975 թվականի ապրիլի 8-ին ԱՄՆ Սենատի և Ներկայացուցիչների պալատի կողմից ցեղասպանությունը ճանաչող թիվ 148-րդ համատեղ բանաձևը, որտեղ որոշվում էր ապրիլի 24-ը հռչակել «Մարդու նկատմամբ անմարդկայնության հիշատակի օր»[5]: Սա ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում դրսևորված երկրորդ ակիքն էր: Բացի այդ՝ 1975 թվականի ապրիլի 1-ին Նյու Ջերսիի Գլխավոր ասամբլեան ընդունում է մի բանաձև, որում մասնավորապես ասվում էր. «1975 թվականի ապրիլի 24-ին նշվում է 1915-1918 թվականներին սիստեմատիկաբար իրականացված ցեղասպանության 60-րդ տարելիցը, որի արդյունքում բնաջնջվել են Թուրքիայում բնակվող 1,5-2 միլիոն հայեր»:

1975 թվականի ապրիլի 24-ին Նյու Յորքի Օրենսդիր ժողովն ընդունում է Սենատի և Ասամբլեայի համատեղ բանաձևը, որում դատապարտվում էր թուրքական իշխանությունների՝ հայկական ռասան բնաջնջելու փորձը: 1981 թվականին Հայոց ցեղասպանու-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

յունը ճանաչում է Կոլորադո նահանգը:

1986-1987 թվականներին Հայոց ցեղասպանությունն առաջին անգամ պաշտոնապես ճանաչում են Մասաչուսեթս, Միչիգան և Մերիլենդ նահանգները (Ցեղասպանության ճանաչման երրորդ այլք):

1982 թվականից սկսած՝ Հայ դատի հանձնախումբը պայքարում է օրենսդրական ակտերի ընդունման համար, որոնք կճանաչեն 1915-1922 թվականներին տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը և կսահմանեն ապրիլի 24-ը որպես ցեղասպանության զոհերի հիշատակի օր[6]: Ամեն տարի, սակայն, հարցի լուծումը հետաձգվում է, արվում են հայտարարություններ, թե Ծեղասպանության ճանաչումը կվատացնի թուրք-ամերիկյան հարաբերությունները և կվտանգի ԱՄՆ-ի ռազմավարական շահերը[7]:

Հայոց ցեղասպանության ճանաչմանը հասնելու համար շատ կարևոր է նաև ազդեցությունը կոնգրեսմենների վրա՝ թեև Սենատում, թեև Ներկայացուցիչների պալատում: Հատկապես կոնգրեսմեններից աչքի են ընկնում Ռոբերտ Մենենդեզը և Մարկ Բիրքը, որոնք փորձում են ձնշում գործադրել ամերիկյան կառավարության վրա՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը[8]:

Պետք է նշել, սակայն, որ, թեև հայկական լոբբիի ջանքերով ամերիկյան ավելի քան քառասուն նահանգներ ճանաչել են Հայոց ցեղասպանությունը[9], սակայն դաշնային մակարդակում հաջողություն դեռևս չի գրանցվել: ԱՄՆ-ի Կոնգրեսը 1990-ական թվականների սկզբից մի քանի անգամ շատ մոտ է եղել Ծեղասպանության ճանաչմանը, սակայն մինչև վերջ այն չի իրականացրել՝ հիմնականում գործադիր ճյուղի այն մտահոգության պատճառով, որ կարող է Թուրքիային ԱՄՆ-ի դեմ տրամադրել: Հայ լոբբիստների և Կոնգրեսում նրանց աջակիցների կողմից ավանդաբար արվող կարևոր քայլը Ծեղասպանության ճանաչման բանաձևի ընդունումն է Կոնգրեսի հանձնաժողովների, հատկապես՝ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից:

Հանձնախումբը որդեգրել է նաև մի մարտավարություն, այն է՝ այլ երկրների կողմից ցեղասպանության ճանաչման միջոցով ձնշում և ազդեցություն գործել նաև ԱՄՆ-ի վրա, որպեսզի վերջինս հետևի նրանց օրինակին: Աշխարհի տարբեր երկրներում գործող Հայ դատի հանձնախումբերը զգալի ազդեցություն են ունեցել Եվրոմիության, Եվրոխորհրդարանի, ՄԱԿ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի, Հունաստանի, Բելգիայի, Լիբանանի, Ռուսաստանի, Կիպրոսի, Կանադայի և Արգենտինայի կառավարությունների վրա՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը[10]:

Դեռևս 1990 թվականին Կանադա նահանգից սենատոր Ռոբերտ Դոլը Կոնգրես է ներկայացնում մի օրինագիծ, որը պետք է Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հարյուր հազարավոր հայ»րի կոտորածները ճանաչեր ու դատապարտեր որպես **ցեղասպանություն**: Սակայն, Թուրքիան, որպես ՆԱՏՕ-ի անդամ, իր դժգոհությունն է արտահայտում, որի արդյունքում էլ նախագահ Ջորջ Բուշը ստիպում է սենատոր Դոլին հրաժարվելու իր ներկայացրած օրինագծից: Անկարան հետևողականորեն մերժում է հայկական կոտորածները որակել որպես ցեղասպանություն՝ պնդելով, որ դրանք պարզապես պատերազմի ցավալի հետևանքներն էին[11]:

Թուրքիայի և Սալիտակ տան համատեղ դիմադրությունը ստիպում են շուրջ 12 սենատորների հրաժարվելու օրինագծի օգտին հանդես գալուց:

Չնայած սենատոր Ռոբերտ Դոլի օրինագիծը չի ընդունվում, անուամենայնիվ, այն բազմաթիվ կարծիքներ է առաջ բերում, ըստ որի՝ երկար ժամանակ տեղի է ունեցել հայերի կոտորածներ, իսկ ԱՄՆ-ն ոչինչ չի արել հայ ժողովրդին օգնելու համար:

2000 թվականի սեպտեմբերի 28-ին, չորսժամյա քննարկումից հետո, ի վերջո արտաքին հարաբերությունների կոմիտեում կոնգրեսական Ռադանովիչի կողմից ն»րկա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

յացվում է թիվ 596-րդ բանաձևը, որտեղ ամրագրվում էր.

1. հրավիրել նախագահի ուշադրությունը այն հարցին, որ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը սերտորեն կապված պետք է լինի այնպիսի սկզբունքների հետ, որոնք վերաբերում են մարդկային իրավունքներին, էթնիկ գտումներին և Հայոց ցեղասպանությանը վերաբերող խնդիրներին,

2. ստիպել նախագահին ապրիլի 24-ի իր տարեկան ուղերձում հայկական կոտորածները որակելու որպես **ցեղասպանություն**:

Այս որոշումը ստանում է Հայ դատի ամերիկյան հանձնախմբի, Ամերիկայի հայկական համագումարի, ՀԲԸՄ-ի և ԱՄՆ-ում գործող տարբեր հայկական կառույցների աջակցությունը:

Նշենք, որ դրանից մի շաբաթ առաջ՝ սեպտեմբերի 21-ին, նույն կոմիտեի կողմից ընդունվել էր 398-րդ բանաձևը, որտեղ նշվում էր, որ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը պետք է լինի իրատեսական և ճկուն, որը չպետք է լռություն պահպանի Հայոց ցեղասպանության հարցում: 398-րդ բանաձևը, դատապարտելով Հայոց ցեղասպանությունը, միաժամանակ կոչ էր անում Թուրքիային՝ վերջ տալ ժխտողական քաղաքականությանը և չխոչընդոտել հումանիտար օգնության հոսքը դեպի Հայաստան[12]:

Հայ դատի ամերիկյան հանձնախմբի բոլոր գրասենյակները կոչ էին անում նախագահ Ջորջ Բուշին ճանաչել և դատապարտել Հայոց ցեղասպանությունը: Վերջինս իր ելույթներում նշում էր. «Հայերը ենթարկվել են մի ցեղասպան արշավի, որն այսօր արհամարհվում է բազմահազարների կողմից: Միաժամանակ բոլոր պարկեշտ մարդիկ ցանկանում են հիշել և ճանաչել այն փաստերն ու դասերը, որոնք պատմում են XX դարում մարդկության դեմ գործված արյունալի հանցագործությունների մասին: Նախագահ ընտրվելու դեպքում, ես կոչ կանեմ մեր ժողովրդին անպայմանորեն ճանաչել հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը»[13]:

2003 թվականին Ջորջ Ռադանովիչի և Ադամ Շիֆի կողմից ներկայացվում է 193-րդ բանաձևը, որը ցանկանում էր ամերիկյան կառավարության ուշադրությունը հրավիրել ՄԱԿ-ի կողմից ընդունված «Ցեղասպանությունների կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայի վրա: Նշենք, որ այս բանաձևը ընդունվում է Սպիտակ տան կողմից նույն թվականի մայիսի 21-ին: Նմանատիպ բովանդակություն ուներ նաև 164-րդ բանաձևը, որը ներկայացվում է Սենատի քննարկմանը: Այս կապակցությամբ մեջբերենք Ռադանովիչի խոսքերը. «Որպես ամերիկացիներ, մենք պարտավոր ենք աշխարհին սովորեցնել և ծանոթացնել Հայոց ցեղասպանությանը: Մենք պետք է համոզված լինենք, որ հայերի եղեռնը հիշվում է աշխարհի կողմից, որն էլ կկանխի ապագայում մարդկության դեմ նման ոճրագործությունների իրականացումը»[14]:

Նշենք, որ թուրքական կողմը չէր կարող պատիվ դիտորդի դեր ստանձնել և պատահական չէ, որ թուրքական արդյունաբերողների և ձեռնարկատերերի միությունը հանդես է գալիս հայտարարությամբ, որ ցեղասպանության վերաբերյալ Ներկայացուցիչների պալատի 193-րդ և Սենատի 164-րդ բանաձևերը ընդունվելու դեպքում խորապես կվատանան թուրք-ամերիկյան հարաբերությունները: Բացի այդ՝ թուրքական վերոնշյալ միությունը նաև նշում էր, որ նմանատիպ բանաձևերի ընդունումն զգալիորեն կխոչընդոտի նաև Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավումը:

Այս կապակցությամբ Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Ադամ Համբարյանը գրում էր. «Մենք խորապես անհանգստացած ենք, բայց ոչ զարմացած այն մերժողական քարոզարշավից, որ արված է թուրքական միության հայտարարությունում: Նորությունն այն էր, որ թուրքական այս կառույցը փորձում էր իրեն ներկայացնել որպես հայ ժողովրդի ընկեր ու բարեկամ: Այնուամենայնիվ, թուրքական կառավարությունը,

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

պաշտոնական շրջանակները պետք է վերջապես հասկանան, որ հայ-թուրքական հարաբերություններ կարող են ստեղծվել միայն թուրքիայի կողմից Հայոց ց» դասականության պաշտոնական ճանաչման և դատապարտման պարագայում» [15]:

2005 թվականին շուրջ 40 սենատորներ և Ներկայացուցիչների պալատի պատգամավորներ միանում են հայությանը՝ հիշելով Ցեղասպանության 90-ամյակը:

Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի համանախագահ Ֆրանկ Պալոնեն ապրիլի 26-ին կազմակերպում է Հայոց եղեռնին նվիրված հուշ-ցերեկույթ, որտեղ պատգամավորները հանդես են գալիս ելույթներով, որոնք վերաբերում էին Օսմանյան թուրքիայում 1915-1923 թթ. կազմակերպված հայկական ջարդերին: Իրենց ելույթներում ամերիկյան քաղաքական գործիչները բարձրացնում են ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության հարցում թուրքական ժխտողական քաղաքականության դատապարտման կարևորությունը: Ստորև մեջբերենք հատվածներ ամերիկյան գործիչներից մի քանիսի ելույթներից [16]:

**«Ջերրի Քոսթելո»** – Հայոց ցեղասպանությունը երբեք չպետք է մոռանալ: Մենք, որպես Կոնգրեսի անդամներ և խղճի տեր մարդիկ, պետք է հաղթահարենք պատմության արհամարհումը և աղավաղումը, որպեսզի ապագա սերունդը իմանա, թե ինչ է տեղի ունեցել:

**Էլլիոթ Էնգել»**– Այս կարևոր ամյակը մարդկության համար հարատև դաս է, որ ցեղասպանությունը ոչ միայն պետք է դատապարտվի բոլոր ազգերի կողմից, այլ նաև ճանաչվի որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ, երբ և ում կողմից է այն կատարվել:

**Ֆրանկ Պալոնեն»**– Եթե մենք երբևէ ցանկանում ենք ապրել մի աշխարհում, որտեղ հանցագործությունները երբեք անպատիժ չեն մնա և մարդկային իրավունքները կհարգվեն ու կպաշտպանվեն, մենք պետք է առաջին հերթին ճանաչենք և դատապարտենք Հայոց ցեղասպանությունը»:

2007 թվականի հոկտեմբերի 11-ին ամերիկյան Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների կոմիտեում 27 կողմ և 21 դեմ հարաբերակցությամբ ընդունվում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ թիվ 106-րդ բանաձևը: Ստորև մեջբերենք Ներկայացուցիչների պալատի՝ բանաձևի եզրահանգումներից մի քանի կետեր [17].

– Հայոց ցեղասպանությունը ծրագրվել և իրականացվել է Օսմանյան կայսրությունում 1915-1923թթ.՝ պատճառ հանդիսանալով մոտ 2.000.000 հայերի բռնի տեղահանմանը, որոնցից 1.500.000 այր, կին և երեխա սպանվեցին, իսկ 500.000 փրկված հայեր արտաքսվեցին իրենց տներից, որի արդյունքում ոչնչացվեց հայերի 2500 տարվա ներկայությունն իրենց պատմական հայրենիքում:

– Ռաֆայել Լենկինը, ով ծնակերպել է «ցեղասպանություն» տերմինը 1944թ. և ով Միացյալ ազգերի կոնվենցիայի ցեղասպանության կանխարգելման և պատժի կողմնակիցն էր, հայկական դեպքը անվանել է XX դարի ցեղասպանության ցայտուն օրինակ:

– 1975թ. ապրիլի 8-ին ընդունված Պալատի 148-րդ միասնական բանաձևը հաստատում է, «1915թ. ապրիլի 24-ը այսուհետ նշվում է որպես մարդու հանդեպ մարդու դաժան վերաբերմունքի հիշատակման ազգային օր», իսկ Միացյալ Նահանգն»-ի նախագահը հաստատում և պահանջում է կազմել հռչակագիր՝ կոչ անելով Միացյալ Նահանգների ժողովրդին համարել այդ օրը ցեղասպանության, հատկապես հայ ժողովրդի ցեղասպանության բոլոր զոհերի հիշատակման օր:

– Նախագահ Ջորջ Բուշը 2004թ. ապրիլի 24-ին նշեց, «Այս օրը մենք հիշում ենք XX դարի ամենասարսափելի ողբերգություններից մեկը՝ ավելի քան 1.500.000 հայերի

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

բնաջնջումը Օսմանյան կայսրությունում՝ բռնագաղթի և սպանությունների միջոցով»:

- Չնայած Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու հաստատմանը, տեղական և օտարերկրյա իշխանությունների անկարողությունը պատժելու Հայոց ցեղասպանության պատասխանատուներին, պատճառ հանդիսացավ համանման ցեղասպանությունների իրագործման, նաև ապագայում դրանց կրկնման համար, հետևաբար նման արդար բանաձևը կօգնի կանխարգելել ապագա ցեղասպանությունները:

106-րդ բանաձի պաշտպանությամբ է հանդես գալիս նաև ամերիկյան սենատոր Մարկ Բիրքը, որն իր ելույթում նշում էր հետևյալը. «Որպես մարդկային իրավունքների պաշտպան, ԱՄՆ-ն պետք է, անշուշտ, ճանաչի Հայոց ցեղասպանությունը: 1915-1923 թվականներին Օսմանյան իշխանությունները ոչնչացրել են շուրջ 1.5 միլիոն էթնիկ հայերի: Այս ծրագրավորված սպանությունները կարելի է միայն որակել **«ցեղասպանություն»** [18]:

2007 թվականին Ցեղասպանությունը դատապարտող որոշումն ստորագրվել է Ներկայացուցիչների պալատի նախկին խոսնակ Նենսի Փալոսի և Կալիֆորնիայից Ներկայացուցիչների պալատի անդամ Ադամ Շիֆի կողմից, որոնք առաջ էին քաշել Ցեղասպանությունը դատապարտող որոշում՝ Հայ դատի հանձնախմբի գործունեության շնորհիվ [19]:

2007 թվականի հոկտեմբերի 11-ին Շիֆի կողմից առաջ քաշված այս օրինագիծն ընդունվում է կառավարության Արտաքին հարաբերությունների կոմիտեի կողմից, սակայն այդպես էլ չի հասնում կառավարության վերին օղակներին՝ կապված այն ժամանակվա նախագահ Ջորջ Բուշի հայտարարությունների հետ, թե Ցեղասպանությունը դատապարտող որոշման ընդունումը կվնասի թուրք-ամերիկյան հարաբերություններին:

Պետք է նշել, որ Ցեղասպանությունը ճանաչող որոշումը մի անգամ ևս ընդունվում է Արտաքին հարաբերությունների կոմիտեի կողմից 2010 թվականի մարտի 4-ին՝ չնայած նախագահ Բարաք Օբամայի այն հայտարարություններին, թե դա կարող է վտանգել Թուրքիայի հետ ունեցած հարաբերությունները: Սրան ի պատասխան՝ նույն օրը թուրքական կողմը հետ է կանչում ԱՄՆ-ում իր դեսպան Նամիթ Թանին՝ միաժամանակ սպառնալով դիվանագիտական ձգնաժամ առաջացնել Վաշինգտոնի և Անկարայի միջև:

Այս դեպքերի հետ կապված ամերիկյան պետքարտուղար Հիլարի Բլինթոնը հանդես է գալիս հետևյալ հայտարարությամբ. «Օբամայի կառավարությունը խստորեն ընդդիմանում է Ցեղասպանությունը դատապարտող որոշմանը և ամեն ինչ կանի, որպեսզի կանխի, որ այդ որոշումը հասնի կառավարության վերին օղակներին» [20]:

Ի վերջո, ինչպես գրում է «Guardian» թերթը, Ցեղասպանությունը դատապարտող որոշման ընդունումն արդյունք էր ԱՄՆ-ում հայկական լոբբիի արդյունավետ գործունեության: Նույն թերթը տեղեկացնում էր, որ 2009 թվականին Հայ դատի ամերիկյան հանձնախումբը ծախսել է 50 մլն դոլար Կոնգրեսում Ցեղասպանությունը դատապարտող որոշման ընդունման համար, որը միաժամանակ հսկայական ազդեցություն է ունեցել, որ նախագահի թեկնածու Օբաման իր նախընտրական քարոզարշավի ժամանակ հայկական ջարդերի հերթական տարելիցին իր ելույթում «ցեղասպանություն» որակում է տվել հայկական կոտորածներին [21]:

Հայ դատի ամերիկյան հանձնախումբը ողջունում է Եվրոխորհրդարանի կողմից 2000 թվականի նոյեմբերի 15-ին արված հայտարարությունը, որը կոչ էր անում Թուրքիային վերջ տալ ժխտողականությանը Հայոց ցեղասպանության հարցում: Եվրոխորհրդարանի նոյեմբերի 14-ի նիստում 234 դեմ, 213 կողմ քվեարկությամբ ընդունվում է որոշում, որը կոչ էր անում թուրքական պետությանը մեծացնել աջակցությունը հայկական փոքրամասնությանը, որը կազմում է թուրքական հասարակության կարևորագույն մասը,

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ինչպես նաև նշվում էր, որ Հայոց ցեղասպանության մերժումը Թուրքիայի կողմից շարունակելու է արգելք հանդիսանալ նրա՝ եվրոհիստեգրման ճանապարհին:

2002 թվականի ապրիլի 3-ին Հայ դատի հանձնախմբի Արևելյան խորհուրդը հանդես է գալիս «Հոլոքոստ-Ցեղասպանություն» կրթական ծրագրի պաշտպանությամբ: Այս ծրագրի համահեղինակներից էին Կալիֆորնիա նահանգի համազումարի անդամներ Պաուլ Կորետզը և Մարկ Ուայլանդը: 2003 թվականին օրինագիծը քննարկվում է Կալիֆորնիայի նահանգային համազումարի կրթական կոմիտեում: Օրինագծի էությունն այն էր, որ դպրոցներում ուսուցիչները պետք է ուսուցանեն այնպիսի հանցագործությունների մասին, ինչպիսիք էին՝ Հայոց ցեղասպանությունը և Հրեական հոլոքոստը:

Նշենք, որ այս օրինագծի պաշտպանությամբ հանդես են գալիս նաև Լոս Անջելեսի հրեական միությունը, Կալիֆորնիայի ուսուցիչների միությունը, ԱՄՆ-ի Հայկական համազումարը և այլն:

«Հիմա, ավելի քան երբևէ, մեր մեծ ազգը, մեր մեծ նահանգը և մեր տարբեր համայնքները կարիք ունեն կրթական ինստիտուտների, որոնք կօգնեն պայքարելու անհանդուրժողականության, ատելության և խտրականության դեմ: Ցեղասպանությունը, ինչպես նաև դրա ժխտումը հանդիսանում են խտրականության ծայրահեղ աստիճանը: Շատ կարևոր է, որ մենք բոլորս հանդես գանք այս կրթական օրինագծի պաշտպանությամբ՝ ուրիշների համար օրինակ հանդիսանալով, որպեսզի հետևեն մեզ», -նշում էր Հայ դատի հանձնախմբի Արևմտյան գրասենյակի կառավարական հարաբերությունների գծով տնօրեն Արտաշես Քասախյանը [22]:

2001 թվականի Հայ դատի հանձնախմբի Արևմտյան խորհուրդը հրատարակում է Սիմոն Փայասլյանի հեղինակած «Հայոց ցեղասպանությունը 1915-1923 թվականներին» գրքույկը, որը նախատեսված էր աշակերտների և ուսուցիչների համար:

Բացի այդ՝ դեռևս 1999 թվականին Կալիֆորնիա նահանգի կրթական վարչությունը որոշում է կայացնում ներառել Հայոց ցեղասպանության թեման իր պատմություն և հասարակագիտություն առարկաների դասագրքերում: Հայ դատի հանձնախումբը մի քանի տասնամյակ շարունակ աշխատում էր Հայոց ցեղասպանություն առարկայի կրթական չափորոշիչների և հետազոտությունների մշակման համար:

Հայ դատի ամերիկյան հանձնախմբի, Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի և ԱՄՆ-ում մյուս հայկական լոբբիստական կազմակերպությունների ջանքերի շնորհիվ 2010 թվականի մարտի 4-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում քվեարկության է դրվում հայերի դեմ իրականացված ցեղասպանության վերաբերյալ 252-րդ բանաձևը, որն ընդունվում է 23 կողմ և 22 դեմ քվեների հարաբերակցությամբ:

252-րդ բանաձևը կոչ էր անում ԱՄՆ նախագահին «ապահովել, որպեսզի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը պատշաճ ըմբռնում ցուցաբերի հայերի դեմ իրագործված ցեղասպանությանը Միացյալ Նահանգների արձանագրություններում փաստված մարդու իրավունքների, էթնիկ զտումների և ցեղասպանության հարցերի առնչությամբ», ինչպես նաև ապրիլքսանչորսյան իր ամենամյա ուղերձում «ձգրիտ կերպով բնորոշել մեկուկես միլիոն հայերի պարբերական և կանխամտածված բնաջնջումը որպես ցեղասպանություն»[23]:

Բանաձևի ծանոթագրություններում հստակ նշվում էր. «Հայերի դեմ իրագործված ցեղասպանությունը ծրագրվել և իրականացվել է Օսմանյան կայսրության կողմից 1915-1923 թվականներին, որի արդյունքում տեղահանվել են երկու միլիոն հայեր: Նրանցից մեկուկես միլիոնը սպանվել է, կես միլիոն վերապրածներ վտարվել են իրենց տներից: Այս ամենի արդյունքում վերացվել է հայերի 2500 տարվա ներկայությունն իրենց պատ-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԱՄԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

մական հայրենիքում»:

Ներկայացուցիչների պալատի պատգամավոր Ադամ Շիֆը 252-րդ բանաձևի ընդունումը կարևոր քայլ էր համարում թքուրքական ժխտողականությանը վերջ տալու և ճշմարտության վրա հիմնված հայ-թուրքական հարաբերությունների հաստատման համար [24]:

Նշենք, որ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարցերի հանձնաժողովը նման բովանդակությամբ բանաձևեր ընդունել է 2000, 2005 և 2007 թվականներին: Թեև այդ բանաձևերը մեծ աջակցություն էին վայելում Կոնգրեսում, Ներկայացուցիչների պալատի լիազուցված նիստում քվեարկության չեն դրվել, քանի որ թե նախագահ Բիլ Քլինթոնը և թե նախագահ Ջորջ Բուշը կտրականապես դեմ են արտահայտվում բանաձևերի ընդունմանը՝ պատճառաբանելով, որ թուրքերը կարող են պատասխան քայլերի դիմել [25]:

Նկատենք, որ 252-րդ բանաձևի քվեարկության ընթացքում Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի գրեթե բոլոր անդամները բացահայտ ճանաչել են հայերի դեմ իրականացված ցեղասպանությունը, սակայն դեմ քվեարկածներն իրենց դիրքորոշումը պայմանավորել են ԱՄՆ-Թուրքիա ռազմավարական հարաբերություններով և այն պատճառաբանությամբ, որ բանաձևի ընդունումը կվնասի այդ հարաբերություններին:

Անհրաժեշտ է հստակեցնել, որ ԱՄՆ Կոնգրեսում հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման վերաբերյալ բանաձևերի քվեարկումը, որպես կանոն, ակտիվանում է հատկապես սպրիլի 24-ի նախաշեմին՝ պայմանավորված Միացյալ Նահանգներում հայկական լոբբինգի ակտիվացմամբ: Մյուս կողմից, սակայն, նման բանաձևերի քվեարկությունը, իսկ արդյունքում՝ դրանց ընդունումը կամ մերժումը էապես պայմանավորված են ինչպես ԱՄՆ-Թուրքիա, այնպես էլ ԱՄՆ-ՀՀ փոխհարաբերություններով:

Ցեղասպանությունը դատապարտող որոշումը կրկին ներկայացվում է 2012 թվականի մարտի 20-ին: Հայ դատի ամերիկյան հանձնախումբն իր կայքէջում տեղեկացնում է, որ սենատորներ Սենեմոնթզը, Քիրքը և ուրիշներ, ներկայացրել են 399-րդ օրենսդրական ակտը՝ ստիպելով ամերիկյան կառավարությանը ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

2014 թ. ապրիլի 10-ին վերջին 25 տարում առաջին անգամ ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը Հայոց ցեղասպանության մասին թիվ 410 բանաձևն է ընդունում՝ կոչ անելով Սենատին հասնել նրան, որ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն արտացոլի Սենատի դիրքորոշումը: Բանաձևում նշվում է նաև, որ Հայոց եղեռնը մինչև օրս մնում է անպատիժ [26]:

Այսպիսով՝ և՛ Հայ դատի ամերիկյան հանձնախումբի, և՛ Ամերիկայի հայկական համագումարի, ինչպես նաև Միացյալ Նահանգներում գործող մյուս լոբբիստական կազմակերպությունների գործունեության մեջ առանցքային տեղ է գրավում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը ԱՄՆ-ի կողմից:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սիմոնյան Հ., Հայ դատի զինվորներ լավ մտիկ ըրէք, Լուս Անճելըս, 1983, էջ 52:
2. «Vision and Mission». «Armenian Assembly of America», <http://www.aaainc.org/index.php?id=86>.
3. «About the ANCA». «Armenian National Committee of America», <http://www.anca.org/ancaprofile.php>.

4. Մելիքյան Ս., Հայաստանի Հանրապետություն-Ամերիկայի Միացյալ Նահանգներ հարաբերությունները, Եր., 2010, էջ 174:
5. ՏԵՆ ԱՄՆ-ը և Հայոց ցեղասպանությունը, 25-րդ բաժին, ակտ № 537, ՀՅԹԻ, 2 էջ:
6. Heather S. Gregg, Divided they conquer: The success of Armenian ethnic lobbies in the US, Washington, 2012, p. 23.
7. Position Papers: Armenian Genocide Commemoration, ANCA website, [www.anca.org](http://www.anca.org).
8. The role of the Armenian lobby in the pattern of enmity in South Caucasus, p. 15.
9. Bush Breaks Pledge to Recognize Armenian Genocide, "The Armenian Weekly" , May 2001, p. 2, <http://free.freespeech.org/armenian/weekly>.
10. Several US States Recognize the Armenian Genocide, "The Armenian Weekly", April 2001, p. 1, <http://free.freespeech.org/armenian/weekly>.
11. David King, Miles Pomper, The U.S. Congress and the contingent influence of diaspora lobbies: lessons from U.S. policy toward Armenia and Azerbaijan, Journal of Armenian studies, Cambridge, 2004, p. 8.
12. David King, Miles Pomper, The U.S. Congress and the contingent influence of diaspora lobbies..., p. 3.
13. [http://ancnews.info/?page\\_id=837](http://ancnews.info/?page_id=837).
14. [http://ancnews.info/?page\\_id=837](http://ancnews.info/?page_id=837).
15. [http://ancnews.info/?page\\_id=656](http://ancnews.info/?page_id=656).
16. [http://ancnews.info/?page\\_id=837](http://ancnews.info/?page_id=837).
17. <http://artinarakelian.blogspot.com/2007/10/106.html>.
18. Rep. Mark Kirk reaffirms pledge to support U.S. reaffirmation of the Armenian genocide, [http://www.anca.org/press\\_releases/press\\_releases.php?prid=1323](http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=1323).
19. Genocide Resolution Risks Shattering, Relations with Turkey. from Spiegel Online: <http://www.spiegel.de/international/world/armenian-lobby-s-triumph-genocideresolution-risks-shattering-relations-with-turkey-a-511210.html>.
20. [http://csis.org/files/publication/100308\\_Genocide\\_Vote\\_Congress\\_US\\_Turkish\\_Relations](http://csis.org/files/publication/100308_Genocide_Vote_Congress_US_Turkish_Relations). The Genocide Vote in Congress and US-Turkish Relations.
21. The role of the Armenian lobby in the pattern of enmity in South Caucasus, Washington DC, 2013, p. 16.
22. [http://www.anca.org/press\\_releases/press\\_releases.php?prid=626](http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=626).
23. ԱՄՆ Կոնգրեսի հանձնաժողովը հավանություն տվեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագծին, <http://www.armenialiberty.org/content/article/1974951.html>.
24. Schiff slams Turkish lobby Genocide denial, [http://www.anca.org/press\\_releases/press\\_releases.php?prid=1792](http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=1792).
25. Հայ համայնքն ԱՄՆ-ում, Երևան, 2010, էջ 143-144:
26. ՏԵՆ Մինսկյան է., Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արդի փուլի առանձնահատկությունները, դատապարտում և հատուցում, «Հայոց ցեղասպանություն-100 ճանաչումից հատուցում», միջազգային գիտաժողովի զեկուցումներ-րի ժողովածու, Եր., 2016, էջ 42:



ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնահարցը՝ իբրև ամերիկահայ լոբբինգի գործունեության առաջնահերթություն  
Լիանա Մամյան

Միացյալ Նահանգներում ամերիկահայությունը հիմնել է մի շարք լոբբիստական կազմակերպություններ, որոնցից թերևս ամենանշանավորներն են Ամերիկայի հայ դատի հանձնախումբը և Ամերիկայի հայկական համագումարը: Նրանց գերխնդիրն է Միացյալ Նահանգների կողմից հայոց ցեղասպանության ճանաչումը: Հայկական լոբբինգի ջանքերի շնորհիվ ամերիկյան իշխանությունների կողմից ընդունվել են հայկական կոտորածները դատապարտող մի շարք բանաձևեր, միևնույն ժամանակ ամերիկյան ավելի քան 40 նահանգներ ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

Հայկական լոբբիստական կազմակերպությունները ծավալում են հսկայական գործունեություն՝ Հայկական հարցը Միացյալ Նահանգների քաղաքական ուշադրության կենտրոնում պահելու համար:

РЕЗЮМЕ

Основная проблема признания геноцида армян как первостепенная задача деятельности армяно-американского лоббинга  
Лиана Мамян

*Ключевые слова:* Геноцид армян, лоббинг, лоббистские организации, Американская группа Ай дат (Армянский Вопрос), Армянская Ассамблея Америки (ААА), законодательный документ.

В США американские армяне учредили различные организации, две из них- Американская группа Ай дат (Армянский Вопрос) и Армянская Ассамблея Америки (ААА). Главное направление их деятельности признание Геноцида армян Соединенными Штатами Америки. Усилиями этих организаций власти США приняли многочисленные законодательные документы, осуждающие геноцид армян, и, благодаря их усилиям, свыше 40 штатов Америки признали Геноцид армян.

Лоббистские группы, осуществляя колоссальную деятельность, стремятся держать армянские проблемы в центре внимания политических структур США.

SUMMARY

The Question of the Recognition of the Armenian Genocide as the Armenian-American Lobbying Activity Priority  
Liana Mamyan

*Keywords:* Armenian Genocide, lobbying, lobbying organizations, Armenian National Committee of America, Armenian Assembly of America, article.

In the USA the Armenain-Americans founded several lobbying organizations but the most famous ones among them are the Armenian National Committee of America and The Armenian Assembly of America. Their main goal is to reach the recognition of the Armenian Genocide by the USA. Due to their efforts many articles were adopted by the American authorities that condemn the Armenian Genocide, at the same time more than 40 states of America has recognized the Genocide.

The Armenian lobbying groups are carrying out great activities for keeping the Armenian issue in the center of political attention of USA.

## ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԵՎԱԶԱՓԵՐԸ\*

### Սիրանուշ Մելիքյան

**Բանալի բառեր՝** եկեղեցի, պետություն, կրոն, ձևաչափ, հոգևոր բաղադրիչ, հանրույթ, հոգևոր անվտանգություն, ազգային արժեհամակարգ, պետական ապարատ, արդյունավետ կառավարում:

*Պատմական տարբեր ժամանակաշրջանների ընթացքով ու պետական ապարատի ամենատարբեր առանձնահատկություններով պայմանավորված՝ եկեղեցական ու պետական հարաբերությունները տարաբնույթ ձև ու ընթացք են ունեցել: Աշխարհաքաղաքական ներկայիս իրողությունները սերտորեն կապված են համաշխարհայնացման կամ գլոբալիզացիոն գաղափարախոսության հետ, որը սնվում է երեք հիմնական և դրանցից ածանցյալ գաղափարական աղբյուրներից. այն է՝ կրոնադավանաբանական, տնտեսական, գաղափարաքաղաքական-մշակութային: Ներկայիս գլոբալիզացվող ցանկացած պետության գերխնդիրը ազգային արժեհամակարգի և նրա հոգևոր բաղադրիչի պահպանումն ու փոխանցումն է: Միևնույն ժամանակ կարող ենք նշել, որ կան հոգևոր-բարոյական արժեքներ, որոնք համընդհանուր են, համամարդկային, ուստի հոգևոր բաղադրիչի արժեզրկումը նաև համամարդկային խնդիր է՝ գլոբալ անվտանգության համատեքստում:*

*Արդի ազգաքաղաքական զարգացումների հենքում որպես կարևորագույն գործոններ ընկած են քաղաքակրթական բախումները: Ամերիկացի քաղաքագետ Սամուել Հանտինգտոնը դեռ 1993թ. առաջադրեց «քաղաքակրթությունների բախման» գաղափարը: Պետություններին՝ որպես միջազգային քաղաքականության գլխավոր դերակատարների փոխարինելու էին գալիս քաղաքակրթությունները՝ մշակութային հանրույթներ, որ տարբերվում են պատմությամբ, լեզվով, ավանդույթներով և կրոնով[1]: Հայտնի է նաև, որ հոգևոր-կրոնական բաղադրիչը ցանկացած քաղաքակրթության գլխավոր հատկանիշներից է: Պատահական չէ, որ փորձագիտական շրջանակներում այսօր լայնորեն քննարկվում ու շրջանառվում է այն թեզը, որ 21-րդ դարը ոչ միայն էթնիկական, այլև դավանաբանական հակամարտությունների ժամանակաշրջան է: Այս մտտեցումն այսօր աշխարհում փաստվում է մի շարք ակնհայտ իրողություններով. օրինակ՝ Մերձավոր և Միջին Արևելքում ընթացող զարգացումներում կրոնական գործոնն ավելի քան կարևոր դեր է կատարում: Մեզանում հոգևոր անվտանգության իրականացումը պահանջում է եկեղեցու, պետության, հասարակության ողջ ներուժի օգտագործում: Այդուհանդերձ, եկեղեցի-պետություն փոխհարաբերության մոդելներն ու ձևերը շատ կարևոր են նաև վերոնշյալ հարցի տեսանկյունից, քանի որ փոխհարաբերության ձևերից էլ կարող է կախված լինել գործունեության արդյունավետությունը: Կարող ենք նշել, որ կրոնն իր տեղն ունի ազգային անվտանգության հոգևոր բաղադրիչում, հետևաբար կարևորվում է նաև եկեղեցու նշանակությունը: Ներկայումս գրեթե բոլոր երկրներում եկեղեցին անջատ է պետությունից: Սակայն տարբեր երկրներում գործում են եկեղեցի-պետություն հարաբերությունները կարգավորող տարբեր օրենքներ: Կան պետություններ, որոնք մի կրոնի տվել են «պետական կրոնի» կարգավի-*

\* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Ճակ՝ առանց արգելելու այլ կրոնների ազատությունը: Հիմնականում բոլոր երկրներն ունեն իրենց պետական կրոնները: Մի շարք պետություններում պետական մտածողության ու հասարակության գիտակցության համատեքստում եկեղեցիներին տալիս են այսպես կոչված ազգային եկեղեցու կարգավիճակ: Հայ առաքելական եկեղեցին ևս ունի այդ կարգավիճակը:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրելով տարբեր երկրներում եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների կարգավորման օրինաչափությունները՝ առանձնացնում ենք 3 հիմնական ձևաչափ.

- Տարանջատված (երբ եկեղեցին պետությունից գործում է անջատ)
- Պետական եկեղեցու ձևաչափ
- Համագործակցության ձևաչափ[2]

Առանձնացնում ենք նաև Աստվածապետություն կամ պետության կառավարման թեոկրատական մոդելը: Թեոկրատական է այն հասարակությունը, որտեղ հասարակական և քաղաքական կյանքը կարգավորվում է կրոնական դոգմաներից բխող միասնական նորմերի միջոցով: Հայաստանում, փաստորեն, մեկուկես հազարամյակ իշխել է թեոկրատական գաղափարը: Հայ հասարակությունն իրեն դիտարկել է որպես կրոնական համայնք, քաղաքական ասպարեզում աստվածապետական իշխանությունը գերադասել աշխարհիկ իշխանությունից, կրոնական արժեքները՝ աշխարհիկ-քաղաքական արժեքներից[4]: Եկեղեցի-պետություն հարաբերությունների հարց գոյություն չի ունեցել աստվածապետական (թեոկրատական, theocratic) համակարգով կառավարվող երկրներում, քանի որ աստվածապետական համակարգում իշխանությունը լինում է միանձնյա, և միապետն իր աստվածային ծագմանը հավակնելով՝ իր անձի մեջ է միաձուլում քաղաքական ու եկեղեցական գույզ իշխանությունները[3]: Կա մի պետություն էլ՝ Լիբանանը, որը որդեգրել է բազմահամայնքային համակարգը և երկիրը վերածել համայնքների հանդնկերակցության: Այս բոլոր տարբերակները ենթադրում են շեղում պետության գերիշխանության (անբաժանելիության կամ անտրոհելիության և անփոխանցելիության կամ անօտարելիության սկզբունքներից, քանի որ գերիշխան պետությունը իրեն է վերապահում իր վեհապետական իրավասությունները և դրանք կամ դրանց մի մասը ուրիշների չի զիջում, հասարակական խմբերի կամ կրոնական համայնքների չի փոխանցում: Պետության գերիշխանության անբաժանելիության և անփոխանցելիության հաստատ սկզբունքների դիտանկյունից՝ Լիբանանի որդեգրած բազմահամայնքային համակարգը միակն է, որը համայնքներին շնորհել է ոչ միայն կրոնա-կենցաղային ինքնավարություն, այլ նաև քաղաքական իրավունքներ: Յուրաքանչյուր պատմական համայնքի վերապահված են պետական պաշտոնների, պատգամավորական տեղերի և նախարարական թղթապանակների հատուկ մասնաբաժիններ՝ քվոտաներ: Այս պատճառով է նաև, որ լիբանանահայությունը տարագիր հայության հայապահպանման պայքարի միջնաբերդն է, քանի որ Արևմուտքը ծանոթ չէ նման մի համակարգի. արևմտյան երկրներում հայ համայնքները ճանաչված չեն իբրև ինքնուրույն համայնք կամ ազգային փոքրամասնություն:

### **Եկեղեցի-պետություն հարաբերությունների տարանջատված ձևաչափ:**

Քննարկենք վերոնշյալ ձևաչափերից եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների տարանջատված ձևաչափը: Այս ձևաչափի շրջանակներում ավելի շատ կրոնական ազատությունը նշանակում է ավելի շատ հեռավորություն պետության և կրոնի միջև, քանի որ այդ մեծ հեռավորության առկայության դեպքում եկեղեցիները կարող են զարգանալ առանց արգելքների: Միայն նման ձևով կրոնները կարող են կատարելա-

## **ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

գործվել ավելի մաքուր ձևով, ձևավորել և իրականացնել իրենց կանոնները: Որոնք են ի վերջո այս մոդելի առավելություններն ու թերությունները: Առավելություններն այն են նրանում, որ ապահովում են ամենաշատ հնարատր պարզություն և ազատություն կրոնական հասարակության և խմբավորումների համար: Եթե նույնիսկ այս առանձնացման և հեռավորության խիստ մոդելը մնում է գրավիչ, ապա ակնհայտ է, որ այն տեղի է ունենում պատմական համատեքստում, որտեղ առկա են լուրջ կրոնական հակասություններ կամ այն բանի վտանգը, որ կրոնը առաջնահերթություն ունի պետության նկատմամբ: Նման իրական կամ ֆիկտիվ ֆոնի վրա ամենաշատ հնարավոր հեռավորության կայունացման գործողությունները կարելի է համարել խելամիտ[5]:

### **Պետական եկեղեցու ձևաչափ**

Կրոնական կազմակերպությունների հետ հարաբերությունների ոլորտում պետական քաղաքականության կողմից նախապատվություն ձեռք բերած ուղղություններից է տվյալ երկրի համար պետական կրոնի կամ ավանդական եկեղեցու կարգավիճակի օրենսդրական ամրագրումը եւ վերջինիս աջակցության ցուցաբերումը՝ առանց սահմանափակելու մյուսների սահմանադրական իրավունքները: Նման պրակտիկան թույլ է տալիս պետությանը բնակչության հոգևոր ու մշակութային դաստիարակության, ազգային-մշակութային ավանդույթների զարգացման, բարոյականության և, որպես արդյունք՝ իրավական մշակույթի բարձրացման, բարոյահոգեբանական եւ հայրենասիրական կրթության եւ այլնի կազմակերպման ասպարեզներում հենվել ավանդական կրոնական կազմակերպությունների վրա: Ինչպես ցույց է տալիս արտերկրյա փորձի ուսումնասիրությունը, գոյություն ունեն պետական կրոնի կամ ավանդական կրոնական կազմակերպության կարգավիճակներ, որոնք միմյանցից որոշակիորեն տարբերվում են: Այսպես, պետական կրոնի առանձնահատուկ հայտանիշներ են համարվում նրա բոլոր ծախսերի պետական ֆինանսավորում, եկեղեցու գործերի վարույթի իրականացումը պետական պաշտոնյաների կողմից, պետական գործերին հաղորդակից լինելու բացառիկ իրավունքը և այլն: Կարևոր ենք համարում ասել, որ հենց այսպիսի կարգավիճակ ունեն Նորվեգիայի եկեղեցին, Դանիայի եկեղեցին, Անգլիական եկեղեցին: Ընդ որում, ոչ ոք նշյալ երկրներին չի համարում, կրոնական, տոտալիտար կամ կղերական պետություն, ոչ էլ նրանց պարսավում ազգային-կրոնական խտրականության մեջ[6]:

### **Պետություն-եկեղեցի հարաբերությունների համագործակցային ձևաչափ**

Այս ձևաչափը լայնորեն գործում է նաև պետական եկեղեցու ձևաչափի համատեքստում: Այլ տեսանկյունից, այն կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ: Այս ձևաչափում առաջին պլան է մղվում ոչ թե ազատության ապահովումը հեռավորության միջոցով, այլ իրավահավասար երաշխիքը: Այս ձևաչափում հարցը ոչ այնքան պետության և կրոնի հեռավորության կամ մտերմության մեջ է, որքան հակառակը՝ որոշումը պետք է ընդունվի գլխավոր արժեքի շրջանակներում՝ իրավահավասար: Այստեղ հարց է առաջանում. արդյոք պետք է, որ եկեղեցու և պետության միջև լինի իրավահավասարություն, լինի դա նյութական, թե պաշտոնական: Իրավահավասարության այս ձևաչափի էությունը այն է, որ ցանկացած կրոնական խմբավորում պետության համար նույն արժեքն է ներկայացնում, իրավահավասար է, սակայն միևնույն ժամանակ նույն չափով անտարբեր է՝ անկախ այն հանգամանքից այդ խմբավորումները մեծ են, թե փոքր[7]: Այստեղ շատ կարևոր է անդրադառնալ կրոնական խմբավորումների ֆինանսական աջակցությանը: Երբ, որտեղ և ում կողմից պետք է ֆինանսավորվեն կրոնական խմբավորումները և արդյոք պետք է ֆինանսավորվեն: Այստեղ խնդիրն այն է, որ

բոլոր կրոնական խմբավորումները հավասար ֆինանսավորում չեն կարող ստանալ և չեն էլ ստանում: Եվ հենց այստեղ էլ խախտվում է իրավահավասարության մոդելը<sup>[8]</sup>: Ընդհանրացնելով այս ձևաչափի առավելություններն ու թերությունները՝ անհրաժեշտ է նշել, որ, անկասկած, այս մոդելն առավելություններ ունի փոքրամասնությունների քաղաքական հնտեզրման տեսանկյունից:

Ուսումնասիրելով տարբեր երկրներում պատմական տարբեր ժամանակաշրջաններում պետություն-եկեղեցի փոխհարաբերության բնույթն ու ձևերը՝ հանգում ենք մի շարք եզրակացությունների.

➤ Հոգևոր անվտանգության, ազգային ինքնության պահպանման, հասարակության հոգևոր մշակույթի ձևավորման գլխավոր երաշխիքը համարվում է պետական և եկեղեցական իշխանությունների համակարգված ռազմավարություն վարելու պայմաններում, ու, կախված այդ հարաբերությունների բնույթից, յուրաքանչյուր երկրում այդ համագործակցությունն ունենում է յուրովի դրսևորում:

➤ Ինչքան էլ որ ցանկացած պետություն որդեգրի այս մոդելներից յուրաքանչյուրը, կամ տեղավորվի որևէ մեկի տրամաբանության շրջանակներում, այնուամենայնիվ յուրաքանչյուր պետությունում այդ հարաբերությունը դրսևորվում է տվյալ պետության առանձնահատկությունների համատեքստում: Ջորջիանակ՝ Անգլո-սաքսոն աշխարհիկ մտածողության դրսևորումներն են «ազգային» եկեղեցիներ ճանաչող պետությունները, ինչպես Անգլիան՝ իր Անգլիկան եկեղեցիով:

➤ Միևնույն ժամանակ պետություն-եկեղեցի-հանրություն հարաբերությունների արդյունավետ մեխանիզմները մշակելու համար անհրաժեշտ է ձևավորել ինստիտուցիոնալ, հետազոտական բնույթի կառույցներ, այսպես կոչված «ուղեղային կենտրոններ»: Համաշխարհային փորձը վկայում է, որ նման կառույցներից բաղկացած համակարգն ազգային/հոգևոր անվտանգության խնդիրները սպասարկելու համար խիստ անհրաժեշտ է:

➤ Ցանկացած երկրում եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների էությունը հասկանալու համար կարևոր է ուսումնասիրել իրավունքի աղբյուրները, պետության և եկեղեցու միջև կնքված երկկողմանի փաստաթղթերը, բացի իրավական աղբյուրներից, այս հարաբերությունների ուսումնասիրության համար կարևոր է նաև այնպիսի գործոնների ուսումնասիրությունը, ինչպիսիք են՝ սոցիալական, քաղաքական, մշակութային և այլն, ինչպես նաև կարևոր է ուսումնասիրել պատմական նախադրյալները, անցյալի փորձն ու ներկայի իրողությունները:

## **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Samuel P. Huntington. Remaking of. World. O. 1996. p 78
2. Брызгев В. Разделение, равновесие, близость. Три модели отношений государства и церкви // Религиоведение. 2009. № 4. стр. 135-143
3. Գասպար Տերտերյան, Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները և նոր աղանդավորականներ  
[http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=2485](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2485)
4. Նույն տեղում:
5. James E. Wood Jr.J. Readings on Church and State By M. Dawson Institute of Church-State Studies, 1989, p 17
6. Стен, Григоренко А. Ю. Церковно-государственные отношения в современной России и проблема религиозной свободы и нетерпимости // Вступая в третье

- тысячелетие: религиозная свобода в плюралистическом обществе, М., 2000, стр. 65
7. James E. Wood JrJ. Readings on Church and State By M. Dawson Institute of Church-State Studies, 1989:
  8. Նույն տեղում:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ Եկեղեցի-պետության փոխհարաբերության ձևաչափերը Սիրանուշ Մելիքյան

Պատմական տարբեր ժամանակաշրջանների ընթացքով ու պետական ապարատի ամենատարբեր առանձնահատկություններով պայմանավորված՝ եկեղեցական ու պետական հարաբերությունները տարաբնույթ ձև ու ընթացք են ունեցել: Այսօր աշխարհում հոգևոր անվտանգության ապահովումը ենթադրում է եկեղեցու, պետության, հասարակության ողջ ներուժի օգտագործում: Այդուհանդերձ եկեղեցի-պետություն փոխհարաբերության մոդելներն ու ձևերը շատ կարևոր են նաև վերոնշյալ հարցի տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրելով տարբեր երկրներում եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների կարգավորման օրինաչափությունները՝ առանձնացնում ենք 3 հիմնական մոդելներ՝

- տարանջատված (երբ եկեղեցին պետությունից գործում է անջատ),
- պետական եկեղեցու մոդել,
- համագործակցության մոդել:

## РЕЗЮМЕ Форматы взаимоотношений церкви и государства Сирануш Меликян

**Ключевые слова:** *церковь, государство, религия, душевный компонент, сообщество, религиозная безопасность, национальная система ценностей, государственный аппарат, эффективное управление.*

Основная цель исследования - выяснить основные формы взаимоотношений государства и церкви, чтобы показать эффективность и особенности этих отношений.

С исторически разных времен и государственных особенностей церковные и государственные отношения изобретали разные пути и формы. Сегодня обеспечение религиозной безопасности в мире предполагает использование совокупного потенциала церкви, государства и общества. И всетаки взаимоотношения между государством и церковью очень важны с точки зрения выше указанной проблемы.

Анализируя опыт разных государств в сфере взаимоотношений между церковью и государством, мы выделили три модели:

- отделенность церкви,
- государственная церковь,
- модель сотрудничества.

**SUMMARY**  
**The Format of Church-State Relations**  
**Siranush Melikyan**

**Keywords:** *Church, state, religion, spiritual component, society, spiritual security, system of national values, state administration, efficient management*

The relations between church and state have had different forms. This process is conditioned by the various peculiarities of state administration and the duration of different historical periods. Today the provision of spiritual security implies the use of the whole potential of church, state and society in the world. Nevertheless, the models and forms of church-state relations are very important in terms of the above-mentioned issue. There are three fundamental models for church-state relations:

- Separated
- Cooperative
- State-church

**ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԵՐՈԸ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1991-2016ԹԹ.)\***

**Էդիկ Մինասյան**

**Բանալի բառեր`** Ֆրանսիական հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, միջպետական կապեր, դիվանագիտական հարաբերություններ, Լևոն Տեր-Պետրոսյան, Միտերան, Օլանդ, Ժակ Շիրակ, Ռ. Քոչարյան, Ս. Սարգսյան, մշակութային կապեր, Սենատ, Ազգային ժողով:

*Հայ-ֆրանսիական քաղաքական կապերի հաստատումն ու ամրապնդումն, սկսվել է Հայաստանի անկախության հռչակումից հետո քաղաքական փոխհարաբերությունների զարգացման հիմնական փուլերով:*

*Խորհրդային Միության փլուզումից հետո Ֆրանսիան նպատակադրվեց նոր լիցք հաղորդել իր քաղաքական նկրտումներին ու տնտեսական շահերին, արժեքների, լեզվի և մշակույթի տարածման գործընթացին, ինչպես նաև անշրջելի դարձնել հետխորհրդային նորանկախ հանրապետությունների որդեգրած Եվրոպական ժողովրդավարության ուղին: Այդ ռազմավարական ուղղության շրջանակներում Ֆրանսիան նախ` 1992թ. հունվարի 3-ին ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը [1], իսկ փետրվարի 24-ին և դիվանագիտական հարաբերություններ հաստատեց մեր երկրի հետ, ինչը բխում էր նաև մեր պետության կենսական շահերից: Հատկանշական է, որ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունը սկսեց գործել արդեն 1992թ. մարտ ամսից, իսկ Հայաստանի դեսպանությունը Ֆրանսիայում` 1992թ. սեպտեմբերից:*

*Միջպետական հարաբերություններում բարիդրացիական ու փոխշահավետ համագործակցության հաստատման և զարգացման բարենպաստ պայման էր այդ երկրների պետաիրավական համակարգերի ընդհանրությունը: Պետությունների հակադիր պետական կառուցվածքների, կառավարման ծևերի, քաղաքական ռեժիմների առկայության, ինչպես նաև տարբեր իրավական համակարգերի ու դրանց հիմքում ընկած արժեքների պարագայում դժվար թե հնարավոր լինի նրանց ռազմավարական գործակցությունը: Եվ, ընդհակառակը, վերոնշյալ հանգամանքների ընդհանրությունը միջպետական համագործակցությունը դարձնում էր կանխատեսելի ու հեռանկարային: Ասվածից հետևում է, որ Հայաստանի և Ֆրանսիայի Հանրապետությունների պետական համակարգերի համեմատական վերլուծության արդյունքներով հնարավոր է կանխատեսել հայ-ֆրանսիական հարաբերությունների զարգացման հեռանկարները: Ելնելով այս իրողությունից` փորձ է արվել հանրագումարի բերել Հայաստանի ու Ֆրանսիայի սահմանադրական ինստիտուտների և իրավակարգերի նմանություններն ու բնորոշ գծերը:*

*Հայաստանի նորանկախ 3-րդ հանրապետության հռչակմամբ, մինչ 1995թ. Սահմանադրության ընդունումը, լայնածավալ ու հետևողական աշխատանքներ իրականացվեցին մեր պետության իշխանական համակարգը կազմավորելու համար: 1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ հաստատվեց և մեր պետության հիմքում դրվեց պետականագիտության ֆրանսիական մոդելը: Դրա մասին էր վկայում այն, որ Հայաստանը ֆրանսիական օրինակով հռչակ-*

\* Հոդվածն ընդունվել է 09.02.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՍՀ պատմության ամբիոնը:



վեց որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն կիսանախագահական կառավարման ձևով: Բացի այդ՝ Հայաստանում ձևավորվեցին իրենց հիմնական գծերով ֆրանսիական կառուցվածքը հիշեցնող պետական մարմիններ ու դրանց գործառնության մեխանիզմներ:

Հայ-ֆրանսիական հարաբերությունները, իրենց հիմքում ունենալով պետական համակարգի և օրենսդրական ընդհանուր հենակետ, օժտված են դրանց ընդլայնման ու խորացման մեծ ներուժով:

Հայաստանի անկախացման հենց առաջին տարիներին ֆրանսիական իշխանությունները ցանկություն հայտնեցին բարձրագույն մակարդակով անմիջական ու փոխշահավետ կապեր ձևավորել՝ մեր երկրի քաղաքական, տնտեսական, հոգևոր մշակութային կյանքում դնելով Ֆրանսիայի համակողմանի մասնակցության հիմնաքարը: Ավելին՝ հայ-ֆրանսիական պաշտոնական երկխոսությունն սկզբնավորվեց դեռևս նախքան Հայաստանի անկախության հռչակումն ու միջազգային ճանաչումը: Այսպես՝ 1991թ. մայիսին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի Ֆրանսիա կատարած այցի շրջանակներում համաձայնագիր ստորագրվեց, որը հանդիսացավ Ֆրանսիայի և դեռևս ԽՍՀՄ կազմում գտնվող հանրապետություններից մեկի միջև կնքված առաջին պաշտոնական փաստաթուղթը[2]: Մեր կարծիքով՝ գլխավորն այստեղ ոչ թե այդ համաձայնագրի բովանդակությունն է ու դրանում ապագա համագործակցության ոլորտների մատնանշումը (կադրերի պատրաստում, էներգետիկա, գյուղատնտեսություն, հեռահաղորդակցություն, տրանսպորտ, շինարարություն և այլն), այլ ինքնին այն փաստը, որ դրանով, ըստ էության, սահմանվում էր Հայաստանի արտաքին իրավական ինքնիշխանությունը:

1993թ. մարտի 12-ին Ֆրանսիա կատարած պաշտոնական այցի շրջանակներում երկու պետությունների նախագահներ Լ. Տեր-Պետրոսյանի և Ֆ. Միտերանի միջև ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության միջև համաձայնության բարեկամության և համագործակցության մասին» միջպետական պայմանագիր: [3] Երկու երկրների հարաբերությունների սերտացման համատեքստում սույն պայմանագրի նշանակության արժեւորման համար, կարծում ենք, անհրաժեշտ է հարցը դիտարկել Հայաստանի և Ֆրանսիայի ներքին ու արտաքին քաղաքական իրավիճակի և շահերի համեմատական վերլուծության տեսանկյունից: Անշուշտ, հայկական կողմի համար պայմանագրի կարևորությունն արտահայտվում էր թե՛ այդ փաստի և թե՛ դրանում ներառված բովանդակության առումով: Ղարաբաղյան շարունակվող հակամարտության պայմաններում պայմանագիրը հանդես եկավ հանձին Ֆրանսիայի եվրոպական աշխարհաքաղաքական դաշնակցի անունից իբրև հակամարտության հայկական կողմի որդեգրած ռազմավարության յուրօրինակ «վավերացում»: Դրանով իսկ Հայաստանը Ղարաբաղյան հարցում հասավ իր և Ադրբեջանի նկատմամբ արտաքին քաղաքական հավասարակշռության սկզբունքի խախտմանը՝ հավասարակշռության «սլաքը» Ֆրանսիայի կողմից ուղղելով հօգուտ հայանպաստ կողմնորոշման: Հայաստանը նաև հուսալի ու հզոր գործընկեր ձեռք բերեց միջազգային ասոցիացիաներում (ՄԱԿ, ԵԱՀԿ և այլն) իր արտաքին քաղաքականության և ազգային շահերի պաշտպանության համար:

Իր հերթին, կնքված պայմանագիրը Ֆրանսիայի համար նշանակալի գործոն էր հետխորհրդային տարածաշրջանում իր արտաքին քաղաքականության ամրապնդման առումով: Բավական է նշել միայն, որ պայմանագիրը եզակի էր ինտեգրման նման որակ ապահովող իր տեսակով կնքված Ֆրանսիայի և ԱՊՀ անդամ-երկրի միջև: Դրանով Ֆրանսիան սկզբնավորում էր որակապես նոր դիվանագիտական առաջնահեր-

թություն ուղղված ԱՊՀ, նորանկախ պետություններից մեկի հետ երկարաժամկետ բարիդրացիական քաղաքական հարաբերությունների հաստատմանը: Բացի այդ՝ Ֆրանսիայի համար Հայաստանը հետաքրքրություն էր ներկայացնում նաև կոպկասյան տարածաշրջանում հենակետային դիրքեր գրավելու ու ռազմավարական գործընկեր ձեռք բերելու տեսանկյունից: Դա էլ, մեր համոզմամբ, վերոնշյալ պայմանագրի հիմքում դրված հիմնական նախադրյալներից էր, որով Ֆրանսիան իր փաստական «խնամակալությունն» էր սահմանում Հայաստանի նկատմամբ: Հայ-ֆրանսիական բարձրագույն մակարդակով հարաբերությունները նոր շրջան թևակոխեցին 1995թ. Ֆրանսիայում կայացած նախագահական ընտրություններից հետո: Դրանց արդյունքում Ֆրանսիայի նախագահի բարձր իրավասությունը ստանձնած ժակ Շիրակը պոստգոյան շարժման առաջատարներից էր[4], որի հռչակած «Ֆրանսիական համաշխարհային տերություն» հայեցակարգի դիրքերից Հայաստանը հետխորհրդային տարածքում և մասնավորապես կոպկասյան տարածաշրջանում դիտվում է որպես Ֆրանսիայի աշխարհաքաղաքական շահերի կարևոր գործընկեր ու դաշնակից:

«ՀՀ նախագահի հերթական այցը Ֆրանսիա կայացավ 1996թ. հունիսին[5] և նշանակալից տնտեսության կոնկրետ ոլորտներին առնչվող երկկողմ պայմանագրերի ստորագրումով[6]:

1998 թվականը Հայաստանի ներքաղաքական կյանքում շրջադարձային փոփոխություններ մտցրեց, որոնք անմիջական ազդեցություն ունեցան նրա միջազգային գործունեության վրա: Այդ տարվա սկզբին կայացան Հայաստանի նախագահական արտահերթ ընտրությունները, որոնց արդյունքում պետության ղեկավարի լիազորությունները ստանձնեց Ռոբերտ Քոչարյանը: Նա հանրապետության արտաքին քաղաքականության հիմքում դրեց «փոխլրացման» հայեցակարգը: Դրա իմաստը այն էր, որ բոլոր պետությունների հետ իրավահավասար, բարիդրացիական հարաբերությունների կառուցվեն կամ պաշտոնական ձևակերպման համաձայն՝ «Հանրապետության ինքնիշխանության ու անվտանգության շահերը պաշտպանել ոչ թե տարբեր երկրների միջպետական հակասությունների ծիրում, այլ ի նպաստ նրանց համագործակցության»:

«ՀՀ նախագահի կարգավիճակով Ռ. Քոչարյանի առաջին աշխատանքային այցը Ֆրանսիա տեղի ունեցավ 2000թ. հունիսին: Հայաստանի և Ֆրանսիայի նախագահների հանդիպման ժամանակ Ռ. Քոչարյանն ու Ժ. Շիրակը հանգամանորեն քննարկեցին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման, այդ գործընթացում Ֆրանսիայի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի մասնակցության հարցերը: Ժակ Շիրակի հետ հանդիպման այդ առանցքային օրակարգային հարցից զատ, նախագահների ուշադրության կենտրոնում էր նաև երկու երկրների հարաբերությունների զարգացման հեռանկարը: Հիմնական շեշտադրումը կատարվեց տնտեսական համագործակցության և հատկապես Հայաստանի տնտեսության մեջ ֆրանսիական ներդրումների խնդրի վրա:

«ՀՀ նախագահի հաջորդ այցը Ֆրանսիա կայացավ 2001թ. հունվարին[7]: Այս այցը առանձնանում էր նրանով, որ ֆրանսիական կողմի հետ հանդիպումները ոչ թե երկկողմ, այլ հայ-ադրբեջանա-ֆրանսիական եռակողմ ձևաչափ ունեին, իսկ բանակցությունների օրակարգում միայն Ղարաբաղյան հակամարտության կարգավորումն էր: Այդ հանդիպման արդյունքում ձևավորվեցին Ղարաբաղյան հակամարտության կարգավորման այսպես կոչված «փարիզյան սկզբունքները», որոնք ամբողջովին ընդունելի էին հայկական կողմի համար: Չնայած այդ սկզբունքները Ադրբեջանի միակողմանի հերքման պատճառով չդրվեցին հետագա բանակցությունների հիմքում, այդուհանդերձ, դրանք վկայում էին հայ-ֆրանսիական հարաբերությունների ելակետային ուղղություններից մեկի Ղարաբաղյան խնդրի կարգավորման շուրջ լիակատար փո-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՄԱՐՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

խըմբռնման ու դրա որոշակիորեն ի նպաստ Հայաստանի հանգեցրած կարևորագույն արդյունքների մասին:

Հայ-ֆրանսիական համագործակցության տասնամյա շրջանի արդյունքները հանրագումարի բերվեցին 2001թ. փետրվարին, երբ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը պետական այց կատարեց Ֆրանսիան[8]: 1991թ. անկախացումից հետո դա Հայաստանի նախագահի առաջին պետական այցն էր Ֆրանսիա, ինչը պայմանավորված էր երկու պետությունների քաղաքական, ինչպես նաև գիտամշակութային հարաբերությունների բարձր մակարդակով: Այցը նշանակալի էր նաև նրանով, որ այն անմիջապես հետևեց Ֆրանսիայի խորհրդարանի ընդունած և երկրի նախագահի կողմից վավերացված օրենքին, որով Ֆրանսիայում պաշտոնապես ճանաչվեց հայերի ցեղասպանության փաստը:

Այսպիսով՝ Հայաստանի և Ֆրանսիայի նախագահների անմիջական առնչությունները Հայաստանի անկախ պետականության կայացման առաջին տասնամյակում երկու պետությունների միջև բազմակողմ, համակարգված ու կայուն համագործակցության հաստատման գլխավոր նախապայմանն էին:

Հայ-ֆրանսիական միջպետական, այդ թվում խորհրդարանական և առևտրատնտեսական փոխհարաբերությունները շարունակեցին զարգանալ 2000-ական թվականների կեսերից: Այդ հարաբերությունների զարգացումը տեղի էր ունենում ոչ միայն Եվրոմիության շրջանակներում, ԵԱՀԿ-ում Ֆրանսիայի իբրև Մինսկի խմբի անդամ երկրի հետ կապված, այլև ուղղակի նախագահների, վարչապետերի և ԱԳ նախարարների անմիջական շփումների և համալսարանական համագործակցության պայմանագրերի ստորագրման պայմաններում: 2009թ. ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը այցելություն կատարեց Ֆրանսիայի հանրապետություն: Հունվարին Դավոսի համաշխարհային տնտեսական ֆորումի շրջանակներում կայացան նրա հանդիպումները Ֆրանսիայի նախագահ Ն.Սարկոզիի, իսկ մայիսին Պրահայում կայացած ԵՄ «Արևելյան գործընկերության» գագաթաժողովի շրջանակներում Ֆրանսիայի վարչապետի Ֆրանսու Ֆիյոնի հետ: Ֆրանսիայի հետ համագործակցությունը շարունակեց խորանալ: Տեղի ունեցավ նաև ԱԳ նախարարների երեք հանդիպում: Ստորագրվեց դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջը վերացնելու մասին համաձայնագիր, որն առաջին քայլն էր ԵՄ երկրների հետ վիզային ռեժիմի դյուրացման ճանապարհին[9]: 2009թ. մարտի 12-ին ԱԳ նախարար էդվարդ Նալբանդյանը և Փարիզի քաղաքապետ Բերտրան Գելանտեն Փարիզի կենտրոնում բացեցին Երևանի անունը կրող պուրակը[10]:

2010թ. ընթացքում հետևողական աշխատանք իրականացվեց եվրոպական երկրների հետ տարբեր ոլորտներում երկկողմ հարաբերությունների ամրապնդման և զարգացման ուղղությամբ: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն այցելեց Ֆրանսիա[11]: 2010թ. Երևանում տեղի ունեցավ հայ-ֆրանսիական սպակենտրոնացված համագործակցության երկրորդ համաժողովը:

2011թ. սեպտեմբերի 27-29-ը տեղի ունեցավ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Ֆրանսիական Հանրապետություն:

Առավել խորացվեց և ամրապնդվեց Ֆրանսիայի հետ ավանդական սերտ բարեկամական հարաբերությունները: 2011 թվականին Ֆրանսիայի նախագահի պետական այցը Հայաստան պատմական էր թե՛ իր նշանակությամբ, թե՛ արդյունքներով[12]:

2012թ. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այցելություն կատարեց Ֆրանսիա, հանդիպումներ ունեցավ նախագահ Ֆրանսուա Օլանդի, վարչապետի, Սենատի և Ազգային ժողովի ղեկավարների հետ: Այս այցելությունը կարևոր հանգրվան

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

հանդիսացավ հայ-ֆրանսիական բարեկամական հարաբերությունների շարունակական ամրապնդման գործում: Այդ հարաբերությունները շարունակեցին զարգանալ նաև հետագա տարիներին[13]:

2013թ. մայիսի 13-ին կայացավ Էդվարդ Նալբանդյանի այցելությունը Ֆրանսիա, որտեղ բանակցություններ կայացան Ֆրանսիայի ԱԳ նախարար Լորան Ֆաբիուսի հետ: Այցի ընթացքում նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպում ունեցավ նաև Ֆրանսիայի Սենատի անդամների և Ազգային ժողովի պատգամավորների հետ[14]:

2014թ. մայիսի 12-13-ը տեղի ունեցավ Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ֆրանսուա Օլանդի պետական այցը Հայաստան: Ձեռք բերվեցին պայմանավորվածություններ, որոնք նոր մակարդակի բարձրացրին հայ-ֆրանսիական առանձնաշնորհյալ հարաբերությունները[15]:

Նույն տարում ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը աշխատանքային այց կատարեց Ֆրանսիա:

Փետրվարին և հոկտեմբերին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն աշխատանքային այցեր է կատարել Ֆրանսիա, հանդիպումներ ունեցել Ֆրանսիայի ԱԳ նախարար Լորան Ֆաբիուսի հետ: Հայաստանի և Ֆրանսիայի արտգործնախարարները հանդիպումներ են ունեցել նաև միջազգային համաժողովների շրջանակներում:

Հայ-ֆրանսիական հարաբերությունների զարգացման և երկու երկրների համագործակցության նոր դրսևորումներից հանդիսացան Ֆրանկոֆոնիայի միջազգային համաժողովի շրջանակներում ցեղասպանության իբրև հանցագործության կանխարգելման և պատժելու մասին հայտնի առաջարկության պաշտպանությունը, ինչպես նաև Ֆրանսիայի նախագահի Ֆ. Օլանդի հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ժամանակ այցելությունը Երևան, Ծիծեռնակաբերդի միջոցառումների շրջանակներում նրա արտասանած ճառում Հայոց ցեղասպանության դատապարտման և Թուրքիայի ժխտողականության դեմ պայքարի կարևորությունը ընդգծող ելույթը:

2015թ. հոկտեմբերին Երևանում կայացած 80 պետություններ կայացնող Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության արտգործնախարարների համաժողովն ընդունել է Հայաստանի կողմից նախաձեռնված «Ցեղասպանության կանխարգելման մասին» բանաձևը, որում հղում է կատարվում նույն կազմակերպության զլխավոր քարտուղար Միկաել Ժանի ապրիլի 24-ի Մեծ եղեռնի զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցող և հայ ժողովրդին համերաշխություն հայտնող հայտարարությանը:

Տարբեր երկրների առաջնորդներ ու ղեկավարներ, կառավարություններ և խորհրդարաններ իրենց զորակցությունն են հայտնել հայ ժողովրդին:

Ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում տեղի ունեցած միջոցառումներին մասնակցել են Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսը, Սերբիայի նախագահ Տոմիսլավ Նիկոլիչը, մի քանի տասնյակ երկրների և միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան պատվիրակություններ: Մի շարք պետությունների ղեկավարներ իրենց երկրներում մասնակցել են Մեծ եղեռնի հիշատակի միջոցառումներին[16]:

Հայ-ֆրանսիական միջխորհրդարանական կապերի ձևավորման առնչությամբ հարկ է նշել, որ դեռևս 1990թ. սեպտեմբերին Ֆրանսիայի Ազգային ժողովում ստեղծվեց Ֆրանսիա Հայաստան պատգամավորական խումբ[17], որը նպատակ ուներ ուսումնասիրելու երկկողմ հարաբերությունների զարգացման հնարավորությունները: Խմբի անդամները հիմնականում Ֆրանսիայի հայաշատ շրջաններից ընտրված պատգամավորներ էին, իսկ նախագահն էր սոցիալիստ պատգամավոր Միշել Սապենը: Խմբի անդամներից մի շարք պատգամավորներ Ռիշար Կազնավը, Ֆրանսուա Ռոշբլո-

ւանը, Պատրիկ Դեջյանը 1990թ. վերջին այցելեցին Հայաստան և հանդիպումներ ունեցան ՀՀ գերագույն խորհրդում: Այցերը կրում էին փոխձանաչողական ընդհանրական բնույթ և առավելապես միտված էին ֆրանսիական քաղաքական ու հասարակական կարծիքը Հայաստանի ընթացիկ սոցիալական ծանրագույն իրավիճակի ու ժողովրդավարացման շարժման առաջընթացի վրա բևեռելուն: Նույն թվականի նոյեմբերին կայացավ Ֆրանսիական Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Ռենե Ռուկիի, Ֆրանսուա Ռոշբլոսսնի և այլ պաշտոնյաներից կազմված պատվիրակության այցը Հայաստան[18]: Նրանք հանդիպումներ ունեցան հանրապետության Գեոնախագահ Լ. Տեր-Պետրոսյանի, Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանի հետ: Պատգամավորների հանդիպումներն այս անգամ նպատակ էին հետապնդում մի կողմից՝ արագացնել Հայաստանի որպես միջազգային իրավունքի կայացող սուբյեկտի ձևաաչումը և, մյուս կողմից՝ օժանդակել հայ ժողովրդին բարելավելու շարունակվող Արցախյան պատերազմի, շրջափակման և անցումային շրջանի հետևանքով խորացող սոցիալ-տնտեսական ծանր կացությունը:

Հարկ է նշել, որ միջխորհրդարանական ակտիվ համագործակցությունը շարունակվեց նաև հետագա տարիներին: Այդ գործում մեծ դեր ունեցան խորհրդարանների ղեկավարների փոխադարձ այցերը (Բ. Արարքյան - 1992թ. հոկտեմբեր, 1995թ. մարտ, Խ. Հարությունյան - 1999թ. մարտ, Ա. Խաչատրյան - 1999թ. դեկտեմբեր, ինչպես նաև Ռ. Մոնորի - 1996թ. մայիս, Բ. Պոնսլե - 1999թ. հուլիս): Ինչպես ցույց տվեց միջխորհրդարանական համագործակցության հետագա փորձը, բարեկամության խմբի ձևաչափով դրա շարունակականությունը խիստ արդյունավետ ու կենսունակ գտնվեց: Բարեկամության խմբերի առջև դրված խնդիրները, որպես այդպիսին ընդհանրական էին. քաղաքական ու տնտեսական երկկողմ գործակցության բարենպաստ մթնոլորտի ստեղծում, պարբերական փոխայցերի, խորհրդակցությունների, հայտարարությունների, լրբբինգային գործունեության միջոցով այդ փոխհարաբերությունների մշտական վերահսկողություն, երկու ժողովուրդների հոգևոր-մշակութային ժառանգության փոխադարձ ներկայացում ու մերձեցում:

Հայաստանում ֆրանսիական կառավարության հումանիտար առաքելության նախնական ձեռնարկներից էին Ֆրանսիայի մարդասիրական գործունեության հարցերով պետական քարտուղար Բեռնար Քուշների 1992թ. սկզբներին մեր երկիր կատարած պարբերական այցերը: Նույն թվականին պաշտոնական այցով Ֆրանսիա մեկնեց ՀՀ փոխնախագահ, վարչապետ Գ. Հարությունյանը: Այցի նպատակներն էին ԵԱՀԿ հիմնական փաստաթղթերից մեկի Փարիզի խարտիայի ստորագրումը, Ֆրանսիայի հայաբնակ կենտրոնների Փարիզի, Լիոնի և Մարսելի հայկական համայնքներում Հայաստանի քաղաքականության արդի սկզբունքների ժանուցման համար հանդիպումները, հայ-ֆրանսիական քաղաքական և տնտեսական կապերի ամրապնդումը:

Ընդհանուր առմամբ ՀՀ վարչապետի գլխավորած պատվիրակության այս այցը կարելի է գնահատել որպես Ֆրանսիայի հետ միջկառավարական գործակցության առաջին և հիմնարար քայլ, ինչի վկայությունն էին համագործակցության տարբեր բնագավառների շուրջ արված առաջարկները, ինչպես նաև Հայաստանի հետ առևտրային համաձայնագրի և համագործակցության ու բարեկամության պայմանագրի ստորագրման վերաբերյալ պայմանավորվածության ձեռքբերումը:

Հայաստանի և Ֆրանսիայի տեղական իշխանության մարմինների միջև համագործակցության առումով հատկապես կարևորվում են երկու երկրների տարբեր քաղաքների միջև ձևավորված և հետագայում զարգացած բարեկամական ու գործնական առնչությունները: Այդ իմաստով առաջին հերթին անհրաժեշտ է անդրադարձնալ երկու

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

պետությունների մայրաքաղաքների Երևանի և Փարիզի միջև սկիզբ առած գործընկերությանը: Այսպես՝ 1998թ. նոյեմբերին Փարիզի քաղաքապետ ժան Տիբեթի հրավերով Ֆրանսիա էր այցելել Երևանի քաղաքապետ Սուրեն Աբրահամյանը: Այցի նպատակն էր ստորագրել Փարիզ ու Երևան քաղաքների միջև բարեկամության և համագործակցության հուշագիր, որով հիմնականում նախատեսվում էր փորձի և գիտելիքների փոխանակում կազմակերպել քաղաքների կառավարման տարբեր օղակներում: Համատեղ հետաքրքրությունների շրջանակներում դեռևս 1991 թվականից ի վեր գործնական շփումներ էին հաստատվել նաև Երևան և Լիոն քաղաքների միջև[19]: Հիշարժան է նաև սերտ համագործակցությունը Աշտարակ և Ալֆրովյիր, Թալին և Վալանս, Վանաձոր և Բանյո, Ստեփանավան և Ղեսին քաղաքների միջև, ինչպես նաև Լոռու և Պրովանս-Ալպ-Կոտ-դ'Ազյուր մարզերի միջև:

Արցախյան հակամարտության և Հայոց ցեղասպանության հիմնահարցերում Ֆրանսիան ելնում էր ազգային-պետական շահերից ու տարածաշրջանի հանրապետությունների նկատմամբ անկողմնակալ ու չեզոք դիրք գրավելու հրամայականից Ղարաբաղյան խնդրում Ֆրանսիայի պաշտոնական դիրքորոշումը հատկապես վերջին շրջանում (1996-2015թթ.) խիստ հավասարակշռված էր (թեև Ֆրանսիայում բազմիցս խնդրի հայանպաստ կարգավորման կոչեր են հնչել ու այդ երկիրը մշտապես գործնական օգնություն է ցուցաբերել Արցախին մարդասիրական օգնության հատկացման միջոցով):

2001թ. փետրվարին «Հ նախագահի Ֆրանսիա կատարած պետական այցի ժամանակ, անդրադարձնալով Արցախյան հիմնախնդրի կարգավորմանը, Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակը մասնավորապես ասաց. «Հույս ունեմ, որ մոտ ապագայում նոր դարաշրջան կբացվի Կովկասում: Ֆրանսիան չի խնայի իր ջանքերը, որպեսզի խաղաղությունը վերջապես վերահաստատվի այդ տարածաշրջանում: Խաղաղության իրական հեռանկարներ են գծագրվում այն հակամարտության կապակցությամբ, որը ձեզ հակադրում է Ադրբեյջանին Լեռնային Ղարաբաղի հետ կապված: Առաջ անցնելու համար հարկավոր է քաջություն, վճռականություն և համարձակություն» [20]: Իր հերթին, ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը պետական այցի նախօրեին Ֆրանսիական «Ֆիզարո» թերթին տված հարցազրույցում նշել էր, որ «մենք կողմնակից ենք խնդրի փաթեթային կարգավորմանը, որը ներառում է Ղարաբաղի կարգավիճակի հարցը, գրավյալ տարածքների ապագան ու անվտանգության երաշխիքների հետ կապված խնդիրները» [21]:

Ֆրանսիան Արցախյան խնդրի լուծման գործում ակտիվ քաղաքականություն է վարում նաև իբրև Մինսկի խմբի համանախագահ երկրներից մեկը:

Անհամեմատ մեծ է Ֆրանսիայի դերը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրում: Այդ առումով անգնահատելի ներդրում ունեցան Ֆրանսիայի առաջադեմ հասարակայնության այն ներկայացուցիչները (Անատոլ Ֆրանս, Ֆրենսիս դը Պրեսանսե, ժակ դը Մորգան, Ժ. Ժորես, Պիեռ Քիսա, Ժ. Կլեմանսո, Ղենի Քոչեն, ժակ Ֆինո և այլոք), ովքեր, օժտված լինելով ֆրանսիական մտքի ու խղճի լավագույն ու առաքինի հատկանիշներով, իրենց բողոքի, ցասման ու դատապարտման հզոր ձայնն են բարձրացրել սուլթան Աբդուլ Համիդի և երիտթուրքերի կառավարման տարիներին իրականացված հայերի զանգվածային ջարդերի ու 1915թ. Մեծ եղեռնի կապակցությամբ: Մինևույն ժամանակ, նրանք հանդես էին գալիս պատմական այդ աղետից հետո հայ ժողովրդի գոյատևման ու նրա ոտնահարված իրավունքների պաշտպանության կոչերով:

Ղեռևս 1965թ. ապրիլին՝ Մեծ եղեռնի 50-ամյակի նախօրեին, ֆրանսիական խորհրդարանի Ազգային ժողովի կոմունիստ պատգամավորները հարցապնդում արե-

ցին կառավարությանը՝ պահանջելով դատապարտել 1915թ. ցեղասպանությունը միջազգային չափանիշով, որպես նարոկության դեմ ուղղված հանցագործություն և փոխհատուցում տալ հայերին[22]: 1980թ. դեկտեմբերին Մարտելում բացվեց «1915թ. ապրիլի 24» փողոցը: Մինչ այդ նույնանման անվանումներով փողոցներ էին կոչվել Ֆրանսիայի հայաշատ Վիեն, Դեսին և այլ քաղաքներում:

Ֆրանսուա Միտերանը 1980թ. նախագահական ընտրությունների նախօրյակին հայտարարեց, որ Հայկական հարցն ուղղակիորեն վերաբերում էր ֆրանսիական պետությանը և կշտամբեց կառավարությանը հայկական ցեղասպանությունը և հայկական հարցը չճանաչելու համար[23]: Իսկ 1981թ. ապրիլին նա Մարտել քաղաքում գտնվող «Ապրիլի 24» կոթողի մոտ հայտարարեց, որ սոցիալիստները պետք է պահանջեն, որ Ֆրանսիան ճանաչի 1915թ. հայերի ցեղասպանությունը և հանդես գա Հայկական հարցի արդարացի լուծման համար[24]: 1982-1986թթ. Հայոց ցեղասպանության միջազգայնացման խնդրում առավել ակտիվ էին Ֆրանսիայի կոմունիստ պատգամավորները, որոնք բազմիցս հանդես են եկել տարբեր ատյաններում գրավոր հարցապնդումներով: Մասնավորապես, 1985թ. դեկտեմբերին 35 կոմունիստ պատգամավորների անունից Ֆրանսիայի Ազգային ժողովի փոխնախագահ Գի Դյուկոլոնեն հանդես եկավ գրավոր առաջարկով՝ ընդունելու հատուկ օրենք և ճանաչելու ցեղասպանությունը, որի զոհն էր դարձել հայ ժողովուրդը:

Օրենքի նախագիծն ուղարկվեց Ֆրանսիայի Հանրապետության սահմանադրական, օրենսդիր ու վարչական օրենքների համակարգման հանձնաժողով, սակայն հարցին համապատասխան ընթացք չտրվեց:

Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության միջազգայնացմանն ուղղված այդ հզոր շարժման շնորհիվ էր, որ 1998թ. մայիսին հնարավոր դարձավ Ֆրանսիայի Ազգային ժողովի նիստում քննարկման դնել «1915թ. հայերի ցեղասպանության հրապարակապնդուն ճանաչման մասին» օրենքի նախագիծը: Այն առաջադրվել էր պատգամավոր Դիդիե Միգոյի ու իր գործընկերների կողմից:

Ֆրանսիայի Ազգային ժողովում Հայոց ցեղասպանության օրենքի տեսքով ընդունման գործում զգալի ավանդ ուներ նաև ծագումով հայ պատգամավոր Պատրիկ Դևեջյանը, որն իր փաստարկված ելույթի շնորհիվ դեռևս երկմտանքի մեջ գտնվող փոքրաթիվ ֆրանսիացի պատգամավորներին համոզեց կողմ քվեարկել օրենքի նախագծին: Նա հերքեց այն տեսակետը, որ վերոնշյալ օրենքի ընդունումը կարող էր խոչընդոտ հանդիսանալ տարածաշրջանում խաղաղության հաստատման համար:

Ազգային ժողովում օրենքի նախագիծն ընդունվեց ծայրերի ձևով մեծամասնությամբ, որից հետո Ֆրանսիայի Սենատի օրակարգ մտցնելու երկու մերժումից հետո 2000թ. նոյեմբերին պատգամավորներ ժակ Պելլըտիեի և գործընկերների կողմից Սենատի քննարկմանը ներկայացվեց «1915թ. հայերի ցեղասպանության հրապարակապնդուն ճանաչման մասին» օրենքի նախագիծը: Քննարկումների և ելույթների բովանդակային կողմն ընդհանրացնելով՝ կարելի է եզրակացնել, որ օրենքի նախագիծն և՛ կողմնակիցների, և՛ հակառակորդների տեսակետերը հիմնականում համընկնում էին երկու տարի առաջ Ֆրանսիայի Ազգային ժողովում հնչած կարծիքների հետ: Օրենքի նախագիծն կողմ քվեարկեց 164, դեմ 40 պատգամավոր[25]: Ֆրանսիայի Սենատի պատգամավորները հոտնկայս բուռն ծափահարություններով ողջունեցին օրենքի նախագիծի ընդունման փաստը:

Այնուհետև 2001թ. հունվարի 18-ին օրենքը ստորագրեց Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակը: Ֆրանսիան, փաստորեն, դարձավ աշխարհում առաջին պետությունը, որը Հայոց ցեղասպանությունը ճանաչեց օրենքի տեսքով: Հատկանշական է, որ

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

օրենքի ընդունումից անմիջապես հետո 2001թ. հունվարի 29-ին Փարիզի քաղաքային խորհուրդը միաձայն որոշում կայացրեց Կոմիտասի արձանը տեղադրել Փարիզի հրապարակներից մեկում՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի և Առաջին ու Երկրորդ համաշխարհային պատերազմներում հանուն Ֆրանսիայի զոհված հայ նահատակների:

Այդպիսով՝ Ֆրանսիայի Ազգային ժողովում և Սենատում քննարկումների ընթացքում փաստվեց, որ Հայոց եղբունը համամարդկային իրողություն է, և դրա ճանաչումն ու ըստ արժանվույն գնահատումը հասարակական բոլոր շրջանակների, այդ թվում քաղաքական ուժերի մտահոգության առարկան է, քանզի ցեղասպանության փաստն ու դրա հետևանքները ենթակա չեն մոռացության՝ անկախ վերջիններիս վաղեմության ժամկետների: Հետևապես ֆրանսիական ժողովրդավարական ոգու աներկբա նվաճումը կարելի է համարել հայերի մեծ ջարդի ցեղասպանության հրապարակային ճանաչումն ու ամրագրումն օրենքով՝ որպես արդար գործի հաղթանակի նախադեպը չունեցող օրինակ, համաշխարհային քաղաքակրթության զարգացման ուղենիշ:

2012թ. հունվարի 23-ին Ֆրանսիայի Սենատն ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի նախագիծը: Սակայն օրենքի ուժի մեջ մտնելուն խոչընդոտ հանդիսացավ Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի որոշումը, որը մերժեց օրենքի ընդունումը: Ֆրանսիայի նորընտիր նախագահ Ֆրանսուա Օլանդը տարբեր առիթներով բազմիցս վերահաստատեց նպատակադրվածությունը հասնելու Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի ընդունմանը[26]:

Հայ-ֆրանսիական առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը ի սկզբանե խոչընդոտում էին մի շարք օբյեկտիվ հանգամանքներ, որոնցից էին Հայաստանի նորանկախ պետության բարդ ու լարված իրավիճակը, տնտեսական շրջափակումը, տարածաշրջանային հակամարտությունների առկայությունը, ինչպես նաև երկու երկրների տնտեսական ենթակառուցվածքների անհամապատասխանությունը: Բնական է, որ տնտեսական կապերի հաստատման առաջին փորձերն արվում էին այն երկրների հետ, որտեղ ապրում են մեծաթիվ հայեր ու որոնց հետ ավանդաբար ձևավորվել էին բազմաբնույթ կապեր:

Հայ-ֆրանսիական տնտեսական փոխգործակցության ուրվագծերը սաղմնավորվել էին դեռևս նախքան Հայաստանի Հանրապետության անկախության միջազգային ճանաչումը[27]: 1991թ. Հայաստանի խորհրդարանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և Ֆրանսիայի նախագահ Ֆ. Միտերանի միջև Փարիզում կայացած հանդիպման ժամանակ պայմանավորվածություն էր ձեռք բերվել Հայաստանի էներգետիկ համակարգի բարեփոխման, վարկերի տրամադրման և ֆրանսիական ձեռնարկությունների ներդրումներին աջակցելու վերաբերյալ: Սակայն տնտեսական համագործակցության համար անհրաժեշտ էր ստեղծել իրավապայմանագրային հենք:

Այդ համատեքստում դժվար է գերազնահատել 1993թ. մարտի 12-ի միջպետական պայմանագրի դերը Հայաստանի Հանրապետության ու Ֆրանսիական Հանրապետության միջև բազմաբնույթ, այդ թվում նաև փոխշահավետ տնտեսական հարաբերությունների հաստատման և հետագա զարգացման գործում: Արժանահիշատակ է 1995թ. նոյեմբերին ՀՀ և ՖՀ կառավարությունների միջև կնքված համաձայնագիրը «Կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության վերաբերյալ»:

Գործնական ու հեռանկարային կարելի է համարել նաև 1997թ. դեկտեմբերի 9-ին Փարիզում երկու երկրների կառավարությունների միջև կնքված «Եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկային պարտավո-



## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

րություններից խուսափումն ու խարդախությունը կանխելու մասին» համաձայնագրի նշանակությունը[28]:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում 2001 թվականի դրությամբ Հայաստանում արդեն գործում էին շուրջ 70 հայ-ֆրանսիական համատեղ ձեռնարկություններ, որոնց գործունեության ոլորտներն ընդգրկում էին մանրամեծածախ առևտուրը, հաշվապահական հաշվառումը, ֆինանսական աուդիտը, էլեկտրաէներգիայի արտադրությունը և այլն: Տնտեսական փոխշահավետ համագործակցության օրինակ է Երևանի կոնյակի գործարանի վաճառքը ֆրանսիական «Պեռնո Ռիկար» ընկերությանը (թեև գործարքի նպատակահարմարության վերաբերյալ հասարակության մեջ կային տարակարծություններ): Գործարքն իրագործվեց 1998թ հունիսի 12-ին, երբ ՀՀ սեփականաշնորհման նախարարը և ֆրանսիական «Պեռնո Ռիկար» խմբի գլխավոր տնօրենը Փարիզում ստորագրեցին Երևանի կոնյակի գործարանի սեփականաշնորհման պայմանագիրը:

Վերջինիս համաձայն՝ բացի 30 մլն դոլար գնման արժեքից՝ ֆրանսիական ընկերությունը պարտավորվեց հետագա 5 տարիների ընթացքում 4 մլն դոլար ներդնել հայկական կոնյակի արտադրական սարքավորումների արդիականացման և առևտրի զարգացման նպատակով[29]: Սակայն 1998-2002թթ. ընթացքում ընկերությունը կատարել է ավելի քան 30 մլն դոլարի ներդրում՝ ամբողջությամբ փոխելով գործարանի կառավարման համակարգը: Գործարքի արդյունքում կոնյակի և ալկոհոլային խմիչքների արտադրության մեջ ներդրվեցին նորագույն տեխնոլոգիաներ: Բացի այդ՝ նախապես կնքված պայմանագրերի միջոցով կտրուկ ավելացան մթերվող խաղողի ծավալները՝ կայուն եկամուտներ և աշխատատեղեր ապահովելով մեր երկրի գյուղատնտեսության ոլորտում:

Հայ-ֆրանսիական տնտեսական հաջող ու փոխշահավետ գործակցության մեկ այլ օրինակ է 1998թ. վերջին գործարկված Աբովյանի «Կաստել» գարեջրագործարանը, որը պահանջեց 17 մլն դոլարի ներդրում: Գործարանի նախագծային հզորությունը տարեկան 350 հազար լիտր է: Գարեջուրն արտահանվում է Ֆրանսիա, ԱՄՆ, Ռուսաստան, Ավստրալիա, Ռուկրահնա, Իսրայել և այլուր[30]: Երկու երկրների միջև ապրանքաշրջանառության դինամիկան աճի միտում ունի և արդեն 2000թ. ՀՀ և Ֆրանսիայի արտաքին առևտրի շրջանառության ընդհանուր ծավալը կազմել էր 18 մլն դոլար, որից 0,5 մլն դոլար արտահանում և 17,5 մլն դոլար ներմուծում: Սակայն հայ-ֆրանսիական քաղաքական, մշակութային և գիտական համագործակցության համեմատ՝ երկու երկրների միջև առևտրաարդյունաբերական կապերի տեսակարար կշիռը խիստ փոքր էր՝ ժամանակի հրամայականի դարձնելով անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկումը այն խթանելու նպատակով:

Վերջին տարիներին բարձրաստիճան քաղաքական երկխոսության նոր որակ հաղորդվեց: Ակտիվացան հայ-ֆրանսիական հարաբերությունները առևտրատնտեսական գիտակրթական և մշակութային ոլորտներում: Ընդլայնվեց իրավապայմանագրային դաշտը, որը ներառում է 40-ից ավելի համաձայնագրեր:

Հայաստանում 2016թ. տվյալներով գործում են շուրջ 160 ֆրանսիական կապիտալով ձեռնարկություններ, որոնք շատ մեծ ավանդ են ներդնում Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գործում[31]:

Մինչև 1990-ական թվականների վերջը՝ հայ-ֆրանսիական հարաբերություններում տնտեսական ուղղությունը շատ մեծ տեղ չէր զբաղեցնում: Տնտեսական կապերն աշխուժացան՝ զագաթնակետին հանելով 2007-2008թթ., ինչու, անշուշտ, կարևոր խթան հանդիսացավ Ֆրանսիայում Հայաստանի տարվա անցկացումը, որի նախա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

պատրաստական շրջանում, և ընթացքում մեր երկիրը հայտնվեց ֆրանսիական բազմաթիվ խոշոր ձեռնարկությունների ուշադրության կենտրոնում: Հայաստանում սկսեցին գործել ֆրանսիական կապիտալի մասնակցությամբ բազմաթիվ (140-ից ավելի) ձեռնարկություններ: Արդյունքում՝ արդեն 2011-2012թթ. Ֆրանսիան դարձավ Հայաստանի Հանրապետության երկրորդ գործընկերը արտաքին ներդրումների ծավալով: Դրան նպաստեցին նաև երկկողմ մի շարք տնտեսական համաժողովները, բիզնես ֆորումները, որոնցից երկուսը միայն Հայաստանի Հանրապետության նախագահի մակարդակով, անցկացվեց Փարիզում և Լիոնում, և մեկը՝ Ֆրանսիայի նախագահի մասնակցությամբ Երևանում: Հիշատակելի են ֆրանսիայի խորհրդարանի կազմակերպած տնտեսական համաժողովը ՀՀ ԱԺ նախագահի մասնակցությամբ: Այս պայմաններում վերջին տարիներին աշխատանքներ նպատակամղվեցին մի կողմից՝ դեպի թիրախային ծրագրերը, մյուս կողմից՝ դեպի փոքր և միջին ձեռնարկությունները[32]: Վերջին տարիներին Ֆրանսիայի զարգացման գործակալությունն սկսեց ակտիվորեն աշխատել Հայաստանում: Նրա ջանքերով առաջիկա 3-4 տարիների ընթացքում կկառուցվի Վեդիի ջրամբարը, որն իր դրական ազդեցությունը կունենա Արարատյան դաշտավայրի և առաջին հերթին գյուղատնտեսության զարգացման գործում: Կարևորվում է այն հանգամանքը, որ Հայաստանում 2015 թվականից իր գործունեությունն է սկսել «Բիզնես Ֆրանս» գործակալությունը. դրանով եվրոպական բիզնես մշակույթ է ներմուծվում Հայաստան[33]: Հայ-ֆրանսիական գիտամշակութային համագործակցության համար հիմք է ծառայել 1993թ. Փարիզում կնքված միջպետական համաձայնագիրը: Դրանով պայմանավորվածություն է ձեռք բերվել խորացնելու համագործակցությունը գիտության, տեխնիկայի, կրթության ու մշակույթի բնագավառներում՝ առանձնահատուկ կարևորություն տալով կադրերի պատրաստմանը մասնագետների փոխայցերին: Երկուստեք կարևորվել է լեզվական կրթությունը, որն անհրաժեշտ նախադրյալ է համարվել երկարաժամկետ համագործակցության համար: Հիմնվելով վերոնշյալ պայմանագրի վրա՝ 1995թ. նոյեմբերին Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիական Հանրապետության կառավարության միջև կնքվեց մշակութային, գիտական և տեխնիկական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր, որի շրջանակներում երկու երկրներն է ավելի սերտացրին համագործակցությունը նշված բնագավառներում՝ կազմակերպելով գիտության և մշակույթի գործիչների պարբերական փոխայցելություններ ցուցահանդեսներ, համերգներ, թատերական ներկայացումներ, գիտաժողովներ, սեմինարներ և այլն[34]: Այդ ոլորտում իրականացվող քաղաքականությունը նպատակ ուներ սերտացնելու հայ և ֆրանսիացի ժողովուրդների բարեկամությունը և ամրապնդել ֆրանսահայ գաղութի միասնականությունը համազգային կարևորության հարցերում: Հայաստանի ու Ֆրանսիայի միջև մշակութային մերձեցմանը մեծապես նպաստել են մի խումբ անվանի գործիչներ, որոնցից կարևորվում են Անրի Վերնոյը, Գառզուն և Շառլ Ազնավուրը:

Անրի Վերնոյը (Աշոտ Մալաքյան) շուրջ 30 գեղարվեստական ֆիլմերի հեղինակ է: 1985թ. լույս է տեսել Անրի Վերնոյի «Մայրիկ» գիրքը, որի հիման վրա հետագայում նկարահանվեց համանուն ֆիլմը, և ֆրանսիացի ունկնդիրը հնարավորություն ստացավ թափանցելու 1915 թվականի ողբերգության մութ և ցավալի էջերը[35]:

Գառզուն (Գառնիկ Զուլույմյան) կատարել է մի շարք բարեգործական ձեռնարկումներ, հանդես է եկել ֆրանսահայ մշակութային միության միջոցառումներում, պարբերաբար օգնել է հայ շնորհալի երիտասարդների՝ աճելու և արվեստում հաստատվելու գործում: Նա իր անմիջական մասնակցությունն է բերել Ֆրանսիայում խորհրդային հայ նկարիչների ցուցահանդեսների կազմակերպման խնդրում:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Առավել քան տպավորիչ է հայ մեծանուն երգահան և երգիչ Շառլ Ազնավուրի դերը հայ-ֆրանսիական կապերի ամրապնդման գործում: Նշենք թեկուզ այն հանգամանքը, որ նա 1993թ. մարտին նշանակվել է Հատուկ հանձնարարությունների գծով Հայաստանի դեսպանը Ֆրանսիայում[36]: 1996թ. մայիսին Հայաստանում պաշտոնական այցի ժամանակ ուղեկցում էր Ֆրանսիայի Սենատի նախագահ Ռոնե Մոնորիին[37]: 2001թ. հունվարի 1-ի դրությամբ «Ազնավուրը Հայաստանին» հիմնադրամի կողմից մարդասիրական օգնության ծավալը կազմում էր 367 հազար դոլար[38]:

Երկու երկրների մշակութային երկխոսության ամրապնդումն ու ընդլայնումը մեծապես պայմանավորվել է մեր օրերում իրենց գործունեությունը շարունակող ֆրանսահայերի կողմից հիմնադրված մշակութային, գիտական, բարեգործական և այլ հասարակական միությունների գոյությամբ, որոնցից արժանախիշատակ են Ֆրանսահայ երիտասարդական միությունը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, Ֆրանսահայ մշակութային միությունը և Ֆրանսահայ գրողների միությունը:

Հայ-ֆրանսիական գիտամշակութային համագործակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ոլորտներում ձեռքբերումները նշանակալից են, զարգացման տեմպերը՝ տպավորիչ: Մեր խորին համոզմամբ, դա, իր հերթին, բարենպաստ նախապայման և հզոր խթան է միջպետական տնտեսական և քաղաքական հարաբերություններում հետագա առավել արդյունավետ համագործակցության համար:

Հայ-ֆրանսիական համագործակցության և փոխօգնության հարաբերությունները զարգանում են նաև Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության շրջանակներում, որին Հայաստանի Հանրապետությունը անդամակցեց 2012 թվականից:

2012թ. հոկտեմբերին Կինշասայում կայացած Ֆրանկոֆոնիայի անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների գագաթաժողովին Հայաստանը միաձայն կերպով դարձել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) լիիրավ անդամ: Գագաթաժողովին մասնակցեց ՀՀ պատվիրակությունը ԱԳ նախարար էդվարդ Նալբանդյանի գլխավորությամբ, ով լիազուստր նիստին հանդես եկավ ելույթով:

Կազմակերպության 14-րդ գագաթաժողովի եզրափակիչ բանաձևում ՖՄԿ անդամ պետությունները լիակատար աջակցություն հայտնեցին դարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից գործադրվող ջանքերին: ՖՄԿ-ն կոչ արեց շարունակել բանակցությունները՝ Մինսկի խմբի համանախագահների միասնական և անբաժան հենք հանդիսացող առաջարկությունների մասնավորապես ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականության և ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի սկզբունքների հիման վրա:

Կինշասայի գագաթաժողովի շրջանակներում ՀՀ արտգործնախարար էդվարդ Նալբանդյանը և ՖՄԿ գլխավոր քարտուղար Արդուլ Դիուֆը հոկտեմբերի 12-ին ստորագրեցին Հայաստանի և Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության միջև ֆրանսերենի ուուուսման խորացման վերաբերյալ համաձայնագիրը[39]:

ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը 2017թ. հունվարի 27-ի հրամանագրով 2018թ. Հայաստանի հանրապետությունում ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթնաժողովի նախապատրաստման և անցկացման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծվեց ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթնաժողովի նախապատրաստման և անցկացման միջգերատեսչական հանձնաժողով և հաստատվեց հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի[40]:

Հանձնաժողովը պարտավորվում է եռամսյա պարբերականությամբ ՀՀ նախագա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

հին զեկուցել ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ զագաթնաժողովի նախապատրաստման ընթացքի մասին:

Այսպիսով՝ անկախության տարիներին՝ 1991-2016թթ., հայ-ֆրանսիական հարաբերությունները բարձրացան նոր որակի: Ֆրանսիական հանրապետությունը, լինելով եվրոպայի կենտրոնական երկրներից մեկը, առավել կարևորեց ՀՀ-ի հետ հարաբերությունները, ուստի պատահական չէ, որ նա ոչ միայն ճանաչեց ՀՀ-ի անկախությունը, այլև առաջիններից մեկը 1992թ. նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց, երկու երկրներում հիմնվեցին դեսպանատներ: Հայ-ֆրանսիական երկուսուկես տասնամյակից ավելի շարունակվող միջպետական, այդ թվում խորհրդարանական և առևտրատնտեսական փոխհարաբերությունները զարգանում և ամրապնդվում են: Այս հարաբերությունները այսօր էլ բարեկամության և համագործակցության բնույթ ունեն և զարգացման լայն հեռանկարներ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 254, թ. 1:
2. ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 35, թ. 4:
3. «Հայաստանի Հանրապետություն», 16 մարտի 1993:
4. Франция в XX веке, В. П. Смирнов, изд. Дрофа, М., 2001, стр. 258-259, 330.
5. "France Armenie", Juin, 1996, p. 2.
6. ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «Հայ ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթապանակ, թ. 27:
7. «Ազգ», 27 հունվարի, 2001թ., "Figaro", Janvier, 2001, p. 1-2.
8. «Ազգ», 13 փետրվարի 2001:
9. Տե'ս Հաշվետվություն 2009թ. ՀՀ ԱԳ նախարարության գործունեության, ՀՀ ԱԳ ընթացիկ արխիվ, հաշվետվություն, թ. 7:
10. Տե'ս նույն տեղում:
11. Տե'ս հաշվետվություն, 2010թ. ՀՀ ԱԳ նախարարության գործունեության, ՀՀ ԱԳ ընթացիկ արխիվ, հաշվետվություններ ՀՀ ԱԳ ն-ի, թ. 13, 14
12. Տե'ս Հաշվետվություն, 2011թ. ՀՀ ԱԳ նախարարության գործունեության, ՀՀ ԱԳ ընթացիկ արխիվ, հաշվետվություններ ՀՀ ԱԳ ն-ի, թ. 15:
13. Տե'ս Հաշվետվություն, 2012թ. ՀՀ ԱԳ նախարարության գործունեության, ՀՀ ԱԳ ընթացիկ արխիվ, հաշվետվություններ ՀՀ ԱԳ ն-ի, թ. 9, 10:
14. Տե'ս Հաշվետվություն, 2013թ. ՀՀ ԱԳ նախարարության գործունեության, ՀՀ ԱԳ ընթացիկ արխիվ, հաշվետվություններ ՀՀ ԱԳ ն-ի, թ. 12:
15. Տե'ս Հաշվետվություն, 2014թ. ՀՀ ԱԳ նախարարության գործունեության, ՀՀ ԱԳ ընթացիկ արխիվ, հաշվետվություններ ՀՀ ԱԳ ն-ի, թ. 11, 12:
16. Հայաստանի Հանրապետություն, օրաթերթ, 3 փետրվարի 2016:
17. ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «Հայ-ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթապանակ, թ. 4:
18. «Երեկոյան Երևան», 16 նոյեմբերի 1990:
19. «Հայաստանի Հանրապետություն», 1 մարտի, 1991; «Հայք», 11 մարտի 1992:
20. ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի ելույթը» թղթապանակ, թ.5:
21. «Ազգ», 13 փետրվարի 2001; "Le temps", Fevrier, 2001, p. 1.

22. Ա. Բարսեղյան, Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, Եր., 1998, էջ 5:
23. Նույն տեղում, էջ 6:
24. Նույն տեղում, էջ 6:
25. ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «Ֆրանսիայի Հանրապետության Սենատի 2000թ. նոյեմբերի 7-ի խորհրդարանական քննարկումներ» թղթապանակ, թ. 85:
26. ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, 22 ԱԳՆ հաշվետվությունները, 2012թ., ՀՀ ԱԳՆ գործունեության հաշվետվություն թ. 6:
27. «Խորհրդային Հայաստան», 3 նոյեմբերի 1989: «Խորհրդային Հայաստան», 10 նոյեմբերի 1989: «Երեկոյան Երևան», 11 հունիսի 1990:
28. Նույն տեղում:
29. ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «Հայ-ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթապանակ, թ. 30:
30. «Ազգ», 13 փետրվարի 2001:
31. Հայաստանի Հանրապետություն, 14 մայիսի 2016:
32. Հայաստանի Հանրապետություն, 5 մարտի 2016:
33. Հայաստանի Հանրապետություն, 5 մարտի 2016:
34. Հայաստանի Հանրապետություն, 7 նոյեմբերի 1995:
35. ՀԱԱ, ֆ.875, ց. 16, գ.79, թ. 146:
36. Հայաստանի Հանրապետություն, 16 մարտի 1993:
37. ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «Հայ-ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթապանակ, թ.5:
38. Նույն տեղում, թ. 20:
39. ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, ՀՀ ԱԳՆ հաշվետվություններ, 2012 թ, ՀՀ ԱԳՆ գործունեության հաշվետվությունը, թ 6:
40. Հայաստանի հանրապետություն, 27 հունվարի 2017:

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Հայ-ֆրանսիական միջպետական կապերը և դիվանագիտական հարաբերությունները (1991-2016թթ.)**

**Էդիկ Մինասյան**

Հայ-ֆրանսիական շուրջ 25 տարվա պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ անկախության հենց սկզբից էլ երկու երկրներն իրենց կապերն ու դիվանագիտական փոխհարաբերությունները կառուցել են բարեկամության և համագործակցության շրջանակներում: Երկու երկրների նախագահների, խորհրդարանների ղեկավարների փոխադարձ պաշտոնական այցելությունների շրջանակներում ստորագրվել են երկկողմանի բարեկամության և համագործակցության բազմաթիվ պայմանագրեր, որոնք վերաբերում են ոչ միայն միջպետական առևտրատնտեսական, այլև գիտակրթական, մշակութային և այլ ոլորտների, նաև խորհրդարանական կապերի ամրապնդմանն ու զարգացմանը: Այսօր էլ այդ հարաբերությունները գտնվում են ամրապնդման ու զարգացման փուլում:

**РЕЗЮМЕ**

**Армяно-французские межгосударственные связи и дипломатические отношения  
(1991-2016гг)  
Эдик Минасян**

***Ключевые слова:** Республика Франция, Республика Армения, межгосударственные связи, дипломатические отношения, культурные связи, Сенат, Национальное собрание.*

Исследование истории армяно-французских отношений последних 25 лет свидетельствует о том, что, после провозглашения независимости Республики Армения, дипломатические отношения и связи между двумя странами выстраивались на принципах дружбы и сотрудничества. В рамках официальных визитов президентов, руководителей парламентов двух стран были подписаны многочисленные двусторонние межгосударственные соглашения и договоры о сотрудничестве не только в торгово-экономической, но и научно-образовательной, культурной и других сферах. В настоящее время армяно-французские отношения продолжают укрепляться и развиваться.

**SUMMARY**

**The Armenian-French Interstate Relations and Diplomatic Relations (1991-2016)  
Edik Minasyan**

***Keywords:** the Republic of France, the Republic of Armenia, interstate relations, diplomatic relations, cultural ties, the Senate, the National Assembly.*

The study of the history of Armenian-French relations over the past 25 years shows that after the declaration of Independence of the Republic of Armenia, diplomatic relations between the two countries have been based on the principles of friendship and cooperation. Numerous bilateral interstate cooperation agreements not only in trade and economic, but also in scientific, educational, cultural and other spheres have been signed within the framework of official visits of presidents, heads of the parliaments of the two countries. The agreements are also aimed at developing and strengthening the inter-parliamentary ties. At present, the Armenian-French relations continue to strengthen and develop.

ՀԱՅ-ԱՂՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՎԵՃԵՐԸ 1922-1936թթ.\*

Նարեկ Մուրադյան

**Բանալի բառեր՝** Խորհրդային Հայաստան, Անդրկովկասյան Դաշնություն, Կենտրոնական, վիճելի տարածքներ, հանձնաժողով, սահմանային խնդիր, դեպատին

Անդրկովկասյան Դաշնության կազմավորումից հետո (1922թ. մարտ) խորհրդային նոր հանրապետությունների միջև տարածքների և սահմանների ճշգրտման հարցում առաջացան լուրջ խնդիրներ: Դրանք կարգավորելու նպատակով ստեղծվեցին հողային հանձնաժողովներ, որոնք ենթակա էին Անդրկովկասյան Դաշնության Կենտրոնական գործադիր կոմիտեին (Կենտգործկոմ): Վիճելի սահմանները կարգավորելու նպատակով ստեղծվել էին նաև տեղական հանձնաժողովներ, որոնց մեջ մտնում էին հանրապետություններից մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև Անդրկենտգործկոմի կողմից նշանակված անդամ: Վերջիններս միշտ հաշվետու էին Անդրկովկասի նախագահությանը, որը պարբերաբար քննարկում և հաստատում էր նիստերի արձանագրությունները[1]: Տարածքային-սահմանային հիմնական վեճերը Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջև էին, որոնք երբեմն վերաճում էին ընդհարումների: Այս ամենին վերջ տալու նպատակով 1922թ. մայիսի 8-ին Անդրդաշնության Միութենական խորհուրդը կազմեց Հայաստանի և Ադրբեջանի սահմանային վեճերը կարգավորող հանձնաժողով: 1923թ. փետրվարի 5-ին Անդրկենտգործկոմի նախագահությունն ստեղծեց հողային վեճերը կարգավորող կենտրոնական հանձնաժողով, որի նախագահ նշանակվեց ՀՍԽՀ ԿԶԿ-ի նախագահ Սաքո Համբարձումյանը, որին նույն թվականի մայիսի 14-ին փոխարինեց Սարգիս Կասյանը[2]: Նույն թվականի փետրվարի 10-ի նիստում որոշվեց հանրապետությունների ներքին գործերի հողժողովման ներքին առաջարկել մինչև 1923թ. նոյեմբերի 25-ը վիճելի գավառներից երկուական ներկայացուցիչ ընտրել, որոնք առաջին անհրաժեշտության դեպքում կգործուղվեն Թիֆլիս վիճելի հարցերը կարգավորող հանձնաժողովում աշխատելու համար[3]: 1924թ. հունվարի 30-ի նիստով որոշվեց վերը նշված հանձնաժողովը անվանել Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողերի, անտառների, ջրօգտագործման վեճերը լուծող հանձնաժողով[4]:

Այս բոլոր հանձնաժողովները կանգնած էին լուրջ խնդիրների առջև, քանի որ, ինչպես արդեն նշել էինք, Անդրկովկասում սահմանային-տարածքային խնդիրները երբեք հանրապետությունների միջև միշտ էլ ուղեկցվել են միմյանց դեմ բախումներով: Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային-սահմանային վեճեր գոյություն ունեին Անդրկովկասյան դաշնության ստեղծումից էլ առաջ և շարունակվեցին մինչև Անդրկովկասյան դաշնության լուծարումը՝ 1936թ.:

1922թ. սկսած՝ Հայաստանի և Ադրբեջանի՝ համապատասխանաբար Դիլիջանի և Դազախի գավառների միջև սահմանային վեճերը հայկական և մուսուլմանական Թաթլու[5], Չախմախլի և Լալիգեղ[6] (Լալաքենդ) գյուղերի, Կոթի[7] ու Դաշսազլի գյուղերի միջև «Կարաչալ» տեղամասի համար՝ 304 դեպատին (1 դեպատինը հավասար է 1.09 հեկտարի) տարածքով, Կոդբ և Շիխլի գյուղերի միջև «Չամչա» տեղամասի համար՝ 940 դեպատին տարածքով, Դովեղ և Քյամարլի գյուղերի միջև «Բաղման-ջալախ»

\* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆ. Է.Գ.Մինասյանը:

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

կոչվող տեղամասի նկատմամբ, Բարանախ[8] և Ղայմախլի գյուղերի միջև «Աջի» տեղամասի համար՝ 1002 դեպյատին տարածքով[9]:

Արխիվային վավերագրերում պահպանվել են հստակ նյութեր վեճերի առարկա տարածքների և դրանց հետագա հետագա ընթացքի մասին: Թաթու գյուղում վեճն առաջացել էր 1923թ. ապրիլին: Մուսուլման գյուղացիները գրավել էին հայերին պատկանող հողերը և հայկական կողմը պահանջում էր հետ վերադարձնել դրանք: Սահմանային հարցերը կարգավորող հանձնաժողովը որոշեց հնարավորություն տալ մուսուլմաններին օգտագործելու հողը մինչև բերքահավաքի ավարտը, որից հետո հողը պետք է վերադարձվեր հայերին[10]:

Հաջորդ վիճելի խնդիրը հայկական Լալիգեղ և ադրբեջանական Չախմախլի գյուղերին հարակից 69 դեպյատին տարածքն էր: Հարցը քննարկվեց 1924թ. դեկտեմբերի 24-ին Անդրդաշնության հանրապետությունների հողերի, անտառների, ջրօգտագործման վեճերը կարգավորող հանձնաժողովի նիստում: Որոշվեց հաստատել 1924թ. նոյեմբերի 8-ի տեղական հանձնաժողովի եզրակացությունը՝ ըստ որի 69 դեպյատին տարածքը հանձնել Լալաքենդին, քանի որ այն փաստացի օգտագործում էին այդ գյուղի բնակիչները[11]:

Կոթի և Ղաշսազի գյուղերի միջև վեճի առարկան Կարաչալ տեղամասն էր: Բանն այն է, որ հայ-թաթարական բախումների ժամանակ Կոթի գյուղն այրվել էր, իսկ բնակիչները թողել էին գյուղը և բնակություն հաստատել սարերում: Խորհրդային իշխանության հաստատումից հետո կոթեցիները վերադարձել էին և պահանջում էին տեղամասը հանձնել իրենց, քանի որ գյուղը սակավահող էր, և մի քանի տասնամյակ նրանք փաստացի օգտագործել էին այդ տեղամասը: Նույնպիսի պահանջ ներկայացրել էին նաև դաշսազիցիները: 1923թ. փետրվարի 23-ին Անդրկենտրոնական սահմանային գավառների միջև վեճերը կարգավորող հանձնաժողովի նիստում որոշվեց վիճելի տեղամասը հանձնել քիչ հող ունեցող գյուղին, ուստի անհրաժեշտ էր տեղում հետաքննություն անցկացնել որոշելու համար վիճելի գավառների հողային պատկանելությունը: Հարցի լուծման համար այնտեղ մեկնեցին Քարվանսարայի և Ղազախի գործկոմների ներկայացուցիչները տեղում հետաքննություն անցկացնելու համար, որից հետո պետք է Կոթի և Ղաշսազի գյուղերի բնակիչներին փոխանցել այն տարածքները, որոնք նրանք օգտագործում էին մինչև Կոթի գյուղի այրվելը[12]: Մինչև հարցին վերջնական լուծում տալը՝ որոշվեց վիճելի տեղամասը զրեթե հավասարապես բաժանել գյուղացիների միջև[13]: 1923թ. հունիսի 9-ին Անդրկենտրոնական նախագահության նիստում որոշվեց Կարաչալ տեղամասը բաժանել երկու մասի. հարավային փոքր հատվածը անցնելու էր Ղաշսազի գյուղին, իսկ հյուսիսային մեծ հատվածը պետք է անցներ սակավահող Կոթի գյուղին[14]:

Հայկական Կողբ և ադրբեջանական Շիխլի գյուղերի միջև վեճը քննարկվեց 1923թ. հոկտեմբերի 18-ին: Այստեղ որոշվեց վիճելի «Չամչա» տեղամասը տալ շիխլիցիներին: Հայկական ԿԳԿ-ն չընդունեց այս որոշումը և խնդրեց այն վերանայել, քանի որ պարզվել էր որ շիխլիցիների տարածքները համեմատաբար ավելի շատ են: Հարցը քննարկվեց նաև 1924թ. մարտի 17-ի Անդրդաշնության ԿԳԿ նախագահության նիստում: Այստեղ հանձնաժողովը որոշեց ևս մեկ անգամ վերանայել հարցը, որի արդյունքում մարտի 28-ին առաջարկեց Հայաստանի և Ադրբեջանի կենտրոնական Անդրդաշնության կենտրոնական անհապաղ ներկայացնել մանրամասն տեղեկություն հողի քանակի, ինչպես նաև բնակչության թվաքանակի վերաբերյալ: Ի վերջո, 1924թ. հոկտեմբերի 27-ին հողահանձնաժողովի կայացած նիստում որոշվեց տեղամասը հանձնել Կողբին[16]: Այս որոշումը հաստատվեց նաև 1924թ. դեկտեմբերի 24-ի Անդրկենտ-



## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

գործկոմի հողհանձնաժողովի նիստում[17]:

Դովեղ և Քյամարլի գյուղերի միջև վեճն ընթանում էր Բաղման-ջալախ կոչվող տեղամասի 3894 դեյաստին տարածքի շուրջ: Այստեղ, հուրախություն հայկական կողմի, 1923թ. սեպտեմբերի 18-ին Յաղուբովի գլխավորած հանձնաժողովը վեճը լուծեց հոգուտ Դովեղ գյուղի[18]: Այս որոշումը, բնականաբար, դժգոհություն առաջացրեց քյամարլեցիների մեջ, և նրանք բռնագրավեցին այդ տարածքը, սկսեցին անտառահատել այն խոչընդոտելով Դովեղի բնակչության մուտքը այնտեղ[19]: Այստեղ կարևոր ենք համարում նշել, որ այս խնդրի վերաբերյալ ադրբեջանական պատմագիտությունը հակառակ պատկերն է ներկայացնում: Ադրբեջանցի պատմաբան Իլգար Նիֆթալիևը նշում է, որ 1923թ. սեպտեմբերի 23-ի նիստով Բաղման-ջալախ տեղամասը հանձնվել է Քյամարլի գյուղին, որից հետո 1925թ. Անդրկենտրոնի որոշմամբ տեղամասը հավասարապես բաժանվել է կողմերի միջև[20]: Նա պարզապես փորձել է թաքցնել Քյամարլի գյուղի բնակիչների բռնագրավումների փաստը, քանի որ այս դեպքում նրանք դժգոհելու պատճառ չէին ունենա, և հետևապես կբացառվեր նաև նրանց կողմից բռնագրավումների անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է Աջի տեղամասի նկատմամբ հայկական Բարանա և ադրբեջանական Ղայնախլի գյուղերի միջև վեճին, այստեղ հողհանձնաժողովի 1924թ. մարտի 28-ի նիստում որոշվեց մինչև հարցին վերջնական լուծում տալը տեղամասը թողնել երկու կողմերի համատեղ օգտագործմանը՝ առաջարկելով Հայաստանի և Ադրբեջանի հողժողովուհներին տեղամասը բաժանել երկու հավասար մասերի[21]: Հարցը վերջնական լուծումը ստացավ 1924թ. հոկտեմբերի 31-ին կայացած Անդրկենտրոնի հողհանձնաժողովի նիստում, որտեղ հաստատվեց տեղամասը բաժանելու Կոչետկովի առաջարկը. հյուսիսարևելյան մասը՝ 612 դեյաստին տարածքով, հանձնվեց Ադրբեջանի Ղայնախլի, իսկ հարավարևմտյանը՝ 390 դեյաստին տարածքով, Հայաստանի Բարանա գյուղին[22]:

Դիլիջանի և Ղազախի գավառների միջև վեճ գոյություն ուներ համապատասխանաբար Մոստսքենդ[23] և Ալիբեգլի գյուղերի միջև 228 դեյաստին տարածքի համար: Այս խնդրի վերաբերյալ Անդրկենտրոնի հողհանձնաժողովը 1924թ. դեկտեմբերի 24-ի նիստում որոշեց վիճելի տարածքը ամբողջությամբ թողնել Մոստսքենդ գյուղին[24]: Այս նիստում կարգավորվեցին նաև մի շարք այլ սահմանային հարցեր: Այսպես՝ նույն Ալիբեգլի գյուղի և Դիլիջանի գավառի Ղզլբուլախ[25] գյուղի միջև վեճ էր ընթանում 68 դեյաստին տարածքի պատկանելության շուրջ: Միստում որոշվեց տարածքը գրեթե ամբողջապես (67 դեյաստին) հանձնել Ղզլբուլախ գյուղին, իսկ մնացած մասը՝ Ալիբեգլի գյուղին[26]:

Մյուս վիճելի խնդիրը չորս հողակտորների վերաբերյալ էր, ընդհանուր 470 դեյաստին տարածքով, որոնք կրում էին մեկ ընդհանուր՝ Գյունաշ անունը: Վեճն ընթանում էր Ղազախի գավառի Ալիբեգլի և Գաջալի գյուղերի և Դիլիջանի գավառի Նորաշեն գյուղի միջև: Հողհանձնաժողովը որոշեց առաջին հողակտորը (30 դեյաստին) ամբողջությամբ թողնել Ալիբեգլի, երկրորդը (14 դեյաստին)՝ Գաջալիին, իսկ երրորդը (192 դեյաստին) և չորրորդը (234 դեյաստին) բաժանել վիճելի գյուղերի միջև[27]:

Անդրկովկասյան դաշնության գոյության հետագա տարիներին Հայաստանի և Ադրբեջանի միջև վեճերը ոչ միայն չդադարեցին, այլև շարունակվեցին ավելի բուռն կերպով: Այսպես՝ Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների 1925թ. հունվարի 2-ի զեկուցագրի համաձայն՝ Հայաստանը և Ադրբեջանը սահմանային վեճեր ունեին Դիլիջան-Ղազախ, և Զանգեզուր-Քրդաստան գավառների միջև: Վեճերն ընթանում էին Շնող-Այրումի շրջանի, Մեղրու 3 գյուղերի (Նյուվադի, Էյնաժոր և Թղուտ), Կապանի 21

գյուղերի միջև, ինչպես նաև Դարալագյազ-Քուրդիստան սահմանային 12000 դեյաստին տարածքի համար, որը գտնվում էր «Արագեյար» արոտավայրերի շրջանում: Այստեղ վեճը ծագել էր 1923թ.՝ այն բանից հետո, երբ հայկական կողմը առաջարկել էր այդ հատվածը միացնել Նոր-Բայազետի գավառին՝ հիմնավորելով վարչական կառավարման նպատակահարմարությամբ: Հարցը քննարկվել է նույն թվականի հունվարի 11-ի հողհանձնաժողովի նիստում: Հարցի շուրջ կողմերը վերջնական համաձայնության չեկան և որոշվեց Հայաստանի ու Ադրբեջանի ԿԳԿ- ներին տալ երկու շաբաթ ժամկետ, սակայն այդ ընթացքում ԿԳԿ-ները ոչ մի առաջարկ չներկայացրին և միայն 1929թ. փետրվարի 18-ի նիստում տարածքը հանձնվեց Ադրբեջանին[28]: 1930թ. դեկտեմբերի 17-ին ՀՍԽՀ կենտրոնական փոքր նախագահության նիստում կրկին քննարկվեց հող-ժողկոմատի դիմումը Անդրկենտրոնի վերաբերյալ: Անդրկովկասյան հատուկ հանձնաժողովի որոշումը Արագեյար արոտավայրի մասին: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Անդրկովկասյան հատուկ հանձնաժողովի կողմից հարկ եղած սահմանագծումները արդեն կատարված են՝ հարցը համարվեց լուծված[29]:

Անդրֆեդերացիայի կազմում գտնվելու ընթացքում ՀՍԽՀ Դիլիջանի և ԱՍԽՀ Ղազախի գավառների միջև վեճը Շնող-Այրում շրջանի նկատմամբ էր 15.659 դեյաստին տարածքով: Վիճելի տարածքից 6751 դեյաստինը անտառներ էին, 3621-ը՝ ամառային արոտավայրեր, իսկ մնացածը՝ անասնապահական ձմեռանոցներ և գյուղատնտեսության համար նպաստավոր հողատարածքներ: Վեճի լուծման նպատակով 1923թ. ապրիլին Դիլիջանի և Ղազախի գավառների վարչատնտեսական սահմանագծում անցկացվեց, որը հաստատվեց Անդրկենտրոնի կազմում գտնվող գավառների հողային վեճերը որոշող հանձնաժողովի 1923թ. ապրիլի 28-ի նիստում[30]: Սահմանն անցնելու էր այնպես, որ Կալաչա[31], Դուվաղ, Կուրումսյուլ[32], Կոթիքենդ[33], Կոչկուտան, Բադանիս-Այրում գյուղերը մնան Դիլիջանի կազմում[34]: Ըստ այդ որոշման՝ Շնող-Այրումի շրջանի 5000 դեյաստին հողատարածքը ՀՍԽՀ Դիլիջանի գավառից հանձնվեց ԱՍԽՀ Ղազախի գավառին[35]: 1923թ. մայիսի 14-ին ստեղծվեց նաև Դիլիջանի և Ղազախի գավառների միջև վեճերը որոշող հատուկ տեղական հանձնաժողով Ս. Յաղուբովի գլխավորությամբ: Հանձնաժողովին հանձնարարված էր քննել և երկու շաբաթվա ընթացքում Կենտրոնի կողմից նույնպես վիճելի հարցերի վերաբերյալ որոշումները[36]: Հարցը, սակայն, այսքանով չավարտվեց, քանի որ հետագայում պարզվեց, որ 1923-1924 թթ. Ղազախի հողաշինարարական խմբի կազմած հատակագիծը հիմնված չէր 1923թ. ապրիլի 28-ի որոշման վրա: Այլ կերպ ասած՝ Խորհրդային Ադրբեջանը, խախտելով նշված որոշումը, ապօրինաբար տիրացել էր ավելի մեծ՝ մոտավորապես 11.800 դեյաստին հողատարածքի[37]: Խնդիրը կարգավորելու նպատակով 1925թ. հունիսին տարածաշրջան գործուղվեցին հողհանձնաժողովի աշխատակիցներ Յա. Կոչետկովը և Վ. Չխենկելին, իսկ օգոստոսին՝ անտառային տեղամասերի հատուկ փորձագետներ[38]: Քանի որ բռնագրավումները շարունակվում էին հայկական կողմը 1925թ. սեպտեմբերի 21-ին դիմեց Անդրկենտրոնի կողմից առաջարկելով արտակարգ լիազորություններով հանձնաժողով ստեղծել և տեղում քննություն կատարել Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների մասնակցությամբ, իսկ հանցավորներին պատասխանատվության ենթարկել և մինչև սահմանագծումը դադարեցնել հողաշինարարությունը Շնող-Այրումի շրջանում՝ 1923թ. ապրիլի 28-ին գծված սահմանից դուրս[39]: Քննություն կատարելուց հետո հանձնաժողովը Անդրկենտրոնի գեկուցման մեջ նշում է, որ 1923թ. ապրիլի 28-ի որոշմամբ Ադրբեջանի և Հայաստանի միջև տարածքների փոխանակություն պետք է կատարվեր: Այլ կերպ ասած՝ հայկական կողմն առաջարկում էր 4000 դեյաստինի դիմաց նույնքան տարածքով և բնակչության թվով համարժեք տարածք Բաշքենդի շրջակայքում[40]: Հայկա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

На наш взгляд, и вышеотмеченный вывод Закарии нуждается в некоторых корректировках. Безусловно, современные «альтернативные демократии» в значимой мере уязвимы, и в этом смысле критика Закарии оправдана. Вместе с тем принципиальная оговорка в данном вопросе заключается в том, что обсуждаемая нами необходимость трансформации парадигмы демократизации направлена не на **обоснование** существующих «нелиберальных» и, как правило, действительно не состоявшихся «демократий» (которые автор охарактеризовал как ложные альтернативы), а на создание условий **для самого формирования** реальных альтернатив западному пониманию демократии. «Новый Токвиль», таким образом, рассуждает **«от обратного»**: он оценивает возможности альтернативных (незападных) демократий в условиях отсутствия соответствующего парадигмального контекста, который, однако, и должен породить эту самую альтернативу. **Иначе говоря, следует различать т.н. «альтернативные демократии» (преимущественно авторитарные режимы, замаскированные под «демократии») в условиях существующей, «устарелой» парадигмы и гипотетические («должные») альтернативные демократии, формирование которых возможно лишь при условии коренных перемен в парадигмальном измерении политических наук.**

Итак, исследование проблем демократизации в контексте современных реалий требует учтения ряда оговорок, которые в рамках проблем, затронутых в данной статье, можно заключить несколькими выводами. Во-первых, универсальность самой идеи демократии не отменяет необходимость ее адаптации к специфике каждого общества, чему первым значимое внимание уделил де Токвиль. Во-вторых, естественные различия в моделях строительства демократии адекватно могут быть оценены лишь при отказе от «линейной» парадигмы демократизации. В-третьих, отказ от «линейности» не означает отказ от всяких критериев демократии: существенное отклонение от устоявшихся демократических традиций может быть использовано (вернее – уже используется) для легитимации авторитарного режима под макетом «особой демократии» («демократия по...»), о чем пишет Ф. Закария. Наконец, в-четвертых, затронутые в данной статье тезисы де Токвиля и Закарии актуализируют проблему исследования, условно выражаясь, «спектра допустимости» отклонения (от западной традиции) при строительстве демократии незападного образца. Каким именно будет содержание этих «незападных демократий», чем конкретно они будут отличаться от западной модели – это, бесспорно, исключительно важный вопрос, но по определению не имеющий ответа на данный момент. Очевидно лишь то, что логика политических процессов актуализирует императив выработки нового, более гибкого подхода в вопросе демократизации, и формирование «альтернативных демократий» будет сопровождаться, с одной стороны, сильной политической борьбой (что наблюдается уже сегодня), а с другой – определенной долей компромиссов с учетом

*современного отчасти глобализованного и в этом смысле взаимосвязанного (особенно в экономической сфере) мира. Впрочем, и сугубо научная плоскость в данном вопросе также сыграла далеко не последнюю роль.*

### **СПИСОК ЛИТЕРАТУРЫ**

1. Баранов Н.А. Трансформации современной демократии. СПб., Изд-во БГТУ, 2006. стр. 47.
2. Баранов Н.А. Современная демократия: эволюционный подход. СПб., Изд-во БГТУ, 2007. стр.3.
3. Новгородцев П.И. Сочинения. М., «Раритет», 1995. стр.401.
4. См.: Панарин А.С. Глобальное политическое прогнозирование в условиях стратегической нестабильности. М., Эдиториал УРСС, 1999. стр.7-8.
5. Кун Т. Структура научных революций. М. Изд-во «АСТ». 2003. стр. 16.
6. Хантингтон С. Столкновение цивилизаций. М., Изд-во «АСТ».2003. стр.280.
7. Hantington S. TheWest: Unique, not universal. Foreign Affairs magazine // <https://www.foreignaffairs.com/articles/1996-11-01/west-unique-not-universal> (дата обращения: 02.09.2016)
8. Токвиль А. де. Демократия в Америке/ Пер. с франц., предисл. Гарольда Дж. Ласки. М,
9. Тамже. стр.505.
10. Тамже. стр.34.
11. Brunius, Teddy. Alexis de Tocqueville. The Sociological Aesthetician. Almquist & Wiksells. Upsala. 1960.p.21.
12. Токвиль А. де. Демократия в Америке. стр.. 30.
13. Niall Ferguson.Overdoing democracy // <http://www.nytimes.com/2003/04/13/books/overdoing-democracy.html?pagewanted=all> (дата обращения: 04.09.2016)
14. Закария, Фарид. Будущее свободы: нелиберальная демократия в США и за их пределами. стр. 172.
15. См.: тамже, стр. 95.
16. Dunn, John. Setting the People Free: The Story of Democracy. London: Atlantic Books, 2005. p. 69.

### **РЕЗЮМЕ**

#### **Некоторые аспекты современных процессов демократизации (в контексте идейных положений А. де Токвиля и Ф. Закарии) Саркис Ширханян**

В статье рассматриваются осевые аспекты современной парадигмы демократизации. В этой связи отмечен ряд проблем и противоречий, в частности, в контексте рассмотрения некоторых идейных положений выдающегося политического мыслителя XIX века А. де Токвиля и известного американского журналиста Ф. Закарии, который выступает как идейный «наследник» Токвиля.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Արդի ժողովրդավարացման գործընթացների որոշ ասպեկտներ (Ա. դը Տոկվիլի ու Ֆ. Ջաքարիայի գաղափարական դրույթների համատեքստում)  
Սարգիս Շիրխանյան

*Բանալի բառեր.* ժողովրդավարություն, ոչ արևմտյան ժողովրդավարություն, այլընտրանքային ժողովրդավարություն, հարացույց, դը Տոկվիլ, Ջաքարիա:

Հոդվածում դիտարկվում են արդի ժողովրդավարացման հարացույցի առանցքային ասպեկտները: Այդ կապակցությամբ բացահայտվում են մի շարք խնդիրներ ու հակասություններ, ինչն իրականացվում է, մասնավորապես, XIX դարի հայտնի մտածող Ալեքսիս դը Տոկվիլի ու վերջինիս գաղափարական «Ժառանգորդը» համարվող ամերիկացի լրագրող Ֆարիդ Ջաքարիայի տեսագաղափարական ժառանգության կարևորագույն դրույթների դիտարկման համատեքստում:

SUMMARY

Some aspects of modern democratization processes  
(in the context of A. de Tocqueville's and F. Zakaria's ideas)  
Sargis Shirkhanyan

*Keywords:* democracy, non-Western democracy, alternative democracy, paradigm, de Tocqueville, Zakaria.

The article addresses the key aspects of modern democracy and democratization paradigm. In this regard, some issues and contradictions are revealed in context of stressing the key ideas of XIX century French thinker Alexis de Tocqueville and the well-known American journalist Fareed Zakaria.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԼՐԱԳՐԻ ԷԶԵՐՈՒՄ (1876-1878 ԹԹ.)\*

Սամվել Պողոսյան, Գայանե Մարգարյան

**Բանալի բառեր՝** Հայկական հարց, ռուս-թուրքական 1877-1878թթ. պատերազմ, Սան Ստեֆանոյի պայմանագիր, Բեռլինի կոնգրես, «Մեղու Հայաստանի»:

*Հայ ազատագրական մտքին նոր ազդակ է հաղորդվում 19-րդ դարի 70-ական թվականներին: Օսմանյան պետության դեմ բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը, ապա 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն իրենց ազդեցությունն են ունենում հայ իրականության մեջ:*

*Այս ժամանակահատվածում թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ հասարակական շրջանակներում վերջնականապես ամրակայվել էր ազգային միասնության, Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարը: Սակայն ազատագրությանը հասնելու ուղիների, միջոցների և այդ գործընթացում մեծ տերությունների ունեցած դերակատարման հարցերի շուրջ հայ հասարակական միտքը երկփեղկվում է: Ազատական հոսանքի ներկայացուցիչները կոչ էին անում դիմելու համառ պայքարի և դրա միջոցով հասնելու ցանկալի արդյունքների:*

*Մինչդեռ հայ ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչներն արևմտահայերի փրկությունը տեսնում էին աստիճանական զարգացման և լուսավորական-տնտեսական առաջընթացի միջոցով: Վերջիններս չէին դադարում հավատալուց, թե իբր Թուրքիան մի օր կբարեկարգվի, և կբարեփոխի նաև արևմտահայության վիճակը: Այս տրամադրությունները լավագույնս արտահայտված էին ազգային-պահպանողական հոսանքի խոսափողը դարձած «Մեղու Հայաստանի» լրագրի էջերում: Թիֆլիսում հրատարակվող այս պարբերականը, լուսաբանելով արևմտահայության ծանր դրությունը թուրքական տիրապետության տակ, ինչպես նաև սրված Արևելյան հարցը, և դրա արդյունքում սկսված ռուս-թուրքական պատերազմը, վեր էր հանում վերոհիշյալ հասարակական հոսանքի ընկալումները, պատկերացումները և կողմնորոշումները միջազգային դիվանագիտության ասպարեզ իջնող Հայկական հարցի վերաբերյալ: Սան Ստեֆանոյի պայմանագրի և Բեռլինի կոնգրեսի մասին պարզաբանումներն արտահայտում են լրագրի ակնկալիքները Հայկական հարցի միջազգայնացումից:*

*Պարբերականն անտարբեր չէր արևմտահայերի ծանր կացության նկատմամբ: «Մեղու Հայաստանին» մշտապես հողվածներ էր հրապարակում, որտեղ փորձում էր ներկայացնել թուրքական կառավարության արևմտահայերի նկատմամբ իրականացվող ազգային, կրոնական և հարկային հալածանքները: Հատկապես ուշադրության էր արժանացնում կրոնական մոլեռանդության հողի վրա իրականացվող կեղեքումները: Մշտապես տեղեկություններ ստանալով կրոնական մոլեռանդությանը զոհ գնացող արևմտահայերի մասին՝ լրագիրը կոչ էր անում թուրքական կառավարությանը վերացնել դրանք, քանի որ պետությունը դրանից չէր շահում[1]:*

*Այնուամենայնիվ, թերթն ապստամբական տրամադրություններ չունեւր և չէր էլ ուզում տարածել իր ընթերցողների շրջանում, այլ կարծես հորդորում էր թուրքական կառավարությանն արմատախիլ անել հնարավոր ապստամբության պատճառները: Սա-*

\* Հոդվածն ընդունվել 09.02.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՍՀ պատմության ամբիոնը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

կայն, անկախ ամեն տեսակի հորդորներից, արևմտահայությունը հարկ եղած պարագայում բարձրացրել է ապստամբության դրոշմը: 1875թ. գեյթունցիները դուրս վընդեցին գավառապետ Դաուդ Նիագիին, իրենց անկախ հռչակեցին և այդ անկախությունը պահպանեցին երեք տարի: 1876թ. հունիսի 15-ին գեյթունցիները հրդեհեցին կառավարական շենքը և մզկիթը[2]:

1875-1876 թթ. թուրքական բռնապետության դեմ ապստամբություններ բռնկվեցին Բոսնիա-Հերցեգովինայում և Բուլղարիայում: Շուտով հակաթուրքական դաշինք կնքեցին Սերբիան ու Չեռնոգորիան: Բալկանյան քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումները կրկին միջազգային դիվանագիտության սեղանին դրեցին Արևելյան հարցը: Մեծ տերությունների ակտիվ քննարկման առարկա դարձավ քայքայման ու փլուզման եզրին հայտնված Օսմանյան կայսրության ճակատագիրը: 1876թ. դեկտեմբերի 11-ից մինչև 1877թ. հունվարի 8-ը Կ. Պոլսում հրավիրվեց մեծ տերությունների դեսպանաժողով Արևելյան հարցի քննարկելու համար:

Դեսպանաժողովի հետ «Մեղու Հայաստանին» կապում էր մեծ հույսեր: Ըստ լրագրի եկել էր այն պահը, երբ վճռվելու է Արևելյան հարցը: Ավելին՝ թերթը կարծում էր, որ դեսպանաժողովը անպայման կքննարկի նաև արևմտահայերի խնդիրը: Վերջինիս համոզմամբ՝ հուսադրող էր այն հանգամանքը, որ դեսպանաժողովին նախորդող շրջանում եվրոպական հասարակությունը բազմիցս անդրադառնում էր արևմտահայերին, եվրոպական և ռուսական մամուլում լույս էին տեսնում հայերի ու նրանց ծանր կացության մասին հոդվածներ: Շատ հաճախ թերթը կարծում էր, որ եվրոպական երկրների դիքորոշումը արևմտահայերի հարցի վերաբերյալ ևս կլինի միանշանակ: «Այս հարցը (Հայկական հարցը)՝ գրում է թերթը,՝ անտարակոյս կգրավվի թէ ռուսաց դեսպան գեներալ Իգնատևի և թէ Անգլիական դեսպանի ուշադրությունը, ոչ մի տարածայնութեան տեղիք չէ կարող տալ»[3]:

Իհարկե, պարբերականի նման վստահությունը անգլիական պատվիրակության նկատմամբ անտեղի էր, քանզի Լոնդոնից Կ. Պոլիս ժամանած դեսպաններ Բիքոնսֆիլդը ու Հ. Էլիոտը, բացահայտորեն վարելով թուրքամետ քաղաքականություն, հայտարարեցին, որ իրենց խնդիրը չէ Օսմանյան պետության ընդհանուր բարեկարգությունը, այլ նրանք զբաղվելու են միայն հարավային սլավոնների և թուրքերի փոխհարաբերությունները բարելավելու հարցերով[4]:

Դեսպանաժողովից մեկ օր առաջ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը որոշում էր ընդունել պահանջելու, որ արևմտահայության համար նույնպես բարենորոգումներ ապահովվեն. «Ազգային ժողովս վստահ ըլլալով թէ Օսմանեան կառավարութիւնն ինչ առանձնաշնորհութիւններ որ պիտի տայ ուրիշ ազգաց, նոյնը պիտի շնորհէ նաև Հայոց ազգին՝ անոր արդի վիճակին բարուքմանը համար, և այս կերպով որ և է գրկանք տեղի չպիտի ունենան, որ բողոքոյ առիթ ընծայեն Հայոց ազգին»[5]:

Պետք է նշել, որ Կ. Պոլսի դեսպանաժողովում արևմտահայերի հարցի քննարկման համար թերթը մեծապես կարևորում էր Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի նախաձեռնությունները: Բացի դրանից լրագրի էջերում բարձր գնահատվեց նաև հնդկահայ մեծահարուստ, հասարակական գործիչ Սեթ Աբգարի գործունեությունը: Նա 1876 թ. Լոնդոնում հրատարակեց Հայկական հարցին նվիրված գրքույկ, որը թարգմանվեց եվրոպական տարբեր լեզուներով և ներկայացվեց դեսպանաժողովի անդամ երկրների դեկավարներին: Այդ կապակցությամբ «Մեղու Հայաստանին» գրեց. «Մենք յայտնում են մեծ պ. Ս. Աբգարին մեր խորին շնորհակալութիւնն, որ նա օգուտ քաղելով ներկայ հանգամանքներից ընդհանրացրել է Տաճկաստանի հայոց հարցը, ենթարկելով այն Եւրոպական բոլոր տէրութեանց դատաստանին և ուշադրութեան»[6]:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Առհասարակ Սեթ Աբգարի գործունեությունը հայ հասարակական շրջանակներում գտավ լայն արձագանք: Թերթի նման անդրադարձը հնդկահայ հասարակական գործչի քայլին, կարող է արտահայտել ինչպես լրագրի, այնպես էլ հայ ազգային-պահպանողական հոսանքի այն մոտեցումը, ըստ որի՝ չէր ժխտվում անհրաժեշտ գործողությունների և քայլերի իրականացումը, որն ուղղված էր լինելու արևմտահայերի վիճակի բարելավմանը՝ մեծ տերությունների հովանավորությամբ: Պարզապես, ազգային-պահպանողականները, ի տարբերություն ազատականների զինված պայքարի և ապստամբությունների կողմնակից չէին:

Այնուամենայնիվ, Կ. Պոլսի դեսպանաժողովը ծախողվեց, քանզի դրա բացման օրը հայտարարավեց օսմանյան սահմանադրության ընդունման մասին, ըստ որի բարելավվելու էր թուրքահպատակ բոլոր ժողովուրդների կացությունը, հետևաբար դեսպանաժողովն այլևս անելիք չուներ: Սակայն նույնիսկ այդ ժամանակ, Ռուսաստանը, չցանկանալով բաց թողնել պատմական հարմար պահը, շարունակում էր հանդես գալ սլավոն եղբայրներին օգնելու կոչերով: Հենց ռուսական կողմի նախաձեռնությունների աղյուսքում 1877թ. մարտի 19-ին Լոնդոնում մեծ տերությունների ներկայացուցիչ քննարկման առան Արևելյան հարցը: Վեց տերությունների ներկայացուցիչների Լոնդոնի խորհրդածողովը կազմեց արձանագրություն, որտեղ պահանջ էր ներկայացվում թուրքական կառավարությանը հպատակ քրիստոնյաների համար իրականացնել բարենորոգումներ[7]: Վերջինս մերժվեց թուրքական կառավարության կողմից:

Անդրադառնալով այդ մերժմանը՝ թերթը գտնում էր, որ Արևելյան հարցը վերջնականապես թևակոխելու է ռազմական փուլ, և կողմերը նախապատրաստվելու են պատերազմական գործողություններին[8]: Իրապես, Լոնդոնի արձանագրության մերժումից հետո՝ 1877թ. ապրիլի 12-ին, Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային: Սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, որն առավել իրատեսական դարձրեց արևմտահայության ազատագրությունը: Հայ հասարակական-քաղաքական շրջանակներում այն առաջ բերեց ոգևորության մեծ ալիք, միաժամանակ նաև գաղափարների բախում: Մի կողմից՝ խրախուսվում էր ապստամբության դիմելու գաղափարը, մյուս կողմից՝ հորդորներ էին հնչում հավատարիմ մնալ Օսմանյան պետությանը:

«Սեդու Հայաստանին» պատերազմի հենց սկզբից հետևում էր ծավալվող գործողություններին և լուսաբանում դրանց ընթացքը: 1878թ. հրապարակված հոդվածներից մեկում հիշելով 1877 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմը՝ լրագիրը գտնում էր, որ Ռուսաստանը պատերազմը սկսել էր հետևյալ նպատակով. «Թուրքիայի քրիստոնեյ ազգերը ազատել Օսմանեան լծից»[9]:

Լրագիրն առավել արմատական մոտեցում ցուցաբերեց ռուս-թուրքական պատերազմի ընթացքում օսմանյան սուլթան Աբդուլ Համիդի կողմից հպատակ քրիստոնյաների զինվորագրության մասին հրապարակված հրամանի հետ կապված: Առհասարակ, արևմտահայերի զինվորագրության հարցը արևմտահայության և արևելահայության մեջ գտավ լայն արձագանք, սակայն հատկապես ուշագրավ է, որ այն միանման դիրքորոշում առաջ բերեց գաղափարական հակադիր ձամբարներում գտնվող «Մշակի» և «Սեդու Հայաստանի» էջերում:

1877թ. նոյեմբերի 15-ին հրապարակվեց սուլթան Աբդուլ Համիդի հրամանը (իրադեն), որով զենքի էր կոչում 17-45 տարեկան բոլոր քրիստոնյաներին[10]: Բնականաբար, այս հրամանը վերաբերում էր նաև արևմտահայերին: Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը հարցը ներկայացրեց Հայոց Ազգային ժողովի քննարկմանը, որը երկար վիճաբանություններից հետո մերժվեց: Պատրիարքին այս որոշումը չբավարարեց, ուստի հարցը քննարկվեց նաև կրոնական հանձնաժողովում, որտեղ ևս մերժ-



վեց[11]:

Թերթն այդ խնդրի վերաբերյալ ուներ այլ մոտեցում: «Մեղուն շատ տարիներ առաջ յայտնել է համակրություն այդ հարցին և այժմ էլ նույնը պիտի յայտնէ», - գրում է լրագիրը[12]: Պարբերականի համոզմամբ՝ զինվորագրությունը հայերին կազատի դրա դիմաց պետությանը վճարվող հարկից[13], իսկ նյութական այդ միջոցները կուղղվեն արևմտահայերի տնտեսական վիճակի բարելավմանը: Բացի դրանից՝ զինվորագրությունն անհրաժեշտություն էր, քանզի ինչպես գտնում է պարբերականը, զենքին տիրապետող արևմտահայերը կկարողանային դիմադրել քրդական հրոսակների հարձակումներին: Թերթը կարևորում էր բանակում ծառայելը՝ ազգի բարոյական նկարագրի բարձրացման տեսանկյունից: Երկիրը պաշտպանելու և դրա համար սեփական կյանքը վտանգելու հանգամանքը հայերի դիրքերը կբարելավեր և օսմանյան պետության մեջ նրան չէին նախ «իբրև մի ազգի վերայ, որ դատապարտված է երկիր գործելու, արհեստ գործ դնելու, վաճառականություն անելու, այսինքն միայն քրտինք թափելու և ոչ արիւն, որ ատելի մեծ գին ունի և արժեք»[14]: Սակայն, չնայած այն հանգամանքին, որ 1877 թ. օգոստոսի 10-ին սուլթանը Ներսես պատրիարքին պարզևատրել էր «օսմանիւ» շքանշանով, ամեն հարցում արևմտահայերի հավատարմությունը ապահովելու նպատակով, այնուամենայնիվ, արևմտահայերը մերժեցին զինվորագրման հրամանը:

Մինչ օսմանյան պետությունը փորձում էր ապավինել հպատակների զինական ուժին՝ ռուսական զորքերը անընդմեջ տանում էին հաղթանակներ: Կովկասյան ռազմաճակատում ռուսները գրավեցին Կարսը, Բայազետը, Էրզրումը, Մուշը, Ալաշկերտը: Իհարկե, ամենուրեք հայերը ռուսական զորքերին ցուցաբերեցին ռազմական աջակցություն: Ստեղծված պայմաններում Օսմանյան Թուրքիան ստիպված էր ստորագրելու զինադադար:

1878 թ. հունվարի 19-ին Ադրիանապոլիսում կնքվեց զինադադարի համաձայնագիր: Դրական գնահատելով զինադարարի կնքման փաստը՝ «Մեղու Հայաստանին» կարծում էր, որ, առանց եվրոպական երկրների դեսպանաժողովի, վերջնական արդյունքի հասնել հնարավոր չէ: Իսկ այդ դեսպանաժողովում Հայկական հարցի քննարկումը կապում էր նրա հետ «թե ինչ ընթացք կբռնեն Ազգային ժողովն Կ. Պոլսը և պատրիարքարանը»[15]: Այս առումով կարևորվում էր արևմտահայերի մասին անհրաժեշտ տեղեկությունների հավաքումը, դրանց հիման վրա ծրագրի կազմումը, որը «իր ազդեցութեամբ կգրավեր դեսպանաժողովի ուշադրութիւնն և Տաճկաստանի հայոց հարցը-Տաճկաստանի ընդհանուր բարեկարգության հարցերից բաժանելով առաձին խնդիր առնելը»[16]:

Թերթի համոզմամբ՝ առավել նախընտրելի էր, որ այդ ծրագիրը կազմվեր պատրիարքի գլխավորությամբ, ինչպես նաև կազմված ծրագիրը փոխանցվեր թուրքական կառավարությանը, որն էլ կներկայացներ դեսպանաժողովի մասնակից պետություններին: Ջարմանալի էր, որ պարբերականը շարունակում էր հավատալ Օսմանյան պետության «հոգատար» վերաբերմունքին: Սակայն վերջինս իր այս դիրքորոշման համար բերում էր հետաքրքիր հիմնավորում. «Օրինավորութեան սահմանին մեջ գործած կլիներ այսպես ազգային ժողովն, որովհետև, ոչ թե ինչպես իբրև ապստամբ, այլ իբրև իլու հպատակ դիմած էր իւր իշխանութեան իր արդար իրաւունքի ազատութեան խնդրելու»[17]: Պատահական չէր նաև այն հանգամանքը, որ արևմտահայերի վիճակի բարելավման ծրագիրը կազմելու գործը վերապահվում էր պատրիարք Ներսես Վարժապետյանին: Վերջինս իր կողմնորոշումներում ևս հակված էր նույն հայեցակետին: Բացի դրանից՝ ազգային-պահպանողականների համար եկեղեցին ազգի համախմբման և ինքնապահպանության մարմին էր[18]:

1878թ. փետրվարի 19-ին Սան Ստեֆանոյում ստորագրվեց ռուս-թուրքական հաշ-

տության նախնական պայմանագիրը: Այս պայմանագիրի 16-րդ, 17-րդ, 25-րդ և 27-րդ - հոդվածները անդրադարձ էին կատարում արևմտահայերին: Լրագիրը հատկապես կարևորեց 16-րդ հոդվածի առկայությունը[19]: Թերթը կարծում էր, որ հոդվածը կյանքի կկոչվեր միայն այն դեպքում, եթե դրա իրականացման պատասխանատվությունն ամբողջովին չմնար թուրքական կառավարության վրա: Հայերի պաշտպանությունը քրդերից և չերքեզներից պարբերականը տեսնում էր մեկ պայմանով. «անհրաժեշտ է երկրի ապահովության համար կազմել տեղական տարրից, առավելապես հայերից պահապան ոստիկանական զորք»[20]:

Հարկ է նշել, որ Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքումից առաջ հայոց պատրիարքը մեծ վեգիրին ներկայացրեց մի գրություն, որտեղ հինգ կետով ներկայացված էին արևմտահայերին անհրաժեշտ պահանջները[21]: Լրագիրն իր էջերում ամբողջությամբ ներկայացրեց այդ հուշագիրը, ավելին հստակ գնահատականով հանդես եկավ. «Մեր կարծիքով Սրբազան Պատրիարք հոր պահանջները կիսամիջոցներ են և չեն կարող հասնել ցանկալի նպատակին-Տաճկահայերի կատարելալ ապահովության»: Ոչ լիարժեք համարելով վերոհիշյալ հուշագիրը՝ «Մեղու Հայաստանին» ներկայացնում էր արևմտահայերի ինքնավարության մասին իր պատկերացումները. «Մեր կարծիքով, Տաճկահայաստանի վարչությունը բոլորովին բաժանելու է ընդհանուր Տաճկաստանի վարչությունից և նրան ինքնավարության կերպարանք տալու է, ընդ հովանավորությանը պաշտպան քրիստոնեայ տերությանց, մանավանդ սահմանակից Ռուսաստանի...»[22]:

Պարբերականի կարծիքով, Արևմտյան Հայաստանը պետք է ունենար նահանգի կարգավիճակ և միայն վարչական առումով էր անջատ լինելու Թուրքիայից: Արևմտահայերը սուլթանին պետք է տրամադրերին նաև որոշակի քանակությամբ հարկ[23]: Ինչպես նկատեցինք, թերթը չուներ անկախական տրամադրություններ, չէր նշում Օսմանյան պետությունից անջատվելու մասին: Ինքնավարություն ասելով՝ վերջինս հասկանում էր միայն վարչական անկախություն: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցում լրագիրը ուներ բավականին չափավոր հայացքներ:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը գնահատելով որպես «երկրորդ և ավելի մեծ քայլ դեպի խաղաղութիւն, որը անելի կշիռ ունի հստակության այժմ»[24], պարբերականը, այնուամենայնիվ, հստակ գիտակցում էր, որ այն հարուցելու էր մեծ տերությունների դժգոհությունը: «Մեղու Հայաստանի» էջերում հատկապես մանրամասն ներկայացվեց Անգլիայի և Ավստրիայի մերժողական վերաբերմունքը ռուս-թուրքական պայմանագրի նկատմամբ. «Անգլիան և Ավստրիան համաձայն չեն Բալքանեան թերակղզում տեղի ունեցած քաղաքական յեղափոխությանց», - գրում է թերթը: Հենց այս հանգամանքի վրա հիմնվելով էլ պարբերականը կանախատեսում էր թե միջազգային խորհրդածողովում ինչ ձևակառուցող կունենա Սան Ստեֆանոյի պայմանագիրը: Լրագիրը գրում էր. «Ռուսաստանը գիտէ, որ Անգլիան և Ավստրիան Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանները կփոխվեն բոլորովին հակառակ նորա շահերին: Բնական է, որ Ռուսաստանը չի կամենալ ինչ որ զենքով և արիւնով է ձեռք բերել, գրչով ու թանաքով արևմուտքը փոխէ»[25]: Այնուամենայնիվ պարզ էր, որ միջազգային հարաբերություններում տեղի էին ունենալու լուրջ փոփոխություններ:

Արևմտահայ գործիչները նպատակադրվեցին Հայկական հարցը ներկայացնել Բեռլինի կոնգրեսում: 1878թ. մարտի 15-ին արևմտահայ գործիչները Ալեքսանդր Բ-ին ներկայացրին Հայաստանի ինքնավարության նոր նախագիծ[26]: Այն ռուսական ցարին ներկայացնելու համար Պետերբուրգ մեկնեց Խորեն Նարբեյը:

Կազմվեց ևս մեկ պատվիրակություն, որն ուղևորվելու էր առաջիկա վեհաժողովին մասնակից եվրոպական երկրներ: Պատվիրակությունը ղեկավարեց Կ. Պոլսի նախկին

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

պատրիարք, Արևմտյան Հայաստանի վիճակին քաջատեղյակ, հայության համակրանքին ու հարգանքին արժանացած անձնավորություն՝ Սկրտիչ Խրիմյանը: Նրան ուղեկցեց քարտուղարի և թարգմանչի պաշտոնում նշանակված 22-ամյա Մինաս Չերազը[27]: Պատվիրակությունը եղավ Իտալիայում, Ֆրանսիայում, ապա մեկնեց Բեռլին: Մ. Խրիմյանի պատվիրակությունը հիմնականում բարացական վերաբերմունքի արժանացավ: Այս ամենը մեծ հույսեր արթնացրեց պարբերականի մոտ, որի վրա հիմնվելով էլ վերջինս կարծում էր, որ այդ երկրները միանշանակ հանդես կգան Հայկական հարցի հայանպաստ լուծման օգտին[28]:

1878 թ. հունիսի 1-ին բացվեց Բեռլինի վեհաժողովը: Հունիսի 13-ին վեհաժողովի քննարմանը ներկայացվեց հայկական պահանջների հուշագիրը, որի նկատմամբ անտարբեր չմնաց նաև «Մեղու Հայաստանին»: Թերթը գրեց. «Պահանջը շատ արդար է և իրավացի և մարդասիրական: Բոլոր պահանջների դիտավորությունն է՝ Տաճկահայաստանի բնակիչներին տալ բարեկարգ ներքին վարչություն և միջոց ազատորեն զարգանալու համեմատ իրանց ծիրքերին իբրև մի հայրենյաց քաղաքացի»[29]:

Ինչպես գիտենք, Հայկական պատվիրակությանը չթույլատրեցին մասնակցել քննարկումներին: Սակայն, նույնիսկ այն պարագայում, երբ հստակ տեղեկություններ չկային Հայկական հարցի նկատմամբ վեհաժողովի դիրքի մասին, լրագիրը մեծ խանդավառությամբ գրում էր. «Մենք չենք կարող և չունենք իրավունք կասկածելու մեծ տերությանց խարդախութեան և խաբեության մեջ»[30]: Ի վերջո, Բեռլինի վեհաժողովում Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածին փոխարինելու եկավ 61-րդ հոդվածը:

«Մեղու Հայաստանին» Բեռլինի կոնգրեսի աղյուսքների հիման վրա արեց որոշակի հետևություններ, որոնք հատկապես վերաբերում էին Անգլիային: Վերջինս առավել, քան որևէ երկիր ուներ մեծ ազդեցություն Կ. Պոլսում: Դրա հետ կապված լրագիրը գրում էր. «բոլոր յեղափոխութեանց մեջ, որ պետք է ունենան Տաճկաստանում, Անգլիան պիտի միջամտէ, քանի որ նա պարտաւորվել է պաշտպան հանդիսանալու Տաճկաստանի ասիական նահանգներին արտաքին յարցակմանց դեմ, բայց արդյոք ինչ դիրք պետք է բռնե նա...»[31]:

Եթե հայ հասարակական լայն շրջանակներում 61-րդ հոդվածը առաջացրեց հուսախաբություն, ապա «Մեղու Հայաստանին» շարունակեց հույսով լի սպասել դրա իրականացմանը՝ Անգլիայի ստանձնած դերը որակելով անգամ «խնամակալություն»։ «Բեռլինի դեսպանաժողովը որոշեց Տաճկահայաստանի վիճակն իր 61-րդ յօդուծով: Այս յօդուածով Տաճկահայաստանը ընկնում է Եւրոպական մեծ տերութեանց հաւաքական խնամակալութեան տակ, իսկ Տաճկա-Անգլիական պայմանադրութեան զօրութեամբ նա ընկնում է Անգլիական կառավարութեան անհատական խնամակալութեան ներքոյ: Այս ցոյց է տալիս, որ Տաճկահայաստանի վիճակը հետաքրքրում է մեծ տերութեանց շօշափելով նոցա շահերն և առավելապէս Անգլիոյ շահերը, որոնցից պետք է ծագին և Տաճկահայերի շահերը, նոցա ապագա ապահովութիւնն և բարօրեալ վիճակն ամեն կողմից, եթե նոքա գիտեման օգուտ քաղել այդ դրութեունից»[32]: Օգուտ քաղելու համար անհրաժեշտ էր համարվում, որ հայոց պատրիարքն ու Ազգային ժողովը սերտ հարաբերություններ ունենան Կ. Պոլսի դեսպանի հետ: Պարբերականը գտնում էր, որ արևմտահայերը պետք է սկսեն կարևորություն ներկայացնել անգլիական քաղաքականության համար: Քաղաքականություն, որը, մեր խոր համոզմամբ, ամբողջովին իր հիմքերում հակահայկական էր, իսկ արտաքուստ այնքան հայասիրական, որ նման տրամադրություններ էր առաջ բերել հայկական պարբերականի մոտ:

Պարբերականը ցավով էր նշում, որ արևմտահայության մեջ լայն տարածում է գտնում գաղթականությունը: Վերջինս անվանելով «րոպեական» ազդեցության արդ-

յունք՝ կոչ էր անում արևմտահայերին չլքել իրենց բնակավայրերը: Թերթը նշում է. «Ինչու գաղթել են դոքա, միթե հայերը դեռ ևս չհամոզվեցան, որ գաղթականությունն ազգերի համար անենանե՞ծ թշվառությունն է, ավելի ևս հայերի համար, որոնք գաղթում են առհասարակ առանց նախապատրաստության, առանց ավահովության»[33]: Մյուս կողմից՝ գաղթականությունն արատավոր երևույթ էր, այն առումով, որ Արևմտյան Հայաստանի գավառներում հայերը կորցնում էին իրենց թվական առավելությունը: Հարկ է նշել, որ լրագիրը այս հարցում ևս կարևորում էր ազգի հոգևոր գործիչների դերակատարումը՝ նրանց վերապահելով գաղթական արևմտահայությանը հետ պահելու այդ քայլից:

«Մեղու Հայաստանին» արևմտահայերի ինքնավարության հասնելու ճանապարհին մեծապես կարևորում էր ոչ միայն արտաքին ուժի գործոնը, այլ նաև ազգի ներսում տիրապետող վիճակը: Հայկական հարցը կլուծվի եթե, յուրաքանչյուր հայի գիտակցության մեջ տեղի ունենան համապատասխան փոփոխություններ: «Իրավ է շատ քաղցր են ինքնօրհնություն և ազատություն խոսքերը. բայց դոքա ցանկացողներից պահանջում են մտավոր, հոգեւոր և նիւթական ոյժ, բնավորութեան գերազանցութիւն» [34]: Սրանց կարելի էր հասնել բնական ճանապարհով, այսինքն՝ առանց ընդվզումների և զինված պայքարի, միայն աստիճանական զարգացման եղանակով:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ «Մեղու Հայաստանի» պարբերականը դեմ էր ապստամբության և զինված պայքարի միջոցով Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը հասնելու գաղափարին: Այն հույս ուներ, որ տնտեսական ու մշակութային վերելքը, հավատարմությունն օսմանյան տերությանը կապահովեն արևմտահայերին անհրաժեշտ քաղաքացու իրավունքներ, կարող են տանել դեպի բաղձալի ինքնավարություն: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, այդ հավատարմությունը չգնահատվեց, իսկ Հայկական հարցի միջազգայնացումից հետո թուրքերը բացահայտորեն որդեգրեցին ցեղասպանական քաղաքականություն: Ինչ վերաբերում է Անգլիային կամ այլ տերության միջամտությանը Հայկական հարցը լուծելու հույսին, ապա դա նույնպես չարդարացավ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Մեղու Հայաստանի», 1876, մայիսի 22, N 19:
2. Հովհաննիսյան Ռ. , Արևմտահայ ազգային ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Եր., 1965, էջ 87:
3. «Մեղու Հայաստանի», 1876, դեկտեմբերի 18, N 49:
4. Բաղայան Խ., «Հայկական հարցը» Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878թ., Եր., 1955, էջ 41:
5. Ատենագրությունք Ազգային ժողովոյ, 1876-1877, Կ. Պօլիս, էջ 329:
6. «Մեղու Հայաստանի», 1876, դեկտեմբերի 11, N 48:
7. Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թիւրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 183:
8. «Մեղու Հայաստանի», 1877, ապրիլի 9, N 13:
9. «Մեղու Հայաստանի», 1878, մարտի 25, N 12:
10. Հովհաննիսյան Ռ. , նշվ. աշխ. , էջ 116:
11. Գևորգյան Ս., 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և արևմտահայերի զիվորագրության հարցը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2003, էջ 34:
12. «Մեղու Հայաստանի», 1878, հունվարի 14, N 2:

13. Արևմտահայերը զինվորական ծառայության դիմաց վճարում էին «բեգելիե ասկերի» հարկը:
14. «Մեղու Հայաստանի», 1878, հունվարի 14, N 2:
15. «Մեղու Հայաստանի» 1878, փետրվարի 4, N 5:
16. Նույն տեղում:
17. Նույն տեղում:
18. Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Եր., 1990, էջ 45:
19. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին դիվանագիտության փաստաթղթերում (1820-1920թթ.), պրոֆ. Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., 1972, էջ 92:
20. «Մեղու Հայաստանի», 1878, մարտի 18, N 11:
21. Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Եր., 1978, էջ 120-121:
22. «Մեղու Հայաստանի», 1878, մարտի 11, N 10:
23. Նույն տեղում:
24. «Մեղու Հայաստանի», 1878, փետրվարի 25, N 8:
25. «Մեղու Հայաստանի», 1878, մարտի 25, N 12:
26. Լէօ, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 61-62:
27. Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Եր., 2008, էջ 239:
28. «Մեղու Հայաստանի», 1878, ապրիլի 1, N 13:
29. «Մեղու Հայաստանի», 1878, հուլիսի 8, N 26:
30. Նույն տեղում:
31. «Մեղու Հայաստանի», 1878, դեկտեմբերի 9, N 48:
32. «Մեղու Հայաստանի», 1878, նոյեմբերի 11, N 44:
33. «Մեղու Հայաստանի», 1878, հոկտեմբերի 11, N 40:
34. «Մեղու Հայաստանի», 1878, հոկտեմբերի 28, N 42

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

#### **Հայկական հարցը «Մեղու Հայաստանի» լրագրի էջերում (1876-1878 թթ.) Սամվել Պողոսյան, Գայանե Մարգարյան**

Ազգային-պահպանողական գաղափարների կրող «Մեղու Հայաստանի» լրագիրը 1870-ական թթ. լուսաբանել է Հայկական հարցը: Հոդվածի նպատակն է այդ պարբերականի միջոցով վեր հանել վերոհիշյալ հասարակական հոսանքի պատկերացումները և կողմնորոշումները Հայկական հարցի շուրջ: Ուսումնասիրման խնդիրներն են պարզել Հայկական հարցի լուծման ուղղությամբ թերթի առաջարկած քայլերը, մեծ տերությունների ունեցած դերակատարման վերաբերյալ կողմնորոշումները: Արդյունքում՝ գալիս ենք այն եզրահանգման, որ Հայկական հարցի լուծումը պարբերականը տեսնում էր վարչական ինքնավարության տեսքով՝ թուրքական պետության կազմում: Արտաքին կողմնորոշումներում հակվում էր եվրոպական երկրների՝ մասնավորապես Անգլիայի կողմը:

РЕЗЮМЕ

Армянский вопрос в страницах газеты “Меу Айкастани” (1876-1878гг.)  
Самвел Погосян, Гаяне Маргарян

**Ключевые слова:** Армянский вопрос, русско-турецкая война 1877-1878гг., Сан Стефанский договор, конгресс Берлина, “Меу Айкастани”.

В 70-х годах XIX века носитель национально-консервативных идей газета “Меу Армении” освещала Армянский вопрос. Цель статьи - с помощью газеты выявить представления и ориентации вышеупомянутого общественного течения в Армянском вопросе. Задачи исследования - выяснить представления, направленности и ориентации в решении Армянского вопроса, в этом направлении предлагаемые шаги газеты и роли великих стран. В результате приходим к выводу, что решение Армянского вопроса газета видела в границах административного самоуправления в составе Турецкого государства. Во внешних ориентациях склонялась к европейским странам, в частности к Англии.

SUMMARY

The Armenian Question in the pages of “Meghu Hayastani” Newspaper (1876-1878)  
Samvel Poghosyan, Gayane Margaryan

**Keywords:** Armenian Question, Russian-Turkish war 1877-1878, treaty of San Stefano, Congress of Berlin, “Meghu Hayastani”.

"Meghu Hayastani" newspaper discussed the Armenian Question in the 1870s. The goal of the article is to reveal some notions and orientations regarding the Armenian Question. The object is to find out newspaper's suggestions about solving the Question and orientations about the role of great powers in it. The solution of the Armenian Question for “Meghu Hayastani” was giving autonomy to Armenia under the control of Turkey. The newspaper was oriented to European countries, especially to Great Britain.

«ՓԱՓՈՒԿ ՈՒԺ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ\*

Հայկ Սարգսյան

**Բանալի բառեր՝** փափուկ ուժ, կոշտ ուժ, Ջոզեֆ Նայ, ազդեցություն, քաղաքական մշակույթ, քաղաքական արժեքներ, գրավչություն, հարկադրանք, արտաքին քաղաքականություն, քաղաքական լեգիտիմություն:

Դեռևս հնագույն ժամանակներից ի վեր իշխանություն/ուժ հասկացությունը գտնվել է ժամանակի խոշոր մտածողների ուշադրության կենտրոնում [1]: Պատմական տարբեր ժամանակահատվածներում այդ հասկացությանը տրվել են տարբեր սահմանումներ: Ժամանակակից ամերիկացի քաղաքագետ Ռոբերտ Դալի կարծիքով՝ իշխանությունը մի դերակատարի ունակությունն է՝ ազդելու մյուս դերակատարի գործողությունների վրա՝ վերջինիս կամքին հակառակ [2]:

Պատմականորեն պետությունների՝ սեփական նպատակներին հասնելու կարողությունն առնչվել է այնպիսի ռեսուրսների հետ, ինչպիսիք են՝ տարածքը, բնակչությունը, բնական ռեսուրսները, բանակը, տնտեսական հզորությունը և այլն: Ընդհուպ մինչև 20-րդ դարը միջազգային հարաբերություններում գերակա դիրք զբաղեցնող ռեալիստական հայեցակարգը հիմնականում առաջնորդվում էր հենց այդ սկզբունքներով՝ պետություններին դասակարգելով ըստ իրենց ունեցած նյութական ռեսուրսների: Սակայն 20-րդ դարի վերջում ամերիկացի քաղաքագետ Ջոզեֆ Նայի ջանքերով ժամանակակից քաղաքագիտական գրականության մեջ ներմուծվեց մի եզրույթ, որը բոլորովին այլ պրիզմայի ներքո էր դիտարկում իշխանությունը/ուժը: Նայի կողմից ներմուծված այդ եզրույթն առչվում էր ուժի ոչ նյութական, դժվար չափելի, սակայն ոչ պակաս կարևոր ասպեկտին: Խոսքը .փափուկ ուժե (soft power) տերմինի մասին է:

Ինչպես և ցանկացած այլ սոցիալ-քաղաքական երևույթի, այնպես էլ «փափուկ ուժի» դեպքում հասկացության համընդգրկուն սահմանումը բավականին խնդրահարույց է: Ներկայումս հետազոտողներն ավելի շատ զբաղված են այդ հասկացության բովանդակային շրջանակների սահմանազատմամբ:

«Փափուկ ուժ» տերմինը Ջ. Նայի կողմից գիտական շրջանառության մեջ մտցվեց 1990թ.-ին գրված «Հարկադրված առաջնորդություն. ամերիկյան ուժի փոփոխվող բնույթը աշխատության մեջ» [3]: Հատկանշական է, որ աշխատությունը լույս տեսավ այն ժամանակ, երբ Սառը պատերազմը մոտենում էր իր ավարտին, և Խորհրդային միությունը գտնվում էր հոգեվարքի պայմաններում: Սառըպատերազմյան ժամանակաշրջանում «փափուկ ուժը», որպես այդպիսին, ուներ սահմանափակ կիրառություն՝ հիմնականում դրսևորվելով հակամարտող բլոկերի ներսում: Տերմինը, շրջանառության մեջ մտնելով, ըստ էության, խորհրդանշեց միջազգային հարաբերություններում որակական նոր տարրերի ի հայտ գալու հանգամանքը:

Փափուկ ուժի ազդեցության և դերակատարության մեծացումը մեծապես պայմանավորված է ժամանակի ընթացքում աշխարհակարգի հիմնական ուժային կենտրոնների կողմից թելադրվող քաղաքականության փոխակերպմամբ: Վերջիններս, գլոբալիզացվող աշխարհում արդեն ունակ չլինելով իրենց կամքը թելադրել ռազմական ուժով, ստիպված են ապավինելու իրենց նպատակներին հասնելու այլ՝ ոչ ռազմական միջոցների:

\* Հոդվածն ընդունվել է 24.11.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

Ինչպես և նմանատիպ այլ հասկացությունների դեպքում՝ **փափուկ ուժի** պարագայում ևս մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել մի քանի տասնյակ սահմանումների: Սակայն մինչ **փափուկ ուժի** սահմանումը հարկ է նախևառաջ սահմանել ,կոշտ ուժե հասկացությունը, քանի որ փափուկ ուժը ծագել և ձևավորվել է հենց ի հակադրություն, միզուցե նաև ի լրումն **կոշտ ուժի**: Կոշտ ուժը պատմականորեն եղել է միջազգային հարաբերություններում խնդիրների լուծման առանցքային մեխանիզմը: Այսպես, Ջ. Նայի կարծիքով, կոշտ ուժը սեփական նպատակներին հարկադրանքի միջոցով հասնելու ունակությունն է [4]: Մեկ այլ ամերիկացի քաղաքագետ Էռնստ Ուիլսոնի կարծիքով՝ կոշտ ուժը, օբյեկտին՝ սեփական կամքին հակառակ գործողություններ կատարել հարկադրելու ունակությունն է [5]: Ցանկացած պարագայում **կոշտ ուժ** հասկացության սահմանման առանցքը մեր կարծիքով այն է, որ օբյեկտը հարկադրված է գործելու/գործում է իր կամքին հակառակ: Խնդիրն էական է այն իմաստով, որ որոշ հեղինակներ **կոշտ ուժը** նույնականացնում են միմիայն ռազմական ուժի հետ, ինչն իրականում միայն դրա բաղադրիչներից մեկն է:

Ինչ վերաբերում է **փափուկ ուժ** հասկացության սահմանմանը, ապա հարկ է նախևառաջ մատնանշել հասկացության հեղինակ Ջ. Նայի կողմից տրված սահմանումը: Նրա կարծիքով՝ ,փափուկ ուժը ցանկալիին հասնելու ունակությունն է ոչ թե հարկադրանքի, այլ գրավչության/համոզման միջոցով [6]: Ավելի ուշ՝ 2004թ. գրված ,Փափուկ ուժ. համաշխարհային քաղաքականության մեջ հաջողության հասնելու միջոցները աշխատությունում, Նայն իր սահմանումն ընդլայնեց՝ այն դիտարկելով որպես օրակարգի ձևավորման, համոզման, գրավչության միջոցով այլ դերակատարների վրա ազդեցության միջոց՝ ցանկալի արդյունքներին հասնելու նպատակով [7]: Երկրորդ սահմանման մեջ առանձնահատուկ հետաքրքրական է օրակարգի ձևավորման մեխանիզմի մատնանշումը, որը, ըստ էության, սերտորեն առչնվում է ներկայումս տարածված կառուցվածքային ուժի (Structural power) հայեցակարգի հետ [8]: Ամեն դեպքում, ինչպես երևում է, Նայն առանձնահատուկ շեշտադրում է գրավչության գործոնը՝ նկատի ունենալով, որ փափուկ ուժ կիրառող դերակատարը փորձում է դրդել մյուսներին գործելու իր համար ցանկալի ձևով՝ գերծ մնալով կոշտ ուժի կիրառումից:

Ըստ Օքսֆորդի բառարանի՝ **փափուկ ուժը** սահմանվում է որպես միջազգային հարաբերություններում կիրառվող գործիք, որը դրսևորվում է տնտեսական կամ մշակութային ազդեցության միջոցով [9]: Ռուսական քաղաքագիտական մտքի շրջանակներում փափուկ ուժը դիտարկվում է որպես արտաքին քաղաքականության ռեսուրս, որն իր առանձնահատուկ տեղն ունի արտաքին քաղաքականության մյուս ռեսուրսների շարքում՝ պայմանավորված դրա նորմատիվային, դժվար չափելի բնույթով [10]:

Բոլոր դեպքերում, **փափուկ ուժի** սահմանումների մեջ առանցքն այն է, որ օբյեկտը գործում է սեփական կամքով՝ միաժամանակ նպաստելով սուբյեկտի մտադրությունների իրականացմանը: Այստեղ հարկ է հատուկ ընդգծել երկու կարևոր հանգամանք: Օբյեկտի՝ սեփական կամքով գործելը փափուկ ուժի անհրաժեշտ, բայց դեռևս ոչ բավարար պայման է: Արդյունավետ փափուկ ուժի կիրառման մասին խոսելու համար հարկ է նաև իմանալ այդ ուժը կիրառող սուբյեկտի նպատակները/մտադրությունները: Ուժն իմաստավորվում է միայն այն համատեքստում, որում այն կիրառվում է: Այսինքն՝ երկրորդ անհրաժեշտ բաղադրիչը փափուկ ուժի կիրառման արդյունքում օբյեկտի վարքագծի՝ սուբյեկտի մտադրություններին համապատասխան լինելն է: Մեր կարծիքով, եթե սուբյեկտը պարզապես գրավիչ է օբյեկտի համար, ապա դա դեռևս թույլ չի տալիս խոսել փափուկ ուժի կիրառման մասին, փոխարենն այստեղ գործ ունենք ազդեցության հետ: Սակայն, երբ այդ գրավչության արդյունքում/միջոցով օբ-



յեկտն սկսում է գործել սուբյեկտի մտադրություններին համապատասխան, ապա այդ դեպքում կարելի է փաստել արդյունավետ փափուկ ուժի կիրառումը:

Այսպիսով՝ **փափուկ ուժ** հասկացության սահմանման հիմքում ընկած է այդ ուժի օբյեկտ համարվող դերակատարի՝ սեփական կամքով սուբյեկտի ցանկացած գործողությունը կատարելու/չկատարելու հանգամանքը: Ըստ այդմ, տնտեսական սանկցիաները չեն կարող համարվել փափուկ ուժ, նույնիսկ եթե դրանք չեն ներառում բուն ուժային/ռազմական բաղադրիչ: Պատճառն այստեղ այն է, որ տնտեսական սանկցիաները պարզապես հարկադրում են/նպատակ ունեն հարկադրելու օբյեկտին փոխելու իր քաղաքականությունը՝ սուբյեկտի առաջնահերթություններին համապատասխան: Եթե արդյունքում օբյեկտը փոխում է իր քաղաքականությունը, ապա վերջինս դա անում է ոչ իր սեփական կամքով, այլ՝ հարկադրված լինելով դուրս գալ իր համար ստեղծված բարդ իրավիճակից:

Միևնույն ժամանակ, ասվածը դեռևս չի վկայում, որ կոշտ և փափուկ ուժերը միմյանց հետ որևէ առնչություն չունեն: Ընդհակառակը՝ դժվար է այսօր գտնել այնպիսի դերակատար, որը կկարողանա արդյունավետ կերպով օգտագործել փափուկ ուժը՝ առանց դրա հիմքում կոշտ բաղադրիչի: Մյուս կողմից՝ փափուկ ուժը չի կարելի համարել կոշտ ուժի պարզ արտացոլումը: Այդպես, օրինակ, Սկանդինավյան երկրներն առանձնապես աչքի չեն ընկնում իրենց ռազմական/ուժային պոտենցիալով, սակայն նրանք համարվում են գրավիչ: Տրամագծորեն հակառակ իրավիճակը բնորոշ էր Խորհրդային Միությանը. վերջինիս հզոր ռազմաքաղաքական պոտենցիալը ոչ միայն չէր նպաստում փափուկ ուժի մեխանիզմների մշակմանը, այլև խոչընդոտում էր դրան՝ հաշվի առնելով, որ ԽՍՀՄ-ն իր այդ պոտենցիալն օգտագործում էր սեփական արբանյակներին իր տիրույթում պահելու համար (կարելի է հիշել Հունգարիայի կամ Չեխոսլովակիայի օրինակները):

Կարելի է եզրակացնել, որ կոշտ և փափուկ ուժերը գտնվում են յուրատեսակ փոխկապակցվածության մեջ: Ակնհայտ է, որ եթե կոշտ ուժը հիմնվում է ավելի շատ նյութական չափելի գործոնների վրա, ապա փափուկ ուժը ավելի նորմատիվային բնույթ ունի: Տրամաբանական է, որ կոշտ ուժի կիրառման դեպքում տվյալ պետության ձեռքբերումներն ավելի շոշափելի են կարճաժամկետ հեռանկարում, մինչդեռ փափուկ ուժի արդյունավետ կիրառման արդյունքներն ավելի տեսանելի են երկարաժամկետ հեռանկարում: Ընդ որում, յուրաքանչյուր երկիր սեփական արտաքին քաղաքական գործունեության մեջ ձևավորում է կոշտ և փափուկ բաղադրիչների իր սեփական համադրությունը: Իսկ այդ երկու բաղադրիչների հնարավոր այնպիսի հարաբերակցությունը, որն այն կիրառող սուբյեկտի համար ապահովում է առավելագույն արդյունք, Ջ. Նայն անվանում է .խելացի ուժե (smart power) [11].

Հատկանշական է, որ նույնիսկ միջազգային հարաբերություններում կոշտ ուժի գերակայության մեջ համոզված ռեալիստներն են ընդունում փափուկ ուժի գոյությունը: Այսպես՝ Ջ. Նայն կողմից **փափուկ ուժ** տերմինի շրջանառումից դեռևս շատ առաջ՝ 1939թ., ռեալիզմի հիմնադիր հայրերից մեկը համարվող Է. Մարրը խոսում էր ուժի/իշխանության 3 տիպերի մասին՝ ռազմական ուժի, տնտեսական ուժի և կարծիքների նկատմամբ վերահսկողության մասին [12]: Հենց վերջին բաղադրիչն էլ սերտորեն առնչվում է **փափուկ ուժ** տերմինի բովանդակության հետ:

Ըստ էության, փափուկ ուժը, որպես առանց հարկադրանքի սեփական նպատակներին հասնելու մեխանիզմ, գործել է դեռևս հնագույն ժամանակներից, թեև դրա կիրառությունը բավականին սահմանափակ է եղել: Մի ժամանակաշրջանում, երբ ռազմական ուժը եղել է միջպետական խնդիրների լուծման հիմնական միջոցը, փափուկ ուժի

կիրառումը խիստ անհեռանկարային էր ու անարդյունավետ: Այդուհանդերձ, հնագույն ժամանակներում ևս կան փափուկ ուժի կիրառման բավականին յուրահատուկ օրինակներ: Այսպես, օրինակ, Ալեքսանդր Մակեդոնացու կառավարման տարիներին (մ.թ.ա. 356-323թթ) հելլենական մշակույթը տարածվեց վերջինիս գրաված տարածքի մեծ մասի վրա: Հելլենիզմն իրենց ներկայացնում էր հունական և արևելյան մշակույթների յուրատեսակ միաձուլում, որում հունականն ուներ ավելի ծանրակշիռ դերակատարություն՝ ձևափոխելով արևելյանը: Որպես արդյունք՝ գրավված տարածքների վրա բնակվող ժողովուրդները դառնում էին այդ մշակույթի կրողը, ինչն անշուշտ հեշտացնում էր դրանց վերահսկումը կենտրոնական իշխանությունների կողմից:

Զ. Նայի կարծիքով՝ փափուկ ուժի դերակատարության մեծացման հիմքում ընկած է ժամանակի ընթացքում հզոր ուժային կենտրոնների՝ սեփական խնդիրները ռազմական ճանապարհով լուծելու անկարողությունը, ինչն էլ, իր հերթին, ուներ իր առանձնահատուկ պատճառները: Այլ խոսքերով՝ ժամանակի ընթացքում աշխարհակարգը փոփոխվեց այնպես, որ առաջատար խաղացողները այլևս չեն կարող իրենց կամքը թելադրել միայն ռազմական պոտենցիալների շնորհիվ, և արդյունքում՝ գործունեության դաշտ է բացվում այլ բնույթի մեթոդների համար, ինչպիսին էլ հենց փափուկ ուժն է: Ներկայիս պայմաններում համաշխարհային քաղաքականությունում հաջողության են հասնում այն դերակատարները, որոնք կարողանում են համատեղել ուժային և համոզման/գրավչության մեխանիզմները: Ինչպես նշում է Զ. Նայն իր «Փափուկ ուժ. համաշխարհային քաղաքականությունում հաջողության հասնելու միջոցները աշխատությունում, պատմականորեն կոշտ ուժի դերակատարության նվազմանը նպաստել են մի շարք գործոններ [13]: Դրանցից առաջինը, նրա կարծիքով, որքան էլ հակասական լինի, այն է, որ կոշտ ուժի էվոլյուցիան ի վերջո այն դարձրեց այնքան կործանարար, որ դրա կիրառումը դարձավ խիստ անհեռանկարային: Առաջին հերթին խոսքը վերաբերում է միջուկային, ինչպես նաև զանգվածային խոցման այլ զենքերին: Ըստ այդմ, այդ զենքին տիրապետող ուժային կենտրոնների միջև պարզապես առկա է երաշխավորված փոխադարձ ոչնչացման (Mutually Assured Destruction – MAD) սկզբունքը, ինչը ենթադրում է, որ այդ զենքի կիրառման արդյունքում բոլոր կողմերն ահռելի կորուստներ կկրեն և, ըստ էության, կպարտվեն:

Կոշտ ուժի դերակատարության նվազման հիմքում ընկած մյուս գործոնը, ըստ Նայի, ժամանակակից աշխարհում ազգային ինքնագիտակցության աստիճանական վերելքն է, ինչի արդյունքում պետությունները միմյանց նկատմամբ ռազմական վերահսկողություն իրականացնելու միջոցով չեն կարող ապահովել վերջիններիս ենթարկվելը: Այլ խոսքերով ասած՝ ներկայիս աշխարհակարգում ավելի նորածն է ազգային ինքնորոշումն ու անկախությունը, քան գաղութացումը: Անցյալում, գաղութային քաղաքականության պայմաններում, կոշտ ուժը մեծ «պահանջարկ» ուներ, քանի որ գաղութների արդյունավետ վերահսկողությունը հիմնված էր մեծապես ռազմական ուժի վրա: Դրան հակառակ՝ 1960-ական թվականներից սկսած գաղութային քաղաքականությունը մեծապես ապալեզոհիմնացվեց, ինչի արդյունքում կոշտ ուժի կիրառումը որպես արդյունավետ գաղութային քաղաքականության միջոց պարզապես դուրս եկավ օրակարգից:

Կոշտ ուժի դերակատարության նվազման մեկ այլ հիմնապատճառ է ներկայումս ժողովրդավարացման միտումների առկայությունը և հատկապես առաջատար ուժային կենտրոնների մի մասի՝ ժողովրդավարական քաղաքական համակարգեր ունենալը (ԱՄՆ/Եվրոպա): Ըստ այդմ, Նայի կարծիքով, ներկայիս հետարդյունաբերական հասարակություններն ավելի շատ միտված են բարեկեցության, քան փառքի՝ հնարավորինս խուսափելով բարձր կորուստներից՝ հատկապես բարձր ռիսկայնության պայմաններում:

Սա չի նշանակում, որ պետությունները ներկայումս զերծ են մնում կոշտ ուժի կիրառումից: Այնուամենայնիվ, ռազմական հռետորաբանության խիստ նվազումը ժամանակակից ժողովրդավարություններում ենթադրում է, որ ուժի կիրառման համար անհրաժեշտ է բարոյական հիմնավորում՝ հանրության օժանդակությունը ստանալու նպատակով: Փաստորեն ժողովրդավարության կայացումը և սահմանափակող գործոն է կոշտ ուժի քաղաքականության կիրառման համար: Ըստ Նայի՝ ժամանակակից աշխարհում գոյություն ունեն 3 տիպի երկրներ՝ 1) աղքատ/հետամնաց, նախաարդյունաբերական (որոնք հիմնականում փլուզված կայսրությունների մնացորդներն են), 2) զարգացող արդյունաբերական երկրներ (Հնդկաստան, Չինաստան, Ռուսաստան), ինչպես նաև 3) զարգացած հետարդյունաբերական երկրներ (Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա, Ճապոնիա) [14]: Կոշտ ուժի կիրառումը դեռևս շարունակում է տարածված լինել առաջին խմբի երկրներում, ընդունվում է երկրորդ խմբի, սակայն գրեթե չի հանդուրժվում երրորդ տիպի պետություններում: Բրիտանացի դիվանագետ Ռոբերտ Քուլիերի խոսքերով, «ամենահզոր պետությունների մեծամասնությունն այլևս չի ուզում պատերազմել կամ նվաճել: Պատերազմները դեռևս տեղի են ունենում, սակայն շատ ավելի հազվադեպ, քան մեկ դար առաջ» [15]:

Եվ վերջապես, ժամանակակից ուժային կենտրոնների համար կոշտ ուժի կիրառումից զերծ մնալու և մեկ պատճառ է գլոբալիզացվող աշխարհում սեփական տնտեսական բարեկեցությունը պահպանելու ծգտումը: Խնդիրն այս դեպքում երկակի բնույթ ունի: Նայի՝ կոշտ, և հատկապես ռազմական ուժի կիրառումը ներկայիս տեխնոլոգիական զարգացածության պայմաններում կապված է աննախադեպ ծախսերի հետ: Երկրորդը՝ փոխկապակցված աշխարհում կոշտ ուժի կիրառումն անպայման այս կամ այն չափով ազդում է աշխարհատնտեսական գործընթացների վրա, ինչը կարող է կրկին անուղղակիորեն հանգեցնել այդ ուժը կիրառող դերակատարների համար տնտեսական կորուստների:

Այսպիսով՝ նշյալ միտումները պայմանավորում են փափուկ ուժի ազդեցության մեծացումը ներկայիս աշխարհակարգում: Սակայն, քանի դեռ կան պետություններ, որոնք սեփական խնդիրները լուծելիս ապավինում են կոշտ ուժին (սա վերաբերում է Նայի նշած պետությունների հատկապես առաջին, մասամբ նաև երկրորդ խմբին), փափուկ ուժի ազդեցությունը կշարունակի մնալ սահմանափակ: Մյուս կողմից, ոչ բոլոր խնդիրներն են կարող լուծվել փափուկ ուժի միջոցով: Ինչպես նշում է Ջ. Նայթ, «նույնիսկ եթե Հյուսիսային Կորեայի բռնապետ Կիմ Չեն Իրը նայի իռլիվուդյան ֆիլմեր, միևնույն է, դրանք դժվար թե որևէ կերպ ազդեն միջուկային զենք ստեղծելու նրա մտադրության վրա» [16]: Այսինքն՝ ամբողջատիրական քաղաքական համակարգի պարագայում փափուկ ուժի արդյունավետությունը խիստ սահմանափակ է: Եվ հակառակը՝ ժողովրդավարացման, տեղեկատվական տեխնոլոգիաների աճի հետ զուգահեռ փափուկ ուժի տիրույթը կշարունակի մեծանալ:

Փափուկ ուժի տեսահայեցակարգային ասպեկտների ուսումնասիրության հիմնախնդրի շրջանակներում չի կարելի չանդրադառնալ **փափուկ ուժի** ռեսուրսների տիպաբանությանը՝ հաշվի առնելով, որ երբեմն շատ հեղինակներ փափուկ ուժը նույնականացնում են դրա ռեսուրսների հետ: Այդ դեպքում, որևէ երկրի մշակույթը սկսում է դիտարկվել որպես **փափուկ ուժ**, մինչդեռ իրականում այն ընդամենը փափուկ ուժի կիրառման մեխանիզմներից/միջոցներից մեկն է: Սեր կարծիքով՝ նպատակահարմար է տարանջատել **փափուկ ուժը** դրա կիրառման համար անհրաժեշտ ռեսուրսներից: Ըստ այդմ, **փափուկ ուժի** ռեսուրսներն ընդգրկում են այն բոլոր միջոցները, որոնք միտված են սուբյեկտի նպատակների իրականացմանը, իսկ բուն փափուկ ուժ հասկացությունը ներառում է սուբյեկտի մտադրությունից մինչև իր համար նախընտրելի

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

քաղաքական վերջնարդյունք ընկած գործընթացը:

**Փափուկ ուժի** ռեսուրսների մասին խոսելիս ամերիկացի քաղաքագետ Ջուլիո Գալլարոտտոյին առանձնացնում է դրա 2 տիպ՝ արտաքին և ներքին [17]: Արտաքին ռեսուրսների տակ նա նկատի է առնում տվյալ պետության արտաքին քաղաքականությունը, միջազգային իրավունքին, նորմերին և ինստիտուտներին հետևելը, դաշինքային պարտավորությունների կատարումը, սեփական կարճաժամկետ նեղ շահերը երկարաժամկետ համընդհանուր շահերին զոհաբերելու պատրաստականությունը և այլն:

Ինչ վերաբերում է ներքին ռեսուրսներին, ապա այս դեպքում Գալլարոտտոյին նկատի ունի առաջին հերթին տվյալ պետության քաղաքական համակարգն ու քաղաքական մշակույթը, մասնավորապես՝ սոցիալական համաձայնության, հանդուրժողականության մթնոլորտը, բարեկեցիկ կյանքի համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Ներքին և արտաքին վերոնշյալ գործոնների համադրումն էլ ձևավորում է այս կամ այն պետության փափուկ ուժը:

Մեր կարծիքով, որքան էլ փափուկ ուժը հիմնված լինի ներքին և արտաքին ոլորտներում օրինակելի պետության գաղափարի վրա, միևնույն է, դրանով փափուկ ուժի ռեսուրսները չեն սահմանափակվում: Այս իմաստով, փափուկ ուժի ռեսուրսների ավելի համընդգրկուն տիպաբանություն է առաջարկում հենց Ջ. Նայրը, որի կարծիքով, փափուկ ուժը, որպես այդպիսին, հիմնվում է երեք սյուների վրա, որոնք են մշակույթը (որքանով է այն գրավիչ մնացյալ դերակատարների համար), քաղաքական արժեքները (որքանով է տվյալ պետությունը հետամուտ լինում այդ արժեքներին) և արտաքին քաղաքականությունը (որքանով է լեզիտիմ մյուս դերակատարների աչքերում) [18]: Այս երեք բաղադրիչներն, ըստ Նայի, պայմանավորում են տվյալ պետության գրավչությունը արտաքին հարաբերություններում և իր ցանկացած նպատակներին առանց կոշտ ուժի կիրառման հասնելու ունակությունը:

Ինչպես երևում է Նայի տիպաբանության մեջ, բուն պետությունը որպես դերակատար է հանդես գալիս միայն երրորդ բաղադրիչում, մինչդեռ քաղաքական մշակույթը և քաղաքական արժեքները վերաբերում են ավելի շատ տվյալ պետության հասարակությանը (թեև պետությունը ևս կարող է իր դերակատարությունն ունենալ այս ոլորտներում) և պակաս դեր չեն խաղում փափուկ ուժի արդյունավետ կիրառման գործում:

**Փափուկ ուժի** ռեսուրսների պրագմատիկ տիպաբանություն է առաջարկում ռուս քաղաքագետ Օ. Լեոնովան, ով յուրովի համադրում է փափուկ ուժի պետական և ոչ պետական մակարդակները: Այսպես, նրա կարծիքով, փափուկ ուժի ռեսուրսների շարքում են՝

- տեղեկատվական հոսքերը
- արտասահմանյան լսարանին ուղղված քաղաքական պրոպագանդան
- գլոբալ մարքեթինգը
- պետական լեզուն և դրա տարածվածությունն աշխարհում
- հանրային դիվանագիտությունը
- գրոսաշրջությունը, սպորտը և մշակութային փոխանակումները
- կրթական համակարգը
- տեղեկատվական պատերազմներ վարելու ունակությունը
- միգրացիոն քաղաքականությունը (այդ թվում՝ սփյուռքի գործոնը) [19]:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ներկայումս **փափուկ ուժ** հասկացության լայնորեն կիրառվելու հանգամանքը բնավ պատահական չէ. պատմականորեն համաշխարհային ուժային կենտրոնների՝ միմիայն կոշտ ուժով սեփական խնդիրները լուծելու անկարողությունը օրակարգ մտցրեց այլ միջոցներով սեփական նպատակների

*իրականացման կարիքը և հրամայականը: Մյուս կողմից՝ չեն դադարում քննարկումները փափուկ ուժ հասկացության բովանդակային սահմանների, դրա բաղադրիչների, ռեսուրսների ու գործիքակազմի վերաբերյալ: Անեն դեպքում, փաստ է, որ միջազգային հարաբերություններում խնդիրների լուծման միջոցները ժամանակի ընթացքում ռազմի դաշտից տեղափոխվել են այլ հարթություններ, իսկ ռազմական լուծումներ տրվում են միայն ծայրահեղ դեպքերում:*

## **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. **Իշխանություն և ուժ** տերմինները անգլալեզու գրականությունում մատնանշվում են միևնույն՝ power տերմինով: Ելնելով մեթոդոլոգիական նպատակահարմարությունից՝ սույն աշխատանքում իշխանություն և ուժ տերմինները դիտարկվում են որպես հոմանիշներ
2. Dahl, Robert A., “The Concept of Power”, Behavioral Science, 2:3, July, 1957, p. 201
3. Nye, Joseph S. Jr. 1991. “Bound to Lead: The Changing Nature of American Power”. NY: Basic Books, p.330
4. Nye, Joseph S. Jr. 1991. “Bound to Lead: ...”, p. 5
5. Ernest J. Wilson (March 2008). “Hard Power, Soft Power, Smart Power” (PDF). The of the American Academy of Political and Social Science. 616 (1), p. 110–124
6. Nye, Joseph S. Jr. 1991. “Bound to Lead...”, p.7
7. Nye, Joseph. Soft Power: The Means to Success in World Politics (New York: Public Affairs, 2004) p. 128
8. Pustovitovskij A., Kremer J-F., Structural Power and International Relations Analysis, Institute of Development Research and Development Policy, Volume 191, Bochum, 2011, p.14-16, <http://www.cgs-bonn.de/pdf/wp-191.pdf>
9. Oxford Dictionary online, [https://en.oxforddictionaries.com/definition/soft\\_power](https://en.oxforddictionaries.com/definition/soft_power)
10. Леонова, О. , “Мягкая сила – ресурс внешней политики государства”, журнал ОБОЗРЕВАТЕЛЬ-OBSERVER 4/2013, с. 2, [http://www.observer.materik.ru/observer/N4\\_2013/027\\_040.pdf](http://www.observer.materik.ru/observer/N4_2013/027_040.pdf)
11. Nye, Joseph, “The Future of Power”, Public Affairs, New York, p. 207-2015
12. Carr E., “The Twenty Years’ Crisis 1919-1939: An Introduction to the Study of International Relations”, LONDON, MACMILLAN & CO. LTD1946, p. 102, <https://www.scribd.com/doc/167060273/E-H-Carr-the-Twenty-Years-Crisis-1919-1939-an-Introduction-to-the-Study-of-International-Relations-1946>
13. Nye, Joseph. Soft Power: The Means to Success in World Politics (New York: Public Affairs, 2004) p. 32
14. Nye, Joseph, “Hard and Soft Power in a Global Information Age”..., p. 2, [http://mercury.ethz.ch/serviceengine/Files/ISN/21702/ichaptersection\\_singledocument/cb06ee9a-1474-4711-bdf6-eb7d95184c2e/en/01\\_HardSoftPower.pdf](http://mercury.ethz.ch/serviceengine/Files/ISN/21702/ichaptersection_singledocument/cb06ee9a-1474-4711-bdf6-eb7d95184c2e/en/01_HardSoftPower.pdf)
15. Cooper, Robert, “The postmodern State and the World Order (London:Demos/ The Foreign Policy Centre, 2000), p. 22
16. Nye, Joseph S. Jr. 1991. “Bound to Lead...”, p. 12
17. Gallarotti, Giulio M., “Soft Power: What it is, why it’s important, and the conditions under which it can be effectively used”. / Division II Faculty Publications, Paper 57, 2011, p. 20-25.
18. Nye, Joseph S. Jr. 1991. “Bound to Lead...”, p. 11
19. Леонова, О. , “Мягкая сила – ресурс внешней политики государства”, ...стр. 4, [http://www.observer.materik.ru/observer/N4\\_2013/027\\_040.pdf](http://www.observer.materik.ru/observer/N4_2013/027_040.pdf)

ԱՄՓՈՓԱԳԻՐ  
«Փափուկ ուժ» հասկացության տեսահայեցակարգային հիմքերը  
Հայկ Սարգսյան

Հոդվածի նպատակը ամերիկացի քաղաքագետ Ջոզեֆ Նայի կողմից գիտական շրջանառության մեջ մտցված «փափուկ ուժ» հասկացության տեսահայեցակարգային ասպեկտների ուսումնասիրությունն է: Հոդվածի հեղինակը եկել է եզրակացության, որ *փափուկ ուժը* պետության՝ առանց հարկադրանքի սեփական նպատակներին հասնելու կարողությունն է: Բացի այդ՝ հոդվածում շեշտադրվում է այն հանգամանքը, որ *փափուկ ուժը*՝ որպես արտաքին քաղաքականության գործիք, արդիական է դարձել ժամանակի ընթացքում պետությունների՝ սեփական խնդիրները միայն ռազմական ուժով լուծելու անկարողությունից: Հոդվածի վերջում ներկայացվում են *փափուկ ուժի* ռեսուրսները, բաժանում է իրականացվում այդ ռեսուրսների պետական և ոչ պետական մակարդակների միջև:

РЕЗЮМЕ  
Теоретические основы концепции «мягкой силы»  
Айк Саркисян

**Ключевые слова:** *мягкая сила, жесткая сила, Джозеф Най, влияние, политическая культура, политические ценности, привлекательность, принуждение, внешняя политика, политическая легитимность*

Цель статьи заключается в изучении теоретического базиса понятия "мягкой силы", автором которой является американский исследователь Джозеф Най. Автор настоящей статьи приходит к выводу, что суть "мягкой силы" заключается в процессе материализации приоритетов государства, их трансформации в реальные политические результаты и дивиденды без всякого принуждения. Более того, в статье утверждается, что важность мягкой силы значительно возросла, в частности, в результате эволюции силы как таковой, неспособности государств достигать поставленных задач, применяя лишь инструментарий "жесткой силы". Наконец, статья выявляет также различные подходы касательно исследования ресурсов мягкой силы, и в этой связи проводится ясная грань между спецификой государственных и негосударственных ресурсов.

**SUMMARY**  
**Theoretical Basis of the Concept of *Soft Power***  
**Hayk Sargsyan**

**Keywords:** *soft power, hard power, Joseph Nye, influence, political culture, political value, attraction, coercion, foreign policy, political legitimacy*

The aim of the article is to examine theoretical basis of the concept “soft power”, coined by Joseph Nye. While exploring definitions of the concept we came to the conclusion that soft power refers to the process of materialization of states’ preferences into policy outcomes without using coercion. Furthermore, the article states that the importance of soft power has grown as a result of evolution of power and the inability of states to reach their goals merely by using “hard power”. In the end, the article explores different approaches in the context of the resources of soft power and differentiates between state-level and non-state level resources.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ՕՐԿԱ ՀԱՐՑԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ  
ԹԵՐԹԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ (1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.)\*

Խաչատուր Ստեփանյան

**Բանալի բառեր՝** Հայաստան, խորհրդայնացում, սիյուռք, Հայիեղկում, ազգային կուսակցություններ:

1920թ. նոյեմբերի 29-ին Հայիեղկումը, Հայաստանի հյուսիս-արևելքից մտնելով Իջևան, հանդես եկավ Հայաստանը խորհրդային հռչակելու մասին հայտարարությամբ [1]:

1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով Հայաստանում իշխանությունը դաշնակցությունից փոխանցվեց բոլշևիկներին: Նոր իշխանությունների անդրանիկ հրամանով դեկտեմբերի 2-ը ազդարարվում էր Հայաստանում խորհրդային իշխանության հռչակման օր [2]: Հրամանը հրապարակվում է «ՍԽՀ դեկրետների և հրամանների պաշտոնական ժողովածուի մեջ» [3], սակայն հետագայում հանվում է այնտեղից [4]: Դեկտեմբերի 2-ի իշխանության խաղաղ փոխանցումը արժեզրկելու և ,հեղափոխական ձանապարհով Հայաստանում իշխանությունը վերցնելու բոլշևիկյան տեսությունը հիմնավորելու նպատակով 1921թ. նոյեմբերի 29-ին խորհրդային Հայաստանի ժողկոմ-խորհրդը որոշեց բոլոր դեկրետներում և հրամաններում Հայաստանում խորհրդային իշխանության հայտարարման օրը դեկտեմբերի 2-ի փոխարեն ընդունել նոյեմբերի 29-ը [5]: Ըստ էության, Հայաստանի խորհրդային իշխանություններն այս քայլով փորձում էին քողարկել Հայաստանի խաղաղ խորհրդայնացման իրողությունը և խզել կապն անցյալի իրականության հետ [6]:

Հայաստանի խորհրդայնացման օրը տարբեր կերպ է ընկալվել և մեկնաբանվել սիյուռքահայ թերթերի կողմից: Իրականում քննարկումների հիմքում ավելի շատ ընկած էր այս կամ այն քաղաքական ուժին համակրելու կամ մերժելու հարցը և ոչ պատմական իրողությունների վերլուծությունը: Այս համատեքստում երբեմն էլ քննարկումների տիրույթում է եղել Հայաստանի անկախ լինել-չլինելու խնդիրը:

Դաշնակցական թերթերը զայրույթով էին անդրադառնում բոլշևիկների կողմից նոյեմբերի 29-ը Հայաստանի խորհրդայնացման օր նշելու փաստին: Այս կապակցությամբ Փարիզի «Հառաջ»-ը գրում է. «Երեւանի վարիչները կը յամառին նոյեմբեր 29-էն հաշուել թուական մը, որ իրականին մէջ կը սկսի դեկտեմբերի 2էն»[7]:

Հայաստանի խորհրդայնացման թվականը նոյեմբերի 29-ին նշողներին, առավել ևս այդ օրով Հայաստանի «վերածնունդը» պայմանավորողներին խիստ հակադարձում է նաև Ֆրեզնոյի «Ասպարեզ»-ը: «Մեր մէջ խմբակ մը գոյութիւն ունի,- գրում է թերթը,- տարուած հիւանդոտ եւ անիրագործելի «համաշխարհային յեղափոխութեան» գաղափարով, որ ամէն կերպ կը ջանայ արհեստական փոփոխութեան ենթարկել անկախութեան թուականը եւ գայն փոխադրել Նոյեմբեր 29-ին, երբ ռուսական եւ տաճկական սուլիմներու օժանդակութեամբ հայ բոլշևիկները տիրեցին մեր երկրին եւ «պրոլետարական» իշխանութիւն հաստատեցին Հայաստանի մէջ»: Թերթը գտնում է, որ վարչաձևի փոփոխության պատճառով չպետք է կամայական փոփոխության ենթարկել նաև անկախության թվականը՝ մայիս 28-ը [8]: Անդրադառնալով մայիսի 28-ը «անա-

\* Հոդվածն ընդունվել է 15.02.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՍՀ պատմության ամբիոնը:



դարտ» պահելու խնդրին՝ Կահիրեի «Հուսաբեր»-ը գրում է. «Մայիս 28-ը կենսանորոգ թուական մըն է հայոց ազգին համար եւ ատով իսկ, յաւերժական ու կործանարար մղձաւանջ մը՝ անոր ամէն կարգի թշնամիներուն ներքին թէ արտաքին, կանաչ թէ կարմիր: Պահենք մայիս 28-ը և գուրգուրանք անոր վրայ, որովհետեւ ան է որ պիտի մահէ մեզ վաղուան ազատ ու անկախ Հայաստանին համար» [9]:

Այսպիսով՝ Սփյուռքում հրատարակվող դաշնակցական թերթերը գտնում էին, որ որևէ իմաստ չկա Հայաստանի խորհրդայնացման օրը դեկտեմբերի 2-ից տեղափոխել նոյեմբերի 29-ը: Առավել անիմաստ է դառնում Հայաստանի անկախության թվականի փոփոխությունը՝ մայիսի 28-ից բերելով նոյեմբերի 29-ը: Մեր կարծիքով՝ դաշնակցական թերթերն այս կերպ ոչ միայն պաշտպանում էին իրենց կուսակցության պաշտոնական տեսակետը, այլև ներկայացնում էին պատմական իրականությունը՝ թերևս ինչ-որ տեղ արդարացված ձևով արժևորելով նաև ՀՅԴ դերը:

Խնդրին երկակի մոտեցում էին ցուցաբերում հնչակյան թերթերը:

Օրինակ՝ Բեյրութի «Արարատ» թերթը, անդրադառնալով Հալեպում խորհրդային Հայաստանի տարեդարձը նշելու հանդիսությանը, մեջբերում է այդ հանդիսության նախագահողի խոսքերը. «Նոյեմբեր 29-ը տօնն է իրական անկախութիւնը վայելող խորհրդային Հայաստանի:... Նոյեմբեր 29ը յարութեան տօնն է 600 տարիներէ ի վեր ստրկութեան մէջ տուայտող հայ ազգին» [10]: Ըստ էության, թերթը առաջնահերթությունը տալիս է խորհրդային մոտեցմանը:

Հնչակյան մեկ այլ՝ «Արծազանք Փարիզի» պարբերականը բոլորովին հակառակ տեսակետն է հայտնել: Թերթը գտնում է, որ «մայիսի 28-ը, իբրև մեծ ու նուիրական ուխտի օր պէտք է տօնուի բովանդակ հայութեան կողմէ, առանց կուսակցական խտրութեան, վասնզի մեր Վերածննդի այդ խնկելի օրը դարբնողը եղած է ինքը՝ Հայ ժողովուրդը եւ ոչ թէ այս կամ այն կուսակցութիւնը միայն... Մայիս 28-ը յաղթանակի օրն է նաեւ Հայ յեղափոխութեան պայքարին, որուն իրականացման համար պայքարած եւ զոհաբերած են բոլոր կուսակցութիւնները» [11]: Ավելին՝ Հնչակյանների փարիզյան պաշտոնաթերթն ընկնում է հակառակ ծայրահեղության մեջ՝ նոյեմբերի 29-ը համարելով Հայաստանի ստրկացման օր: «Հայաստանի խորհրդայնացման տարեդարձը կրնայ խանդավառել քանի մը հարիւր կամ հազար հայ կոմունիստներ ամբողջ աշխարհի հայութեան մէջ, բայց Մայիս 28ը նուիրական տօն է ամբողջ պայքարող հայութեան համար, որ ազատ պետական գաղափարով կ'ոգեւորուի: Ամէն ուր. 29ի երբ ամէն տեղ հայ Պոլշեիկները յավակնութիւնը ունենան ազգային տօնակատարութեան մը, հայ ժողովուրդը միմիայն անտարբերութեամբ պիտի դիմաւորէ, ինչպէս երեկ էր: Ու միշտ պիտի աղաղակէ թէ մեր ստրկութեան տարեդարձն է, որ կը տօնուի», - գրում է թերթը [12]:

Խորհրդայնացման փաստը դրական ընդունելուն զուգահեռ՝ մայիսի 28-ի իրողությունը կարևորում էր նաև հնչակյան մեկ այլ պարբերական՝ Հալեպի «Սուրիական մամուլ»-ը: «Մայիս 28-ը Հայաստանի վերածննդի տօնն է: Ու այդ տօնը մենք կը տօնենք դարեր շարունակ, երբ հայը կապրի ու կապրեցնէ իրեն հետ նաեւ Հայաստանը: Յարգելով վաղուան օրը (մայիսի 28-ը – Խ. Ս.), անգամ մը եւս անդրադառնանք մեր տխուր անցեալին եւ պատմութեան սոսկալի դասերէն խրատուած ու գօտեպնդուած, ուխտենք որ երկար եւ անփոփոխ պահենք Մայիս 28-ին սկսող եւ Նոյեմբեր 29-ին որոշ կերպարանք ստացող ներկայ դարաշրջանը», - գրում է թերթը [13]: Հնչակյանների Հալեպի պաշտոնաթերթն անդրադարձել է նույնիսկ հեռավոր Բուենոս Այրեսում Հայաստանի խորհրդայնացման տարեդարձը նշելու հանդիսությանը: Հատկանշական է հնչակյանների կողմից Հայաստանի խորհրդայնացումը դեկտեմբերի 2-ին հիշատակե-

լը՝ նշելով, որ այդ օրը «հայկական հեղափոխության» օրն է [14]:

«Սուրիական մամուլէն առիթն օգտագործում է նաև դրական արտահայտվելու խորհրդային Հայաստանի հանդէպ. «խորհրդային Հայաստանը դրական ու բեղմնավոր ամբողջացումն է հայ քառասանամեայ յեղափոխութեան: Անոր յաղթանակը՝ յաղթանակն է հայ իրապաշտութեան: Հայ կեանքի դառն անհրաժեշտութիւններու հարազատ զաւակն է ան» [15]:

Նույն ոճով է գրում նաև Կ. Պոլսի հնչակյան «Երկիր»-ը. «Հայ աշխատաւորութիւնը զօրացած կովկասեան եւ ռուսական յեղափոխական ռամկավարութեան բարեկամութեամբը՝ Մայիս 28-ի տարեդարձին առիթով մի անգամ եւս ուժգին կը հնչեցնէ իր ծայրը՝ յանուն միակն Հայաստանի, քօմիւնիստական իրաւակարգով եւ պրոլետարիատի տիքթաթուրայով» [16]:

Հայաստանի խորհրդայնացման օրվա, խորհրդային Հայաստանի անկախության խնդրի վերաբերյալ ուրույն տեսակետ է հայտնում հնչակյանների ամերիկյան պաշտոնաթերթ «Երիտասարդ Հայաստանը»: Թերթի խմբագիր Ստեփան Սապահ-Գուլյանը 1920թ. դեկտեմբերին գրում է, որ Հայաստանի խորհրդայնացումով նրա անկախությունն ու պետականությունը չի վերացել: Նման խոսքերը, ըստ թերթի, «երէ՛ք չեն համապատասխանում իրականութեան: Որովհետեւ հայկական պետականութիւն կայ, նա անկախ է եւ բնաւ չի կազմում մասը ռուսական պետութեանն» [17]: Ավելին, 1921թ. մայիսի 27-ին, առաջին հանրապետության անկախությանը նվիրված խմբագրականում թերթը խորհրդային Հայաստանը համարում է առաջին հանրապետության շարունակությունը. «Հայ բանւորութեան ու գիւղացիութեան երազած ազատութեան աղօտ շողերու երերման երրորդ տարելիցն է վաղը, որ այդ Ազատութեան իրական նշանակութիւնը լաւապէս ըմբռնող մտքերը հոգեկան անխառն ցնծութեամբ պիտի տօնեն զայն»: Հատկանշական է, որ «Երիտասարդ Հայաստան»-ի համոզմամբ «Սովիետական Հայաստանի իշխանութիւնը... իր թելերը պիտի տարածէ եւ Թրքահայաստանի եւ ամբողջ աշխարհի վրայ» [18]:

Թերթի 1925թ. նոյեմբերի 28-ի խմբագրականում մասնավորապէս նշվում է. «Սօցիալիստ խորհրդային Հայաստանի սահմաններուն մէջ ապրող աշխատաւորութիւնը, գեղջուկն ու գեղջկուհին՝ Նոյեմբեր 7-ի տօնախմբական անօրինակ խանդավառութիւններէն վերջ, կը պատրաստուի ողջունել Դեկտեմբերի 2-ը (ընդգծումը մերն է – Խ. Ս.)՝ իր յաղթանակներուն 5-րդ տարեդարձը, որու հանդէպ անտարբեր չէ եւ չի կարող ըլլալ արտասահմանեան գաղութահայ աշխատաւորական զանգուածը մասնաւորաբար... Դեկտ. 2-ը նոր փառայեղ շրջան մը բացած է հայ աշխատաւորութեան առջեւ» [19]:

Կարելի է եզրակացնել, որ հնչակյան պարբերականները, չհակադրվելով խորհրդային վարչակարգին, այնուամենայնիվ արժևորում էին մայիսի 28-ի դերը հայ ժողովրդի կյանքում, չնայած որ խորհրդային վարչակարգն ամեն զնով մերժում էր այդ տարեթիվը: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի խորհրդայնացման օրվան, ապա այս առումով տարբեր թերթեր տարբեր մոտեցում են ցուցաբերում՝ կամ նոյեմբերի 29, կամ դեկտեմբերի 2:

Նոյեմբերի 29-ը Հայաստանի խորհրդայնացման, առավել ևս վերածննդի օր են համարում ռամկավար-ազատական թերթերը: Բոստոնի «Պայքար» պաշտոնաթերթում ականավոր գործիչ Արշակ Չոպանյանն իր հրապարակումներից մեկում գրում է. «Մայիս 28-ը հայ ազատագրութեան համար մղուած դարաւոր պայքարին գեղեցիկ թուականներէն մին է... Ան անցեալին կը պատկանի: 1919 (պետք է լինի 1920 – Խ. Ս.) Նոյ. 29էն ի վէր Հայոց պատմութեան մէկ նոր շրջանը կը բացուի, այդ օրը հայ ազգային ինքնավար կեանքին մէկ նոր փուլը կը սկսի, այ օրը կը ստեղծուի խորհրդային Հայաստանը, որ այժմեան կենդանի Հայաստանն է...» [20]: Նույն հրապարակախոսության մեջ Ա. Չո-

պանյանը, նախընտրելով նոյեմբերի 29-ը, փորձում է ցույց տալ, որ իր համար Խորհրդային Հայաստանը գերադասելի է «Ղաշնակցական Հայաստանին» [21]:

«Պայքար»-ի խմբագրականներից մեկում Հայաստանում «խաղաղության, ապահովության ու վերաշինության բեղմնաւոր շրջանի» սկիզբ է համարվում 1920թ. նոյեմբերի 29-ը: Ըստ թերթի՝ այդ օրը «Ազատ Հայաստանի գոյութիւնը դրուեցաւ շիտակ ու ամուր հիմերու վրայ» [22]: Ինչպես տեսնում ենք, ռամկավար պաշտոնաթերթը, կարևորելով Հայաստանի խորհրդայնացումը երկրի զարգացման առումով, այդ իրադարձության սկիզբ համարում է նոյեմբերի 29-ը:

Թերթը նման բովանդակությամբ խմբագրական հոդվածներ է հրատարակում նաև հետագա տարիների նոյեմբերի 29-ի համարներում: «Նոյն. 29-ը Խորհրդային Հայաստանի տարեդարձն է, եւ Հայ ազգային պատմութեան մէջ արձանագրուած է՝ իբրեւ Փրկութեան թուականը, քանզի ուրջ տարի առաջ այդ օրը Հայ ժողովուրդն ու Հայաստան ազատուեցան քաղաքական աղէտալի նախաբեկութենէ՝ մը՝ Խորհրդային իշխանութեան հաստատութեամբ եւ իբրեւ ազատ ազգ ու պետութիւն ապրելու իրաւունք ստացան»[23]: «Ոմանց տեսութեամբ, Նոյ 29ը Հայաստանի մէջ պետական դրութեան փոփոխութեան թուական մըն է, անկախութեան տարեդարձ է: Նոյ 29ը՝ Հայաստանի մէջ Խորհրդային իշխանութեան հաստատութիւնը սակայն, անկախութեան յայտարարութենէն աւելի մեծարժէք բան մըն է: Այդ օրը բերաւ հայ ժողովուրդին փրկութիւն, իրական ազատութիւն, խաղաղութիւն եւ ապահովութիւն» [24]: Փաստորեն՝ Ամերիկայի ռամկավարների պաշտոնաթերթը Հայաստանի խորհրդայնացման օրվա հարցում կիսում էր խորհրդային պաշտոնական տեսակետը: Նման մոտեցման հիմքում, մեր կարծիքով, դրված էր Խորհրդային Հայաստանի վարչակարգի կողքին կանգնած լինելու ցուցադրության պատրաստականությունը: Խորհրդահայ իշխանությունները որքան էլ մերժեին սիյուռքահայ քաղաքական կազմակերպություններին և նրանց մամուլի օրգաններին, ռամկավարները ձգնում էին ցույց տալ իրենց նվիրվածությունը խորհրդային վարչակարգին: Իսկ Հայաստանի խորհրդայնացման օրվա պատմագիտական ընկալումը նրանց չէր հետաքրքրում:

Հատկանշական է, որ Եգիպտոսի «Արև»-ը, կարևորելով Հայաստանի խորհրդայնացումը, նշում է որ մայիսի 28-ը նույն պես պետք է հիշարժան օր համարել [25]:

Ի դեպ, ռամկավարները ոչ միայն թերթերում էին խորհրդայնացման օրը համարում նոյեմբերի 29-ը, այլև այդ օրն էին նշում նաև խորհրդայնացման տարեդարձը [26]:

Սիյուռքյան համայնավարական թերթերը, բնականաբար, պետք է անվերապահորեն պաշտպանեին Հայաստանի խորհրդայնացման պատմության խորհրդային տեսակետը: Աթենքի «Արարատ» օրաթերթը գրում է . «...Մայիս 28-ն ետք Նոյեմբեր 29 կայ ու մեր ժողովուրդը այսօր իր պետականութեան կը նայի այդ թուականին մէջ: Այսօրուան Հայաստանի տօնը Նոյեմբեր 29 է»: Կարծում ենք՝ թերթը, հետևելով իր դավանած գաղափարական ուղղությանը, իրավունք ունի պնդելու վերոնշյալը: Սակայն մեկնաբանություններում, մեր կարծիքով, փորձ է անում նվաստացնելու Մայիսի 28-ը: «Եթէ գաղութները դեռ արժանաւորապէս չկրցան հասկնալ այդ թուականը, Մայիս 28-ներու վրայ պնդելով չէ, որ մեր ժողովուրդը կը մօտեցնենք ներկայ իրականութեան, այլ ընդհակառակը, զայն աւելի կը հեռացնենք եւ խրամատը, որ կայ Հայաստանի եւ գաղութներու միջեւ, աւելի կը խորացնենք», - ասիւ այսպէս է հայտնում իր ,մտահոգությունը Աթենքի «Արարատ»-ը [27]: Կարծում ենք՝ թերթի բացատրությունները հիմնազուրկ են: Բոլորովին չի կարելի համեմատել հերոսամարտերի արդյունքում ծեռք բերված մայիս 28-ի անկախության հռչակումը և բոլշևիկյան Ռուսաստանի աջակցությամբ Հայաստան ներխուժած Հայիեղկոմի որևէ իրավական հիմք չունեցող խորհրդայնացման մասին հռչակագիրը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Աթենքի մեկ այլ համայնավարական թերթ «Սեւան»-ն ավելի եռանդուն է պաշտպանում նոյեմբերի 29-ը: «Անկցի մեր հայրենիքի ստրկացման օր Մայիս 28ը, Կեցցէ մեր ազատութեան օր Նոյեմբեր 29ը», - գրում է թերթը [28]: Թերթը նույն տարվա նոյեմբերի 29-ի համարում գրում է. «Կեցցէ հայ աշխատաւոր ժողովրդի իրական ազատութեան եւ անկախութեան թուականը, Նոյեմբեր 29ը, Կեցցէ Խորհրդային Հայաստանը» [29]:

Այսպիսով՝ խորհրդային վարչակարգի քաղաքականությունը պաշտպանող թերթերը ոչ միայն կարևորել են նոյեմբերի 29-ի հռչակագիրը, անտեսել դեկտեմբերի 2-ի Դրո-Լեգրան համաձայնագիրը, այլև փորձել են նսենացնել 1918թ. մայիսյան հաղթանակներն ու անկախ պետականության վերականգնման իրողությունը:

Քննելով սփյուռքահայ թերթերի մոտեցումները Հայաստանի խորհրդայնացման օրվա վերաբերյալ՝ կարելի է եզրակացնել.

ա) դաշնակցական թերթերը, առաջնորդվելով կուսակցության պաշտոնական տեսակետով, պնդում էին, որ Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել 1920թ. դեկտեմբերի 2-ին: Մեր կարծիքով՝ այս մոտեցումը ոչ միայն կուսակցության դիրքորոշման, այլև պատմական ճշմարտության պաշտպանություն է:

բ) հնչակյան թերթերը երկակի մոտեցում են ցուցաբերել. երբեմն պաշտպանել են խորհրդային պաշտոնական տեսակետը, երբեմն էլ փորձ է արվել շեղվելու այդ ուղուց և որդեգրել պատմական իրողությունը ոչ բոլշևիկյան պրիզմայով ներկայացնելու մարտավարությունը:

գ) ռամկավար-ազատական և համայնավարական թերթերը միակարծիք ներկայացրել են, որ Հայաստանի խորհրդայնացումը եղել է նոյեմբերի 29-ին, չի եղել որևէ հիշատակում դեկտեմբերի 2-ի մասին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 1, գ. 1, թ. 1, 1 շրջ, 2:
2. Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Եր., 2006, էջ 13:
3. Դեկրետների և հրամանների ժողովածու, Էջմիածին, Պետական հրատարակութիւն, 1921, պր. I, էջ 5:
4. Հայոց պատմություն, Հ. 4, գ. I: Նորագույն ժամանակաշրջան (1918-1945), Եր., 2010, էջ 283:
5. ՀԱԱ, ֆ. 113, ց. 43, գ. 30, թ. 39 և հակ.:
6. Մեր կարծիքով, թերևս պատահական չէ նաև այն, որ պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի կազմած «Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)» ժողովածուից «դուրս է մնացել» 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը (վստահաբար կոմունիստական կուսակցական գաղափարախոսական թելադրանքներով): (Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) (պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ), Եր., 1972, 810 էջ):
7. «Յառաջ», Փարիզ, 1932, 2 դեկտեմբեր:
8. «Ասպարէզ», Ֆրէզնո, 1927, 27 մայիս:
9. «Յուսաբեր», Գահիրէ, 1929, 1 յունիսի:
10. «Արարատ», Պէյրուս, 1938, 11 յունուար:
11. «Արծազանք Փարիզի», Փարիզ, 1925, 31 մայիս:
12. Նույն տեղում, 1924, 13 դեկտեմբեր:

13. «Սուրիական մամուլ», Հալէպ, 1923, 27 մայիս:
14. Նույն տեղում, 1924, 3 փետրուար:
15. Նույն տեղում, 28 հոկտեմբեր:
16. «Երկիր», Ստանպօլ, 1922, 29 մայիս:
17. «Երիտասարդ Հայաստան», Չիկագո, 1920, 22 դեկտեմբեր:
18. Նույն տեղում, 1921, 27 մայիս:
19. Նույն տեղում, 1925, 28 նոյեմբեր:
20. «Պայքար», Պոսթըն, 1927, 10 փետրուարի:
21. Նույն տեղում, 1927, 12 փետրուարի:
22. Նույն տեղում, 1926, 2 դեկտեմբերի:
23. Նույն տեղում, 1928, 29 նոյեմբերի:
24. Նույն տեղում, 1933, 29 նոյեմբերի:
25. «Արեւ», Աղէքսանդրիա, 1924, 28 մայիսի:
26. Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Արշակ Չոպանյանի ֆոնդ, ց. 1, բ. 1, գ. 1815, թ. 1:
27. «Արարատ», Աթէնք, 1925, 20 մայիսի:
28. «Սեւան», Աթէնք, 1933, 25 մայիս:
29. Նույն տեղում, 29 նոյեմբեր:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

#### **Հայաստանի խորհրդայնացման օրվա հարցը սփյուռքահայ թերթերի քննարկումներում (1920-1930-ական թթ.) Խաչատուր Ստեփանյան**

Հայաստանի խորհրդայնացման օրը տարբեր կերպ է ընկալվել և մեկնաբանվել սփյուռքահայ թերթերի կողմից: Իրականում քննարկումների, ավելի ճիշտ բախումների հիմքում ավելի շատ ընկած էր այս կամ այն քաղաքական ուժին համակրելու կամ մերժելու հարցը և ոչ պատմական իրողությունների վերլուծությունը: Այս համատեքստում երբեմն էլ քննարկումների տիրույթում է եղել Հայաստանի անկախ կարգավիճակի խնդիրը:

### **РЕЗЮМЕ**

#### **Вопрос дня советизации Армении в обсуждениях газет армянской диаспоры (1920–1930-ые гг.) Хачатур Степанян**

**Ключевые слова:** *Армения, советизация, диаспора, Армревком, национальные партии.*

День советизации Армении воспринимался и комментировался газетами армянской диаспоры по-разному. В действительности, в основе дискуссии, точнее столкновения стоял вопрос симпатии или неприятия, а не анализ исторических событий. В этом контексте иногда обсуждалась проблема независимости Армении.

**SUMMARY**

**The problem of the day of the sovietization of Armenia in the discussions of Armenian diaspora's newspapers (1920-1930s)  
Khachatur Stepanyan**

**Key words:** *Armenia, sovietization, diaspora, Armrevcom, national parties.*

The Diaspora newspapers had different perceptions regarding Armenia's becoming a socialist country. In fact the discussion, or more exact arguments, were based upon the issue of sympathy or ignorance towards particular political party rather than the analysis of historic facts. In this context even the issue of Armenia's being independent was sometimes discussed.

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆԵՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ\***

**Էդգար Քալանթարյան**

**Բանալի բառեր՝** տեղեկատվական անվտանգություն, պետական տեղեկատվական կառավարում, ազգային անվտանգություն, կիբեռնոստրատեգիա, տեղեկատվական ռեսուրսներ, հաքերային հարձակում, կիբեռտարածք, տեղեկատվական հայեցակարգ, տեղեկատվություն:

Տեղեկատվական գործոնն արդի ժամանակաշրջանում որոշիչ դերակատարում է ձեռք բերել անհատի, հանրության, պետության ու ազգի գործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Տարաբնույթ տեղեկատվական պատերազմներն այսօր փոխադրվել են քաղաքական հարթություն և հանդիսանում են աշխարհաքաղաքականության, աշխարհատնտեսության և աշխարհագաղափարախոսության կարևորագույն գործիքներից են: Հայտնի է, որ պետության հզորության ավանդական ցուցանիշների հետ մեկտեղ, ինչ-պիսիք են՝ տարածքը, բնական ռեսուրսները, մարդկային կապիտալը, տնտեսության զարգացման մակարդակը, գիտական ներուժը, զինված ուժերի մարտունակությունն ու ռազմատեխնիկական հագեցվածությունը և այլն, գլոբալացումն առաջին պլան է մղում ուժի նոր գործոններ, մասնավորապես՝ տեղեկատվությանը, հաղորդակցությանը և տեղեկատվական տեխնոլոգիաներին: Վերջիններս սոցիալական գործունեության տարբեր ձևերի, այդ թվում նաև պետական կառավարման ռեսուրսներ են: Պետական կառավարման համակարգում տեղեկատվությունը հանդես է գալիս մի քանի հատկանիշներով. մի կողմից՝ այն անհրաժեշտ է հասարակական կյանքի տարբեր բնագավառների արդյունավետ կառավարման այդ թվում նաև պետական կառավարման համար, իսկ մյուս կողմից՝ տեղեկատվական ոլորտում գործունեությունը հանդիսանում է պետական կառավարման օբյեկտ: Ժամանակակից տեղեկատվական հասարակության մեջ սոցիալական և քաղաքական փոխհարաբերությունների կարգավորման համակարգում կարևորագույն տեղ է զբաղեցնում պետության տեղեկատվական անվտանգության (այսուհետ՝ ՏԱ) քաղաքականությունը: Պրա հետ կապված՝ ի հայտ է եկել ՏԱ ապահովման խնդիրը, որը կարող է դիտարկվել տարբեր ուղղություններով և վերլուծության տարբեր մակարդակներում՝ համաշխարհային քաղաքական համակարգից մինչև առանձին անհատ: Պետության շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են համազգային տեղեկատվական դաշտի ձևավորման, նրա ենթակառուցվածքների ներդաշնակ գործառնման և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Ինչպես ՏԱ ոլորտում, այնպես էլ մի շարք այլ ոլորտներում պետական իշխանության մարմինների հիմնական խնդիրները կապված են հասարակական շահերի պաշտպանության, իրավախատույնների կանխարգելման, պետական գաղտնիք պարունակող տեղեկատվության պաշտպանության հետ: Պետական կառավարման համակարգի ՏԱ սպառնալիքներն ամենավերջին սերնդի սպառնալիքներից են: Առավել

\* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

մեծ վտանգ է ներկայացնում կիբեռահանցավորության և կիբեռսպառնալիքների աճը, ինչը սպառնում է պետական մարմինների արդյունավետ գործունեությանը: ՏՄ խնդիրներն առանձնահատուկ կերպով կարևորվում են տնտեսապես զարգացած երկրներում՝ ԱՄՆ-ում, ԵՄ երկրներում և հատկապես Չինաստանում, որտեղ տեղեկատվական-հոգեբանական ոլորտի քաղաքական-ռազմական կարևորումն ավելի քան երկու հազարամյակի պատմություն ունի: Տարբեր երկրներում ընդունվում են օրենսդրական ակտեր, մշակվում և իրականացվում են պետական զանազան ծրագրեր, որոնք ուղղված են պետական կառավարման համակարգի ՏՄ արդյունավետ գործունեությանը, այս հիմնախնդրին մեծ ուշադրություն է դարձվում նաև ՀՀ պետական կառավարման համակարգում:

ՏՄ ապահովումը ՀՀ ՏՄ հայեցակարգով նախատեսված հիմնական ուղղություններից մեկն է: Այն ազգային անվտանգության հիմնական բաղադրիչներից մեկն է, որի դերը և նշանակությունը միշտ աճում են: Ժամանակակից հասարակության կյանքի ոչ մի ոլորտ չի կարող գործել առանց զարգացած տեղեկատվական ենթակառուցվածքների: Ազգային տեղեկատվական ռեսուրսներն այսօր պետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական նախադրյալներն են՝ պետության տնտեսական և ռազմական հզորության հիմնական աղբյուրներից մեկը: Ներկայումս ՀՀ-ն ունի զգալի քանակությամբ տեղեկատվական ռեսուրսներ, որոնք պարունակում են պետական, ծառայողական, առևտրային և այլ գաղտնիքներ:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ հիշատակում չկա տեղեկատվական անվտանգության ապահովման քաղաքականության մասին [1]: Փոխարենը ՀՀ - ՏՄ ապահովման քաղաքականության հիմնադրույթները ամրագրված են ՀՀ նախագահի կողմից 2009թ. Ազգային անվտանգության խորհրդի առաջարկությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ»-ում: ՀՀ ՏՄ-ն հանրապետության ազգային շահերի պաշտպանվածությունն է տեղեկատվական ոլորտում՝ փոխկապակցված անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ընդհանրության հետ: Պետության շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են համահայկական տեղեկատվական դաշտի ձևավորման, նրա ենթակառուցվածքների ներդաշնակ գործառման և զարգացման, սահմանադրական կարգի, ՀՀ ինքնիշխանության և տարածքային ամբողջականության անխախտելիության, քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության, օրինականության և իրավակարգի ապահովման նպատակով անձի և քաղաքացու տեղեկատվության ստացման և օգտագործման բնագավառում նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացման, ինչպես նաև հավասարազոր և փոխշահավետ միջազգային համագործակցության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը [2]:

Վերջին շրջանում հանրապետությունում իրականացվել են մի շարք միջոցառումներ ՀՀ տեղեկատվական քաղաքականության և ՏՄ ապահովման բարելավման ուղղությամբ: Սկսվել է ՏՄ իրավական նորմատիվային դաշտի ձևավորումը: Ընդունվել են այդ բնագավառին առնչվող «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Արխիվային գործի մասին», «Անհատական տվյալների մասին», «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքները:

ՀՀ ՏՄ ապահովման համակարգը երկրի ազգային անվտանգության ապահովման բաղկացուցիչ մասն է: Նրա կազմակերպական հիմքերի հիմնական բաղադրիչներն են՝ ՀՀ նախագահը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Կառավարությունը, ազգային անվտանգ-



## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՄԱՐՈՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

գույթան խորհուրդը, ՀՀ նախագահի և կառավարության կողմից ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովները, ՏԻՄ-ը, դատական իշխանության մարմինները, հասարակական միավորումները, ՀՀ օրենսդրությանը համապատասխան ՀՀ ՏԱ խնդիրների լուծմանը մասնակցող քաղաքացիները:

ՀՀ պետական կառավարման համակարգի ՏԱ ապահովումը կապված է մի շարք նպատակների և խնդիրների ձևակերպման և դրանց հետամուտ լինելու հետ, մասնավորապես. ՀՀ ՏԱ ապահովմանն ուղղված պետական մարմինների գործառության իրավական հիմքերի, նորմատիվային ակտերի ստեղծումն ու դրանց կիրառումը, ինչպես նաև ՀՀ ՏԱ ապահովման համար անհրաժեշտ իրավական ակտերի կատարելագործումը՝ տեղեկատվական գործունեության հետ առնչվող բոլոր ոլորտներում [3]:

ՀՀ պետական կառավարման համակարգի ՏԱ ապահովման տեղեկատվական-քաղաքական խնդիրները ներառում են ներքաղաքական և արտաքին-քաղաքական բնագավառները:

Ներքաղաքական բնագավառ.

– պետական իշխանության, անկախության և տարածքային ամբողջականության, ինչպես նաև ազգային միաբանության և սահմանադրական կարգի պաշտպանությունը,

– իշխանության և կառավարման մարմինների լրատվական ապահովվածության մակարդակի կազմակերպումը, կառավարման որոշումների իրականացումը,

– պետական մարմինների աշխատանքի մասին ապատեղեկատվություն և կառավարման մարմինների հեղինակագրկման կազմակերպում,

– պետական իշխանության մարմինների հանդեպ հասարակության վստահության բարձրացումը [4]:

Արտաքին-քաղաքական բնագավառներ.

– պետական իշխանության մարմինների և ազգային անվտանգության տեսանկյունից կարևորություն ունեցող կազմակերպությունների տեղեկատվական բազաների, միջգերատեսչական հաղորդակցման ուղիների ձևավորումը և պաշտպանությունն արտաքին միջամտությունից,

– արտասահմանում ՀՀ քաղաքականության մասին ապատեղեկատվության տարածման կանխարգելումը,

– ՀՀ պաշտոնական տեղեկատվության արդյունավետ տարածումն ու դրան խոչընդոտող արտաքին գործողությունների կանխումը,

– պետական գաղտնիքի պաշտպանությունը և այլն:

ՀՀ պետական կառավարման համակարգի ՏԱ ապահովման խնդիրներից է հանդիսանում նաև պետական պաշտոնյաների շրջանում ՏԱ օրենսդրության իմացության ցածր մակարդակը: Ստեղծված իրավիճակի պատճառներից մեկն այն է, որ կառավարման մարմիններում պատասխանատուները տեղեկատվություն չեն տրամադրում օրենքով իրենց վրա դրված պարտականությունների մասին, քանի որ չունեն բավարար չափով անհրաժեշտ գիտելիք տվյալ հիմնախնդրի վերաբերյալ: ՏԱ բնագավառում միջազգային չափանիշների և պրակտիկայի մասին պաշտոնյաների գիտելիքների մակարդակը համեմատաբար սահմանափակ է: Այս ամենը պայմանավորված է ՏԱ կիրառման անբավարար մակարդակի հետ: Այն արդյունավետ կիրառելու համար անհրաժեշտ է, որ հասարակությունն ակտիվ օգտվի նրանից և պաշտոնյաներն այն կիրառեն իրենց առօրյա աշխատանքում:

ՏԱ օրենսդրությունը կարելի է լիովին կիրառելի և արդյունավետ դարձնել ՏԱ օրենքում որոշ փոփոխություններ կատարելուց հետո միայն: Այդ օրենքի լիակատար

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Կիրառման համար կառավարությունը պետք է իրականացնի անհրաժեշտ միջոցառումներ: Յուրաքանչյուր մարմին պետք է ստեղծի «մեկ պատուհանի» սկզբունքով գործող էլեկտրոնային համակարգ և մշակի տվյալ մարմնի ներսում փաստաթղթերի էլեկտրոնային շրջանառության համակարգ: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է արագացնեն իրենց գործունեության մատչելիությունն ու հրապարակայնությունն ապահովող էլեկտրոնային ընթացակարգեր ստեղծելու գործընթացը, որոնք նախատեսված են SU օրենքով: Կենտրոնական և մարզային կառավարման յուրաքանչյուր մարմին պետք է ունենա փաստաթղթերի կառավարման համակարգ: Նախընտրելի է էլեկտրոնային համակարգը, սակայն դրա բացակայության դեպքում թղթային փաստաթղթերի հաշվառման համակարգերը նույնպես կարելի է համարել ընդունելի: Հզորացնել պետական բոլոր մարմինների տեխնիկական կարողությունները, և տեղեկատվության պատասխանատուներին և հանրության հետ կապերի վարչություններին ապահովել նրանց աշխատանքը կատարելու համար բավարար համակարգչային ռեսուրսներով: Առաջարկվում է մշակվել SU փորձի փոխանակման ընթացակարգեր ՀՀ իշխանության տարբերի ճյուղերի և մարմինների միջև, ինչպես նաև ՀՀ և այլ երկրների քաղաքացիական ծառայողների միջև, որոնք SU օրենսդրության կիրառման առավել հարուստ փորձ ունեն: Անհրաժեշտ է պետական պաշտոնյաների շրջանում SU հարցերով պարբերաբար դասընթացներ կազմակերպել: Դրանց ընթացքում պետք է ուսումնասիրվեն SU բնագավառում նոր միտումները, այդ թվում՝ էլեկտրոնային SU կառավարման: Էլեկտրոնային կառավարման համակարգը ոչ լիարժեք է: Պետական մարմիններում իշխում են գաղտնիության խորհրդային ավանդույթները, ինչը կարող է վտանգել հասարակության մեջ ի հայտ եկող ժողովրդավարական արժեքները: Պետք է կատարելագործել տվյալ ոլորտում կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով օրենսդրությունը, որը կարգավորում է հարաբերությունները տեղեկատվական ռեսուրսների ստեղծման և օգտագործման, տեղեկատվության փոխանակման կազմակերպման և ապահովման գործընթացում: Այն սահմանում է տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում լիազորություններ, որոնք նախատեսում են տեղեկատվական անվտանգության ապահովման համար նախատեսված պաշտոնյաների ու քաղաքացիների պահանջերին հետևելու պատասխանատվություն՝ մասնավորապես չարտոնված մուտքի և տեղեկատվության գողության, կեղծ տվյալների դիտավորյալ տարածման և պաշտպանված տվյալների տեխնիկական կապուղիներով արտահոսքի համար: Արդյունավետ տեղեկատվական անվտանգության համակարգի փուլային ստեղծման նպատակով պետք է կատարելագործել տեղեկատվական սպառնալիքների հայտնաբերման, գնահատման, կանխատեսման ձևերն ու մեթոդները, Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակման ընթացակարգերը, ապահովել տեղեկատվական հակազդման ծրագրային մասնագիտական հարցերի վերլուծություն և այլն: Պետք է ստեղծել SU ապահովման մասնագետների պատրաստման և վերապատրաստման համակարգ, միասնական տեղեկատվական-վերլուծական կենտրոններ, որոնք կզբաղվեն տվյալ ոլորտի հմնախնդիրների լուծմամբ:

Պետական մարմինների պաշտոնական կայքերի ղեկավարման և գործունեության ապահովման ժամանակ վեբջիներս ղեկավարվում են տեղեկատվական անվտանգության ու տեղեկատվության պահպանման ապահովման ոլորտի գործող օրենսդրությամբ և ազգային ստանդարտներով: Պաշտոնական կայքերը հրապարակվում են միայն ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի կողմից անվտանգության տեսակետից ստուգումներ իրականաց-

վելուց և թույլտվություն ստանալուց հետո: Այս ոլորտում կարևոր ձեռքբերում է 2013 թ. դեկտեմբերի 26-ին ընդունված «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները բավարարելու մասին ՀՀ Կառավարության որոշումը»[5]:

Այս հարցում անհրաժեշտ են պետության նախաձեռնությունն ու ընդգծված հոգածությունը: Իհարկե, ազգային անվտանգության մարմինները որոշակի քայլեր կատարում են տեղեկատվական հարձակումներից պաշտպանվելու, ոլորտում առկա տեղեկատվական վտանգները նվազագույնի հասցնելու ուղղությամբ, իշխանությունները խոսում են համացանցի կապի բոլորովին այլ, անհամեմատ բարձր որակի ապահովման մասին: Այս խնդիրները լուծելու համար նախ և առաջ պետք է համակարգված ներկայացնել ՀՀ տեղեկատվական դաշտում առկա արտաքին ու ներքին սպառնալիքները: ՀՀ SU հիմնախնդիրների քննարկումն ու դրանց հնարավոր լուծումների մշակումը խիստ արդիական է: SU սպառնալիքները համարվում են ամենավերջին սերնդի սպառնալիքներից մեկը: Պետական կառավարման համակարգում SU սպառնալիքները պայմանների և գործոնների ամբողջություն է, որն ուղղված է պետական իշխանության մարմինների գորունեության խափանմանը [6]:

Իրենց ընդհանուր ուղղվածությամբ պետության SU սպառնալիքները դասակարգվում են հետևյալ տիպերի. դրանք կարող են ուղղված լինել մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներին և ազատություններին հոգևոր կյանքի և տեղեկատվական գործունեության բնագավառում, նրանց անհատական, խմբային և հասարակական գիտակցության ձևավորմանը: Հաջորդը՝ երկրի պետական քաղաքականության տեղեկատվական ապահովմանը և հայրենական տեղեկատվական ռեսուրսների զարգացմանը, դրանց արտադրանքի ներքին շուկայի բավարարմանը և համաշխարհային շուկա արտահանմանը: Ինչպես նաև դրանք սպառնալիքներ են որոնք ուղղված են երկրի տեղեկատվական և հեռահաղորդակցային ռեսուրսների և համակարգերի անվտանգությանը [7]: Այս ամենը սահմանվում են ըստ ՀՀ ազգային SU ապահովման գերակայությունների. վտանգների և սպառնալիքների դերում կարող է հանդես գալ այն ամենը, ինչ դրսևորվում է որպես նշված գերակայություններին խոչընդոտող գործընթաց: Այդ իմաստով ՀՀ SU-ի համար սպառնալիք կարող են հանդիսանալ ինչպես անհատական, այնպես էլ հավաքական սուբյեկտները, արտաքին և ներքին գործոնները [8]:

Կարելի է առանձնացնել ՀՀ SU հետևյալ ներքին և արտաքին սպառնալիքներ: Ներքին սպառնալիքները կարող են պայմանավորված լինել SU գործող օրենսդրության խախտմամբ և դրա դեմ պայքարի իրավական ընթացակարգերի բացակայությամբ, տեղեկատվական ռեսուրսների ձևավորման և օգտագործման բնագավառում հարաբերությունների իրավական կարգավորման թերացմամբ, տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության բնագավառում պետական իշխանության մարմինների փոխգործունեության և համակարգման բացակայությամբ, պետական կառույցների ոչ իրավաչափ գործունեությամբ՝ ուղղված տեղեկատվական միջավայրում քաղաքացիների օրինական իրավունքների ոտնահարմանը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անբավարար ակտիվությամբ՝ իրենց գործունեության և ընդունված որոշումների մասին հասարակության իրազեկման գործում, ՀՀ SU ապահովման ուղղությամբ իրականացվող միջոցառումների անբավարար ֆինանսավորմամբ, քրեական տարրերի կողմից պետական-ծառայողական նշանակության տեղեկատվության հասանելիության ձեռքբերմամբ, ՀՀ SU ապահովման բնագավառում միասնական պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում պետական

իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության անբավարար համակարգմամբ, ՀՀ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների անբավարար ակտիվությամբ՝ իրենց գործունեության և ընդունված որոշումների մասին հասարակության իրազեկման գործում, տեղեկատվական ոլորտում հարաբերությունները կարգավորող իրավական հիմքերի, իրավակիրառական պրակտիկայի անբավարար վիճակով, քաղաքացիական հասարակության ինստիտուտների թերզարգացածությամբ, ՀՀ պետական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և այլ ծառայությունների տեղեկատվայնացման անբավարար մակարդակով, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների բաց տեղեկատվական ռեսուրսների, արխիվային բաց նյութերի, հանրային կարևորություն ունեցող այլ բաց տեղեկատվության նկատմամբ քաղաքացիների ազատ հասանելիության հակաօրինական սահմանափակմամբ ինչպես նաև ՀՀ տեղեկատվության ձևավորման, ձեռքբերման, այդ թվում՝ հեռուստահաղորդակցային համակարգերի կիրառմամբ, մենաշնորհների ձևավորմամբ և այլն [9]: Ներպետական մակարդակում ՀՀ SU սպառնալիքներից են նաև ազգային բնույթ չունեցող պետական քաղաքական որոշումները, կուսակցական գործունեությունը, ազգային միասնականությանը վնասող տարաբնույթ հանրային քննարկումները, որոնք պառակտում են հասարակությանը: Պետական քաղաքականության և ռեսուրսի ծառայեցումն առանձին անհատների և նեղ խմբերի շահերին հասարակության մեջ խոր հիասթափություն է առաջացրել ինչպես պետական իշխանության, այնպես էլ պետության ապագայի հանդեպ, որի հետևանքով ակնհայտ է հասարակության բարոյալքվածությունը [10]:

Ինչ վերաբերում է արտաքին սպառնալիքներին, ապա դրանք պայմանավորված են գլոբալ տեղեկատվական մոնիթորինգով, տեղեկատվության և նոր տեխնոլոգիաների տարածման բնագավառում այլ պետությունների թշնամական քաղաքականության, արտասահմանյան հատուկ և հետազոտական ծառայությունների գործունեությամբ, արտասահմանյան քաղաքական և տնտեսական կառույցների գործունեությամբ՝ ուղղված ՀՀ շահերի դեմ, միջազգային ատյաններում հակահայկական որոշումների ընդունման սատարմամբ, հայության դրական կերպարի շահարկմամբ, միջազգային տեղեկատվական աղբյուրներով հակահայկական տեղեկատվության տարածմամբ, արտաքին սուբյեկտների կողմից տեղեկատվական պատերազմների հայեցակարգերի մշակմամբ՝ ՀՀ տեղեկատվական ոլորտի վրա ներգործելու, տեղեկատվական և հեռահաղորդակցային համակարգերի բնականոն գործառույթը խախտելու, տեղեկատվական միջոցների պահպանումը խաթարելու, ՀՀ տեղեկատվության դաշտ չարտոնված կերպով մուտք գործելու նպատակով, ինչպես նաև այլ պետությունների կողմից տեղեկատվական նպատակաուղղված վնասարար գործունեության իրականացմամբ՝ ՀՀ - տեղեկատվական ոլորտի վրա վտանգավոր ազդեցություն ներգործելու, տեղեկատվության նկատմամբ չթույլատրված հասանելիություն ստանալու ձևեր ու մեթոդներ կիրառելու նպատակով:

Վերոնշյալ սպառնալիքների մեծ մասը ենթադրում է հակազդման անհրաժեշտություն առաջին հերթին պետական կառավարման մարմինների կողմից՝ տեղեկատվական անվտանգության համազգային համակարգի ստեղծման միջոցով, որի մեջ կընդգրկվեն պետությունը, հասարակությունը, հայկական սփյուռքն իր կազմակերպություններով: ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգումն ու կառավարումն առաջին հերթին պետք է հենված լինեն պետական ինստիտուտների արդյունավետ, ազգանպաստ և արհեստավարժ գործառնության վրա՝ ելնելով ազգա-

յին շահերից, պետական և հասարակական մարմինների ռազմավարական ծրագրերից ու նախաձեռնություններից: Հայաստանն օրեցօր ավելի խոցելի է դառնում կիբեռ-հարձակումների տեսանկյունից: Համացանցի մուտք գործելու առաջին իսկ տարիներից՝ սկսած 1998 թվականից, հայկական կայքերը մշտապես եղել են հարձակումների թիրախ: Անգամ կարծիք կա, թե հայկական կիբեռտիրույթում դրսից հարձակումների քանակը չի զիջում Հայաստանի և Ադրբեջանի սահմանագծում գրանցվող հրադադարի ռեժիմի խախտման դեպքերին: Իսկ վերջին տարիներին այդ հարձակումները սկսել են կազմակերպված բնույթ կրել, որոնք ըստ փորձագետների կառավարվում են Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից [11]:

Ընդհանուր առմամբ ՀՀ կիբեռտարածքի խոցելիության աճը պայմանավորված է մի քանի հանգամանքներով.

– ՀՀ-ում հեռահաղորդակցության ոլորտի բուռն զարգացումը, թվայնացումը հանգեցնում են երկրի տեղեկատվական ենթակառուցվածքների ներթափանցման կիբեռտիրույթ, ինչն իր հերթին ստեղծում է բազմաթիվ նոր խոցելի հանգույցներ: Այսօր հանրությանը հայտնի է միայն, որ ԱՄԾ-ն պաշտպանում է պետական կայքերը և ցանցերը, սակայն հայտնի չէ, թե ինչ վիճակում են գտնվում ոչ պետական հանրային կարևորություն ունեցող տիրույթները՝ էներգետիկան, ջրամատակարարումը և այլն:

– կիբեռտիրույթում ՀՀ-ի հիմնական հակառակորդ Ադրբեջանը (նաև Թուրքիան), զարգացնում է կիբեռհարձակողական ուժերը, որոնց որակը հետզհետե աճում է: Այս ոլորտը բավական փակ է, և հիմնական զարգացումների մասին շատ քիչ բան է հայտնի: Չնայած այս ամենին, օրինակ Ադրբեջանում գործում է CERT կիբեռպաշտպանության միավոր՝ կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը կից, որոնք քարոզչական գործառույթներ են իրականացնում կիբեռ տարածքում, այսպիսի կենտրոններ շատ կան հարևան երկրում:

– ՀՀ-ի կրիտիկական կարևորություն ունեցող հանգույցները դառնում են խոցելի նաև երրորդ կողմերի, ինչպես նաև ոչ պետական ահաբեկչական կամ քրեական խմբերի համար: Այսօր հարձակման միջոցներն այնքան կատարելագործված են, իսկ պաշտպանությունը նույնքան ծախսատար, որ կարող են լուրջ սպառնալիք դառնալ: ՀՀ հիմնական խոցելի հանգույցները և դրանց պաշտպանական հնարավորությունները հստակ գնահատված չեն:

Առանձին մեծ խնդիր է ՀՀ հասարակությունը ինքնին. համացանցից օգտվողների կտրուկ աճին զուգահեռ՝ վերջին տարիներին չապահովվեց բնակչության նվազագույն համակարգչային կրթվածությունը [12]: Մարդիկ իրազեկված չլինելով համացանցում հնարավոր վտանգներից, հեշտությամբ դառնում են կիբեռ հարձակումների զոհ: Դրա հետևանքով ՀՀ-ն հակավիրուսային լաբորատորիաների կողմից դիտարկվում է որպես ամենավտանգավոր երկրներից մեկը: Այսպես «Kaspersky Lab»-ի տվյալներով, Հայաստանն աշխարհում Ռուսաստանից և Օմանից հետո երրորդ երկիրն է որտեղ օգտվողների համակարգիչների վրա ամենամեծ հարձակումներն են գրանցվում [13]:

Կիբեռանվտանգության հիմնախնդիրները արդիական են և մեծ կարևորություն է ներկայացնում ՀՀ-ի համար՝ հաշվի առնելով մեր երկրի ենթակառուցվածքների աճող կախվածությունը տեղեկատվական տեխնոլոգիաներից: Պետական մարմինների կողմից կիրառվող որոշ տեղեկատվական համակարգեր, որոնցով մատուցվում են էլեկտրոնային տարբեր ծառայություններ, ունեն առավել կարևոր նշանակություն: Դրանցից են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, բնակչության պետական ռեգիստրի, սոցիալական ապահովության ոլորտի, անշարժ գույքի գրանցման, հարկային հաշվետվությունների և մի շարք այլ համակարգեր, որոնց խափանումը կարող է հանգեց-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

նել պետության կարևորագույն գործառնությունների իրականացման ժամանակավոր արգելափակման: Նման իրավիճակներում աշխարհում ակտիվ զարգացող կիրքեռհանցագործությունների սպառնալիքներն ու դրանց իրացման դրդապատճառներն իրական վտանգ են ներկայացնում ազգային անվտանգության տարբեր բաղադրիչների վրա:

Առաջին հաքերական հարձակումը 2000թ. հունվարի 25-ին էր. «The Green Revenge» և «HijaK Teams» անունների ներքո թաքնվող ադրբեջանցի հաքերները գրոհ էին ձեռնարկել մի քանի հայտնի հայկական կայքերի վրա: Այդ ժամանակ համացանցը ՀՀ-ում այդքան լայն տարածում չուներ, բայց արդեն գործում էին մի շարք հայկական կայքեր: Ի պատասխան՝ հայ հաքերները հատուցման ակցիա անցկացրին և ադրբեջանական ամենահայտնի կայքերի տերերին զրկեցին դրանք վերահսկելու հնարավորությունից: 2011 թ. հունվարի 29-ին հայկական կայքերի վրա կատարվեց հաքերների լայնածավալ հարձակում: Այդ օրը հաքերների «թեթև» ձեռքով վնասվեց հայկական am. տիրույթում գրանցված շուրջ 300 վեբ կայք, որոնք սպասարկվում էին հայկական «Սնարթ սիսթեմ» ընկերության կողմից: Այդ ժամանակ Հայաստանի պետական կառույցներից շտապեցին հայտնել, որ պետական գերատեսչություններին պատկանող կայքերից ոչ մեկն այդ ցուցակում չկա՝ հավելելով որ նման վտանգ պետական կայքերին չի սպառնում [14]: ՀՀ-ում SU խնդրի նկատմամբ պետական մոտեցում սկսեց ձևավորվել միայն 2009 թ-ից: Դրա պատճառը ցանցահեռնների հերթական հարձակումն էր՝ այս անգամ պետական մի շարք կայքերի վրա: Այս փաստը ցույց տվեց, որ ՀՀ-ում SU մակարդակը բարձրացնելու ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել այնպիսի բարեփոխումներ, որոնք հնարավորություն կտան թե՛ օրենսդրական, թե՛ ինստիտուցիոնալ առումով ունենալու միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգ: 2009թ. հունիսի 26-ին ՀՀ նախագահը հաստատեց ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը, իսկ տարվա վերջին ստեղծվեց աշխատանքային խումբ, որտեղ ընդգրկված մասնագետները պետք է մշակեին այս հարցում պետական քաղաքականության հիմնադրություններն ու նշեին դրանց իրականացման առաջնահերթ միջոցառումները: Մինչև 2009 թ-ը Հայաստանում պետական մարմինների կայքերը սպասարկել են մասնավոր ընկերությունները, իսկ 2009թ-ի հաքերային լայնածավալ հարձակումից հետո պետական կայքերի անվտանգության պաշտպանությունը փոխանցվեց Ազգային անվտանգության ծառայությանը (ԱԱԾ): ՀՀ-ում հստակ ԱԱԾ-ի կողմից կիրքեռպաշտպանության տակ են գտնվում միայն պետական կայքերը և ցանցերը (ընդ որում չեն պաշտպանվում ՏԻՄ մարմինները, ինչպես նաև Արցախի գրեթե բոլոր պետական մարմինները), խոցելի է նաև բանկային ոլորտը, անհատական տվյալներ կրող շտեմարանները, որոնց պաշտպանության վերաբերյալ չկան հստակ մոտեցումներ[15]:

ՀՀ Քրեական օրենսգրքում ամրագրված 24-րդ գլուխն ամբողջությամբ վերաբերում է համակարգչային տեղեկատվական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններին: Քրեական օրենսգրքի 251 հոդվածում նշված է, որ համակարգչային համակարգում կամ ցանցում անթույլատրելի կերպով մուտք գործելը, որի հետևանքով առաջացել է տեղեկատվության փոփոխություն, պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով: Նախատեսվող պատիժն ավելի է խստացվում, եթե այդ ամենի մեջ կա դիտավորություն: Սակայն որքան էլ 251 հոդվածով խստացվի պատժաչափը Հայաստանի տարածքում, այն չի նվազեցնի հակերների մոտ հայկական կիրքեռարածք դիտավորությամբ մուտք գործելու ցանկությունը, քանի դեռ նրանք ֆիզիկապես գործում են իրենց գործունեությանը սատարող մեկ այլ պետության տարածքում [16]: ՀՀ SU կարևորագույն խնդիրներից է միջոցառումների ան-

բավարար ֆինանսավորումը և: ՀՀ կիբեռանվտանգության ոլորտի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի, դոնոր կազմակերպությունների, մասավոր հաստիքի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին: Այսպես են ֆինանսավորվում նաև ՌԴ-ի, Վրաստանի, Ադրբեջանի ՏԱ միջոցառումները: Օրինակ՝ Ադրբեջանում ֆինանսավորումն իրականացվում է նաև Հեյդար Ալիևի անվան հիմնադրամի հաշվին: Ներկայումս ՀՀ անդամակցում է ՀԱՊԿ-ին, որը մտադիր է ստեղծել կիբեռանվտանգությամբ զբաղվող կենտրոն. բոլոր պետական կառույցները պետք է ակտիվորեն ներգրավվեն կիբեռանվտանգագործության դեմ պայքարի միջոցառումներում, ինչպես նաև աստիճանաբար բարձրացվի նմանատիպ միջոցառումների արդյունավետությունը: ՀՀ-ի պետական կառավարման համակարգում ՏԱ ապահովումը պետք է հիմնված լինի պետական կառույցների արդյունավետ, ազգանպաստ և արհեստավարժ գործառնության վրա՝ ելնելով ազգային շահերից, պետական և հասարակական մարմինների ռազմավարական ծրագրերից ու նախաձեռնություններից:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ ՀՀ պետական կառավարման համակարգում տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնախնդրին վերաբերող բավական գործողություններ արված են, սակայն դա դեռ բավարար հիմք չէ ենթադրելու որ չկան անելիքներ: Կարևորելով դրանց դերը՝ պետք է գիտակցել, որ այն ՀՀ ազգային անվտանգության հիմնական բաղադրիչներից մեկն է, որին պետք է ամենօրյա ուշադրություն:

## **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», Եր., 2007: [http://www.mfa.am/u\\_files/file/doctrine/Doctrinarm.pdf](http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinarm.pdf):
2. Աթոյան Վ. Ազգային անվտանգության հիմնախնդիրներ, Եր. Տնտեսագետ, 2014, էջ 91:
3. Հարությունյան Գ. Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Եր., 2009, էջ 16:
4. Հարությունյան Գ. ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Եր., Նորավանք ԳՀԿ, 2002, էջ 30:
5. ՀՀ Կառավարության որոշումը ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները բավարարելու մասին՝ [vardanants.am/u\\_files/file/naxagits\\_himn\\_tex\\_ampop\\_helix\\_comments.doc](http://vardanants.am/u_files/file/naxagits_himn_tex_ampop_helix_comments.doc):
6. Туронок С. Г. Информационные системы в государственном управлении, Журнал «Проблемный анализ и государственно-управленческое проектирование. М., 2009, стр. 72-75:
7. Աթոյան Վ. նշվ. աշխ., էջ 90-93:
8. Հարությունյան Գ. Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Եր., Նորավանք, 2009, էջ 18:
9. «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ» նշված կայք՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=52559>:
10. Աթանեսյան Ա. Սպառնալիքներ ՀՀ տեղեկատվական անվտանգությանը. Եռամակարդակ վերլուծություն, Եր., 2011, [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=5313](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=5313) :
11. Նանյան Գ. ՀՀ-ի ՏԱ-ն ինտերնետում, Եր., 2012, էջ 44:
12. Մարտիրոսյան Ս. Առաջարկներ ՀՀ կիբեռանվտանգության վերաբերյալ, [http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT\\_ID=12973](http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=12973):

13. Մարտիրոսյան Ս. Հայաստանը դառնում է կիբեռնոսթալտի երկիր, [http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT\\_ID=6267](http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=6267):
14. Նանյան Գ. Նշվ. աշխ., էջ 45:
15. Մարտիրոսյան Ս. Առաջարկներ ՀՀ կիբեռանվտանգության վերաբերյալ, նշված կայք:
16. «ՀՀ Զրեական օրենսգիրք», <http://www.parliament.am/legislation.php?sel=show-&ID=1349#9>:

## **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

### **Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները ՀՀ պետական կառավարման համակարգում Էդգար Քալանթարյան**

Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի տեղեկատվական անվտանգության (ՏԱ) ապահովումը Հայաստանի Հանրապետության ՏԱ հայեցակարգով նախատեսված հիմնական ուղղություններից մեկն է: Այն ազգային անվտանգության հիմնական բաղադրիչներից մեկն է, որի դերը և նշանակությունը միշտ աճում են: ՀՀ ՏԱ-ն երկրի ազգային շահերի պաշտպանվածությունն է տեղեկատվական ոլորտում՝ փոխկապակցված անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ընդհանրության հետ: Վերջին շրջանում հանրապետությունում իրականացվել են մի շարք միջոցառումներ ՀՀ տեղեկատվական քաղաքականության և ՏԱ ապահովման բարելավման ուղղությամբ: Սկսվել է ՏԱ իրավական նորմատիվային դաշտի ձևավորումը: Ընդունվել են այդ բնագավառին առնչվող տարբեր օրենքներ, որոշումներ, և, չնայած այս ամենին, ոլորտում կան դեռևս բազմաթիվ չօգտագործված հնարավորություններ:

## **РЕЗЮМЕ**

### **Об основных проблемах информационной безопасности в государственной системе Республики Армения Эдгар Калантарян**

***Ключевые слова:** информационная безопасность, информационное госуправление, национальная безопасность, кибератака, информационные ресурсы, хакерские атаки, киберпространство, информационная концепция, информация.*

Одним из главных направлений Концепции информационной безопасности (ИБ) Республики Армения (РА) является обеспечение информационной безопасности информационно-технологической инфраструктуры страны. Роль последней как составной национальной безопасности ежедневно растет. ИБ РА ассоциируется в целом с защитой национальных интересов в информационном пространстве, где переплетаются так же интересы частных индивидов, общества и государства. В недавнем времени были предприняты и осуществлены соответствующие меры в государственной политике по усилению и улучшению информационной безопасности в РА. Однако, несмотря на формирование правово-нормативного поля и принятые законы в этой области политики, можно утверждать, что возможности не исчерпаны.



**SUMMARY**

**On Some Basic Information Security Issues in the RA Government System  
Edgar Kalantaryan**

**Key words:** *information security, information governance, national security, cyber-attack, information resources, hacker attacks, cyberspace, concept of information, information*

One of the key priorities of the RA Information Security (IS) concept is to provide security for information technology of the country. The role of the latter, as a component of national security, is growing every day. The IS concept of the RA is aimed at protecting national interests within the information space, which unites the interests of individuals, society and the state. Recently appropriate measures have been applied to develop policies for improvement of the RA information security procedures. It can be argued, that despite the formation of the legal-regulatory framework and the adoption of this policy, not all the possibilities have been used

**ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ  
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ  
(պատմաքաղաքագիտական ակնարկ)\***

**Գարիկ Քեռյան**

**Բանալի բառեր՝** Գերմանիա, քաղաքական կուսակցություններ, կուսակցական համակարգ, սոցիալ-դեմոկրատներ, քրիստոնեա-դեմոկրատներ, ազատ դեմոկրատներ, Միություն90/կանաչներ, ծախսեր:

Գերմանիայի Ֆեդերատիվ (դաշնային) Հանրապետությունը բազմակուսակցական համակարգ ունեցող պետություն է, որտեղ առկա քաղաքական ազատությունները լիարժեք պայմաններ են ստեղծել քաղաքական կուսակցությունների կազմավորման ու գործունեության համար: Կուսակցությունները վճռորոշ նշանակություն ունեն Գերմանիայի ընդհանուր քաղաքական համակարգում: Պետական իշխանության օրենսդիր և գործադիր մարմինները կազմվում են կուսակցությունների կողմից և խորհրդարանական ընտրությունները կրում են խիստ կուսակցական բնույթ: Կառավարություն կազմելու հնարավորություն է ստանում այն կուսակցությունը կամ կուսակցությունների կոալիցիան, որը մեծամասնություն ունի խորհրդարանի ստորին պալատում՝ Բունդեսթագում: Կուսակցությունների գործունեությունը հստակ կերպով կարգավորվում և կանոնակարգվում է սահմանադրության համապատասխան հոդվածներով և հատուկ օրենքներով: Երկրում առկա է այն համընդհանուր դիրքորոշումը, որ առանց քաղաքական կուսակցությունների անհնար է ազգային-պետական քաղաքականության մշակումն ու ձևավորումը, ռեսուրսների հավաքագրումը և նրանց իրականացման համար որոշումների ընդունումը: Հետպատերազմյան տարիներին, երբ երկրում ընթանում էին նացիզմի ու ֆաշիզմի արմատական ոչնչացման ու ժողովրդավարացման հաստատուն գործընթացները, արևմտագերմանական քաղաքական մշակույթը ձևավորվեց այն հրամայականով, որ առանց կուսակցությունների անհնար է ապահովել լիարժեք ժողովրդավարություն: Այս գործընթացում, ժողովրդավարական վարչակարգի իրողություններին ու պահանջներին համապատասխան առաջին քայլը կուսակցությունների ինստիտուցիոնալացումն էր: Կուսակցությունների կարգավիճակը սահմանվեց ինչպես սահմանադրորեն, այնպես հատուկ օրենքով: 1967թ. հուլիսի 24-ի կուսակցությունների մասին օրենքով և սահմանադրության 21-րդ հոդվածով սահմանվեց, որ կուսակցությունները քաղաքացիների միավորումներն են, որոնք մշտապես կամ երկար ժամանակի ընթացքում ազդեցություն են գործում քաղաքական կամքի ձևավորման վրա՝ առանձին երկրամասերի կամ միությունների մասշտաբով, և որոնք մտադրություն ունեն օժանդակելու ժողովրդի ներկայացուցչության ապահովումը Բունդեսթագում, կամ Լանդթագում [1]: Սրանով հաստատագրվում էր կուսակցությունների՝ որպես պետական կառավարման մեխանիզմի բաղկացուցիչ մասի երկրի օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների կազմավորման գերակա գործառույթը:

Ճիշտ է, Գերմանիան բազմակուսակցական համակարգ ունեցող պետություն է, սակայն բավականին առանձնահատկություններով ու յուրօրինակ դրսևորումներով:

\* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

Այն կարծես լոդոն է բազմակուսակցության և երկկուսակցականության միջև, որից ելնելով, հաճախ գերմանական համակարգը քաղաքագետներն անվանում են երկուսուկես կուսակցական համակարգ: Նրա էությունը հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթանալ հետպատերազմյան Արևմտյան Չերմանիայի քաղաքական կուսակցությունների զարգացման դինամիկային և վերջին քսանհինգ տարիների ընթացքում համակարգի նոր դրսևորումներին երկրի միավորումից հետո:

Չերմանիայի ներքաղաքական կյանքը տնօրինում են **երկու ազդեցիկ քաղաքական կուսակցություններ**: **Չախ** թևում գտնվում է Չերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, **աջ** ուժերին առաջնորդում է երկու պահպանողական կուսակցությունների՝ Քրիստոնեա-դեմոկրատական միության և Քրիստոնեա-սոցիալական միության դաշինքը: Կարևոր դերակատարում ունեն կենտրոնի և ձախ թևի փոքր կուսակցությունները, որոնք որպես միջանկյալ քաղաքական ուժ հաճախ մասնակցում են կառավարող կոալիցիաներին: Դրանք են՝ Ազատ դեմոկրատական կուսակցությունը (ԱԴԿ, կամ Լ-ԱԴԿ՝ լիբերալ ազատ դեմոկրատներ), Միություն-90/Կանաչներ և Չախ կուսակցություն/Դեմոկրատական Սոցիալիզմի կուսակցություն դաշինքը (Չախ կուսակցություն/ԴՍԿ): Ինքնուրույն կառավարություն կազմելու կարողություն և հնարավորություն ունեն միայն Չերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (ԳՍԴԿ) և Քրիստոնեա-դեմոկրատական միության ու Քրիստոնեա-սոցիալական միության (ԲԴՄ/ԲՍՄ) դաշինքը: Գործում են նաև մի քանի այլ փոքր կուսակցություններ, որոնց քաղաքական կշիռը երկրում աննշան է:

**ԳՍԴԿ-ն** (գերմ. Sozialdemokratische Partei Deutschlands - SPD) Եվրոպայի ամենահին և խոշոր սոցիալիստական կուսակցությունն է: Հիմնադրվել է դեռևս 1869թ.: 19-րդ - դարի վերջերից մինչև այժմ, բացառությամբ ֆաշիստական վարչակարգի տարիների, սոցիալ-դեմոկրատները պառլամենտում միշտ ունեցել են իրենց հաստատուն և մեծ ֆրակցիան, որը նրանց հնարավորություն է տվել ազդելու երկրի ներքին և արտաքին քաղաքականության վրա: Պատերազմից հետո Արևելյան Չերմանիայիում նրանք միավորվեցին Կոմունիստական կուսակցության հետ՝ 1946թ. հիմք դնելով Չերմանիայի Սոցիալիստական Միասնական կուսակցությանը, որը Չերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում կառավարող կուսակցություն էր մինչև խորհրդամետ կոմունիստական վարչակարգերի տապալումը և երկրի միավորումը: Արևմտյան Չերմանիայի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները 1946թ. մայիսին միավորվեցին՝ վերածնելով ԳՍԴԿ-ն: Նոր կուսակցության կազմակերպման գործում մեծ ներդրում ունեցավ Շումպերը, որը ԳՍԴԿ-ի առաջնորդն էր մինչև 1952թ.:

1959թ. Բադ-Գոդեսբերգում տեղի ունեցած համագումարում ընդունվեց կուսակցության նոր ծրագիրը, որը կրում էր ռեֆորմիստական բնույթ: Այն նախատեսում էր լայնամասշտաբ միջոցառումներ դեմոկրատական կարգերի ամրապնդման և աշխատավորության սոցիալական պահանջների բավարարման ուղղությամբ[2]: Գլխավորելով ձախ ուժերին՝ ԳՍԴԿ-ն հսկայական ներդրում ունեցավ դեմոկրատիայի ամրապնդման և ռևանշիստական ու նեոֆաշիստական ուժերի դեմ պայքարում:

1940-ական թթ. վերջերին և 50-ական թթ. ԳՍԴԿ-ն հետևողականորեն պայքարում էր նաև Չերմանիայի վերառազմականացման դեմ: Սակայն ժամանակի ընթացքում այս հարցում կուսակցության քաղաքականությունը զգալիորեն փոխվեց: Չերմանիայի վերառազմականացման, սահմանների չճանաչման և երկրի միավորման կարգախոսներով հանդես եկող աջ կուսակցությունները կարողացան համոզիչ հաղթանակներ տանել 1953 և 1957թթ. բունդեսթագի ընտրություններում, որն ստիպեց սոցիալ-դեմոկրատներին փոխել կուրսը: Արդեն 1960թ. հունիսին բունդեսթագի սոցիալ-դեմոկրատա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

կան ֆրակցիան պաշտոնապես հայտարարեց կառավարության արտաքին քաղաքականությունը պաշտպանելու մասին: ՉՍԴԿ-ի ղեկավարությունը միևնույն ժամանակ սկսեց արտահայտվել հոգուտ վերառազմականացման: Կուսակցության 1960թ. Հաննովերյան համագումարը հավանություն տվեց բունդեսվերի արդյունավետ զինմանը նոր ռազմական տեխնիկայով: 1964թ. Կառլսրուեի համագումարը վերջնականապես հաստատեց նոր դիրքորոշումը և նույնիսկ անհրաժեշտ համարեց ՆԱՏՕ-ի միջուկային ուժերի տեղաբաշխմանը երկրում: Ավելի հստակ սոցիալ-դեմոկրատ գործիչներն սկսեցին արտահայտվել Պերմանիայի միավորման օգտին: Քաղաքական գծի փոփոխությունների տրամաբանական վախճանը դարձավ ՉՍԴԿ-ի մուտքը կառավարական կոալիցիա: 1966թ. ղեկտեմբերին կազմվեց «մեծ կոալիցիայի» կառավարություն ՔՂՄ/ՔՍՍ և ՉՍԴԿ-ի մասնակցությամբ, որի գլուխ կանգնեց Քիզինգերը: Սոցիալ-դեմոկրատների մասնակցությունը կոալիցիոն կառավարությանը առաջ բերեց արհմիությունների, սոցիալ-դեմոկրատական երիտասարդական կազմակերպությունների և բազմաթիվ շարքային անդամների դժգոհությունը և սուր քննադատությունը, որոնք պահանջում էին վարել ինքնուրույն քաղաքականություն: 1969թ. Բադ-Գոդեսբերգի և 1970թ. Սեարթրյուկկենի համագումարներում կոալիցիայի հակառակորդները ՉՍԴԿ-ի ղեկավարությունից համառորեն պահանջում էին գործել ինքնուրույն և արդյունավետ քաղաքական ծրագրով: Չնայած ներքին և արտաքին քաղաքականության հանգուցային հարցերի շուրջ եղած տարածայնություններին և ներկուսակցական պայքարի սրմանը՝ մասնակցությունը կոալիցիային և քաղաքական գծի փոփոխումն զգալիորեն ամրապնդեց ՉՍԴԿ-ի դիրքերը և ընդլայնեց նրա էլեկտորատը: Արդյունքը եղավ հաղթանակը 1969թ. ընտրություններում: Առաջին անգամ պատերազմից հետո ՔՂՄ/ՔՍՍ դաշինքը զրկվեց իշխանությունից: Ազատ դեմոկրատական կուսակցության հետ միասին ՉՍԴԿ-ն կազմեց կոալիցիոն կառավարություն: Ֆեդերալ կանցլեր դարձավ ՉՍԴԿ-ի նախագահ Վիլլի Բրանդտը: Սոցիալ-դեմոկրատների և ազատ դեմոկրատների կոալիցիոն կառավարությունը գործեց մինչև 1982թ.: Բրանդտից հետո այն գլխավորում էր ԱԴԿ-ի նախագահ Վ. Շեյլը[3]: Այս կառավարությունը վարում էր ավելի իրատեսական և մեղմ արտաքին քաղաքականություն: Բրանդտ-Շեյլի կառավարությունը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց լարվածության թուլացման և սառը պատերազմի քաղաքականության վերացման ուղղությամբ: 1970թ. պայմանագրեր կնքվեցին Լեհաստանի և ԽՍՀՄ-ի հետ, դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին արևելավերոպական սոցիալիստական պետությունների հետ:

Տարածայնություններն ԱԴԿ-ի հետ հանգեցրին կոալիցիայի փլուզմանը, որի հետևանքով 1982թ. նորից իշխանության եկավ աջ կուսակցությունների դաշինքը: Դրան հաջորդեց պարտությունը 1983թ. ընտրություններում: Այս իրադարձություններից հետո կուսակցությունը բավականին երկար ժամանակ մնաց ընդդիմության մեջ՝ պահպանելով մեծ պառլամենտական ֆրակցիան, ամուր դիրքերը երկրամասային կառավարություններից մի քանիսում և տեղական ինքնավարության մարմիններում: Պերմանիայի միավորումից հետո ՉՍԴԿ-ն ակտիվորեն մասնակցեց 1991թ. առաջին համագերմանական ընտրություններին՝ շահելով ծայրերի 33,5 տոկոսը, որը բավական չէր կառավարություն կազմելու համար, եթե նույնիսկ համաձայնություն կայացվեր ԱԴԿ-ի հետ:

ՉՍԴԿ-ն մշտական անդամություն ունեցող ամուր կուսակցություն է [4]: Մշտական անդամների թիվը անցնում է 900 հազարից: Կուսակցության բարձրագույն մարմինը համագումարն է, որն ընտրում է Կենտրոնական վարչություն: Ընթացիկ գործունեության ղեկավարությունը իրականացնում է Կենտրոնական վարչության անդամներից

ընտրված նախագահությունը: ՉՄԴ-ի առաջնորդը նախագահն է, որի ղեկավարությամբ են գործում Կենտրոնական վարչությունը և նախագահությունը: Հետպատերազմյան ժամանակաշրջանում և այնուհետև ՉՄԴ-ի նախագահներն են եղել Կ. Շումպետերը, Է. Օլենհաուերը, Կ. Բրանդտը, Պիոն Էնկհոմը, Օսկար Լաֆոնտենը: Վերջինս առաջնորդում էր կուսակցությունը առաջին համագերմանական ընտրությունների ժամանակ: ՉՄԴ-ն հրատարակում է «Ֆորվերտս» շաբաթաթերթը և «Նոյե Գեզելշաֆթ» տեսական ամսագիրը:

Ինչպես նշեցինք, աջ ուժերին ԳՖՀ-ում գլխավորում է **ՔՂՄ/ՔՄՄ** (գերմ. **CDU/CSU**) դաշինքը, որը հանդիսանում է երկրի երկու խոշոր բուրժուակրոնական կուսակցությունների միություն: **Քրիստոնեա-դեմոկրատական միությունը** (գերմ. *Christlich Demokratische Union Deutschlands*) հիմնադրվել է 1950թ-ին ամերիկյան, անգլիական և ֆրանսիական օկուպացիոն զուտիներում 1945թ-ից իրենց գործունեությունը վերսկսած քրիստոնեա-դեմոկրատական կազմակերպությունների միավորման հետևանքով: ՔՂՄ-ն սերտորեն կապված է դրամատերերի հզոր խմբավորումների և կաթոլիկ բարձրաստիճան հոգևորականության հետ: Կուսակցության սոցիալական հենարանի մեջ մեծ թիվ են կազմում ձեռնարկատերերը, պետական ծառայողները, հարուստ գյուղացիները: ԳՖՀ-ի հռչակման տարուց (1949) մինչև այժմ ՔՂՄ-ն հանդիսանում է առաջատար կուսակցություն է և գործում է ՔՄՄ-ի հետ դաշնակցած: ՔՂՄ-ի քաղաքական գծի մշակման և կուսակցության ամրապնդման գործում հսկայական ներդրում է ունեցել Կոնրադ Ադենաուերը, որը կուսակցության նախագահն էր 1950-1966թթ.[5]:

**Քրիստոնեա-սոցիալական միությունը** (գերմ. *Christlich-Soziale Union in Bayern*) իր սոցիալ-քաղաքական բնույթով նույնպես բուրժուակրոնական կուսակցություն է: Հիմնադրվել է 1945թ. և գործում է միայն Բավարիայում: Համագերմանական քաղաքական կյանքին մասնակցում է միայն ՔՂՄ-ի հետ դաշնակցած և նրա հետ միասին կազմում է միասնական ֆրակցիա բունդեսթագում: Միության մեջ ՔՄՄ-ն լիովին պահպանում է իր կազմակերպական ինքնուրույնությունը: Կուսակցության ղեկավար մարմինները համաձայնեցնում են նրա գործունեությունը ՔՂՄ-ի հետ, իսկ ներկուսակցական հարցերը լուծում էին լիովին անկախ: ՔՄՄ-ի դիրքերը շատ ամուր են ԳՖՀ-ի ամենամեծ երկրամասերից Բավարիայում, որտեղ նա միշտ իր ձեռքում է պահում երկրամասային կառավարությունը և մեծամասնություն ունի լանդտագում (երկրամասային պառլամենտ): ՔՄՄ-ի քաղաքական դոկտրինաներն արտահայտում են առավել աջ, պահպանողական շրջանների դիրքորոշումները ներքին և արտաքին քաղաքականության հարցերում: Նրանցում առկա են նաև նեոնացիզմի երանգներ: Կուսակցության քաղաքական գծի մշակման և իրականացման գործում մեծ ներդրում ունեցավ Շտրաուսը, որը բավականին երկար ժամանակ ՔՄՄ-ի նախագահն էր: ՔՄՄ-ն փոքրաթիվ կուսակցություն է: Բավարիայում գործող նրա կազմակերպությունների անդամների թիվը չի անցնում 200 հազարից[6]:

1949թ-ից հետո, բացառությամբ 1969-83 թթ. և 1998-2005 թթ., ՔՂՄ/ՔՄՄ-ն միշտ եղել է կառավարող դաշինք: Մինչ 80-ական թթ. վերջերը նրա ներքին և արտաքին քաղաքականության հիմնական նպատակը և գերխնդիրը եղել է Գերմանիայի միավորումը: Այդ նպատակով ՔՂՄ/ՔՄՄ-ի կազմած կառավարությունները վարել են ՆԱՏՕ-ի երկրների հետ սերտ ռազմական և քաղաքական համագործակցության քաղաքականություն հակադրվելով ԽՍՀՄ-ին և արևելաեվրոպական սոցիալիստական պետություններին: Ընդդիմության մեջ գտնվելու տարիներին ՔՂՄ/ՔՄՄ-ի ղեկավարությունը խիստ կերպով քննադատում էր սոցիալ-դեմոկրատական կառավարության արտաքին քաղաքականությունը (ԳՖՀ-ի «նոր արևելյան քաղաքականություն»), որը, պայմանագ-

րեր կնքելով արևելյան հարևանների հետ, ճանաչել էր հետպատերազմյան սահմանները: Իհարկե որպես քարոզչության ամենաարդյունավետ միջոց տվյալ իրադրության մեջ նրանք խաղում էին նաև ժողովրդի ազգային զգացմունքների հետ: Գերմանիայի միավորման գաղափարին հետևողականորեն հետամուտ լինելով՝ երկկուսակցական դաշինքն զգալիորեն ընդլայնեց իր էլեկտորատը և 1983թ. տեղի ունեցած պառլամենտական ընտրություններում նվաճեց ձայների 48,8 տոկոսը և 244 տեղ բունդեսթագում (ՔԴՄ-191, ՔՍՄ-53)[7]: Սակայն կառավարություն կազմելու համար անհրաժեշտ եղավ դաշինք կնքել նաև ԱԴԿ-ի հետ, որից հետո ՔԴԿ-ի նախագահ Հելմուտ Քոլը կազմեց կառավարություն: Կանցլեր Քոլի կառավարության օրոք էր, որ առանց ցնցումների և բարդությունների երկու գերմանական պետությունները աստիճանաբար և ներդաշնակ կերպով միավորվեցին 1989-1990թթ. ընթացքում: Միավորման հետևանքով ՔԴՄ/ՔՍՄ-ի դիրքերն ավելի ամրապնդվեցին, որովհետև այն նշանակում էր միության քաղաքական գծի լիակատար հաղթանակ: 1990թ. դեկտեմբերին տեղի ունեցած առաջին համազերմանական ընտրություններում ՔԴՄ/ՔՍՄ-ն շահեց ձայների 43,8 տոկոսը և նորից դաշնակցելով ԱԴԿ-ի հետ՝ կազմեց կառավարություն[8]: Հելմուտ Քոլի գլխավորած դաշինքը համոզիչ հաղթանակ տարավ նաև հաջորդ 1994թ. ընտրություններում:

1990-ական թթ-ից պահպանողական կուսակցությունների ՔԴՄ/ՔՍՄ դաշինքի միասնական նախընտրական ծրագիրը հիմնականում նվիրված էր տնտեսական քաղաքականությանը: Առաջնային պահանջը՝ իջեցնել պետական քվոտաները, բարձրացնել սոցիալական ապահովության համար գանձվող հարկերն ու վճարները, կազմակերպել սոցիալական գերատեսչությունների և աշխատանքի տեղավորման կոմիտեների համագործակցությունը, կատարելագործել ընտանիքներին և երեխաներին տրվող նյութական օժանդակության համակարգը ներդնելով միասնական «ընտանեկան նպաստ»-ը և այլն: Արտաքին քաղաքականության բնագավառում դաշինքը հետևողականորեն հանդես է գալիս եվրոպական միասնության, երկկողմ և բազմակողմ ինտեգրացիոն և միջազգային կառույցներին Գերմանիայի ակտիվ մասնակցության օգտին: Դաշինքը հետևողական է նաև զինված ուժերի՝ բունդեսպլերի ամրապնդման քաղաքականության մեջ և առաջարկում է անհրաժեշտության դեպքում այն օգտագործել նաև ներքին գործերում:

Ինչպես նշեցինք, ԳՖՀ-ում որպես միջանկյալ քաղաքական ուժ հանդես են գալիս փոքր կուսակցությունները: Նշանակալից է եղել կենտրոնամետ դիրքորոշում ունեցող **Ազատ դեմոկրատական կուսակցության** (կրել է նաև Լիբերալներ-Ազատ դեմոկրատական կուսակցություն անունը, գերմ. FDP - Freie Demokratische Partei) դերակատարումը երկրի քաղաքական կյանքում: Իր սոցիալ-քաղաքական բնույթով ԱԴԿ-ն լիբերալ կուսակցություն է և կազմավորվել է 1948թ. նույն անունը կրող մի քանի երկրամասային կազմակերպությունների միավորման հետևանքով: Սոցիալական հենարանը կազմում են մանր և միջին ձեռնարկատերերը, լիբերալ տրամադրություններ ունեցող պետական պաշտոնյաները, մտավորականները, քաղաքի և գյուղի մանր սեփականատերերը: Ներքին քաղաքականության բնագավառում ազատ դեմոկրատները ավելի մեղմ դիրքորոշում են ունեցել քան քրիստոնեա-դեմոկրատները, որովհետև պաշտպանել են արևմուտքի և արևելքի համագործակցությունը՝ չնայած առաջնահերթ խնդիրը նրանք նույնպես համարել են Գերմանիայի միավորումը:

ԱԴԿ-ն փոքր կուսակցություն է: Ընդհուպ մինչև 1990-ական թթ. վերջերը պառլամենտական ընտրություններում այն սովորաբար հավաքում էր առավելագույնը ընտրողների ձայների 10 տոկոսը: Սակայն հետպատերազմյան տասնամյակներին նրա քաղաքական կշիռը շատ ավելի մեծ էր ընտրությունների ընթացքում ձեռք բերած

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

արդյունքների համեմատությամբ: Դա կապված է այն բանի հետ, որ երկու հզոր կուսակցություններին՝ ՊՍԴԿ-ին և ԲԴՄ/ԲՍՄ դաշինքին ոչ մի կերպ չէր հաջողվում բունդեսթագում ձեռք բերել բացարձակ մեծամասնություն, որի հետևանքով իշխանության գալը միշտ կապված էր լինում ԱԴԿ-ի հետ դաշնակցությունից: Ազատ դեմոկրատների պառլամենտական ֆրակցիայի դիրքորոշումը հետպատերազմյան Գերմանիայում միշտ վճռորոշ նշանակություն է ունեցել կառավարությունների կազմման համար: Սրանով է պայմանավորված այն իրողությունը, որ անկախ ընտրությունների արդյունքներից ԱԴԿ-ն միշտ մնում էր իշխանության կուսակցություն՝ կոալիցիայի մեջ մտնելով մերթ սոցիալ-դեմոկրատների, մերթ աջ կուսակցությունների հետ: 1969-1982թթ. ԱԴԿ-ն մասնակցում էր կոալիցիոն կառավարությանը ՊՍԴԿ-ի հետ դաշնակցած: Սակայն 1982թ. աշնանը աջ թևի ձևման տակ նա խզեց դաշինքը ՊՍԴԿ-ի հետ, որը ձգվում էր 13 տարի (Բրանդտ-Շեյլի կառավարություն): 1983թ. ընտրություններում ԱԴԿ-ն չափեց ձայների 7 տոկոսը և բունդեսթագում ձեռք բերեց 34 տեղ: Չնայած այս ցածր արդյունքներին՝ դաշինքը ԲԴՄ/ԲՍՄ-ի հետ նրան հնարավորություն տվեց նորից մնալու կառավարության մեջ և ստանալու արտաքին գործերի, տնտեսության և արդարադատության նախարարների պորտֆելները: 1990թ. առաջին համազերմանական ընտրություններում ԱԴԿ-ի ցուցանիշները ավելի բարձր էին: Կուսակցության նախագահ Օտտո Գրաֆ Լամբոդորֆի ղեկավարությամբ ազատ-դեմոկրատները ակտիվորեն մասնակցեցին ընտրական մրցապայքարին՝ չափելով ձայների 11 տոկոսը[9]: Գերմանիայի միավորումից հետո ԱԴԿ-ի մեջ մտան արևելա-գերմանական երկու կուսակցություններ՝ Լիբերալ-դեմոկրատական և Նացիոնալ-դեմոկրատական կուսակցությունները: Շուրջ 30 տարի՝ 1969-1998 թթ., շնորհիվ կոալիցիոն գործընկերոջ փոփոխության, ազատ-դեմոկրատները մասնակցում էին կառավարությունների կազմմանը: 1998 թ-ից հետո նրանք դուրս մնացին Շրոդերի «կարմիր-կանաչ» երկու կառավարություններից: 2005թ. վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններում ԱԴԿ-ի ցուցանիշը՝ 11 տոկոս էր, 2009 թ.՝ 14,6: Այս ցուցանիշները կարելի էր որակել որպես հաղթանակ, եթե չձևավորվեին «մեծ կառավարական կոալիցիաները» առանց ազատ դեմոկրատների: Այդ կոալիցիաները ճակատագրական դարձան կուսակցության համար, որն ավարտվեց «էլեկտորալ աղետով»: 2013թ. բունդեսթագի ընտրություններում ԱԴԿ-ն ստացավ ձայների ընդամենը 4,8 տոկոսը և առաջին անգամ դուրս մնաց խորհրդարանից: Իհարկե, ինչ որ չափով այդ աղետը կանխատեսելի էր, որովհետև 2010 թ-ից սկսած ԱԴԿ-ն կորցնում էր իր աջակցությունը ընտրողների մոտ: 2014թ. դրությամբ կուսակցությունը զրկվել էր գերմանական հողերի լանդթագներում ունեցած բոլոր տեղերից:

ԱԴԿ-ն մեծաթիվ կուսակցություն չէ: Նրա անդամների թիվը տատանվում է 70-90 հազարի սահմաններում: Համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում կուսակցության ղեկավար մարմիններն են ֆեդերալ վարչությունը և ֆեդերալ կոմիտեն: Կուսակցության առաջնորդը ԱԴԿ-ի նախագահն է [10]: 2009 թ. մահացավ կուսակցության երկարամյա առաջնորդ Օտտո Լամբոդորֆը, որը մի քանի տասնամյակ շատ կարևոր դերակատարում ուներ երկրի քաղաքական դաշտում: Կուսակցության նախընտրական ծրագիրը հենվում է ազատական գաղափարների վրա, որի հիմնական նպատակը պետական միջամտության կրճատումն է տնտեսության մեջ: Ընտրագանգվածի մեջ շատ ակտիվ են ձեռնարկատերերն ու խոշոր ընկերությունների մենեջերները: <<ELDE>> թերթը կուսակցության պաշտոնական մարմինն է:

Փոքր կուսակցություններից հաջորդը **Միություն90/կանաչներ** (գերմ. **Bündnis 90/die Grünen**) բնապահպանական կուսակցությունն է, որին պարզապես անվանում

են կանաչներ: Կուսակցությունը ձևավորվել է ակրմտագերմանական հողերում բազմաթիվ էկոլոգիական և քաղաքացիական կազմակերպությունների միավորմամբ: 1983թ. կանաչներն առաջին անգամ ներկայացվեցին բունդեսթագում, իսկ 1998թ. ֆեդերալ ընտրություններից հետո առաջին անգամ մտան կոալիցիոն կառավարության մեջ (Շրյոդերի «կարմիր-կանաչ» կոալիցիան): Կանաչների նախընտրական ծրագրերը առաջադրում են շրջակա միջավայրի պահպանության պահանջներ. հրաժարում ատոմային էներգետիկայից, կլիմայի գլոբալ պաշտպանություն, բնության պահպանության նոր օրենք, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսության զարգացում, էկոլոգիական հարկի կիրառում, մաքուր էներգետիկայի ստեղծում էներգիայի վերականգնվող ռեսուրսներով, գենետիկորեն փոխված սննդամթերքի արտադրության արգելում և այլն: Արտաքին քաղաքականության բնագավառում առաջադրում են արդար գլոբալիզացիայի հիմնադրույթ: ԱՂԿ-ի թուլացումն զգալիորեն նպաստել է կանաչների ազդեցության ընդլայնմանը: Առավել հայտնի կուսակցական առաջնորդներից է նախկին արտգործնախարար Յոշկա Ֆիշերը:

ԱՂԿ-ի և կանաչների հետ միասին փոքր կուսակցություն է նաև Չախ կուսակցություն/Դեմոկրատական Սոցիալիզմի կուսակցություն դաշինքը (**Չախ կուսակցություն/ԴՍԿ**, գերմ. - **DIE LINKE.**): Ինչպես երևում է այս քաղաքական ուժի մտնում են երկու բաղկացուցիչներ: Դեմոկրատական սոցիալիզմի կուսակցությունը նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության կառավարող կուսակցության՝ Գերմանիայի սոցիալիստական միասնական կուսակցության բեկորներից 1989 թ. կազմավորված կուսակցություն է, որի հիմնադիր ղեկավարը Գրեգոր Գիզին էր: 1990 թ. միավորված Գերմանիայի խորհրդարանական ընտրություններում ԴՍԿ-ն չկարողացավ հաղթահարել 5 տոկոսի ընտրաշեմը և Գիզին ստիպված էր հրաժարական տալու: Կուսակցության նախագահ ընտրվեց Լոտար Բիսկին, իսկ 2000 թ-ին Գաբի Ցիմմերմանը: 1998 և 2005 թթ. խորհրդարանական ընտրություններում կուսակցության օգտին տրված ձայները գերազանցեցին հինգ տոկոսը[11]: Համագերմանական ընտրությունները ցույց են տվել, որ այն բավականին համակիրներ ունի արևելագերմանական երկրամասերում, Սաարում, Բրանդենբուրգում, Սաքսոնիա-Անհալտում:

Չախ կուսակցությունը կազմավորվել էր 2004 թ. ԳՍԴԿ-ից անջատված ձախ թևից: Վերջիններս քննադատում էին ֆեդերալ կանցլեր Շրյոդերի կառավարության քաղաքականությունը և ԳՍԴԿ նախագահ Օսկար Լաֆոնտենի գլխավորությամբ անջատվեցին (սկզբում կրում էին Աշխատանք և սոցիալական արդարություն-Ընտրական այլընտրանք անունը) ու նախկին ԳԴՀ-ի կոմունիստների մի հատվածի հետ միավորվելով՝ հիմնեցին Չախ կուսակցությունը:

2007 թ. տեղի ունեցավ ԴՍԿ-ի միավորումը Չախ կուսակցության հետ և Չախ կուսակցություն/ԴՍԿ դաշինքի մուտքը քաղաքական դաշտ: Դաշինքի ղեկավարներ դարձան Լաֆոնտենը և Լոտար Բիսկին: Ավելի հաճախ դաշինքը կրում է պարզապես «Չախեր» անունը: «Չախեր»-ը զգալի առաջընթաց ունեցավ 2009 և 2013 թթ. ֆեդերալ ընտրություններում. համապատասխանաբար 76 և 64 պատգամավոր բունդեսթագում: «Չախեր»-ի քաղաքական այլատֆորմի և նախընտրական ծրագրերի հիմնական թեմաներն են աշխատանքի շուկան և սոցիալական արդարությունը[12]: Արտաքին քաղաքական հարցադրումները բավականին արմատական են. ՆԱՏՕ-ի ընդարձակման կասեցում, ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի դերի բարձրացում և այլն:

Գերմանիայում գործում են նաև մի քանի փոքր կուսակցություններ, որոնց դերը երկրի քաղաքական կյանքում շատ աննշան է այնքանով, որքանով որ նրանք ի վիճակի չեն ազդելու կառավարությունների ձևավորման վրա:



**Կուսակցական կոալիցիաները 1998-2014 թթ.**

Աջ պահպանողական կուսակցությունների քաղաքական տիրապետությունը Պերմանիայի միավորումից հետո տևեց մինչև 1998 թ.: Այդ տարի հոկտեմբերին ՊՄԴԿ-ն, որի կուսակցական ցուցակը գլխավորում էր կուսակցության նոր առաջնորդ Պերհարդ Շրյոդերը, գործազրկության կրճատման, տնտեսության արդիականացման, գործարարության օժանդակման, սոցիալական ապահովության համակարգի պահպանման կարգախոսներով ստացավ ձայների 40,9 տոկոսը և միավորված Պերմանիայում առաջին անհամ հաղթանակ տարավ խորհրդարանական ընտրություններում: Կանաչների հետ դաշնակցելով՝ սոցիալ-դեմոկրատները կազմեցին այսպես կոչված «կարմիր-կանաչ» կոալիցիոն կառավարությունը: Հաղթանակն ուղեկցվեց նաև պառակտմամբ: Երկրի տնտեսության կառավարման և ձգնաժամի հաղթահարման գործում Շրյոդերը ստիպված էր ընտրելու սոցիալական ծախսերի կրճատում նախատեսող լիբերալ տնտեսագետների կողմից առաջարկված հայեցակարգը: Այնինչ ծախ սոցիալ-դեմոկրատները Լաֆոնտենի գլխավորությամբ առաջարկում էին ծանրացնել հասարակության առավել ունևոր հատվածների վրա դրված հարկերը:

Ֆեդերալ-կանցլեր Շրյոդերի հետ տարածայնություններ ունենալով կառավարության քաղաքական կուրսի շուրջ՝ ՊՄԴԿ-ի նախագահ Օսկար Լաֆոնտենը, որը ֆինանսների և էկոնոմիկայի նախարարն էր, 1999թ. հրաժարական տվեց և հեռացավ կուսակցությունից: ՊՄԴԿ-ի նախագահությունը ևս անցավ Շրյոդերին: Չախսերի հեռանալուց հետո կառավարությունը սկսեց իրագործել իր ծրագիրը, սակայն տնտեսության մեջ բեկում մտցնել չհաջողվեց, իսկ սոցիալական ծախսերի կրճատումները զգեցին կուսակցության հեղինակությունը և 2002թ. ընտրություններում ՊՄԴԿ-ն քիչ էր մնում պարտություն կրել: Դրությունը փրկեց Շրյոդերի կոշտ դիրքորոշումը Իրաքում ամերիկյան ներխուժման դեմ, կառավարության լայնածավալ օգնությունը ջրհեղեղից տուժված արևելա-գերմանական հողերի բնակչությանը, որը հնարավորություն տվեց շահելու ձայների 38,5 տոկոսը և աննշան առավելության հասնել ՔՂՄ/ՔՍՄ-ի հանդեպ (մոտ 10 պատգամավորական տեղ): Դաշնակցելով Միություն-90/Կանաչներ բնապահպանական կուսակցության հետ՝ Շրյոդերը կազմեց երկրորդ «կարմիր-կանաչ» կառավարությունը: 2003 թ. մարտից Շրյոդերը ընդունեց կառավարության գործունեության նոր ծրագիր՝ «Ծրագիր 2010» (Agenda 2010): Սոցիալական ծախսերի խնայողության հետ մեկտեղ նոր աշխատատեղերի ստեղծման համար այն նախատեսում էր նաև աշխատանքային օրենսդրության ազատականացում: Նոր ծրագրի իրականացման փորձերը առանձնակի մեծ արդյունքներ չտվեցին: 2004թ. Եվրոխորհրդարանի ընտրություններում ՊՄԴԿ-ի արդյունքները շատ ցածր էին, որին հաջորդեց պարտությունը Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիայի լանդտագի ընտրություններում: Նման իրադրության մեջ իշխանությունները որոշեցին նախաձեռնել վաղաժամկետ համազգային ընտրություններ: 2005թ. մայիսի 22-ին կայացած ընտրությունների արդյունքով ՊՄԴԿ-ն և ՔՂՄ/ՔՍՄ դաշինքը հավաքեցին հավասար քանակով ձայներ, որը բավարար չէր ոչ միակուսակցական կառավարության, ոչ էլ փոքր կուսակցություններից որևիցե մեկի հետ կոալիցիոն կառավարություն կազմելու համար: Երկարատև քաղաքական բանակցություններից հետո երկու առաջատար կուսակցությունները կազմեցին **մեծ կոալիցիոն կառավարություն** ՔԴԿ-ի առաջնորդ **Անգելա Մերկելի** գլխավորությամբ: Սոցիալ-դեմոկրատները, զիջելով վարչապետի պաշտոնը, կառավարության մեջ ստացան 8 նախարարական պորտֆել (արտաքին գործերի, ֆինանսների, արդարադատության, աշխատանքի, շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, տրանսպորտի, տնտեսական համագործակցության և զարգացման): Շրյոդերը հեռա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ցավ ոչ միայն կառավարությունից, այլև կուսակցության նախագահի պաշտոնից:

Անգելա Մերկելի «կառավարական մեծ կոալիցիայի» մեջ կրտսեր գործընկերոջ կարգավիճակը չամրապնդեց ՉՍԴԿ-ի դիրքերը: 2009 թ. բունդեսթագի ընտրություններում սոցիալ դեմոկրատները պարտություն կրեցին՝ ստանալով ընտրողների ձայների 23 տոկոսը: Մեծ կոալիցիայի փոխարեն ՔԴՄ/ՔՍՄ դաշինքը կոալիցիոն կառավարություն կազմեց Ազատ Դեմոկրատական կուսակցության հետ: Փոխվեց նաև ՉՍԴԿ ղեկավարությունը: Շրջակա միջավայրի պահպանության նախարար Ջիզմար Գաբրիելը ընտրվեց կուսակցության նախագահ, ղեկավար գործիչներից Անդրեա Նալեսը՝ գլխավոր քարտուղար:

ԳՖՀ Բունդեսթագի 2013թ. սեպտեմբերի 22-ին կայացած ընտրություններում սոցիալ-դեմոկրատները որոշ չափով բարելավեցին իրենց դիրքերը, որն ստիպեց Մերկելին նորից գնալ բանակցությունների: Ընտրություններից հետո տեղի ունեցան սկզբում նախնական, իսկ հետո արդեն հիմնական բանակցությունները ՉՍԴԿ-ի հետ ՔԴՄ/ՔՍՄ-ի նոր «մեծ կոալիցիայի» կազմման համար: Կոալիցիոն պայմանագիրը մինչև ստորագրվելը դրվեց ներկուսակցական հանրաքվեի, որի ընթացքում ՉՍԴԿ-ի յուրաքանչյուր անդամ կարող էր իր դրական կամ բացասական վերաբերմունքը արտահայտել դրա նկատմամբ: Ջիզմար Գաբրիելը կոալիցիոն կառավարության մեջ ստացավ փոխկանցելի և էկոնոմիկայի ու էներգետիկայի նախարարի պորտֆելը, իսկ կուսակցության նախկին գլխավոր քարտուղար Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը դարձավ արտաքին գործերի նախարար: Սոցիալ-դեմոկրատների և քրիստոնեա-դեմոկրատների երկու մեծ կոալիցիաները իհարկե նպաստեցին ներքաղաքական ձգնաժամի հաղթահարմանը և հնարավորություն տվեցին խուսափել նոր խորհրդարանական ընտրություններից, բայց միևնույն ժամանակ հանգեցրին փոքր կուսակցությունների քաղաքական կշռի նվազմանը: Կարելի ասել, որ մեծ կոալիցիաները ինչ որ չափով թուլացրին նաև ընդդիմության ինստիտուտը, որովհետև այլ բան է ընդդիմադիր դաշտում ունենալ երկու հզորներից որևիցե մեկին, այլ բան է 5-10 տոկոս ընտրազանգվածով կանաչներին, ազատ-դեմոկրատներին կամ Չախ կուսակցություն/ԴՍԿ դաշինքին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Конституционное право зарубежных стран. Под. ред. М.В.Баглая. М., МГИМО, изд. НОРМА, 2000, էջ 498-500..
2. Հետպատերազմյան առաջին տասնամյակների ՉՍԴԿ-ի գործունեության մասին Восленский М.С. Внешняя политика и партии ФРГ, М., 1961., Трунин Н. А. Милитаризация ФРГ и политика социал-демократической партии. М., 1962; Глюкауф Э. Западногерманская социал-демократия и коммунисты, "ПМиС", 1964; Шумский В. Политика без будущего. М., 1967.
3. Բրանդտի հեռանալը քաղաքական ասպարեզից կապված էր լրտեսական սկանդալի հետ: 1974 թ. Բոննում ձերբակալվեց Բրանդտի անձնական ռեֆերենտ Գյունտեր Գիյոմը, որին բացահայտել էին որպես ԳԴՀ-ի լրտես: Սկանդալը հանգեցրեց լուրջ ներքաղաքական ձգնաժամի և 1974 թ. մայիսին ավարտվեց Բրանդտի հրաժարականով:
4. Տես կուսակցության կանոնադրությունը <http://www.spd.de/linkableblob/1852/data/Organisationsstatut.pdf>
5. Տես կուսակցության ( <http://www.cdu.de> ) և կուսակցության կանոնադրության (<http://www.cdu.de/sites/default/files/media/dokumente/> ) պաշտոնական կայքերը

6. Стрелец М.В. Христианско-Социальный союз в Баварии (ФРГ): идеология и политика. Монография. Брест: Изд-во БГТУ, 2004; Попов И.Д. Христианско-Социальный союз в Баварии: организационное и идейное становление (1945-1949 гг.). Саарбрюкен: LAP LAMBERT Academic Publishing; Стрелец М.В. Христианско-Социальный союз в Баварии (ФРГ): идеология и политика. Монография. Брест: Изд-во БГТУ, 2004; Geschichte einer Volkspartei: 50 Jahre CSU — 1945-1995 / Hanns-Seidel-Stiftung; [Red.: Burkhard Haneke, Dr. Renate Höpfinger]. Sonderausgabe der Politischen Studien. Grünwald: ATWERB-Verlag KG, 1995; *Mintzel A.* Die CSU: Anatomie einer konservativen Partei. 1945-1972 / Mit einem Vorw. von O. Stammer. 2. Aufl. Opladen: Westdt. Verl., 1978; *Mintzel A.* Geschichte der CSU: Ein Überblick. Opladen: Westdt. Verl., 1977; *Schlemmer Th.* Aufbruch, Krise und Erneuerung: Die Christlich-Soziale Union 1945 bis 1955. — München: Oldenbourg, 1998; Борозняк А.И. К истории формирования ХДС/ХСС // Ежегодник германской истории 1973. М., Наука, 1974. стр. 317-338; Истягин Л.Г. Баварский форпост западногерманской реакции // Мировая экономика и международные отношения. 1975. № 12. стр. 92-99; Минтцель Й.А. Христианско-Социальный союз (ХСС) политика для Баварии и Германии // Актуальные проблемы Европы. 2007. № 1. стр. 101-127;
7. Политические партии. Справочник, стр. 103.
8. Гутен Таг. Журнал из Федеративной Республики Германии, N 1, 1991, стр 1.
9. Гутен Таг. Журнал из ..., стр. 1
10. կուսակցության պաշտոնական կայքը (<http://www.fdp.de/>) " (<http://www.liberaled.de>
11. <http://www.PDS-ONLINE.DE>
12. Ժրագիրը  
[http://dielinke.de/fileadmin/download/international/programmatic\\_points.pdf](http://dielinke.de/fileadmin/download/international/programmatic_points.pdf) և  
նախընտրական Ժրագիրը  
[http://dielinke.de/fileadmin/download/wahlen/pdf/bundestagswahlprogramm2009\\_english.pdf](http://dielinke.de/fileadmin/download/wahlen/pdf/bundestagswahlprogramm2009_english.pdf)

### ԱՄՓՈՓՈՒԳԻՐ

**Գերմանիայի քաղաքական կուսակցությունները և  
կուսակցական համակարգի զարգացման միտումները  
(պատմաքաղաքագիտական ակնարկ)  
Գարիկ Քեռյան**

Գերմանիայի քաղաքական համակարգում կուսակցություններն ունեն առաջնային դերակատարում: Խորհրդարանական ընտրությունները կրում են խիստ կուսակցական բնույթ և պետական իշխանության մարմինների կազմավորման գործընթացն իրականացնում են կուսակցությունները: Գերմանիայի ներքաղաքական կյանքը տնօրինում են երկու ազդեցիկ քաղաքական կուսակցություններ: Չախ թևում գտնվում է Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, իսկ աջ թևում երկու պահպանողական կուսակցությունների՝ Քրիստոնեա-դեմոկրատական միության և Քրիստոնեա-սոցիալական միության դաշինքը: Կարևոր դերակատարում ունեն նաև կենտրոնի և ձախ թևի փոքր կուսակցությունները, որոնք, որպես միջանկյալ քաղաքական ուժ, հաճախ մասնակցում են կառավարող կոալիցիաներին:

**РЕЗЮМЕ**

**Политические партии Германии и тенденции развития партийной системы  
(историко-политологический очерк)**

**Гарик Керян**

**Ключевые слова:** *Германия, политические партии, политическая система, социал демократы, христианские демократы, свободные демократы, Союз90/Зеленые, левые*

В политической системе Германии партии играют основную роль. Парламентские выборы носят строго партийный характер. Процесс образования органов государственной власти осуществляется политическими партиями.

Внутриполитическую жизнь Германии контролируют две влиятельные партии. В левом фланге находится социал-демократическая партия Германии, а в правом – союз двух консервативных партий – ХДС/ХСС. Важную роль имеют также малые партии центра и левого фланга, которые как промежуточная политическая сила часто участвуют в правящих коалициях.

**SUMMARY**

**Political parties of Germany and trajectories of development of the party system  
(Historical and Political Essay)**

**Garik Keryan**

**Key words:** *Germany, political parties, political system, Social Democrats, Christian Democrats, Free Democrats, Alliance 90 / The Greens, The Lefts.*

Political parties have critical role in the political system of Germany. Parliamentary elections have a strict party character. The formation of public authorities is carried out by political parties. The internal political life is controlled by two influential parties. The Social Democratic Party of Germany is in the left wing, and the Union of two conservative parties comprises the right wing - the CDU / CSU. Small parties of the center and left flank play important roles as well being an intermediate political power participating in the ruling coalition.

**ԼԵԶԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**ՂԵԿՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ՝ ԿՐԹՈՂ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՂ\***

**Անահիտ Աթայան**

**Բանալի բառեր՝** բանասիրական ուսումնասիրություններ, ազգային արժանապատվություն, բարոյական արժանիքներ, ժողովրդական բանահյուսություն, ինքնաճանաչողություն, ընտանեկան դաստիարակություն, հայրենասիրություն, ճանաչողական դեր, ազգային արժեքներ:

19-րդ դարում հայ մանկավարժական միտքը, մանկական գրականությունը աննախընթաց զարգացում ապրեց թե՛ մայր հայրենիքում, թե՛ հայոց գաղթօջախներում, ուր գործում էին մի շարք հայկական դպրոցներ, որտեղ դասավանդում էին ճանաչված մանկավարժներ, հայ դպրոցի և լուսավորության գործին նվիրված անհատներ (Հ. Ալամդարյան. Նիկողոս Զորայան, Մ. Թադիսայան, Ղ. Ալիշան, Խ. Աբովյան, Ստ. Նազարյան, Մ. Նալբանդյան և ուրիշներ): Նրանց գրական-հասարակական գործունեությունը, դավանած սկզբունքներն ու գաղափարները դարձան հայ պատանու և երիտասարդի կրթության ու դաստիարակության լավագույն գործոններ:

19-րդ դարի 40-ական թթ. հայ մանկավարժական մտքի պատմության մեջ որոշակի ներդրում հանդիսացավ Ղ. Ալիշանի ստեղծագործությունը: Նրա գիտական-բանասիրական աշխատությունները, մանկավարժական արժեքավոր երկերը վկայում են Ալիշան տեղագրի, պատմաբանի, աշխարհագրագետի, թարգմանչի, հրապարակախոսի անուրանալի վաստակը, որը նման է մի հսկա հիշատակարանի, ուր կարևորագույն տարրը ազգային կրթության ու դաստիարակության խնդիրն է:

Ալիշանի ժամանակաշրջանում Մխիթարյան միաբանությունը օտար երկնքի տակ ամեն ինչ անում էր հայեցի դաստիարակության, աշակերտության համար ուսուցման նոր և լավագույն պայմաններ ստեղծելու համար:

Միաբանությունը, շնորհիվ Սուքիաս Սոմայանի, հնարավոր ամեն միջոց գործադրում էր հոգևոր կրթությանը հանընթաց գիտական գործը բարելավելու համար:

1841թ. Ղ. Ալիշանը նշանակվում է Վենետիկի Ռափայեյյան վարժարանի ուսուցիչ: Մանկավարժական գործունեությանը զուգընթաց՝ նա աշխատակցում է Մխիթարյանների «Բազմավեպե հանդեսին»:

1848թ. նա նշանակվում է Ռափայեյյան վարժարանի տեսուչ:

1858-1861թթ. վարում է Փարիզի Մուրադյան վարժարանի տեսչի պաշտոնը: 1861թ. վերադառնում է Ս. Ղազար, 1866 թ-ից նորից նշանակվում Վենետիկի Ռափայեյյան վարժարանի տեսուչ՝ մինչև 1872թ.: Հետո՝ մինչև մահը, զբաղվում է հայագիտությամբ:

Ալիշան-մանկավարժի գերագույն նպատակը հայրենամտեր քաղաքացիներ պատրաստելն էր: Ռափայեյյան վարժարանում արտասանած ձառում նա ասում է. «Ուր քաղաքացիք չիք՝ չկան և հայրենիքե: Ասել է թե՛ հայրենիքի գոյությունը պայմանավորված է նրան նվիրված անձնագրի քաղաքացիներով»:

\* Հոդվածն ընդունվել է 25.12.16:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Իր բազմաթիվ հողվածներում, բանասիրական, հայրենագիտական ուսումնասիրություններում, Ալիշանը հորդորում է դաստիարակել «աղել քաղաքացիներ հայրենիքի համար»:

«Ազգային հատուկ դաստիարակությունն երկում Ալիշանը գրում է, որ ճիշտ այնպես, ինչպես որ հացը ստանալու համար օգտագործում են այլուր, ջուր, աղ, բայց հացերը տարբեր են ստացվում, չնայած նյութը նույնն է, այդպես էլ դաստիարակության հարցում: Շատ դեպքերում նույն ձևով են դաստիարակում մարդկանց, բայց տարբեր մարդիկ են ձևավորվում: Ալիշանը կարևորություն է տալիս ազգային դաստիարակությանը: Չի կարելի հային դաստիարակի անգլիացին, անգլիացուն՝ հույնը և այլն:

Ազգերի արժանիքներից կարելի է վերցնել լավագույնը: Ազգը նման է պարտեզի: Լավ ծաղիկների հետ կան և մոլախոտեր: հարցն այն է, թե որ պարտեզի մոլախոտն է շատ, որն է լավ մշակվում: Պետք է ջանք թափել՝ մաքրելու մոլախոտերը: Ճանաչողական ու դաստիարակչական նշանակություն ունի Դ. Ալիշանի «Ամսոց բնական նշանները» երկը, ուր հեղինակը Գրիգորիկի համար բացահայտում է տարվա ամիսների էությունը: Ամեն ինչ պատկերավոր ու շոշափելի է, երեխայի սրտին ու հոգուն մոտ, որը և սեր է արթնացնում նրա մոտ առ հայրենիքը, նրա բնությունը, ծիլ ու ծաղիկը, մարդն ու աշխատանքը:

Ջարմանալիորեն բնական են գույները: Ոչ մի անգամ Հայաստանում չեղած հեղինակն այնքան բնական է պատկերում ամեն ինչ, որ մենք տեսնում ենք Հայաստանի բնական ու կենդանական աշխարհին քաջածանոթ հեղինակին, ում համար թանկ ու հարազատ են հայոց աշխարհի ամեն մի մասունքը: Երկն սկսվում է ապրիլ ամսվա նկարագրությամբ. «Կտեսնես, կիմանաս, որ սաստիկ հովերը կդադարեն ու անուշ հովեր կուզան, որոնց գեփյուռ կըսենք: Լեռներուն վրայն ձյունները կհալին, ու գետերը կիջնան: Անոր համար շատ գետեր ու հեղեղատներ լեցվելով դաշտերը կկոխեն»:[1]

Կյանքի գարթոնքն է պատկերում Ալիշանը. «Գառնուկները մորերուն քովն երթալով կցատկոտեն, կովն ու եզը իրեն դանդաղությունը մոռացածի պես՝ կժրանան: Մանր թռչնիկները մեծ ուրախությամբ անդադար կձվվրան, կվազվզեն, կձխան: Այս ամսուս մեջ շատ վարուցան կըլլա և տունկերը կտնկվեն»:[2] Երկը նաև աշխատանքային դաստիարակության լավագույն օրինակ է, որին մեծ ուշադրություն են դարձրել մեր դասական մանկագիրները: Գեղագիտական դաստիարակության պայծառ օրինակ է մայիս ամսվա նկարագիրը: Այս անգամ հեղինակը Գրիգորիկին տանում է դեպի գեղեցիկ ծաղկած այգին. «Մայիսը ամիսներուն մեջ ամենեն գեղեցիկն է. դաշտերն ալ ամենեն ավելի աս ամսուս մեջ զվարճալի կերևան:

Ահա, տես, արևը կելլե, ճառագայթները լեռներուն ու բարձր ծառերուն գլուխները ոսկեգույն կզարնեն: Անուշ հովիկը, որ թփերը կօրորե, ծառերույն տերևները կշարժե, կարծես թե կփութա արևուն առջևն վազելով իմաց տվող ըլլալ:

Կտեսնե՛ս Գրիգորիկ, որ հիմա բոլոր աս տունկերը ծաղկեր են, բոլորն ալ իրենց հոտը կբուրեն, ամենուն բուրմունքը մեկտեղ խառնված՝ մարդու սիրտը կգմայլեցնեն: Տես, որչափ տեսակ-տեսակ ծաղիկներ կան: Եկ ամենեն ալ ժողովենք, փունջ մը կատենք...[3]

Հունիս ամսվա նկարագրությունը հեղինակի պատվիրաններն է: Ինչպես պարտիզպանն է ձգտում, որ այգում մոլախոտեր չլինեն, որ չխանգարեն պիտանի բույսերին, այնպես էլ հեղինակն է ձգտում, որ Գրիգորիկը միայն առաքինություն ցանի.

«Քու սիրտդ ալ պարտեզ մըն է, Գրիգորիկ, ու պարտիզպանը դուն ես: Նայե, որ առաքինություն միայն ցանես, աճեցնես ու մոլության բույսերը խլես փձացնես»:[4]

Հուլիս ամսվա բաժինը աշխատասիրություն է սովորեցնում: Հեղինակը բացատ-

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

րում է թե ինչ դեր ունի աշխատանքը մարդու կյանքում: «Եվ այսպես մարդու կյանքն այլ բոլոր աշխատություն է: Առանց այս աշխատության պտուղ չկրնար վեյելել», -գրում է Ալիշանը:

Աշնան ամիսների նկարագրություններում Ալիշանը բնության գիտակ է, երեխաներին սովորեցնում է, թե ինչպես են հասունանում մրգերը, որոնք են հասունացման նշանները. «Աս պտուղներուն հասած ժամանակը որոշ իմանալը դժվար է: Վասն զի տարի կըլլա, որ շատ, տարի կըլլա, որ ուշ կհասնի: Խաղողին հասնելու նշանը՝ ողկույզին կոթին սևանալն է[5], -բացատրում է Ալիշանը: Երկը նաև հետաքրքիր տվյալներ է հաղորդում, սովորեցնում է լուծել կենցաղային խնդիրները, այսպես.՝ ընկուզին վրայի կանաչ կճեպը հանելեն ետև՝ ողջերը կջորացնեն, կպահեն, իսկ որդնոտածները կձգնեն ու եղը կհանեն: Ասեղը կգործածվի վառելու, ներկերու հետ խառնելու և փայտերը փայլեցնելու համար:[6]

Խոսելով սեպտեմբեր ամսվա առանձնահատկությունների մասին՝ Ալիշանը խոսում է դաշտային աշխատանքների մասին, ինչպես են հողը նախապատրաստում գարնան գարթոնքի համար.

-Վերջապես պարապ անցնելու ամիս չկա երկրագործին, ու մեկ ամիս մը պարապ կենա նե, բոլոր տարվույն վնաս կըլլա: Ասանկ այ ուսմունքե հանգիստ ըլլողը սա միջոցիս, թե որ բոլոր ատենը պարապ անցնե, միտքը կտկարանա ու վերջը շատ կհոգնի:[7]

Ալիշանի բազմաթիվ հոդվածներ նաև մանկական գրականության համար գործնական, ուսուցողական ու ճանաչողական բնույթի երկեր են, որոնց գիտամանկավարժական արժեքն անուրանալի է բոլոր ժամանակների համար:

Ալիշանը փորձում է ուսումը հաճելի ու սիրելի դարձնել երեխաների համար: Դրա համար երբեք չի կարելի հուսահատեցնել նրան: Իր հոդվածներում Ալիշանը խոսում է աշակերտների ուսման միջոցով ոգևորելու ձևերի ու միջոցների մասին: Երեխան նախ իր ծնողի ձեռքից է անցնում: Հատկապես մեծ է մոր դերը: Տղան իր ծնողների ձեռքում է իր նախնական ձևը ստանում, որից հետո նրան կրթում և դաստիարակում են վարպետները:

«Թե ով է տղոց ամենեն սիրելի, զորավոր և հարկավոր վարպետը երկում Ալիշանը նշում է, որ ողբայի է այն մարդը, որ կրթության օգուտը չգիտի: Եթե երեխան իր ծնողի ձեռքում կրթության առաջին ձևը չառնի, դժվար կլինի: Ամոթ է, երբ մարդիք ծնողին ասում են, թե զավակների թշվառության պատճառը հենց իրենք են: Իրավ, ծնողն է ամենասիրելին ու զորավորը իր տղայի: Ով կարող է փափուկ ծաղկին արևից, հովից, անձրևից ու ուրիշ վտանգներից ավելի լավ պաշտպանել, քան այն բույսը, որ ծնել է ծաղիկը և երբեմն տերևներով ծածկում է արևի ճանապարհը, կամ ցողերը կաթեցնում է վրան: Ասել է թե՝ ընտանեկան լավ դաստիարակությունը նպաստում է կրթությանը, դպրոցական դաստիարակությանը: Ալիշանի հավաստմամբ՝ քանի-քանի զավակներ են իրենց դժբախտությունից հետո անիծում ծնողներին, որ մարմնավորի հետ հոգևոր կյանք չեն տվել իրենց: Քանի-քանի ծնող իրենց զավակի կրթության համար չհոգալով ամբողջ կյանքում լաց են եղել: Ալիշանը բարձր է գնահատում կրթությունն ու դաստիարակությունը:

-Ամեն բանե առաջ ծնողք պիտի նային, որ բարեպաշտության սկզբունքներ և ետքը ընկերության պարտքեր տպավորեն զավկներուն սիրտը, որպեսզի վերջի վարպետներն այլ հաջողությամբ աճեցնեն զանոնք. ասով աշխարհքս ընտիր քաղաքացիներ ու մարդիկ լավ ընկերներ կունենան: Մեր խեղճ ազգն այլ կճանչնա, որ իրեն մեկ հատիկ փառքը, պատիվը, հարստությունն ու հաջողությունն է՝ լավ ազգայիններ ունենալ:[8]

Ալիշանը գտնում է, որ «Ամեն ուսմանց գերազանց ուսմունքը առաքինությունն է («Առաքինությունն է գմարդը երջանիկ ընող...»): «Առաքինությունը ամեն բարյաց մեծն է: Առաքինությունը, ըստ Ալիշանի, ամեն հասակի համար է, բայց «աս ալ մեկայնե-րուն պես՝ ավելի մանկանց սիրելի է»:

«Եվս առավել ուսուցիչք և վարպետք ջանան սորվեցնել սա ամենահարկավոր ուսմունքը անոնց, որ ազգին ու աշխարհքիս ակնկալություններն են: Ամեն բանե առաջ տնկեն ան փափուկ սրտերուն մեջ առաքինությանց սերմունքը և միշտ խնամեն ու մշակեն, աշակերտության առջի օրեն ինչվան ետքի վայրկյանը: Դպրանանց ներսը դուրսը գրած ըլլա՝ առաքինությունն է հոս սորվելու ամենահարկավոր ուսմունքը»:[9]

Ղ. Ալիշանը մեծ նշանակություն էր տալիս ինքնաձանաչմանը: Պատահական չէ, որ հին իմաստունները իրենց վարժարանների ու դասատետերերի ձակատին գրում էին՝ «Ծանիր զքեզ»՝ որպես առաջին և ամենահարկավոր դաս (ձանաչի՞ր քեզ): Ալիշանի երկերի ծանոթագրություններում նշվում է, որ, ըստ Պլատոնի, արտահայտությունը գրված էր Հունաստանի Դելֆիք քաղաքում գտնվող Ապոլոնի տաճարի ձակատին:

«Ծանիր զքեզ» հոդվածում Ալիշանը գրում է. «Եկուր նայինք, դու ինչ բնավորության տեր ես, ինչ խառնվածքի մարդ ես, ինչ պակասություններ ունիս բնությանդ մեջ, ինչ բանի կարոտ ես մարդ ըլլալու և ինչ դեր պետք է նե՝ առ ծանիր զքեզ և մարդ եղիր»:[10]

Աշխատանքային դաստիարակության լավագույն օրինակ է Ալիշանի «Հովիվք Շիրակե պատմվածքների ժողովածուն, որի 4 հոդվածներում հեղինակը գովերգում է գյուղական կյանքը, անման բնությունը, աշխատանքը, որ ամեն բարիքի ստեղծողն է: Իսկ «Նվեր տղայոց» արձակ գեղարվեստական երկի առանցքը բնության միջոցով երեխային դաստիարակելն է, ինչը նաև Խ.Աբովյանի որդեգրած տեսությունն է:

Լինելով Վենետիկի Մուրատյան վարժարանի «պատմություն» և «բարոյականություն» առարկաների ուսուցիչ (մոտ 20 տարի), հետո տեսչի պաշտոնակատար, ծանոթանալով եվրոպական առաջավոր մանկավարժության տեսությանն ու փորձին՝ Ալիշանը միշտ էլ խրախուսել է ազգային մշակույթի զարթոնքը: Մանկավարժական բազում հարցեր են արծարծվում «Իր ազգը չսիրողը հավիտյան մարդասեր չըլլար» և պատմամանկավարժական բնույթի այլ հոդվածներում:

Ազգային դաստիարակության վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ ունի Ալիշանը: «Ազգային հատուկ դաստիարակություն» հոդվածում Ալիշանը մեծ նշանակություն է տալիս հայեցի դաստիարակությանը: Հային պետք է կրթի հայը, օտարին՝ օտարը: «Ազգին պակասությանց կամ կատարելությանց վրաե հոդվածում Ալիշանը նշում է, որ «Ազգային պակասությունը պարտել է խելացիություն է, բայց պակասությունը չձանչնալ՝ մեծ անխելություն», «Ազգասիրություն» հոդվածում խոսում է այն մասին, որ լավ դաստիարակությունը կտվորեցնի մարդուն, որ ինքը միայն իր կամ իր ընտանիքի համար չէ երկրի վրա, ավելի մեծ ընտանիք ունի նա: Դա իր ազգն է:

Խիստ արդիական հնչողություն ունի Ալիշանի «Ազգային պակասություն մը, որ առաջադիմության միջոցները կարգիլե» հոդվածը: Ալիշանը նշում է, որ մարդու համար ամենապատվական բանը կյանքն է, և «շահը հարկավոր է՝ կյանքը պահելու համար: Բայց լավ ապրելը, այսինքն՝ մարդավայել կյանքը ավելի հարկավոր է, քան դուրսույթը ապրելը: Այստեղից այն դաստապարտելի գրույցը, թե քերականությունը հաց չբերեր, գիրն ու գրիչը փոր չեն կշտացներ...» Եյսպես մտածողները իրենց համար ամենալավ բանը հացն են համարում: Գիտությունը թողած՝ նրանք վաճառականության հետևից են ընկել, որպեսզի հաց ուտեն: «Հաց ուտելու համար աշխարհք եկանք, մարդկանց դպրոց այսոռներն պիտի ըլլան և դասատու խոզերն պիտի առնունք: Հաց



**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

ուտելով որչափ պիտի ապրիս, շատ-շատ ութսունը տարի, իսկ հացի տեղ իմաստություն շահելով՝ հավիտենականություն մը կապրիսե։[11] Ալիշանը բերում է Խորենացու, Եղիշեի, Փարպեցու օրինակները, ովքեր իրենց կյանքի նպատակը դարձրին հոգևորի ստեղծումը, այլապես մարդկությունը կգրկվեր հոգևոր այնպիսի սննդից, ինչպիսիք նրանց երկերն է։ Նշված հողվածում Ալիշանը նշում է, որ շատ անգամ մեր նախարարների անմիաբանության, թագավորին հակադրվելու պատճառը եղել են «շահասիրությունը և դյուրակեցությունը»։ «Մեր աշխարհքին այնչափ ոտնակոխ ըլլալուն մեկ պատճառն աս է», -գրում է Ալիշանը[12]

Հայ ժողովրդական բանահյուսությունը Ալիշանի ստեղծագործությունը սնող հիմնական ակունքներից մեկն է։ Եթե կլասիցիզմի հայկական տեսաբանները քարոզում էին իզուր ժամանակ չվատնել, չուսումնասիրել ու չքննել ժողովրդական ստեղծագործությունները, ապա Ալիշանը գտնում էր, որ հայ մշակույթը ծնվում է ժողովրդից, ուստի հանրությունը պետք է զբաղվի ազգային երկերի ու ավանդությունների հավաքմամբ ու ուսումնասիրությամբ։

«Ճշմարիտ ազգասիրի մը առջև շատ հարգի բաներ են նաև այն ավանդները, որ բերնեբերան անցնելով, ինչպևս իր օրերը հասած են։ Վասնզի ազգի մը պատմությունը, բնավորությունները, սովորությունները, լեզուն և լեզվին զանազան փոփոխությունները ոչ միայն գրավոր պատմություններե կիմացվին, հապա նաև ան գրավոր հիշատակարաններեն առաջ՝ անզիր ավանդություններով կհաստատվին։ Անոր համար է, որ ամենայն ազգաց հին և նոր պատմիչները մասնավոր ջանքերով ետևե ելած են հավաքելու ազգային պատմությունները, երգերն ու առակները։ Մեր Խորենացին ալ շատ եռանդուն ջանքերով և իմաստուն ընտրությամբ իր պատմությանը մեջ իբրև անզին զանձ հավաքելու ու պահելու է մեզի մեկ քանի հին երգեր և ավանդություններ, որոնց վսեմ գեղեցկությանը վրա ոչ միայն մենք, այլև օտարները կգմայլին ու կգարնանան»։[13]

Ալիշանը գտնում է, որ բուն ազգային ոգին ազգային նյութոց վրա գրվածքներու մեջ ավելի կերևա, և մեր հայկական բանաստեղծությունն ալ հոն փնտրելու էր, բայց նախնայացմե առ մեզ խիստ քիչ բան հասել է ազգային նյութոց վրա։[14]

Նա դաստիարակության ու կրթության գործում մեծ դեր է տալիս ժողովրդական նյութերին, որովհետև հայեցի դաստիարակությունը պայմանավորված է ազգային ավանդությունների, երգերի, խաղերի, պատմությունների, առակների իմացությամբ։ Այդպես է բոլոր բարեկիրթ ազգերի մոտ։ «Առանց վերապահության կարելի է ասել, որ հայկական բանահյուսությունը ձևավորվելու և մյուս գիտությունների շարքում որպես առանձին առարկա ձևանչվելու և ընկալվելու հարցում գործի առյուծի բաժինը պատկանում է Ղ. Ալիշանին», -գրում է գրականագետ Ս. Շտիկյանը։[15]

Խոսելով հայերի ծիրքի, ընդունակությունների մասին՝ Ալիշանը շեշտում է, որ կարևորը ունենալը չէ, այլ գործադրելը և բերում է հետևյալ օրինակը. «Մենք շատ գեներ ունինք, կըսեր մեկը, սնտուկով սուր ունինք, պատերն ես հրացաններ կախված են։

-Եվ անշուշտ, պատին վրա և սնտուկին մեջ կենալուն համար է, ըսավ լսող մը, որ ձանձ մը ալ չես հալածած։

-Թե որ կուզենք հավոցնել, մանավանդ հավատալ, թե ունինք, -եզրակացնում է Ալիշանը, -պետք է գործածելով ցուցնենք...»։[16]

Սա նշանակում է նաև, որ պետք է գործածել իմանանք այն ամենը, ինչը նպաստում է ազգի բարօրությանը, նրա զարգացմանը։

Ալիշանի «Երգ Նահապետիե խորագրով ժողովածուն վկան է հեղինակի անկախառ

## **ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

*հայրենասիրության, հայրենի երկրի գովք է, պանդուխտ հայի հոգու մրմունջ, սիրո քնքուշ ու զմայլելի մեղեդի... միանգամայն նորություն մեր 19-րդ դարի հայ պոեզիայի բնագավառում, հատկապես կլասիցիզմից ռոմանտիզմին անցնելու դժվարին պրոցեսում:*

*Ալիշանի թե՛ պոեզիան, թե՛ արձակը լի են հայրենասիրական կոչերով ու հորդորներով: Նա իր սաներին կոչ էր անում անվթար պահել ազգի լեզուն, նրա դպրությունը: Սա հենց հեղինակի գերագույն հայրենասիրության գրավակյանն է:*

*Պատահական չէ Ղ. Աղայանի Ալիշանին տված բնորոշումը՝ «Նահապետ հազար թռռների»:*

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Ղ. Ալիշան, Երկեր, Ամսոց բնական նշանները, Եր., 1981, էջ 114:
2. Նույն տեղում, էջ 114:
3. Նույն տեղում, էջ 115:
4. Նույն տեղում, էջ 122:
5. Նույն տեղում, էջ 119:
6. Նույն տեղում, էջ 122:
7. Նույն տեղում, էջ 119:
8. Նույն տեղում, էջ 124:
9. Նույն տեղում, էջ 128:
10. Նույն տեղում, էջ 136:
11. Նույն տեղում, էջ 191:
12. Նույն տեղում, էջ 199:
13. Նույն տեղում, էջ 99:
14. Նույն տեղում, էջ 109:
15. Նույն տեղում, էջ 7:
16. Հայ նոր գրակ. Պատմություն, հ.1, Եր., 1962, էջ 482:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

#### **Ղևոնդ Ալիշանը՝ կրթող և դաստիարակող Անահիտ Աթայան**

«Ղ. Ալիշանը՝ կրթող և դաստիարակող» հոդվածը քննության է առնում հեղինակի մանկավարժական և դաստիարակչական երկերը:

«Ազգային հատուկ դաստիարակություն», «Ամսոց բնական նշանները», «Ծանիր գքեզ», «Նվեր տղայոց» և այլ երկերում Ալիշանը խոսում է ազգային դաստիարակության, բարոյական բարձր արժեքների, ընտանիքի և ծնողի դերի մասին: Բազմաթիվ հոդվածներում, բանասիրական և հայրենագիտական ուսումնասիրություններում Ալիշանը զնահատում է հայ ժողովրդական բանահյուսության դերը՝ շեշտելով այն հանգամանքը, որ հայկական մշակույթը ծնվում է ժողովրդից: Ահա թե ինչու է կարևորվում ազգային ավանդությունների և ավանդույթների հավաքումն ու պահպանումը:

**РЕЗЮМЕ**

**Г. Алишан – преподаватель и воспитатель  
Анаит Атаян**

**Ключевые слова:** *филологическое исследование, национальное достоинство, моральные особенности, народное творчество, самопознание, семейное воспитание, патриотизм, познавательная роль, национальные ценности*

Статья «Г. Алишан – преподаватель и воспитатель» исследует педагогические и воспитательные работы автора.

В «Особенностях национального воспитания», «Природных приметах месяца», «Подарке мальчикам», «Узнай себя» и в других произведениях Алишана говорится о национальном воспитании, формировании высших моральных норм и о главной роли семьи и родителей. В своих многочисленных статьях, филологических и краеведческих исследованиях Алишан оценивает роль армянского народного фольклора, отмечая, что армянская культура берет начало у народа и поэтому важны сбор и сохранение национальных легенд и традиций.

**SUMMARY**

**Gh. Alishan – a teacher and an educator  
Anahit Atayan**

**Key words:** *philological study, national dignity, moral characteristics, folk art, self-studying, family upbringing, patriotism, cognitive role, national values.*

The article “Gh. Alishan – a teacher and an educator” examines the author’s works on pedagogy and upbringing.

In “Features of national upbringing”, “Natural superstitions of month”, “Gifts to boys”, “Recognize yourself” and other works by the author such issues as national upbringing, the formation of the highest moral norms and the main role of the family and parents are mentioned. In numerous articles and philological studies of local history Gh.Alishan appreciates the role of Armenian folklore, noting that Armenian culture originates from the people and therefore it is important to collect and preserve national traditions and legends.

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅՑԻ ՀԱԿԱՔԱՐՈՋՉՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԻԲԵԶԱՆԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ\*

Շուշան Ասկարյան

**Բանալի բառեր՝** մշակույթ, քարոզչություն, հակաքարոզչություն, ինֆորմացիոն անվտանգություն, լրատվամիջոց, տեղեկատվական դաշտ:

Ադրբեջանական հակահայկականությունը սկիզբ է առել Թուրքիայի ժայռահեղական ազգայնական քաղաքականության ազդեցությամբ՝ 1918թ. ադրբեջանական պետական միավորի ձևավորումից և 1930-ական թթ. «ադրբեջանցի» հասկացության կերտման նպատակադրումից ի վեր: Այն ինտենսիվորեն զարգացել է խորհրդային ժամանակաշրջանում (հատկապես սկսած 1960-ականներից) և մինչ օրս շարունակում է իր համակարգային ընդարձակումը: 1998-2000 թթ. Հայաստանի ներքաղաքական զարգացումները մեծապես նպաստեցին Հեյդար Ալիևի վարչակարգի կողմից հակահայկական ինֆորմացիոնության հիմնական ուղղությունների ձևավորմանը և որոշ մեթոդների՝ առավելապես հակահայկական քարոզչությանը միտված տեղեկատվական գինանոցի փորձարկմանը: 2000թ. փորձարկվեց նաև տեղեկատվական հարձակման տեխնոլոգիական բաղադրիչը. առաջին անգամ ադրբեջանական ցանցահեռնների՝ հաքերների կողմից ժամանակավորապես շարքից դուրս բերվեցին հայկական մի շարք կայքեր, որոնցում շոշափվում էին Ցեղասպանության և ԼՂՀ թեմաները: [1] Շուտով քարոզչական պայքարն ու տեղեկատվական փոխհրաձգությունը տեղափոխվեց լրատվական դաշտ: Ադրբեջանի բոլոր զանգվածային լրատվամիջոցները «պետական պատվերի ու հայրենասիրության» բարձունքներից առանձնակի ոգևորությամբ լրատվադաշտային պատերազմ սկսեցին հայկական ՋԼՄ-ների դեմ: Ադրբեջանական քարոզչապայքարը առանձնակի երանգներ ստացավ հայկական մշակույթի հակաքարոզչության համապատկերում:

Քարոզչությունը միտումնավոր ապակողմնորոշիչ կամ խաբուսիկ տեղեկությունների փաթեթ է, որը լայնորեն լուսաբանում է որևէ գաղափար, քաղաքականություն կամ պատճառ: Հիմնական իմաստն այն է, որ տեղեկատվությունը միտումնավոր տարածվում է այնպես, որ իշխի ձևավորված հասարակական կարծիք՝ հոգուտ կոնկրետ իշխանությունների կողմից ստեղծված օրակարգի: Քարոզչությունը հաճախ պարունակում է կեղծ տեղեկություններ (կամ նույնիսկ ստեր), ինչպես նաև կեղծ կամ թաքնված ենթադրություններ: Քարոզչության խթանման առավել ակնհայտ պատմական օրինակ տեղի է ունեցել նացիստական Գերմանիայում, երբ ՋԼՄ-ները բազմիցս ներկայացրել են «հրեական հարցը», քանի որ այն եղել է ակնհայտ կենտրոնական հարց եւ ժամանակի ողջ գերմանական տպագիր մամուլը եւ ռադիոէթերը հեղեղված էր «հրեական հարցով»: Նացիստական կառավարությունը օգտագործել էր զանգվածային լրատվամիջոցները գերմանացիների մեծամասնությանը համոզելու և հավատալ տալու մի շատ կարեւոր հարցի, այն է՝ «Ի՞նչ ենք մենք անելու մեր երկրի այսքան հրեաների հետ»: Ընդլայնված ժամանակահատվածում ՋԼՄ-ների կողմից այսպիսի շահարկող բովանդակության նյութերը և նույն կենտրոնական «խնդրի» շուրջ զանգվածային լրատվության միջոցների հետ հաղորդակցման ուղիներով ֆաշիստական կառավա-

\* Հոդվածն ընդունվել է 25.02.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնը:

րությունն ստեղծել է ապօրինի եւ կեղծ խնդիր, և ըստ էության, իր սեփական օրակարգը: Քարոզչության դաշտում շինծու և օրակարգային, ինչպես նաև հակահայկական տրամադրություններով ու հակաքարոզչություններով հարուստ ադրբեջանական լրատվականները շարունակում են վերոնշյալ օրինակը՝ հորինելով ու սեփական ժողովրդին «կերակրելով» այնպիսի կենտրոնական «խնդիրներով», որոնք ուղղված են ոչ միայն ներքին, այլև արտաքին լսարանի ապակողմնորոշմանը:

Առհասարակ, քարոզչական գործողությունների նպատակը և ողջ տրամաբանությունը ենթադրում են, որ տեղեկատվական գործողություններն իրականացնող կողմը՝ մանիպուլյատորը, իրականացնում է նպատակային, ռացիոնալ մշակված, սառը հաշվարկային քայլեր՝ ուղղված հակառակորդի հուզական, գիտակցական ապահնտեզմանը, մինչդեռ սեփական հույզերի ու բնութագրիչների առումով մնում է ստվերում, աչքի չի ընկնում: Այլ կերպ ասած՝ նա իրավիճակը կառավարողն է, ոչ թե՛ իրավիճակի մասը: Ադրբեջանի պարագայում դրությունն այլ է. տեղեկատվական նյութերում նկատելի են ավելորդ հուզականություն, իմպուլսիվություն, և հակառակորդի՝ հայերի ենթադրվող խոցելի կողմերի ներկայացումը յուրովի սերտաձած է քարոզողի ինքնաներկայացման հետ: [2] Քարոզչական հոսքը պարունակում է սեփական իրավիճակի, հատկանիշների, տրամադրությունների ինդիկատորներ՝ հայտանիշներ: Պարզ ասած՝ այդ քարոզչությունը հաճախ «մատնում» է ինքն իրեն:

Խորհրդային ժամանակաշրջանում ինֆորմադաքականության հիմնական բաղադրիչն էր պատմամշակութային հարթությունը. «բունիաթովյան դպրոցի»[3] պատմաբանները ձգտում էին ադրբեջանականացնելու Ադրբեջանի ԽՍՀ տարածքում բնակվող տարբեր էթնիկ խմբերի, հատկապես՝ հայերի պատմամշակութային ժառանգությունը՝ միաժամանակ կեղծելով բնիկ ժողովուրդների էթնոագգային պատմությունը: Այդ հիմնադրույթներն իրենց հետագա զարգացումն ապրեցին նաև ԽՍՀՄ փլուզումից հետո՝ նորաստեղծ Ադրբեջանի Հանրապետությունում:

Ադրբեջանի իշխանությունների տեսանկյունն օպերատիվ կերպով տարածելու և ադրբեջանամետ դիրքորոշումներ ձևավորելու համար Ադրբեջանը ռազմավարական նշանակություն է տալիս մեդիատիրույթին և մեծ ռեսուրսներ է ներդնում այս ոլորտի կայացման ու կատարելագործման համար: Մեդիան այն հիմնական բաղադրիչն է, որի միջոցով ընթանում է տեղեկատվական ազդեցությունը հայկական լսարանների ուղղությամբ և ոչ միայն միջնորդավորված այլ երկրների ԶԼՄ-ով, այլև ուղղակիորեն՝ համացանցի օգնությամբ:[4]

Ադրբեջանում հակահայկական ինֆորմադաքականության առավել ավանդական բաղադրիչներից է պատմամշակութային դաշտը, որն արդիականացվել է 2000 թվականից: Պատմական փաստերի խեղաթյուրման աշխատանքը հիմնականում վարում է Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիան՝ Պատմության, Մարդու իրավունքների և այլ ինստիտուտների հետ համատեղ:[5] Այդ հաստատությունների գործունեության հիմքում ընկած է Արցախի, Հայաստանի, հայ ժողովրդի և Ադրբեջանի պատմության կեղծումը՝ «ադրբեջանցի» և «Ադրբեջան» տերմինների նույնականության ամրապնդման, կովկասյան աղվանների ադրբեջանականացման, տարածաշրջանում և հատկապես պատմական Արցախում «թուրքերի բնիկ» և «հայերի եկվոր» լինելու հիմնավորման նպատակներով:[6] Ինչպես, օրինակ, Virtual Karabakh.az արջանց լրատվամիջոցում պատմական գիտությունների դոկտոր Գասըմ Գաջիկի «Ղարաբաղի հուշարձանները» վերնագրով հեղինակած հոդվածում ասվում է. «...մինչև 19-րդ դարը Լեռնային Ղարաբաղում հայկական էթնիկական խումբ էրբեք գոյություն չի ունեցել:

Օգտվելով այն փաստից, որ Ղարաբաղի ավտոխթոնական(բնիկ) աղվանցիները եղել են քրիստոնյա, 19-րդ դարից սկսած այնտեղ սկսեցին տեղափոխվել բազմաթիվ հայկական ընտանիքներ: Դրա վառ ապացույցն է հայերի կողմից 1978թվ. Լեռնային Ղարաբաղի Աղդերի շրջանի (Մարտակերտ) Մարաղա գյուղում կանգնեցված հուշարձանը՝ ի պատիվ առաջին 200 ընտանիքների (հայկական ընտանիքների), որոնք 1928 թվականին Իրանի Մարաղա քաղաքից տեղափոխվել են Ղարաբաղ»:[7]

Հատկապես ուշագրավ են Արևելյան Անդրկովկասի բնիկ ժողովուրդների (հայեր, դադստանալեզու և պարսկալեզու ազգություններ) պատմամշակութային ժառանգության և տարածքների այբանական-նախաաղբբեջանական պատկանելության մասին հակագիտական, պատմաքաղաքական հայեցակարգի հորինումն ու տարածումը: Արցախի և առհասարակ պատմական Հայաստանի քաղաքական պատմության կեղծումը հիմք է ծառայում ԼՂՀ հարցում աղբբեջանական դիրքորոշումներն առաջ մղելու, ինչպես նաև ՀՀ-ի և ԼՂՀ-ի նկատմամբ Աղբբեջանի հնարավոր ագրեսիան արդարացնելու համար:

Պատմության սրբագրման աշխատանքները կատարվում են ինչպես «տարածաշրջանում բնակվող բնիկ ժողովուրդների էթնոագգային պատմությունը նկարագրող տեքստերի կեղծման»[8] ու վերաշարադրման միջոցով, այնպես էլ այդ տեքստերի վկայություն հանդիսացող պատմամշակութային ժառանգության, օրինակ՝ հուշակոթողների վերացման և նորերի կառուցման ճանապարհով:[9] Ինչ վերաբերում է ժամանակակից Աղբբեջանում գտնվող հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, ապա դրանք կամ ֆիզիկապես ոչնչացվում են, ինչպես 2005-2006թթ. տեղի ունեցավ Նոր Զուղայի գերեզմանատան խաչքարերի հետ, կամ էլ հռչակվում են «բուն աղբբեջանական»: Նույնիսկ ՀՀ և ԼՂՀ սահմաններում գտնվող հայկական եկեղեցիները, քրիստոնեական ու զուտ հայկական մշակույթին բնորոշ հուշարձանները վերագրվում են Կովկասյան Աղվանքի ժողովրդին՝ դրանց հետագա աղբբեջանականացումը հիմնավորելու համար: Նույն Virtual Karabakh.az արջանց թերթում «Քրիստոնեության պատմությունը Ղարաբաղում» հոդվածի մեջ նշվում է. «Այն գիտնականներն, ովքեր ուսումնասիրել են Կովկասյան Աղվանքի ճարտարապետական հուշարձանները, հայտարարել են, որ այդ հուշակոթողները իրենց բնութագրական առանձնահատկություններով և ճարտարապետական պլանավորման մեթոդաբանությամբ տարբերվում են հայկական կրոնական ճարտարապետական հուշարձաններից: Այս հուշարձանները պատմական բոլոր հատկանիշներով պատկանում են մեր ժողովրդի ազգային մշակութային ժառանգությանը:Այդ հուշակոթողների թվին են պատկանում Ամարասի վանքը Խոջավեղիի շրջանում, Գյանջասարի վանքը Աղդերի շրջանում»:[10]

Աղբբեջանական գիտնական-պրոպագանդիստները Արցախը տեղափոխում են Աղվանք՝ այն պատմականորեն Աղվանքի գավառ համարելով, որտեղ, իբր, ի սկզբանե բնակեցված աղվաններն ապրում էին դեռևս մինչև 19-րդ դարը՝ «հայերի ժամանումից» շատ առաջ: Իսկ քանի որ աղվանցիների և աղբբեջանցիների միջև դրվում է հավասարության նշան, ուրեմն վերջիններս դառնում են Արցախի նախաբնիկները:

Աղբբեջանական վերոնշյալ կայքը Ղարաբաղի մասին տեղեկություն է հաղորդում անգլերեն, ռուսերեն, աղբբեջաներեն, թուրքերեն և ֆրանսերեն՝ նպատակ ունենալով օտարալեզու լսարանին մատուցել «ձշմարիտ» տեղեկատվություն: Այս արջանց լրատվամիջոցը նպաստում է ոչ միայն Ղարաբաղի, այլ նաև Երևանի մասին պատմական փաստերի խեղաթյուրված ներկայացմանը: «Երևանի ճարտարապետությունը» հոդվածի հենց առաջին իսկ տողում ընթերցում ենք. «Աղբբեջանի պատմական տարածքում, որը այժմ կոչվում է Հայաստանի Հանրապետություն, կային բազմաթիվ բեր-

դեր, բերդաքաղաքներ...»: [10] Կայքի ձևավորումը, հատկապես «Qarabag» անվանումը ներկայացված է մահմեդական ոճով, համապատասխան մշակութային երանգներով, որպեսզի տեսողական պատկերացում ստեղծվի Ղարաբաղի ադրբեջանական պատկանելության մասին:

Հայերի մշակութային հիմքերի հերքման և դրանց յուրացման փորձերը հաճախ ուղեկցվում են իրականության ձևախեղման և պարզ շրջման մեխանիզմներով, որը հաճախ ունենում է բառացի գավեշտի հասնող դրսևորում: Փաստերի և իրականության այդպիսի խելահեղ շրջման օրինակ կարելի էր հանդիպել ադրբեջանական առաջատար լրատվականներից մեկում՝ *bakililar.az*-ում [11] տեղակայված մի լուսանկարում, որտեղ հայկական գրերը շրջված վիճակում ներկայացվում են որպես հին ալբանական գրեր՝ Ղազախի շրջանի Ղաշսալախլը գյուղի եկեղեցու սալիկից: Ըստ ադրբեջանական աղբյուրի՝ ներկայումս հայերն այդ սալիկը փոխարինել են հայագիր քարով, այնինչ նրանց ներկայացրած պատկերի հայելային հետշրջումը ավելի քան խոսում է. դրանք ի սկզբանե հայատառ գրեր են: Կամ Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Իգրար Ալիևի գիտական զեղումներն այն մասին, որ «Ղարաբաղի հայերը և Հյուսիսային Ադրբեջանի ադրբեջանցիները համարվում են, այսպես կոչված «արզանդակից եղբայրներ»»: [12]

Ադրբեջանական լրատվամիջոցները հերթական անգամ հայկական պատմությունը կեղծ անվանելու պահը բաց չեն թողել՝ 2005 թվականին՝ Արցախում հայտնաբերած հին հայկական, հելլենիստական Տիգրանակերտ քաղաքի պեղման ժամանակ: Երկրի առաջատար և ամենաընթերցվող առցանց լրատվամիջոցներից *Day.az*-ը կայքի քաղաքական բաժնում տեղադրել էր «Եվս մեկ կեղծիք. հայերը փնտրում են գոյություն չունեցող քաղաք» վերնագրով հոդված, որտեղ բացի շինծու փաստերից առ այն, որ Տիգրանակերտի տարածքը Աղդամի շրջանի Գյովուրգալա քաղաքն է, հոդվածի անանուն հեղինակը սարկազմով ներկայացնում է հայ հնէաբանների գիտահետազոտական աշխատանքները՝ նրանց հեզնաբար անվանելով գիտնական: Խոսելով պեղումների համար հատկացված գումարների մասին՝ Հայաստանին կցվում է «սոված» և «սովամահ» ածականները. «Սոված Հայաստանին այդ նպատակով հատկացված էր 30 մլն դրամ» [13]՝ ակնարկելով այն, որ « հայկական իշխանությունը սոված է թողնում իր ժողովրդին, բայց ջանք ու գումար չի խնայում հայերի կողմից «օկուպացված» ադրբեջանական տարածքներում հայկական հետք (ևս չակերտներում) գտնելու համար:

Մեկ այլ ադրբեջանական ազդեցիկ լրատվամիջոց *Aze.az*-ը «Հայաստանի կողմից շարունակվում են ադրբեջանական մշակույթի դեմ ոտնձգությունները» վերնագրով հոդվածում առաջին պարբերությունից վստահաբար ասում է. «Այս անգամ հայ գործիչները յուրացրել են ադրբեջանական ազգային գործիք բալաբանը՝ աններդաշնակ կերպով անվանելով՝ դուդուկ»: [14] Այնուհետև թվական տվյալներով հեղինակը փորձում է ապացուցել դուդուկի ադրբեջանական ազգային հին երաժշտական գործիք լինելու փաստը. «Բալաբանի դպրոցը առաջին անգամ ստեղծվել է մեծագույն ադրբեջանական կոմպոզիտոր Ուզեիրա Գաջիբեկովի նախածննդությամբ դեռ 1937 թվականին» [15], կամ «Նոյնիսկ 11-րդ դարում «Դիվան»-ում Գ. Տեբրիզլին նշում է բալաբանի մասին» [16], կամ «Ինչպես և բանաստեղծ Գազի Բունիսաննդդինն, ապրելով 14-րդ դարում, իր ստեղծագործություններում բազմիցս փառաբանում էր այդ գործիքը» [17] Այնինչ զուռնան և դուդուկը հնագույն երաժշտական գործիքներ են, և դեռևս հինավուրց ժամանակներից նմանատիպ նվագարաններ գոյություն ունեն Հայաստանի տարածքում, դրա մասին վկայում են Սևանում հնագիտական պեղումների ժամանակ (Ք.ա. II հազարամյակ) գտնված մի մանրաքանդակ, ինչպես նաև արծաթե ռիտոնը, ո-

որ հայտնաբերված է Էրեբունու պեղումների ժամանակ և թվագրվում է Ք.ա. V–IV դդ.: ՀՀ ՉԱԱ Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, Կոմպոզիտորների միության անդամ Կարինե Խուդաբաշյանը այս առթիվ տալիս է թերևս ամենասպառիչ պատասխանը. «Դուդուկն այնքան հին ծագում ունի, որ այն ժամանակ թուրքերը դեռևս գոյություն չունեին» : [18]

Նախկինում մշակութային ժառանգության պահպանության գործողությունները հիմնականում ուղղված էին նյութական մշակութային ժառանգության պահպանությանը, որը համարվում էր ավելի առաջնահերթ խնդիր: Վերջին տարիներին, երբ որոշակի կարգավորվեց մշակույթի ոլորտի օրենսդրական դաշտը, ճշտվեցին մշակութային քաղաքականության ուղղությունները, ինչպես նաև ավելացավ մշակույթի ոլորտի ֆինանսավորումը, հնարավորություն ընձեռվեց նաև ամբողջական ժավալով անդրադարձնալու ոչ նյութական մշակութային ժառանգության խնդիրներին: Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը, պաշտպանությունը, զարգացումը և տարածումը այսօր դիտարկվում է մշակութային քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում արդեն ներառված է Հայաստանի կողմից ներկայացված չորս մշակութային արժեք՝ «Դուդուկն ու իր երաժշտությունը», «Խաչքարի արվեստ. խորհուրդն ու խաչքարագործությունը», «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսը, «Լավաշ. ավանդական հացի պատրաստումը, նշանակությունը և մշակութային դրսեւորումները Հայաստանում»: [19] Եվ հայկական «Քոչարի» պարը հնարավոր է համալրի վերոհիշյալ ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկը: 2015 թվ. մայիսի 16-ին հայկական լրատվամիջոցներում հայտված այս նորությանը անտարբեր չեն մնում հարևան պետության «ազգագրագետ-քարոզիչները» և 6 օր անց ադրբեջանական Haqqin.az առցանց լրատվամիջոցում ի պատասխան տպագրում է Բահրամ Բատիկի հեղինակած «Հայերը խլել են ադրբեջանցիներից նաև «Քոչարի» պարը» վերնագրով հոդվածը: Հակաձառնություն, զայրույթ ու հակաքարոզչություն պարունակող այս հոդվածում հեղինակը հայերին բնութագրում է հին հռոմեական հայտնի արտահայտության ադրբեջանական կողմին հատուկ և իրեն հարմար ձևափոխած տարբերակով «Եկավ, տեսավ, յուրացրեց»: Սրանով Բատիկը ցանկանում է ասել, որ հին ադրբեջանական տարածքում հայերը ընդամենը եկվորներ են: Այնուհետև ասում է, որ հանդգնորեն հայկականացնելով ադրբեջանական ազգային պարը՝ հայերը ընկում են ծիծաղելի իրավիճակի մեջ. «Ինչպես հայտնի է, հայկական քարոզչությունը երկար տարիներ փորձում է անհաջող կերպով ապացուցել, որ այդ ազգը Հարավային Կովկասի բնիկներից է, և իբր հայերը ապրում էին այստեղ հազարամյակներով, իսկ հին դարերում այս հողերում անգամ ունեցել են իրենց պետությունը «Մեծ Հայքը», որը կարծես թե ձգվում էր ծովից ծով: Իսկ ադրբեջանցիները քոչվորներ են, չունենալով իրենց սեփական տարածքները, եկվորներ են Հարավային Կովկասում: ...իսկ ադրբեջաներենից «քոչարի»-ն թարգմանաբար նշանակում է քոչվոր, թափառական: Եվ այսպես, եթե հայերը իրենց համարում են Հարավային Կովկասի բնիկ ազգ, ապա ինչպե՞ս իրենց մոտ հայտվեց քոչվորների պարը»: [20] Այս նույն հարցը կարելի է հակադարձել. «Եթե ադրբեջանցիները իրենց համարում են հինավուրց ազգ և մի տարածքում եղել են, կան ու կլինեն, ապա ինչո՞ւ ադրբեջանական ազգային պարի թարգմանությունն է «թափառական, քոչվոր»:

«Հայերը հայտ ներկայացնելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակ, որպեսզի «Քոչարի»-ն - դասվի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցիչների



շարքին, այն բացատրել են այսպես. «Քոչարին տղամարդկանց հայկական հնագույն ազգային պար է: Հազարամյակներ հետո այն չի կորցրել իր արժեքը, դեռ ավելին, դարձել է հայ ժողովրդի ազգային և մշակութային ժառանգությունը: «Քոչարի»-ի ակունքները բխում են Արևմտյան Հայաստանի Կարսի և Արդվինի շրջաններից: Լինելով ազգությամբ հայկական, «Քոչարի»-ն բառացիորեն թարգմանվում է որպես «խիզախ տղամարդ» :[21]

Հայկական մշակութային հակաքարոզչության դրսևորում կարող ենք համարել յուրաքանչյուր տարի կազմակերպվող «Եվրատեսիլ» երգի մրցույթի ժամանակ ադրբեջանական կողմի հոխորտանքները հատկապես այն ժամանակ, երբ Հայաստանը ներկայացնող արվեստագետը անմիջական առնչություն ունի Արցախի հետ: Մեր հարևան պետության առաջատար լրատվականներից [www.vesti.az](http://www.vesti.az)- ն հերթական հիստերիան ունեցավ, երբ արցախցի տաղանդավոր երգիչ Միշան Միքայել Գրիգորյանը, Հայաստանը ներկայացրեց «Մանկական Եվրատեսիլում»: Հոդվածի հեղինակ Իսմայիլ Ալիևը, իր նախնիների հանցագործություններն վերագրելով Ղարաբաղի հայերին, գրում է. «Միշային երբեք չեն պատմի իր ցեղակիցների կողմից խոջալուում կազմակերպված ցեղասպանության մասին: Հակառակորդը կիրառում է տարատեսակ ուղղություններ մեր երկրի նկատմամբ սադրանքներ իրականացնելու համար, որոնց նպատակը ադրբեջանական օկուպացված տարածքներում տիկնիկային ռեժիմի մասին ազդարարումն է: Այս տարածքներում իրականացվել են էթնիկական զտման քաղաքականություն, սպանել են կանանց , ծերերին ու երեխաներին: Ի դեպ, երեխաների մասին: Արդեն երկու տարի է աշխարհի հայերը սադրիչ գործողությունների համար որպես գործիք օգտագործում են երեխաներին: Այս հաճելի, մաքուր հոգով էակները նույնիսկ չեն պատկերացնում, որ համարվում են քաղաքական սադրանքի մասնակիցներ»: Իսկ վերջում ադրբեջանցի լրագրողը մեղիականիսատեսումների գիտակի պաշտոնում վստահորեն հայտարարում է. «...Իսկ Միշան կշարունակի երգել: Երգել դահիճների բարձրագույն հովանու ներքո... »: [22]

Այսպիսով՝ ադրբեջանական առցանց լրատվամիջոցներում տեղ գտած հայկական մշակութային հակաքարոզչությանն առնչվող նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ մեր հարևան պետությունը շարունակում է պատմությունն ու ներկան կեղծելու քարոզչամեթոդային կատարելագործումը՝ պատմական փաստերը և ճշմարտությունը ներկայացնելով տեղեկատվական պատերազմի շրջանակներում, նախահարձակ ու նենգադավ լինելով նաև տեղեկատվական- քարոզչական դաշտում: Եթե մեկ ամսվա կտրվածքով ադրբեջանական առցանց լրատվամիջոցներում կարելի է հանդիպել 10-15 հակահայկական քարոզչական բնույթի նյութերի, ապա հայկական առցանց լրատվամիջոցները, չգբաղվելով հակաադրբեջանական քարոզչությամբ, հրապարակում են սակավաթիվ հակազդող նյութեր: Տեղեկատվական գործողությունները ոչ միայն իրական փաստեր և ճշմարտություն, այլև հարձակողական ոճին բնորոշ լրացուցիչ քայլեր պետք է ընդգրկեն [23], քանի որ հակառակորդը տեղյակ է, թե ինչպես կարելի է հարվածել, ինչպես ստեղծել պատմական փաստերի խառնաշփոթ և հասնել առավելագույն արդյունքի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դ.Դեմոյան, «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին», Եր., 2005, էջ 66
2. [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=5055](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=5055)
3. Զիա Բունիաթովը, ով Ադր. ԽՍՀ ԳԱ Մերձավոր և Միջին Արևելքի ինստիտուտի տնօրենն էր, Ադրբեջանի Կենտրոնի պատվերով ազգայնամուլական քարոզչական քաղաքականություն էր վարում, մասնավորապես, ադրբեջանցիների՝ իբրև Կովկասյան Աղվանքի հետնորդների 1930-ականներին ստեղծված տեսության վերաշրջանառման միջոցով: Նրա նախաձեռնությամբ ու հեղինակությամբ էին հրատարակվում և վերահրատարակվում «պատմագրական» գրքեր, որոնցում, մասնավորապես, հայերը ներկայացվում էին որպես աղվաններ:
4. [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/XXI%20Dar/06\\_2009.pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/XXI%20Dar/06_2009.pdf)
5. Նույն տեղում:
6. <http://www.virtualekarabakh.az/> Памятники Карабаха. §...до XIX века армянская этническая группа в Нагорном Карабахе никогда не существовала. Пользуясь тем, что автохтонские албаны Карабаха были христианами, туда начиная с XIX века, было переселено множество армянских семей. Наглядным доказательством того является памятник, воздвигнутый в 1978 году армянами в Нагорном Карабахе в селе Марага Агдеринского района (Мардакерт), в честь первых 200 семей (армянских семей), переселившихся в 1928 году из города Марага Ирана в Карабах».
7. [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/XXI%20Dar/06\\_2009.pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/XXI%20Dar/06_2009.pdf)
8. Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը. Եր., 2009, էջ 29
9. <http://www.virtualekarabakh.az/> История христианства Карабаха. §Ученые, исследовавшие архитектурные памятники Кавказской Албании, заявили, что эти памятники по многим характерным особенностям и методам архитектурного планирования отличаются от армянских религиозных архитектурных памятников. Эти памятники по всем историческим признакам относятся к национальному культурному наследию нашего народа. В числе этих памятников можно назвать Амарасский монастырь в Ходжавендском районе, Гянджасарский монастырь в Агдеринском районе».
10. <http://www.virtualekarabakh.az/> Архитектура Иревана, «На исторической территории Азербайджана, ныне называемой Республикой Армения, находилось множество крепостей, городов-крепостей...»
11. <http://bakililar.az/ca/photos/dashsalahli.html> Фрагмент подлинной плиты с церкви в селении Даш Салахлы Казахского района
12. <http://forum.bakililar.az/index.php?showtopic=98051&page=2> Армяне Гарабага и азербайджанцы Северного Азербайджана являются, так сказать, единоутробными братьями.
13. <http://news.day.az/> Еще одна фальсификация: армяне ищут несуществующий город, В голодающей Армении с этой целью были выделены 30 млн. драм.
14. <http://aze.az/> Посягательства Армении на культуру Азербайджана продолжают, «На сей раз армянские деятели присвоили себе национальный азербайджанский инструмент балабан, назвав его неблагозвучным "дудуком"».
15. <http://aze.az/> Посягательства Армении на культуру Азербайджана продолжают, «Наджафов напомнил, что школа балабана была впервые создана по инициативе великого азербайджанского композитора Узеира Гаджибекова еще в 1937 году».
16. <http://aze.az/> Посягательства Армении на культуру Азербайджана продолжают, Еще в XI веке в "Диване" Г.Тегризили есть упоминание о балабане.

17. <http://aze.az/> Посягательства Армении на культуру Азербайджана продолжают, Также поэт Гази Бунханендин, живший в XIV веке, неоднократно в своих стихах прославлял этот инструмент.
18. Հմայակյան Հասմիկ «Զրույցներ հայ մշակույթի մասին (հարցազրույցների ժողովածու)». Եր., 2008, էջ 33-34:
19. <http://www.panorama.am/> 4 հայկական արժեք ՅՈՒՆԵՍԿՕ–ի ոչ նյութական մշակութային ժառանգությունն է համարվել
20. <http://haqqin.az/> Армяне отняли у азербайджанцев и танец §Кочари», §Пытаясь столь наглым образом арменизировать азербайджанский народный танец, армяне ничуть не смущаются тем, насколько нелепо выглядят их претензии. Как известно, армянская пропаганда долгие годы пытается безуспешно доказать, что этот народ является автохтонным на Южном Кавказе, мол, армяне проживали здесь тысячелетиями, а в древности даже имели на этих землях свое государство §Великая Армения», которое вроде бы простиралось от моря до моря. А азербайджанцы – это кочевники, не имевшие собственной территории, пытаются утверждать армагитпроп, и они пришлые на Южном Кавказе. «...в переводе с азербайджанского «кочари» - это кочевник. Так что если армяне считают себя оседлым народом на Южном Кавказе, то каким же образом у них мог появиться танец кочевников?»
21. <http://haqqin.az/> ЮНЕСКО готовится признать Кочари армянским, ««Кочари – один из древнейших армянских народных мужских танцев. Спустя тысячелетия, он не утратил своего значения, более того, стал национальным и культурным достоянием армянского народа. «Кочари» берет свои истоки из областей Карс и Артвин Западной Армении. Являясь этнически армянским, «Кочари» дословно переводится как §храбрый мужчина», - объясняется в армянской заявке.
22. <http://www.vesti.az/news/319262>, Армяне используют детей и российских звезд против Азербайджана, Мише никогда не расскажут о геноциде, устроенном его соплеменниками в Ходжалы, Противник использует различные направления для осуществления провокаций в отношении нашей страны, целью которых является заявить о марионеточном режиме на оккупированных азербайджанских территориях. На этих самых территориях проводилась политика этнической чистки, зверски убивали женщин, стариков и детей. Кстати, о детях. Вот уже два года мировое армянство использует детей в качестве инструмента провокационной деятельности. Эти милые, чистые душой создания даже не подозревают, что являются участниками политической провокации.... А пока Миша будет петь. Петь под покровительством палачей...
23. [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=2237](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2237)

## ԱՄՓՈՓՈՒԳԻՐ

### Հայկական մշակույթի հակաքարոզչությունը ադրբեջանական առջանց լրատվամիջոցներում Շուշան Ասկարյան

Հոդվածում ներկայացված է ադրբեջանական առաջատար առջանց լրատվամիջոցներում տեղ գտած հայկական մշակույթի հակաքարոզչությանն առջվող հրապարակումները, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ մեր հարևան պետությունը շարունակում է պատմությունը և պատմական ընթացքը կեղծելու քարոզչամեթոդների կատարելագործումը՝ պատմական փաստերը և ճշմարտությունը ներկայացնելով տեղեկատվական պատերազմի շրջանակներում, նախահարձակ ու նենգադավ լինելով նաև տեղեկատվական-քարոզչական դաշտում:

**РЕЗЮМЕ**

**Пропаганда антиармянской культуры в азербайджанских интернет СМИ  
Шушан Аскарян**

**Ключевые слова:** *культура, пропаганда, антипропаганда, информационная политика, СМИ, информационное поле*

В статье исследуется пропаганда антиармянской культуры в ведущих азербайджанских онлайн СМИ, изучение которой позволяет говорить о том, что наш сосед представляет правду как часть информационной войны.

**SUMMARY**

**The propaganda of anti-Armenian culture in the Azerbaijan internet mass-Media  
Shushan Askaryan**

**Keywords:** *Culture, propaganda, anti-propaganda, information policy, mass-media, information field*

The article examines the publications of the propaganda of Anti-Armenian culture in the Azerbaijan's leading online media. The study enables to state that our neighboring state continues to falsify the historical evidence presenting it as a part of the information war.

ՄԱԿԱՐ ԲԱՐՆՈՒՂԱՐՅԱՆԻ «ՔՆՆԱՂԱՏՈՒԹԻՒՆ ՔՆՆԱՂԱՏՈՒԹԵԱՆՑ»-Ը ԵՎ 19-րդ ԴԱՐԱԿԵՐՁԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՂԱՇՏԸ\*

Զինախոս Բալայան

**Բանալի բառեր` 1886թ., գրաբար, աշխարհաբար, գրախոսություններ, «Գաղտնիք Ղարաբաղի», պատմական ուսումնասիրություն, Լեո, «Վէ՞պ թէ պատմութիւն», հերմենեւտիկ, աքսիոլոգիական:**

*Մ. Բարխուդարյանի «Քննադատութիւն քննադատութեանց» երկի մեջ կատարված առարկումներն իր մեկնաբան Լեոյին բավական լուրջ գրականագիտական քննումներ են ներկայացնում թե՛ որպէս պատմական փաստեր, թե՛ որպէս քննական մտքի ու գեղարվեստական խոսքի հմուտ դրսեւորումներ: Ահա մի օրինակ եւս. «Շուշին պաշտպանողն ոչ եթէ խանն էր, այլ Հայերն ինչպէս Աղա-Մամատ-խանի, նոյնպէս Աբաս-Միրզայի և 1826-ին Ռէուտի ժամանակ: Եթէ արդարև, ըստ պարոնի այդ խանն էր Շուշին պաշտպանողն, ի՞նչ պատճառաւ այդ իսկ խանն Շուշուց փախաւ 1806-ին, բայց զլխատուեցաւ Հայ-քաջերի թրով: .... 1795-ին Շուշում գումարուած Հայ մելիքներն և զօրքն «փայտից տաշած արծաններ չէին», որ թողնէին խանին «բնաջինջ անել» խնածախցի և Պալլուճեցի քաջերի գերդաստանները»[1]:*

*«Գաղտնիք»-ում հետաքրքիր մաս են կազմում գինվորական ժողովները: Լեոն զարմացած է, թե ինչու ժողովը նախագահող ատենաբանը գտնում է, որ «Աղա-Մամատ-Շահը խոստացել է ջնջել Ղարաբաղում ճրռ-խանութիւնը և ճրռ-մելիքութիւնը, .... ջնջել իր երկրի մահմետական կառավարութիւնը յօգուտ հայերի, որոնց խաթրին խօսք է տալիս երկրից արտաքսել իր հաւատակիցներին, որոնք հաստատ բնակութիւն ունէին հիմնած»[2]: Այդուհանդերձ, գրքում հերոսների կերպարային բնութագրումները տրված են համոզիչ եւ տիպական շերտերով, սյուժեն` գեղարվեստական հետաքրքիր հնարանքներով, ժամանակի մարդուն ու նրա ներաշխարհը բացահայտող գծերով:*

*Լեոն պետք է հասկանար, որ պարսից շահերը ոչ հանուն հայերի սիրուն էին այդ ամենը ցանկանում կատարել, այլ որ վախ էին զգում Ղարաբաղի խաների հեռուն գնացող քաղաքականությունից, օրավոր հզորանալուց եւ ինքնուրույն քաղաքական միավոր դառնալուց: Շահերը ոչ թե «խաղալիք» էին մելիք Մեջլումի ձեռքին, այլ գնահատում էին վերջինիս ճիշտ դատողությունները եւ նվիրվածությունը ու հակված էին Ղարաբաղում օրավոր հզորացող եւ իրենց արարքներում ազատ ու անպատասխանատու գործող խաներին վերացնել, հեռացնել Ղարաբաղից: Մանավանդ որ այդ վտանգը նաեւ Պարսից պետության դեմ էր ուղղված:*

*Լեոն ավելի է զարմանում արցախցի շինականի, զորավարի ցուցաբերած մտքի ճկունության վրա, երբ վերջինս (տվյալ դեպքում` Բեկնազարյանը նաեւ) բացատրում է, որ օտարը միշտ օտար է մնում, ունենում է իր կեղծ քաղաքականությունը եւ գործիք է դարձնում արցախցու նման անքաղաքագետ, դյուրահավատ, պարզ եւ խեղճ արածներին:*

*Եվ զարմացած հեղինակի ներկայացրած գեղարվեստի բարձր ոճից, հերոսների ճկուն ու խելացի լեզվական արտահայտչամիջոցներից Լեոն գրում է. «Որքա՛ն զարմանալի բառեր: Այն խաւար ժամանակներում, այդ տգէտ, «խեղճ և պարզ» շինական-*

\* Հոդվածն ընդունվել է 25.12.16:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնը:

**ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

ների մէջ ո՞րտեղից ընկան այդ նուրբ խօսքերը՝ «քաղաքականութիւն, անքաղաքագէտ»: Երա՞զ է սա թէ ինչ: Այդ իսկ քաղաքականութիւն բառը անյայտ էր մինչև անգամ Աշտարակեցի Ներսէս վարդապետին (յետոյ կաթողիկոս), որ ինն տարի դրանից յետոյ գրում է. «յուր եղբայր, առ ինչ արդեօք պարտաւորեցի նա առնել զայնպիսի անուանեալն **փոլիթիքայ** ընդ հակառակորդս մեր»[3]:

Ինչպէս հոգեւոր եւ աշխարհիկ գործիչներից, գիտնականներից շատերը, Ն. Աշտարակեցին եւս տվյալ դեպքում օգտագործել է արդեն նաեւ ոչ հայաստանց, այլ օտարահունչ բառը, դա չի նշանակում, որ նա չգիտեր «փոլիթիկա»-ի հայերեն՝ «քաղաքականություն» հոմանիշ բառը: «Բայց սպասեցէք, պարոններ, ահա և նոյն այդ բռի գիւղացիք էլ պիտի խօսեն քաղաքականութեան, պօլիտիկայի կամ դիպլօմատիայի վրայ»[4],- հեզնում է «Գաղտնիք»-ի քննադատը:

Լեոն հերքում է նաեւ Արցախի գորական ուժերի մասին տվյալները՝ դրանք միտումնավոր չափազանցություն համարելով:

Գրում է. «Արդութեանցն գրած է թէ Մեծն-Պետրոս խոստացած էր տալ հայոց իր օժանդակ... 40.000 ռուս գորք.

Երիցեանն թէ 25.000, Բէկնագարեանն թէ 15.000:

.... Այստեղից պարզ երևում է, որ «Գաղտնիք»-ի հեղինակը զօռով քջացնում է օտար պետութեան խոստացած օգնութեան քանակությունը, որպէս զի իրան յաջողի այն ժամանակուայ Արցախը ցոյց տալ իբրև մի մեծ ոյժ ունեցող իշխանութիւն: .... Երևի հէնց այդ պատճառով «Գաղտնիք»-ը ոչ մի տեղ չի նկարագրում մահմետականների տուած սաստիկ հարուածները, այնպէս որ կարդացողը մնում է զարմացած, թէ էլ ի՞նչ էին ուզում մելիքները, երբ այդ տեսակ խաղաղ կեանք էին վարում և այդքան զօրեղ էին»[5]:

«Գաղտնիք»-ում Արցախի գորքի թվաքանակը Բարխուդարյանը ճիշտ է համարում՝ չնայած Լեոյի հերքմանը. «... անհերքելի ճշմարտութիւն է, որ մեր երկիրը-Կովկասեան նահանգը գրաւելու ժամանակ Ռուսաց զօրքն 15.000-ից աւելի եղած չէ: Այդ զօրքի պակասութիւնը լցրած է տեղական Հայ զօրքն: Այս ճշմարտութիւնը չեն ուրանում և Ռուսաց և Պարսից ժամանակակից յիշատակարաններն, սկսեալ 1795-1826 թիւերն: Ուրեմն այս եզրակացութեամբ ճշմարտութիւնը շահում է Բէկնագարեանցն»[6]:

Լեոն «Գաղտնիք»-ի հեղինակին մեղադրում է գրագողության մեջ՝ պնդելով, թէ Բէկնագարյանցը հետո շարունակում է իր պատմությունը շահերի եւ ռուսների հետ հայերի ունեցած հարաբերությունների մասին՝ համարյա բառ առ բառ կրկնելով Րաֆֆու խոսքերը:

Բարխուդարյանը վկայակոչում է Արցախի եւ շրջակա պետությունների զինվորական ուժերի վերաբերյալ Եսայի կաթողիկոսի, Արդոթյանի, Երիցյանի, Սրայիոնի, այլոց կարծիքները՝ տալով ճիշտ մեկնաբանություններ: Հետեւելով Լեոյի կողմից արված դիտողություններին՝ նշում է, որ նա, գլխավորապէս խոսելով քաջերի մականունների մասին, չի ընդունում երեք կետ՝ քաջերի մականունները, սրանցից ոմանց ուժերը եւ իր գրած «Ղարաբաղի բարբառը» (եր. 30-37):

Ապա քաղվածք է անում Լեոյից, որում պնդվում է, թէ ինքը չի կարող ուշադրություն չդարձնել նաեւ այդ ժողովին մասնակցող քաջերից մի քանիսի անվան վրա եւ կարծում է, որ դրանով լավ է ճանաչում այդ փիլիսոփա-քաղաքագետ-հրաշակերտ-դյուցազուններին: Բարխուդարյանը բերում է բավականին փաստեր, որոնք խոսում են վիպապատմական հերոսների կյանքի, կենցաղի, նիստ ու կացի, բնավորության գծերի, հայրենասեր վարքի, միաբան ու անմիաբան լինելու, ապա նաեւ նրանց վարած կռիվների ու դրանց շուրջ ստեղծված պատմությունների մասին՝ ըստ այդմ էլ բացա-

հայտումներ կատարելով հերոսներին տված մականունների շուրջ: **Իսկ գրքում առկա մականունները ժողովրդական հերոսներն ստանում էին ըստ իրենց կատարած արիական սխրանքների, գործադրած հնարքների:**

«Ա. Շատ անծինք, ըստ տեղւոյն և ըստ կլիմային և միանգամայն ըստ ունակութեան, սեպիականացրած են իւրեանց առանձնահատկութիւններ, իսկ տեղական ժողովուրդն առնելով իւրաքանչիւրի այդ արտաքին և ներքին առանձնահատկութիւնից, դրօշմած է նոցա վերայ առանձին առանձին և զանազան մականուններ: Մանաւանդ Ասիոյ մէջ գրեթէ, չկայ մի ժողովուրդ, որ գործադրած չլինի այդպիսի մականուններ: Բայց մեզ հասած են շատ սակաւ անուններ - միայն պատմութեանց և վէպերի մէջ գրուածներն-իսկ անյայտացած են դարերի հողովմանց հետ բազմաթիւ, անգիր անուններ այդպիսիներից...»[7]: Քննարանը բերում է մականունների շարք տարբեր պատմիչներից: Օրինակ «Գող-Վասիլ, Գայլ-Վահան, Աշոտ-Երկաթ, Աշոտ Ողորմած, Անողորմ-Պետրոս, Կայծակ-Գալուստ վարդապետ, .... Յոհան-Ոսկեբերան »: «.... Զփլաղ, Ղարա Սահաթ» (Առաք. պատմ., գլ. Է): «Դժնեայ Սլաք» (Խոր., գիրք Բ, գլ. Ը): «Գոմէշ Տիկին» (Ուռհայ. տպ. Երուս., եր. 585): .... «Կարմրակէլ», «Թոխմազ Սահմուտ» (Զաք. Սարկաւազ): Բ. .... Արդէն պատմական ուժեղներ եղած են Սամսոն, Հայկ, Մեծն-Տիգրան, Վահագն, Տորք, .... Տրդատ....: Մի՞թէ Արցախում սակաւ են ուժեղներ, որոց մենք ականատես ենք.- Ալիաթիւն-վարդապետն, Քէշիշ-օղլին, .... Պալլուճեցի Սազի Ալուխանեանն, Մանասանն, ևն., Խնածախցի Ասրի Բէլլուեանն, Քէօջարի Մանուչարեանն....: Դեռ քանի՜ քանի ուժեղներ կան մեր մէջ Արցախում, զորս ոչ պարոնն գիտէ և ոչ անհոգ և անհետաքրքիր մարդիկ: Եթէ Արցախի ուժեղներն ևս ունեցած լինէին Յունաց և Պարսից Աքիլլէսների և Զալերի, Սամսոնի և Տրդատի բախտը, այսօր Հայ գրականութեան մէջ փայլած կը լինէին Արցախի տղամարդոց ուժեղութեան համբաւներն: Ահա այդպէս են ուրեմն Բէկնազարեանցի նկարագրած քաջերի մականուններն ու ոմանց ուժերն ևս»[8]:

Լեոն հեզնում է «Գաղտնիքի»-ի հեղինակի լեզվախմացութունը՝ միաժամանակ մեղադրելով թարգմանչին. «Ղարաբաղցին գրելիս աշխատում է որքան կարելի է պահել իր գործածական լեզուն. .... մենք չենք հաւատում որ Ապրեսը «Տէտէ» գրած լինի»[9]:

«Մենք չենք զարմանում, որ պարոնն,- հերքման գնալով շարունակում է իր խոսքը թարգմանիչը,- բոլորովին վստահ, ձեռնարկում է իւր կարողութիւնից բարձր մի խնդրի, որպիսի է լեզուաբանական խնդիրն: Նա չարաչար սխալուում է, երբ ենթադրում է իբր թէ մենք հետևած ենք Տաճկահայոց աշխարհաբար բարբառին: Պէտք է նա իմացած լինէր, որ իւրաքանչիւր հեղինակ պարտաւոր է իբրև ամենախոնարհ ծառայ հպատակիլ **հին մատենագրական, նոր գրականական, տեղական եւ օտարական** լեզուների կանոններին և պահպանել ամեն մինի հնչմանց և արտասանութեանց ձայները: Ապա թէ ոչ նորա գրածն կը լինի մի այլանդակ խառնուրդ:

**Հին մատենագրական և նոր-գրական.** բան, գործ, գալ, ուլն, դա-տարկ, գա-ւաթ, լաւ, ևն:

**Արցախի-տեղական.** բէան, գէործ, գեալ, հէօլ, .... լէաւ, ևն:

.... **Օտարական.** Գէոր-գի» (Լաստիվերոցի), «Գէօր-գի, Էօ-մար».... (Զաքար. Սարկ.), .... Դէ-լի Ղար-տաշ, ևն. (Շահխաթունեան): Սոյն կարգին են պատկանում և Քաջերից ոմանց անուններն, ինչպէս են Տէօվ, Նէառ, Տէ-տէ. և ոչ թէ ըստ պարոնի Տով, Նառ, .... եր. 32: ևն»[10]:

Լեոն, հետեւելով «Գաղտնիք»-ում պատմության ոգին ու անցքերը մեկնելու նպատակով դիտված «ընդհանուր ակնարկին», նյութից հանելով որոշակի մտքեր, բանաձեւում է իր այն ընդհանրացումը, որ պարսիկների, հռովմեացիների, հույների, օսմանցիների, արխազցիների եւ այլոց անընդհատ արշաւանքները համարյա թե անկարող

են եղել վնասել Մեծ եւ Փոքր Սյունիքների կյանքին:

Լեոն «երևելի պատմագէտի» (իմա՝ Բեկնազարյանցի) գրածը համարում է «մի նշանաւոր սուտ, որ համարեա .... յայտնում է թէ հեղինակը ժամանակակից չէ» [11]:

Որպեսզի ընթերցողին պարզի «Գաղտնիք»-ում ցուցված հիմնական գաղափարը, Բարխուդարյանը հարցի վերաբերյալ ստիպված մեջբերում է այն հատվածը, որը Լեոն միտումնավոր բաց է թողել, եւ որում նշված են Արցախի կյանքի երեք կողմերին հարվածող արտաքին եւ ներքին գործող գործոնները. «Պարսից, Հռովմայեցւոց, Յունաց, Օսմացւոց, Ախիսագցւոց, Վրացւոց և Տաղստանցւոց անընդհատ արշաւանքներն, որք իւրեանց անդինադրելի գորութիւններով այնքան վնասներ պատճառեցին Հայաստանի բոլոր մասերում բնակվող Հայ ժողովրդեան կրօնական, քաղաքական և բարոյական համազգային կենաց, արտաքին գոյով, համարեա՝ թէ անկարող եղած են վնասել Մէծ և Փոքր-Սիւնեաց և ոչ մի կեանքին»[12]:

«Գաղտնիք»-ից (էջ 71-72) բերված հատվածները հերքում են Լեոյի մտքերը եւ բացահայտում նրա՝ «Գաղտնիք»-ը մերժելու նպատակները:

Բարխուդարյանը կարծում է, որ Լեոն դիտմամբ է բաց թողել «արտաքին» եւ «ներքին» բառերը եւ չըմբռնելով պատմության ոգին՝ հանգում է այն եզրակացության, որ Հայաստան արշավող բռնավորները «վնասել են» Մեծ եւ Փոքր-Սյունիքների կյանքին, եւ ստախոս է համարում Բեկնազարյանցին:

Նա համոզված է ներքին թշնամու հասցրած հարվածների կործանիչ լինելու մեջ. «Ո՞վ այնքան վնասեց Հայաստանի գինուորական կեանքին.- եթէ ոչ միայն մի համարիւն Հայ, մի ներքին թշնամի Մեհրուժան: Ո՞վ սպանեց Արշակունեաց հարիւրաւոր տարիներ ապրող թագաւորութիւնը, **արտաքի՞ն** թշնամին թէ՞ **ներքինն**....

Մինչդեռ Հայաստանում, ամենուրէք մեռած էր հայկական, մարմնաւոր իշխանութիւնն, երկու Սիւնիքում դեռ կենդանի էր Հայ **մէլիքութիւնն**: Երբ զանազան տեղերում եղած էր և լինում էին հայկական կրօնապիտանութիւններ, երկու Սիւնիքում յարատւում էին **կրօնական և բարոյական** կեանքերն: - Հարկավ, Բարխուդարյանը ճիշտ դատողութիւններ է անում: Հասուն տարիքում Լեոն այլ կերպ կմտածեր, քան «Վէ՞պ թէ պատմութիւն» գրելու՝ 25-26 տարեկան հասակում... Իսկ դա գիտնական կոչվելու համար անչափ վաղ էր...- Ուրեմն,- շարունակում է քննաբանը,- այդ երեք կեանքին թաթարներն վնասեցի՞ն թէ Լանկ-Թամիւրներն, Պարսից Շահե՞րն թէ Օսմանեան Սարը-Մուստաֆաներն: - հեղինակն ասում է ո՛չ սոքա և ո՛չ նոքա. քանզի դոցա անյայտանալուց շատ յետոյ դեռ ապրում էին երկու Սիւնիքում **մէլիքութիւնն, կրօնական և բարոյական** կեանքերն, այլ վնասեցին Մելիք-Շահ. Գ. ճըռ-մելիքներն և ճըռ-կղերականներն-**ներքին** թշնամիներն»[13]:

Այնուհետեւ Լեոն հիշեցնում է Ղարաբաղը ավերողներին՝ Լենկթեմուրին, որ անցել է այդ երկրով, Շահ-Աբասին, որ արշավել է դեպի Թիֆլիս, թաթարներին, որոնք աշխարհավեր սրածութիւնից հետո խաչենի եւ Հաթերքի իշխան Զալալին սպանեցին:

Թարգմանիչը հաճախ է մեկնաբանություններ անում այդ ամենի շուրջ: Լեոն հեզմական շեշտով գրում է. «Մեզ ասում են թէ Ապրես Բէկնազարեանցը ականատես պատմիչ է և թէ նրան դեկավարող հայրը «երևելի պատմագէտ» էր: Սակայն ինչո՞ւ այդ նորագոյն Եղիշէն Զաքարիայի պէս պապանծուել է այս սոսկալի գազանութիւնների մասին.... ընդհակառակն **մի շարք վիպական գործողութիւններով** նա ցոյց է տալիս, թէ այդ «հրէշ»-ը խոնարհուել էր մի հայ մելիքի առաջ, որին յանձնել էր իր բոլոր իրաւունքները, իր կամքը, իր բոլոր գօրքը (եր. 30), մի խօսքով ամբողջ այդ արշաւանքի գլուխ էր կանգնացրել նրան»[14]: Նկատելի է, թե ինչպէս էր Լեոն ամեն կերպ փորձում «Գաղտնիք»-ը **վիպական գործ համարել (որն, անշուշտ, այդպիսին է), այն անալոժեք դիտելու համար:**



Ի պատասխան Լեոյի թարգմանիչը երկկողմանի բնույթ հասկանալի օրինակներ է բերում տարբեր հեղինակներից՝ բացատրում է դրանք, հիմնավորում բնագրային օրինակով, զուգահեռ բացահայտելով հերոսներին քնարական եւ պատմական, առասպելական երանգներով: Իսկ հերոսները միայն հայ ազգության չէին ու մի ժամանակաշրջան չէին ներկայացնում. ականայից թարգմանիչը դարձել էր իր հայրենակից պատմիչի արժեքավոր գրքի պաշտպանը: Կարծում ենք Ա. Բեկնազարյանը ճիշտ է կռահել, թե ում վստահի իր գրքի՝ դառն ու փորձություններով լի «Գաղտնիք Ղարաբաղի»-ի ճակատագիրը. ««Գաղտնիք»-ի հեղինակը ներկայացնում է Ներքինի-Շահի լաւ կողմերի հետ եւ վատը. «...հետըզհետէ Կուր գետի մէջ նետուեցան **Շահի անողորմ** հրամանաւ շատ վրացի ազնուական, կղերական և ժողովրդական մարդիկ: Շահն, կամրջի վերայ նստած, զուարճանում էր այս **ցաւալի տէսարաններով** ևն.» («Գաղտնիք», եր. 165-166): Բայց յայցանէ պախարակում է և սոյն Շահի անլուր բարբարոսութիւնը և անխիղճ անզթութիւնները - «Եգիտ-խրմանի»-ն (մարդաշան) (նոր պայտած ձիերով կոխկրտել է անզեններին- Ջ. Բ.), նոյն երես 232-233:

Այժմ,- ընդհանրացնում է Մ. Բարխուդարյանը,- թողնում ենք ընթերցողաց վճռել: Ո՞վ է շատ յանցաւորը:- «Սի հայ, մի քրիստոնեայ գրող շատ յանցաւոր է»: Թէ մի հայ, մի քրիստոնեայ կարդացողն շատ յանցաւոր է: Այդ արարմունքն առիթ է տալիս մեզ ասել կամ պարուն կարողում է թղթի մի երեսը միայն... կամ ձգնում է պարզամիտների համարմանց մէջ ստորացնել «Գաղտնիք»-ի վարկը»:

Երբէք զարմանալի երևոյթ չէ, որ Շահն պարզևած է պատուանշան և Մելիք-Մեծ-լումին և իւր զօրքերն կոտորող Բէկնազարեանցին: Արդէն շատ վեհապետներ վարուած են և վարում են այդպիսի քաղաքականութեամբ, այսինքն է քաջ մարդիկ ծեռք առած են քաղաքական նպատակներ յառաջ տանելու...»[15]:

Րաֆֆու հերքումների վերաբերյալ Բարխուդարյանը դիտում է. «Պարոն Րաֆֆին կարծում է թէ 1795-ին Ներքինի-Շահն ունեցած չէ շքանշան, որը պարզևէր Մելիք-Մեծ-լումին: Արդէն 1188-ին Ռուբինեան Լևոն թագաւորն կրում էր Ս. Պետրոսի նշանը, որը դրկած էր Իննևկենդիոս Գ. պապն (Սիսուան, եր. 484, էջ 2): Հաստատում են որ շքանշանն գործածական դարձած է Եւրոպական տէրութեանց մէջ սկսած ժէ. դարում Գաղղիացւոց Լուդովիկոս ԺԴ-ից և սորա մինիստր Լուվայիցն. Ռուսաստան մտած է Մեծին-Պետրոսի օրով և ապա մտած է Պարսկաստան փոքր ինչ յետոյ»: Եվ հետեւութունը. «Ապա ուրեմն երբէք **զարմանալի չէ**, որ Ներքինի Շահն ևս, իւր քաղաքական նպատակները յառաջ տանելու քաղաքականութեամբ, պարզևած է նշաններ և Մելիք-Մեծ-լումին և իւր զօրքերը ջարդող Բէկնազարեանցին»[16]:

Թարգմանիչը մեկ առ մեկ ժխտում է Լեոյի դիտողությունները պատմության մեջ եղած փաստերի վերաբերյալ ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնելով իրերի ու երեւոյթների ճշգրիտ մեկնության վրա: Իսկ Լեոն նշում է. «Ամբողջ Թիֆլիսը քարուքանդ անող Աղա-Մամադ-Շահի գործերը նկարագրում են ժամանակակից ականատեսները և ի՞նչպէս են նկարագրում: .... Կայ և իշխան Եգոր Խուբովի հետաքրքիր յիշատակարանը, որի ռուսերէն թարգմանութիւնը տպուել է Պետերբուրգում՝ 1811 թուին «Описание достопамятныхъ происшествіи въ Арменіи» վերտառութեամբ: Այդ երկու ճշգրիտ աղբիւրները ներկայացնում են Շահին մի մարդակեր գազանի պատկերով...: Եաղուր խանն էլ եղել է Շուշին պաշարող զօրքի մէջ, բայց յիշում է միայն Մելիք-Մեծ-լումին, որ Զաւադ-խանի հետ եկել էր «շահի դուռն»[17]:

Թարգմանիչը, առարկելով Լեոյին, բացատրում է, որ, քանի որ հայերն ասելի էին Յաղուր խանին, ոչ նա է Բեկնազարյանցին հայտնել իր հայ լինելը եւ ոչ էլ վերջինս է ինացել, որ նա հայ է: Հետեւապես երկուսն էլ չեն գրել այդ մասին:

Լեոն իզուր է կարծում, թե «Գաղտնիք»-ը փաստացի չի ներկայացրել Ադա Մահմեդ շահի արշավանքը ու նրա կատարած բարբարոսությունները քրիստոնյաների հանդեպ. դրանք ցույց են տրված Թիֆլիսի գրավման, ավերման ժամանակ եւ շարադրված են գրքի 165-166, 232-233 էջերում:

Ներքինի-շահի զորավարներից Յաղուբ խանը՝ այդ չարաբաստիկ հայը, որն իր խոստովանությամբ սկզբում ատում էր հայերին եւ զորքին դրդում էր կոտորել նրանց, որպես ականատես հայերի թշվառության մասին պատմում է հետեւյալը. «Մտանք Ղարաբաղի և Նուխու հողն՝ ինչպէս մորեխ... Քանի հազարաւոր գերի քրիստոնէայք... քրիստոնէայք են ասում, մի՞թէ բացի Հայոց ազգէն, ուրիշ մին քրիստոնէայ ազգ կար էն տեղանք: Քաւ լիցի: Ողորմելի Հայերն անտէր անտէրունջ... հա՛, Հայքն էին մեր գերիքն... Չկարծէս թէ էն ողորմելեաց ողբն ու աղաղակը չէր հասնում շահի ականջն: Երբէք փոյթ չէր նրան էնքան ողորմելեաց արտասունքն, արդարութիւնը և իրաւունքը չէր գրած նրա գրքումն...»: «... Հայերին այն ժամանակ մօտեցայ և ծանօթութիւն տուի որ հայ են, երբ Շահն սպանուած էր Շուշում և ես ամեն գոյքից և հագստից անգամ կողոպտուած փախչում էի գլուխս գոնէ ազատել»[18]:

Ս. Բարխուդարյանը, Լեոյի հերքումների վերաբերյալ իր փաստարկումները զարգացնելով, «Քննադատութիւն քննադատութեանց»-ի էջերում փորձում է տեսականորեն-գրականագիտորեն «Գաղտնիք»-ը գնահատել ըստ ունեցած արժանիքների, այդքանով հանդերձ, ականայից հաստատելով նաեւ գրքի վիպականության մասին Րաֆֆու եւ Լեոյի «գնահատումները»: Այսպիսով, վիպական լինելու դեպքում միայն նրանք կարող են «Գաղտնիք»-ը անարժէք համարել (ամբողջ բանակովը դրա շուրջն է պտտվում. վկան նաեւ Լեոյի գրքի վերնագիրը՝ «Վէ՛պ թէ պատմութիւն»), որ ապացույց է Րաֆֆու եւ Լեոյի կողմից ջանադիր կերպով հակառակը ապացուցելու՝ «Գաղտնիք»-ը վիպական գրվածք համարելու ջանքերի հավաստիությանը, որովհետեւ, ըստ Րաֆֆու եւ Լեոյի, եթե ապացուցվի, որ «Գաղտնիք»-ը պատմականություն-փաստացիություն չունի, ուրեմն հորինվածք է՝ չեղած երեւոյթների մասին, ժողովրդի հարազատ պատմությունը չի ներկայացնում, վիպական գործ է, ուստի անարժէք է այն, որոշ տեղերում էլ՝ միմիայն արտագրություն է «խամսայի մելիքություններից»: Այսպիսով, եթե «Գաղտնիք»-ը, ըստ տեսաբանների, վիպական գիրք է (անշուշտ նաեւ այդպիսին է), ապա մելիքությունների հարազատ պատմությունը չի ներկայացնում՝ անարժէք է ու միայն «խամսայի մելիքություններին» է վերապահված ներկայացնելու Արցախի մելիքությունների հարազատ պատմությունը:

Յավոք սրտի, այս նույնը վերաբերում է նաեւ «խամսայի մելիքություններին», որը Րաֆֆին, գրականության միավոր համարելով, այնուամենայնիվ, ժանրը վկայակոչելով, այն անվանում է «Պատմական ուսումնասիրություն». ժամանակաշրջանի գրականության պահանջներից էր այդ բխում, ազգային գաղափարաբանության սկզբունքներից, թե՞ երկը արժէքավոր գտնելու գրական մոտեցումից, թե՞ օտարներին ազգային արժէքը միմիայն փաստացիության տեսանկյունից ներկայացնելու քաղաքական դիրքորոշումից: Բոլորով հանդերձ՝ երեւոյթը՝ քաղաքացիական այս կարեւոր վերաբերմունքը, պատմահայր Խորենացու գիտական պահվածքն է հիշեցնում՝ երկերը, վավերագրերը գնահատելի ընդունել առաջին հերթին պատմականության դիրքերից՝ այն տարբերությամբ, որ պատմիչը բարձր է գնահատել նաեւ հեթանոսական բանավոր մշակույթը՝ կյանքով հատուցելով: Երեւոյթը առկա է նաեւ Րաֆֆու, Ա. Բեկնազարյանի, Ս. Բարխուդարյանի եւ այլոց օրինակներում, Րաֆֆու դեպքում, ինչպես տեսնում ենք, հեղինակի կողմից գրական արժէք համարվող «խամսայի մելիքությունները» պատմական ուսումնասիրություն է դիտված, Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարա-

բաղի»-ին՝ վիպական գործ. հատկապես ժխտողական վերաբերմունք է ստեղծվել «Գաղտնիք»-ի շուրջ:

Ինչպես տեսնում ենք, թե՛ «Խամսայի մելիքություններում», թե՛ «Գաղտնիք Ղարաբաղի»-ում անպայմանորեն առկա են վիպապատմական տարրերը, որոնք առանց կասկածի վկայում են այդ երկերի բարձր արժեքը եւ հեղինակների ազգային շահերից բխող խնդիրների հետապնդումն ու լուծումը, ազգային ճակատագրի վերհանումը, Արցախի ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական, բարոյական, հասարակական, մշակութային կյանքի գեղարվեստականացումը:

Այդ երկերը գրականագիտորեն վերլուծելով, ըստ հարկի, օգտվել ենք աղբյուրագիտական, համեմատական, կառուցվածքաբանական, վերլուծական, վերազնահատուկ մեթոդներից, որոնց միջոցով ավարտին ենք հասցրել մեր ուսումնասիրությունը՝ օգտագործելով նաև նշանագիտական մեթոդը: Նշանագիտությունը (հիմնադիրներն են՝ ֆրանսիացի լեզվաբան Ֆ. Սոյյուրը-1857-1913 թթ. եւ ամերիկացի տեսաբան Չ. Ս. Պիրսը - 1839-1914թթ.) ուսումնասիրման իր աղբյուրը ստանում է այլ գիտություններից, տեղական մետալեզուների՝ ձեռք բերված «գործիքների»-գիտական ապարատի միջոցով: Այս դեպքում մետալեզվի օգնությամբ պատմագիտությունից տեղափոխվել ենք գրականագիտական դաշտ, կատարել վերլուծություններ (նշանի-տեքստի միջոցով) եւ մեր ուսումնասիրության արդյունքները, որպես նշանագետ-գրականագետ, թողել այդ դաշտում (կարող է լինել հակառակը, որը այդ մեթոդի սկզբունքն է): Նշենք, որ այս վերջին՝ նշանագիտական մեթոդը միաժամանակ դառնում է կառուցվածքաբանական վերլուծությունների հաղթահարման արդյունք:

In Armenian the idiom գլուխը հասել[21] (literally ‘to cut head’), which has its English equivalent in “heads will roll” [22] the head is taken to mean ‘life’ because conventional knowledge tells us that in the past, people who had committed a serious crime were sometimes executed by decapitation. Also, people of high positions in society having important responsibilities, were sometimes executed if they failed to perform their duties to the satisfaction of their superiors. Again, the conceptual metonymy the head stands for life motivates the meaning of this idiom, which is ‘somebody will be punished for their wrong-doing’.

An interesting extension of this idiom is the Armenian idiom գլխազին տալ[23] (literally ‘to put a price on somebody’s head’) which can again be found in the English expression to put a price on somebody’s head[24]. In the past (and sometimes even today) kings or other authorities put up notices for capture of dangerous criminals, for which a certain sum of money was offered to the successful capturer. It was common practice then to execute the criminal. Here we can quite easily see the metonymy the head stands for life, as the price for capture of the criminal was equal to what the criminal’s life was worth to a particular community. The meaning of this idiom then is very similar to the previous one and is understood as ‘to offer a reward for someone’s capture, defeat, or ruin’. Yet another example of this metonymy is the Armenian idiom գլուխը տալ ինչ-որ մեկի համար[25] (literally ‘to put the head on the block for someone’) which can also be found in English in to put one’s head on the block for someone[26]. As has been shown, all the mentioned idioms in which the head is used to stand for life, are based on people’s experiences which they have carried with them in the course of history and which are reflected in idiomatic language.

The Armenian idiom գլխի վրա շուռ տալ[27](literally ‘to stand something on the head’)which can be in the English equivalent to turn/stand something on its head[28] is a nice example of combining conventional knowledge and metonymy as a basis of motivation of this idiom. The meaning of this idiom, ‘to make people think about something in a completely different way’ is based on our conventional knowledge that logically, the human body is positioned in such a way that the head is up and the feet are on the ground. If we stand on our head, the logical order of things is disturbed, or utterly reversed. The position of the head above the body as opposed to below it can be taken as being normal. If we change this normality, we also change the logical order of things. The conceptual metonymy the head stands for order seems to be underlying this idiom.

Similarly, the Armenian idiom գլուխը կորցնել[29] (literally ‘not to know where one’s head is standing’) which can also be found in English not to know whether one is on one’s head or one’s heels’ [30] seems to be based on the same metonymy. If we are required to do many things at once, we very often confuse them because we have to think about too many of them at the same time. We usually skip from one activity to another as a result of which we do something wrong. This leads to a change in logical order of activity, i.e. doing one thing at a time, completing it and then moving on to another. Similarly, when we stand on our head, we confuse the logical order of things. The meaning of this idiom, ‘to be in a state of total confusion’ is very likely motivated by the conceptual metonymy the head stands for order.

There are a number of idioms, both in Armenian and English, in which the metonymy the head stands for intelligence can be detected as the chief motivation. Take, for instance, the English idiom to have a good head on one’s shoulders[31]. Its Armenian equivalent is ուսերին գլուխ ունենալ[32](literally ‘to have a good head’). In the sentence ‘John has a good head on his shoulders’, the way we understand the idiom is that we rely on the conventional knowledge which tells us that the brain is situated within the skull. Since we know that the brain is the seat of intelligence and the brain is in our head, it is likely that we tend to take the head as a representation of intelligence. The meaning of this idiom is then conveyed by the conceptual metonymy the head stands for life, and language users make sense of the idiom via this metonymy and understand its meaning as ‘to be intelligent’ or ‘to have common sense’.

In Armenian գլուխ ունենալ ինչ-որ բանի համար[33] (literally ‘to have a head for something’) coincides with the English idiom to have a head for something [34]the listener, in the process of arriving at the meaning of the idiom (‘to have a gift, an aptitude for something’) relates to the concept of the brain as the seat of the intellect. Also, the listener has a store of information, a concept involving the recognition that a talented person is exceptionally good at some activities or intellectually demanding work. The conceptual metonymy the head stands for talent helps to link these concepts together and the listener arrives at the idiom’s meaning.

The Armenian idiom տաք գլխով[35] (literally ‘to have a hot head’) which can also be found in the English idiom to be hot-headed[36], seems to be motivated by our conventional knowledge and the conceptual metonymy “the head stands for temper”. Our conventional knowledge of human physiology tells us that when somebody becomes agitated or angry, their bodily temperature rises slightly and they can feel the heat mostly in the upper part of the body as their pulse increases. With the help of this knowledge and the conceptual metonymy, people infer the meaning of this idiom, which is ‘to be easily angered, to react abruptly’.

This conceptual metonymy also seems to motivate the Armenian idiom սառը գլխով[37], (lit. ‘with a cool head’)in English with a cool head[38]. We know that if somebody is exposed to a difficult situation which needs to be solved without emotion and panic, and if they are not easily angered, they remain calm and manage to solve that situation without any problem. Because they do not get excited, their body temperature does not change, so it remains cool, as opposed to becoming hotter as is the case of an easily excited person. The conceptual metonymy the head stands for order seems to link this subconscious knowledge to the meaning of the idiom which is

*'to act without great emotion and panic, not to overreact, to behave calmly'.*

Probably the most frequent conceptual metaphor which motivates many idioms in Armenian and English is "the head is a container". It has to do with the size and shape of the human head which resembles a container such as a can or a box. Since we know that head is the seat of intellect and thought, we can say that the head is a container for thoughts or the head is a container for ideas. These conceptual metaphors can be said to motivate idioms such as in Armenian լիքը գլխով[39]; (literally 'to have one's head full of something'), or in English to have one's head full of something, in Armenian գլուխը լցնել, literally 'to stuff something into one's head') in English to stuff one's head with something[40].

We know that a container is used to store things. In the same way, the head is perceived as a container for 'storing' ideas and thoughts of various kinds. The idiom to have one's head full of something conveys an image of a container being full of something which occupies the entire inside of the container. In the same way, if we think intensively about something or someone, all our thoughts are focused on them and there is no more 'space' in our mind to think of anything else. Our mind is fully occupied with thoughts about one thing. The metaphor the head is a container then links this subconscious knowledge to the meaning of the idiom which is 'to be fully (intellectually or emotionally) occupied with something and think only about it'.

The Armenian idiom դատարկ գլխով[41] (literally 'to have an empty head') which finds its equivalent in the English idiom to be empty-headed[42] is another example of how the conceptual metaphor the head is a container links our knowledge connected with containers to the meaning of the idiom which is 'not to know much/anything, to be uneducated', or also 'not to have a thought at a particular moment'. We know that if a container is empty, it is of little or no use to anybody. In the same way, if somebody has no ideas or interesting thoughts, he comes across as an unthoughtful, uneducated or uninteresting person. The above conceptual metaphor then links this knowledge to the meaning of this idiom.

The conceptual metaphor disagreement is shaking one's head can be found in the Armenian idiom in գլուխը թափահարել[43] (literally 'to shake one's head') also has an English equivalent to shake one's head[44]. We know from our everyday experience that the most usual conventional gesture for people expressing disagreement with something is the movement of the head in a way that the head is turning from side to side and then returns to its former, upright position. When we see somebody shaking their head, we know that they are expressing their disagreement with something or someone. The meaning of this idiom, 'to express disagreement', is arrived at with the help of our conventional knowledge and the conceptual metaphor disagreement is shaking one's head.

It is important to note, however, that not all figurative language can be dealt with in this way. Some idiomatic expressions are too opaque and it is difficult for the learners to imagine them [45]. Naturally, there are many idioms in both Armenian and English which are not shared by the other language. In Armenian, for example, there is the idiom գլխին տեր ունենալ [46] (literally 'to have an owner over one's head') meaning 'to protect somebody'. Here the underlying conceptual metonymy the head stands for life can be detected. Another example is the Armenian idiom 'գլխի ընկնել' [47] which means 'to understand' and which seems to be motivated by the conceptual metonymy the head stands for intelligence.

Some idioms which can be found only in English are, for example, to be/stand head and shoulders above someone[48] which means 'to be much better/greater than someone' and which seems to be motivated by the conceptual metonymy the head stands for intelligence. Another example which is motivated by conventional knowledge is the idiom to get one's head down[49] which means 'to get back to work'. In this case, general knowledge tells us that when people work, they have to lean their head forward/down in order to see clearly what they are doing. This image is then reflected in the idiom.

*As can be seen from the previous analyses, the conceptualization of the human head depends on conventional knowledge which we have about the placement, shape, and function of this part of our body and gestures connected with it. It is also suggested that the other two cognitive mechanisms, i.e. conventional metaphor and metonymy, play an important role in the way we store information about the human head in our memory. The human head can therefore be taken to represent the person, life, temper, talent, intelligence, order; it is also seen as a container for thoughts, ideas, memories and dreams. The meaning of the word 'head' partially motivates the meaning of many idioms containing it, as the head is the seat of the intellect, dreams, emotions, and is the most essential part of the human body which governs its existence. Although there are more idiomatic expressions both in English and Armenian which contain the word 'head', and which would require further analysis to confirm or refute the claim that the meaning of the constitutive parts of some idioms partially motivates their meaning, the examples given show that in many cases this is so.*

### **REFERENCES**

1. The Concise Oxford Dictionary of Current English, 1990, pp 379-380.
2. Fernando, Chitra, and Roger Flavell. "On Idiom: Critical Views and Perspectives." Exeter Linguistic Studies 5.2 ,1981, pp.18 – 48.
3. Makkai, Adam. Idiom Structure in English. The Hague: Mouton, 1972, p. 372.
4. Sinclair, John. Corpus, Concordance, Collocation. Oxford: Oxford University Press, 1991.
5. Gibbs, R. W., 'What Do Idioms Really Mean?', Journal of Memory and Language, vol. 31 (1992), (pp. 385-406).
6. Lakoff, G. and Johnson M., Metaphors We Live By. Chicago, 1980, pp. 4-6
7. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 126-127:
8. Աբրահամյան Ս. Գ., Հայոց լեզու: Բառ և խոսք, Եր., 1986, էջ 132-133:
9. Stoyanova I., Semantic aspects of English body idioms, M., 2009, pp.106-113
10. The Oxford English dictionary.Oxford: Clarendon,1989.
11. Ղազարյան Է., "Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976.
12. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975, էջ 157:
13. Oxford Advanced Learner's Dictionary (OALD). 7th edition Oxford University Press. P. 688
14. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ. էջ 153:
15. OALD, p 688.
16. Lakoff, G. and M. Johnson, Metaphors We Live By, pp. 35-35, 66,139
17. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ. էջ 159:
18. OALD, p.1271
19. Ibid., p. 668
20. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ., էջ 406:
21. Ibid. pp 154
22. OALD, p.139
23. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ., էջ 141:
24. OALD, p.1150
25. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ., էջ 166:
26. OALD, p.146



27. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ., էջ 150:
28. OALD, p.139
29. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ., էջ 162:
30. OALD, p.139
31. Ibid. pp 688
32. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ., էջ 170:
33. Ibid. 171
34. OALD, p. 688
35. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ., էջ 166:
36. OALD, p.725
37. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ., էջ 165:
38. OALD, p.688
39. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ., էջ 160:
40. OALD, p.1471
41. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ., էջ 159:
42. OALD, p.479
43. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ., էջ 159:
44. OALD, p.1341
45. Boers, F., Metaphor Awareness and Vocabulary Retention, Applied Linguistics, vol. 21(4), 2000, pp. 553-571.
46. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. նշվ.աշխ., էջ 149:
47. Ibid., էջ 142
48. OALD, p. 688
49. Ibid. p 688

#### **SUMMARY**

#### **Comparative analysis of phraseological units with the somatic component 'Head' in English and in Armenian** **Saida Hayrapetyan**

This paper has attempted to show that Armenian and English idiomatic expressions containing the somatic component ‘head’ are motivated by cognitive strategies such as general conventional knowledge of the world and conceptual metaphors and metonymies which underlie the figurative meaning of these idioms. The claim that idioms are motivated by three cognitive strategies, i.e. general conventional knowledge and conceptual metaphors and metonymies, has been tested on a number of idioms in both Armenian and English.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**«ԳԼՈՒՄ» բաղադրիչով դարձվածային միավորների համեմատական վերլուծությունը  
անգլերենում և հայերենում  
Սաիդա Հայրապետյան**

*Բանալի բառեր՝ սոմատիկ բաղադրիչ, դարձվածաբանական միավոր, դարձվածք, դարձվածքային արտահայտություններ, համարժեք, վերացական փոխանունություն, վերացական փոխաբերություն, ավանդական գիտելիքներ:*

Այս հոդվածը փորձել է ցույց տալ, որ հայերեն եւ անգլերեն դարձվածքները, որոնք պարունակում են «գլուխ» բաղադրիչը, հիմնավորվում են պատկերավորման արտահայտչական միջոցներով, ինչպիսիք են՝ աշխարհընկալման ավանդական գիտելիքները, փոխաբերությունները եւ փոխանունությունները, որոնք ընդգծում են դարձվածքների փոխաբերական իմաստները: Այն պնդումը, որ դարձվածքները հիմնավորվում են երեք ճանաչողական միջոցներով՝ ավանդական գիտելիքներով, փոխաբերություններով եւ փոխանունություններով, փորձարկվել է մի շարք դարձվածքներում՝ հայերեն եւ անգլերեն:

РЕЗЮМЕ

**Сравнительный анализ фразеологических единиц с соматическим компонентом  
«голова» в английском и армянском языках  
Саида Айрапетян**

*Ключевые слова: соматический компонент, фразеологизм, идиома, идиоматические фразы, эквивалент, концептуальная метонимия, концептуальная метафора, традиционные знания.*

В данной статье была предпринята попытка показать, что армянские и английские фразеологические единицы с соматическим компонентом "голова" мотивированы познавательными подходами такими как общепринятое знание, концептуальные метафоры и метонимии, лежащие в основе образных значения этих идиом. Утверждение, что идиомы мотивированы тремя познавательными стратегиями, то есть общие традиционные знания и концептуальные метафоры и метонимии, было протестировано на ряде идиом в армянском и английском языках.

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՏՈՍ ՅԱՐՃԱՆՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ\*

### Նարինե Հովհաննիսյան

**Բանալի բառեր`** ռազմի բարոյաբանություն, հեթանոսապաշտություն, արիապաշտություն, ուժապաշտություն, կրավորական հոգեբանություն, մաքառում, ցեղասպանություն:

20-րդ դարասկզբին արևմտահայ իրականության մեջ հեթանոսական գաղափարաբանության նկատելի շրջադարձը դառնում է հստակ գեղագիտական ուղղվածություն, որի հետևորդներից էր Ատոմ Յարճանյանը: Քրիստոնեության սխալ ըմբռնված գաղափարները, մասնավորապես հնագանդությունը առաքինություն համարելը, դարերով քարոզվելով, ժողովրդի մեջ գրեթե սպանել էին պայքարի և ընդվզումի ճշմարտությունը: Քրիստոսի պես անդինադիր նահատակվող, քրիստոսվող ժողովրդի կրավորական հոգեբանությունը փոխելուն միտված հեթանոսական-արիական գաղափարաբանությունը ռազմաքաղաքական տվյալ պայմաններում արմատապես կարող էր բեկել ազգային գոյաբանության ամբողջ ընթացքը: Առանց գենքի ու կռվի պարտվող հայրդդին շատ բան կարող էր փոխել ազգային ճակատագրում: Բանաստեղծն ընդվզում է ցեղի պատմական ընթացքն առաջնորդող գաղափարաբանության դեմ, որ անընդմեջ ողբերգությունների ու կոտորածների մեջ սպառել է իրեն՝ հռչակելով արիական գաղափարաբանությունը կամ ուժապաշտությունը: «Անարժեք է գրականությունը, եթե դա ցեղի ոգու ինքնարտահայտությունը չէ, եթե նրա մեջ ցեղի ոգին չի ձառագայթում: Ցույց տվեք ժողովրդին իր ցեղի արև-դեմքը, որ նա ինքնատեսությամբ բարձրացնե իր խոնարհ ճակատը»[1], - գրականության նույն խնդիրն է գաղափարանշում Նժդեհը՝ ցեղակրոնության գաղափարակիրն ու ուխտավորը: Դարավերջի արևմտահայ գաղափարագեղագիտական այս ուղղվածության առաջնորդ դեմքը Դ. Վարուժանն է, որն իր ստեղծագործական ծրագրով կենսականորեն անհրաժեշտ գեղարվեստական նոր մտածողության վերելք նշանավորեց:

Յարճանյանի ստեղծագործ հանձարը նույնքան փառահեղ կարող էր լինել խաղաղության արշալույսների օրհներգության մեջ: Ազատության մեջ երբեմն ծաղկող կյանքի ստեղծագործ ոգևորությունը որքան էլ այցի գնար նրա բանաստեղծական հզոր տարերքին, հայրենիքի արյան շառագույնը, վերստին խուժելով, տիրական պիտի դառնար նրա պոեզիայում: Կյանքի բանաստեղծական ընկալումը հոգում՝ Յարճանյանն իր հանձարն ընծայաբերեց ազատության պայքարի գաղափարին՝ իրեն ներհատուկ գեղապաշտության տեղ բերելով ռազմի ոյուցազնահեղ ոգին, ազատության համար կյանքով սխրագործելու, ազգային պարտադրվող մահն հերոսացումով հաղթահարելու գաղափարն ու կամքը՝ արարելով բանաստեղծության արժանավայել մի տեսակ՝ ռազմի պոեզիա կամ ռազմերգություն:

Բախտը Սիամանթոյին օժել էր բանաստեղծական հանձարով, ճակատագիրը սահմանել էր լինել կոտորածի և մաքառումի բանաստեղծ: Կյանքի փթթուն զգայություններն անթեղած՝ ազգային ճակատագրի ողբերգությունը դարձավ Սիամանթոյի ռազմերգության ներքին առանցքը, ջարդերի տեսիլները՝ ներհոգեկան շղթան, ազգային գոյաբա-

\* Հոդվածն ընդունվել է 21.01.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Ար<sup>Պ</sup>Հ գրականության և լրագրության ամբիոնը:

նության խնդիրը՝ գերնպաստակր: Բանաստեղծի առաջին գիրքը՝ «Ղյուցազնորեն»-ը, ահագնագում էր արիանալու, մաքառելու կամ անգեն, կրավորական նահատակվելու հարցադրումը: Անընդմեջ կոտորածները, պետականության բացակայությունը, թուրք բռնակալության դարավոր լուծը ազգային հոգեկառուցվածքում պատմականորեն ձևավորել էին պարտվողական-կրավորական հոգեբանություն, և Յարձանյանի «Ղյուցազնորեն»-ը հերոսացումի ռազմական էր, որ բերում էր սխրագործելու ազգային գիտակցության գաղափարը, կայծի պես բռնկվող հերոսացումներն ու ցեղի դիմադրողականության ներուժը ժողովրդականացնելու հոգեբանությունը, հոգևոր ստրկության փոխարեն դյուցազնորեն կռվելու կորովը:

Յարձանյանը ցեղի ուժի և ցեղի արժանապատվության քերթող է. «Կրդարությունը ստեղծել պետք էր և ազատությունը մոլեգնաբար հափշտակել»: Իր պոեզիայով բանաստեղծը հռչակում է սեփական ուժը չձանաչող ժողովրդի ցեղական կորովը, բարոյական անխոցելի ամրությունը՝ մաքառումի վստահությամբ հեղափոխելով անկախություն չունեցող կրավորական նահատակի հոգեբանությունը: «Ինչ արժե հանձարը, ... երբ իր ցեղի ձակատագրի գերզագողությունը չունի, և չի սնուցաներ իր ցեղի հավիտենականության ձգտումը: Միևնույն չէ, կա թե չկա նմանը, երբ իր շրթունքներին ցեղի խոսքը չէ, և չգիտե վերադաստիարակել, արիացնել ու վարել զանգվածները...»[2]:

Եվ պաղատանքի, աղոթքի, լաց ու կոծի և ողբի այն մատյաններուն մեջ, Ուր դար առ դար իմ սերունդներս իրենց արյունը և տառապանքն են լացեր, Մեկ կողմ նետեցի ես զանոնք, պարտութենե ստրկացում և աղաչանքե արցունք չէրթալու համար...:

«Երևակայությունը - Սիամանթոյի տաղանդին ամենեն տիրական գիծն է... Երևակայության միացած գաղափարականը՝ հռետորությունը կը ծնի. երևակայության միացած զգացումը կը ծնի վսեմը: Յարձանյանի արվեստը արդյունք է այս երկու զուգավորություններուն»[3]: Հզոր երևակայությամբ բանաստեղծելով պայքարի ահեղ ընթացքը՝ Սիամանթոն աստվածացնում է ազգի փառահեղ հերոսներին, որոնք, մահն արհամարհելով, գերմարդկային տառապանքների մեջ՝ կախադանների վրա, արքայավայրերի շղթաներում, հերոսամարտերում, օրհնում են իրենց գաղափարն ու գործը՝ ազգի պատմության և ձակատագրի վրա դրոշմելով իրենց փառահեղ կենսագրությունը. «Սիամանթոն իր կենդանության նկատված է արևմտահայ գրականության ամենեն սիրված և հռչակված բանաստեղծը, որուն երգը, բացարձակորեն ոչ անձնական, քրմական ու հանդիսավոր՝ եղավ թարգմանն ու խորհրդանիշը ցեղին տառապանքին, վիրավորված արժանապատվության և հպարտ ծառացումին»[4]:

Ասպետի կերպարը Յարձանյանի պոեզիայում հոգեբանական գաղափարատիպ է՝ օժտված իր ցեղի նախնական հոգեգծերով: Բանաստեղծի սքանչացումն առ հայորդու բացարձակ նվիրվածությունը, սրբազնագույն ցավն ու աստվածարժան սխրանքը նույնացնում է նրան ասպետի կերպարին: «Հին դյուցազները աշխարհակալներ էին կամ ասպետներ. նորերը, Յարձանյանի հերոսները, հեղափոխականներ են կամ առաքյալներ»[5]: Դարերի ստրկության մեջ իր նախաստեղծ դիմագիծը կորցնելու չափ խեղձացած ժողովրդի հոգեբանությանը Յարձանյանի հայորդին վերադարձրեց ցեղական կորովը, գերհզոր կամքն ու անկարելիության աստիճանի ներքին զորությունը: «Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ» բանաստեղծության մեջ քերթողն ու ռազմիկը խորհրդանշում են գաղափարն ու կամքը, ոգին և ուժը: Խորհրդապաշտության սահմանին հասնող հիացմունքը, բարձր բարոյականը, խռովահույզ ապրումների գիշերվա մեջ հայտնված ռազմիկի կիսաստվածային կերպարանքը հաստատում են կյանքի դյուցազնորենը. «Յարձանյանը քնար չունի: Իր երգը կոփյուն մըն է՝ զօր մեր նախնիքը Նավասարդի Տոներուն կը

հնչեցնեին՝ իրենց աշտեն գարնելով վահաններու ոսկեցոյ կումբին»[6] :

«Ազատագրության հույսը փայտիայելուց հետո Յարձանյանի համար հեշտ չէր ներկայացնել սեփական ժողովրդի հերթական ողբերգությունը,- նկատում է Դ. Գասպարյանը,- բայց նրա հայրենասիրական ու քաղաքացիական ջիղն այնքան ուժեղ էր, որ դիմում է այդ դժոխքը բանաստեղծության վերածելու քայլին»[7]: Կոտորածների շառագույնը, ծավալվելով «Հոգեվարքի և հույսի ջահեր» գրքում, ահագնանում է Յարձանյանի հաջորդ՝ «Կարմիր լուրեր բարեկամես» գրքում: Կարմիրը գույնից վերածվում է մտահայեցումի. մղձավանջի մեջ տեսանում են մեռելներին գիշատող ագռավների բազմությունները, դիակների ծանրության տակ ճռնչացող սայլերը, դիակույտների մեջ մնացած կիսամեռելների հոգեվարքը: Ողբերգական սարսափը վերածվում է հոգեկան երևույթի. «Մահվան տեսիլք» բանաստեղծությունը եղերական պատկերների մտասևեռումն է. «Փողոցների մեջ մորթված սերունդներ կը տեսնեմ, // Եւ ամբոխներ անպատմելի սրածուններե դարձող... // Արևադարձային տաքություն մը կը բարձրանա // Հրդեհի տրված ազնվական քաղաքներեն...»: «Մտասևեռումը, այսինքն՝ չափազանց ուժեղ կենտրոնացումն ու շիկացումը,- նկատում է Հ. Թամրազյանը,- Միամանթոյի տաղանդի հիմնական հատկանիշներից մեկն է»[8]:

«Կարմիր լուրեր...» շարքի բանաստեղծությունները՝ գրված կիլիկյան ջարդերի անմիջական տպավորությամբ, ականատեսների վկայություններ են, որ վերահաստատվում են գերմանական արխիվներում պահված ցեղասպանության վավերաթղթերով: Դրվագ առ դրվագ տեսանում է թուրք «արյունկզակ» խուժանի եղեռնագործությունների համապատկերը: «Մոխիրներու և մահերու դանթեական ճանապարհին» որպես ողբերգության առանձին տեսիլներ պատկերանում են «Սուզը», «Պարը», «Լոզանքը», «Դաշույնը», «Քավություն», «Խաչը», «Զավակը», «Կույրը», «Թթենին», «Խեղդամահ» և այլն:

Գեղարվեստական մտածողության որոշակի հատկանիշներ, գերազանցապես մտապատկերների առկայությունը, պատկերների հյուսքը, վերացական ոգին նկատի ունենալով՝ քննադատությունը Միամանթոյին դասել է խորհրդապաշտների շարքին. «Վեռլենի, Բողլեի, Մալարմեի հայրենիքում նա չի կարող չենթարկվել այս սիմվոլիստ-դեկադենտների ազդեցությանը»[9], - նկատում է Վ. Նալբանդյանը՝ ստեղծագործական ակունքների հետ մատնանշելով Միամանթոյի արվեստի խորհրդապաշտական ոգին: Խորհրդապաշտական հայեցողության ազդեցությամբ հանդերձ՝ խորհրդապաշտությունը Միամանթոյի պոեզիայում գեղագիտական աշխարհայացք չդարձավ: «Անխառնորեն ռոմանթիկ է,- նկատում է Ա. Զոպանյանը,- իրմե ավելի ռոմանթիկ բանաստեղծ չենք ունեցած, նույն իսկ անոնց մեջ, որ պատմականորեն «ռոմանթիկ» կոչված շրջանի մեջ ապրած են»[10]:

Մաքառումի և անկշռելի ցավի մատյան է Միամանթոյի քերթությունը: Հզոր երևակայությունը, բանաստեղծական անսանձ տարերքը, խոսքի գաղափարաբանական ներքին կշիռը բանաստեղծության աշխարհում հաստատեցին պոետական նոր դիմագիծ: «Վրեժի մարտագող շեփոորդ և տառապանքի խելահեղ բանդագուշող»[11], - այս տարերքի հակակշիռ ուժի մեջ է Միամանթոյի արվեստի հզորությունը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նժդեհ Գ., Հատընտիր, Եր., 2001, էջ 320:
2. Նույն տեղում, էջ 141:
3. Կարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Եր., 1987, էջ 159:
4. Միամանթո, Բանաստեղծություններ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1993, էջ 5:

5. Վարուժան Ռ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 159:
6. Նույն տեղում, էջ 164:
7. «Հայոց լեզու և գրականություն», Եր., 2010, թիվ 4, էջ 17-18:
8. Թամրազյան Հ., Սիամանթո, Եր., 1964, էջ 67:
9. «Մշակ», 1901, N291:
10. «Անահիտ», Թ տարի, 1907, թիվ 3-5, էջ 89:
11. Վարուժան Ռ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 208:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### Ցեղասպանությունը և ազգային գոյաբանության խնդիրը Ատոմ Յարձանյանի պոեզիայում Նարինե Հովհաննիսյան

Հոդվածում քննաբանվում են Ատոմ Յարձանյանի ռազմի պոեզիայի բարոյական տարածքն ու ցեղասպանության մտասևեռումի վերաճած գրական շարքերը: 20-րդ - դարասկզբին արևմտահայ իրականության մեջ հեթանոսական գաղափարաբանության շրջադարձը դառնում է հստակ գեղագիտական ուղղվածություն, որի հետևորդներից էր Սիամանթոն: Քրիստոսի պես անդիմադիր նահատակվող, քրիստոսվող ժողովրդի կրավորական հոգեբանությունը փոխելուն միտված հեթանոսական-արիական գաղափարաբանությունը ռազմաքաղաքական տվյալ պայմաններում արմատապես կարող էր բեկել ազգային գոյաբանության ամբողջ ընթացքը: Բանաստեղծն իր տառապյալ եղբոր՝ ռազմիկի հետ ընդվզում է ցեղի պատմական ընթացքն առաջնորդող գաղափարաբանության դեմ, որ անընդմեջ ողբերգությունների ու կոտորածների մեջ սպառել է իրեն՝ հռչակելով արիական գաղափարաբանությունը կամ ուժապաշտությունը: Մաքառումի և անկշռելի ցավի մատյան է Սիամանթոյի քերթությունը: Հզոր երևակայությունը, բանաստեղծական անսանձ տարերքը, խոսքի գաղափարաբանական ներքին կշիռը բանաստեղծության աշխարհում հաստատեցին պոետական նոր դիմագիծ:

## РЕЗЮМЕ

### Вопрос геноцида и национальной идентичности в поэзии Атома Ярджаняна Наринэ Аванесян

*Ключевые слова:* этика войны, неопишущая боль, преклонение перед язычеством, преклонение перед силой, пассивная психология, борьба, геноцид.

Данная статья рассматривает нравственные аспекты военной поэзии Атома Ярджаняна в одном ряду с литературой о Геноциде. В начале XX века в западноармянской действительности языческая идеология становится одним из источников развития культуры и литературы, в том числе и в творчестве Сиаманто. Языческо-арийская идеология, направленная на изменение христианских ценностей народа, ставшего впоследствии, подобно Христу, невинной жертвой, в создавшихся политических условиях была протестом против пассивности народа. Поэт вместе со своим братом, пострадавшим в вооруженных стычках, считая, что идеология, ведущая к резне и национальной трагедии, себя исчерпала, призывает к возврату к арийским идеалам. Мощное воображение поэта, необузданная страсть его поэзии, внутренняя сила поэтического слова подтверждают новые черты поэтического образа.

SUMMARY

**Genocide and National Ontology in the Poetry of Atom Yartchanyan  
Narine Hovhannisyan**

**Keywords:** *ethics of war, unmeasurable pain, paganism, worship of force, passive psychology, struggle, genocide.*

The article reviews the moral aspect of Atom Yartchanyan's military poems and his contemplations upon the Genocide reflected in his literary pieces. Paganism in Western Armenian reality, evolving at the beginning of the 20<sup>th</sup> century, marked a turning point in ideology and establishing itself as a distinct aesthetic tendency. It was ardently supported by Siamanto. This pagan and Arian ideology was tended to change the ideology of a nation, unresistingly sacrificing itself, just as Christ. This ideology might have radically altered the whole course of national ontology in the given military and political situation. The poet and his brother-warrior propagate Arian ideology or the worship of power and thus revolt against the ideology which had led the nation throughout the history and which had exhausted itself in tragedies and massacres. Siamanto's creation is a book of struggle and immeasurable pain. Siamanto's strong imagination, his passionate poetic talent, ideological underlying of his discourse have established a new image in the world of poetry.

**ԵՐԿԱՇԽԱՐԳՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԸ Է.Ա.ՅՈՖՄԱՆԻ «ՈՍԿԵ ԾԱՂԿԱՄԱՆԸ»  
ՅԵՔԻԱԹՈՒՄ\***

**Արտակ Դուլյան**

**Բանալի բառեր՝** ռոմանտիզմ, ազատություն, անհատ, հասարակություն, երկատում, երկաշխարհություն, երկվություն, ներաշխարհ, ֆանտազիա, իրականություն, հեքիաթ:

*Երկաշխարհությունը՝ աշխարհի բաժանումն է երկու՝ երազանքների, անուրջների և նյութական աշխարհների միջև: Դա յուրահատուկ է միատիկ գրողներին (մասնավորապես՝ հայազգի հանձարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը), բայց գրականության մեջ իր հաստատուն տեղը գրավեց հատկապես ռոմանտիկ գրողների շնորհիվ, որոնք այս երկու՝ իրական և երևակայական աշխարհների համեմատության ու հակադրության հենքի վրա վարպետորեն զարգացրին ռոմանտիկական գեղարվեստական- պատկերավոր մոդելի սկզբունքը:*

*Երկու տարբեր աշխարհներում անձի ապրելու հիմնախնդիրը, դեռևս հին ժամանակներից սկսած, քննարկման առարկա է եղել բազմաթիվ գրողների համար, սակայն, ինչպես արդեն նշեցինք, այս ֆենոմենը փիլիսոփայական-գեղագիտական տեսանկյունից ամենայն խորությամբ սկսեց գիտակցվել հենց ռոմանտիզմի շրջանում [1]: Դա բացատրվում է առաջին հերթին ֆրանսիական հեղափոխությամբ: Հեղափոխության ազդեցությունը զգացվում էր ոչ միայն Ֆրանսիայում, այլև նրա սահմաններից դուրս՝ գրեթե ամբողջ քաղաքակիրթ աշխարհում: Նրա ժամանակիցներն ականատեսը դարձան վիթխարի, չլաված փոփոխությունների: Կյանքը բոլորովին այլ ընթացք ստացավ. կործանվում էին թագավորությունները, հզոր արքաներ էին գահընկեց արվում, փակվում էին միաբանությունները, տարբեր երկրներում արթնանում էր ազգային-ազատագրական պայքարի գիտակցությունը: «Իրադարձությունների սրընթաց զարգացումները հասարակության սոցիալական արդարության վերականգնման հույս էին ներշնչում» [2]:*

*Ֆրանսիական հեղափոխությունից հետո գրականության և արվեստի առջև նոր խնդիր դրվեց. արտացոլել մարդու լինելության հարցը ամբողջությամբ, իր ողջ հմայքով:*

*Ռոմանտիկների գաղափարախոսությունը ելնում էր աշխարհի այն նոր ընկալումից, որը հատուկ էր հետհեղափոխական սերնդին: Բայց շատ շուտով պարզվեց, որ հեղափոխության հռչակած Ազատություն և Հավասարություն նշանաբանը այդպես էլ մնալու է որպես նշանաբան՝ հեռու իրականությունից և իրականացումից:*

*Դարաշրջանի աններդաշնակ էությունն արդեն ակնհայտ էր բոլորին. չիրականացած և փլուզված երազանքները բոլորի համար դժգոհության առիթ էին, ու, միաժամանակ, իրականության վերաարժևորման շրջան: Ռոմանտիկների մոտեցումները, սակայն, միատեսակ չէին առ կոտրված երազանքներն ու բարոյալքող դարաշրջանը. մի մասը ձգտում էր դեպի լուսավոր ապագա, մյուսները ավստասան-*

\* Հոդվածն ընդունվել է 23.01.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնը:



քով էին հիշում անցյալը, շատերն էլ ելքը տեսնում էին պոետական մտքի մեջ փնտրտուքներում:

Եվ ընդհանրապես, ժոմանտիզմի ամբողջ պատմությունը գաղափարի անվերջանալի փնտրտուք է: Այդ որոնումների հետ է կապված բազմաթիվ ժոմանտիկներին հատուկ հետաքրքրությունն առ անցյալը և նույնիսկ դրա բացարձակացումը: Անցյալի հանդեպ հետաքրքրությամբ է պայմանավորված նաև ժամանակից փախուստի սուր զգացողությունը և մենության ձգտումը: Ռոմանտիկները առաջինն էին, որ պատմությունն ընկալեցին իր ընթացքի մեջ, նրա քաղաքական, սոցիալական և մշակութային միտումների երկխոսության մեջ [3]:

Անհատի բացարձակացումը դարձավ բոլորովին նոր տեսակի հերոսի կերտման սկզբունքը: Անհատն իր օրենքները թեև ինքն էր պարտադրում իրականությանը, սակայն ամենուր հանդիպում էր հակազդեցության: Եվ հենց այս հակասականության մեջ էլ ծնվում է օբյեկտիվի և սուբյեկտիվի բախումը. սեփական օրենքներով ապրող գրողի անսահմանափակ հնարավորություններ ու իրական կյանքում առկա պայմաններ: Այստեղից է սկսվում աշխարհի յուրօրինակ երկատումը իսկապես առկայի՝ իրականի և ժոմանտիկ հերոսի գիտակցության մեջ՝ անուրջների աշխարհում գոյություն ունեցող անիրականի, ֆանտաստիկի միջև: Ռոմանտիկները չէին ճանաչում օբյեկտիվ իրականության պարտադրած պայմանները և պաշտպանվում էին նրանից փախուստով դեպի սեփական երևակայությամբ ստեղծած՝ իրենց ֆանտազիաների աշխարհ, անուրջների թագավորություն, կյանքը պոեզիայում, որտեղ մոռացության էր մատնված իրական աշխարհը:

Ռոմանտիզմի սկզբունքները թեև գրեթե նույնությամբ բնորոշ էին անգլիական, ֆրանսիական, ամերիկյան ժոմանտիկներին, սակայն մասնավորապես գերմանական ժոմանտիկներին հաջողվեց ստեղծել ֆանտաստիկ ժանրի մի նոր, մի առանձնահատուկ ձև, որը սերտորեն միահյուսված էր խորհրդավորի, գաղտնիքի, անբացատրելի պոետիկայի հետ: Հենց հեքիաթն էր, որ նրանց ընծեռեց գեղարվեստական ոչ սովորական տարածքի ստեղծման բացառիկ հնարավորություն, ինչի հնարքների միջոցով գերմանական ժոմանտիկները «մտնում» էին ժամանակակից առօրյա աշխարհի խորքերը՝ աղավաղելով այն ընդհուպ մինչև գրոտեսկի աստիճանի: Գերմանական ժոմանտիզմում հեքիաթը վերածվեց լիիրավ գեղագիտական աստիճանի: «Հեքիաթը ծագեց որպես ֆանտազիայի ծնունդ, որպես ոգիների խաղ՝ հավակնելով լինելության էության խորությամբ ըմբռնմանը և կյանքի խայտաբղետ ու հրաշալի երևույթների յուրովի ընկալմանը» [4]: Հեքիաթի օգնությանը դիմեցին գրեթե բոլոր գերմանական ժոմանտիկները, բայց էմեստ Ամադեուս Հոֆմանի ստեղծագործության համար հեքիաթը ունեցավ բոլորովին այլ նշանակություն:

Ի դեպ, Հոֆմանը ստեղծագործել է ոչ միայն գրականության ասպարեզում, այլև իր տաղանդը դրսևորել է նաև նկարչության մեջ, երգարվեստում: Նա հեղինակավոր երգահան է, թատերական դեկորատոր, բեմադրիչ: Հոֆմանը ժոմանտիկական երաժշտական գեղագիտության հիմնադիրներից է: Հեղինակել է Գերմանիայի առաջին ժոմանտիկական «Ունդինա» (1813) օպերան, սիմֆոնիաներ, «Ալբրորա» օպերան, խմբերգեր, կամերային երկեր, երաժշտագիտական հոդվածներ: Նրա շատ երկերի հիման վրա ստեղծվել են երաժշտական ստեղծագործություններ (Դելիբի «Կոպելիա» և Չայկովսկու «Շելկունչիկ» բալետը), ազդեցությունն են կրել Վեբերը, Շումանը, Վագները, բանաստեղծական կերպարները մարմնավոր-

վել են Շամանի («Կրայսլերիանա»), Վագների («Թռչող հուլանդացին»), Ադանի («Ժիզել»), Դելիբի («Կոպելիա») և այլոց երկերում: Նա ժակ Օֆենբախի «Հոֆմանի հեքիաթները» (1881) և Լաչչետիի «Հոֆման» (1912) օպերաների հերոսն է: Վարչավայում, որտեղ ծառայել է որպես պալատական խորհրդատու (1804-1807), կազմակերպել է ֆիլիարմոնիկ ընկերություն, սիմֆոնիկ նվագախումբ: 1807-1813-ին որպես դիրիժոր, կոմպոզիտոր և բեմանկարիչ աշխատել է Բեռլինի, Բամբերգի, Լայպցիգի և Դրեզդենի թատրոններում [5]:

Այնուամենայնիվ Հոֆմանն առաջին հերթին հայտնի է իբրև ռոմանտիկ գրող, նորարար, որպես ուշ շրջանի ռոմանտիզմի դպրոցի հայրերից, մեկն այն բացառիկներից, ում ստեղծագործությունը բուռն հետաքրքրությունների առարկա պետք է դառնար արդեն իր իսկ կենդանության օրոք: Դա չի նշանակում, որ, գրականություն թարմություն և հետաքրքրություն բերելով նա համընդհանուր հեղինակություն էր վայելում: Մեծ մտածողը իր գրական առաջին փորձերից որդեգրել էր իրականության ծաղկման սկզբունքը, մարդկային անարդար բարքերի ու կեղծիքի քննադատությունը, իսկ «նմաններին» հասարակությունը չի հանդուժում: Եվ դա է պատճառը, որ կարճ ժամկետում ձևավորվեց քննադատների երկու ճամբար. ընդդիմախոսներ և համակիրներ: Ընդդիմախոսներն սկսեցին ոչ միայն քննադատել նրա ստեղծագործությունը, այլև ավելի հեռուն գնացին՝ համարելով նրան հարբեցող, հիվանդ երևակայությամբ տառապող, շիզոֆրենիկ և այլն: Նրանցից շատերը նույնիսկ կոչ էին անում չկարդալ Հոֆման ընդհանրապես, որովհետև իբր նրա ստեղծագործությունները իսկական գրականության հետ աղերսներ չունեն, այլ հիվանդագին երևակայության արդյունք են [6]:

Պատճառը Հոֆմանի բերած անսովոր, գրականության մեջ ընդհանուր-միադեմ գաղափարներից տարբերվող նոր սկզբունքներին էին, որոնք մեկ բառով կոչվում են, երկաշխարհություն. երևույթ, որով պետք է ներծժված լիներ ոչ միայն իր ստեղծագործությունը ընդհանրապես, այլև հիմք դառնար մի իսկական դպրոցի ստեղծման, հետևորդների մի մեծ բանակի ձևավորման՝ համակելով նրանց ստեղծագործությունն ամբողջությամբ:

Հոֆմանի բոլոր գործերը՝ «Ասպետ Գյակը»(1809), «Ցոհան Կրայսլերի, խմբավարի երաժշտական տառապանքները» (1810), «Դոն ժուան» (1813) նովելները, «Ոսկե ծաղկաման» (1814) հեքիաթը, «Սատանայի էլիքսիրը» (1815-1816) վեպը, «Թատրոնի մի դիրեկտորի զարմանալի տառապանքները» (1819), «Գիշերային պատմվածքներ» (1817), «Սերապիոն եղբայրներ» (1819-1821), «Լվերի տիրակալը» (1822), ստեղծված են երկաշխարհության հենքի վրա. երկվությունը նրա հերոսների բնավորության գլխավոր գիծն է, տարբերանշանը:

Սակայն երկաշխարհության ֆենոմենն իր կատարյալ արտահայտությունը գտավ «Ոսկե ծաղկամանը» հեքիաթում [7]:

Ի դեպ, այս հեքիաթը Հոֆմանը գրեց 1813-1814 թթ. այսինքն՝ երբ իր հարագատ քաղաքի՝ Դրեզդենի արվարձաններում պատերազմ էր, իսկ ինքը սոված, առանց փողի, պայթող արկերի սահմըկեցուցիչ աղմուկի ներքո գրում էր ստեղծագործություն, որը հետագայում պետք է դառնար մի առանձին ուղղություն՝ նախանշելով գրականության մեջ երկաշխարհության ֆենոմենի հաստատումը բոլորովին նոր տեսանկյունից. «Այդ մռայլ, ճակատագրական օրերին, երբ օր օրի քարշ ես

տալիս քո գոյությունը և դրանով էլ բավարարվելով, ինձ ձգում էր գրելը ավելի քան երբևէ՝ կարծես իմ առջև լայնորեն բացվել էին հրաշալի թագավորության դռները. այն, ինչ դուրս էր հորդում իմ հոգուց, ձեռք բերելով ձև, հեռանալով ինձ-նից դեպի բառերի հեղեղը» [8]:

Հեքիաթն սկսվում է մի հետաքրքիր մուտքով, որն անչափ իրական է թվում:

Համբարձման տոնի օրը՝ կեսօրին, Դրեզդենի Սև դարպասն է անցնում ուսանող Անսելմը: Հանկար անզգուշորեն շուռ է տալիս մի այլանդակ պառավի խնձորներով ու կարկանդակներով լեցուն կողովը: Պառավը անիծում է Անսելմին՝ գուշակելով, որ երիտասարդը կհայտնվի ապակու տակ: Այստեղից սկսվում է նրա ողիսականը՝ առաջին հայացքից ողբերգություն թվացող, բայց իրականում՝ ճանապարհ դեպի երանություն: Նա դեռ չի գիտակցում, որ, կողովը շրջելով, նա խախտել է երկու տարբեր աշխարհների հավասարակշռությունը:

Հետագայում պարզվում է, որ պառավը սովորական մահկանացու չէ, այլ նրա թիկունքում գործում են վիշապները, որոնք, ինչպես իրավացիորեն նկատել է գրականագետ Հ.Սարիբեկյանը, ալքիմիական տրակտատներում խորհրդանշում են հողը: Նա Վերոնիկայի հովանավորն է, իսկ Անսելմի թիկունքին արխիվավարն է, որն իրականում մեծ սալամանդրն է, իսկ սալամանդրները ալքիմիական տրակտատներում խորհրդանշել են կրակը: [8]

Եվ ահա այս երկու ուժերի պայքարի արանքում են հայտնվում Անսելմը և Վերոնիկան:

Անսելմը հեռանում է՝ բողոքելով ինքն իր դառը ճակատագրից: Նրա մենախոսությունն ընդհատում է ծառից եկող ուժեղ շրշյունը: Նա տեսնում է երեք ոսկեկանաչավուն օձերի, որոնցից մեկը կապույտ աչքերով նայում է Անսելմին: Հանկարծ օձերը նետվում են էլբա գետը և չքվում են:

Անսելմը փաթաթվում է ծառին՝ իր տարօրինակ տեսքով ու վարքով վախեցնելով այգում զբոսնողներին:

Անսելմը թեև աղքատ է, ծախողակ (նունիսկ բուտերբրոտը նրա ձեռքից միշտ ընկնում է գետնին, նրա բախտը չի բերում աղջիկների հարցում, որոնց մոտ հաճախ փորձում է տպավորություն ստեղծել, և ընդհանրապես նա ծախողակ է նույնիսկ մանրուքներում), սակայն ինքն իրեն դժբախտ չի համարում, ընդհակառակը. երջանիկ է, որովհետև գտել է բանաստեղծության աշխարհ տանող ճանապարհը. Անսելմը «իսկական երաժիշտ» է. նրան լսելի է բյուրեղյա զանգակների երաժշտությունը, որոնք զնգում են քամուց մեղմ օրորվող թփերում, իր երանելի աշխարհում է նա տեսնում ոսկեկանաչ օձ Սերպենտինային և սիրահարվում նրան և այլն:

Նույն օրը Անսելմը հանդիպում է իր ընկերներին՝ Լեզիստրատոր Հերբերանդտին և կոնռեկտոր Պաուլմանին, որին ուղեկցում են դուստրերը: Կոնռեկտորը հրավիրում է Անսելմին զբոսնելու նավակով: Ջրի մեջ Անսելմը քիչ է մնում շուռ տա նավակը՝ խոսելով տարօրինակ օձերի մասին: Բոլորը կարծում են, որ երիտասարդը մի փոքր ցնդել է և որ պատճառը նրա աղքատությունն է: Հերբերանդտի խորհրդով առավոտյան Անսելմն ուղևորվում է Լինդհորսթի մոտ: Ուզում է բարձրացնել դուռը թակելու մուրձը, երբ հանկարծ բրոնզե դեմքը ծռվում է, և վերափոխվում է պառավի դեմքի, այն, որին Անսելմը բախվել էր Սև դարպասի մոտ: Մուրձը հարվածելիս լսում է չարաբաստիկ բառերը, որ իրեն վիճակված է հայտն-

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

վել ապակու տակ: Զանգի թելը վերածվում է մեծ օձի և փաթաթվում է Անսելմին: Օձը շիկացած երկաթից իր լեզուն դնում է Անսելմի կրծքին, և նա կորցնում է գիտակցությունը:

Հաջորդ օրը արխիվավարը պատմում է տարօրինակ մի պատմություն նախաստեղծ հովտում ծնված վառվող շուշանի և նրան հասնող պատանի Ֆոսֆորի մասին: Վերջինս բոցավառվել էր և նրանից դուրս էր եկել նոր էակ և թռել-հեռացել՝ հոգ չտանելով սիրահարված պատանու մասին: Ֆոսֆորը լաց էր եղել իր կորուսյալ ընկերուհու համար: Հետո ժայռից դուրս էր թռել սև վիշապը, որսացել այդ էակին, փաթաթվել նրան իր թևերով, և այդ էակը վերածվել էր շուշանի: Սակայն նրա սերը Ֆոսֆորի հանդեպ դարձել էր սուր ցավ, որից ամեն բան շուրջը դալկացել էր: Ֆոսֆորը մենամարտել էր վիշապի հետ և ազատել շուշանին, որը դարձել էր հովտի թագուհի:

Հիրավի, Հոֆմանին միշտ հարազատ են եղել կախարդական և փիլիսոփայական տրակտատները և նրան հայտնի էր հոգու այլքիմիան: Այս պատումը ևս այլքիմիական տրակտատի գեղարվեստական մատուցում է: Ֆոսֆորի և Սալամանդրի մասին արխիվավարի պատմությունն ամբողջությամբ ներծծված է Արևելքի շնչով, ինչն անչափ հոգեհարազատ էր հեղինակին: Երիտասարդ ֆոսֆորի մասին պատումը, ըստ ամենայնի, աշխարհի արարման և մարդկային հոգու կերպարանափոխության պատմությունն է, որտեղ շուշանը բոլոր կենդանի էությունների ներդաշնակության երազանքն է, կյանքի ներդաշնակության ընկալումը: Չէ որ ի սկզբանե մարդկային հոգին ապրում էր երանության մեջ, անհոգ, խաղաղ, մինչև մի օր որոշեց հասկանալ աշխարհաստեղծման սկզբունքը, որպեսզի արդեն գիտակցաբար վերադառնա ներդաշնակության իր երազանքին:

«Ես ծագում եմ հենց այդ հովտից և իմ նախա-նախա-տատիկը հենց այդ վառվող շուշանն էր, այնպես որ ես արքայազն եմ», - ավարտում է պատմությունը արխիվավարը: Նրա այս խոսքերը ցնցում են Անսելմին: Այդուհետ նա ամեն երեկո գնում է այն ծառի մոտ, որտեղ տեսել էր օձին, փաթաթվում է ծառին՝ անընդհատ կրկնելով. «Ես կմեռնեմ, եթե դու չվերադառնաս»:

Հերոսի երկաշխարհությունը՝ երկու աշխարհներում ապրելը, ըստ ամենայնի, հետևանք է նրա հոգու երկատվածության. նա կանգնած է երկրնտրանքի առջև՝ Վերոնիկա<sup>օ</sup>, թե՞ Սերպենտինա, որ նույնն է՝ կյանք, ինչպես կա<sup>օ</sup>, թե՞ կյանքը պոեզիայում: Բնականաբար, Անսելմը ընտրում է կյանքը պոեզիայում. չէ՞ որ բանաստեղծության աշխարհը միակ վայրն է, ուր կարող է ապաստանել ինքը, պատուպարվել իրական աշխարհի ձղձիմ բարքերից: Իսկ Դրեզդեն քաղաքը, հիշատակվող մյուս վայրերը, և ընդհանրապես, «աշխարհագրական մանրամասները գրողի համար ոչ այլ ինչ են, քան ֆանտազիան կենդանացնելու, արտաժամանակային կոնֆլիկտին որոշակիություն հաղորդելու, նրան ճանաչված ձևեր հագցնելու միջոց»[9]: Նույնիսկ ժամանակն այս հեքիաթում երկատված է [10]:

Ընթերցողը Անսելմի հետ ակամա հայտնվում է մի այլ աշխարհում՝ կախարդական, հեքիաթային, որը, պարզվում է, միշտ գոյություն է ունեցել, եղել է մեզանից անկախ, մեր՝ նյութական աշխարհի կողքին, մինչդեռ նրա մասին ոչինչ չգիտեինք: Հենց այս երկաշխարհության մեջ է Հոֆման - փիլիսոփայական փորձում բացահայտել Մարդուն:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Նա պատկերում է աշխարհներից յուրաքանչյուրն իր ամբողջության մեջ, որոնք ոչ միայն կապված են միմյանց, այլև իրար դեմուդեմ կազմած են իբրև թշնամիներ. նյութի աշխարհը, որը հիմնված է ստի, կեղծիքի, շահի վրա, և երևակայական աշխարհը, որտեղ թագավորում է երջանկությունը:

Արխիվավարը հաղորդում է Անսելմին, որ օձերը իր դուստրերն են և որ Անսելմը սիրահարված է կրտսերին՝ Սերպենտինային: Իր տուն է հրավիրում ուսանողին և կախարդական հեղուկ է տալիս պառավից պաշտպանվելու համար: Հետո վերածվում է ցինի և թռչում-հեռանում է: Պապմանի դուստր Վերոնիկան լսելով, որ Անսելմը կարող է դառնալ պալատական խորհրդական, երագում է դառնալ նրա կինը: Երագանքների ամենաբուռն պահին լսում է սոսկալի մի ձայն, որ ասում է, որ Անսելմը երբեք չի լինի նրա ամուսինը: Վերոնիկան, դիմում է վիուկի օգնությանը, որը խորհուրդ է տալիս թողնել Անսելմին, քանի որ Անսելմը վատ մարդ է և կապվել է իր վաղեմի թշնամի ծերուկի հետ, սիրահարվել է նրա դստերը՝ կանաչ օձին և երբեք չի դառնա պալատական խորհրդական: Գուշակուհու բառերից դժգոհ Վերոնիկան ուզում է հեռանալ, սակայն գուշակուհին Վերոնիկային կանգնեցնելու համար խոստանում է, որ կբուժի Անսելմին ծեր կախարդի հմայանքից, սակայն դրա համար աղջիկը պիտի իր մոտ գա գիշերով: Հույսը նորից ծնվում է Վերոնիկայի սրտում:

Աշխատանքի ժամանակ արխիվավարը Անսելմին է տալիս թանաքի փոխարեն ինչ-որ սև հեղուկ, գունավոր փետուրներ, սպիտակ թուղթ և պատվիրում է արտագրել ինչ-որ արաբական ձեռագիր: Պատանուն աշխատելիս թվում է, որ նրան օգնում է Սերպենտինան:

Գիշերով գուշակուհին բերում է Վերոնիկային դաշտ: Կրակ է անում և տարօրինակ մարմիններ է նետում կաթսայի մեջ, ինչպես նաև Վերոնիկայի մազափունջը և մատանին: Կաթսայից դուրս է գալիս Անսելմը և մեկնում է Վերոնիկային իր ձեռքը: Գուշակուհին կաթսայից հալած մետաղ է ուզում լցնել տիպարի մեջ, երբ հանկարծ վերևից լսվում է ահեղ ձայն, որը հրամայում է նրան չքվել: Պառավն ընկնում է գետնին, իսկ Վերոնիկան կորցնում է գիտակցությունը: Ուշքի գալով՝ նա իր թիկնոցի գրպանում գտնում է արծաթե հայելի, որը գիշերը մետաղից ծուլել էր պառավը: Հայելու միջից նրան էր նայում իր սիրեցյալը:

Տեղին է նշել, որ հայելու մոտիվին դիմելը ինքնանպատակ չէ. դրա միջոցով Հոֆմանը ավելի արդյունավետ է իրացնում երկաշխարհության ֆենոմենը: Հեքիաթում մեկ անգամ չէ, որ հանդիպում ենք հայելիների՝ պառավի մետաղյա հայելին, արխիվավարի բյուրեղապակյա հայելին, Վերոնիկայի կախարդական հայելին և այլն: Ալքիմիական տրակտատներում ևս հայելին բացառիկ գործիք է, որի միջոցով կարելի է տեսնել մյուս աշխարհները և մուտք գործել այնտեղ:

Իսկ արխիվավարի այգիները այստեղ խորհրդանշում են դրախտի հրաշքների նախադուռը: Դրանք միաժամանակ Անսելմի անցնելիք ուղու յուրատեսակ ցուցասարքն են. քանի դեռ նրա հոգին ճիշտ ճանապարհի վրա է, դրանք բաց են, և նա կարող է տեսնել ու լսել հրաշքների աշխարհի արծագանքները: Բայց հերիք է մի փոքր սայթաքի ճշմարիտ ուղուց՝ տեղի տալով պառավ վիուկի հմայանքներին, նա զրկվում է երանելին տեսնելու հնարավորությունից:

Անսելմն արդեն երկար ժամանակ աշխատում է արխիվավարի մոտ՝ անվերջ իր կողքին զգալով Սերպենտինայի ներկայությունը: Սերպենտինան մի օր իսկա-

պէս հայտնվում է և ասում, որ իր հայրը սալամանդրների ցեղից է: Պարզվում է՝ նա սիրել է կանաչ օձին՝ շուշանի դստերը, որն աճում էր ոգիների իշխան Ֆոսֆորի այգում: Սալամանդրը գրկում է օձին, որը վերածվում է մոխրի, որից ծնվում է թևավոր էակ և հեռանում է: Սալամանդրը հուսահատ վագում է այգում՝ չորացնելով այն: Ատլանտիդա երկրի իշխան Ֆոսֆորը մարում է Սալամանդրի հուրը, բայց կախարդական ընծա է թողնում նրան: Սալամանդրը կազատվի իր լծից, երբ կգտնվեն պատանհներ, ովքեր կյսեն նրա դստրերի երգը և կսիրեն նրանց: Նշանադրության ժամանակ ծաղկամանից կաճի հրեղեն շուշան, պատանին կհասկանա դրա լեզուն և կապրի իր կնոջ հետ Ատլանտիդում: Այնտեղ կվերադառնա նաև ներում ստացած Սալամանդրը:

Պառավ վիուկը ձգտում է տիրելու կախարդական ծաղկամանին: Սերպենտինան զգուշացնում է Անսելմին հեռու մնալ պառավից, սակայն Անսելմը մտածում է նաև Վերոնիկայի մասին, տեսնում է նրան երագում: Արխիվավարի տուն գնալու փոխարեն՝ գնում է Պաուլմանի տուն: Այնտեղ տեսնում է կախարդական հայելին, որի մեջ դիտում է իրեն և Վերոնիկային: Վերոնիկային համբուրելուց հետո լքվում է վստահությանը, համոզված, որ միշտ մտածել է միայն Վերոնիկայի մասին և խոստանում է աղջկան ամուսնանալ նրա հետ:

Ճաշից հետո գալիս է ռեգիստրատոր Հեբերանդտը և պատրաստում է պունջ: Մի կում անելուց հետո Անսելմը նորից հիշում է վերջին շաբաթների ողջ անցուդարձը: Սկսում է բարձր զառանցել Սերպենտինայի մասին: Հեբերանդտը և Պաուլմանը սկսում են բղավել. «Կեցցե՛ Սալամանդրը: Թող կորչի պառավը»: Անսելմը փախչում է այդտեղից, իսկ հաջորդ օրը աշխատանքի ժամանակ նրան երևում են ոչ թե տառեր, այլ անվերծանելի նշաններ: Թանաք է կայծում թղթին, ուրից դուրս է թռչում կայծակը, մառախուղի մեջ հայտնվում է արխիվավարը և փակում է Անսելմին բյուրեղյա անոթի մեջ: Նա իր կողքին տեսնում է ևս երեք անոթներ, որոնց մեջ նաև փակված էին մեկական ուսանողներ: Սակայն ի տարբերություն իրեն, նրան ուրախ են անոթում ապրելու համար:

Ապակին այքիմիական տրակտատներում մատուցվում է իբրև մարդու կատարելագործման միջոց, որի շնորհիվ մարդը կարող է հասնել կատարելության, մինչդեռ այստեղ Հոֆմանը այն բերում է արտաքին աշխարհից որպես մարդու մեկուսացման գործիք: Ըստ Ա. Բոտնիկովայի՝ ապակու տակ փակված ապրելը անտանելի ծանր է Անսելմի համար, այն դեպքում, երբ հարևան կոլբաներում նույն պահին գտնվող երեք ուսանողները բոլորովին դժգոհ չեն անոթային կյանքից: «Ապակե կոլբան, որի մեջ փակված է Անսելմը, խորհրդանշում է մարդու մեկուսացման կերպափոխությունը արտաքին աշխարհից. այն, ինչն ուրիշներին հոգիների համար նորմալ է և նույնիսկ երջանիկ, Անսելմի պոետիկ հոգուն անտանելի է [11]:

Անսելմն սկսում է երագել Սերպենտինայի մասին: Հանկարծ դիմացի թելնիկի մեջ ճանաչում է պառավ վիուկին, որը խոստանում է Անսելմին ազատել, եթե նա ամուսնանա Վերոնիկայի հետ: Անսելմը հրաժարվում է: Այնժամ պառավը փորձում է վերցնել ոսկե ծաղկամանը և փախչել, բայց նրան խանգարում է արխիվավարը: Սալամանդրը հաղթում է, և պառավը վերածվում է բազուկի: Հայտնվում է Սերպենտինան և ասում, որ Անսելմը ներված է: Ապակին պայթում է և նա հայտնվում է սիրելիի գրկում:

Հեղինակը արխիվավարից ստանում է նամակ, որով վերջինս թույլ է տալիս

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

հրապարակել Անսելմի հետ պատահածը: Ուսանողը նշանվում է Սերպենտինայի հետ, շնչում է ոսկե ծաղկամանի մեջ աճած հրաշալի շուշանի բույրը և հավերժական երանություն է գտնում Ատլանտիդում:

Ինչպես իրավացիորեն նկատել է գերմանական ռոմանտիզմի հմուտ գիտակ Ա.Բոտնիկովան. «Այստեղ Ատլանտիդան երևակայության պտուղն է, հրաշալի, բայց անհասանելի մի երազանք: Ռոմանտիկական իրոնիան հանում է «գեղագիտական խաբուսիկության թագավորության» դիմակը: Այդ թագավորությունը «իր աշխարհից չէ» [12]:

«Դու ապացուցեցիր քո հավատարմությունը, եղիր ազատ և երջանիկ»,-իր հերոսին մաղթում է Հոֆմանը, որը որպես ուղերձ է հնչում՝ ուղղված համայն մարդկությանը: Ցանկանում ես հավատալ, որ Անսելմը ազատ ու երջանիկ կլինի նաև հետագայում, նրա ոգին չի թուլանա կեղծիքի ու ստորության վրա կառուցված նյութական աշխարհի բարքերի դեմ տարվող մշտական պայքարում, որ Սերը և Հավատը անվերջ կթևածեն՝ իբրև խորհրդանիշ Բարու հաղթանակի, որ վերջապես հոֆմանյան պատգամը կօգնի շատերին ինքնամաքրվելու, կատարելագործվելու, դառնալու յուրօրինակ Անսելմներ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Дмитриев А.С., Немецкая литература. Романтизм, М. 1991, стр. 8
2. Ботникова А.Б. Немецкий романтизм - диалог художественных форм, Ворон., 2003, стр. 3
3. Д.Чавчанидзе. Романтический мир Эрнста Теодора Амадея Гофмана, М. 2002, стр. 15
4. Ботникова А.Б. указ. работа, стр. 14
5. <https://hy.wikipedia.org/wiki>
6. Гофман Э.Т.А. Жизнь и творчество. Письма, высказывания, документы, М., 1987, стр. 47
7. Гофман Э. Т. А. Собр. соч. В 6 т. М., 1997.
8. <http://boon.am/ernst-theodor-amadeus-hoffmann/>:
9. Ботникова А.Б. указ. работа
10. Федорова Ф.П. Время и вечность в сказках и капричио Гофмана, М., 1982, стр. 22
11. Ботникова А.Б. Функция фантастики в произведениях немецких романтиков, // Проблемы художественного метода. Рига, 1970, стр. 112
12. Ботникова А.Б. Немецкий романтизм - диалог художественных форм, стр. 16.

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Երկաշխարհության մոտիվը Է.Ա.Հոֆմանի «Ոսկե ծաղկամանը» հեքիաթում Արտակ Դուլյան**

Երկաշխարհությունը՝ աշխարհի բաժանումն է երկու՝ երազանքների, անուրջների և նյութական աշխարհների միջև: Դա յուրահատուկ է հատկապես ռոմանտիզմի դարաշրջանին, որտեղ այս երկու՝ իրական և երևակայական աշխարհների համեմատության ու հակադրության հենքի վրա ստեղծվել, կառուցվել է ռոմանտիկական գեղարվեստական- պատկերավոր մոդելի սկզբունքը: Երկաշխարհության մոտիվի վրա է կառուցված գերմանական ու շրջանի ռոմանտիզմի հայրերից մեկի՝ Էռնեստ Ամադեուս

Հոֆմանի ամբողջ ստեղծագործությունը: Հոդվածում քննության ենք առել նրա «Ոսկե ծաղկաման» հեքիաթը, որը միայն առաջին հայացքից է հեքիաթի նման. իրականում այն մի հրաշալի ծոն է Մարդու ազատության, ազատության համար մղվող պայքարի փառաբանություն, սիրո և արդարության զովերգում՝ ներծծված անմնացորդ նվիրունով և հավատով առ լուսավոր ապագան:

## РЕЗЮМЕ

### Мотив двоemiрия в сказке Э.А.Гофмана “Золотой горшок” Артак Гулян

*Ключевые слова:* романтизм, свобода, индивидуум, общество, раздвоение, двоemiрие, двойственность, внутренний мир, фантазия, реальность, сказка

Двоemiрие – это разделенность мира на две части – мир мечты и мир материальный. Это было особенно свойственно для романтической эпохи, когда на основе сопоставления и противопоставления реального и воображаемого миров строился принцип романтической художественно-образной модели. На мотиве двоemiрия построено произведение одного из ярчайших представителей позднего немецкого романтизма Э.А.Гофмана.

В статье проанализирована его сказка “Золотой горшок”, которая с первого взгляда похожа на сказку. В действительности это чудесная ода про свободу Человека и восхваление борьбы за свободу, воспевание любви и справедливости, безграничной преданности и веры в светлое будущее.

## SUMMARY

### The Dual Conception of Reality in Hoffman’s *Golden Vase* Artak Ghulyan

*Key words:* romanticism, freedom, individual, society, split personality, dual reality, duality, inner world, fantasy, reality, fairy tale.

The dual conception of reality presupposes the division of the universe into the world of dreams and material world. It is was particularly peculiar for the romantic period, where based on comparison and contrast of real and imaginary worlds the principle of romantic imagery model was created. The motive of dual conception is taken as a basis for the work of one of the most vivid representatives of Late German Romanticism – Ernest Amadeus Hoffman.

In this article we took into consideration his “the Golden Vase” tale which seems to be a fairy tale at the first sight. In fact, it’s a wonderful ode to human freedom, glorification of the struggle for freedom, praise of love and justice, endless devotion and faith in bright future.



ԱՎԱՆՂԱԿԱՆ ԵՎ ՆՈՐ ՄԵՂԻԱ. ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ\*

Ինգա Մարտինյան

**Քանալի բառեր՝** ավանդական, նոր մեղիա, տեսաբաններ, հետազոտություն, տպագիր թերթ, գիրք, էլեկտրոնային կրիչ, ինտերնետ, e-books, ինտերնետային լրատվամիջոցներ, կայքեր, սոցիալական ցանցեր:

20-րդ դարը մարդկության զարգացման համար հեղափոխական կարելի է անվանել առնվազն հեռահաղորդակցման միջոցների կտրուկ զարգացման առումով: Եթե դարասկզբին աշխարհը ցնցվեց հեռագրի առկայությամբ եւ ամօրեականացված ռադիոհաղորդումներով, դարակեսին սովորական դարձավ հեռուստատեսությունը, ապա դարավերջին ինտերնետի զանգվածային հասանելիությունը կանխորոշեց 21-րդ դարի մարդու կենսակերպը եւ աշխարհի նորացվող կերտվածքը: Ավանդական եւ նոր մեղիաներն սկսեցին մրցակցել, գիտնականները բաժանվեցին երկու խմբի: Նրանց մի մասը ահագանգում էր տպագիր թերթի եւ գրքի մահվան մասին, իսկ մյուսը խոսում էր դրա անհնարինության մասին: Ամեն դեպքում, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ու համացանցի տարածումը ողջ աշխարհում այս կամ այն կերպ ազդում է գրքերի ու մամուլի տպագրության ծավալների վրա: Այս խնդրին անդրադառնում են նաեւ արեւմտյան եւ ռուսական ավանդական լրատվամիջոցների ներկայացուցիչները<sup>[1]</sup>: Առաջինը հիմնականում շոշափում է ավանդական մեղիաների կողմից՝ նոր մեղիաների օգտատերերի տրամադրած օպերատիվ տեղեկատվության կիրառության հնարավորությունները եւ դրանց վստահելիության խնդիրները: Ռուսաստանյան փորձագետներն իրենց հերթին անդրադառնում են թվայնացման հետեւանքով ինքնատեղեկացվող հասարակության դարաշրջանի գոյությանը, որտեղ տեղեկատվության աղբյուրի դերում կարող է լինել ցանկացած համացանցային օգտատեր: Մինչ երկու մեղիաների պայքարի վերաբերյալ փաստարկները ներկայացնելը՝ նախ անդրադառնանք պայքարի օբյեկտներին:

**Նոր մեղիա** տերմինն առաջին անգամ սկսել են օգտագործել 20-րդ դարի վերջին՝ բնութագրելու համար ինտերակտիվ էլեկտրոնային լրատվամիջոցները եւ հոդվածագիրների կողմից տեղեկատվության օգտագործման նոր մեթոդները, որոնք տարբերվում են ավանդական մեղիայից, օրինակ՝ թերթերից: Այսինքն՝ այս բառեզրով բնութագրվում է թվային, ցանցային տեխնոլոգիաների եւ հաղորդակցության զարգացման գործընթացը: Կոնվերգենցիան (տարբեր մեթոդների համակցում, հարամիստում) եւ մուլտիմեդիա խմբագրումները դարձան այսօրվա լրագրության անբաժան մասը: Հին մեղիա ասելով՝ այստեղ պայմանականորեն նկատի ունենանք տպագիր մամուլը, որն առաջացել է տպագրության գյուտից հետո: Գրատպության գյուտը մարդկության պատմության մեջ խոշորագույն հայտնագործություններից մեկն էր: Այն առաջ մղեց կրթությունը, գիտությունն ու գրականությունը: Շնորհիվ տպագիր գրքի՝ մարդկության կուտակած գիտելիքներն սկսեցին ավելի արագ տարածվել: Դրանք ավելի ամբողջական էին պահպանվում եւ փոխանցվում հետագա սերունդներին:

ՄԱԿ-ի Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության տվյալները հաղորդում են, որ մինչեւ 2040թ. տպագիր թերթերն այլեւս չեն լինի, որ դրանց փոխարինելու են թվային կրիչները: «Մի քանի տարվա ընթացքում տպագիր մամուլը, ինչպիսիք

\* Հոդվածն ընդունվել է 25.12.2016:  
Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտ.դեկավար Բ.Գ.Բ., դոցենտ Ն.Ն.Մարտիրոսյանը:  
305

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

սին որ կա այսօր, արդեն գոյություն չի ունենա», –ասել է կազմակերպության գլխավոր տնօրեն Ֆրենսիս Հարին: «Դա էվոլյուցիա է, ոչ վատ է, ոչ էլ լավ: Ուսումնասիրություններ են անցկացվել, որոնք կանխատեսում են դրանց վախճանը մինչև 2040թ. իսկ ԱՄՆ–ի համար՝ մինչև 2017թ.», – ասել է Հարին[2]: Նա հավելել է, որ այդ էվոլյուցիան անխուսափելի է: Հարիի խոսքով՝ ԱՄՆ–ում թվային կրիչներով գրքերն այսօր ավելի լավ են վաճառվում, քան տպագիր գրքերը, իսկ քաղաքներում գնալով ավելի դժվար է դառնում գրադարան գտնելը[3]:

Էլեկտրոնային կրիչներից եւ սովորական տպագիր աղբյուրներից կատարվող ընթերցանության վրա մարդիկ սկսել են գրեթե նույն ժամանակը ծախսել, ինչը պայմանավորված է ոլորակիր համակարգիչ օգտագործողների գործոնով, որոնց 52%-ը նախընտրում է էլեկտրոնային ընթերցանությունը: Նման տվյալներ է պարունակում ամերիկյան Gartner գործակալության անցկացրած հարցումը[4], որին մասնակցել է 1569 մարդ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Չինաստանից, Ճապոնիայից, Իտալիայից եւ Հնդկաստանից: Ըստ հարցման՝ անհատական համակարգիչներ օգտագործողների 47%-ը դժվարանում է համակարգչով ընթերցել եւ նախընտրում է տպագիր գրքերը: Հարցման տվյալները վկայում են նաեւ, որ թվային կրիչներով ընթերցանության առաջատարներն առավել երիտասարդ օգտագործողներն են: Բացի այդ՝ տղամարդիկ ավելի են հակված էլեկտրոնային ընթերցանությանը, քան կանայք: Հատկանշական է, որ հարցվածների շուրջ 40%-ը երբեւէ չի օգտվել էլեկտրոնային գրքերից (օրինակ՝ Amazon Kindle-ի ծառայություններից): Մի շարք փորձագետների կարծիքով՝ էլեկտրոնային կրիչները զգալի վնաս են պատճառում «թղթային» արդյունաբերությանը, ինչը նկատելի է արդեն ներկայում, ավելի շատ հրատարակություններ են թվայնացվում, թերթերի տպաքանակը անկում է ապրում, իսկ պլանշետների վաճառքի ծավալներն աճում են: Ակնկալվում է, որ առաջիկա 5 տարում այս շուկան մի քանի անգամ կաճի՝ 2015թ. կազմելով \$49 մլրդ[5]:

«Պատկերացրեք աշխարհն առանց թերթերի: Հնարավոր է՝ դա ավելի շուտ տեղի ունենա, քան դուք կարծում եք: Մի կողմ դրեք թղթի վրա թանաքի գաղափարը, փոխարենը մտածեք համակարգիչ էկրանի վրայի բառերի մասին: Հեշտ է նայել այն դրամատիկ փոփոխություններին, որոնք իր հետ բերել է ինտերնետը վերջին մի քանի տարիների ընթացքում եւ մտածել, որ մենք արդեն տեսնում ենք ժուռնալիստիկայի ապագան: Այն ձեռք է բերում այսրոպեականություն, ավելի շատ է անհատականացվում, աճում է ընթերցողի մասնակցությունը, եւ տեղեկատվությունը ստանում է անհատակ խորություն,- ասվում է «Օնլայն ժուռնալիստիկա» գրքում[6]: Pew Research Center-ի վերջին տվյալներով՝ ավանդական լրատվամիջոցներն ամերիկացիների համար սրընթացորեն կորցնում են նորությունների աղբյուր լինելու դիրքերը[7]: Ըստ լսարանի՝ միայն հեռուստատեսությունն է, որ ինտերնետի համար մրցակցող պլատֆորմ է մնում: Եթե ավագ սերնդի միջին ամերիկացու համար ինտերնետը դեռ չի դարձել տեղեկատվության որոնման հիմք, ապա 18-29 տարեկան ամերիկացիների ճնշող մեծամասնության (65%) համար ինտերնետն արդեն երկու տարի է, ինչ դարձել է նորությունների հիմնական աղբյուր՝ այդ գծով իր բաժինը 2006-ից սկսած կրկնակի ավելացնելով: Կոլումբիայի համալսարանում կարդացած իր մի դասախոսության ժամանակ Դանիել Օկրենտը[8] (Daniel Okrent) ամենայն մանրամասնությամբ նկարագրել է այն հաճույքը, որը պարգևատրում են տպագիր թերթը եւ գիրքը, բայց այնուհետեւ արժանազատել: «Ես հավատում եմ, որ տպագրության բոլոր ձեւերը կմահանան, նրանց դարաշրջանն ավարտված է: Հավանաբար, ես դա չեմ տեսնի, բայց ինձնից երիտասարդները կտեսնեն: 20-30 տարի հետո մենք տպագիր մեդիային կմայենք այնպես, ինչպես այժմ նայում ենք ծիով կամ վագո-

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

նով, առաջաստանափով ճանապարհորդելուն: Թանաքի ժամանակն ավարտվել է, այն 1 մլրդ դոլար է ծախսում թղթի եւ փոստային ծառայությունների վրա»,- ցավով արձանագրում է դասախոսը, որովհետեւ նա տպագիր մեդիային նվիրել է իր կյանքի լավագույն 30 տարիները: Այն տեսաբանները ովքեր քննադատում են նոր տեխնոլոգիայի թանկարժեք լինելը, հեղինակային իրավունքի պաշտպանության խնդիրը եւ այլն, դասախոսն անձամբ երաշխավորում է, որ դրանք ապագայում եւ կլուծվեն:

Ուսումնասիրելով արտասահմանյան բլոգներում, տեսություններում եւ դասախոսություններում զանազան փաստարկները, որոնք հիմնավորում են տպագիր մեդիայի դարաշրջանի ավարտը՝ ներկայացնում ենք դրանցից մի քանիսը[9].

1. *Դրանք շատ անհարմար են մի շարք իրավիճակներում օգտագործելու համար: Ինչո՞ւ մարդ պետք է ստիպված լինի իր երկու ձեռքն օգտագործել գիրք կարդալիս՝ մեկով բռնել, մյուսով՝ թերթել:*

2. *Գիրքը կարդալուց հետո այն հայտնվում է գրադարակում եւ հավաքում է փոշի, շատ քչերն են մտածում այն դեռ նետել կամ տալ ինչ-որ մեկին ընթերցանության:*

3. *Վերջապես, դա թղթի անտեղի կորուստ է: Դա վնաս է հասցնում շրջակա միջավայրին, օգուտ է տալիս արդյունաբերությանը: Դու չես վճարում գրքում եղած ինֆորմացիայի համար, դու վճարում ես մահացած ծառի համար:*

4. *Ինչքա՞ն շատ շոշափելի նյութ դու ունես, այնքան շատ շոշափելի նյութ ունի քեզ: Ընդունիր մինիմալիզմը եւ գլուխդ ազատիր անպետք թղթերից:*

5. *Դրանց հետ ճանապարհորդելը բարկացնող է: Դու կարող ես հետդ վերցնել մեկ գիրք, բայց այն շուտ կարդալ եւ ավարտել ու մնալ առանց գրքի: Դժվար է ճանապարհորդելիս վերցնել մի ամբողջ գրադարակ, բայց շատ հեշտ է վերցնել համակարգիչը: Գրքերը նախատեսված չեն զբոսաշրջիկների համար:*

6. *Ապագան էլեկտրոնային գրքերինն է, որոնք ավելի կատարելագործված կլինեն, կլինեն սեւ-սպիտակ, առանց մարտկոցների եւ չեն օգտագործի մարտկոցների ուժը, կլիցքավորվեն թերթելուց: Ահա այն փաստարկների խումբը, որոնցով փորձում են ապացուցել, որ թերթը եւ գիրքը ապագա չունեն:*

Այժմ անդրադառնանք տեսաբանների մյուս խմբին, ովքեր պնդում են, որ տպագիր թերթը եւ գիրքը չեն վերանա եւ ներկայացնում իրենց փաստարկները: Տեղեկատվական անվտանգության գծով եվրոպական առաջատար փորձագետ Սեբաստիան Մյուլլերն ասում է[10]. «Թերթերը երբեք չեն մահանա, քանի որ հազարավոր կանայք եւ տղամարդիկ դրանց կարիքն ունեն. էլ ինչո՞ւ՞ նրանք առավոտյան պետք է փակեն իրենց դեմքը»: Իսկ փորձագետ Նիլս Լեոպոլդն, այնուամենայնիվ, հիշեցնում է, որ քաղաքացիական լրագրությունը ազդում է լրագրողների աշխատանքի վրա: Նա նկատում է, որ ավանդական լրատվամիջոցները տեղեկություններ ստանալու համար արդեն օգտվում են հայտնի բլոգերների հրապարակումներից: Տեսաբանների այս խումբը արձանագրում է. թվային տեխնոլոգիաներն, անշուշտ, հոյակապ են: Բայց, միաժամանակ, նրանք ներկայացնում են մի խումբ փաստարկներ եւ արձանագրում, որ տպագիր բառը թղթի վրա երբեք չի անհետանա:

Ահա դրանք[11].

1. *Տպագրության նկատմամբ պահանջարկը: Հազարավոր հրատարակչություններ գրքեր են տպագրում, որովհետեւ կա դրա պահանջարկը, մարդիկ կարդում են դա, թեկուզ մի հոգի կարդում է մեկ հատոր եւ այն տպագրվում է: Գրքերը կվերանան այն ժամանակ, եթե աշխարհում մահանա վերջին գիրք կարդացող մարդը: Բացի հրատարակումներից՝ աշխարհում բազմաթիվ կոնֆերանսներ եւ EXPO-ներ են կազմակերպում՝ նվիրված գրքին եւ տպագրությանը: Մարդկությունը այնքան խելամիտ կգտնվի, որ չի*

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

հրաժարվի իր պատմության ընթացքում ստացած ամենամեծ պարգևներից մեկից՝ տպագրության գյուտից:

2. Կարիք չկա կարողալու կրիչի վրա կամ համացանցով, մարտկոցները կարող են նստել, Ջունգլիներում կամ Էվերեստում կապ կարող է չլինել: Մինչդեռ, դու ամենուր կարող ես քեզ հետ պահել գիրքը:

3. Աչքերի լարումը: Անշուշտ, թվային էկրանը հնարավորություն է տալիս տառաչափի կամ դրա գույնի փոփոխություն, բայց տպագիր եւ ոչ փայլուն նյութը իսկական խրախուժանք է քո աչքերի համար:

4. Շոշափելու գործոնը: Հիշենք երգի բառերը՝ գրքի նման ոչինչ չկա: Պատկերացրեք՝ ինչ հաճույք է շրջել էջերը, նշել ինչ-որ բաներ, ծալել ինչ-որ էջեր, արտագրել լավ մասերը, մինչդեռ համակարգչով դա ընդամենը մեկ next կամ copy սեղմելն է:

5. Մեծ գրականությունը: Հետեւելով նախորդ՝ 4-րդ կետին, ինչ-որ մեկը կարող է իսկապես փաստել, որ հավիտենական դասականների, ինչպես օրինակ՝ Դիկենսի, Ռոլինգի ստեղծագործությունները էկրանին կարդալով՝ կարող է գրավել միտքը կամ հուզել հոգին:

6. Հարեանության գործոնը գրախանութներում եւ գրադարաններում: Դուք երբեւէ փնտրել էք որեւէ գիրք գրադարակում եւ մեկ այլ գիրք եք գտել, որն ավելի լավն է դուրս եկել: Կամ երբեւէ միանգամից երկու կամ երեք գիրք չե՞ք վերցրել՝ համեմատելու նրանց հաղորդած տեղեկատվության բովանդակությունը եւ ոճը: Այլ գնորդներ այս գրքի հետ նաեւ գնել են ...չէ՞ որ այդ խոսքերը համացանցում քեզ ոչ ոք չի ասի:

7. Այժմ թղթի կամ թերթի հնարավորություններին անդրադառնանք: Դյուրությունն այն է, որ կտրում ես հողվածք եւ դուրս գրում այն նոթատետրում, ընդգծում ես, նշում, լուսանցքներ դնում, ամրացնում ես իրար եւ հողվածների փունջը, որ կտրտել ես, դնում ես կողք կողքի, այնուհետեւ կանաչ լույիկը թերթի մեջ փաթաթում եւ այն մտցնում թղթե տոպրակի մեջ եւ մի քանի օր հետո այն դառնում է վարդագույն:

8. Թղթի վերամշակման ծրագրերը: Չիկագոյի տարածքում դեղին կամ կանաչ թուղթ նետելու համար հատուկ աղբամաններ են փակցվում դպրոցի բակերում, եկեղեցական ավտոկայանատեղիներում եւ մի շարք առեստրի կենտրոններում: Իսկ դու գիտե՞իր, որ տպագիր թղթից վերամշակվում է 100 տոկոսանոց վերամշակված թուղթ: Իսկ վերամշակված թուղթը մեզ անհրաժեշտ է մարդու կյանքի ընթացքում ամենից շատ այցելված վայրերից մեկում՝ գուգարանում: Եթե վերանան թերթերը, ապա ինչպես կստեղծեն գուգարանի թղթերը, կամ ի՞նչ պետք է օգտագործեն մարդիկ:

9. Դուք չեք կարող սովորեցնել ծեր շանը նոր հնարքներ: Այդպես էլ թղթի բնիկները, ովքեր ծնվել են մինչեւ 1980-ականները, միշտ կնախընտրեն թուղթը:

10. Տպագիր բառն ունի հատուկ հեղինակություն: Բոլորի ականջներում հնչում է՝ ի սկզբանե էր բառը: Դրանով էլ պայմանավորված է միայն տպագիր բառին հատուկ հեղինակությունը: Պետք չէ ոտնձգություն անել աստվածաշնչյան այդ ճշմարտության դեմ:

11. Տպագիր պատկերը հազար բառ արժե: Բայց իսկապես գնահատելով յուրաքանչյուր մանրուք՝ այն պետք է ունենա որոշակի մշտականություն եւ չի կարող լինել թռուցիկ պատկեր էկրանի վրա:

12. Տպագիր թերթը կամ գիրքը մի վայր է՝ նորից այցելելու համար: Այնտեղ կարելի է հեշտությամբ վերադառնալ, երբ մեր միտքը ընկալունակ է: Դրան հակառակ՝ ինտերնետը շատ անհանգիստ ընթացքով շտապում է դեպի ոչ մի տեղ: Փիլիսոփան, ով ասում է, որ նույն գետը երկու անգամ չես կարող մտնել, իսկապես տեսաբան է:

Այս գործոնները, ըստ տեսաբանների, երկար ժամանակ կպահեն թերթերն ու գրքերը:

«Ամեն առավոտ ինձ սպասում են The Financial Times-ը, Chicago Tribune-ը, New York Times-ը and Wall Street Journal-ը եւ ես դրանցից իմանում եմ աշխարհի նորությունները: Ես կարդում եմ, թե օրական ինչքան ծառ է կտրվում աշխարհում, եւ ես ինձ մեղավոր եմ զգում դրա համար, որովհետեւ դրանցից ստեղծվում են այս թղթերը, բայց երբ հիշում եմ, թե ինչքան են շրջակա միջավայրին վնաս հասցնում համակարգիչը եւ համացանցը օգտագործողները, ես նախընտրում եմ կարդալ թերթերը: 'Դրանից բացի' ես մի քիչ էլ էգոիստ եմ, ինձ համար թանկ են իմ զգացողությունները, մասնավորապես՝ տպագիր թերթի հաճույքը, շոշափում եմ այն, թերթում եմ, ինձ համար թանկ է այդ ամենը, իսկ դրանք երբեք չեն առաջանում օնլայն կարդալիս: Եւ հետո, իմ ծեր աչքերը այնքան երախտապարտ են ինձ: Եւ մինչ ես մտածում եմ դեպի արդյունավետություն մարդկության անողորմ ճամփորդության մասին, որոնց մասին հաղորդում են նաեւ իմ թերթերը, որպես ավելի նվազ վատնող, ես եկա եզրակացության, որ ես նույնքան մեղավոր եմ, որքան յուրաքանչյուրը»,- գրել է ամերիկացի գիտնականներից մեկն իր բլոգում՝ հավելելով, որ իր մեղքը քավելու համար ինքը բոլոր թերթերը տանում է եւ լցնում վերամշակման համար նախատեսված աղբարկղների մեջ:

Հայաստանում եւս նկատելի է ավանդական եւ նոր մեդիաների մրցակցություն: Լրատվական դաշտում վերջին տարիներին արձանագրվեց համացանցային հեղափոխություն: Ընդհանրապես մրցակցության՝ մեկ տարվա ընթացքում համացանցի կապի գներն ընկան միջինում մոտ 10 անգամ: Դրան զուգահեռ՝ «Համակարգիչ բլոգրին» ծրագիրը խթանեց տեխնիկայի տարածմանը հանրապետությունով մեկ: Մասնավոր ձեռնարկությունները նույնպես սկսեցին վարկով համակարգիչ տրամադրել՝ ուժեղացնելով էֆեկտը: Շարժական ինտերնետ կապի զարգացումը դրան զուգահեռ բերեց համացանցի ներթափանցմանը մարզեր: Նման զարգացումները բերեցին համացանցի ազդեցության աճին: Եւ այսօր ինտերնետն Հայաստանում հիմնական տեղեկատվական աղբյուրներից մեկն է: Բացի դրանից, սոցիալական ցանցերի ազդեցության աճի պատճառով համացանցն այսօր նաեւ հանդիսանում է քաղաքական, քաղաքացիական ակտիվությունների հիմնական հարթակներից մեկը: Հայկական զանգվածային լրատվամիջոցներն այժմ ակտիվորեն ինտեգրվել են սոցիալական ցանցերի եւ բլոգների հետ: Գրեթե ողջ ավանդական մամուլն այժմ աշխատում է սոցիալական ցանցերում՝ մեծ տարածման հասնելու համար Facebook-ի, Odnoklassniki.ru-ի եւ այլ ցանցերի այցելուների շրջանում: Թերեւս դրանով է պայմանավորված, որ մի շարք թերթեր իրենց էջերն են ստեղծել սոցիալական ցանցերում, ինտերնետային լսարանին գրավելու միջոցներ են ձեռնարկում, վերակառուցում են իրենց կայքերը: Դրա օրինակներից է «Առավոտ», «Հրապարակ», «Ժողովուրդ», «Հայկական ժամանակ», «Զորրոգ իշխանություն» թերթերը, որոնք վերակառուցել են կամ վերակառուցում են իրենց կայքերը՝ դարձնելով առցանց՝ փորձելով հետ չմնալ ինտերնետային լրատվամիջոցներից: Կամ «Ժամանակ» թերթը, որն ուներ ձեւավորված լսարան, ուներ նաեւ կայք, որը հանդիսանում էր պարզապես տպագիր նյութերի ինտերնետում տեղադրման հարթակ, առանձնապես քանակական եւ որակական փոփոխություններ չէր ստեղծում: Սակայն, 1in.am կայքի մեկնարկը, որն ակտիվորեն ներկայացված է սոցիալական ցանցերում, բերեց նրան, որ այսօր այն հանդիսանում է առցանց մամուլի առաջատարներից: Հաջորդ փուլում խմբագրությունը նաեւ անցավ ցանցային հեռուստատեսության ձեւավորմանը՝ փաստացի ծածկելով ցանցային այլընտրանքային եւ ավանդական միջոցների հիմնական հնարավորությունները: Այդպես է նաեւ «Ժողովուրդ» թերթի եւ armur.am կայքի, «Հայկական ժամանակ» եւ armtimes.com-ի, «Հրապարակի» եւ hrparak.am-ի դեպքում: Փաստորեն հայկական մամուլի համար սոցիալական մեդիան դառնում է «նավարկության մեջ մնալու» միակ հնա-

րավորությունը: Ավելին՝ եթե տպագիր տարբերակով թերթերն ունեն լավագույն դեպքում տպաքանակի չնվազման միտում, ապա ինտերնետում գրեթե բոլոր ՁԼՄ-ների մոտ դիտվում է լսարանի կայուն աճ: Այդ է պատճառը, որ որոշ ավանդական թերթեր, օրինակ՝ «Չորրորդ իշխանություն» որոշել է տպագրվել ընդամենը երկու օր, փոխարենը ստեղծել է իր կայքը, «Ժողովուրդ» թերթն էլ չի տպագրվում շաբաթ օրերին, փոխարենը՝ ներդրումներն ուղղում են կայքին: Կարծում են՝ տեղեկատվական դաշտի հիմնական զարգացումն այսօր գնում է դեպի ավանդական եւ այլընտրանքային մեդիաների միաձուլում: Մամուլը պետք է օգտագործի ինտերնետը՝ որպես տեղեկատվության աղբյուր, այդ թվում՝ նաեւ որպես սեփական լսարանի դինամիկ ավելացման միջավայր: Եվ հակառակը՝ սոցիալական մեդիաները լրջորեն ազդում են ավանդական ՁԼՄ-ների եւ տեղեկատվական միջավայրի ձեւավորման վրա: Երկրորդն, ինչ այսօր ակնհայտ է, կոմքինացված ՁԼՄ-ների ձեւավորումն է, երբ տպագիր մամուլը ոչ միայն օգտվում է ինտերնետից, այլեւ դառնում է լուսա եւ տեսա-արտադրանքի հեռարձակող: Փաստորեն, ավանդական մեդիաները ստիպված են հաշվի նստելու նոր մեդիաների ոչ միայն առկայության եւ ունեցած կարեւոր դերակատարության հետ, այլեւ որոշ դեպքերում դրանց անփոխարինելիության փաստի հետ եւ ավանդական ու նոր մեդիաների համակցության ձեւեր որոնել: Իսկ այն ավանդական ՁԼՄ-ները, որոնք չեն հետեւում այս նոր հնարավորությունների զարգացմանը, վաղ թե ուշ դուրս են մղվելու դաշտից:

Ավելացնենք, որ հայկական կայքերի եւ առցանց լրատվամիջոցների քանակը հստակ թիվը դժվար է ասել, որեւէ տեղ չեն հաշվառվում: Փորձագիտական հաշվարկներով՝ Հայաստանում գործում է ավելի քան 200 լրատվական կայք, որոնց մի մասն է միայն ակտիվ, ունի ընթացողների կայուն քանակ եւ ազդեցության դաշտ: Օրինակ՝ Մեդիամաքսիտ maxmonitor.am համակարգը մոնիթորինգ է իրականացնում մոտ 100 առաջատար լրատվամիջոցների շրջանում: Ի դեպ, տարիներ ի վեր գործել է Circle.am համակարգը, որտեղ գրանցված էր հայկական բովանդակություն կամ պատկանելություն ունեցող կայքերի մեծամասնությունը: Այդտեղ 2013թ. հունվարի 20-ի դրությամբ գրանցված է 224 լրատվամիջոց, որտեղ օրական գրանցվել է մոտ 5 մլն այցելություն, որոնց մոտ 60%-ը Հայաստանից է[12]: Նույն ժամանակահատվածում միայն լրատվական կայքերի այցելությունները կազմում են ողջ հայկական համացանցի այցելությունների կեսը՝ օրական մոտ 2,5 միլիոն այցելություն, որոնց 65%-ն է հայաստանցի օգտատեր[13]: Ասում են, թե լրատվամիջոցների դեկավարների բողոքների պատճառով հիմնադիրները որոշեցին փակել circle.am-ը: Այժմ լրատվական կայքերի դիտումների հետ կապված մոնիթորինգ իրականացնող ամենատարածված համակարգը similarweb-ն է, որը ամեն ամսվա սկզբին հրապարակում է նախորդ ամսվա ընթացքում ամենից շատ այցելուներ ունեցած կայքերը: Այդ համակարգը կիսաբաց ռեժիմով է աշխառում, ինֆորմացիաներ ստանալու համար պետք է գրանցվել եւ գումար վճարել: Ինչ վերաբերում է Հայաստանի տպագիր լրատվամիջոցների թվին, ապա 2016թ. օգոստոսի 31-ի դրությամբ գրանցված եւ հաշվառված են նյութական կրիչի վրա թողարկվող 1330 զանգվածային լրատվության միջոց, որից՝ 876 թերթ եւ 454 ամսագիր: Այս մասին մեր հարցմանն ի պատասխան հայտնեցին արդարադատության նախարարությունից:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Անալիտիկոն» հանդես, 2011թ ապրիլ  
<http://analyticon.org/ARCHIVE/2011/april/april-2011-new-media.pdf>
2. [https://www.gazeta.ru/news/business/2011/10/03/n\\_2035814.shtml](https://www.gazeta.ru/news/business/2011/10/03/n_2035814.shtml)

3. Նույն տեղում:
4. <https://www.theguardian.com/technology/2011/sep/22/tablet-forecast-gartner-ipad>
5. Նույն տեղում:
6. Ռոլանդ Դե Վոլկ, Օնլայն ժուռնալիստիկա, Եր., 2003, էջ 96:
7. <http://actualweb.ru>; <http://people-press.org/report/689/>
8. <http://digitaljournalist.org/issue0002/okrent.htm>
9. <http://www.techmanage.net/T11/011>
10. <http://www.a1plus.am/am/social/2012/03/16/eph>
11. <http://listverse.com/2011/07/03/top-10-reasons-the-newspaper-is-dying/>
12. <http://www.circle.am/?go=catinfo&cat=onelist>
13. <http://www.circle.am/?go=catinfo&cat=news>

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### Ավանդական և նոր մեդիա. մրցակցություն և համակեցություն Ինգա Մարտինյան

Հոդվածում անդրադարձել ենք ավանդական և նոր մեդիայի համակեցության եւ մրցակցության խնդիրներին, պայքարի օբյեկտներին, տպագիր դարաշրջանի ավարտի մասին կանխատեսումներին: Միեւնույն ժամանակ կան մի շարք տեսաբաններ, ովքեր պնդում են, որ տպագիր թերթն ու գիրքը երբեք չեն վերանա:

## РЕЗЮМЕ

### Особенности сосуществования и борьбы между старыми и новыми медиа Инга Мартинян

**Ключевые слова:** *традиционные, новые медиа, теоретики, исследования, газеты, книги, электронные хранения, электронные книги, интернет, СМИ, веб-сайты, социальные сети.*

В статье затрагивается проблема сосуществования и борьбы между старыми и новыми медиа, обозначены объекты борьбы, представлены содержащиеся в зарубежных блогах, теориях и лекциях доводы о завершения эры печатных медиа. Есть также немало теоретиков, настаивающих на том, что печатные газеты и книги не исчезнут.

## SUMMARY

### Peculiarities of coexistence and struggle between old and new media Inga Martinyan

**Keywords:** *traditional, new media, theorists, research, newspapers, books, electronic storage, internet, e-books, internet, media, websites, social networks.*

The article touches upon the issue of coexistence and struggle between old and new media, defines the objects of the struggle as well as presents the arguments found in foreign blogs, videos and lectures regarding the end of the print press era. There are also many theoreticians, claiming that print papers and books will never disappear.

ԱՐՑԱՆՅԱՆ ԱՐԴԻ ՊԱՏՄՎԱԾՔԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԴԱՇՏՈՒՄ

Համլետ Մարտիրոսյան

**Բանալի բառեր՝** վավերագրություն, ազատամարտ, պատմվածք, պատկեր, կերպար, կոլորիտ, ազատամարտիկ, համեմատություն, կարոտ, պատերազմ, հայրենիք

Խորհրդային ժամանակաշրջանի արցախյան արձակում (պատմվածք, վիպակ, վեպ) միակ թեման եղել է հարազատ երկրամասի սոցիալիստական ներկայի (առանց պատմական անցյալի անդրադարձների) պատկերումը՝ իր գեղեցիկ բնաշխարհով, աշխատավոր մարդու (արցախցու) լավագույն որակները՝ աշխատասիրություն, հայրենասիրություն, ավանդապաշտություն և այլն ներկայացնելը:

Նկատենք նաև այն, որ խորհրդային շրջանի դարաբաղյան արձակը՝ թե՛ նյութը մատուցելու, և թե՛ արտահայտչամիջոցների կիրառման առումով, կրում էր խորհրդահայ գրականության (Ս. Խանգաղյան, Ս. Ալվազյան, Հ. Մաթևոսյան, էլի մի քանի անուն) ակնհայտ ազդեցությունը: Սակայն, եթե խորհրդահայ գրողների երկերում կար թեմատիկ բազմազանություն, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում ապրող գրողն օբյեկտիվ, նաև սուբյեկտիվ պատճառներով չէր կարող շրջանցել կամ դուրս գալ գրականության ընկալման՝ տասնամյակներով կարծրացած այն չափորոշիչների տարածքից, որը հսկվում էր Բաքվից:

Զնոռանանք՝ դարաբաղաբնակ գրողի միակ գրական օրգանը Բաքվում հրատարակվող հայատառ երկամսյա «Գրական Աղբյուր» հանդեսն էր, որի հեղինակների կեսը աղբյուրացի գրող էր՝ հայերեն թարգմանվող ստեղծագործություններով: Այլ կերպ ասած՝ ժողովուրդների բարեկամության ծխածածկույթի տակ տասնամյակներ շարունակ Լեռնային Ղարաբաղի հայ ընթերցողին պրոպագանդվում էր աղբյուրացական գրականություն, իսկ լայն առումով՝ իրականացվում էր մշակութային մի քաղաքականություն (երգարվեստի, կինոյի, թատրոնի ներգրավմամբ), որը միտված էր դարաբաղաբնակ հայությանն անջրպետել մայր Հայաստանի արվեստից, գրականությունից (Լեռնային Ղարաբաղում հեռարձակվում էին միայն աղբյուրացական հեռուստահաղորդումները, տեղական (հայախոս) ռադիոն եթերում աշխատում էր ընդամենը մեկ ժամ, պետական թատրոնի խաղացանկում պարտադիր պետք է լիներ առնվազն մեկ աղբյուրացական պիես և այլն: «Իհարկե, այդ տարիներին հնարավոր չէր ասել ամեն ինչ, - գրում է Հ. Գրիգորյանը «Արցախյան նժույգի ասպետը» իր մենագրության մեջ, - այդ իսկ պատճառով Կ. Դանիելյանը (և ոչ միայն նա) որոշակիորեն սահմանափակել է իր թեմատիկ հետաքրքրությունների շրջանակը [1]: Այնպես որ «Գրական Աղբյուր» նաև պահպանում էր տպագրվող ստեղծագործությունների «որակական հավասարակշռությունը»: Այսինքն՝ անհնար էր, որ գրական շաբլոնին չհամապատասխանող դարաբաղաբնակ գրողի ստեղծագործությունը լույս տեսներ:

Զնոռանանք, որ Ղարաբաղի գրողը Աղբյուրացի գրողների միության (հայկական բաժանմունքի) անդամ էր: Եվ Հայաստանի Հանրապետությունում հրատարակվելը, հատկապես գրքի տեսքով, մեծ խնդիր էր ինքնավար մարզում ապրող գրողի համար: Այնպես որ, տասնամյակներով հաշվող աղբյուրացական ամենօրյա քարոզչությունը դանդաղ ներգործող թույնի նման, այնուամենայնիվ, իր ազդեցությունն էր ունենում դա-

\* Հոդվածն ընդունվել է 15.02.17:  
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնը:



րաբաղաբանակ հայության գեղագիտական ճաշակի, աշխարհայացքի, գրականության, արվեստի ընկալումների վրա: Սա անժխտելի է: Սակայն արցախահայության հիմնական, առողջ միջուկը, ի հակակշիռ ադրբեջանական մշակութային քաղաքականության, հայի իր տեսակը, իր ազգային նկարագիրը պահպանելու համար շարունակում էր սնվել խորհրդահայ գրականության գաղափարախոսությամբ, հատկապես՝ հայրենասիրական երակից, ինչպիսիք են՝ «Հայկական էսթիզները», «Եղեգները չխոնարհվեցին»-ը, «Նահապետը», «Վարդանանք»-ը, «Ջորի Միրոն», «Մարութա սարի ամպերը» և այլն: Իսկ այն հազվագյուտ դեպքերը, երբ Երևանում լույս էր տեսնում Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի գրողի գիրքը (Բ. Ուլուբաբյան, Մ. Հովհաննիսյան, Գ. Գարրիելյան, Վ. Հակոբյան), ընթերցողների դարաբաղյան շրջանակներում իրադարձային աշխուժություն էր առաջացնում՝ ասեն անգամ փոխելով օդի բաղադրությունը, քանի որ երևույթի մեջ կար ընթերցողների (ինձ՝ արցախցիների) նվիրական երազանքի իրականացման հավանականությունը՝ Արցախը մայր Հայաստանին միանալու տեսլականը:

Խորհրդային Միության փլուզումից հետո միայն իրատեսական դարձավ Հայաստանի ու Արցախի անկախությունը, իսկ խոսքի ազատությունն արվեստին, գրականությանը լիարժեք ինքնարտահայտվելու հնարավորություն ընձեռեց: Սակայն յոթանասուն տարի հարկադրաբար մեկուսացած արցախյան գրականությունը, որն իր ասելիք նյութով և ձևի յուրացման փորձով ետնապահի դերում էր, 88-ի ազգային զարթոնքի շրջանում, կարելի է ասել, ինքնակամ հայտնվեց «լուսանցքից» դուրս, քանի որ Արցախի գրողի, արվեստագետի, մտավորականի համար առաջնահերթ խնդիրը շարժման ակունքում իր գտնվելն էր՝ շարժման ոգին պահպանելու համար: Միանգամայն իրավացի է Միլվա Կապուտիկյանը՝ նկատելով, որ «Ղարաբաղի բանաստեղծը (գրողը – Հ. Մ.) եռակի բանաստեղծ է, շատ ավելին է, քան բանաստեղծը»[2] :

Մեզ ծանոթ պատմական իրադարձությունների հետագա ընթացքը վկայում է, որ արցախյան գրականությունը (արձակը), օբյեկտիվ պատճառներից ելնելով, սոսկ 1994 թ. զինադադարից հետո կարող էր իրագրվել, յուրացնել համաաշխարհային արդի գրականության նորությունները, ստեղծագործական ձեռքբերումները, այն դեպքում, երբ, ասենք, նույն Ֆրանց Կաֆկան, Հերման Հեսսեն, Ալբեր Բամյուն, Կուրտ Վոնեգուտը հինգից -ութ տարի առաջ էին հրատարակվել հայերեն և հայաստանաբանակ ընթերցողն արդեն քաջածանոթ էր նրանց արվեստի առանձնահատկություններին: Այնպես որ արցախյան գեղարվեստական արձակը թեմատիկ բազմազանություն, նոր հայեցակետ կարող էր արձանագրել ետզինադադարյան շրջանից սկսած՝ հընթացս յուրացնելով գրական վերջին տեղաշարժերն ու ստեղծագործական ձեռքբերումները:

Նույնիսկ ոչ պատերազմ, ոչ խաղաղություն անկայուն իրավիճակը, որ զինադադարից հետո տիրում է արցախյան իրականությունում, արագորեն փոխեց մարդկանց պատկերացումները կյանքի, մինչև հիմա գոյություն ունեցող բարոյական արժեքների վերաբերյալ՝ ավանդապահ դարաբաղցուն պարտադրելով բոլորովին նոր, անծանոթ ու խորթ մարդկային փոխհարաբերություններ՝ առաջին պլան մղելով մասնավոր սեփականատիրոջ մերկանտիլ հոգեբանությունը, հաշվենկատությունը, որում առկա է անգամ այն մարդկանց օտարումը, ում հետ տակավին երեկ կիսում էր խրամատային կյանքի դժվարությունները:

Այս ամենն իր անդրադարձն է գտել Մ. Հովհաննիսյանի «Արմատ» վիպակում, որի հերոսուհին՝ Հեղուշը, ճարպիկ, շրջահայաց, երիտասարդ, գործունյա կին է՝ նոր ժամանակների բարքերին լիովին ադապտացված, ուստի և առաջնորդվում է նույն այդ ժամանակի պարտադրած «խաղի կանոններով»: Սա դարաբաղցի կնոջ նոր կերպար է:

Վիպակը «Արմատ» խորագիրն է կրում, բայց, մեր համոզմամբ, այդ բառի գրական ընկալումն ի գորու չէ իր մեջ ամբողջովին ներառելու հեղինակի ասելիք նպատակը: Բանն այն է, որ դարաբառյան բարբառում «արմատ»-ն ունի «տակաբե» ձևայնություն, և «տակաբե» ասելիս հասկացվում է արմատներից հիմնականը, մայր արմատը, որից սկիզբ է առնում ծառաբունը և որին հենվելով՝ մնում է կանգուն: «Տակաբե» բառը շատ գործածական է նաև բանավոր խոսքում, երբ, օրինակ, մեկը պարզել է ուզում գրուցակցի տոհմական ծագումը, հարցնում է. «Տակաբավ շտեղանը՞ս»: Ուրեմն այս հանգամանքը հաշվի առնելով է Մ. Հովհաննիսյանը վիպակն անվանել «Արմատ»: «Նշխարներ Արցախի բանահյուսության» գրքում բառն ունի հետևյալ բացատրությունը. «Տակաբե-արմատ, փոխ. տան մեծավորը, ազգի մեծ»[3]: Կարելի է այստեղից էլ հետևություն անել, որ Մ. Հովհաննիսյանը բառի երկրորդ իմաստն է նկատի ունեցել՝ վիպակն «Արմատ» անվանելով: Վիպակի հերոսուհին՝ «Նեղուշը, տան մեծավորն է ոչ այն պատճառով միայն, որ ամուսինն արցախյան պատերազմի հաշմանդամ է՝ զամված սայլակին, «հիմա նրանք են տուն պահում», - գրում է հեղինակը[4]:

Հեղուշի կերպարի «ազգակցական կապը» Հրանտ Մաթևոսյանի Աղունի («Աշնան արև») հետ նկատելի է: Սակայն, միևնույն ժամանակ, Հեղուշը հակապատկեր է Աղունին՝ կյանքի, բարոյական արժեքների մերօրյա ընկալման-գնահատման առումով: Ուրիշ խոսքով՝ Աղունի զարգացած տեսակն է Հեղուշը, որը նույնպես մշտապես ապրում է ամուսնու, կեսրոջ, զավակների հոգս ու ցավով և թխսկանի նման շարունակ սատարում է նրանց, բայց, ի տարբերություն Աղունի, չի երկնչում ոչնչի առաջ՝ հանուն իր օջախի խաղաղ գոյակցության: Շուկայում առևտուր անելով, Երևանից ամեն շաբաթ բանջարեղեն բերել-վաճառելով՝ իրացնում է իր գերխնդիրը, և եթե որդին քրոջ պատիվը պաշտպանելու համար դանակահարել է մի երիտասարդի, Հեղուշի բեռն է ծանրանում կրկնակի, քանի որ և՛ տուժածի ապաքինման ծախսերը պիտի հոգա, և՛ որդուն ազատելու համար պիտի դիմի այլևայլ քայլի, թեպետ «ամեն անգամ մեկի գրպանը ծրար սահեցնելուց, կեսը հալվում էր»[5]: Եվ եթե հարկ եղած դեպքում «գործի» մեջ է դնում իր մարմինը, միևնույն է, Հեղուշը անբարոյական չէ, քանի որ դա ինքնագոհություն է հանուն իր օջախի պահպանման: Հեղուշի արարքում եթե մեղքի բաժին կա, ապա դա միայն պետք է վերագրել մեր անհոգի իրականությանը, հատկապես որ Հեղուշի «Գլխին թափված դժբախտությունները աչքին ներկայացան ոչ թե որպես սխալ քայլ կամ ծախսող արարք, այլ իր առաջ հայտնված հերթական դժվարություն, որ կյանքը նորից ու նորից առաջադրում է...» [6]:

Մ. Հովհաննիսյանի ետպատերազմյան շրջանի արձակի բնորոշ գիծը թերևս արցախյան ներկա իրականությունում տեղ գտած և օրեցօր կյանքի զարկերակը մտնող այն խորթ, բացասական (հաճախ արտաքուստ ոչ այդպիսին թվացող) երևույթների արտացոլումն է, որոնք խաթարել ու խաթարում են արցախցու նկարագիրը, որոնց պատճառով դարաբառցին կորցրել ու շարունակում է կորցնել իր ես-ը, ինքնությունը: Երևույթն ինքը աղետալի չարիք է հատկապես միջազգայնորեն չճանաչված երկրում ապրողի համար, ուր որքան իրատեսական է պատերազմի վերսկսվելու վտանգը, նույնքան էլ վտանգավոր են փխրուն խաղաղությունում շիվեր արձակող մարդկային այդ նոր հարաբերությունները: Եթե որդին հորից ծանծրացած նրան հանձնում է ծերանոց, վաղը, հարկ եղած դեպքում, հանուն ո՞ւմ կամ ո՞ր վեհ գաղափարի համար է ձեռքը գենք վերցնելու: Եթե աղջիկները հորը պարտադրում են վաճառել հայրական տունը՝ հանուն իրենց բարեկեցիկ կյանքի, երկրից հեռանալը շատ է հեշտանում: Այս ու նմանօրինակ հարցերն են տազնապներ առաջացնում հեղինակի մտածումներում՝ արտահայտվելով կամ հեղինակային տեքստի ձևով, կամ գործող անձանց շուրթերից,

ինչպես, օրինակ. «Արմենակ, խելոք մարդ ես, էս ժողովուրդը ո՞նց պիտի ապրի, փող չկա, ապրուստ չկա, ով դրսից օգնության փող է ստանում, կարողանում է թաթը կոթին հասցնել: Ամենից բեթարը էն է, որ մարդիկ աշխատանքից խամացել են, աչք պահած սպասում են, թե որտեղից մի օգնություն կստանան: Հիմա ամոթ չեն համարում, որ աղբարկղերում... Մարդու լեզուն պատ չի գալիս, որ ասի, հավի նման քոթթ են անում, կամ ձեռքը մեկնած մուրացկանություն են անում: Փող են պարտք վերցնում և գիտեն, որ պարտքը չեն վերադարձնելու: Ամոթը վերանում է, աչքիդ մեջ նայում են ու սուտ խոսում: Արմենակ, սրա վերջը ի՞նչ է լինելու»[7]:

Անկախության շրջանի արցախյան փոքր կտավի արձակի լավագույն նմուշներից է Կ. Դանիելյանի «Դիլեմա» (Dilemma) պատմվածքը: Այս ստեղծագործությունը, ի տարբերություն այլ պատմվածքների, գերծ է քնարականությունից, ռոմանտիկ գունեքանգներից, ամբողջովին ներծծված է կյանքի փիլիսոփայությամբ, ինչը հաճախ, իբրև ճշմարտություն, լինում է դաժան, ինչը նաև վկայում է հեղինակի գրողական հասունության, կյանքի խոր ու համակողմանի ըմբռնման մասին: «Դիլեմա» պատմվածքում Կ. Դանիելյանը դիմել է էկզիստենցիալիզմին բնորոշ մեթոդին՝ կիրառելով որոշ տարրեր. ստեղծել է «սահմանային իրավիճակ», որտեղ հայտնված իր հերոսները բացահայտում են իրենց էությունը, որից հետո, ինչպես թատրոնում, ներկայացումից հետո փակվում է վարագույրը, և կյանքը կրկին մտնում է իր առօրյա հունի մեջ: Ուստի, ինչպես ֆրանսահայ գրող Վահե Քաչայի ստեղծագործություններում, օրինակ, «Գիշատիչների խնջույքը» վիպակը, որտեղ գործող անձինք, որ եկել էին Բրիտիտի ծննդյան տարեդարձը նշելու, և նրա պատուհանի տակ սպանված գերմանացի երկու զինվորի փոխարեն շենքը խուզարկող գերմանացի սպան խնջույքի մասնակիցներից պահանջում է իրեն հանձնել երկու հոգու՝ իբրև պատանդ, ըստ որում՝ ընտրությունը թողնում է խնջույքի մասնակիցների հայեցողությանը, ինչն էլ պատճառ է դառնում, որպեսզի յուրաքանչյուր ոք, հանուն իր գոյի պահպանման, ի հայտ բերի իր ստորակարգ բնազդները, ճիշտ այդպես էլ «Դիլեմա» պատմվածքում Կ. Դանիելյանը համապատասխան առիթն օգտագործելով՝ իր հերոսներին ազգում է «սահմանային իրավիճակի մեջ»: Պատմվածքում այդ առիթը Ռուսաստանից ստացված հեռագիրն է, որում ասվում է, որ Արմենը (գլխավոր հերոսի եղբայրը), որ անհայտ կորել էր արցախյան պատերազմում, ողջ է և տուն է վերադառնում: Թվում է՝ ինչ կարող է լինել ավելի ուրախալի, քան անհայտ կորած եղբոր վերադարձը, հատկապես, որ մեջտեղ էլ տասը տարվա բաժանում կա: Սակայն հենց այս լուրն է, որ պատմվածքի հերոսներին կանգնեցնում է դիլեմայի առաջ: «Մեր ամենամոտ հարազատը, որ այդքան տարի կորած էր համարվում, հանկարծ հայտնվել է, և մենք կարծես թե ուրախ չենք դրա համար».[8] - ասում է տղամարդը: Բանն այն է, որ պատմվածքի հերոսն այդ ժամանակաընթացքում ամուսնացել է իր եղբոր կնոջ հետ, և կորած եղբոր վերադարձը սպառնում է այդ ընտանիքի գոյությանը:

Պատմվածքն սկսում է առանց հեղինակային խոսքի, ուղղակի՝ երկխոսությամբ.

«- Հիմա ի՞նչ պիտի անենք:

- Ի՞նձ ես հարցնում...» [9] :

Ինչն էլ պատումը դարձնում է բավականին լարված, և երկխոսությունների միջոցով են ընթերցողին պարզ դառնում դիլեմայի առաջ հայտնված այդ գույգի երկակի հոգեվիճակը, տագնապը, ուրախությունը, ակսոսանքը, զղջումը, մեղադրանքը և այլն: Տղամարդն այդ ողջ ժամանակաընթացքում (ինչ ամուսնացել էր եղբոր կնոջ հետ), առաջին անգամ բարձրաձայն մեղադրում է նրան՝ ասելով.

«- Ինչո՞ւ ինձ մեղքի տակ զցեցիր:

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

- Ես՝ քե՞զ, թե՞ դու՝ ինձ,- կնոջ դեմքը ամոթի՞ց, հուզմունքի՞ց, թե վիրավորանքից կաս- կարմրել էր:

- Դու չէիր ուզում, ու ես զոռով եկա, հա՞...

- Ես դա թույլ եմ տվել Արամիկիս համար,- կինը ուղղակի վնաստաց,- որ անհայր չմնա»[10]:

Այս սեղմ երկխոսության մեջ՝ ամուսինների խոսքակրպի տակ, բեկված ճակատագրերի բողոք կա: Չնայած մեկը մյուսին է մեղադրում իր կատարած ճակատագրական քայլի համար, և տղամարդը գազազած պահին նրան նույնիսկ լիդք է անվանում, բայց ինքն էլ գիտե, որ դա այդպես չէ, որ կինը «ամոթի՞ց, հուզմունքի՞ց, թե վիրավորանքի՞ց» շիկնում է, երբ խոսքը մտնում է ինտիմ կյանքի տարածք:

Իրականում նրանցից ոչ ոք էլ մեղավոր չէ կատարվածի համար: Կնոջ արարքում եթե անգամ առկա է գործած մեղքը, միևնույն է, դա մեղք չէ, քանի որ արվել է հանուն երեխայի ապագայի: Հետևապես, այդ մեղքի մեջ ավելի շատ ինքնազոհություն կա. չէ՞ որ կնոջը չի առաջնորդել զգացմունքը, կիրքը:

Հոգեպես նույնչափ մաքուր ու անմեղ է նաև տղամարդը, ահավասիկ .կինը, ծանոթանալով հեռագրի բովանդակությանը, տարակուսում է. «ախր տասը տարի է անցել», իսկ տղամարդն ուղղում է. «Ինը տարի, տասը ամիս, քսանչորս օր»: Սա նշանակում է, որ տղամարդու՝ եղբոր նկատմամբ ունեցած կարոտն ու սպասումը չափվել է հաշվող օրերով: Իսկ այդպիսի հոգու տեր մարդը չէր կարող գայթակղել եղբոր կնոջը: Հետևաբար տղամարդն էլ է գիտակցաբար գնացել «մեղքի» արահետով և նույնպես՝ հանուն երեխայի, իր եղբոր երեխայի ապագայի: Ու թե կինը բորբոքված պահին ասում է. «Թող գա, նա ինձ անպայման կնեղի, դու քո գլխի ձարը տես», և տղամարդը զգուշացնում է նրան՝ սպառնալով. «Ես կամ քեզ եմ սպանելու, կամ երկուսիս միասին», այստեղ սիրո կամ խանդի մասին խոսք լինել չի կարող: Տղամարդուն մտահոգողը բարոյականությունն է: Նրա համար անընդունելի է, որ իր և նրա տասը տարվա ինտիմ կյանքից հետո ամեն բան կարող է վերադառնալ ի շրջանս յուր:

Ինչպես Կ. Քաչայի «Գիշատիչների խնջույքը» վիպակում է հանգուցալուծումն սկսում այն պահից, երբ գերմանացի սպան՝ Կուրտ Կաուբախը, խնջույքի մասնա-կից-ներին հայտնում է, որ մարդասպանները ձերբակալված են և տարեդարձ նշողները ազատ են պատանդ ընտրելու խնդրից, այդպես էլ Կ. Դանիելյանի «Դիլենա»-ում ամեն ինչ իր տեղն է ընկնում փոստատարի վերադարձով, ով շփոթել, նրանց էր հանձնել ուրիշի հեռագիրը: Իհարկե, հեռագիր բերելը, հասցեն շփոթելն ընդամենը գեղարվեստական հնարք է, միջոց, որպեսզի հեղինակը ներկայացնի իր ասելիքը, ներկա դեպքում՝ նաև ակնարկի, որ ներկայացված պատմությունը եզակի չէ: Այդ նպատակով է փոստատարի բերանով հեղինակն ասում. «Պարզվում է, որ Ռուսաստանում նրանք էլ (հեռագրի իսկական հասցեատերերը – Հ. Մ.) Արմեն ունեն, դո՞ւք էլ... Ձեր Արմենը չգիտեմ, բայց նրանցը բանի պետք չէ, ասում են՝ նստած է բանում... Այստեղ էլ մայրը, կինը, եղբայրն իրար հետ լեզու չեն գտնում»[11]: (Այսինքն՝ մեզ ծանոթ պատմության մեկ այլ տարբերակ էլ նրանց օջախում է, որտեղ մայրը, հավանաբար, կռահել է որդու և հարսի «փոխհարաբերությունը» - Հ. Մ.): Այդ իսկ պատճառով է փոստատարն իր խոսքը եզրափակում, ասելով՝ «խորթին պատմություն է»:

Ինչպես «Գիշատիչների խնջույքը» վիպակում տարեդարձի մասնակիցները, պարետային ժամի պատճառով, ստիպված են մնալ հորեյարի տանը և շարունակել իրենց խնջույքը՝ մոռանալով մինչ այդ տեղի ունեցածը, մեկ-մեկու հասցրած վիրավորանքներն ու ստոր արարքները, այդպես էլ Կ. Դանիելյանի «Դիլենա» պատմվածքում իրերի դասավորությունը փոխվում է փոստատարի գնալով:

«Ես էլ գնամ, - տղամարդը շտապ հագավ վերարկուն:  
Կինը գունատվեց»[12]:

Իհարկե, գունատվում է ամուսնու վերջնականապես հեռանալու ահից: Եվ երբ տղամարդը կոշիկի քուղեքը կապելիս քթի տակ թոնթորում է՝ գործից ուշացա, ոչ միայն կնոջ հոգուց թոթափվում է բաժանման ապրումի ծանրությունը, այլև գործից ուշացան վերականգնում է այդ օջախի անդորրը, ինչին էլ անմիջապես հետևում է կնոջ առօրյա՝ արդեն տասը տարի շարունակվող մշտական հարցը՝ «Շո՞ւտ կվերադառնաս»[13]:

Պատմվածքում ոչ մի խոսք չկա պատերազմի մասին (բացի Արմենի անհայտ կորչելու փաստի հիշեցումը), սակայն ամբողջ պատմվածքը բողոքի յուրատեսակ ճիչ է՝ ուղղված պատերազմին: Այս գույզն ամուսնացել է՝ պատերազմից փլուզման եզրին հայտնված մի օջախ փրկելու հույսով: Ամուսիններից ոչ մեկն էլ երջանիկ չէ (այս մասին խոսք լինել չի կարող), քանի որ նրանց գերխնդիրը եղել է որբ մնացած երեխային լիարժեք կյանքով ապրեցնելը: Նրանց հոգեկան դիլեման մեծ, ժանր բեռ է, որի տակ, հատկապես տղամարդը, այս էլ արդեն տասը տարի է, որ կթել է. մի կողմից՝ եղբոր նկատմամբ ունեցած կարոտից, սիրուց ու սպասումից է օրերը հաշվում, մյուս կողմից էլ՝ նրա վերադառնալու երկյուղից: Ահա թե ինչու, երբ փոստատարը ետ է վերցնում հեռագիրը, ամուսիններից յուրաքանչյուրը ներքուստ գոհունակություն է ապրում, որ տեղի ունեցածը շփոթմունք է եղել, և դա արտահայտվում է «գործից ուշացա», «Շո՞ւտ կվերադառնաս» նրանց առօրյա խոսքափոխանակությամբ:

Շեքսպիրի «Օթելլոյի» գեղագիտական արժեքը կույր խանդից կործանված սիրո պատմության մեջ է, բայց «Օթելլոյի» հարատև արդիականության գաղտնիքը պիեսով մեկ տարրալուծված կենսահաստատ փիլիսոփայությունն է: Ուստի, ի տարբերություն կինոարվեստի, որը շատ ավելի շուտ մաշվող-հնացող է իր ժանրային առանձնահատկությունների պատճառով, գրականությունը օժտված է որոշակի առավելություն-նախադրյալներով՝ լուծելու համար ժամանակի և տարածության խնդիրը: Այստեղ է, որ, կարծում ենք, առաջ է գալիս Սևակյան բանածնման կարևորությունը: «Գրականության մեջ վերջին հաշվով կարևորը ինչ-ն է, և ոչ թե ինչպես-ը»[14]: Կարելի է տասնյակ օրինակներ բերել Սովետահայ պոեզիայից՝ նվիրված Կարմիր հրապարակին, կուսակցությանը և կուսակցական առաջնորդներին, դրանք փաստորեն նոսնակատարային չափածոներ են, սակայն ոչ պոեզիա: Չնայած Չարենցյան հանձարը, տրված իր ժամանակի ոգորումներին, դրանք որակել է որպես պրոլետարական պոեզիա. «Պրոլետարական պոետները դեռ չեն ստեղծել իրենց նոր շունչը, թափը, չափը... Նրանց դերը դեռ ապագայում է, դեռ գալիս է...» [15]: Բայց, ինչպես ցույց տվեց կյանքը, այդպես էլ չեկավ պրոլետարական պոեզիայի ժամանակը, քանի որ, իրականում, չկա այդպիսի պոեզիա, ինչպես որ մտացածին էր սոցիալիստական ռեալիզմը:

Գրականությունը մարդկային հավաքական կյանքի պատմությունն է, որից հավասարապես օգտվում են մյուս գիտությունները: Ա. Էյնշտեյնը գտնում էր, որ Դոստոևսկին իրեն ավելի շատ բան է տվել, քան ուզածը գիտնականը: Այստեղից էլ կարելի է ենթադրել, որ ընթերցողը, մեն-մենակ մնալով գրական երկի հետ, հոգեբանորեն ոչ միայն նախապատրաստված է լինում, այլև, որպես ներքին պահանջ, ուզում է, որ հեղինակն իրեն ,անակնկալի բերի՝ կյանքի նոր բացահայտումներով: Մեծ հաշվով գրական երկում ընթերցողը մի՛ֆ է փնտրում՝ տերմինի ոչ արիստոտելյան կիրառությամբ:

«Причина в том, что любой читатель находится в ситуации своеобразного «диалога» по отношению к произведению: он обладает определенным культурным кругозором, системой культурных координат, в которые произведение включается как в свой контекст и в

зависимости от контекста позволяет выявлять такие аспекты смысла, которые интенционально никак не фокализованы»[16]:

Որքան էլ պարադոքսալ հնչի, դերասանը շատ ավելի հեշտ ու ներշնչանքով է մարմնավորում այնպիսի մի բարդ կերպար, ինչպիսին է, ասենք, Համլետը, և նույնչափ էլ դժվարանում ու ներքին դիսկոմֆորտ ունենում բաղնիքում լողանալու սովորական մի տեսարանում նկարահանվելիս: Բանն ամենևին էլ սեփական մարմնի մերկության ցուցադրումը չէ կինոդիսկոմֆորտ առաջ, պատճառը տեսարանի «կենցաղայնությունն է», որտեղ բացակայում է մեր ասած միջք (այս դեպքում՝ դերասանի համար), ներշնչանքի մղող այն առեղծվածայինը, որը սահմանազատում է ռեալ իրականությունը գրականության (արվեստի) իրականությունից, ինչը, փաստորեն, արվեստի անկյունաքարն է:

Արտածման միանգամայն տարբեր հարթությունում են գտնվում գեղարվեստական երկում նկարագրվող իրականության կենցաղայնությունը և հեղինակային գաղափար-ասելիքի կենցաղայնությունը: Առաջինը միտված է երկի գերխնդրի բացահայտմանը, երկրորդ դեպքում՝ ինքն է գերխնդիրը: Ամեն դեպքում. «Արվեստը, ճշմարիտ արվեստը չի կարող լծվել հոռետեսության հաղթակառքին: Այն վերադարձնում է վստահությունը»[17]:

Անկախության շրջանի արցախյան արձակը, թեկուզև դանդաղորեն, առաջընթաց է ապրում՝ գրականություն բերվող տարաբնույթ թեմաների և այդ թեմաները հնարավորինս գեղարվեստի արդիական լեզվով մատուցելու շնորհիվ: Արցախյան արդի արձակը նոր հերոսի կերպարի կերտման խնդիր ունի, ինչին էլ հիմնականում միտված են հեղինակներից շատերի ջանքերը: Սակայն, մեր համոզմամբ, հարցին համալիր մոտեցում է պետք: Երկու տասնամյակից մի փոքր ավելի ժամանակ է մեզ բաժանում խորհրդային կարգերից, բայց այսօր, ցանկության դեպքում էլ, մեղմ ասած, դժվարությամբ է ընթերցվում խորհրդային Արցախի գեղարվեստական արձակը: Պատճառը միայն թեմաների ընտրությունը չէ, որոնք այսօր մեծամասամբ ժամանակավրեպ են, և ոչ էլ հերոսների՝ շատ անգամ սխեմավորված գործողություններն ու հոգեբանությունը, և պատումի պատմողականությունը, այլև այսօրվա ընթերցողի ինտելեկտուալ մակարդակն է պատճառը, որը չի կարող ընդհանուր եզր գտնել խորհրդային Արցախի գրական երկերից շատերի գեղագիտական-փիլիսոփայական հարցադրումների հետ՝ թե ճանաչողական, և թե գեղագիտական բավարարվածության առումով: Ուստի արդի արցախյան արձակը նախ և առաջ պիտի ձգտի ինտելեկտուալության: Ինտելեկտուալիզմը իրականում արտահայտվում է նյութի հանդեպ հեղինակի ունեցած վերաբերմունքի մեջ, կենսական փաստի իմաստավորման, ստրուկտուրալ ներքին բարդ կապերի, համադրումների և գեղարվեստական բազմաթիվ այլ գործոնների միջոցով: Հակառակ դեպքում՝ «Կարդացեք, եթե քաջություն ունեք, 1835 թ. մի ողբվիլ կամ մի ֆացետի. պիեսը ձեր ձեռքից կընկնի,- գրում է Հայպոլիտ Տենը:- Հաճախ փորձում են բեմ հանել դրանց. քսան տարի առաջ դա մեծահռչակ էր. այսօր հանդիսականները հորանջում են ... Այսպես ե ահա, վոր լույս տեսնող անթիվ անհամար գրվածքների մեջ ժամանակը կատարում էր իր ընտրությունը. Մակերեսային և քիչ դիմացկուն հատկանիշների հետ նա տանում է և այդ հատկանիշներն արտահայտող յերկերը»[18]:

Կյանքը զարգացող մշտափոփոխ ընթացք է և, ինչպես Հեգելն է բանաձևում, «աշխարհը ըստ ժամանակի սկիզբ չունի և ժամանակի մեջ անվերջական է»[19], շարժման այդ դինամիկայում գրական երկը մշտապես ստատիկ, ավարտուն վիճակ է, ինչպես շրջանագծի ցանկացած կետ շրջանագծի համեմատ: Ստացվում է մեզ հետ հազար անգամ տեղի ունեցածի պես. սլացող գնացքի պատուհանից երևացող տեսարանները շարունակ ետ են մնում: Ետ մնացողը արվեստն է: Արվեստը կյանքի զարգացող ըն-

թացքին զուգահեռ ընթանալ չի կարող. նրան ժամանակ առ ժամանակ հարկավոր է լինում «կանգ առնել» ինքն իրեն «հավաքելու», մտորելու, ինքն իրեն ,ներսից զննելու համար: Իսկ այդ ընթացքում զննքն արդեն զննցած է լինում: Ուշագրավն այն է, որ զննքի պատուհանից մեր տեսածն է ետ մնում, տեսարանների (յավագույնների) տպավորությունը մենք տանում ենք մեզ հետ, իբրև բացահայտում, ձեռք բերած փորձ, իբրև ճանաչում: Մեր պատանեկության տարիներին ընթերցած Ռոբերտ Սթիվենսոնի «Գանձերի կղզին» կամ Ջոնաթան Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունը», Ջեյ Լոնդոնի «Սպիտակ ժանիքը» և այլն նորից կարդալու անհրաժեշտություն չի լինում, գործում է մեր մտահայեցողությունում պահպանվող տպավորությունը (չենք բացառում տպավորության թարմացման նպատակով վերընթերցումը): Ուրեմն՝ զննքում գտնվողը իր հետ տանում է միայն ստացած տպավորությունը, իսկ ինքը՝ տեսարանը ամեն անգամ կրկնվում է նոր զննքների համար՝ ներսում գտնվողների նորովի ընկալումներով:

Ֆրանսիսկ Լ-ը, որ «Ջոկոնդայի» առաջին գնորդն էր, կյանքից հեռանալիս իր հետ չտարավ «Ջոկոնդա»-ն: Ուրիշ խոսքով՝ ժամանակի մեջ փոփոխվում են դպրոցականները, անփոփոխ է մնում «Վերք Հայաստանի»-ն: Ուրեմն ինչու՞ Սմբատ Շահագիզի «Երազ»-ը, Գևորգ Դոդոխյանի «Ծիծեռնակ»-ը և էլի շատ ստեղծագործություններ մնում են անընդհատ փոփոխվող իրականության հողովույթում, իսկ, ասենք, Վահան Միրաքյանի «Լավվարի որսը», Հարություն Լկամարյանի «Երկու ձեռքին երկու մոմ»-ը այլ ստեղծագործությունների հետ մոռացվում են: Կարծում ենք՝ այստեղ է գրականության պատասխանատվության կարևորությունը: Գրական երկը, որպես տեքստ, գիր, ժամանակի պահանջներին համապատասխան փոփոխվել չի կարող, ինչպես տապանաքարի արձանագրությունը: Ուրեմն հեղինակի անունից նրա թողած գիրն է խոսելու դարերի հետ, հետևաբար այդ գիրը խոսելու բան պիտի ունենա: Այստեղ է, որ երևում է մի հեղինակի առավելությունը մյուսից: Լավ հեղինակը տեքստի խորքերում զանազան եղանակներով պարփակվում է մարդկային կյանքի կենսափորձի փոխտպալությունը, գունարած իր ապրած ժամանակի, կյանքի ճանաչողության իր փորձը, որպես կյանքի ստուգված փաստ, ձեռքբերում, ապագայում ապրողների համար: Այդ ամենի օգտակարությունն էլ ժամանակային տարածքում համարժեք հետաքրքրություն է առաջացնում տվյալ հեղինակի նկատմամբ: Ուստի տեքստը, որպես գիր, ժամանակային տարածքում ավելի է կարևորվում, քան ինքը՝ հեղինակը, որպես սուբյեկտ: Քիչ չկան գեղարվեստական երկեր, որոնց հեղինակները մեզ անհայտ են, սակայն դրանից դույզն ինչ չի տուժում տվյալ երկը:

Կա ուշագրավ մի նրբություն. հեղինակի տաղանդի հզորությամբ է պայմանավորվում տեքստի ներքին «մշտական արդիականացումը», փոխարենն էլ տեքստը իր ներսում պարփակված խտացումների շնորհիվ կենդանի է պահում հեղինակի անունը:

Եթե մենք այսօր կարդում ենք Բոկկաչո, կամ Սայաթ-Նովա, Քուչակ, կամ Բայրոն, փաստորեն տեքստի խորքերից կորզում ենք «կյանքի ճշմարտություններ», ինչպես ոսկեխոյզն է լվացման եղանակով հայտնաբերում թանկարժեք մետաղը: Եվ քանի որ արվեստը (գրականությունը) զարգանում է պարաբոլայի սկզբունքով, մոռացումը նույնպես բնականոն է: Սանդրո Բոտիչելլին, որ մահացավ 1510 թվականին, իր մահով մոռացության տրվեց: Մոռացվեց և նրա անունը, և նրա արվեստը, չնայած, որ և Դանթեի «Աստվածային կատակերգության», և Բոկկաչոյի «Դեկամերոնի» առաջին նկարագրողողն է եղել: Միայն երեք-չորս սերունդ հետո՝ 19-րդ դարում, վերստին «հայտնաբերվեց» Բոտիչելլին: Հետևապես անհրաժեշտ է ոչ միայն «օգտակար հանածոյի» առկայությունը, այլև հայտնաբերողի կարողությունը: Ամեն դեպքում՝ նույնիսկ մոռաց-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ված երկը իսպառ չի վերանում, շարունակում է մնալ օբյեկտիվ իրականության մեջ: Այնպես որ՝ մոռացումն էլ հարաբերական է: Ավելի պարզ կլինի, եթե պատկերացնենք, որ գրականությունը (արվեստը) մի ցուցակ է՝ անընդհատ ավելացող նոր անուններով, որտեղ մշտապես ներքին պայքար-տեղաշարժեր են կատարվում. ամենքը ձգտում են տեղ գրավելու վերին հորիզոնականներում, ընդ որում ոչ ոք դուրս չի մնում ցուցակից, ավելին՝ նույնիսկ ետնապահներն են համբերատար սպասում «ծիածանվելու» իրենց ժամանակին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրիգորյան Հ., Արցախյան նժույգի հեծյալը, ՀՀ ԳԱԱ, Եր., 2012, էջ 51:
2. Հակոբյան Վ., Բանաստեղծությունը և տիեզերական շարժումը, Ստեփ., 2000.
3. Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Եր., 1991, էջ 376:
4. Հովհաննիսյան Մ., Հոգնած երեկո, Ստեփ., 2010, էջ 22:
5. Նույն տեղում, էջ 46:
6. Նույն տեղում, էջ 49-50:
7. Նույն տեղում, էջ 262:
8. Ղանիեյան Կ., Ծաղիկներ Համշենից, Եր., 2015, էջ 148:
9. Նույն տեղում, էջ 147:
10. Նույն տեղում, էջ 149:
11. Նույն տեղում, էջ 151:
12. Նույն տեղում, էջ 151:
13. Նույն տեղում, էջ 151:
14. Սևակ Պ., Վերնագիրը վերջում, Եր., 1991, էջ 18:
15. Չարենց Ե., Գրականության մասին, Եր., 1957, էջ 193:
16. Барт Р. Избранные работы: Семиотика: Поэтика: Пер. с фр. / Сост., общ. ред. и вступ. ст. Г. К. Косикова. М., 1989.
17. Բոնֆուա Իվ, Գեղեցկությունը առաջին օրից, Եր., 2012, էջ 37:
18. Տեն Հիպպոլիտ, Գեղարվեստի փիլիսոփայությունը, Եր., 1936, էջ 444
19. Հեգել, Փիլիսոփայության ներածություն, Եր., 1964, էջ 168:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### Արցախյան արդի պատմվածքի հետաքրքրությունների տեսադաշտը Համլետ Մարտիրոսյան

Հոդվածը արժարժում է անկախության շրջանի արցախյան պատմվածքի ներքին տեղաշարժերը, անդրադառնում նոր արտահայտչամիջոցների կիրառման անհրաժեշտությանը, որոնց օգտագործումը կնպաստի ժամանակաշրջանի լիարժեք արտացոլմանը, ինչպես նաև ժամանակակից մարդու ներաշխարհի նոր շերտերի բացահայտմանը:

Գիտականորեն հիմնավորում է արցախյան արդի պատմվածքի բերած նորությունները, այդ թվում և անդրադառնում ազատամարտիկի նորահայտ կերպարին, որը ոչ միայն արցախյան հատվածի, այլև ժամանակակից հայ գրականության ձեռքբերումներից է:



РЕЗЮМЕ

Тенденции развития современного арцахского рассказа  
Гамлет Мартиросян

**Ключевые слова:** документальность, борьба за свободу, повесть, портрет, образ, колорит, борец за свободу, сравнение, тоска, война, родина.

Статья рассматривает внутренние сдвиги арцахской повести в период независимости, обращается к потребности использования экспрессивных способов, употребление которых послужит полноценному воспроизведению периода так же, как и раскрытию новых пластов внутреннего мира современного человека. Статья обосновывает приведенную новизну современной арцахской повести, в том числе и обращается к образу новоявленного борца, который является не только арцахским отрывком, но и приобретением современной армянской литературы..

SUMMARY

Tendencies of the development of the Modern Artsakh Narratives  
Hamlet Martirosyan

**Keywords:** actuality, freedom fight, story, picture, character, color, freedom fighter, comparison, blues, war, fatherland.

The article dwells upon inner movements of the Artsakhi narratives during the period of independence, rebounds the need of expressive means application, that will help to completely represent the period and disclose new layers of modern man's inner nature.

The article justifies the novelty brought by modern Artsakh narrative and rebounds the new character of freedom fighter, which is not only the part of Artsakh but also the achievement of modern Armenian literature.

ԱՐՏԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՊՈՆԶԻԱՆ\*

Սուսան Միրզոյան

**Բանալի բառեր՝** Արտեմ Հարությունյան, Հայաստան, ցեղասպանություն, Արցախ, Շուշի, Բաբելոն, ազատություն, գոյամարտ, պոեզիա, ինքնատիպություն, ազգային կոլորիտ, համամարդկային արժեք:

Արտեմ Հարությունյանը արդի հայ պոեզիայի ականավոր ներկայացուցիչներից է: Հայտնի են նրա «Նշանների երկիր», «Տեսադաշտ», «Շեն», «Ներկայության խոսքեր», «Նամակ Նոյին», «Հուդայի արծակուրդը», «Հեռուտապոեմներ «Շուշի» և «Բաբելոն» հյուրանոցների աշտարակից» բանաստեղծական ժողովածուները: Վերընթերցելով այդ ժողովածուները՝ կրկին ու կրկին համոզվում ես, որ նա արդի հայ քնարերգության գերաստղերից է, որն արդեն նկատելի է համամարդկային մշակույթի աստղագարդ երկնակամարում:

Պատահական չէր, որ մեր պոեզիայի դասականներից Գ.Էմինը ժամանակին նկատել է. «Արտեմ Հարությունյանն ապագայի բանաստեղծ է, ինչպես Չարենցը 20-րդ դարի հայ պոեզիայում»: Ամերիկահայ բանաստեղծ Փիտեր Բալաքյանը գոհունակությամբ ընդգծում է. «Ա.Հարությունյանը դուրս է բերում հայ պոեզիան ազգային նեղ սահմաններից դեպի համաշխարհային ընթերցող», իսկ ամերիկացի բանաստեղծ Հեյրն Գերոյթը հաստատում է, որ Ա.Հարությունյանի պոեզիան «հզոր է, կենսական, վառ և խորապես նշանակալից, նրա «Նամակ Նոյին» գիրքը հոյակապ է, այն հավերժորեն ահագնացող է, ահագնագող»:

Կարելի է ավելացնել նշանավոր այն մարդկանց անունները, ովքեր, ըստ էության, բարձր են գնահատել Հարությունյանի պոեզիան:

2015թ.լույս տեսավ հռչակավոր բանաստեղծի «Հատրնտիրը»: Նրա առաջին բաժնում գետեղված են գործեր «Նշանների երկիր» գրքից: Բերված շարքի մեջ ներկայանում է երիտասարդ բանաստեղծն իր պոետական կենսակերպով ու կենսադիրքով: Երևում է հասուն արվեստագետն ու քաղաքացին իր ծրագրերի ու անելիքների հայեցակետով ու դիրքորոշմամբ, որն զգում է ճակատագրի ծանր խաչը կրելու պատասխանատվությունը: Նրա բանաստեղծական հյուսվածքներում զգացվում է մի կողմից՝ արևաշող լավատեսությունը, մյուս կողմից՝ կոշտ, նյութականացած առօրյայի համատեղումն այդ լավատեսությանը: Նրա պոետական հայացքը շիտակ է, հաստատում է բարին ու գեղեցիկը, թևածում է ազատ երևակայությունը: Նրա նշանների խառնարանում ընդգծվում են Հայոց աշխարհի դարավոր շերտերը, համեմվում Հայրենիքի և որդու ապրեցնող գրույցով, որի շնորհիվ.

Օդը շնչում է և դառնում ընկեր...

Մենություն չկա, միայն արթնացում... [1]

Ա.Հարությունյանի հոգևոր արթնացումն ակունքվում է Հայրենիքի մայրական սիրուց ու փարվում մայր-հայրենիքին, ասել է թե՛ մայր ու որդի գտնում են իրար: Ալիքվում է սերը ինչպես այգաբաց ու դառնում երգ-խոստովանություն.

Սուրբ է ժամանակն այս վայրում,

Որտեղ քարը վարդի հետ է ապրում: [2]

\* Հոդվածն ընդունվել 29.01.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ.,պրոֆեսոր Ս.Խանյանը:

«Հատընտիր»-ի երկրորդ շարքը բերված է բանաստեղծի «Տեսադաշտ» գրքից, որը խորհրդանշում է նրա հասունացման նոր, նկատելի աստիճանը: Ներկայացվում է խոսքարվեստի մի նոր գործելն՝ պատկերների բազմազանությամբ, տաղաչափական ձևերի, կոմպոզիցիոն միջոցների ներառմամբ: «Տեսադաշտը» հայոց բանաստեղծության մի նոր արտահայտություն է՝ ազգային ոգու համամարդկային հնչեղությամբ: Այդ շարքի մեջ ևս Ա.Հարությունյանի գեղագիտական մտորումների ու հասկացությունների կենտրոնում հասարակական մարդն է՝ միշտ առկա բանաստեղծի բնափոխությունների առանցքում: Ինչպես աշխարհահռչակ Մարտիրոս Սարյանի կտավներում, այնպես էլ Ա.Հարությունյանի հյուսվածքներում, Հայոց աշխարհն է բազմերանգ, Հայոց հողը արևահունց, հայոց ճակատագիրը՝ դաժան, լուսառաք: Դա պոետական մի աշխարհ է, որտեղ «ծառերը բացվում են հովանոցի պես», «հողը մայրանում է... դառնում ընկեր», «անտառը սահում է լուսին ընդառաջ», ուր ամեն ինչ ծփում է, ինչպես «հավերժական սկիզբ», որի սյացքի մոտ կանգնում է բանաստեղծը և շշնջում:

Հավերժական սկիզբ,  
Ես մասնակիցն եմ քո օդի,  
Քո սկզբնավորման բարձր ծառերի,  
Որոնց կատարից ներքև հոսող լույսը  
Զգտում է անվերջ մաքրության: [3]

Հաճելին նաև այն էր, որ «Տեսադաշտը» դարձավ գրական ասուլիսների կարևոր թեմաներից մեկը, թարգմանվեց ռուսերեն՝ արժանանալով ռուս ընթերցողների ու գրաքննադատների բարձր գնահատականին:

«Տեսադաշտին» հաջորդեց «Շեն» ժողովածուն: Այն մի նոր մրգահասի նախադուռ է, բնության ամբողջական նոր բացահայտում, հայրենի հողի արևափայլ լեզվի ցուցադրում, խոհափոխության կանոնների թարմություն: Ժողովածուն աչքի է ընկնում նոր թեմաների լուսաբանմամբ, պատկերավորության բազմազան ձևերի օգտագործմամբ: «Հատընտիր»-ի «Շեն» շարքը բացվում է «Բաբելոն հյուրանոցի տեսիլքը» պոեմով: Այն երևույթ է հետխորհրդային շրջանի հայ պոեզիայում: Նրանում ընդգծված երևում են Անգլիայի անցյալի և ներկայի ամենաբնական ժողովրդային հուզող կարևոր հարցեր, առանձնապես Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում 1915-1923 թվականներին:

«Հատընտիր»-ի հաջորդ բաժինը լրացված է բանաստեղծի «Ներկայության խոսքեր» շարքով: Այն բացվում է «Դեյր Զոր» պոեմով: Նրանում զգացվում է հայ ժողովրդի ցավի ճիչը, ցասումը Թուրքիայի հայակեր կառավարիչների դեմ, որը հնչում է որպես վրիժառության աններում կոչ: Տեսիլքային պատկերների ծանրության տակ չի ընկրկում բանաստեղծը, խոսքը դարձնում է հրաման, գաղափարը՝ մարտական խորհուրդ:

Հայ ժողովրդի միասնության գաղափարի ջերմացնող հյուսվածք է շարքի «Ավետարանոց» բանաստեղծությունը: Արցախի հիմնախնդրի մեղմաբանական այդ գյուղը ներկայացվում է որպես «թռչող Մարահարթ», «Մաշտոցյան խոսքի» ջահակիր, «ինչպես մի անպրոպ թափանցիկ, որ անձրևում է տաք կարոտ և գոռում՝ Հայաստան, Հայաստան»:

Ուշագրավ երևույթ է շարքի «Մարդկային ցեղի դեղնոդ, հանց աշուն մենախոսությունը» ստեղծագործությունը: Այն նոր խոսք է ժամանակակից հայ պոեզիայի պատմության մեջ՝ թեմատիկ-գաղափարական և գեղարվեստական ձևի առումներով: Բանաստեղծի տեսադաշտն այստեղ հորիզոններ է ընդգրկում, առավել ևս, որ հեղինակը, որպես քնարական հերոս, մարտնչում է չարիքի դեմ, հաստատում բարին: Նա աշխարհը տեսնում է նոր վերափոխումների, Աստծո ծիրից դուրս եկած մարդկանց ճշմարիտ նկարագրով:

Աշխարհը սոսնձված է բացակա  
մարդկանց կամքով...  
Պետությունը հսկում է հսկա բանակով,  
որ այդ կպչուկը չքանդվի... : [4]

Ցավալին, ըստ բանաստեղծի, նաև այն է, որ «անհնար է բողոքել հիմա», մարդիկ ձևացնում են, թե ախտ չունեն, ձևացնում են, թե չեն գննում քաղցածի հայացքով «ցուցափեղկի խորքում մարմրող ապուխտը», իսկ «դահլիճները դատարկվում են ճառերի ժամանակ»: Այսպես՝ ստեղծագործության մեջ ներկայացվում են հասարակության տարբեր խավերի բողոքի ձայները, որը նույնպես կարելի է համարել նորություն հետխորհրդային պոեզիայում:

«Հատընտիր»-ի առանցքային բաժիններից է «Նամակ Նոյին» շարքը, որ ընտրված է նույնանուն գրքից: Այն բացվում է «Զգուշացում» հյուսվածքով: Հավատարիմ ստեղծագործական իր խառնվածքին՝ Հարությունյանը տազնապ է բարձրացնում, որ վտանգված է աշխարհը, վտանգված են մարդիկ: Ամենուրեք արյուն է, արնաշաղախ են ճամփաները, շարունակվում են ցեղասպանությունները, որ սկիզբ են առել Դեր-Ջորից և հասել:

Շուշի,  
Խնուսից՝ Բիթլիս,  
Բիթլիսից՝ Սումգայիթ՝ ...  
Մեր բախտն ուրիշ էր,  
օրը ցերեկով,  
մեր հինավուրց հողերի վրա,  
մենք սայթաքում էինք հենց մեր սեփական  
արյան վրա: [5]

Հայ ժողովրդի Արցախյան ազգային-ազատագրական պայքարի գեղարվեստական խոսուն մի պատկեր է «Պարետային ժամ Ստեփանակերտում» բանաստեղծությունը: Նրանում ևս փայլատակում են Հարությունյանի քաղաքական երգիծանքն ու պատկերավոր մտածողությունը:

Խորհրդային տարիներին ազգային հարցի անարդարացի քաղաքականության ամենազագրելի դրսևորումը բանաստեղծը համարում է Հայոց Արցախի հանձնումը Ադրբեջան կոչվող հանրապետությանը:

Ա.Հարությունյանը Արցախյան գոյամարտի տարիներին բազմիցս է այցելել իր պապերի երկիր: Տեսածի վավերագրական պատկերներից է «Պարետային ժամ...», որտեղ նշվում է.

Բանտամերձ պատերի վրա՝ եղունգի  
և դաշույնի հետքեր,  
իսկ տանջվածի արյունը շտապ չորացրել են  
քաղաքական աղոթքի հաշվենկատ շնչով: [6]

Շարքի մեկը մյուսին լրացնող «Փշրված մենախոսություն», «Հարված», «Ամենօրյա ցայգեր», «Երկրաշարժը Լենինականում» բանաստեղծություններին հաջորդում է «Նամակ Նոյին կամ հույսի ահագնացում» պոեմը:

Նախաբանից և ինը մասից բաղկացած այդ պոեմն սկսվում է տեսիլքային պատկերով: Հանդիպում են Նոյ նահապետն ու հայ բանաստեղծը: Զրույցն ընթանում է աշխարհի մասին՝ ներառելով Հայաստանն ու Արցախը, որը 1988-ին ոտքի է ելել թոթափելու Ադրբեջանի հայահալած լուծը:

«Նամակ Նոյին» պոեմը, ամենայն իրավամբ, նորություն է: Պոեմի և՛ մտահղացու-

մը, և՛ գաղափարը, և՛ գեղարվեստական երանգները պատիվ կարող են բերել յուրաքանչյուր ականավոր բանաստեղծի: 20-րդ դարի քաղաքական խնդրումները, մարդատյացության եռքը, խոշոր պետությունների արհամարհական վերաբերմունքը փոքր ժողովուրդների հանդեպ վառ զույներով են բացահայտված պոեմում: Առավել ցավալի է անտարբերությունը հայ ժողովրդի հանդեպ, որի մասին բարձրաձայնում է բանաստեղծը.

...Թող Նոյը իմանա, թե ում էր փրկում  
և Ստամբուլ մտնի շքեղ առևտրի համար,  
Բայց նախքան այցը թող տեսնի  
հայերի ոսկորների ֆոսֆորը Դեր-Ջորում  
և մյուս ցեղասպան անապատներում,  
Թող թերթ առնի և կարդա Արցախի մասին,  
Թող մտնի դեղատուն, և սարսափը մեղմող դեղ առնի...:[7]

Բանաստեղծը բողոքում է անարդարությունների դեմ, իրեն համարում մարդկության մի մասնիկը՝ իր ժողովրդի դիմագծով ու ճակատագրի խաղանով: Թեմատիկ-գաղափարական հիմքով ու գեղարվեստական լուծումներով «Նամակ Նոյին» պոեմը զրկված է բոլոր ժամանակների համար:

«Նամակ Նոյին» պոեմից հետո Ա.Հարությունյանը դարերին հանձնեց «Հուդայի արձակուրդը» երկը: «Հատընտիր»-ը կազմողները ամբողջությամբ տեղադրել են այդ պոեմը: Բանաստեղծը թարմ ու աննախադեպ պատկերներով ներկայացնում է Հայաստանի նորօրյա գործընթացը՝ աշխարհում տեղի ունեցող խոշոր իրադարձությունների համապատկերի վրա: Դա մի ժամանակաշրջան էր, երբ «տղերքը» դարձան նախագահ ու նախարարներ: Այդ նրանք էին, որ անհեռատեսորեն փակեցին «Ատոմայինը» և «Նաիրիտը», որին հաջորդեցին հովհարային անջատումները, լուսից զրկվելը և այլ տհաճ երևույթներ: Կոնկրետ համոզիչ պատկերներով բանաստեղծը համոզում է, որ Հուդան մենակ չէ, նրան շրջապատում են պետական անարժան այրերը: Պոեմը գետեղվել էր նաև նույնանուն ժողովածուում, որի մասին իր արժեքավոր խոսքն ասաց Ալեքսանդր Թովչյանը. «Հուդայի արձակուրդը» մեզ ներկայացնում է քաղաքակիրթ բանաստեղծի մի նոր տիպար, որը, պաշարման վիճակից դուրս գալով, անցել է կատաղի հարձակման, մանավանդ, որ թիրախներն էլ շատացել են, նախկին երկուսին ավելացել են հայրենական ավազակները՝ «ժիրածիհները», ինչպես ինքն է բնորոշում: Եվ դժվար է ասել, թե որն է դրանցից ավելի վտանգավոր ու անողորմ:

Ա.Հարությունյանը «Հուդայի արձակուրդը» ժողովածուից հետո մի նոր անակնկալ մատուցեց՝ հանձին «Հեռուստապոեմներ «Շուշի» և «Բաբելոն» հյուրանոցների աշտարակից» գրքի:

Ռուս աշխարհահռչակ քննադատ Բելինսկին իր «Գրական երազանքներ» աշխատության մեջ Պուշկինի ստեղծագործության կապակցությամբ գրել է. «Պուշկինի արտասովոր ազդեցությունը բխում էր այն բանից, որ Ռուսաստանի վերաբերմամբ նա իր ժամանակի զավակն էր այն բառի լիակատար իմաստով, նրա մտավոր կյանքի զարգացման ներկայացուցիչն էր, հետևաբար նրա իշխումն օրինական էր» [8]:

Համեմատությունը տեղին է, եթե ընդգծենք, որ Ա.Հարությունյանը էն գլխից է հասկացել, որ բանաստեղծն իր ժամանակի զավակն է, հայրենիքի բանաստեղծ-զինվորյալը, նրա մտավոր կյանքի դրոշակակիրը:

Ընթերցելով «Հատընտիր»-ի շարքը համանուն գրքից՝ կրկին ու կրկին համոզվում ես, որ բանաստեղծ Ա.Հարությունյանը ոչ միայն իր ժողովրդի նվիրյալ զավակն է, այլև նրա կրած տառապանքների ու կորուստների, ակնկալիքների ու վճռականության ար-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

տահայտիչը: Նա խարազանում է երիտթուրքերին, զրույց բացում Աստծո հետ՝ հանուն արդարության, պահանջում, որ իրենց պատիժը կրեն Թալեաթը, Օզալը, էրդողանը, որ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը:

Մեր ժողովրդի պատմական ծանր անցյալի ցավն իր սրտում՝ Ա. Հարությունյանը ողջունում է Արցախյան պատերազմի հերոսներին, Շուշիի ազատագրումը և հաստատում հայոց գալիք սերունդների հաղթարշավը կյանքի բոլոր խաչմերուկներում:

Ուսումնասիրելով սույն «Հատընտիր»-ը՝ ոչ միայն ըմբռնում են ականավոր բանաստեղծի բարձրարվեստ պոեզիան, այլև ծանոթանում են համաշխարհային արդի գրականության մեջ տեղի ունեցող վերափոխումներին և հաստատում մի ճշմարտություն, որ թևածում է այն պոեզիան, որը ձեռքում է ազգայինի նեղ սահմանները և ձեռք բերում համամարդկայինի արժեք: Այս առիթնընդ պահանջի աներկբա վկայություններից է Ա. Հարությունյանի «Հատընտիր»-ը:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարությունյան Ա., «Հատընտիր», Եր., 2015, էջ 17:
2. Նույն տեղում՝ էջ 13:
3. Նույն տեղում՝ էջ 71:
4. Նույն տեղում՝ էջ 71:
5. Նույն տեղում՝ էջ 162:
6. Նույն տեղում՝ էջ 164:
7. Նույն տեղում՝ էջ 183:
8. Բելինսկի Վ. Ընտիր երկեր. Եր., 1948, էջ 51:

### ԱՄՓՈՓԱԳԻՐ

#### Արտեմ Հարությունյանի հայրենասիրական պոեզիան Սուսան Միրզոյան

Սույն հոդվածում վերլուծվում ու գնահատվում է արդի հայ պոեզիայի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Արտեմ Հարությունյանի հայրենասիրական պոեզիան: Նշվում է, որ Ա. Հարությունյանի հայրենասպասումը լայն ընդգրկումներ ունի ազատ չափածոյի /վերլիբր/ ընձեռած սահմաններում:

Նա պատկերների թարմ հյուսվածքներով ներկայացնում է հայ ժողովրդի հերոսական անցյալը, ցավով ու ցասումով պատկերում Հայոց ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանում 1915-1923թթ., ոգևորությամբ հյուսում Արցախյան պատերազմի ազգափրկիչ տարեգրությունը: Ա. Հարությունյանի պոեզիան, ըստ էության, համարվում է նոր երևույթ հայ քնարերգության դարավոր, հարուստ գանձարանում:

РЕЗЮМЕ

Патриотическая поэзия Артема Арутюняна  
Сусан Мирзоян

**Ключевые слова:** *Артем Арутюнян, Армения, Геноцид, Карабах, Шуши, Вавилон, свобода, война, поэзия, оригинальность и национальный колорит, универсальное значение.*

В данной статье дается анализ и оценка патриотической поэзии одного из видных поэтов-современников Артема Арутюняна. Отмечается, что данная тематика раскрывается большей частью за счет свободного стиха (верлибра).

Используя свежую систему образов, он представляет героическое прошлое армянского народа, с болью и гневом изображает Геноцид армян в Западной Армении в 1915-1923 гг., с энтузиазмом вплетает национально-освободительную тематику в хронику Арцахской войны. Поэзия А. Арутюняна по сути представляет собой новое явление в богатой сокровищнице армянской поэзии.

SUMMARY

The Patriotic poetry of Artem Harutyunyan  
Susan Mirzoyan

**Key words:** *Artem Harutyunyan, Armenia, the Genocide, Karabakh, Shushi, Babylon, freedom, war, poetry, originality and national color, universal meaning.*

This article analyzes and evaluates the patriotic poetry of one of the prominent contemporary poets Artem Harutyunyan. It is noted that this topic is mainly revealed due to free verse.

Using a fresh system of images, he represents the heroic past of the Armenian people, with pain and anger depicts the Armenian Genocide in Western Armenia in 1915-1923, enthusiastically flies national liberation themes into the chronicle of the Artsakh war. A. Harutyunyan's poetry is, in fact, a new phenomenon in the rich treasury of Armenian poetry.

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՈՒԻ ՀՐԱՊԱՐԱՎՈՒՄՆԵՐԻ ԱՐՑԱԽՅԱՆ  
ՇԵՏՏԱԳՐՈՒՄՆԵՐԸ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ\*  
(1988-1991թթ.)

Աննա Սկրտիչյան

**Քանալի բառեր**՝ դարաբաղյան հիմնախնդիր, դարաբաղյան շարժում, հայաստանյան մամուլ, ազգայինի վերախմաստավորում, իրավական պայքար, լրատվական դաշտ:

Ղարաբաղյան հիմնախնդիրը 20-րդ դարի հայ քաղաքական և հասարակական գիտակցությունը պայմանավորող կարևորագույն իրողություններից է: Եվ չնայած Ղարաբաղի հիմնահարցի քաղաքական ձգձգվող լուծումը պահանջում էր համարժեք արձագանք ժամանակի մամուլում, խորհրդային գաղափարախոսության պայմաններում այն լիարժեք չէր իրականացվում: Մի կողմից՝ փաստերն ու իրականությունը լռության էին մատնվում, մյուս կողմից էլ՝ որոշակի փաստերի քողարկմամբ տարածվում էր կես-ճշմարտությունը: Հատկապես շարժման առաջին տարիներին հայաստանյան հասարակության զգալի մասը բավարար տեղեկատվություն չունեի ո՛չ հիմնախնդրի առկա վիճակի, ո՛չ հնարավոր զարգացումների մասին՝ չնայած ԶԼՄ-ների տեղեկատվական գործառույթը կարևորագույն նշանակություն ունի ցանկացած հակամարտությունում: Թեպետ հանուն ճշմարտության հարկ է նշել, որ 1980-ականների վերջին խորհրդահայ մամուլի սակավախոսությունը որոշ չափով լրացրին ինքնահրատ պարբերականները՝ շատ դեպքերում իրենց խոսքն ընթերցողին հասցնելու համար ցուցաբերելով ոչ լրագրողական հմտություններ: Ավելին՝ խորհրդային մամուլին և շատ դեպքերում դրա էջերում տարածվող ապատեղեկատվությանը լուրջ մարտահրավեր նետեցին հայ անվանի մտավորականներն իրենց հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներով՝ իրականության քաղաքական ընկալմամբ և զգայական յուրօրինակ մեկնաբանմամբ:

1988-1991թթ. լրատվական դաշտի ընդհանուր պատկերը շեշտակիորեն փոխվեց՝ պայմանավորված հասարակական-քաղաքական կյանքում արձանագրվող տեղաշարժերով: Թեև այն դեռևս կրում էր խորհրդային գաղափարախոսության կնիքը, բայց ազատականացման քայլերն ընդգծված բնույթ ունեին: Այդ շրջանի հայաստանյան մամուլի հրապարակումների արցախյան շեշտադրումները հստակ էին և հասցեական: Մասնավորապես՝ մամուլի քննությունը թույլ է տալիս վերհանել Ղարաբաղյան շարժմանն առնչվող հրապարակումների հիմնական ուղղությունները. դրանից են՝

- ա) Ղարաբաղի խնդիրը՝ վերակառուցման քողի ներքո և հրապարակայնության ոգով,
- բ) Հուսահատական տրամադրություններ, ընդհուպ մինչև հոգեբանական անկում,
- գ) Ղարաբաղյան խնդրի լուծում և խաղաղության հաստատում,
- դ) «Ազգայինի» վերախմաստավորում,
- ե) Իրավական պայքար,
- զ) Տեղեկատվական հարթություն. մտահոգություններ, խնդիրներ:

Այսպես՝ Ղարաբաղյան հիմնախնդիրն սկզբնական շրջանում ներկայացվում էր բացառապես վերակառուցման քողի ներքո և հրապարակայնության ոգով, ինչը դրս-

\* Հոդվածն ընդունվել է 15.02.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.թ., դոցենտ Ն.Ն.Մարտիրոսյանը:



և որվում էր պաշտոնական լրահոսում, խորհրդային իշխանության ուղերձներում, համապատասխան որոշումներում, ժողովուրդների բարեկամության քարոզչությունն իրականացնելիս, ինչպես նաև ռուսական մամուլից հաճախակի արված արտատպումներում: Վերոնշյալներն ամենօրյա լրատվության բաղկացուցիչ մասն էին կազմում:

Պաշտոնական լրահոսն ընդգրկում էր սեղմ հաղորդագրություններ, որոնք տարածում էին լրատվական գործակալությունները, առավելապես ՏԱՍՍ-ը [1]: Եվ ընդհանրապես, խորհրդային Հայաստանի պարբերական մամուլի տեղեկատվության հիմնական աղբյուրներն էին կենտրոնական «ՏԱՍՍ» և «Նովոստի», հանրապետական «Արմենպրես» պետական լրատվական գործակալությունները: Բացի այդ՝ խորհրդային Հայաստանի գրեթե բոլոր թերթերը [2] տպագրում էին «ԼՂ-ի և նրա շուրջ ստեղծված իրադարձությունների կապակցությամբ» իշխանությունների ուղերձները, որոնք, որպես կանոն, լայն արծազանք էին գտնում: Այսպես՝ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը, դիմելով Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին, կոչ էր անում հանդես բերել զսպվածություն, ողջախոհություն, «թանկ գնահատել և ամրապնդել ադրբեջանական և հայ ժողովուրդների բարեկամության ավանդույթները» [3]: ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրձյանն էլ իր ելույթում փորձում էր հանդարտեցնել ժողովրդական շարժումը՝ նշելով, որ «ստեղծված իրադրությունը հիմնականում նորմալացվել է» [4]:

Մամուլի հաղորդագրությունների, ՍՄԿԿ ԿԿ պլենումի տղագրությունների ու Գլխավոր քարտուղարի ճառերի տեքստերի ամբողջական հրատարակումը թերթերի գլխավոր և հիմնական գործն էր: Այդպես մամուլը, ըստ էության, ծնացնում էր, թե առաջնորդվում է վերակառուցման ոգով: Զանգվածային տեղեկատվության բոլոր միջոցներում ՏԱՍՍ-ի թղթակիցները տպագրում էին հավասարության սկզբունքներով հայերից և ադրբեջանցիներից վերցրած հարցազրույցներ, ժողովուրդների բարեկամությանը նվիրված նամակներ, երկու հանրապետությունների աշխատավորների և կոլտնտեսականների «հերոսական նվաճումների» մասին ակնարկներ: Լրագրային ժանրերի ընձեռած բազմաթիվ հնարավորությունները թողնելով մի կողմ՝ ամեն տեղ մեջբերում էին «Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին ուղղված Գորբաչովի դիմումը»: Փոխարենն այդ շրջանում մամուլն այդպես էլ չտպագրեց որևէ հաղորդագրություն Երևանում տեղի ունեցած ցույցերի և հավաքների մասին, մինչդեռ հարյուր հազարավոր մարդիկ փողոց էին դուրս եկել:

Զարգացող իրադարձությունները նոր փորձություն էին ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ հայաստանյան մամուլի համար: Սումգայիթյան ջարդերն ու դրան հաջորդած դատավարությունը, «Ղարաբաղ» կոմիտեի կազմավորումն ու գործունեության կասեցումը, Սպիտակի աղետալի երկրաշարժը, մեկը մյուսին հաջորդող ցույցերը, գործադուլները, դասադուլները, պարետային ժամը, Բաքվի ջարդերը ու ի վերջո պատերազմական լրահոսը:

Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ հուսահատական տրամադրություններ էին նկատվում հայաստանյան մամուլում: Հոգեբանական անկումն առաջին հերթին դրսևորվեց սումգայիթյան ջարդերի [5] ու դրան հաջորդած դատավարության, ապա՝ Սպիտակի աղետալի երկրաշարժի, շարունակվող գործադուլների ու դասադուլների, հայտարարված պարետային ժամի, Արցախի շուրջ սեղմվող օղակի [6], քաղաքական հացադուլավորների (Մոսկվայում հացադուլ էին սկսել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ Զ. Բալայանը, Կ. Համբարձումյանը, Ս. Սարգսյանը, Կ. Գրիգորյանը, ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի նախագահ Ս. Բաբայանը) [7] և այլնի մասին հրապարակումներում: Ավելին՝ այս ընթացքում մամուլում առաջին անգամ խոսվեց ինքնաշեն պայթուցիկ սարքերի, սառը զենքի և այլնի մասին:

Արցախի սահմանամերձ շրջաններում չէին դադարում զինված ընդհարումները, բռնություններն ու կամայականությունները, որոնք մասնույն օգտագործում էր իբրև տեղեկատվական առիթ հրատապ հարցազրույցներ, ռեպորտաժներ տպագրելու համար՝ ահազանգելով «Ձեռքից բաց թողնված հնարավորությունների և զարգացման ստրատեգիայի մասին»[8]:

1990 թվականի հենց տարեսկզբից իրավիճակն ավելի ծանրացավ. սկսվեցին զանգվածային հայկական ջարդերը և կոտորածներն ադրբեջանական հայաշատ քաղաքներում (Բաքու[9], Կիրովաբադ), Ադրբեջանի ծայրահեղական ուժերի կողմից զինված գործողություններ իրականացվեցին Բաքվում, Շահումյանի և Խանլարի շրջաններում, Գետաշեն, Ազատ, Կամո գյուղերում և այլ բնակավայրերում: Կային մարդկային զոհեր, հրկիզումներ, շրջափակում, պատանդներ, նաև կրակոցներ Հադրութի գյուղերում[10]: Բացի այդ՝ խստացավ Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի շրջափակումը, հայտարարվեց արտակարգ դրություն, խաղաղ բնակչության դեմ ուղղվեցին պարբերական ռազմական գործողություններ, եղան տեղահանումներ, հալածանքներ շարժման առաջամարտիկների և ժողովրդական պատգամավորների նկատմամբ և այլն: Մամուլը փորձում էր ծեռքը պահել Ղարաբաղի զարկերակին՝ ներկայացնելով կյանքի տարբեր ոլորտներում առաջացած «ծանրագույն վիճակը»[11]: Անգամ Լեռնային Ղարաբաղին առնչվող նյութերն սկսեցին տեղ գտնել թերթի առաջին էջերում: Ավելին՝ այս շրջանում հայաստանյան թերթերում կտրուկ փոխվեց վերնագրերի ընտրության քաղաքականությունը, ինչն արտահայտվեց մասնույն համարձակ վերնագրերի առատությամբ՝ «Նոր հարձակում, նոր զոհեր», «Հայության զարկերակն է Ղարաբաղը»[12], «Վերակառուցում... ադրբեջանական ծնով[13]» և այլն:

Ստեղծված պայմաններում մամուլը ձգտում էր ուշադրության կենտրոնում պահել թե՛ պաշտոնական լրահոսը, թե՛ իրադարձությունների զարգացումներով պամանավորված առանձին մարդկանց ճակատագրերը՝ ներկայացնելով փախստականներին ու նրանց խնդիրները[14], տազնապն ու ցավը, Սոււմգայիթի շարունակվող ոճրագործությունը[15]:

Տարեվերջին ԼՂ-ից հասած գրեթե բոլոր լուրերը հիշեցնում էին պատերազմական հաղորդագրություններ, որոնք պատմում էին հերթական սպանությունների, հրկիզումների, պատանդների, անասունների կողոպուտի մասին: Արդյունքում՝ ամեն կրակոցի հետ փոխվում էր նաև մամուլի լեզուն և ոճը[16]. «Մենք ոտքի ենք ելել, որովհետև այլևս ոչինչ չունենք վաղը կորցնելու: Սա այն ժամանակն է, երբ կարելի է շատ բան փրկել»[17] ու չնայած «1990 թ-ն անցավ ի վնաս Արցախի և հօգուտ նրա հիմնախնդրի էլ ավելի խճճման ու բարդացման, բայց Արցախը հաղթելու է» [18]:

1991թ. դեկտեմբերին Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից իրականացվող պատերազմական գործողություններն առավել ակտիվացան: Պատահական չէր, որ այս ամենի հետևանքով ինչպես տեղեկատվությունը, այնպես էլ լրագրողական աշխատանքը որոշակի փոփոխություններ կրեցին ոչ միայն բովանդակային առումով, այլև ժանրային, իսկ լուսանկարները, որ այդ շրջանում դարձան հրապարակումների անբաժան մասը, ըստ էության, նորություն էին ժամանակի մամուլի համար:

Հոգեբանական անկումը մեղմելու և կյանքը բնականոն հուն վերադարձնելու ու դարձյալ խաղաղություն հաստատելու նպատակով մամուլը կոչերի և ուղերձների միջոցով փորձում էր լավատեսական տրամադրություններ[19] հաղորդել ընթերցողներին: Այդ առումով հատկանշական են հատկապես Հայաստանի և Արցախի մտավորականների ջանքերը: Նրանք մամուլի առաջին էջերում հաճախ էին հանդես գալիս ելույթներով, բանաստեղծություններ գրում, որոնք միտված էին հանդարտեցնել բոր-

բոքվող կրքերը՝ միաժամանակ հույս ու հավատ ներշնչել խնդրի մոտալուտ լուծման հեռանկարի առնչությամբ: Ժամանակի մտավորականները «բարձր գիտակցության, կարգուկանոնի, հանգստության, ողջախոհության» կոչ էին անում ժողովրդին [20]: Արդարության հասնելու և հաղթանակի ձգտումով ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Էդգար Հովհաննիսյանը, գրողներ Վահագն Դավթյանը[21], Հրաչյա Մաթևոսյանը[22], Ալվարո Պետրոսյանը[23] և ուրիշներ շարունակ «սթափ դիրքորոշման», զսպվածության ու խելամտության կոչեր էին հնչեցնում: Հորդորելով վերադառնալ բնականոն կյանք՝ մտավորականները ընդգծում էին «հանգստություն պահպանելու և զգոնությունը չկորցնելու»[24] անհրաժեշտությունը:

Մտավորականների հստակ ու հասցեական խոսքը մի կողմից՝ հանդարտեցնում էր ընթերցողների գերլարված տրամադրությունները, նպաստավոր միջավայր ստեղծում հոգեբանական ճնշվածությունը թթափելու համար, մյուս կողմից՝ պահանջատեր հայության համար պայքարի նոր ուղղություններ ուրվագծում: Հենց այդ ժամանակաշրջանում էր, որ ազգային աստիճանաբար գերիշխող դարձավ կյանքի տարբեր ոլորտներում՝ սկսած մշակութապահպանումից մինչև պետական տոների ու խորհրդանիշների վերականգնում, անցյալի հերոսների արժևորում, անգամ հայոց լեզվի անաղարտության համար պայքար[25]: Հատկապես 1989 թ. տարեվերջին հայաստանյան մամուլում հայտնվեցին հրապարակումներ Արամ Մանուկյանի[26], Գարեգին Նժդեհի[27], Արամ Երկանյանի, Հայոց ցեղասպանության[28], անգամ 1920թ. ստորագրված Սևրի պայմանագրի մասին[29]:

Դեպքերի աննախադեպ սրընթաց զարգացումները հարստացրին մամուլի բովանդակությունը: Հանրահավաքներն ու գործադուլներն ապարդյուն էին, կրակոցները հաճախակիանում էին, կորուստները՝ ավելանում, զոհերի թիվը՝ աճում: Հետևաբար հրապարակ դուրս եկած հայր փոխեց պայքարի ուղղությունը՝ փորձելով խնդրի լուծմանը հասնել իրավական ճանապարհով: Արցախում կազմակերպվեց հանրաքվե, անցկացվեցին ընտրություններ, մարզը հռչակվեց հանրապետություն ու մեկնարկեց անկախության երթը: Ավելին՝ պատերազմական գործողություններին զուգահեռ սկսվեց ԼՂՀ-ի՝ իբրև առանձին պետության կայացման գործընթացը:

Ոչ թե գեների ուժով, այլ օրենքի շրջանակում խնդրի լուծմանը սպասողներն ու հավատացողները շատ էին, թեպետ ժամանակ առ ժամանակ կրակոցներ էին լսվում: 1991թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) ստեղծումով արցախահայության ազգային-ազատագրական պայքարը թևակոխեց նոր փուլ: Իրական անկախության ճանապարհին ԼՂՀ ստեղծումն ամենավճճորոշ և գործնական քայլն էր: Դրան հաջորդեցին իրավական, քաղաքական, ռազմական և դիվանագիտական ինքնահաստատման գործողությունները[30]:

Այդ ժամը ժամանակաշրջանում մասնագիտական մարտահրավերների առաջ էր կանգնած նաև հայաստանյան մամուլը: Տեղեկատվական միջավայրը լուրջ խնդիրներ ուներ թե՛ բովանդակային, թե՛ տեխնիկական առումներով, որոնց լուծմամբ էին պայմանավորված տեղեկատվության տարածման հնարավորությունները: Կիսատ տեղեկատվություն հաղորդող, հաճախ նաև լռություն պահպանող մամուլը սկզբնական շրջանում հիասթափեցնող գործունեություն էր իրականացնում: Վստահության ձգնաժամի մթնոլորտում մամուլը չէր իրականացնում իրեն վերապահված գործառնությունները: Ժամանակի ընթացքում այդ ամենին գումարվում էին նաև տպագրական խնդիրները (տնտեսական ծանր վիճակ), տարածման դժվարությունները (շրջափակում): Ընթերցողները սպասում էին տեղեկատվության ու հետևում էին մամուլի հրապարակումներին՝ միաժամանակ գիտակցելով, որ թերթերը դարձել էին ապատեղեկատվություն

տարածող ու իրականության շինծու պատկեր ստեղծող օրգաններ: Պատահական չէր, որ «մարտի 20-ին մոտ երեք հազար ցուցարարներ, հանրապետությունում լույս տեսնող լրագրերը ձեռքներին, հավաքվեցին մամուլի տան մոտ և ի նշան բողոքի՝ լրագրերը թափեցին գետնին և վանկարկեցին՝ ամոթ: Հետո բոլորը շարժվեցին դեպի ռադիոտուն, որտեղ կայացավ հանրաժողով: Բողոքի այդ ցույցն ուղղված էր Հայաստանի ու ՍՍՀՄ մամուլի ու հեռուստատեսության դեմ, որոնք ոչ մի ճշգրիտ տեղեկություն չեն հաղորդում... Ոչ մի լուր չեն տալիս մեկ ամսից ավելի հայության կյանքը փոթորկող իրադարձությունների մասին»[31]:

Ըստ էության՝ արցախահայությունը ծանր օրեր էր ապրում, բայց միաժամանակ շարժումը մեծ թափով զարգանում էր, զուգահեռաբար ձաքեր էր տալիս Խորհրդային կայսրությունը՝ բնականաբար նաև ճանապարհ բացելով մամուլի նոր անունների համար: Իրականում՝ Խորհրդային ապատեղեկատվության կազմակերպած արշավը դրական կողմ ունեցավ. այն ավելի հրատապ ու անհրաժեշտ դարձրեց ազատ մամուլի նոր անունների ծնունդը[32] ու նաև դրանով պայմանավորված որակապես նոր բովանդակություն ստացավ լրատվական դաշտը՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի համատեքստում:

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. «Սովետական Հայաստան», 24-25 փետրվարի, 1988:
2. «Գրական թերթ», 4 մարտի, 1988: «Հայրենիքի ծայն», 2 մարտի, 1988: «Հայրենիքի ծայն», 2 մարտի, 1988:
3. «Սովետական Հայաստան», 27 փետրվարի, 1988:
4. «Գրական թերթ», 25 մարտի, 1988:
5. «Հայաստան», 5-6-7 սեպտեմբերի, 1990:
6. Նույն տեղում, 12 սեպտեմբերի, 1990:
7. Նույն տեղում, 18 սեպտեմբերի, 1990:
8. «Խորհրդային Հայաստան», 24 հուլիսի, 1990:
9. «Երեկոյան Երևան», 15 փետրվարի, 1990:
10. «Խորհրդային Հայաստան», 14 հունվարի, 1990:
11. «Երեկոյան Երևան», 12 հունվարի, 1990:
12. «Երեկոյան Երևան», 5 հունվարի, 1990:
13. «Խորհրդային Հայաստան», 9 հունվարի, 1990:
14. Նույն տեղում, 17 հունվարի, 1990:
15. Նույն տեղում, 19 հունվարի, 1990:
16. «Երեկոյան Երևան», 17 դեկտեմբերի, 1990:
17. «Ավանգարդ» 19 դեկտեմբերի, 1990:
18. «Հայաստանի Հանրապետություն», 10 հունվարի, 1991:
19. «Խորհրդային Հայաստան», 25 մայիսի, 1989:
20. «Սովետական Հայաստան», 26 փետրվարի, 1988:
21. «Գրական թերթ», 25 մարտի, 1988:
22. «Հայրենիքի ծայն», 14 դեկտեմբերի, 1988:
23. «Գարուն», N 6, 1988:
24. «Հայաստանի Հանրապետություն», 1 մայիսի, 1991:
25. Տես Եազըճեան Գ., Հայաստանի 1985-1991թթ. պարբերական մամուլը, Անթիլիաս 2004, էջ 85:

- 26.«Ավանգարդ» 5 նոյեմբերի, 1989: «խորհրդային Հայաստան», 9 օգոստոսի, 1989:
- 27.Նույն տեղում, 13 նոյեմբերի, 1989:
- 28.«խորհրդային Հայաստան», 15 ապրիլի, 1990:
- 29.«Ավանգարդ» 3 դեկտեմբերի, 1989:
- 30.«Ազգ», 4 սեպտեմբերի, 1991:
- 31.Նույն տեղում:
- 32.Տե՛ս Եազըճեան Գ., Հայաստանի 1985-1991թթ. պարբերական մամուլը, էջ 59:

### ԱՄՓՈՓՈՒԿԻՐ

#### Հայաստանյան մամուլի հրապարակումների արցախյան շեշտադրումները խորհրդային ապատեղեկատվության համատեքստում (1988-1991թթ.) Աննա Մկրտիչյան

1988-1991թթ. հայաստանյան լրատվական դաշտի ընդհանուր պատկերը շեշտա-  
կիրորեն փոխվեց՝ պայմանավորված հասարակական-քաղաքական կյանքում արձա-  
նագրվող տեղաշարժերով: Թեև այն դեռևս կրում էր խորհրդային գաղափարախոսու-  
թյան կնիքը, բայց ազատականացման քայլերն ընդգծված բնույթ ունեին: Այդ շրջանի  
հայաստանյան մամուլի հրապարակումների արցախյան շեշտադրումները հստակ էին  
և հասցեական:

### РЕЗЮМЕ

#### Статьи о Карабахе в прессе Армении в контексте советской дезинформации (1988-1991 гг.) Анна Мкртчян

*Ключевые слова:* карабахская проблема, карабахское движение, армянская пресса, переосмысление понятия "национальный", юридическое сражение, информационное поле.

В 1988-1991 гг. кардинально изменилась общая картина информационный сферы, в связи с перемена в общественной и политической жизни. Несмотря на то, что пресса несла на себе отпечаток советской идеологии, были сделаны шаги по либерализации. В этот период в армянской прессе появились статьи о Карабахе, которые имели ясные акценты и целенаправленный характер.

### SUMMARY

#### Articles about Karabakh in the media of Armenia in the context of Soviet disinformation (1988-1991) Anna Mkrtychyan

*Keywords:* the Karabakh issue, the Karabakh movement, Armenian press, the reevaluation of the concept "national", legal battle, information field.

From 1988 to 1991 the overall picture of the media in Armenia changed cardinally, due to the changes in public and political life. Although it still had the soviet ideology, it manifested liberalization steps. During that period the articles in Armenian press were focused on Karabakh.

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ ԳՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՐՑԱՆԻ  
ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ\*

Ռենա Մովսեսյան

**Քանալի բառեր**<sup>1</sup> դարձվածային միավորներ, բարբառային միավորներ, գրական լեզու, փիլիսոփայական աշխարհընկալում, էական տեղեկություն, գեղարվեստական գրականություն, արտահայտչականություն, բարբառային դարձվածներ, գրական համատեքստ, գրականացում:

*Յուրաքանչյուր լեզվի մեջ ապրում է մի առանձնահատուկ մտածողություն՝ ժողովրդի հոգեբանությունը: Ազգի մտածողությունը ճանաչվում է հատկապես դարձվածներով, որովհետև դրանք ժողովրդական լեզվի ու երևակայության մեջ մշակման ու վերափոխման արժանիքներ են: Դարձվածների ուսումնասիրությունը կարևորվում է նաև իմացաբանական լեզվաբանության տեսանկյունից, որովհետև դարձվածները տեղեկություն են տալիս լեզուն կրող ժողովրդի բարքերի, սովորությունների, բարոյական արժեքների և ընդհանրապես կենսափիլիսոփայության մասին:*

*Լինելով ժողովրդական մտածողության ծնունդ՝ դարձվածներն իրենց ծագմամբ հիմնականում կապված են խոսակցական լեզվի ու բարբառների հետ և ապա այնտեղից թափանցում են գրական լեզու: Կարևորելով հայերեն դարձվածների դերը լեզվի մեջ՝ Ա. Պապոյանը գրում է. «Դարերից ի վեր սերնդից սերունդ ավանդված այս դարձվածները անընդհատ մշակվել են, հղկվել ու բյուրեղացել՝ ընդհանրացնելով ու խտացնելով իրենց մեջ փորձությունների հորձանքների ու արհավիրքների բովով անցած մի ամբողջ ժողովրդի կենսափիլիսոփայությունը, ազգային սովորություններն ու բարքերը, դառնալով միայն իրեն՝ հայությանը հատուկ մտածողության ձև» [1]:*

*Դարձվածը ոչ միայն բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերափոխատարված կապակցություն է, այլև խոսքի պատկերավորման միջոց, ունի արտահայտչական մեծ հնարավորություններ: Անփոխարինելի է դարձվածների դերը հատկապես գեղարվեստական գրականության մեջ՝ խոսքի պատկերավորման ու ստեղծագործության ժողովրդականացման, ինչպես նաև խոսքին սեղմություն, դիպուկություն հաղորդելու, իմաստի խտացման, լեզվական առավել սուղ միջոցներով հարուստ բովանդակություն արտահայտելու գործում: Գրողները կենդանի խոսքի արտահայտչականությունն ու ջերմությունը պահելու և հերոսներին տիպականացնելու նպատակով հաճախ են գործածում ժողովրդախոսակցական ու բարբառային դարձվածներ: «Ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ լեզվական միջոցների ու դարձվածների օգտագործումը պայմանավորված է ստեղծագործության թեմատիկայով և ծուլվում ու ներդաշնակվում է նրա ոճական հենքին», - նշում է Ա. Մարությանը [2]:*

*Անշուշտ, դարձվածի հեղինակը համարվում է ժողովուրդը: Այդ է պատճառը, որ շատ հաճախ դժվար կամ անհնար է լինում վերականգնել դարձվածի ծագման ժամանակը, ձևը, պատմությունը: Դարձվածը մարդկային հոգեբանության, կենսափիլիսոփայության, բարքի ու սովորության հայելին է: Եվ եթե կան համամարդկային հոգեբանական երևույթներ ու կենսափիլիսոփայական ընդհանրություններ, ուրեմն գոյություն ու-*

\* Հոդվածն ընդունվել է 15.02.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՍՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնը:

նեն նաև դրանց հիման վրա առաջացած համընդհանուր գործածություն ունեցող դարձվածներ: Սրանց կողքին գոյություն ունեն նաև միայն այս կամ այն ժողովրդին բնորոշ դարձվածները՝ որպես ազգային մտածողության ու հոգեբանության, կենցաղավարության ու սովորույթների արտահայտություն, ընդ որում սրանց թիվը անհամեմատ շատ է: Նպատակ չունենալով բացահայտելու այս կամ այն դարձվածի ո՛չ ծագումը, ո՛չ տարածման սահմանները՝ մեր հոգվածում քննել ենք Արցախի գրողների ստեղծագործություններում տեղ գտած դարձվածային բարբառայնությունները՝ որպես գեղարվեստական երկի ոճավորման պատկերահամակարգի տարր և գրական համատեքստում դրանց կրած փոփոխությունները:

Ժողովրդական խոսքն ու բարբառները ժամանակակից հայերենի դարձվածների հիմնական աղբյուրն են: «Արդարև մեր գրական լեզվի դարձվածաբանության համար մենք լրիվ պարտական ենք բարբառներին» [3]: Դարձվածը բարբառից գրական հայերենին է անցնում հիմնականում գրականացմամբ: Գրական հայերենի ազդեցությամբ բարբառային դարձվածներն այս կամ այն չափով գրականանում են՝ կրելով բառային և քերականական որոշակի փոփոխություններ՝ ձևավորելով դարձվածային տարբերակներ: «Սովորաբար դարձվածային տարբերակներ են համարվում նույն իմաստը և բաղադրիչների միևնույն, հաստատուն կազմ ունեցող այն դարձվածքները, որոնց բաղադրիչները նույն բառի քերականական տարբեր ձևերն են՝ կամ բարբառային, և կամ էլ փոխառյալ համագործերն ու համանշանակները»: [4]

Ելնելով դարձվածային տարբերակի սահմանման այս սկզբունքից՝ կարող ենք ասել, որ բարբառային դարձվածի բաղադրիչի գրականացմամբ ձևավորվում են բարբառային դարձվածների տարբերակներ: Այդ երևույթը հատկապես երևում է գեղարվեստական գրականության մեջ, որտեղ դարձվածը հանդես է գալիս գրական համատեքստում: Այստեղ դարձվածի գրականացմանը նպաստում են ինչպես գրական համատեքստում հանդես գալը, այնպես էլ գրողի՝ երկը հասկանալի դարձնելու նպատակը:

Դարձվածների գրականացումն արտահայտվում է ինչպես դարձվածը կազմող բաղադրիչների՝ գրական համարժեքներով փոխարինվելով, այնպես էլ քերականական վերջավորությունների գրականաձև կիրառությամբ: Նախ առաջինի մասին. Դարբառի բարբառում կան **հաքին բուլի-բուլի անել** (շողոքորթել, խորամանկել), **հափրռունը չօփ տինիլ** (մեկին գերազանցել, հնարամտությամբ մեկին խաբել), **յնիշին լավը չաղալը կօտ** (լավ բանը անարժանին է բաժին ընկնում), **ռո՛խը չըրչարել** (շատախոսել), **փօխլումը փղթաղ ինիլ** (մեղավոր լինել, թերություն ունենալ), **քօռ կապեկ չնձի** (1.անարժեք է, 2.ոչ մի նշանակություն չունի), **խըլարը ծօռ փղսնել** (գործը ձախողվել, հակառակ ընթացք ստանալ), **վը՛սկէն չօխավ պիցըրցնել/պըրանել** (շատ հարուստ լինել) և այլ դարձվածներ: Դրանց մասնակի գրականացված տարբերակներ են՝ **պոչը բուլի-բուլի անել**, **բռի մեջ չօփ դնել**, **փողքումը փթաղ լինել**, **քօռ կոպեկ չարժե**, **ոսկին չփով բարձրացնել**, **ռեխը չարչարել**, **սեխի լավը չաղալը կուտի**: Այս օրինակները հանդիպում են Մ. Հովհաննիսյանի ստեղծագործություններում: Այսպես՝ Անուշ կնիկ, նախ և առաջ աղվես, աղվեսի տղա Սերգուն ասա թող **պոչը բուլի-բուլի չանի**: [5] Բա՛, Հեղուշ կասեն, Հերսիկի **քռի մեջ չօփ դրեց**: Խեղձ, խեղձ Հերսիկ, դժբախտ աղջիկ դուրս եկավ: [6] Չոհրաբը մտքում ասաց՝ պա **փողքումը փթաղ կա**, մտածեց՝ իր վրա ծանր շալակ ունի դնելու: [7] Երկուսը միասին մի **քօռ կոպեկ չարժեն**: [8] Գեներալ Մադաթովի ցեղից է, չի անի, մարդու տղան **ոսկին չփով է բարձրացնում**: [9] Այս բանում մենք Շահենի ու Արտաշի **քռում չօփ կընենք**: [10] Իզնատը՝ գրո, կամ Իզնատը, կամ աղոթած էշը: Նրանը ակումբում **ռեխը չարչարելն** է: [11] Օրենք է՝ **սեխի լավը չաղալը կուտի**,-բորբոքվում է

Աղվանը: [12]

Բարբառային բազմաթիվ դարձվածների այսպիսի գրականացված տարբերակների հանդիպում ենք նաև **Սարգիս Աբրահամյանի, Հանյետ Մարտիրոսյանի, Վարդան Հակոբյանի, Արտաշես Ղահրիյանի, Վազգեն Օվյանի, Գուրգեն Գաբրիելյանի** և այլոց ստեղծագործություններում: Իսկ թե ինչպես է գրողը փոփոխության ենթարկում դարձվածը, պայմանավորված է նրա գեղագիտական ճաշակով: Օրինակ՝ Դոնմագն էլ կնոջն անվանեց «աղվես», իսկ նրա հորը՝ «բեղից ընկած քրինձ»: [13] Աստված ձեր հակին պինդ նստած է: Եվ նա եղջերվապոզերը Ռուսաստանից բերեց, ամրացրեց տան ճակատին: [14] Վանեսյան, դու կտրվես, Զոհրաբը քո կաշին դաբաղխանից է ճանաչում: [15] Իբր Վանուն բարեկամ է՝ քրոջ ամուսնու փեսան էշը աղբահարում թավալ է տվել: [16] Այ սատկես դու, հա... գելի փայ դառնա: [17] Նա ախար մեր տուն էր գալիս, ինչպես չարքաշ ու սիրտը լեն աստված: [18] Կտեսնես, որ սաղ աշխարհիս ջիւվը հալի ձեռքումն է: [19] Դու էլ կեցցես: Լավ գլխի ընկար, որ եղը մածնիցն է լինում: [20] Կնանիքը կնանիք, ամա դե՛ ասված խոսք է, որ էժը էժի համար լավ է, քան հազար ոչխարը: [21] Ան օձից վախեցածը սև չաթվից էլ է վախենում, մեկ էլ հանկարծ սիրտը նորից բռնվեց: [22] Դուք ձեր պլոկված ձիտը չարչար օրվան դեմ արած սատկեք, ես կանեմ՝ ինչ սիրտս է ուզելու: [23] -Ուեսդ փակիր,-պատասխանեց միջանցքում հայտնված Կրոմվելը և կրկին սուզվեց վարագույրից ներս: [24] Պոզեղո հանեցիր, չէ դե պարզ ասա, որ որոշել ես ինձ Կուսաբերդից քշել: [25] Չկանգնի՞ ու խնդրի՞. «Այ ժողովուրդ, ախր, գիտեք, իմ հայ-հայր գնացել, վայ-վայն է մնացել, եկեք մեկ ուրիշին ընտրենք»: [26] Քաչալը ճար անող լինի, իր գլխին ճար կանի: [27] Չէ, լավ են ասում, մարդ որ մեծանում ա, գլխի ծեթը պակասում ա: [28] Տափից մինչև երկինք շնորհակալ եմ: [29]

Ընդգծված դարձվածները Ղարաբաղի բարբառի հետևյալ դարձվածների մասնակի գրականացված տարբերակներն են. **բեղա վեր ընգած պրոհինձ** (անպատիվ, հարգանքից զրկված), **Աստուծ հակէն նրստէլ** (Աստված օգնական լինել), **կաշին դաբաղխանումը ճրնանչիլ** (մեկի բացասական, վատ հատկություններին նախապես տեղյակ լինել), **էշը ըխպրիարումը (մոխրումը) թավալ ա տրվալ** (չեղած տեղից ազական է ներկայանում), **կուլգնձ փայ տըրնալ** (անտեղի կորչել, վատնվել), **սըրտը լէն** (սրտաբաց, մեծահոգի), **ջիւվը ծերքումն ա** (իշխանությունը ձեռքումն է), **յէղը մածնան ա ինում** (ճշմարտությունն է, ապացուցելու կարիք չկա), **էժը էժին հըրտէ լավա, կանց մին սէրու վըխճարը** (յուրաքանչյուրն իրեն համապատասխան մարդու հետ, ավելի լավ է զգում), **սըրվ օխձ տըրսածը սըրվ չաթվան էլ կվախէ** (մի բանից տուժածը զգուշանում է այն հիշեցնող բոլոր առարկաներից), **պըլօկված ճիտը չարչար օրվան տէմ ըրած** (բազմաչարչար), **ըրխը կապէլ** (1.լռել,2.լռեցնել), **պօզէրը տուս օնէլ** (ըմբոստանալ, դժգոհել), **հայ-հայը քինիլ, վայ-վայը մնալ** (երիտասարդությունը՝ լավ օրերը անցնել, ծերությունը՝ վատ օրերը հասնել), **քաչալը վըր ճար անօղ ինի, ուրան կըլխէն ճար կանէ** (որևէ պակասություն ունեցողը, եթե հնարավորություն ունենա, իր պակասությունը կվերացնի), **կըլխէն ծեթը պըկասէլ** (հիմարանալ), **տափան մընչէվ յէրգինք** (չափազանց շատ), **սասը փօրը քըցիլ** (սակվել, պապանձվել), **պըկէն չօթէլ** (1.ստիպել, հարկադրել, 2.նեղել):

Այս օրինակներում, ինչպես տեսնում ենք, բարբառային դարձվածների ոչ բոլոր բաղադրիչներն են գրականացվել, դրանց կազմում շարունակում են մնալ բարբառային բառաշերտին պատկանող բառեր՝ **(բեղ** (ընչացք), **նէրվ** (նյարդ), **հակ** (խուրջինի երկու աչքերից յուրաքանչյուրը), **դաբաղխանա** (կաշի դաբաղելու արհեստանոց), **քաչալ** (ճաղատ), **ջիւվալ** (պախուրց, սանձ), **ծէթ** (ծեթ), **չաթու** (թոկ), **էձ** (այծ) և այլն:

Բարբառային դարձվածի գրականացումը ենթադրում է նաև քերականական վեր-



ջավորությունների փոփոխություն: Փոփոխվում են ինչպես հողավածների, հոգնակերտների, այնպես էլ բայի ժամանակածնի վերջավորություններն ու հանգույցները: Այսպես, օրինակ, Արցախի բարբառն ունի **վախտ լըղարան, փախտ ճողարան** դարձվածք, որը Մ. Հովհաննիսյանն օգտագործել է **վախեցիլ լղարից, փախչի ճաղարից** տարբերակով՝ գրականացնելով **լըղար, ճաղար** բառերի բացառականի վերջավորությունը (**-ան** բարբառայինը փոխարինելով **-ից** գրականով): Դարաբաղի բարբառն ունի, **ըժժիլը ճղած** (անգաղտնապահ, վայրահաչ), **վըժը քո չինով կտրել** (տանջամահ անել), **պաղէվը տափավը տալ** (պատվագրել), **խը՛լըու սոսպրակ** (1.շատ խելոք, գրագետ, իմաստուն, 2.հեզն. հիմար, տխմար), **տափէն տական էլ ա** (որտեղից էլ լինի) դարձվածները, որոնց հոգնակերտ և հողավական վերջավորությունների գրականացմամբ ձևավորված տարբերակները (**վիզը քո չինով կտրել, ռեխները ճղած, պատիվը տափովը տալ, խելքի տոպրակ, տափի տակից էլ լինի**) հանդիպել ենք խնդրո առարկա ստեղծագործություններում. Գնա Վանեսանց ցեղից պտկածին հավատացրու, որ էդ բոլորը ռեխները ճղած հարարեցիների հնարածն է: [30] Սերգու գործն է, մտքում որոշում է Բուղին և հաստատ վճռում նրա վիզը քո չինով կտրել: [31] Պետունց ազգի պատիվը տափովը չտաք: [32] Տափի տակից էլ լինի, ամենաքիչը երկու հավ պիտի գտնես: [33]

Իսկ բարբառային **յա աղն ա պակաս, յա մաղը** (որևէ հոգս, խնդիրք ունի) դարձվածում գրականացվել են հանգույցները. այսպես՝

*Չոհրաբը, շարունակելով խաղալ Ազդունի հետ, պատասխանեց.*

*-Կամ աղն է պակաս, կամ մաղը: [34]*

Դարձվածային միավորների գրականացման մի յուրօրինակ ձև է բարբառային բայական դարձվածների գրականածն խոնարհումը: Օրինակ՝ուռուր հարս, **պըռչս ձաքում** է մի ստաբան չայի համար: [35] Սակայն մուկ բռնող Փառավունի աղջիկն **աղու տանձ է կծել**: [36] **Չանան ծռում է, թե՛** ես ձեր «ընտանեկան գործերին» չեմ խառնվում: [37] Վանի, **չափարը ձմռում ես**-նախագահն ուզում է բարկանալ...: [38]

Այստեղ բարբառային **պըռռը ճաքել** (1.սաստիկ վախենալ, 2.շատ կարոտել), **չանան ծռել** (ստորանալով խնդրել, աղերսել), **աղու տանձ կծել** (տրամադրությունն ընկնել), **չափարը ձըռռել** (չափն անցնել) դարձվածները խոնարհվել են գրակա-նածն. գրականացվել են թե՛ ձևաբայերի վերջավորությունները, թե՛ օժանդակ բայերը:

Այսպիսով՝ ժողովրդախոսակցական և բարբառային դարձվածները ժողովրդի իմաստնության բովում դարբերով թրծված կառույցներ են՝ ձևավորված բարբառին հատուկ բառային ու քերականական օրենքներով:

Գեղարվեստական գրականության մեջ, ինչպես տեսանք, դարձվածք «որևէ ձևով կերպարանափոխվելով՝ համապատասխան պատկերի մեջ ստանում է նոր հնչողություն՝ միաժամանակ պահպանելով հարյուրամյակների ընթացքում իր մեջ խտացված բովանդակությունն ու նշանակությունը»: [39]

Եվ անհրաժեշտ է, ի հաշիվ դրանց, հարստացնել գրական լեզուն և մասնավորապես գեղարվեստական գրականության լեզուն, մանավանդ, որ լեզվի հաղորդակացական բնույթն այլ զարգացում է ենթադրում. «Դարձվածքային տարբերակները գրական լեզվում կիրառական ոլորտների ընդարձակման և բարբառների գործառական սահմանափակման պայմաններում աստիճանաբար պակասում են: Այս երևույթը պայմանավորված է լեզվի հաղորդակցական բնույթով: Բառային տարբերակները ևս անցնում են նույն ուղին: Եթե նույն հասկացությանը ծառայում են մեկից ավելի տարբերակներ (բառային կամ դարձվածային), ապա դա ինչ-որ չափով ավելցուկային կարգ է, որը միտում ունի վերանալու, կամ տարբերակներից մեկն ու մեկը վերածվում է հոմանիշի (ըստ անհրաժեշտության)»: [40]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Երևանի պետական-սարանի հրատ., Եր., 1970, էջ 79
2. Մարության Ա., Եղիշե Զարեմցի չափածոյի լեզուն և ոճը, «Սովետական գրող» հրատ., Եր., 1979, էջ 84:
3. Առաքելյան Վ.Ղ., Հայ գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության հարցի շուրջ, ՊԲՀ, հ.3, Եր., 1964, էջ 150
4. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, ԵրՊՀ հրատ., Եր., 2007, էջ 188:
5. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ. Ստեփ., 2005, էջ 227
6. Նույն տեղում, էջ 156:
7. Նույն տեղում, էջ 404:
8. Նույն տեղում, էջ 195:
9. Նույն տեղում, էջ 294:
10. Նույն տեղում, էջ 181:
11. Նույն տեղում, էջ 359:
12. Նույն տեղում, էջ 239:
13. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, «Ամարաս» հրատ., Եր., 2008, էջ 384
14. Ղահրիյան Ա., Պատրանք, «Սովետական գրող» հրատ., Եր., 1983, էջ 54
15. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, էջ 404:
16. Նույն տեղում, էջ 285:
17. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, ՀԳՄ հրատ., Եր., 2007, էջ 66:
18. Ղահրիյան Ա., Պատրանք, «Սովետական գրող» հրատ., Եր., 1983, էջ 36:
19. Աբրահամյան Ա., Սերունդների հետ, Եր., 2008, էջ 461:
20. Նույն տեղում, էջ 519:
21. Նույն տեղում, էջ 494:
22. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, էջ 278:
23. Ղահրիյան Ա., Պատրանք, Եր., 1983, էջ 11:
24. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, Եր., 2007, էջ 22:
25. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, Եր., 2008, էջ 175:
26. Նույն տեղում, էջ 288:
27. Օվյան Վ, Կապույտ տարիներ, «Դիզակ պլուս» հրատ., Ստեփ., 2007, էջ 271:
28. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, Եր., 2008, էջ 295:
29. Նույն տեղում, էջ 402:
30. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, էջ 342:
31. Նույն տեղում, էջ 129:
32. Օվյան Վ, Կապույտ տարիներ, Ստեփ., 2007, էջ 44:
33. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, էջ 345:
34. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, էջ 400:
35. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, էջ 490:
36. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, էջ 27:
37. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, էջ 432:
38. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, էջ 114:
39. Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Երևանի պետական-սարանի հրատ., Եր., 1970, էջ 81:
40. Զահուկյան Գ., Բ, Աղայան Է. Բ, Առաքելյան Վ. Ղ, Քոսյան Վ. Ա, Հայոց լեզու, Առաջին մաս, Ա պրակ «Լույս» հրատ., Եր., էջ 494:

**ԱՄՓՈՓՈԳԻՐ**  
**Բարբառային դարձվածների գրականացումը Արցախի գրողների**  
**ստեղծագործություններում**  
**Ռենա Մովսեսյան**

Բարբառային դարձվածների ուսումնասիրությունը և վերլուծությունը կարևորվում են ոչ միայն բարբառի, այլև տվյալ լեզվի և ժողովրդի մշակույթի պատմության, փիլիսոփայական աշխարհընկալման տեսանկյունից՝ նպաստելով բարբառների ձևավորման ժամանակի, գրական լեզվի ու բարբառների հարաբերության հստակեցմանը:

Այդ առումով բարբառային դարձվածները մեծ տեղեկություն են պարունակում Ղարաբաղի և ղարաբաղցու մասին: Այս դարձվածները, լայնորեն օգտագործվելով գեղարվեստական գրականության մեջ, ընդգծում են նրա արտահայտչականությունը:

Արցախի գրողների ստեղծագործություններում գործածվում են մեծ թվով բարբառային դարձվածներ, որոնք գրական համատեքստում այս կամ այն չափով գրականանում են, ինչն էլ դարձրել ենք մեր ուսումնասիրության առանցքը:

**РЕЗЮМЕ**  
**Литературализация диалектных фразеологических единиц**  
**в произведениях арцахских писателей**  
**Рена Мовсесян**

**Ключевые слова:** *фразеологические единицы, диалектные единицы, литературный язык, философское мировоззрение, существенная информация, художественная литература, экспрессия, диалектные идиомы, литературный контекст, исследование, литературализация.*

Анализ и изучение диалектных фразеологических единиц является важным не только с точки зрения диалекта, но и истории культуры, философского мировоззрения данного языка и народа, способствуя времени формирования диалектов, конкретизации отношений между литературным языком и диалектом.

В этом плане диалектные идиомы содержат большую информацию о Карабахе и карабахце. Эти идиомы, широко употребляясь в художественной литературе, усиливают ее экспрессию.

В произведениях арцахских писателей используется большое количество идиом, которые в литературном контексте в той или иной мере подверглись литературализации, что стало основой нашего исследования.

SUMMARY

**Literalization of Dialectal Phraseological Units in the Works of Artsakh Writers  
Rena Movsesyan**

**Keywords:** *phraseological units, dialectal units, literary language, philosophic worldvision, sufficient information, fiction, expressive, dialectal idioms, idiom varieties, literary context, investigation, literalization.*

The analysis and study of the dialectal phraseological units is important not only from the point of view of dialects but also the history, culture, philosophic worldvision of the given language and people, promoting the relations of the literary language and dialect.

From this position dialectical idioms contain sufficient information about Kharabakh and the Karabakh people. Having been used in fiction they enlarge the expressive abilities of the language.

The works of Artsakh writers are rich in various dialectal idioms, which were literalized in the literary context and have become the basis of our investigation.

### Սիրվարդ Ստեփանյան

**Բանալի բառեր`** Թոմաս Ման, վեպ, Լոտտա, գերմանական, Գյոթե, սեր, արվեստ, գրականություն, մարդկային, բնավորություն:

Գերմանական գրականության ականավոր ներկայացուցիչ` Թոմաս Մանի «Լոտտան Վայմարում» վեպի ստեղծման շարժառիթներն ունեն ավելի շատ քաղաքական-փիլիսոփայական, հոգեբանական, քան գրական բնույթ: Այս առումով խնդիրը պետք է դիտարկել Գյոթե-Ման կապի համատեքստում: Վեպի նյութը Գյոթեի կյանքի պատմությունն է: Մանը տեսնում էր 20-րդ դարի Գերմանիայի պատմության եւ արվեստի բացահայտ ողբերգականությունը, եւ Գյոթեի կերպարով իր տարվածությունը նոր մտահղացումների պայման է դառնում: Այս մասին են վկայում հեղինակի խոստովանությունների ու առաջարկությունների տարբեր տեսական նյութերը: Վեպում ներկայացվող երկու առանձին խնդիրներ միաձուլվում են մեկ նպատակի շուրջ` արվեստի եւ արվեստագետի գնահատման համապատկերում Գյոթե անհատի եւ նրա երկերի ուսումնասիրումը: Մանը փորձում է հաղթահարել արվեստագետի եւ արվեստի խնդիրները` պահանջելով, որ արվեստագետը հեռանա գեղագիտական հնարքներից եւ միանա հասարակության վերակառուցման պայքարին: Այս առումով վեպի տեսական աղբյուր է Մանի «Արվեստագետն ու հասարակությունը» հոդվածը: Այսպիսով` Մանը կարելու է արվեստի հեղափոխական դերը, ինչով եւ պայմանավորված` այս գիրքը ձեռք է բերում անցումային իմաստ, այն բնորոշվում է որպես ստեղծագործական մի շրջան, որի գազաթնակետը եղավ «Դոկտոր Ֆաուստոս» վեպը: Վեպը հասկանալու ուղեցույց է ծառայում Մանի «Գյոթեի Վերթերը» (1938թ). էսսեն, որտեղ նա հաղորդում է հետաքրքիր մտքեր` վեպի բնույթի մասին: Էսսեում տեղ գտած նյութերում հիմնավորվում է նաեւ վերթերյան թեմայի արդիականացման մասին Մանի առաջարկը: Օգտագործելով Շառլոտա Քեստների` Վայմար այցելելու պատմական փաստը` Մանը մեջբերում է Շառլոտայի գրառումներից. «Ես ծանոթացա մի ծեր մարդու հետ, որը, նույնիսկ, եթե չիմանայի, որ Գյոթեն է, այնուամենայնիվ ինձ վրա ոչ մի հաճելի տպավորություն չթողեց»: [1] Այս գրառումը հեղինակը համարում է տրագիկոմիկական, մարդկային եւ իրական փաստ, ինչը թույլ է տալիս վեպ կամ պատմվածք գրելու, «որտեղ ինչ-որ չափով կարելի կլինի խոսել զգացմունքի եւ բանաստեղծության, տարիքային արժանապատվության եւ կորստի մասին եւ առիթ կտա Գյոթեի եւ ընդհանրապես հանձարի կերպարի ստեղծման: Երեւի կգտնվի այն բանաստեղծը, որը դա կծեռնարկի»: [2] Բայց Մանը եղավ առաջինն ու միակը, ով արձագանքեց եւ մեկ տարի անց գրեց «Լոտտան Վայմարում» վեպը:

Այուժեի հիմքում ընկած է հետեւյալ պատմությունը: «Փիղ» հյուրանոցի առաջ կանգ է առնում փոստային կառքը, եւ այնտեղից դուրս են գալիս երեք կին: Փոխադարձ վերաբերմունքից անմիջապես պարզ է դառնում, որ նրանցից երկուսը մայր ու աղջիկ են, իսկ մյուսը` նրանց սպասուհին: Դա վերթերյան Շառլոտան է, որն իր

\* Հոդվածն ընդունվել է 19.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Արի Հ գերմաներեն և ֆրանսերեն լեզուների ամբիոնը:

աղջկա հետ 1816 թվականին գալիս է Վայմար՝ իբր քրոջը տեսության: Իսկ իրականում նրան այստեղ էր բերել Գյոթեին հանդիպելու հույսը: Անցել են տասնյակ տարիներ այն պահից, երբ Շառլոտային եւ իր փեսացուին տեղեկացրել էին ընկերոջ՝ Գյոթեի հանկարծակի մեկնումի մասին: Սակայն դա չի խանգարել Շառլոտային՝ հավատարիմ մնալ իր հիշողություններին: Հյուրի ով լինելը պարզվում է փաստաթղթերի լրացման ժամանակ: Առաջին հետաքրքրությունը նրա անձի հանդեպ ցուցաբերում է Մագերը՝ հյուրանոցի սպասավորը, որը 1816թ. սեպտեմբերյան այդ օրը հետագայում համարեց իր կյանքի լավագույն օրերից մեկը: Այս այցելության լուրը ցնցում է ամբողջ քաղաքը: Բոլորը ցանկանում են տեսնել մի կնոջ, որի պատմությունը մի գիշերվա ընթացքում գրավել էր ողջ Եվրոպան: Դատերը քրոջ տուն ուղարկելուց հետո Շառլոտան լուր է ուղարկում Գյոթեին՝ իր այցելության մասին, ցանկություն հայտնում դատերը՝ նրա հետ ծանոթացնելու եւ անձամբ նրան տեսնելու: Հաջորդ իսկ առավոտից նա չի կարողանում ազատվել այցելուներից: Նրան այցելում են այդ ժամանակ նույն հյուրանոցում իջեւանած իռլանդական նկարիչ միս Հեյզլը, ապա՝ դոկտոր Ռիմենը, Ադել Շոպենհաուերը, եւ, վերջապես Ավգուստ ֆոն Գյոթեն: Վերջինս տեղեկացնում է նրան՝ իրենց մոտ ճաշելու հոր հրավերը: Բոլոր հանդիպումների, երկխոսությունների եւ կերպարների շուրջ մտորումների ենթատեքստում ընկած է Գյոթեի թեման:

Վեպն օժտված է կառուցվածքային տարբեր առանձնահատկություններով: Այն բաղկացած է ինն առանձին գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը փոքր էպիկական ձեւով ու ինքնուրույն բովանդակությամբ առանձին պատմվածք է: Մյուս կողմից դրանք ծուլվում են իրար նպատակային առումով: Բոլոր գործողությունների, իրադրությունների ու դրվագների միջոցով զարգանում է Գյոթե բազմաբնույթ երեւոյթը: Բոլոր կերպարները ժամանակին պատկանել են Գյոթեի շրջապատին: Նրանցից յուրաքանչյուրը Շառլոտայի հետ ունենում է երկար գրույց, ինչի ընթացքում Շառլոտան զգում է Գյոթեի հանդեպ ունեցած նրանց հիացմունքն ու մտահոգությունը: Նրանց պատմությունների վրա տարածվում է մի ընդհանուր անհանգստություն, ինչից եւ կերպարները դառնում են երկիմաստ: Այդ երկիմաստությունը լավ ծանոթ է նաեւ Շառլոտային: Բայց նա կարողանում է վերլուծել ու առանձնացնել իրարից արժեւորման հակադիր բեւեռները: Մարդու վեհությունը Շառլոտայի գնահատումով ինքնագոհության արդյունք է: Դրան հասնելու համար նա կարելու է մարդկային արժանապատվության, սիրո, ընկերության վերաբերյալ սկզբունքային դիրքորոշումը: Դատեր հետ ունեցած թեթեւ վեճի մեջ նա ասում է. «Իմ կյանքն էլ դժվար է եղել, եւ ես ստիպված եմ եղել շատ բաներից հրաժարվել: Կարծում եմ՝ քո սիրելի, անմոռանալի հայրիկի համար եղել եմ լավ կին, նրա համար լույս աշխարհ եմ բերել տասնմեկ երեխա, որոնցից երկուսը Աստված խլել է ինձանից, իսկ ինը մեծացրել եմ, ու դարձել են ազնիվ մարդիկ: Համբերել ու տառապել եմ: Ես գոհել եմ ինքս ինձ: Սակայն մարդամոտությունս ու բարեհոգությունս ինձ ոչ մի բանում չեն խանգարել: Եվ դաժան կյանքն ինձ չի կոպտացրել, որ ես մեջքով շրջվեմ Մագերին ու ասեմ նրան. «Հիմար, ինձ հանգիստ թող»: Ես դրան ընդունակ չեմ»: [3]

Պատմական փաստերի միջոցով Մանը քննում է Գյոթեի կերպարը՝ երիտասարդ եւ ծեր տարիքում, իրականության եւ պոեզիայի միջեւ: Տարբեր տեսանկյուններից Գյոթեի կերպարի ուսումնասիրումը թույլ է տալիս Գյոթեին ընդունել որպես

մի «ամբողջություն»: Շառլոտայի այցելության առթիվ ընթացող սյուժետային բոլոր գործողությունների արդյունքում Մանը նպատակ ունի տեսնելու Գյոթեի պատկերը՝ որպես կոմպոզիցիա, որի զարգացման հնարավորությունները Մանը ընդարձակում է հասարակական կյանքում, բնագիտության մեջ, թատրոնում, պետական-քաղաքական կյանքում եւ այլ բնագավառներում: Բոլոր դեպքերում Մանը կարելուորում է Գյոթեի ռեալիզմը, նա գնահատում է Գյոթեի բնագիտական հայտնագործությունները բույսերի փոխակերպման ու գույների ուսմունքի ասպարեզում, ճարտարապետության մեջ նրա հետաքրքրասիրությունը եւ այլն: Ռուս թարգմանիչ, գրականագետ Ն. Վիլմոնտի (1901-1986) կարծիքով՝ Գյոթեի մասին այս վեպը լավագույն գործն է, որտեղ Մանն ավելի շատ վերակերտում է Գյոթեի կերպարն իր անկրկնելի կենսականությանը, քան վերլուծում եւ ընդհանրացնում: Վեպը համարում են նաեւ լեգենդ, որտեղ Գյոթեի կերպարը բարձրանում է ծերության օրերի անձնական կյանքից, բայց այն ստանում է այնպիսի չափեր, որոնք այդ կյանքի վրայով անցնում են դեպի հեռուները: Չնայած դրան՝ ոչինչ չի պատմվում, թե ինչն է այդտեղ ոչ երկրային, եւ ոչ իրական:

Գյոթեի կերպարի ստեղծումը Մանը համարել է իր ժամանակի մեծ անհրաժեշտություն: Վեպում Գյոթեն նկարագրվում է բնավորության ու գործունեության ամբողջ բարդությամբ: Այս գիրքը խոսում է մեծ ու հպարտ մենակության մասին: Դա Մանի մենակության շրջանն էր՝ հայրենիքից հեռու: Սակայն նա խորապես համոզված է, որ Գերմանիան իր եւ իր նմանների հայրենիքն է: Եվ ինքը այդ երկրի արժանի որդիներից մեկն է: Սա նույնացնում է Գյոթեին ու Մանին, ինչից ելնելով՝ գրող, գրականագետ Քլաուս Հարփրեխտը (ծնվ. 1927թ.) Մանի կենսագրական էջերում վեպի հեղինակին անվանել է Յոհան Վոլֆգանգ ֆոն Ման: Վեպի ուսումնասիրությամբ զբաղվել է գերմանացի փիլիսոփա Էռնստ Կասիրերը (1874-1945): Նա նշել է, որ Մանից բացի ոչ մի մեծ արվեստագետ չի հանդգնել կերտելու Գյոթեի գեղարվեստական կերպարը: Դա ենթադրաբար նա կապում է թեմայի բարդության հետ: Ըստ Լ. Ֆրեթգի՝ վեպը գրվել է հայր եւ որդի հարաբերության մոտիվով, ինչի համար եւ Մանն ուսումնասիրել է գերմանացի գրականագետ Լյուդվիգ Գայգերի (1848-1919) «Գյոթեն եւ իր ընտանիքը» (1908թ.) եւ գրող Վիլհելմ Բոդի (1862-1922) «Գյոթեի որդին» 1918թ. գրքերը: [4] Իր վեպում Մանը նպատակ ունի ցույց տալու, թե ինչ չափով կարող է Մեծ մարդու որդին ձնշվել հոր ազդեցիկությունից: Այդ խնդիրը Մանը վերլուծում է Ադել Շոպենհաուերի կերպարի միջոցով: Նա գրում է. «Մեծ մարդու որդի լինելը մեծագույն երջանկություն ու արժեքավոր հարմարություն է, բայց եւ մի ճնշող ծանրություն եւ սեփական ինքնության մշտական նվաստացում: [5] Այս խնդիրն ունեին նաեւ Մանի երեխաները, որոնց դաստիարակության համար Մանը կնոջ հետ անում էր ամեն ինչ՝ դրա մեջ ներդնելով մեծահասակների բնորոշ լրջություն ու խոհեմություն: Տարիներ անց Մանի երեխաներն իրենց մանկությանը ցավով են անդրադարձել: Այսպես՝ Քլաուս Մանը իր «Հոր կերպար» հոդվածում գրել է. «Նա գտնում էր, որ ավելի լավ կլիներ մի քիչ որեւէ մեկի օրինակով ապրել, քան փորձել մեզ վրա անմիջական ու մանկավարժորեն ազդել» [6]: Գոլո Մանը նշել է, որ այդ մթնոլորտում անհնար էր պրակտիկ մասնագիտություն ձեռք բերել: [7] Բ. Մանի «Հրաբուխներ» վեպի լույս տեսնելուց հետո Մանը, ի պատասխան որդու դժգոհություններին՝ ծնողների դեմ ուղղված, այսպես է գրել. «Այո, նրանք քեզ երկար ժամանակ կատարյալ չեն ընդունել, քո մեջ չեն տեսել որդյակի

կամ թեթևամիտ մեկի, ես ոչինչ չեմ կարող փոխել: Բայց նաեւ անվիճելի է, որ դու կարողանում ես ավելին, քան շատերը: Դրա համար քեզ ընթերցելը համարում եմ իմ հատուցումը»: [8]

*Գյոթեի կերպարը, ըստ Մանի, շատ գծերով ինքնավերլուծություն է: Մանը Գյոթեի մտքերի մեջ ներգրավում է ամբողջական մասեր՝ սեփական հրապարակախոսական հոդվածներից, նամակներից: Այդ մասին ռուս թարգմանիչ, բանասեր, Մանի, Հեսսեի, Կաֆկայի գործերի թարգմանիչ Սոլոմոն Ապտը(1921-2010) գրում է. «Վեպում Մանը պարադոքսալ ամբողջությամբ ցույց է տվել այն քնարական հոսանքը, որը, սկիզբ առնելով «Քուդենբրոոկներ»-ից (1901), որտեղ հեղինակը տալիս է իր պատմությունը, սնել է իր ստեղծագործական օվկիանոսը՝ ողջ կյանքի ընթացքում»: [9] Անմիջական կերպարների ոչ այնքան մեծ քանակը էապես խոսում է կերպարների բազմազանության ու ընդհանրության մասին: Պատմականորեն վավերացված են Շառլոտա Քեստների ժամանումը Վայմար՝ «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպի լույս տեսնելուց 44 տարի անց, ինչի մասին Գյոթեն կարճ ու չոր ակնարկել է իր օրագրում՝ նույն տարվա սեպտեմբերի 25-ին, եւ 1816թ. հոկտեմբերի 9-ին Շառլոտա Քեստներին ուղարկած հետեւյալ տեղեկությունը՝ «Մեծարգո՝ ընկերուհի, կհաճեի՞ք Դուք այսօր երեկոյան բարեհաճել իմ օթյակ, իմ կառքը կգա Ձեր ետեւից: Տոմսի խնդիր չկա: Իմ սպասավորը Ձեզ ցույց կտա ճանապարհը պարտերի միջով: Կներեք, որ ես անձամբ չեմ ներկայանում, նաեւ այն բանի համար, որ մինչեւ հիմա անձամբ Ձեզ չեմ տեսակցել, թեւս ես շատ հաճախ մտքերով եղել եմ Ձեզ մոտ: Լավագույն ցանկություններով՝ Գյոթե: [10] Գյոթեի ծեռքով գրված այս երկտողը առ այսօր պահպանվում է Լայպցիգի համալսարանի գրադարանում.*

*Շառլոտայի մենախոսության, նրա եւ դատեր ճակատագրերի համեմատության մեջ հիմք ընդունելով հոգեկան խռովքի հոգեբանական քննումը՝ եվրոպական քննադատությունը Մանին դիտել է որպես ռոմանտիկ-ռեալիստի: Վեպի կերպարների համակարգում հեղինակն իր ծայրը զիջում է գործող կերպարների ճարտասանությանը: Վերջինս, ըստ Մանի, դարաշրջանի գրականությանը բնորոշ հատկանիշ է: Այն քաղաքական իմաստ է ստանում Մագերի խոսքերում. «Թող ների ինձ տիկին խորհրդականը իմ հուզմունքի եւ այսքան նեղմիտ շատախոսության համար: Երբ սիրտը լիքն է, բառը չես կարող ետ պահել: Այսպես է ասում ժողովուրդը՝ իր ոչ գրական, դիպուկ լեզվով»: [11] Գյոթեի կերպարի ազդեցությունը ակտիվանում է միայն յոթերորդ գլխում, նրա մենախոսության մեջ, որտեղ Մանը Գյոթեի շուրթերով արտահայտում է իր քաղաքական հայացքները, գերմանական ազգի մասին իր հակաֆաշիստական խոհերը: Ըստ Մանի՝ Գերմանիան ազատությունն է, լուսավորությունն է ու սերը:*

*Վեպում գլխավոր կերպարի՝ Գյոթեի միջոցով Մանն արտահայտում է նացիոնալ-սոցիալիզմի հանդեպ իր տեսակետները: Կերպարների գրույցներում Նապոլեոնի դեմ գերմանական պետության պատերազմի քննարկումը վեպը դարձնում է նաեւ քաղաքական: Մի ամբողջ գլուխ Ադելը խոսում է այդ մասին: Գյոթեի եւ Նապոլեոնի ընկերությունը նա այսպես է գնահատում. «Այդ հավատարմությունն ու ընկերությունը կարելի է անվանել եսասիրական, բայց նախ պետք է նշել, որ այդպիսի մարդու էգոիզմը անձնական լինել չի կարող: Այն ընդհանուր բնույթ ունի, եւ երկրորդ՝ արդյո՞ք Գյոթեն մենակ է իր հայացքների ու համոզմունքների մեջ»: [12]*



Կերպարների հոգեբանական վերլուծության շնորհիվ վեպը նույնքան հոգեբանական է, ինչքան փիլիսոփայական կամ քաղաքական: Լոտտայի այցելության մոտիվով Մանն ստեղծում է Գյոթեի եւ մնացած կերպարների հոգեբանական համադրությունը: Ի տարբերություն Վայմարի բնակիչների՝ Գյոթե մարդը դժգոհ է այդ այցելությունից: Մանը բացում է կերպարների հոգու դիալեկտիկան: Նրան գոհացնում է այն միտքը, որ Ռիմենը հրաժարվում է Ռոստոկի համալսարանում իրեն տրամադրված թափուր պաշտոնից, որ Ավգուստը մտահոգված է վայմարյան թատրոնը ղեկավարելու իր հրապուրանքով: Այստեղ Մանը Գյոթեի միջոցով կարելու էրում է ուժի հանդեպ մարդու ինքնագնահատման ու ինքնավստահության աստիճանը: Գյոթեի մտերիմների ճակատագրերի օրինակով Մանը հարց է բարձրացնում, թե արդյո՞ք կարելի է նպատակին հասնելու համար վերջ տալ կյանքին կամ զգացմունքին: Այս մարդիկ ձգվում են դեպի Գյոթեն՝ հրաժարվելով սեփական դեմքից: Լոտտան միակ կերպարն է, որ կարողանում է հաստատել մարդկային արժանապատվությունը՝ հակառակ վայմարցիներին, որոնք կազմում են Գյոթեի շքախումբը: Վայմարցիների օրինակով Մանը խոսում է այն գերմանացիների պատասխանատվությունից, որոնք հրաժարվել են ճիշտ դիրք բռնելու մտքից եւ թույլ տվել իրենց օգտագործելու: Այս միտքը մի քանի տեղ կրկնելով՝ Մանն արդիականացնում է հեղափոխական ռեալիզմի ոգին, նա ցավում է Գերմանիայի ճակատագրի համար: Վեպում ողբերգական զարգացում ունի Գյոթեի որդի Ավգուստի եւ Օթիլիայի սիրո պատմությունը: Օթիլիան մեծարում է Գյոթեին եւ սիրում Ավգուստին՝ որպես Գյոթեի որդու, իսկ Ավգուստը Օթիլիայի մեջ տեսնում է մի աղջկա՝ հոր կողմից ընտրված իր համար: Նրանց հարաբերությունը լարվել էր դեռ մինչեւ նշանադրությունը, երբ հայրենասեր պրուսուսի Օթիլիայով տարված ուսանող Հյանկեն մեկնում է ճակատ՝ ֆրանսիացիների դեմ կռվելու, իսկ Ավգուստը՝ հոր միջնորդությամբ մնում է տանը: Գյոթեի՝ որպես ամենակարող հոր այս ցանկությամբ հիմք է դրվում սեփական որդու ողբերգությանը: Ավգուստի մասին Շիլլերի այրին ասում է. «Իսկ մեր խեղճ ընկերը մի՞թե դեռ մելանխոլիկ չի դարձել: Թեեւ, ճիշտ է, նա այդպիսին էլ եղել է»: [13] Այսպիսով՝ նա ձեռք է բերում վախկոտի համբավ եւ արժանանում շրջապատի արհամարհանքին: Այնուամենայնիվ այս հանգամանքը չի խանգարում նրանց միությանը, որով եւ Մանը արդիականացրել է Գյոթեի սիրո խնդիրը: Վերջինս հասկանում է նաեւ Ավգուստը, երբ, ճաշկերույթի ընթացքում դիտելով Շառլոտային, պատկերացնում է նրան երիտասարդ տարիքում եւ նկատում, որ նրա եւ երիտասարդ Օթիլիայի միջեւ բավական մեծ նմանություն կա: Այս գույգի միության մեջ Գյոթեն գիտակցում է իր ունեցած իր դերը: Ըստ նրա՝ բնությունը երես է թեքել Ավգուստից, եւ ինքն ուզում է մի անգամ էլ այն նրա մեջ կենդանացնել՝ նրան ամուսնացնելով այդ ամազոնուհու հետ, որն աղջկա այն տեսակն է, որից ինքն անխուսափելիորեն փայտել էր: Հոգեբանական համատեքստում Մանը փորձում է լուծել նաեւ Լոտտայի սիրո խնդիրը՝ սիրելի է արդյո՞ք Լոտտան Վերթերին: Այդ մասին Մանը գրել է. «Լոտտան զգում էր, որ իր համար սարսափելի ծանր կլիներ կորցնել Վերթերին: Նա կցանկանար, որ Վերթերն իրեն եղբայր համարեր կամ էլ ինքը կարողանար նրան ամուսնացնել իր ընկերուհիներից մեկի հետ: Դրանով նա կկարողանար բարի Ալբերտի հետ Վերթերի հարաբերությունը մաքուր հիմքի վրա վերստեղծել: Բայց երբ նա հերթով աչքի է անցկացնում իր ընկերուհիներին, նրանց մոտ միշտ ինչ- որ բանի թերացում է գտնում: Նա նրանց մեջ չի

տեսնում մեկին, որին կպարգևեր իր ընկերոջը: Երիտասարդ բանաստեղծն ավելացնում է. «Այս դիտումներում Լոտտան հոգու խորքում, առանց ինքն իրեն խոստովանելու զգացել է, որ ինքը թաքուն ցանկանում է Վերթերին իր համար պահել»»: [14] *Լոտտայի՝ Վայմար այցելելու պատրվակը Մանը համարում է նրա սիրո ապացույցը: Հոգեբանական նույն մոտեցմամբ է Մանը գնահատում նաև Գյոթեի «Ընտրովի ազգակցություններ» վեպը: Նա նշում է. «Վերթերյան պահերը հիշեցնում են վեպի հոգեբանական արվեստի մասին»:* [15]

*Թեև Գյոթեն վեպում ներկայանում է միայն յոթերորդ եւ ութերորդ գլուխներում, բայց նրա կերպարի մուտքն սկսվում է առաջին իսկ տողերից, եւ հետագա զարգացումը Մանն իրագործում է սյուժեի մեջ ներգրաված բոլոր կերպարների օգնությամբ: Այսպես՝ Մագերի հայացքում Գյոթեն սովորական մի մարդ է, Ավգուստը՝ Գյոթեի որդին, ցույց է տալիս հոր՝ որպես եւ պետական պաշտոնյայի, եւ անհատի կյանքը, Ադել Շոպենհաուերը գնահատում է նրան վայմարյան կազմակերպության քննադատական տեսակետից, Ռիմենի համար Գյոթեն մնում է որպես մեծ բանաստեղծ: Յուրաքանչյուր կերպարի պատմություն գերմանական իրականության մասին առանձին նովել է ու նաև՝ Գյոթեին գնահատման տեսակետ, արվեստագետի եւ իրականության վերաբերյալ մի պատկերացում: Լոտտան իր կարծիքները պնդում է Գյոթեի մասին ունեցած աղջկական թոմանտիկ հիշողությունների հիման վրա: Չնայած գրուցակիցների տարակարծությանը՝ նրանք միաբերան ընդունում են, որ Գյոթեի մեջ ապրում է այն գերագույն ուժը, որի առաջ իրենք պարտավոր են խոնարհվել:*

*Գյոթեի կերպարի բարդության շուրջ Ադելի հարադրական վերլուծումների միջոցով Մանը միաժամանակ արդարացնող պատասխաններ է փորձում գտնել Գյոթեի անձի վերաբերյալ ձեւավորված փիճելի խնդիրների համար: Գյոթեի բնավորության «տիրնական» գիծն այսպես է բացատրում. «Վաղուց ինձ մոտ այն տպավորությունն էր ստեղծվել, որ հասարակությունը, համենայնդեպս մեր՝ գերմանական, ծառայամտության ձգտումով ինքն է փչացնում իր տերերին, իր սիրելիներին՝ թույլ տալով նրանց չարաշահելու գերադասությունը իրենցից, ինչը ոչ մեկին չի գոհացնում: Այսպես, օրինակ, մի անգամ Գյոթեն, չափից դուրս ծավալելով իր կատակը, տանջել է մարդկանց եւ նրանց հասցրել միանգամայն անզորության: Նա ստիպել էր հյուրերին առանձին ռեկվիզիտներով կռահել դեռեւս բոլորին անծանոթ, նոր պիեսի բովանդակությունը: Մարդիկ սկսել էին ձգվել, ավելի ու ավելի շատ հորանջել, բայց նա չէր զիջում եւ շարունակում էր նրանց իր համառությամբ ձանձրացնել: Ես ակամա ինձ հարցրի. մի՞թե նա չի զգում իր բռնությունը, որին ենթարկում է մարդկանց: Ոչ, նա դա չէր զգում, հասարակությունը նրան ետ էր սովորեցրել դրանից: Իսկ ես, իրոք, չէի հասկանում՝ ինչպես նրան չի ձանձրացնում այդ դաժան խաղը: Կարծում եմ՝ բռնությունը տաղտկալի զբաղմունք է»:[16] *Այսպիսի վտանգավոր խաղի արտահայտման օրինակ է Ադելը բերում երիտասարդ Ավգուստի եւ Օթիլիա Պոզվիշի կապը, ինչը նա համարում է ողբերգություն, եւ ինչի համար նա մեղադրում է Գյոթեին: Լոտտայի հետ գրուցելիս նա այսպես է ասում. «Բայց ես չեմ կարող նրան ներել եւ երբեք չեմ ների այն բանի համար, ինչ նա արել էր այն ժամանակ իր որդու հետ...»:[17] *Սրանով հանդերձ Ադելը Գյոթեի ծնունդը համարում է մարդկության աստեղային ժամերից մեկը: Մոտիկ լինելով Գյոթեին՝ Ռիմենը ճանաչել է գերագույն ուրախությունը, նրա հոգու նրբությունը, բայց եւ նրա***

սառնությունն ու անտարբերությունը շրջապատի նկատմամբ:

Գյոթեի կերպարի զարգացման նախադրյալներից մեկը նրա հանդիպումն է Լոտտայի հետ: Ելնելով նրանց բաժանող ժամանակային, սոցիալական վիճակից՝ Մանն անընդհատ ձգձգում է նրանց հանդիպումը: Իր ներքին խռովքի ու հուզմունքի մեջ Գյոթեն դժգոհում է, որ անցյալը դավադրություն է գործում իր դեմ՝ կյանքն անկարգ ու հիմար դարձնելու համար: [18] Ավելորդ ասեկոսեններից խուսափելու համար ընդունելությունը կազմակերպում է հարազատների միջավայրում: Երկրորդ հանդիպումը տեղի է ունենում կառքում, ներկայացումից հետո: Լոտտեն անսպասելի զգում է, որ ինքը կառքում մենակ չէ: Նրա կողքին նստած էր Գյոթեն: Պատմական տվյալներով նրանք չեն հանդիպել: Մանը հորինել է նրանց հանդիպումը վերադառնալիս, որտեղ եւ վերականգնում է նրանց մտերմությունը: Բայց սա չի համարվում անցյալի վերադարձ, այն տեղի է ունենում միանգամայն այլ մակարդակի վրա: Սրանով Մանը կրկին վստահում է արվեստի ուժին եւ, ի դեմս Գյոթեի, արվեստագետի հետ կապում մարդկային հասարակության զարգացման ու դաստիարակման հավերժական խնդիրը: Լոտտան, որ արդեն տասնմեկ երեխաների մայր է, խոսում է բարձր գաղափարներից: Նա խոստովանում է Գյոթեին, թե ինչքան է իրեն վատ զգացել՝ տեսնելով իր հին ու սիրելի ընկերոջը շրջապատող զոհողությունները: Այնուհետեւ Լոտտայի աչքի առջեւ պատկերվում է Գյոթեի կյանքի ոչ միայն վեհությունը, այլ նաեւ ողբերգականությունը: Գյոթեն պատասխանում է. «Դու խոսում ես զոհի մասին, եւ, այստեղից սկիզբ է առնում խորհրդայինը: Դա աշխարհի, կյանքի, անհատի եւ արարման հզոր ամբողջականության գաղտնիքն է: Աստվածներին են զոհեր մատուցել, բայց ի վերջո Աստված ինքն է զոհ գնացել»: [19]

Այսպիսով՝ մշակութային ժառանգության պահպանման գործում Մանը կարեւորում է հանձարներին անդրադարձալու եւ նրանց մասին ստեղծագործելու բոլոր փորձերը: Այս առումով բարձր է գնահատվել Մանի «Վարպետների տառապանքներն ու մեծությունը» գիրքը /«Leiden und Grosse der Meister»/: Այն լույս է տեսել 1935թ. Բեռլինում: Գիրքն ընդգրկում է Գյոթեի, Ռիչարդ Վագների, Սերվանտեսի, Պլատոնի եւ այլ հանձարների մասին հողվածներ: Հակաֆաշիստական տեսանկյունից այս կերպարների վերլուծությունը եւ Գերմանիայի մշակույթի պատմության մեջ նրանց ունեցած դերի քննարկումը ժամանակի համար ունեցան արդիական հնչեղություն: Մանի այս երկին անդրադարձել են գրականագետներ Յուրգեն Պեթերսենը («Faustus lesen»), Կուրտ Զոնթայները («T. Mann und die Deutschen»): Հունգարացի փիլիսոփա, գրականագետ Գեորգ Լուկաչը (1885-1971) մշակութային մեծ ժառանգություն է համարում Մանի այս գործը: Այդ մասին նա գրում է. «Այդ կերպարների վերլուծությունը, նրանց իրական բնավորության բացահայտումը, հակաֆաշիստների տեսանկյունից նրանց նշանակությունը գերմանական մշակույթի զարգացման մեջ, մեր օրերում կարող է ունենալ այն արժեքը, որը դուրս կգա գրականության սահմաններից»: [20]

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Mann T., Es geht um den Menschen, Verlag Progress, Moskau, 1976, s.263:
2. Նույն տեղում, էջ 264:
3. Манн Т., Лотта в Веймаре: Роман /Пер, с нем. Манн Н., Л.: Художественная литература,

- 1990, стр. 16.
4. Fertig L., Vor-Leben, Bekenntnis und Erziehung bei Thomas Mann, S. 108.
  5. Նույն տեղում:
  6. Նույն տեղում, էջ 100:
  7. Նույն տեղում, էջ 101:
  8. Նույն տեղում, էջ 109:
  9. Mann T., Es geht um den Menschen, S. 6.
  10. Манн Т., Лотта в Веймаре, стр. 278.
  11. Նույն տեղում, էջ 107-108:
  12. Նույն տեղում, էջ 127:
  13. Mann T., Es geht um den Menschen, 1976, с.261.
  14. Նույն տեղում:
  15. Манн Т., Лотта в Веймаре, стр. 89.
  16. Նույն տեղում, էջ 123:
  17. Նույն տեղում, էջ 235:
  18. Նույն տեղում, էջ 286:
  19. Նույն տեղում:
  20. Лукач Г., Томас Манн о литературном наследстве. Литературный критик. 1935, стр. 36.

#### ԱՄՓՈՓԱԳԻՐ

#### Գյոթեի կերպարը Թոմաս Մանի «Լոտտան Վայմարում» վեպում Սիրվարդ Ստեփանյան

Նույն հոդվածում վերլուծվում է Յ.Վ. Գյոթեի կերպարը՝ 20-րդ դարի լավագույն երկերից մեկում՝ Թ. Մանի «Լոտտան Վայմարում» վեպում: Մանն անդրադառնում է Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպի կերպարներին: Լոտտայի մտորումների միջոցով Մանը Գյոթե հանձարին արժեւորում է տարբեր տեսանկյուններից՝ ցույց տալով նրա բնավորության եւ ստեղծագործության ամբողջ բարդությունը: Իր ժամանակների համար Մանը կարելւորում է Գյոթեի կերպարի՝ որպէս գերմանական մշակույթը մարմնավորող հերոսի ստեղծումը:

#### РЕЗЮМЕ

#### Образ Гете в романе “Лотта в Веймаре” Томаса Манна Сирвард Степанян

*Ключевые слова:* Томас Манн, роман, Лотта, немецкий, Гете, любовь, искусство, литература, образ, человеческий, характер.

Статья посвящена анализу образа И.В.Гете в одном из лучших романов XX века "Лотта в Веймаре" Томаса Манна. В романе автор возвращается в мир "Страданий юного Вертера" Й. В. Гете. Исходя из размышлений Лотта, Манн оценивает гения Гете с разных точек зрения, демонстрируя всю сложность его характера и творчества. Сочинение образа Гете, воплощающего в себе героя немецкой культуры, по мнению Манна, необходимо для своего времени.

SUMMARY

Goethe's Figure in *Lotte In Weimar* by Thomas Mann  
Sirvard Stepanyan

**Keywords:** *Thomas Mann, novel, Lotte, German, Goethe, love, art, literature, figure, human, character.*

The article is devoted to the analysis of one of the best novels of XXth century *Lotte in Weimar* by Thomas Mann, where the author draws on the world of Goethe's novel "The Sorrows of young Werther". Lotte's thoughts allow Mann to assess Goethe's genius from many points of view, demonstrating all the complexity and creativity of his art and character. According to Mann the creation of Goethe's figure is necessary for his time as the best embodiment of the German cultural hero.

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ**  
**ԵՎ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ԹՐԵՆԻՆԳՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿԱՅԻՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԹԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԲԵՐ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ\***

**Արմինե Ալոյան**

**Բանալի բառեր`** կրթահամակարգ, նախադպրոցական օղակ, կրտսեր դպրոցական օղակ, միջին դպրոց, ավագ դպրոց, հոգեբանական խնդիրներ, թրենինգի ուղղվածություն:

Ուսուցումն ընդունված է դիտարկել որպես յուրացման գործընթաց: Թրենինգների ընթացքում ևս կատարվում է գիտելիքների, հմտությունների, կարողությունների յուրացում: Սակայն, ի տարբերություն ավանդական ուսուցման ձևերի, թրենինգում յուրացումը կատարվում է իմիտացիաների միջոցով: Վարժեցման և ուսուցման կապը կարելի է տեսնել նաև այս ասպեկտում, եթե, հատկապես, մեջբերենք Վ. Յա. Լյաուդիսի հոգեբանամանկավարժական գործունեության կոնկրետ հարցերի, օրինակ, աշակերտ-ուսուցիչ կապի վերաբերյալ մոտեցումը, որի համաձայն` կրթության ավանդական համակարգում յուրացման գործընթացի կազմակերպումն օրինականացրել է առավելապես ուսումնական փոխազդեցության մեկ առաջատար ձև: Դա այնպիսի փոխազդեցություն է, որտեղ կտրուկ բաժանված ու բևեռացված են աշակերտի և ուսուցչի դիրքերը: Աշակերտի ակտիվությունը բխում է ուսուցչի գործողություններից: Իմիտացիայի տիպով ուսումնական փոխազդեցությունն առաջացնում է փորձի յուրացման համապատասխան ձև` առավել ռեպրոդուկտիվ, ինչը բնութագրական է ուսուցման բոլոր փուլերի համար` սկզբից մինչև վերջ [1]: Լ. Ա. Պետրովսկայան նշում է, որ «ինչ սովորեցնել» և «ինչպես սովորեցնել» հարցերին տրվող պատասխանների տեսանկյունից թրենինգը տարբերվում է ուսուցման խնդրի ավանդական մոտեցումներից [2]: Սակայն տարբերությունների առկայությունը չի նշանակում, որ թրենինգը, կրելով որոշակի տարբերակիչ որակներ, որպես ուսուցման մեթոդ տեղ չունի կրթական հաստատություններում: Ընդհակառակը, վերջինիս կիրառումը թույլ կտա ոչ միայն ուսուցանել, այլ նաև գործնականորեն ամրապնդել արդեն իսկ յուրացրած տեսական գիտելիքները, կարողությունները և ունակությունները: Հնարավոր է նաև, որ թրենինգի կիրառումը նպատակ ունենա ստեղծելու համապատասխան դաշտ սովորեցման ու դաստիարակման գործընթացն ավելի նպատակային կազմակերպելու համար:

Բացի վերոնշյալ ուղղվածություններից` թրենինգը կրթահամակարգում կարող է ծառայեցվել նաև այդ համակարգի սուբյեկտների անձնային որակների զարգացմանն ու հնարավոր հոգեբանական խնդիրների լուծմանը և այլն: Խոսելով կրթական ոլորտում թրենինգի կազմակերպման հնարավորությունների և ուղղությունների մասին` անհրաժեշտ է նշել, որ, ելնելով կոնկրետ նպատակներից, պետք է ճիշտ ընտրվի վարժեցման տեսակը, քանի որ թրենինգները տարբերվում են ըստ կիրառման նպատակների, ըստ կառուցվածքայնության, ըստ թրենինգային խմբի մասնակիցների թվի և այլն: Եթե կրթական միջավայրում նպատակ ունենք կիրառել վարժեցումը սովորող-

\* Հոդվածն ընդունվել է 25.12.16:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

**ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

ների հոգեշտկման համար, ապա պետք է ընտրենք հոգեշտկողական թրենինգներ: Ավագ դպրոցում թրենինգների կիրառումը կարող է ծառայեցվել աշակերտների կողմից սեփական հնարավորությունների բացահայտմանը, ինքնագիտակցության բարձրացմանը և այդ ճանապարհով ճիշտ մասնագիտական կողմնորոշվածության հասնելուն: Իսկ, օրինակ, ներառական կրթության պարագայում, որտեղ կարևորվում է մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների ինտեգրումը, նպատակային է կիրառել հաղորդակցման և շփման կոմպետենտայնության բարձրացմանն ուղղված թրենինգներ: Հաճախ աշակերտների ուսումնական առաջադիմության ցածր մակարդակը պայմանավորված է լինում նրանց ցածր ինքնագնահատականի, անվստահության, ինքնամոտիվության, համադասարանցիների և ուսուցիչների հետ շփման խնդիրների առկայության, ներուժի սխալ ուղղվածության և հոգեբանական, անձնային մակարդակում նման այլ խնդիրների առակայությամբ: Խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է սովորողների շրջանում իրականացնել հոգեբանական աշխատանքներ, որոնց ուղղվածությունը կորոշվի կոնկրետ խնդրի բնույթից: Հենց նման աշխատանքների կազմակերպումը, սկսած հոգեբանական ախտորոշումից մինչև համապատասխան մեթոդների ընտրությունն ու կիրառումը, պետք է հանդիսանա դպրոցական հոգեբանական ծառայությունների գերակա խնդիրը: Նման պարագայում հոգեշտկողական և հոգեկարգավորման թրենինգային աշխատանքները կարող են առավել քան արդյունավետ լինել: Թրենինգների կիրառման արդյունավետությունը սովորողների շրջանում պայմանավորված է նախ և առաջ հոգեբանական աշխատանքի այս մեթոդի ընթացակարգով: Նկատի ունենք այն, որ թրենինգային ծրագրերը իրենց մեջ պարունակում են խաղային, լիցքաթափող, սյուժետադերային վարժություններ, քննարկումներ, որտեղ երեխան կարող է ազատ արտահայտել իր կարծիքը, ինքը խորհուրդներ տալ: Նախադպրոցականի համար սյուժետադերային խաղերը համարվում են գործունեության հիմնական տեսակ, հետևաբար նախադպրոցականների համար թրենինգային ծրագրում ընդգրկված դերային խաղերն այդ գործունեության տրամաբանական շարունակությունն են: Դեռահասները թրենինգների ժամանակ բավարարում են իրենց մեծ զգալու, սեփական անձի կարևորությունը տեսնելու պահանջումները: Թրենինգներում չկա ոչինչ ստիպողական, ինչը այնքան չէն սիրում երեխաները:

Բացի այդ՝ թրենինգը կարող է նպատակային լինել ոչ միայն սովորողների, այլ նաև սովորեցնողների, օրինակ, ուսուցիչների հետ տարվող աշխատանքներում: Եվ այս դեպքում կարող են կիրառվել մասնագիտական ունակությունների զարգացմանն ուղղված վարժեցումներ, որոնք կարող են նպատակային լինել ուսուցչի անձի, մասնագիտական հմտությունների կատարելագործման տեսանկյունից:

Նման ճանապարհով սոցիալ-հոգեբանական թրենինգը, տարածված լինելով, որպես սոցիալական հոգեբանության մեթոդ, կարող է իր տեղը զբաղեցնել նաև մանկավարժական հոգեբանության մեթոդոլոգիայում և հանդիսանալ նոր խոսք հոգեբանական գիտության այս ճյուղում:

Խոսելով կրթության ոլորտում թրենինգի կազմակերպման հնարավորությունների մասին՝ անհրաժեշտ է նախ և առաջ կողմնորոշվել հետևյալ հիմնական հարցերում.


- թրենինգներ՝ կրթության համակարգի առանձնապես որ բաղադրիչում
- թրենինգներ՝ ում համար
- թրենինգներ՝ ինչ նպատակով

Պետք է հավելել, որ այս հարցադրումները մեկը մյուսի շարունակությունն են:

Նախ առաջին հարցադրումը բխում է այն փաստից, որ մեր կրթության համակարգը բաժանվում է աստիճանների՝

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

- նախադպրոցական կրթություն,
- տարրական կրթություն կամ կրտսեր դպրոց,
- միջին դպրոց,
- ավագ դպրոց,
- միջին մասնագիտական և բուհական կրթություն:
- Երկրորդ հարցադրումը ենթադրում է այն, որ կրթության համակարգի մասն են կազմում՝
- սովորողները՝ նախադպրոցականները, դպրոցականներն ու ուսանողությունը,
- սովորեցնողները՝ դաստիարակները, ուսուցիչները, մանկավարժները, դասախոսները,
- կրթական հաստատությունների ադմինիստրացիան:



Ինչպես և կրթությունը, թրենինգային գործընթացը ևս դիմամիկ գործընթաց է: Այն ենթադրում է զարգացում՝ նպատակներից արդյունք: Երրորդ հարցադրումն արտացոլում է այդ փաստը և բխում է այն բանի հստակ գիտակցումից, որ յուրաքանչյուր թրենինգի կիրառումն իր հիմքում պետք է ունենա բավականին հստակ նպատակ, սպասվելիք արդյունքի ուրվապատկեր, քանի որ թրենինգները բազմաթիվ են՝ կախված իրենց ուղղվածությունից ու նպատակային ուրվագծումներից: Այլ կերպ ասած՝ ինչ թրենինգ է մեզ անհրաժեշտ՝

- զարգացնող,
- կրթող,
- հոգեշտկողական,
- ուղղված հուզական ոլորտի զարգացմանը,
- ուղղված վարքային շտկումներին,
- ուղղված անձնային աճի խնդիրների լուծմանը,
- հաղորդակցմանն ուղղված




**ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՄԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

- մասնագիտական կողմնորոշվածության հարցերին ուղղված:

Մենք գտնում ենք, որ, եթե նպատակ կա կրթության ոլորտում կիրառելու թրե-նինգներ, ապա և թրենինգային ծրագիրը պետք է մշակվի վերոհիշյալ հարցերի հստակ պատասխանների հիման վրա: Իսկ այդ հարցադրումների պատասխանները բխում են մեկը մյուսից: Այսպես, եթե թրենինգները պետք է կիրառվեն սովորողների, մասնավորապես, աշակերտների խմբում, ապա, որ տարիքային խմբում:

Յուրաքանչյուր տարիքային խումբ բնութագրվում է իր հոգեբանական նորագոյացություններով, վարքային առանձնահատկություններով, հոգեբանական խնդիրներով, կրթական խնդիրներով ու նպատակադրումներով: Հետևաբար, օրինակ, միևնույն զարգացնող թրենինգները տարբեր տարիքային փուլերում պետք է ունենան տարբեր ուղղվածություններ:

Նախադպրոցական կրթական հաստատություններում կարևորվում է երեխային ուսումնական գործունեությանը նախապատրաստելու հարցը, այսինքն՝ առաջադրվող առաջնային խնդիրներից է նախապատրաստվածությունը դպրոցին, ինչպես նաև դաստիարակությունը՝ որպես անձի ձևավորման ուղիորդում:



Եվ քանի որ ուսումնական գործունեության սկիզբը, դպրոցականի կարգավիճակը կրում է երեխայի համար բավականին մեծ աֆեկտայի երանգավորում, ապա բնական է, որ դպրոցին նախապատրաստվածության մեջ ներառվում են ոչ միայն կրթության, երեխայի մտավոր զարգացվածության, այլ նաև նրա անձի ձևավորման, դաստիարակության ասպեկտները: Հետևաբար հատկապես ավագ նախադպրոցական տարիքի երեխաների հետ անցկացվող թրենինգներն առավել նպատակային կլինեն, եթե ուղղված լինեն երեխայի՝ դպրոցին նախապատրաստվածության ժամանակ դիտվող խնդիրների շտկմանը: Բայց պետք է նկատի ունենալ, որ դպրոցին նախապատրաստվածությունը տարվում է տարբեր ուղիներով.

1. Անձնային պատրաստվածություն, որն իր մեջ ներառում է երեխայի պատրաստվածությունը նոր սոցիալական դիրքին՝ այսինքն՝ աշակերտի կարգավիճակին, որն արդեն ունի որոշակի իրավունքներ և պարտականություններ: Անձնային պատրաստվածության մեջ մտնում է նաև երեխայի դրդապատճառային ոլորտի զարգացման աստիճանի տարբերակումը:

2. Ինտելեկտուալ պատրաստվածություն, որը ենթադրում է երեխայի մոտ մտա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

հորիզոնի և ճանաչողական գործընթացների զարգացման առկայություն:

3. Սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն, որն իր մեջ ներառում է երեխաների բարոյական և հաղորդակցական ունակությունների ծնավորումը:

4. Հուզականային պատրաստվածություն, որը համարվում է ծնավորված, եթե երեխան կարողանում է իր առջև նպատակ դնել, որոշումներ ընդունել, գործողությունների պլան մշակել և մասնակցել դրանց իրականացմանը:

Բնականաբար, եթե նախադպրոցականների համար անցկացվող թրենինգների նպատակն է դպրոցին նախապատրաստվածությունը, ապա պետք է հստակեցնել, թե որ ուղղությունը: Անձնային պատրաստվածության դեպքում թրենինգը, օրինակ, կարող է վերաբերել երեխայի դրդապատճառային ոլորտի զարգացմանը: Ինտելեկտուալ պատրաստվածությանն ուղղված թրենինգները, բնականաբար, պետք է զարգացնեն երեխայի մտահորիզոնը, ճանաչողական գործընթացները: Սոցիալ-հոգեբանական պատրաստվածության պարագայում թրենինգները պետք է ուղղվեն նախադպրոցականի բարոյական և հաղորդակցական ունակությունների ծնավորմանը: Հուզականային պատրաստվածության պարագայում թրենինգները պետք է երեխայի մոտ ծնավորեն նպատակ դնելու, որոշումներ ընդունելու, գործողությունների պլան մշակելու, դրանք իրականացնելու կարողություններ:

Բացի այդ ՀՀ ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտի կողմից երաշխավորված նախադպրոցականների կրթական համալիր ծրագիրը ևս նախանշում է այն ուղիները, որոնցով պիտի տարվեն նախադպրոցականի կրթությունն ու դաստիարակությունը [3]: Համաձայն այդ ծրագրի մասնավորապես ավագ նախադպրոցականների կրթության ասպեկտում կարևորվում ու որպես ծրագրային խնդիրներ են դիտվում`

- ֆիզիկական դաստիարակությունը,
- մտավոր դաստիարակությունը,
- բարոյական դաստիարակությունը,
- աշխատանքային դաստիարակությունը,
- էկոլոգիական դաստիարակությունը,
- գեղագիտա-գեղարվեստական դաստիարակությունը,
- ուսուցման կազմակերպումը, որը դիտարկվում է որպես ուսուցմամբ կազմակերպվող դաստիարակության գործընթաց [4]:


Հետևաբար, վերոնշյալ նպատակներին կարելի է հասնել նաև թրենինգների միջոցով` կազմելով համապատասխան թրենինգային ծրագրեր, որոնցում ներառված վարժությունները նպատակ կունենան նպաստելու վերոնշյալ խնդիրների զարգացմանը: Եվ յուրաքանչյուր թրենինգ պետք է ունենա կոնկրետ մեկ ուղղվածություն: Եթե վարժեցումը վերաբերում է, օրինակ, նախադպրոցականի բարոյական դաստիարակությանը, ապա նրանում չպետք է տեղ գտնեն, ասենք էկոլոգիական դաստիարակությանը վերաբերող վարժություններ: Շարունակելով նախադպրոցականի համար թրենինգների անհրաժեշտության թեման` ավելացնենք, որ այս տարիքի երեխաների համար թրենինգային ծրագրերը պետք է տարվեն հիմնականում երեք ուղղություններով, որոնց նախանշման ժամանակ հաշվի են առնվում տարիքային առանձնահատկությունները.

- ընդհանուր հոգեբանական զարգացում,
- կամայական վարքի ծնավորում,
- ուսումնական գործունեությանը նպաստող նախադրյալների բացահայտում և զարգացում,
- ինքնուրույնության դրսևորում,

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

- շրջապատի նկատմամբ ճիշտ վերաբերմունքի ձևավորում,
- աշխատանքի նկատմամբ ճիշտ վերաբերմունքի ձևավորում:


Կրտսեր դպրոցականների համար ուսուցման ու դաստիարակության պահանջները փոքր ինչ փոխվում են: Եթե նախադպրոցականի համար առանցքային էր անձի ձևավորումը, աշխարհայացքի ընդլայնումը, դպրոցին նախապատրաստվածության հարցերը, ապա կրտսեր դպրոցականի համար կարևորվում է արդեն ուսումնական գործունեությունը և դրանից բխող բոլոր պահանջները, որոնք ներկայացվում են կրտսեր դպրոցականի իմացական, վարքային, հուզական ոլորտներին: Եվ, բնականաբար, թրենինգները ևս պետք է ունենան արդեն փոքր ինչ այլ բովանդակություն:



Կրտսեր դպրոցական տարիքում, հատկապես ուսումնական գործունեության առաջին փուլում, կարևորվում է ևս մեկ հարց, այն է՝ դպրոցական ադապտացիան և դեզադապտացիան, որի հիմքում ևս խնդիրներ են, որոնք կարող են շտկվել ճիշտ մշակված թրենինգային ծրագրերի միջոցով: Սոցիալ-հոգեբանական թրենինգները տեղ ունեն հատկապես ներառական կրթությամբ զբաղվող կրթօջախներում, որտեղ հաճախ խնդիրներ են առաջանում մտավոր և ֆիզակական խնդիրներ ունեցող և չունեցող աշակերտների, ինչպես նաև ուսուցիչների ու ներառված աշակերտների միջև:

Կարծում ենք, որ նախքան թրենինգային ծրագիրը ընտրելը, պետք է կատարել ճիշտ հոգեբանական անալիզը՝ պարզելու, թե հատկապես որ ուղղությամբ պետք է աշխատել և թրենինգային խմբի մեջ որ երեխանները պետք է ներգրավվեն:

Սովորողների շրջանում թրենինգային աշխատանքի կազմակերպման ժամանակ տարիքային փուլերի առանձնահատկությունների դիտարկումների կարևորության վերաբերյալ մեր միտքը շարունակելով՝ կարող ենք փաստարկել նաև երեխաների հետաքրքրությունների տարբերությունների հանգամանքը: Թրենինգը պարտադրված լինել չի կարող: Մասնակցի համար պետք է հետաքրքիր լինի հոգեբանական աշխատանքի ընթացքը, նա պետք է ընդհանրություններ տեսնի իր և մյուս մասնակիցների միջև, պետք է ճիշտ ընկալի մարզչի դերը՝ նրանում չտեսնելով պարտադրողի կամ ուսուցչի: Միայն այս դեպքում թրենինգը կարող է նրա մեջ ինչ-որ բան փոխել դեպի դրականը, տանել դեպի զարգացում: Բնականաբար, դեռահասին առավել քիչ կհետաքրքրեն մասնագիտական կողմնորոշվածության հարցերը, քան, ասենք, շփումը հակառակ սեռի, ընկերների հետ: Հետևաբար թրենինգները պետք է տարվեն այդ ուղղությամբ նաև:



Միջին ղարոցում թենիսային ուղղվածությունը պետք է արտացոլի նաև այն կարևոր ձեռքբերումները, որոնք պետք է ունենա սովորողը կրթական տվյալ օղակն ավարտելու պահին: Համաձայն Ռ. Ս. Նենովի՝ այդ անձնային որակները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- գորակներ՝ կապված ինքնասպասարկման հետ, ինչպես ղարոցում, այնպես էլ տանը,
- գհասարակական կյանքի սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում կողմնորոշվելուն նպաստող որակներ,
- գորակներ, որոնք պայմանավորում են անձի բարոյական հիմքը և կուլտուրան [5]:

Սա այն կարևոր հոգեբանական որակներն են, որոնց զարգացումը և կատարելագործումը պետք է շարունակվի ավագ ղարոցում, որտեղ այդ որակների թվին ավելանում են նաև պրոֆերենտայնության հարցերը: Այս տարիքային փուլում թենիսների կիրառումը պետք է հնարավորություն տա այսօրվա ղարոցականին իրեն տեսնելու ու զգալու այն դերերում, որոնցում նա իրեն տեսնում է ապագայում: Այս փորձարկումը արիթ է պարզելու թե ինչքանով են սեփական անձնային հնարավորությունները համապատասխանում ապագայի նախանշած կենսական ծրագրերին, որոնք են այն թերացումները, որոնք պետք է շտկվեն, ինչ դժվարություններ կան որոնց պետք է պատրաստ լինել հասուն կյանքում: Ինչպես գրում է Վ. Յու. Բոլշակովը՝ հոգեթենիսին նվիրված իր գրքում «...դա հոգեբանական մեթոդ է, որը օգնում է մարդկանց ռացիոնալ կերպով մոտենալու սեփական և ուրիշների վարքի վերլուծությանը, առավել լավ գիտակցելու ինքն իրեն, սեփական անձի կառուցվածքը, ինչպես նաև այլ մարդկանց հետ փոխհարաբերությունների էությունը, ներքուստ ծրագրավորված կենսական ոճը՝ սցենարը» [6]:

Անկասկած, այս ամենը կարելի է բացատրել նաև խոսքով, սակայն թրեմինգը վերապրելու բացառիկ հնարավորություն է տալիս, ինչը ավելի ուսուցանող է, քանի որ սեփական սխալների վրա սովորելն է, որ առավել արդյունավետ է յուրաքանչյուր անհատի համար:

Պետք է փաստել, որ կրթությունը շարունակական, փոխկապակցված գործընթաց է: Յուրաքանչյուր ուսումնական նոր նյութ հիմնվում է նախորդի, արդեն յուրացվածի վրա: Եթե սովորողը լիարժեքորեն չի յուրացրել նախորդ ուսումնական նյութը, ապա նորի յուրացումն, անկասկած, կլինի խնդրահարույց:

Մեր կարծիքով՝ սովորողների հետ թրեմինգային աշխատանքն էլ պետք է կառուցվի այս համոզման և այս սկզբունքի վրա և շարունակականությունը պետք է այս դեպքում ևս լինի սկզբունքային: Այս պարագայում շարունակականություն ասելով՝ նկատի ունենք այն, որ կրտսեր դպրոցականների հետ անցկացվող թրեմինգները պետք է լինեն նախադպրոցական փուլում անցկացված թրեմինգների տրամաբանական շարունակությունը և, իրենց հերթին, պետք է հիմք հանդիսանան կրթական օղակի հաջորդ փուլում անցկացվելիք թրեմինգների համար: Նման տեսանկյունից համարում ենք, որ քիչ արդյունավետ են պատահական, իրադրային թրեմինգների անցկացումը, քանի որ արդյունքն էլ կարող է լինել զուտ իրադրային և չարմատավորվել: Եվ այնպես, ինչպես, որ մշակվում է կրթության ռազմավարությունը, այնպես էլ պետք է մշակել թրեմինգների անցկացման ռազմավարություն: Ասել է թե՛ մշակելով թրեմինգային ծրագիր նախադպրոցականի համար՝ մենք պետք է ունենանք ապագայի տեսլականը, այն հարցի պատասխանը, թե այս ուղղությամբ ինչ աշխատանք պետք է կատարենք հաջորդ փուլում, այսինքն՝ կրթական համակարգի հաջորդ փուլում: Միայն այս դեպքում թրեմինգը կհամապատասխանի շարունակական կրթության սկզբունքին: Այստեղ ևս մեկ անգամ անհրաժեշտ ենք համարում շեշտել անստորոշման հարցը: Այսինքն, համարում ենք, որ նախքան թրեմինգային աշխատանքի հաջորդ փուլին անցնելը պետք է իրագործել նաև հոգեբանական անստորոշում:

Կրթության համակարգում թրեմինգները կարող են տեղ ունենալ ոչ միայն սովորողների հետ տարվող աշխատանքներում, այլ նաև մյուս օղակներում:

Մասնավորապես ուսուցիչների շրջանում թրեմինգների անցկացումը ևս պետք է լինի նպատակային: Դրանք, անկասկած, կտարբերվեն մասնագիտական վերապատրաստումներից, քանի որ վերջիններս ուղղված են ուսուցիչների մասնագիտական գիտելիքների, մեթոդոլոգիական գիտանոցի հարստացմանը և այլն, ինչը նպատակ չի հանդիսանում թրեմինգային աշխատանքների համար, թեև մասնագիտական վերապատրաստումների ժամանակ թրեմինգները կարող են կիրառվել որպես ուսուցման մեթոդներ: Ուսուցիչների համար նախատեսված թրեմինգները ևս պահանջում են հստակեցումներ. Օրինակ՝ ինչ տարիքի երեխաների հետ է աշխատում ուսուցիչը: Բնականաբար կրտսեր դպրոցականի հետ աշխատող մանկավարժի առջև ծառայած խնդիրները այլ են, քան ասենք դեռահասի հետ աշխատող ուսուցչի պարագայում, կամ, մեկ այլ օրինակ, ներառական կրթական ծրագրերում ընդգրկված մանկավարժների աշխատանքն ունի իր առանձնահատկությունները, տնային ուսուցմամբ զբաղվող մանկավարժինը՝ իր: Բացի այդ՝ այսօր կրթությունը դիտարկվում է որպես սուբյեկտ-սուբյեկտ գործընթաց, իսկ առավել հին, կարծրացած սկզբունքները, համոզմունքները և ուսուցման ու դաստիարակության մասին պատկերացումները, որոնք բխում են կրթությունը որպես օբյեկտ-սուբյեկտ գործընթաց ընդունելուց, խանգարում են բազմաթիվ ուսուցիչների ադապտացվել բարեփոխվող կրթական միջավայրին ու արդյունավետ փոխհարաբերություններ ստեղծել արդեն այլ մտածողություն ու աշ-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

խարհայացք ունեցող սովորողների հետ:

Երեխայի ուսուցումն ու դաստիարակությունը լիարժեք է, եթե միահամուռ են գործում դրա համար պատասխանատու երկու հիմնական օղակները՝ ընտանիքն ու կրթօջախները: Հետևաբար, չպետք է այդ գործընթացից դուրս համարել ծնողներին: «Թրենինգներ ծնողների համար» գաղափարը ևս կրթության ոլորտի համար մշակված թրենինգային մարտավարության մի օղակը պիտի հանդիսանա: Եվ այստեղ էլ կարևոր է նկատի ունենալ, որ կրթական համակարգի տարբեր աստիճաններում գտնվող սովորողների ծնողները ևս կունենան շտկման ենթակա տարբեր խնդիրներ և այստեղ էլ ցանկալի է թրենինգային ծրագրի շարունակականության սկզբունքը:

Ինչպես կրթական ծրագիրն է զարգանում պարզից բարդ, տրամաբանական է, որ դրան զուգահեռ՝ մշակված թրենինգային ծրագիրը ևս պետք է այդ սկզբունքով շարժվի՝ պարզ նպատակներից դեպի առավել բարդ նպատակներ, պարզ ծրագրային բովանդակությունից դեպի ավելի բարդ ծրագիր:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Бакли Р., Кейпл Дж. Теория и практика тренинга, 4-е международное издание. П., 2002, стр. 15-16.
2. Петровская Л. А. Общение – компетентность – тренинг: избранные труды. М., 2007, стр. 77.
3. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, Եր., 2007:
4. Սույն տեղում, էջ 30:
5. Немов Р. С. Психология: В 3 кн.- 4-е издание, М., 2001.-Кн. 2: Психология образования, стр. 447-448
6. Большаков В.Ю. Психотренинг. Социодинамика. Упражнения.Игры. Социально-психологический центр Санкт-Петербурга, 1996, стр.36

### ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Թրենինգների կիրառման հիմնական բովանդակային ուղղությունները  
կրթահամակարգի տարբեր օղակներում  
Արմինե Ալոյան**

Հոդվածում խոսվում է այն մասին, որ կրթահամակարգի յուրաքանչյուր օղակում՝ սկսած նախադպրոցականից մինչև ավագ դպրոց, թրենինգների նպատակային ուղղվածությունները տարբեր են, և դա պայմանավորված է հենց տարբեր տարիքային խմբերի սովորողների հոգեբանական ու անձնային առանձնահատկություններով: Սույն հոդվածում նախանշվում են այն բովանդակային ուղղվածություններն ու թրենինգներին ներկայացվող այն պահանջները, որոնք կապահովեն տվյալ մեթոդի կիրառման արդյունավետությունը կրթական համակարգի տարբեր փուլերում:

**РЕЗЮМЕ**

**Основные содержательные направления применения тренингов  
на разных этапах образования  
Армине Алоян**

**Ключевые слова:** *система образования, дошкольное звено, младший школьный возраст, средняя школа, старшая школа, психологические проблемы, направления тренинга*

В статье говорится о том, что на каждом уровне образования, от дошкольного до старшей школы, целевые направления тренингов имеют различия, что обусловлено возрастными, психологическими и личностными различиями учащихся. В статье также описываются тенденции и требования к содержанию тренингов, нацеленные на обеспечение эффективности применения тренингов на различных этапах системы образования.

**SUMMARY**

**Main substantial directions of training applied to different  
stages of education system  
Armine Aloyan**

**Key words:** *education system, pre-school group, junior school group, secondary school, high school, psychological problems, training direction*

The article points to the fact, that training applied to different stages of education from pre-school group to high school are different. That is conditioned by differentiation based upon pupils' age and their psychological and personal peculiarities. The article also considers substantial directions and training demands that will assure the efficiency of this method on different stages of education.

**ԵՐԱԻԾԱԿԱՆ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ՈՒՂՂԱԾՈՒԹՅՈՒՆԸ\***

**Ռոզա Աղաջանյան**

Դաստիարակությունը միշտ էլ նշանակել է փոփոխություն: Եթե փոփոխությունների կարիքը չլիներ, ապա դաստիարակության կարիքն էլ չէր լինի:

L. U. Վիգոտսկի

**Բանալի բառեր՝** երգիծական, դաստիարակություն, պարբերական, հայկական, փոփոխություն, նպատակ, դիպուկ խոսք

Հայ պարբերականներն, այդ թվում նաև երգիծանքին նվիրվածները միշտ էլ նախատեսվել են ընթերցողների լայն շրջանակների համար: Երգիծանքին նվիրված հայ պարբերականները ծագել են բացահայտել հասարակական կյանքի ոլորտների թերությունները, երգիծական խոսք ու ծաղրանկարներ նվիրել դրանց նկարագրություններին ու վերացման ուղիներին: Կենդանի կապեր հաստատելով ընթերցողների լայն շրջանակների հետ պարբերականները ծագել են նրանց գործունեությունն ուղղել դեպի դրականը և բացասականը վերացնելուն: Դժվար չէ նկատել, որ երգիծանքին նվիրված հայ պարբերականների համար կարևոր խնդիր է համարվել ընթերցողների գիտակցությունում փոփոխություններ առաջ բերելը, որը բխում է դաստիարակության էությունից: Այդ հիմնահարցը լուծելուն նպաստելու նպատակով երգիծանքին նվիրված հայ պարբերականները հաղորդել են համակարգված երգիծական կծու ու դիպուկ, միաժամանակ արդարացի խոսք և բովանդակալից ծաղրանկարներ: Հրապարակված նյութերը բովանդակել են ընթերցողների հոգեբանական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու, ինքնադաստիարակությամբ զբաղվելու, բնավորության որոշակի գծեր արմատապես փոփոխելու, հիմնահարցերի վերաբերյալ նոր մտտեցումներ ցուցաբերելու պահանջներ, որոնք անխզելիորեն կապված են դաստիարակության խնդիրների ու նպատակների հետ:

Երգիծանքին նվիրված հայ պարբերականները հրապարակել են մտքեր, որոնք ունեն երգիծական բովանդակություններ.

- Ով որ գիտի, թե որն է բարին ու լավագույնը և սակայն գործում է հակառակը, նա մի չարագործ է:
- Փառքը փախչում է նրանցից, ովքեր աշխատում են այն ձեռք բերել ստոր միջոցներով:
- Ոչ միայն վատ բան անելն է մեղք, այլև վատ բան մտածելը:
- Միայն հարեցող մարդն է ճշմարտություն ասում: Ես չեմ սիրում ստությունը, դրա համար էլ միշտ խմում եմ:
- Ռեսուցիզնեթից մեկը սովորություն ուներ Գ տառի փոխարեն Ք տառն էր օգտագործում: Նա աշակերտներից մեկին ասում է.

Քիրոբ բեր (Գիրոբ բեր):  
Ես մի քիր եմ ունեցել, որն ամուսնացել գնացել է:

\* Հոդվածն ընդունվել 15.02.17  
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրմՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:  
360



**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՄԱՐՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

- Մեկն ասում է, որ ինքը գիտի, որ ինքը ոչինչ չի իմանում:  
Ես էլ այդ գիտեմ, պատասխանում է գրուցակիցը:
- Սպիտակը սև ընդունել՝ իրականությունը բացասական կողմերով ներկայացնել:
- Խավարը չպետք է հաղթի լույսին:
- Շողոքորթն անտեսում է ազնիվ ու վսեմ կյանքը:
- Չարություն բորբոքելը շատ վնասակար գործ է:
- Դաստիարակությունը փոփոխությունն է:
- Անհրաժեշտ է խուսափել ծիծաղի առարկա դառնալուց:
- Ընթերցանությունը թերությունը վերացնելու գործոն է:
- Կեղծավորությունը ստոր արվեստ է:
- Ստորությունը դժողք է:
- Ճշմարիտ ուղուց շեղվողներին պետք է խայթել որպես սուր:
- Լավ ապրելու համար պետք է հիշել անցյալը:
- Անցյալն անդարձ է, պետք է հոգալ ապագայի մասին:
- Չար մարդիք ունեն միայն մեկ գենը՝ կեղծել:
- Օրենքը, եթե օրենք չլիներ, ամեն օր չէր փոփոխվի:
- Չպետք է ձգտել մեծ գունարների, որ եղածն էլ չկորցնես:
- Եթե կաշառակեր ես, դիմակը քեզ չի օգնի:
- Ուսու՛մ ստացիր, տգետ մի՛ մնա:
- Ստորությունը դժողք է:

Երգիծանքին նվիրված պարբերականների էջերում որակ են կազմում նշված բնույթի բազում արտահայտություններ: Պարբերականների էջերում քիչ չեն ընթերցողների շնորհակալական և երգիծանքին նվիրված թղթակցությունները: Խմբագրությունները քիչ դեպքերում չէ, որ բավարարել են ընթերցողների պահանջները: Այսպես, օրինակ, «Կարկուտ[1]» պարբերականը, փոխարինելով «Հի-Հի-Հի[2]»-ին գրել է, որ ընդառաջելով ընթերցողներին պարբերականի ծավալը չորս էջից դարձնում ենք ութը, անփոփոխ թողնելով գինը:

Պետք է ընդգծել, որ նման դեպքերը եզակի չեն եղել: Քիչ չեն նաև դեպքերը, որ պարբերականները հրատարակել են ընթերցողների դիպուկ ու երգիծական խոսքերը, կազմակերպել են մրցույթներ, կատարել են պարզևատրություններ: Այս բոլորը վկայում են, որ երգիծական հայ պարբերականներն ունեցել են ընթերցողների լայն շրջանակներ: Պարզ է, որ ընթերցողները չէին կարող նաև ազդեցություն չկրեին պարբերականների նյութերից և չունենային դեպի դրականն ավելի ուղղվելու հնարավորություններ:

Երգիծանքին նվիրված պարբերականների էջերում որակ են կազմում շատ դրույթներ, որոնք ուղղված են դեպի ապագան, բարոյական խրատները, դեպի ընդօրինակման ենթակա որակները, կյանքն առաջադիմական ուղիով տանելուն, վատի նկատմամբ քննադատական մոտեցում ցուցաբերելուն, բարին վատից տարբերելուն, վատ որակներից հրաժարվելուն, մտածելուն, փոխադարձ օգնություն, լսելու հմտություն ձեռք բերելուն, երգիծական խոսքի իմաստն ընկալելուն, լավատես լինելուն, վատից հրաժարվելու կամք ունենալուն, շրջապատում ծիծաղի առարկա չդառնալուն, աշխատանքը սիրելուն, ընկերասեր լինելուն և նման շատ որակներ ունենալուն: Դժվար չէ նկատել, որ երգիծանքին նվիրված հայ պարբերականներն իրենց ուշադրությունից դուրս չեն թողել դաստիարակության հիմնահարցերը: Ոչ քիչ թվով երգիծական հայ պարբերականներ ընդգծել են թերություններն ընթերցանության միջոցով վերացնելուն նպաստելու անհրաժեշտությունը: Պարբերականներն ամենատարբեր առիթներ

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

որով են ընդգծել, որ ծաղրական խոսքը կառուցվում է, ծաղրանկարները հրատարակվում են, որ օգնեն ընթերցողներին խուսափելու նման պայմաններում գտնվելու հնարավորություններից: Մենք գտնում ենք, որ այս բոլորը դաստիարակչական գործոններ են և անհրաժեշտ է պնդել, որ երգիծանքին նվիրված հայ պարբերականների նպատակներն ու բովանդակությունները պատսվել են ընթերցողների գործունեությանը դրական ուղղություն տալու շուրջը և պետք է ընդգծել, որ դրանք հասել են որոշակի հաջողությունների, որոնց համար վկաներ են ընթերցողների վերաբերմունքը երգիծանքին նվիրված հայ պարբերականների նկատմամբ: Պարբերականների էջերում որակ են կազմում ընթերցողների շնորհակալական խոսքերը, թղթակցությունների նկատմամբ նրանց վերաբերմունքը:

Դաստիարակչական առումով երգիծական խոսքն ունեցել է մեկ մեծ առավելություն, այն կրել է ոչ թե ընդհանուր, այլ կոնկրետ ուղղություն և ընդօրինակելու համար էլ ունեցել է լայն հնարավորություններ: Մեր ընդհանուր եզրակացությունն մեկն է՝ երգիծական խոսքն ու հումորը դաստիարակության հզոր գործոններ են և դրանից ոչ թե պետք է վախենալ, այլ պետք է դրանք դարձնել կյանքի լուսատու ուղեցույցներ:

Երգիծանքին նվիրված հայ պարբերականների գործունեության դաստիարակչական ուղղվածության հիմնավորման ակնառու փաստեր պետք է համարել նրանցում հրատարակված ծաղրանկարների բովանդակությունները:

Երգիծանքին նվիրված հայ պարբերականների էջերում որակ են կազմում բարոյական գիտակցություն, վարքի ու զգացմունքներին նվիրված նյութերը, բարոյական խրատները և երգիծական խոսքը:

Պարբերականների էջերում քիչ չեն խոսվել համեստության, արդարության, ազնվության, ճշմարտության, անկեղծության, մաքուր խղճի, ուրիշների հետ բարեկամության, հայրենասիրության, տարբեր բնույթի չարիքների, առաքինությունների, համբերության, լսել իմանալու, անձնական աշխատանքի, պարապության և նման շատ ու շատ որակներ ունենալու նստին: Պարբերականները բավարար պայքար են ծավալել նաև բացասական որակներ ձևավորելու դեմ պայքարելու հիմնահարցին: Դրական է, որ պարբերականները տարբեր առթյուններով են ընդգծել, որ բնավորության բացասական գծերը մշակվում են կյանքի պայմաններում և դրանցից հրաժարվելը կամքի ու համառության առկայության դեպքում լիովին հաղթահարելի են: Պարբերականներն ամենատարբեր առիթներով են ընդգծել առաքինի գործեր ու արարքներ կատարելը վարժվելու արդյունք լինելու գաղափարը: Պարբերականների էջերում պատշաճ տեղ է հատկացվել դժվարություններ հաղթահարելու սովորություն ունենալուն և դրանցից չվախենալուն: Աշխատանքները բարելավելու հուսալի միջոցը հայ երգիծական պարբերականները համարել են նպատակային շփումը: Պարբերականներն ընդգծել են շատ կարևոր գաղափար և՛ ուրիշների հետ պետք է վարվել այնպես, ինչպես կցանկանաս, որ ուրիշները վարվեն քեզ հետ: Ընգծվել են, որ բարոյական նորմերը բնածին չեն, դաստիարակության ոլորտում ընտանիքների դերն ուշադրության արժանի են, հնազանդությունը պետք է ունենա սահմաններ, ստորությունը դժոխք է, օտարամոլությունը ոչ մի օգուտ չի բերում և նման դրույթների դերը:

Հիմնավորված պետք է համարել երգիծանքին նվիրված հայ պարբերականների զգալի թվի առկայությունը՝ պարբերականների ընդհանուր թվի շուրջ յոթ տոկոսը, ինչպես նաև այդ բնագավառում անգնահատելի ավանդ թողած մտավորականների մեծ բանակի գոյությունը: Չի կարելի անտեսել այդ պարբերականների գործունեության ընդհանուր ու վեհ նպատակը՝ ներգործել ընթերցողների վրա, դաստիարակչական առումով կատարել օգտակար ու մնայուն աշխատանք: Անհրաժեշտ է ընդգծել, որ երգիծանքին նվիրված

հայ պարբերականներն անմնացորդ նվիրվել են դաստիարակության գործընթացին և կատարել են մնայուն գործնություն: Մեր ծեռքի տակ եղած պարբերականների բովանդակությունները խիստ բավարար հիմքեր են տալիս, որ երգիծանքին նվիրված հայ պարբերականները հանդես են եկել որպես դաստիարակության գործոններ և այդ բնագավառում, անկասկած, թողել են մնայուն ավանդ՝ նպաստել են հայեցի դաստիարակության, հային հայ մնալու, ընթերցողներին դրական որակներով զինելու, թերություններն արմատախիլ անելու վեհ գաղափարների արմատավորմանը: Երգիծանքին նվիրված հայ պարբերականներն ունեցել են նաև ընդարձակ աշխարհագրություն, ընթերցողների լայն շրջանակ: Առկա է խմբագրությունների ու ընթերցողների կապերի տեսակներ՝ հարց ու պատասխաններ, մրցույթներ, թղթակցությունների ու կարծիքների հրապարակում և այլն:

Երգիծանքին նվիրված հայ պարբերականների գոյության, գործունեության, դրանց շուրջը համախմբված մտավորականների վերաբերյալ ուսումնասիրություն կատարելը հիմնավորված է և ունի գիտագործնական նշանակություն ու արժեք: Մեր գրադարաններում եղած այդ բնույթի պարբերականների նյութերը բավարար են, որ ծավորվի ընդհանուր պատկերացում դրանց գործունեության մասին:

«Աշխատանքի մոծակ[3]», «Աքլոր[4]», «Խարազան[5]», «Խիկար[6]», «Կատակ[7]», «Հի-Հի-Հի» և նման շատ երգիծական պարբերականներ իրենց նպատակների համար հատուկ նպատակներ չեն արձանագրել, բայց դրանց բովանդակությունների առանձին համարների առկայությունը վկայում է, որ դրանց գործունեությունը ծառայել է դաստիարակության վեհ գաղափարին: Փաստ է, որ դրանց երգիծական խոսքն ուղղված է հասարակական կյանքի խորթ բարքերն ուղղելուն և ընթերցողներին ճշմարիտ ուղի ցույց տալուն: Բարեբախտաբար այդպիսի պարբերականների թիվը շատ մեծ չէ: Գրադարաններում եղած առանձին համարների բովանդակությունները վկայում են մեր ենթադրության ճշմարիտ լինելու մասին: Այսպես, օրինակ, միթե քիչ բան է հուշում այն, որ «Փող Առավոտյան» պարբերականի տնօրեն-խմբագիրը եղել է հայ մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանը: Այդ պարբերականն անասկած զգալի տեղ է տվել խմբագրի երգիծական խոսքին: Նման փաստերը եզակի չեն:

Երգիծանքին նվիրված հայ պարբերականների մասին ընդհանուր պատերազումներ են տալիս նրանց անվանումները՝ անսամուս, ապտակ, ավել, հայելի, ծիծաղ, մեղա, սափրիչ և այլն: Պարբերականների ընդհանուր նպատակների մասին են խոսում դրանց առաջին տարիների առաջին համարների խմբագրականներում օգտագործված արտահայտությունները՝ «Խայթելու ենք, որպես սուր», «Անընդհատ տոգալու ենք», «Ատելու ենք ուղիղ ձանապարհից շեղումներ հրահրողներին», «Նպաստելու ենք անսամուսությունները գոլորշիացնելուն», «Հարվածելու ենք հայ ժողովրդի ներքին ու արտաքին թշնամիներին», «Նպաստելու ենք ապագայի ուղին լուսավոր դարձնելուն», Ծաղրելու ենք առաջընթացի համար խոչընդոտներ ստեղծողներին», «Սափրելու ենք ցեցերը» և այլն: Այսպիսի արտահայտությունները շատ ու շատ են և բոլորն էլ պտտվում են ընթերցողներին դաստիարակելու նպատակի շուրջը:

Երգիծանքին նվիրվել են մեծ թվով պարբերականներ, առաջին 150 տարիներին (1794-1944)[8]՝ հայ իրականության մեջ լույս տեսած ավելի քան երկու հազար պարբերականների շուրջ յոթ տոկոսի ձակատներին գրվել է երգիծական տերմինը: Ընդհանուր եզրակացությունը մեկն է՝ երգիծանքին նվիրված պարբերականների գործնությունը պտտվել է ընթերցողների դաստիարակությանը նպաստելու վեհ նպատակին և պետք է արձանագրել, որ պարբերականները պատվով են ծառայել իրենց վեհ նպատակին:

Երգիծանքին նվիրված հայ պարբերականներն ունեցել են ընդարձակ աշխարհագ-

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

րություն, իրենց շուրջը համախմբված մտավորականների, ինչպես նաև ընթերցողների մեծ բանակ: Այդ բնույթի պարբերականներն ընդգծված տեղ են հատկացրել երգիծական խոսքին, բարոյական խրատներին, գործնական երաշխավորություններին, նպատակային համեմատություններին, ծաղրանկարներին, բովանդակային վկայակոչումներին, զվարճություններին և այլն: Երգիծանքին նվիրված հայ պարբերականների գործնության խոսուն վկաներ պետք է համարել դրանց անվանումների առկայությունը՝ ցախավել, ավել, զուռնա, հայելի, աստակ, խարտոց, մեղու, մոծակ, սափրիչ և այլն: Այդ բնույթի պարբերականների գործնության համար ուղեցույց է հանդիսացել արդարությունն ու դժվարություններից չվախենալը:

Երգիծական պարբերականները կատարել են դաստիարակության դպրոց լինելու դեր, ընդգծել են կարևոր գաղափար՝ առանց ընթերցողների ակտիվ օժանդակության երգիծական պարբերականների հաջողությունները կլինեին չնչին: Արդար երգիծական խոսքն այն պաշտոնն է, որն ընթերցողներին առաջնորդում է դեպի բարին ու գեղեցիկը, ճշմարտությունն ու ազատ խոսելու գաղափարը: Այն սերմանում է ազատ կարծիք արտահայտելու գաղափարը (մեծ Կոպերնիկոսն ու շատ շատերը չէին հավերժանա, եթե չունենային ազատ կարծիք): Սկզբունք ու ազատ կարծիք չունեցողները չեն կարող խոսել ժողովրդի սրտից: Պարբերականների համար պատգամ է եղել ուշագրավ դրույթ՝ իրենց հրապարակումները պատգամներ չեն, այլ մտածելու ու ուղի ընտրելու փարոսներ են:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Կարկուտ», Վան, 1910-1911թթ.
2. «Հի-Հի-Հի», Կ. Պոլիս 1910.
3. «Աշխատանքի մոծակ», Սալոնիկ, 1926թ.
4. «Աքլոր», Լիոն, 1936-1937թթ.
5. «Խարազան», Փարիզ, 1920.
6. «Խիկար», Կ. Պոլիս, Ալեքսանդրիա, 1884-1888թթ.
7. «Կատակ», Վան, 1897.
8. Առաժին հայ պարբերականը հրապարակվել է 1794:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### Երգիծական հայ պարբերականների գործունեության դաստիարակչական ուղղվածությունը Ռոզա Աղաջանյան

Երգիծանքին նվիրված հայ պարբերականների գործնությունը դաստիարակության հզոր գործոն է, և այդ գործնության ուսումնասիրությունն առավել ամբողջական է դարձնում հայ մանկավարժական մտքի պատմությունը: Սույն հոդվածում փորձ է արվել ներկայացնելու երգիծական հայ պարբերականների գործունեության դաստիարակչական ուղղվածությունը:

Դաստիարակության բնագավառում երգիծական պարբերականների դրական փորձի ոչ քիչ թվով դրույթներ ցայսօր չեն կորցրել իրենց դերը, նշանակությունն ու թարմությունը և կարող են հաջողությամբ գտնել նոր գործնական կիրառություններ, որը բացահայտում է պատմականության սկզբունքին դիմելու նոր հնարավորություններ:

**РЕЗЮМЕ**

**Направленность на воспитание деятельности армянских  
сатирических периодических изданий  
Роза Агаджанян**

**Ключевые слова:** *сатирический, воспитание, периодический, изменение, армянский, точная речь, цель*

Деятельность армянских периодических изданий, посвященных сатире – это мощный инструмент воспитания, и изучение этой деятельности делает историю армянской педагогической мысли более целостной.

В этой статье сделана попытка представить воспитательное направление деятельности армянских сатирических периодических изданий.

Многие тезисы из положительных опытов в области воспитания сатирических периодических изданий до сих пор не потеряли свою роль, значение и свежесть и могут с успехом найти новые практические применения, что открывает новые возможности обращения к принципу историчности.

**SUMMARY**

**Satirical Armenian newspapers educational orientation  
Roza Aghadjanyan**

**Keywords:** *satirical, educational, newspapers, Armenian, alteration, purpose, felicitous speech*

The activities of Armenian periodical publications dedicated to satire are educational powerful factor that makes the most complete study of the history of pedagogical thought. In this article we attempt to present the educational directions of Armenian satirical periodical publications activities.

A considerable number of positive provisions of satirical periodical publications in the field of educational have not lost their role, significance and freshness and can find new practical applications that reveal new opportunities to apply the principle of historicism.

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ\***

**Արպատ Ավանեայան, Գրիշա Հարությունյան, Անահիդա Գևորգյան**

**Բանալի բառեր՝** նորանկախ հանրապետություն, ազգային դպրոց, անցումնային շրջան, միջին և ավագ դպրոց, պարտադիր հիմնական և միջնակարգ կրթություն, դպրոցաշինություն, ուսման որակ, արդյունավետություն:

Անկախություն ձեռք բերելուց հետո Արցախը(1991թ. սեպտեմբերի 2-ին) և Հայաստանը(1991թ. սեպտեմբերի 21-ին), նախորդ տասնամյակների համեմատ, հասան նշանակալից հաջողությունների տնտեսության, գիտության, մշակույթի ու կրթության բնագավառներում: Նորանկախ հայկական երկու հանրապետությունները հնարավորություն ստացան միասնաբար լուծելու իրենց առջև ծառայած սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային և կրթական հիմնախնդիրները: Նախկին՝ ԽՍՀՄ - կողմից Հայաստանի նկատմամբ և, հատկապես, Ադրբեջանի իշխանությունների կողմից՝ Ղարաբաղի հայության նկատմամբ վարչափրամայական մեթոդներով կառավարվող տնտեսությունից և ամբողջովին քաղաքականացված կրթական համակարգից անցումն ազատականի, նորանկախ Հայաստանի հանրապետությունում և նորաստեղծ ԼՂ հանրապետությունում արձատապես փոխվեց ոչ միայն սոցիալ-տնտեսական հարաբերությունները, քաղաքական կյանքը, հանրապետության կառավարման համակարգը, այլև հրատապ խնդիր դարձավ միասնական կրթական համակարգի ստեղծումն ու զարգացումը, ինչպես նաև՝ կրթության միասնական քաղաքականության իրականացումը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի դաստիարակումն է[1]:

Ըստ «Կրթության մասին» օրենքի պահանջների՝ պետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր նորուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը[2]:

Վերլուծությունները ցույց տվեցին, որ անկախություն ձեռք բերելուց հետո, առաջին հինգ տարիները(1991-1995թթ.) Հայաստանում և նորաստեղծ Արցախի հանրապետությունում բոլոր կրթական հաստատությունների համար ամենադժվար տարիներն էին. առաջացել էին բավականին լուրջ դժվարություններ: Ստեղծված անբարենպաստ պայմաններում Հայաստանի և Արցախի կրթական հաստատությունները, իշխանությունների հոգածությամբ, կարողացան նշված ժամանակահատվածում պահպանել իրենց գոյությունը, ստեղծել անցումնային շրջանին բնորոշ կրթական կանոնակարգեր, նպաստել կրթական համակարգի օրենսդրական հենքի ստեղծմանը, ինչպես նաև վերականգնել նախկինում գործող միջկրթական հաստատությունների կապերն ու ստեղծել նոր, ժամանակին համահունչ կապեր: 90-ական թվականների սկզբին Հայաստանի կրթական համակարգի վերափոխման վերջին փուլը միտված է Հայաստանում, ինչպես նաև Արցախում հանրակրթության նոր որակի ձևավորմանը և համակարգի մի-

\* Հոդվածն ընդունվել է 03.02.2017:  
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ջազգային ինտեգրմանը՝ ինքնավարության հիմքի վրա: Նորանկախ երկու հանրապետությունների կրթական հաստատություններում փոխվեց հունանիտար, ազգային, բնապահպանական առարկաների դասավանդման ուղղվածությունը, որը միտված էր բազմակողմանի զարգացած առաջադեմ ու հայրենանվեր մասնագետի կրթության ու դաստիարակության, ազգային մտածելակերպով ու նկարագրով օժտված քաղաքացու ձևավորմանը: Առաջադրված ծրագրային հիմնադրույթների գլխավոր լեյտմոտիվն էր թղթափել կրթական համակարգում առկա տասնամյակների լճացումը (հատկապես՝ ԼՂ ինքնավար մարզի կրթական համակարգում), և ձգտել կրթական նոր համակարգի զարգացմանն ու միջազգային չափորոշիչների մերձեցմանը: Խնդիր դրվեց բուհերը վերածել համալսարանների ոչ միայն ձևով ու կառուցվածքով, այլև բովանդակությամբ ու էությամբ, իսկ միջնակարգ մասնագիտական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում արմատապես վերափոխել թե՛ կառուցվածքը և թե՛ կրթության բովանդակությունը, ինչը հնարավորություն է տալիս կազմակերպելու կրթադաստիարակչական գործընթացը՝ առանց սահմանափակելու ուսուցչի ստեղծագործական ազատ գործունեությունը:

Հարկ է նշել նաև, որ պատերազմական պայմաններում և հետպատերազմյան ժամանակաշրջանում(1991-1998թթ.) կրթության բնագավառում պետական քաղաքականությունը միտված էր կրթության որոշակի բարեփոխումների իրականացմանը՝ ավելի վաղ դպրոցական շենքերի վերանորոգում, վերաբնակեցված շրջաններում(Քաշաթաղում, Շահումյանում) նոր դպրոցների բացում, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում(դպրոցները ապահովել գույքով, սարքավորումներով): Հանրակրթական բնագավառում նշանակալից դեր ուեցավ 1996թ. ՀՀ և ԼՂՀ կառավարությունների կողմից պետական հանրակրթական հաստատությունների օրինակելի կանոնադրության հաստատումը, որի համաձայն՝ դպրոցին իրական հնարավորություն տրվեց բացելու տարբերակված, հոսքային դասարաններ և իրականացնելու կադրային համալրման աշխատանքներ: Բացի դրանից՝ 1997թ. ՀՀ և ԼՂՀ կառավարությունների ընդունած նոր որոշմամբ որոշ փոփոխություններ կատարվեց դպրոցական օրինակելի կանոնադրության մեջ և ամբողջությամբ վերանայվեց հանրակրթական հաստատությունների կառավարման և ֆինանսավորման վերաբերյալ բաժինները: Խորհուրդների միջոցով ներմուծվեց կառավարման նոր ձև: Եվ այսպես՝ 1998թ. հոկտեմբերին, ՀՀ կառավարության որոշմամբ, վերը հիշատակված նույն թվականի նոյեմբերի 10-ի որոշմամբ, հանրակրթական դպրոցները հանձնվեցին համայնքների կառավարմանը: Սակայն անցած մի քանի ամիսները վկայեցին, որ նման որոշումը սխալ է և հազիվ թե այն կարողանա իրեն արդարացնել:

Ի դեպ, նշենք, որ, 1998թ. որոշման համաձայն, դպրոցների հաստիքացուցակում կրճատվել է արտադասարանական աշխատանքների գծով կազմակերպչի հաստիքը, որի հետևանքով արտադասարանական միջոցառումների քանակը խիստ կրճատվել է և որը նույնպես բացասական էր անդրադառնում սովորողների դաստիարակության վրա:

Ինչպես տեսնում ենք հանրապետության կրթական համակարգը փոփոխությունների լուրջ կարիք ուներ: Հատկապես անհետաձգելի հարց էր դպրոցները որակյալ կադրերով ապահովելը: Այդ հարցը հանգամանորեն քննարկվեց ԼՂՀ կառավարության 1999թ. դեկտեմբերի 10-ի ընդլայնված նիստում, որին մասնակցում էին հանրապետության կրթական հաստատությունների, շրջվարչակազմերի ղեկավարները, համայնքապետները, դպրոցների տնօրենները և այլ անձինք: Ելույթ ունեցողները նշեցին, որ

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

հապճեպությունն ու սխալ որոշումները կարող են անշտկելի հետևանքներ թողնել՝ կաթվածահար անելով կրթական հաստատությունները, խարխլելով անգամ պետության հիմքերը: Մասնավանդ որ նշված ժամանակաշրջանում գյուղական համայնքները դեռևս չէր կարելի համարել ինքնուրույն կայացած, և գյուղապետարանները չունեին համապատասխան մասնագետներ, ովքեր գիտեն դպրոցը, կարող են օժանդակել և վերահսկել նրա գործունեությունը: Բուռն քննարկումներից հետո կառավարությունը ընդունեց որոշում (թիվ 146), որի համաձայն՝ դպրոցները հանվեցին համայնքային սեփականության գույքի ցանկից և հանձնվեցին շրջանային կրթության բաժինների ենթակայությանը, վերականգնելով նախկին(1991-1997թթ.) կարգավիճակը, միաժամանակ առանձնացվեց նաև միջին և ավագ դպրոցներում սխալ ձևով կոմպլեկտավորված դասարանները[3]:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, 1999թ-ից սկսած՝ ԼՂ Հանրապետության կրթական համակարգում շոշափելի նվաճումներ ունեցանք: Արդեն հանրապետությունում գործում էր կրթական կայուն համակարգ՝ սկսած նախադպրոցական օղակից մինչև բարձրագույն բուհական և հետբուհական մասնագիտական կրթություն: Յուրաքանչյուր աստիճանում իրականացվում էր պետական քաղաքականություն, որն ուղղված էր նրան, որ կրթության համակարգն ունենա զարգացման այն աստիճանը, ինչն անհրաժեշտ է մեր հանրապետության զարգացման համար:

Ըստ պաշտոնական տվյալների՝ «Հանուն միասնական կրթության համակարգի պահպանման, զարգացման ու միասնական քաղաքականության իրականացման» հիմնահարցի շուրջ քննարկումներ եղան 1999թ. նոյեմբերի 30-ին երկու հայկական հանրապետությունների ԿԳ նախարարությունների համատեղ խորհրդակցությունում, որը տեղի ունեցավ ԼՂՀ կառավարության նիստերի դահլիճում, որին մասնակցում էին հանրապետության ղեկավարները, հանրակրթության ոլորտի պատասխանատուները, Հայաստանի հանրապետության ԿԳ նախարարության, կրթության ազգային ինստիտուտի պատվիրակությունները՝ նախարար Էդուարդ Ղազարյանի գլխավորությամբ: Խորհրդակցության նպատակն էր կանխել կրթության համակարգի անկումը(1991-1998թթ.), հնարավորինս պահպանել նրա լավագույն ավանդույթներն ու ձեռքբերումները և միաժամանակ նախադրյալներ ստեղծել նրա հետագա զարգացումն ապահովելու համար: Խորհրդակցությունում քննարկվեց նաև դպրոցաշինության հարցը, որը պետության քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է: Հիրավի, հանրապետության հիմնախնդիրներից մեկը դպրոցաշինությունն է, որը գտնվում է իշխանությունների ուշադրության կենտրոնում և այդ ուղղությամբ 2000թ-ից հանրապետության տարբեր համայնքներում լայնածավալ շինարարական աշխատանքներ են ընթանում: Ըստ նախարարության պաշտոնական տվյալների(1994-2003թթ.)՝ վերանորոգվել է 50-ից ավելի դպրոց, կառուցվել 22 դպրոցական շենք:

Այդ ժամանակահատվածում երկու հանրապետությունների ԿԳ նախարարությունների կողմից մշակվեցին և հաստատվեցին մի շարք կարևորագույն պետական փաստաթղթեր՝ «Կրթության մասին» օրենքը, «Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը և այլն:

Հանրակրթական ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը նպատակաուղղված է սովորողների պարտադիր հիմնական կրթության և միջնակարգ կրթության ապահովմանը, որը պետք է ընթանա ոլորտի բարեփոխումների աստիճանական իրականացման ճանապարհով: Այս միտումով էլ 2003թ. ապրիլի 4-ին Երևանում ՀՀ կրթական բարեփոխումների կենտրոնում (այժմ՝ կրթության ազգային ինստի-



տուտ), «Մեկ միասնական դաշտ՝ մեկ միասնական քաղաքականություն» թեմայով կազմակերպվեց սեմինար, որին հրավիրված էր նաև Արցախի պատվիրակությունը՝ ԼՂՀ մշակույթի և սպորտի նախարար Արմեն Սարգսյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին փոխնախարար Ս.Ասրյանը, նախարարության գլխավոր մասնագետներ, շրջանային կրթության բաժինների վարիչներ, դպրոցների տնօրեններ և ՀՀ կրթական բարեփոխումների Արցախի մասնաճյուղի տնօրեն Բելա Բաբայանը[4]:

Սեմինարին զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը: Նա մատնանշեց, որ Արցախի կրթական համակարգը ամբողջությամբ ներառված է Հայաստանի կրթական համակարգի մեջ և իրկանացվում է նոր կրթական համակարգի միասնական քաղաքականություն: Հետևաբար, ՀՀ և Արցախի կրթական համակարգի պատասխանատուների համատեղ մասնակցությամբ սեմինարի հրավիրումը պայմանավորված է ոլորտներին առնչվող հարցերում փորձի փոխանակման, ընդհանուր չափանիշների ձևավորման հետ, միասնական քաղաքականության և մեկ միասնական կրթական դաշտում աշխատելու հրամայականով: Նախարարը նաև շեշտեց, որ, համաձայն լինելով, որ ՀՀ և ԼՂՀ երկու ինքնուրույն պետական կազմավորումներ են, այնուամենայնիվ կրթական համակարգում դա «ընդունելի չէ» այն պատճառով, որ մեկ ընդհանուր դաշտում, մեկ ընդհանուր համակարգի մեջ են և այն բոլոր փոփոխությունները, այն տրամաբանությունը, որով պատկերացվում է ՀՀ կրթական համակարգի զարգացումը, այդ նույն տրամաբանությունը պետք է լինի նաև ԼՂՀ-ում: Նախարարը ամենայն պատասխանատվությամբ հայտարարեց, որ իրենք ևս շատ բան ունեն սովորելու Արցախից: Հատկապես հանրակրթությունում, նրա խորին համոզմամբ, դաստիարակության բլոկը շատ ավելի լավ է դրված Արցախում, ինչպես նաև ուսուցիչների սերնդափոխությունը որոշակիորեն պահպանվել է և հանրակրթությունը որոշակիորեն ցնցումների չի ենթարկվել[5]:

Սեմինարում Հայաստանի և Արցախի կրթական համակարգերի հիմնախնդիրների շուրջ մի շարք ելույթներից հետո Լ. Մկրտչյանը ներկայացրեց կրթության քաղաքականության իրականացման ծրագիրը՝ (հանրակրթական, միջնակարգ մասնագիտական, նախադպրոցական, արհեստագործական, բարձրագույն և այլ հաստատությունների) ըստ ժամանակացույցի՝ հաշվեգրված ընդհուպ մինչև 2003-2010թթ., այսինքն՝ համաձայն ծրագրի դրույթների, ՀՀ-ում և ԼՂՀ-ում վերջնականապես ձևավորվում է մեկ միասնական կրթական քաղաքականություն՝ առաջիկա 7-8 տարիների համար:

Ներկայացնելով միասնական կրթական քաղաքականության ծրագրի նշանակությունը՝ ԼՂՀ ԿՄՍ նախարար Ա. Սարգսյանը իր ելույթում մատնանշեց, որ յուրաքանչյուր տարվա վերջում հնարավոր է ունենալ այդ ծրագրի արժևորումը և նախանշել, որ տարում ինչ է սպասվում: Եվ այնպիսի ամուր իրավական և ֆինանսական դաշտ է ստեղծվել, որ, անկախ որևէ փոփոխությունից ու վարչական լուծումներից, այս ծրագիրը պետք է շարունակվի, որովհետև այն դառնում է ռազմավարական լուրջ քայլ Հայաստանի և Արցախի կրթական համակարգը որակական մի վիճակից մի այլ վիճակի դուրս բերելու համար:

Ա. Սարգսյանը նաև ընդգծեց, որ, ընդունված միասնական քաղաքականության ծրագրի պահանջներին համապատասխան, երկու հանրապետությունների կրթության նախարարություններում պետք է աշխատանքները տարվեն **երեք բլոկով՝ հանրակրթություն, միջին մասնագիտական կրթություն և բարձրագույն կրթություն**, որտեղ արդեն առկա է ամբողջական ռազմավարությունը և մնում է այն վերածել գործնական ծրագրի: Ուրեմն՝ եթե Հայաստանը ինտեգրվում է Եվրոպական կրթական տարածքին, պետք է ունենա Եվրոպական չափորոշիչներին համարժեք կրթական համակարգ: Իսկ

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

քանի որ Արցախը Հայաստանի անբաժան հատվածն է և իրականացնում է միևնույն կրթական քաղաքականությունը, ապա նույնպես պետք է ունենա այդ չափորոշիչներին համարժեք կրթական համակարգ: Ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում նոր կրթական համակարգի ձևավորումը՝ Եվրոպական չափորոշիչներին համապատասխան, ենթադրում է, ըստ էության, բովանդակային շատ լուրջ փոփոխություններ հանրակրթության ոլորտում:

Ներկայացնելով Արցախի կրթական քաղաքականությունը՝ նախարար Ա.Սարգսյանը կանգ առավ մի քանի հիմնախնդիրների վրա.

**Առաջին՝** ուսուցչության վերապատրաստում մի քանի փուլով: Վերապատրաստում մասնագիտական, մեթոդիկայի, համակարգիչների, ինֆորմացիոն տեխնոլոգիաների իմաստով: Այս իմաստով լուրջ քայլ է արվել Արցախում բարեփոխումների կենտրոնի(ներկայիս՝ կրթության ազգային ինստիտուտի) մասնաձյուղ բացելու առումով, այն պետք է դառնա մի օղակ երկու նախարարությունների միջև ծրագրային ու տեսչական աշխատանքներ իրականացնելու և դրանք համահայկական կրթական դաշտի վրա կիրառելու առումով:

**Երկրորդ՝** առարկայական չափորոշիչների արմատական վերափոխում այս նոր ծավալի պայմաններում, որը ենթադրում է ազգային պետական չափորոշիչների ըստ էության ձևավորում:

**Երրորդ՝** մեթոդական գրականության հրատարակումը Արցախում: Այդ գործընթացը դեռևս պատշաճ մակարդակի վրա չի գտնվում, սակայն Արցախում կա մանկավարժական միտք, որը ՀՀ-ի մանկավարժական մտքի մեջ համալիր չի արտացոլվում: Հիմնական խնդիրներից մեկն էլ դրանց միաձուլումն է:

**Չորրորդ՝** միասնական առարկայական ծրագրերի և առարկայական չափորոշիչների, հենքային ուսումնական պլանների ստեղծումն է՝ բարեփոխվող դպրոցի պահանջներին համապատասխան:

**Հինգերորդ՝** Հայաստանի և Արցախի կրթական համակարգում դեռևս գիտելիքների գնահատման միասնական համակարգ չկա:

Անդրադառնալով այդ հարցին՝ ՀՀ ԿԳ նախարարն ընդգծեց, որ անգամ 20 միավորանոց համակարգը կամայական է գործում: Դպրոցներում 5 միավորանոց համակարգը ավարտական փուլում առանց որևէ հիմքի դառնում է 20: Գնահատման չափորոշիչների մեջ չկա հստակություն: Խնդիր է դրվել, որ Հայաստանում և Արցախում շտկել այդ թերությունները, գնահատման համակարգը նույն տրամաբանությամբ ու նույն չափորոշիչներով պիտի լինի կրտսեր դպրոցից սկսած մինչև հետբուհական կրթությունը: Եվ անընդհատ իր մեջ պետք է ներառի նորանոր պահանջներ, որոնք կրթության որակի խորացմանը զուգընթաց ավելանում են:

Վերը ասվածից գալիս ենք այն համոզման, որ անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանի և Արցախի կրթական համակարգում իրականացվում է միասնական քաղաքականություն և երկու հանրապետություններում էլ առկա են վերոնշյալ հիմնախնդիրները:

Կրթությունը Հայաստանում և Արցախում դիտվում է որպես ազգային անվտանգության բաղադրիչ, որպես երկրի զարգացման ու հզորացման կարևոր գործոն ու երաշխիք: Ելնելով վերը շարադրվածից՝ այժմ դիտարկենք երկու հանրապետություններում կրթության միասնական քաղաքականության իրականացման ուղղությունները.

1. Հայաստանում և Արցախում հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական ունակությունների զարգացումն է, հայրենասեր քաղաքացու դաստիարակումը, որը կտիրապետի մտային գործոն-

- ղությունների տարբեր տեսակների ու կունենա ակտիվ կենսահիմք.
2. Հայաստանում և Արցախում հանրակրթական հաստատությունները պետք է ունենան քաղաքականություն և համակարգված հայեցակարգեր՝ իրենց միասնական պլանների, ծրագրերի և որակավորումների համապատասխանության ապահովման համար պետք է ստանձնեն պարտավորություն որակի մշակույթի զարգացման վերաբերյալ, պետք է իրականացնեն որակի շարունակական բարձրացման ռազմավարություն:
  3. Կրթության քաղաքականության գլխավոր նպատակն է ապահովել մշտական համապատասխանություն՝ թողարկվող շրջանավարտների գիտական երաշխավորությունների տեխնոլոգիաների, մշակված մեթոդիկաների որակի և պետության, հասարակության պահանջների մեջ: Որակը պետք է դառնա այն կարևորագույն բնութագիրը, որը ներազդում է յուրաքանչյուր կրթօջախի ամբողջ գործունեության վրա, իսկ վերջինս ուղղված է ի բարրօրություն սովորողի, ծնողի, գործատուի, պետության և հասարակության:
  4. Հայաստանում և Արցախում հանրակրթական դպրոցներում բոլոր սովորողները, անկախ կրթության կազմակերպման ծևից, ստանում են պարտադիր հենքային կրթություն: Դպրոց ընդունված երեխաների ճնշող մեծամասնությունը այժմ կստանա հիմնական և ավագ դպրոցի կրթություն:
  5. Հանրակրթական դպրոցի բարեփոխումների պահանջներին համահունչ՝ կամրակնդվի կրտսեր և միջին դպրոցը և, արդյունքում, սովորողների մեծ մասը, կցուցաբերի միջինից բարձր առաջադիմություն, և ամուր հիմքեր կստեղծվի հետագա ուսումնառությունը 12-ամյա ավագ դպրոցում և բուհում սովորելու համար:
  6. Անկախ պետության քաղաքական կարգավիճակից, ԼՂՀ ԿԳՍ նախարարության մշակած ռազմավարական ծրագրի պահանջներին համապատասխան բավարար ստավոր ընդունակություններով օժտված դպրոցականներին հնարավորություն է ընձեռում պարբերաբար մասնակից դառնալու շրջանային, հանրապետական(Արցախի և Հայաստանի) միջազգային մրցույթ-օլիմպիադաներին ու ստուգատեսներին: Դա առավելապես վերաբերում է բնագիտական առարկաներին, նաև մարզական միջոցառումներին, որոնց ուղղությամբ դարաբաղցի դպրոցականները, մասնավորապես խորհրդային իշխանության տարիներին, բարձր արդյունքներ էին ցուցաբերում:
  7. Արցախի կրթական հաստատություններում օգտագործվում է մանկավարժական գիտության ներկայիս նվաճումները, ինչպես նաև՝ տեղի և Հայաստանի Հանրապետության լավագույն ուսուցիչների փորձը:
  8. Հանրակրթական դպրոցի ուսուցիչները հնարավորություն են ունենում բարձրացնելու իրենց որակավորումը: Հայաստանի կրթության ազգային ինստիտուտի համապատասխան մասնագետները և Արցախի բուհերի լավագույն դասախոսները, փորձառու վաստակաշատ մանկավարժները դասընթացներ, սեմինարներ են կազմակերպում ՀՀ ԿԱԻ-ի Ստեփանակերտի մասնաճյուղում: Նմանատիպ գործընթացների իրականացմամբ կրթական հաստատություններում աշխատող ուսուցիչների ճնշող մեծամասնությունը կարողանում է օգտվել համակարգիչներից ու ժամանակակից տեխնիկական ուսումնական այլ միջոցներից:
  9. Հանրապետությունում՝ դպրոց-հասարակություն-ընտանիք կապի ու դրանով պայմանավորված համագործակցության ապահովումն ու ամրապնդումը: Ուսուցման արդյունավետությունը հնարավոր է ապահովել, եթե գործընկերային ու համագործակցային հարաբերություններ կան՝ դպրոցի , ընտանիքի, սովորողներ-

րի, ուսուցիչների և ծնողների միջև: Սա հրամայական պահանջ է նաև ժամանակակից կրթական գործընթացի մարդասիրական կողմն ապահովելու համար և, անկասկած, նպաստում է սովորողների ընդունակությունների ավելի խոր բացահայտմանն ու դրսևորմանը և այլն:

Ինչպես նշել ենք, հանրակրթության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը նպատակաուղղված է սովորողների պարտադիր հիմնական կրթության և միջնակարգ կրթության ապահովմանը, որը պետք է ընթանա ոլորտի բարեփոխումների աստիճանական իրականացմամբ: Այս առումով կարևորվում է հանրապետությունում անցումը 12-ամյա կրթության, որի ապահովման ուղղությամբ իրականացվում է առարկայական նոր չափորոշիչներին համապատասխան ծրագրերի ու դասագրքերի ներդրում, որոնք լիարժեք են (հիարկե՝ երբեմն լինում են նաև թերություններ) և ընդունվում են մասնագետների կողմից: Այդ գործընթացում առավել կարևոր հիմնախնդիր է ուսման որակի և այդպիսով պետության բարձրացումը, որն ավելի բարդ և տևական աշխատանք է, ինչին նպատակաուղղված է կրթության համակարգի կառավարման մարմինների, դպրոցների մանկավարժական կոլեկտիվների գործունեությունը:

Այդ հիմնախնդրի շուրջ քննարկումներ եղան 2008թ. ապրիլի 21-23-ին՝ ԼՂԿառավարության նիստերի դահլիճում կայացած ընդլայնված խորհրդակցությունում, որին մենակցում էին ՀՀ ԿԳ նախարարության պատվիրակությունը՝ նախարար Լևոն Մկրտչյանի գլխավորությամբ, բուհերի ռեկտորները, ԼՂԿ ԿԳ նախարարության պատասխանատուները, շրջանային կրթության բաժինների վարիչները, գլխավոր մասնագետները, տեսուչները, դպրոցների տնօրենները և այլ անձինք: Հանդիպումը, որը նախածեղնել էր ԼՂԿ կառավարությունը, նպատակաուղղված էր կրթական համակարգի առկա վիճակի, հետագա ծրագրերի քննարկմանը և կրթական այնպիսի քաղաքականության մշակման ուղղությամբ առաջարկությունների ներկայացմանը, որը կապահովի երկրի անվտանգությունն ու տնտեսական զարգացումը:

Քննարկումները հիմնականում ծավալվեցին երեք հարցերի ուղղությամբ: **Առաջինը**, բնականաբար, ավագ դպրոցի հարցն էր: Համակարգում արդեն ընթանում էին մեծ փոփոխություններ, շրջանառվում էր ավագ դպրոցի գաղափարը: Ինչպես պետք է իրագործվեն դրանք՝ հաշվի առնելով Արցախի բնակավայրերի աշխարհագրությունը: **Երկրորդը**՝ միասնական քննությունները. որքանով են դրանք հիմք հանդիսանալու ոչ պետական բուհերի ընդունելության համար: **Երրորդը**՝ և հիմնական հարցը վերաբերում էր բարձրագույն ուսումնական համակարգին: Բովանդակային առումով քննարկումներն ու առաջարկությունները ընթացան երկու հանրապետությունների միասնական կրթական համակարգի համագործակցության և իրականացվող բարեփոխումների ծրագրերի շուրջ:

ԼՂԿ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 2010-2011 ուսումնական տարվա մարտի 18-ին ԼՂԿ ԿԳ նախարարության ընդլայնված խորհրդակցությունում վերստին քննարկել է երկու հանրապետությունների նախարարների միասնական կրթական քաղաքականության իրականացման հիմնախնդիրը: Խորհրդակցությանը մասնակցում էր նաև ՀՀ ԿԳ նախարարության պատվիրակությունը: Հանդիպման հիմնական նպատակը միասնական կրթական համակարգում համագործակցային բարեփոխումների իրականացումն է, հիմնախնդիրը՝ անցումը 12-ամյա ուսուցման համակարգին (հետագայում՝ պարտադիր), ավագ դպրոցի կայացումը:

ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանի խոսքով՝ Հայաստանի ու Արցախի հանրապետության կրթական ոլորտների խնդիրները համահունչ են, մոտեցումները՝ նույնը, ընդհանուր քաղաքականությունը՝ համադրելի, որովհետև ԼՂԿ-ի և ՀՀ-ի միջև ստեղծված

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

հարաբերությունների շրջանակներում ձևավորվել է ընդհանուր հայկական կրթական տարածք: Երկու հանրապետությունների կրթական համակարգերի պատասխանատուների ջանքերն ուղղված են միևնույն նպատակին՝ կրթական բարեփոխումների իրականացմանը՝ 12-ամյա կրթության անցմանը, ուսումնական նոր ծրագրերի, պլանների, դասագրքերի պատրաստմանը, դասընթացների կազմակերպմանը, ինչպես նաև՝ ավագ դպրոցների տնօրենների վերապատրաստմանը, հավաստագրերի հանձնման քննությունների կազմակերպմանը: Օրինակ՝ ՀՀ ԿԳ նախարարությունում կազմակերպվել են 1600 տնօրենների վերապատրաստման հավաստագրերի հանձնման քննություններ, որից 400-ը ստացել են անբավարար գնահատական և չեն վերընտրվել իրենց պաշտոնում: Նման վերապատրաստման դասընթացներ և քննություններ պետք է կազմակերպվի նաև Արցախում: Իհարկե, վերապատրաստման դասընթացների կազմակերպման ու քննությունների անցկացման նպատակը այդ տնօրենների չվերընտրվելը չէր, այլ կրթական ցենզր բարձրացնելը: Ակնհայտ է, որ գիտելիքով զինված տնօրենն իրականում դպրոցի հաջողության գրավականն է:

ԼՂՀ ԿԳ նախարար Վ. Խաչատրյանն իր գեկուցման մեջ մատնանշեց. «Որպես առավել կարևորող հիմնախնդիր է համարվում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը, որի ապահովումը բարդ և տևական գործընթաց է, ինչին նպատակաուղղված է կրթության պետական կառավարման մարմինների և համակարգի մանկավարժական կոլեկտիվների գործունեությունը: Այս համատեքստում ավագ դպրոցների համակարգի ստեղծումն անհրաժեշտ նախապայման էր: Հայաստանում առաջին ավագ դպրոցները սկսեցին գործել 2008թ-ից, իսկ 2009թ-ից անցան լայնածավալ ավագ դպրոցների ցանցի ստեղծման: Նույնը կատարվեց նաև ԼՂՀ-ում: Այս բարեփոխումները Հայաստանում և Արցախում սկսվեցին տնտեսական համեմատաբար վերելքի պայմաններում: 2010-2011 ուս.տարում ԼՂՀ-ում ստեղծվեցին 3 ավագ դպրոցներ(Ստեփանակերտում՝ 2, Մարտակերտում՝ 1) և ավագ դպրոցի 5 հոսքային ուսուցմամբ միջնակարգ դպրոցներ: 2012թ-ին նախատեսվել էր ընդլայնել ավագ դպրոցների ցանցը՝ ենթաշրջանային ավագ դպրոցների ստեղծմամբ, սակայն որոշակի դժվարությունների և թերահավատության պատճառով այն չիրականացավ և առաջիկայում քննարկման կնեթկայացվեն այլ մոտեցումներ: Նախարարության կողմից ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ՝ ավագ դպրոցների լիարժեք գործունեության համար, նրանց են տրամադրվել նոր գույք՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, մասնակիորեն՝ աշխարհագրության կաբինետների սարքավորումներ և նյութեր ու այլ դիտողական պարագաներ, դասագրքեր ու մեթոդական ձեռնարկներ, ստեղծվել են ժամանակակից համակարգչային-տեղեկատվական կաբինետներ: Վերապատրաստվել են այդ դպրոցներում դասավանդող ուսուցիչները, դպրոցի տնօրեններն ու փոխտնօրենները»[6]:

Ի մի բերելով վերոշարադրյալ հիմնահարցերի քննական վերլուծությունները՝ կարևորում ենք նաև նշել, որ կրթական միասնական քաղաքականության իրականացման անհրաժեշտ միջոց է նաև երկու հանրապետությունների կրթական հաստատություններում մանկավարժական գիտության ներկայիս նվաճումների, առաջավոր փորձի օգտագործումը, ինչպես նաև ուսուցման կազմակերպման ձևերի արմատական վերակառուցումը, սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ պատշաճ մակարդակով աշխատանք տանելը, սովորողներին միջազգային մրցույթ-օլիմպիադաներին ու ստուգատեսներին մասնակից դարձնելը ոլորտում ընդգրկելով լավագույն մասնագետներին:

Այսպիսով՝ ելնելով վերը շարադրվածից՝ կարող ենք հստակ ձևակերպել, որ քննարկվող ժամանակաշրջանում ՀՀ և Արցախի հանրապետությունում, 90-ական

## **ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

թվականներից սկսած, կրթության բնագավառում իրականացվում է հստակ մշակված միասնական քաղաքականություն, որի նպատակը կրթական հաստատություններում կրթության որակի ապահովումն ու բարելավումն է, միասնական կրթական դաշտում կրթական ծրագրերը ձկուն դարձնելը ժամանակի հետ համընթաց այլ երկրներում ձանաչելի դարձնելը և, վերջապես, այն համապատասխանեցնելը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայի պահանջներին:

\* Հետազոտությունը իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ N SCS «Արցախի կրթական համակարգը 5-21-րդ դարերում» գիտական թեմայի շրջանակներում:

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. «Կրթության մասին» ՀՀ օրենք, 14 ապրիլի 1999, հոդված 4, կետ 2: «Կրթության մասին» ԼՂՀ օրենք, 15 ապրիլի, 2000, հոդված 4, կետ 2:
2. Նույն տեղում, հոդված 4, կետ 3:
3. ԼՂՀ կառավարության որոշում, 1999. թիվ 146:
4. Այդ մասին տես ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնաթերթ «Լուսարար» թերթի 2003. ապրիլի 9, թիվ 40:
5. «Լուսարար», 2008, թիվ 8, 9: Քննարկումներ կրթական հիմնախնդիրների շուրջ:
6. «Լուսարար», 2008, թիվ 9, 10:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

#### **Կրթական միասնական քաղաքականությունը Հայաստանի և Արցախի Հանրապետություններում Արպատ Ավանեսյան, Գրիշա Հարությունյան, Անաիդա Գևորգյան**

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է: Այդ նպատակին հասնելու համար անցած դարի 20-ական թվականներին Հայաստանի և Արցախի կրթական համակարգի վերափոխումը միտված էր հանրակրթության նոր որակի ձևավորմանը և ինքնավարության հենքի վրա միջազգային կրթահամակարգին ինտեգրմանը: Հայաստանի և Արցախի կրթության ոլորտի պատասխանատուները, սկսած 90-ական թվականներից, կրթության բնագավառում իրականացնում են հստակ մշակված միասնական քաղաքականություն, որի նպատակը կրթության որակի բարելավումն ու ապահովումն է, միասնական կրթական դաշտում կրթական ծրագրերը այլ երկրներում ձանաչելի դարձնելը և այն համապատասխանեցնելը ներքին և արտաքին շուկայի պահանջներին:

РЕЗЮМЕ

Единая политика образования в Республике Армения  
и Республике Арцах  
Арпат Аванесян, Гриша Арутюнян, Анаида Геворкян

**Ключевые слова:** независимая республика, национальная школа, переходный период, средняя и высшая школа, обязательное начальное и среднее образование, школостроение, качество образования, эффективность.

Основой государственной политики в сфере образования является национальная школа, главная цель которой заключается в формировании всесторонне развитой, профессионально-ориентированной личности с государственным мышлением и воспитанной в духе патриотизма и гуманизма. Для достижения этой цели в 20-х годах прошлого века реформа системы образования была направлена на формирование нового качества общего образования и интеграции в международную образовательную систему на основе автономии. Начиная с 90-х годов, чиновники, ответственные за сферу образования в Армении и Арцахе, осуществляют четко выработанную единую политику, цель которой заключается в обеспечении и улучшении качества образования, представлении наших образовательных программ в едином образовательном поле в других странах и приведении их в соответствие с требованиями внутреннего и внешнего рынков.

SUMMARY

Joint educational policy in the Republic of Armenia  
and Republic of Artsakh  
Arpat Avanesyan, Grisha Harutyunyan, Anaida Gevorkyan

**Keywords:** independent republic, national school, transitional period, secondary and high school, compulsory primary and secondary education, school building, quality of education, efficiency.

National school is the basis of the state policy in the sphere of education. Its main goal is to breed a person who is comprehensively developed, educated in the spirit of patriotism, state and humanity and is professionally oriented. To meet this need the reforms in the sphere of education in Armenia and Artsakh during the 1920s were aimed at the formation of a new quality of public education and integration to the international education system on the basis of autonomy. Since 1990s officials responsible for education in Armenia and Artsakh have been implementing a clearly elaborated policy aimed at improving and securing the quality of education, making educational programs recognizable in foreign countries and satisfying internal and external market demands.

«ՏԱՐԱԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ\*

Գայանե Առաքելյան

**Բանալի բառեր**<sup>1</sup> տարածական մտածողություն, պատկերային մտածողություն, մտային ձևափոխություն, տարածական պատկեր, պատկերների ստեղծում, պատկերներով գործառում:

Գիտական գրականության ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում որոշակի պարզաբանումներ տալու «տարածական մտածողություն» հասկացության բնորոշման մասին որոշ գիտնականների մոտեցումների շուրջ: Այսպես՝ հիմնահարցը դիտարկելիս, հիմնականում հենվել ենք այդ բնագավառում Ի. Ս. Յակիմանսկայի [1] և այդ ուղղությամբ աշխատող այլ գիտնականների հետազոտությունների արդյունքների վրա:

Ինչպես նշում է Ի. Ս. Յակիմանսկայան տարածական մտածողությունը «բարդ գործընթաց է, որում ներկայացված են իրական աշխարհի անմիջական զգայական ընկալման արդյունքները, նրանց հասկացության մշակումը և առաջադրանքի պահանջների ազդեցությամբ այդ արդյունքների մտային ձևափոխությունը, անհատի սուբյեկտիվ տեղակայումը նախորդ փորձի առանձնահատկությունները, մասնագիտական հետաքրքրությունները և մտադրությունները» [2]: Այսպիսով՝ տարածական մտածողությունը մտային գործունեության տեսակ է, որը գործնական և տեսական տարբեր խնդիրների լուծման գործընթացում ապահովում է տարածական պատկերների ստեղծումը և դրանցով գործառումը:

Մեր կարծիքով՝ պատկերներով գործառումը հատկապես դրսևորվում է դպրոցական տարիքում, երբ տեղի է ունենում հոգեբանական ակտիվ զարգացում: Տարատեսակ տեսողական հիմքերի կիրառությունը, հաշվարկման համակարգի կամայական փոփոխությունների վրա հիմնված պատկերների ստեղծումը և նրանց ձևափոխությունը ապահովում է աշակերտների կողմից մտավոր գործունեության համապատասխան միջոցների տիրապետմանը:

Հարկ է նշել նաև, որ տարածական մտածողությունը այնպիսի գործունեություն է, որը ձևավորվում և զարգանում է տարբեր տեսակի գործունեությունում (ինչպես գործնական, այնպես էլ տեսական): Նրա զարգացման համար մեծ նշանակություն ունեն գործունեության արդյունավետ ձևերը՝ կառուցողական, նկարագրական (գրաֆիկական), ստեղծագործական, գիտատեխնիկական: Օրինակ՝ մի շարք կառուցողատեխնիկական առաջադրանքների լուծումը, ժամանակակից տեխնիկայի ստեղծումը և շահագործումը սերտորեն կապված են ընթերցանության և տարբեր տեխնիկական փաստաթղթերի օգտագործման անհրաժեշտության հետ, որոնք արտահայտված են դիտողական-գրաֆիկական ձևերով: Հաշվարկագրաֆիկական սխեմաների ընթերցումը ենթադրում է պատկերի կառուցում, որում ընդհանրացված և միաձուլված են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝

1. ամբողջ կառուցվածքի առանձնահատկությունները,

\* Հոդվածն ընդունվել է 10.12.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների և բնագիտական առարկաների ամբիոնը:



2. նրա առանձին մասերի ֆունկցիոնալ նշանակումները,
3. նրանց տարածական դասավորվածությունը և այլն [3]:

Գործունեության այդպիսի արդյունավետ տեսակների տիրապետման ընթացքում ձևավորվում է տարածության մեջ պատկերացնելու գործողությունների արդյունքը նկարի, գծագրի վրա պատկերելու, մտովի պատկերներ ստեղծելու, դրանք ձևափոխելու և արդեն ստեղծվածին համապատասխան նոր պատկերներ ստեղծելու կարողություն:

Ինչպես նկատում են վերոնշյալ գիտնականները, իր առավել զարգացած ձևերում տարածական մտածողությունն իրենից ներկայացնում է պատկերներով գործառում, որոնց բովանդակությունը տարածական օբյեկտների հատկությունների ու հարաբերությունների ձևափոխությունն է՝ նրանց ձևերի, մեծությունների, մասերի փոխադարձ դասավորվածությունը: Տարածական հատկություններն ու հարաբերություններն անբաժանելի են կոնկրետ առարկաներից և իրերից, դրանք կրողներից, բայց ավելի հստակ դրսևորվում են երկրաչափական օբյեկտներում, որոնք իրական օբյեկտների վերացարկումն են: Այդ պատճառով երկրաչափական օբյեկտները ծառայում են որպես հիմնական նյութ, որի հիման վրա տեղի է ունենում տարածական պատկերների ստեղծումը և դրանցով գործառումը: Այսպիսով, որպես պատկերներ ծնող օբյեկտ, կարող են հանդես գալ ինչպես առարկան, այնպես էլ նրա պայմանական-նշանային փոխարինողները, տարբեր գրաֆիկական մոդելներ:

Ավագ դպրոցներում կատարած մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ իրական տարածություն պատկերումից նրա պայմանական-գրաֆիկական փոխարինիչի համակարգին անցումը կապված է նույնանման միջոցների ընկալման ձևավորման հետ և ուղղված է պատկերների կամայականորեն ստեղծմանը և նրանցով գործառմանը: Այդ անցումը ապահովում է ուսուցման գործընթացում սովորողների կողմից հատուկ հասկացողական ապարատի յուրացումը, տարբեր հաշվարկային համակարգերի, պատկերացման եղանակների օգտագործումը:

Տարածական մտածողությունը հանդես է գալիս իր իրական (հոգեբանական) բովանդակությամբ որպես տարածական պատկերների տարատեսակ պայմանականությունների, ակներևության, ընդհանրացման, վերակողմավորման գործունեություն: Ուսումնական առաջադրանքների լուծման գործընթացում դիտարկումները ցույց են տվել, որ երբեմն անհրաժեշտ է լինում օգտագործել տարբեր տիպի դիտողական հիմքեր: Ըմբռնման ճանապարհով ստացված պատկերները պետք է գոյություն ունենան սովորողի մտային գործունեությունում ոչ թե հերթականությամբ, այլ ամփոփված մի միասնական համակարգի մեջ՝ ապահովելով առաջադրանքի լուծման ընթացքում նրանց տրամաբանական ձևափոխությունները: Այդ պատկերների միջև «անհամապատասխանություն» չպետք է լինի, քանի որ դա կհանգեցնի միայն գիտելիքների ձևական յուրացմանը:

Տարածական պատկերները, որոնցով գործառում է մտածողությունը, պետք է լինեն դինամիկ, շարժվող, օպերատիվ (գործառնական): Այս հատկությունները բխում են պատկերի ստեղծման պայմանից: Դրանք, մասնավորապես, պայմանավորված են եռաչափ պատկերից երկչափին և հակառակը անցման կարևորությամբ, իրական օբյեկտներից գրաֆիկական պատկերների վերարտադրմամբ և այլն: Իրական վիճակագրական պատկերների հիման վրա, ինչպիսին են, օրինակ, տարբեր սխեմաներ, անհրաժեշտ է առաջադրանքի լուծման ժամանակ ստեղծել գործող օբյեկտների և գործընթացների տարբեր դինամիկական պատկերներ: Որպես պատկերներ ծնող օբյեկտներ հաճախ հանդես են գալիս ոչ թե առանձին առարկաները, այլ նրանց ավելի ընդհանուր (կառու-

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

ցողական, ֆունկցիոնալ) հասկությունները, տարբեր տարածական բնութագրիչները՝ ձևը, մեծությունը, տարածության մեջ դիրքը, ամբողջի և մասերի հարաբերությունը:

Պատկերների ստեղծման և դրանցով գործառնման կարողությունը (այսինքն՝ տարածական մտածողությունը) մարդու ինտելեկտի տարբերակիչ առանձնահատկությունն է: Այսպիսով՝ մտածողությունը մտքի աշխատանք է, որն իրականացվում է պատկերների հերթագայության տեսքով, առաջադրանքի պայմանին համապատասխան ակտուալիզացիան, պատկերների մշտապես ձևափոխություն է նորը ստանալով [4]:

Ինչպես ցույց են տալիս բազմաթիվ հոգեբանական հետազոտությունները, տարածական մտածողությունը զարգանում է ոչ հավասարաչափ, նրա մակարդակը որոշվում է սովորողների տարիքային և անհատական տարբերություններով (Ե. Ն. Կաբաևովա-Մելլեր [5], Բ. Ֆ. Լոնով [6], Ի. Ս. Յակիմանսկայա):

Այդ խմբի գիտնականների հետազոտությունների հիման վրա, Ի. Ս. Յակիմանսկայան եզրակացնում է, որ տարածական մտածողությունը ձևավորվում է առաջադրանքի լուծման գործընթացում՝ օգտագործելով տարբեր տիպի դիտողական նյութեր, որոնք պահանջում են՝

1. ընկալվող դիտողական հիմքի մտային ձևափոխություններ,
2. հիշողության միջոցով ցանկացած պատկերի վերարտադրում (առանց դիտողական հիմքի վրա հենվելու) և այն հիշողության մեջ ամրագրում,
3. տրված կամ կամայականորեն ընտրված հատկանիշների անհրաժեշտությանը համապատասխան պատկերների ձևափոխություն:

Հարկ է նշել, որ նոր պատկերի ձևավորումը կարող է տեղի ունենալ առանց դիտողական հիմքի, ընկալվող օբյեկտի բացակայության պայմաններում, այսինքն՝ ըստ հիշողության, ըստ նախորդ սուբյեկտիվ փորձի տվյալների: Այդ մտային վերափոխությունների իրականացումը տեղի է ունենում նախորդ տպավորությունների ակտուալիզացիայի ժամանակ և նրանց ակտիվ մտային ձևափոխությունների ժամանակ, որի արդյունքում ձևավորվում է նոր պատկեր, որը տարբեր է սկզբնականից և առաջացել է դիտողական նյութի հիման վրա:

Կոնկրետ օբյեկտի միասնական պատկերը, որն առաջացել է նրա անմիջական ընկալման հիման վրա, արդեն ընդհանրացված է, այսինքն՝ այն անդրադարձնում է դիտորդի տարբեր տպավորությունները՝ կախված օբյեկտի տարածական դիրքից: Իսկ պատկերը, որն ստեղծվել է պայմանական-գրաֆիկական պատկերի հիման վրա, արդեն պատկեր-սխեմա է, որն իր բովանդակության մեջ վերարտադրում է առավել ընդհանուր տարածական հատկություններ և հարաբերություններ, որոնք հատուկ են ոչ թե մի օբյեկտի, այլ միատեսակ օբյեկտների ամբողջ դասին: Պատկեր-սխեման առաջացնում է (ծնում է) ավելի դիտողական և կոնկրետ պատկերների շարք:

Հիմնահարցի վելուծությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ տարածական մտածողությունը գործառնում է նաև տարածական պատկերների միասնական օբյեկտներով և ընդհանրացված պատկեր-սխեմաներով:

Տարածական պատկերների ընդհանրացումը, պայմանականությունը, դինամիկան, նրանց առաջացման ցանկացած մակարդակում ընդմիջարկվում է տեսական գիտելիքների օգտագործմամբ, հասկացական ապարատի կիրառմամբ, ըմբռնման և պատկերացման հատուկ հնարքների տիրապետմամբ:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ պատկերը առաջանում է երկու սերտորեն կապված որոշիչների՝ դիտողական հիմքի և գործունեության պահանջի ներգործությամբ, որոնք հիմնավորված են առաջադրանքի կոնկրետ պայմաններով:

Պատկերների ստեղծման ժամանակ հատուկ նշանակություն ունի տարածության

մեջ կողմնորոշվելու համակարգի ընտրությունը: Որպես հաշվարկի համակարգ հաճախ ընտրում են դիտարկողի նախնական դիրքը: Այդ դեպքում տարածական պատկերների ստեղծումը կրում է դինամիկական բնույթ, քանի որ օբյեկտների մտային տեղափոխումը տարածության մեջ կարող է փոխվել դիտարկողի դիրքի նկատմամբ:

Հոգեբանական անվտանգության հարցի կարևորությունն ու իրատապությունը սկսվեց գիտակցվել միայն վերջին տասնամյակներում: Անձի և ընդհանրապես հասարակության մեջ հոգեբանական անվտանգության զգացումն ապահովող և լարվածությունը թուլացնող լավագույն տարբերակներից մեկն ադապտացիան է: Ադապտացվել նշանակում է հարմարվել, իսկ հարմարված անձը ունենում է տագնապայմանության ցածր և սթրեսակայունության բարձր մակարդակներ: Ադապտացումը ժամանակակից կյանքի թելադրած պայմաններին, առօրյա կենցաղային խնդիրներին, մասնագիտական դժվարություններին, աշխատանքային ռեժիմին և կենսական նշանակության մի շարք այլ ոլորտներին համաքայլ ընթանալն է՝ հասարակության ներկայացրած պահանջների բավարարմամբ և չափանմուշային համարվող խմբերի սպասումների արդարացմամբ: Եթե անձի սոցիալական պատասխանատվությունը բարձր մակարդակի է, և նա ունի զարգացած գեր-ես «սուպեր էգո», անձնապես հասունացած է և ադապտացված, իսկ ադապտացված մարդը հոգեպես ավելի կայուն է ու անկոտորուն և հոգեմանական առումով ավելի անխոցելի է:

Հոգեբանական անվտանգությունը հոգեկանի ապահովությունն է, անձնային ամբողջականության զգացման, հոգեկան առողջության և հոգևոր կառույցի պաշտպանության ապահովմամբ [1]:

\* Հոդվածն ընդունվել է 26.01.2017:  
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրհՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:  
410

Դիտարկելով հոգեբանական անվտանգություն հայեցակարգը Ս. Կ. Ռոշինը և Վ. Ա. Սոսնինը վերլուծեցին անվտանգության հայեցակարգի բովանդակության սահմանումը տարբեր երկրների բացատրական բառարանների հիման վրա: Ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուների ակադեմիական բառարաններն ուսումնասիրելու գործընթացում պարզվել է, որ ազգային գիտակցության մեջ «անվտանգություն» հասկացությունը կապված է ոչ այնքան սպառնալիքի բացակայության, ինչքան առանձին անհատների հույզերի և զգացմունքների հետ: Օրինակ՝ Չէմբերսի բառարանում «անվտանգություն» հայեցակարգը վեր է լուծվում որպես անվտանգություն ապահովող վիճակ, հույզ և միջոց: Հայեցակարգը կապված է «տազնապայության և մտահոգվածության» վիճակների բացակայության և «վստահության ու կայունության» վիճակների հետ [2]: Ֆրանսիական «Լյարուս» և Անգլիական «Օքսֆորդական» բառարաններում նույնպես մեկնաբանվում է «անվտանգություն» հայեցակարգը, այսինքն ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի ապավինել կարողանալը, հուսալիություն և վստահություն: Այս ամենը վկայում է այն մասին, որ մշակութային տարբեր նորմեր կրող մարդիկ նույն ձևով են պատկերացնում «անվտանգություն» հասկացությունը: Կատարած փորձերի արդյունքների վերլուծության հիման վրա, հեղինակները (Ս.Կ.Ռոշինը և Վ.Ա.Սոսնինը) ձևակերպել են հոգեբանական անվտանգության սահմանումը, որպես հանրային գիտակցության մի պայման, որի դեպքում ողջ հասարակությունը և յուրաքանչյուր անհատ ներկա կյանքի որակը որպես աղեկվատ և հուսալի են ընկալում [3], քանի որ հենց այդ հուսալիությունն է ապահովում անձի ժամանակի պահանջներն ու գործողությունները և երաշխավորում ապագայի կայունությունը:

Ս.Կ.Սուգուլովը նշում է. «...անվտանգությունը հիմնականում կարելի է որակել որպես նշանների մի համակարգ, որը բնութագրում է անվտանգության մշտական իրավիճակը, երբ անձը պաշտպանված է սպառնալիքներից ու վտանգներից և որոնց ազդեցությունը կարող է խիստ բացասաբար անդրադարձնալ նրա կառուցվածքային և ֆունկցիոնալ կառույցի, ամբողջականության զգացողության վրա՝ մինչև նրա լրիվ ոչնչացումը» [4]:

Մուգուլովը կարևորում է «անվտանգության» հայեցակարգում սոցիալական և նյութական բաղադրիչները՝ դիտելով դրանք երեք տարբեր կողմերով. անվտանգություն-նպատակ, անվտանգություն-նորմա, անվտանգություն-իրավիճակ:

Եթե անվտանգությունը դիտարկենք որպես սոցիալական նորմ՝անվտանգություն-նորմա համատեքստում, ապա հստակ կարող ենք ասել, որ այն սոցիալական արժեք է ներկայացնում, որը վաղուց է ինտեգրված անհատական և ազգային գիտակցության մեջ: Անվտանգության սոցիալական կարգավիճակը հնարավոր է դարձնում անվտանգության քանակական գնահատականի փաստացի մակարդակը՝ արդեն իսկ մշակված որակական չափանիշների հիման վրա, որոնք էլ սահմանում են անվտանգության մշակած պարամետրերի հիմնական ընդունելի սահմանները [5]:

Հիմնվելով տեղեկատվական աղբյուրներից ստացած տվյալների վրա՝ կարող ենք եզրակացնել, որ անվտանգությունը որպես գիտական կատեգորիա մեկնաբանվում է որպես.

- օբյեկտի որոշակի վիճակ, որն անբաժան է նրանից իր ողջ կյանքի ընթացքում,
- գոյություն ունեցող իրավիճակային և մշտական անվտանգության վիճակ,
- օբյեկտի շահերի անվտանգության ապահովման մակարդակ,
- վտանգը կանխելու և հաղթահարելու մեթոդների ու միջոցների բավարար մակարդակի առկայություն,
- օբյեկտի կայունության որակական երաշխիք,

- օբյեկտի, հասարակության զարգացման ու աճի նպաստավոր պայմանների ստեղծում:

Ի.Ա.Բանան համարում է, որ անվտանգություն հասկացությունն իր մեջ ներառում է նաև «...անձի կարողությունների իրականացում, հայացք դեպի կենսական դժվարություններ, փորձություններ, նրա կարևորությունն ու նշանակալիությունը հատկանշող միջոցների ամբողջություն» [6], քանի որ ինքնաիրացումը համարվում է որպես մարդու կարողությունների ու անձնային պոտենցիալի իրացման գործընթաց: Սրանից հետևում է, որ հոգեբանական անվտանգությունը ապահովվում է նաև ինքնաիրացման գործընթացում:

Հոգեբանական անվտանգության հետ կապված ցանկացած խնդիր կարող է լուրջ ազդեցություն ունենալ մարդու կենսագործունեության վրա, սահմանափակել նրա լայնածավալ հնարավորությունները, ստեղծել բազմապիսի խնդիրներ ու խոչընդոտել նրա գործողություններին: Վերոնշյալը ունի ոչ միայն արտաքին չափորոշիչներով պայմանավորված վտանգ, այլև ԲՆՀ-ի (բարձրագույն նյարդային համակարգ) և հոգեկանի քայքայման կոնստրուկտիվ պայմաններ է ստեղծում: Ներքին տագնապային վիճակը ծնում է լարվածություն, չմտածված գործողություններ, քաոս, նույնիսկ խուճապ ու փախուստի ցանկություն, ինչին մենք ականատես ենք եղել ապրիլի 1-ից լույս 2-ի զիջերը /չհիմնավորված փախուստը՝ Ղարաբաղից-Երևան/ ու 2-6-ն ընկած ժամանակահատվածում որոշ մարդկանց անկազմակերպ վարքը: Բարեբախտաբար այն մասսայական բնույթ չի կրել:

Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում անվտանգությունը դիտվեց ոչ միայն զուտ անձնային խնդիր և բազային պահանջմունք, այլև ազգային անվտանգության ապահովման, ռազմավարական նշանակության օրակարգային հարց: Ազգային ուժերի մոբիլիզացիան, համայն հայության միասնությունն ու ոգու համալրումը բերեցին նրան, որ մենք հաղթանակ ունեցանք ոչ միայն ռազմի դաշտում, այլև թիկունքում: Անձի հոգեբանական անվտանգությունը ներառում է ոչ միայն հոգեկանի բովանդակության կայունությունը, այլև սոցիալական միջավայրի և հասարակության հետ հարաբերություններում անձի կայունությունը: Այս առումով անձի հոգեբանական անվտանգությունը պայմանավորում են մի շարք կարևոր գործոններ, որոնցից են չափանմուշային խումբը, սոցիալական միջավայրն ու նրա ունեցած ազդեցությունը, տեղեկատվության աիռելի հոսքը (ՁԼՄ-ները) որն ինքնին սթրեսածին է և օրգանիզմի ներքին պաշարները: Ինչ վերաբերում է վերջին պայմանին, ապա միայն ապրիլյան իրադարձություններից որոշ ժամանակ անց կարող ենք ասել, որ ամիսների ընթացքում կուտակած սթրեսներն արտահայտվեցին հիվանդությունների կրկնակի աճի, վաղաժամ ծննդաբերությունների, կեսարյանների աճի, մանկական ֆոբիաների ու կակազությունների աճի տեսքով:

Մի շարք հեղինակներ հոգեբանական անվտանգության շրջանակներում դիտարկում են սոցիալական անվտանգության, աշխատանքի անվտանգության, տեղեկատվական անվտանգության հոգեբանությունը, ինչպես նաև անվտանգության ինքնաապահովման, կորպորատիվ անվտանգության, արտակարգ իրավիճակների և ահաբեկչության հոգեբանությունը [7]: Անտառակույս, այս հասկացությունները սերտ փոխկապակցված են հոգեբանական անվտանգություն հասկացության հետ: Հոգեբանական անվտանգությունն ու պաշտպանությունը հրատապ հարցեր են և դրանց ինտեգրացիան կնպաստի ընդհանուր կենսամակարդակի բարձրացման և հոգեբանական առողջության ամրապնդմանն ու պահպանմանը:

Ցայսօր որպես հոգեբանական անվտանգություն ապահովող հիմնական բաղադրիչ առանձնացվել են այն հիմնականները, որոնք ունեցել են մեծ կշիռ և առաջնահերթ

դասակարգում /ռանգավորում/ [8]: Ներքին բաղադրիչներից ուսումնասիրվել են հուզական լարվածության, տոնուսի և սթրեսադիմացկունության գործոնները:

«Անձի հոգեբանական անվտանգությունը գնահատող» սանդղակում «ընտանիք» բաղադրիչի առաջնահերթ ընտրությունը միանշանակ առնչվում է հիմնական պահանջ-մունքների բավարարման, ջերմության, ապահովության զգացողությունների առկայության և ընտանեկան մթնոլորտում ձևավորված փոխադարձ վստահության հետ [9]:

Կարող ենք համարել, որ անձի հոգեբանական անվտանգության գլխավոր գործոնների հետ համատեղ փոխկապակցվածությունները բնութագրվում և ընդհանրացվում են բարեկեցիկ կյանքի իմաստավորմամբ, որը դիտարկում ենք որպես ապահով կեցություն՝ բարեկեցություն: Կենսագործունեության այսպիսի պայմաններում ձևավորվող ապահովության զգացողությունը նպաստում է կյանքի հանդեպ դրական վերաբերմունքի դրսևորմանը, իրատեսական գնահատմանը [8, էջ 99]:

Ընդհանրացնելով գործոնային վերլուծության արդյունքները՝ կարող ենք եզրահանգել, որ անձի հոգեբանական անվտանգությունն ապահովող բաղադրիչների նշանակալիությունը պայմանավորվում է սոցիալական միջավայրով, անձի ակտիվությամբ և կյանքի հանդեպ ունեցած պահանջներով և որ ամենաէականն է, այն իմաստավորվում է գործունեության մեջ (ուսումնական, աշխատանքային, մասնագիտական) կախված այն բանից, թե որքանով են դրանք կարևորվում գործունեության տվյալ ձևում, անձնային և միջանձնային հարաբերությունների տվյալ ենթատեքստում [10]:

Հոգեբանական անվտանգության ապահովման ու պահպանման համատեքստում անհրաժեշտ է դիտարկել նաև «կյանքի որակ» հասկացությունն ու դրա ունեցած ազդեցությունն անձի վրա: Ընդհանրապես, անձի համար կյանքի որակյալ լինելը կարող է դրսևորվել նրա սոցիալական միջավայրին համապատասխանության չափով, թե որքանով է այն բավարարում կյանքում ապահովություն ունենալը: Այս է պատճառը, որ «կյանքի որակը» նույնացվում է կյանքից բավարարվածության և պայմանների բարենպաստության զգացողության հետ [11]: Եվ հենց այս պարագան էլ հանդիսանում է հոգեբանական անվտանգության գրավականներից մեկը:

Ռ.Մ.Շամիրոնովը նշում է, որ սուբյեկտիվ բարեկեցությունը կազմված է մի քանի բաղադրիչներից. նյութական համալրման եղանակներ, անձնական եւ հասարակական ինքնորոշման, անհատական բարեկեցության, ֆիզիկական եւ հոգեբանական առողջության, պրոֆեսիոնալ ինքնորոշման եւ աճի: Անձի սուբյեկտիվ բարեկեցության բաղադրիչները՝ համաձայն իր հոգեբանական բովանդակության, շատ հեղինակների կողմից համարվում են, կյանքի սուբյեկտիվ որակի բաղադրիչներ [12]:

Կարևոր է նաև նշել Ս.Մադդիին, ով հոգեբանության գիտական ապպարատ ներմուծված «դիմադրողականություն» հայեցակարգը, որը բնորոշվում է որպես անձի ինտեգրացիոն նկարագիր՝ կյանքի պատասխանատու դժվարությունները հաջողությամբ հաղթահարելու համար [13]: Դիմադրողականությունն ու ձկունությունը կարելի է դիտարկել նաև որպես սեփական աճի անբարենպաստ հանգամանքների փոխակերպում, որը ինքնակառավարման ու ինքնավերահսկման ավելի արդյունավետ հիմք է ստեղծում:

Լ.Ա.Ալեքսանդրովան անդրադառնում է դիմադրողականության բաղադրիչներին, որոնցում կարևորում է ոչ միայն անձնական ռեսուրսները հաղթահարելու կարողությունը, այլև իմաստի զգացումը, ինչը կանխորոշում է կենսադիմադրողականության և ընդհանրապես, մարդկային կյանքի վեկտորը, ինչպես նաև մարդասիրական էթիկան և որը սահմանում է իմաստի ընտրության չափանիշները, դրան հասնելու ճանապարհը և կենսական խնդիրների լուծումը [14]: Քանի որ անձի հոգեբանական անվտանգության

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ուսումնասիրումը նախ և առաջ կապված է մարդու պահանջմունքների բավարարման և կյանքի իմաստավորման հետ, ուստի այն պետք է դիտարկել որպես մարդու կյանքի ռազմավարության առաջնային դրդապատճառ:

Էկզիստենցիալ հոգեբանության ներկայացուցիչները բազմիցս շեշտում ու ընդգծում են իմաստի կարևորությունն ու առկայության անհրաժեշտությունը կյանքի յուրաքանչյուր ասպեկտներում: Եվ ընդհանրապես, հոգեբանական անվտանգության ապահովման ու մանավանդ, պահպանման համար, շատ կարևոր ու անբաժան բաղադրիչ է հանդիսանում իմաստը, իմաստալից կյանքն ու գործողությունները, որոնք էլ իրենց հերթին մոտիվացվածության բարձր ցուցանիշներ են ապահովում անձի համար կարևոր ասպեկտներում: Մոտիվացվածության բարձր աստիճանը, կենսական տոնուսը, բարձր արժեքները և կյանքը գնահատելու մշտական թարմության զգացողությունը, ապրելու, պայքարելու ձգտումը ստիպում են անձին մոբիլիզացնել սեփական ուժերն ու ռեսուրսները, հանուն որևէ նպատակի:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հոգեբանական անվտանգությանն ու պատրաստվածությանը, հատկապես արտակարգ իրավիճակների պայմաններում: Ժամանակակից մարդը քիչ թե շատ պատրաստ է այնպիսի իրավիճակների, սակայն հոգեբանական ֆոնը էպես կարևոր է անձի անվտանգության խնդրի լուծման գործում: Առօրյա կյանքի սոցիալական շեշտադրումներն ակնառու են, ուստի հոգեբանական անվտանգության հիմնախնդրի սոցիալ-հոգեբանական կոնտեքստի ուսումնասիրումը պետք է մշտակա ուսումնասիրման և վերլուծության նյութ հանդիսանա:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Александрова Л.А. О составляющих жизнестойкости личности как основе ее психологической безопасности в современном мире // Известия Таганрогского государственного радиотехнического университета. 2005. Т. 51. № 7. стр. 1.
2. Рошин С.К., Соснин В.А. Психологическая безопасность: новый подход к безопасности человека, общества и государства//Российский монитор. 1995. № 6; Общая теория безопасности (актуальные методологические и социально-политические проблемы). М., 1994.
3. Նույն տեղում:
4. Мугулов Ф.К. Безопасность личности: теоретические и прикладные аспекты социологического анализа: монография. Сочи: РИО СИМБиП, 2003, стр. 45
5. Ежевская Т.И.Безопасность личности: система понятий, основные виды и психологические характеристики // Ежевская Татьяна Иннокентьевна Безопасность личности: система понятий // Психопедагогика в правоохранительных органах. 2008. №4. URL: <http://cyberleninka.ru/article/n/bezopasnost-lichnosti-sistema-ponyatiy> (дата обращения: 17.02.2017)
6. Баева И. А., Психологическая безопасность в образовании: монография. – СПб., 2002, стр.50
7. Краснянская Т. М., Тылец В. Г., Понятийные ориентиры развития психологической безопасности личности в предметном поле современных исследований/GESS: Education Science and Psychology, N1 (23), 2013, стр. 59-64.
8. Անձի կենսագործունեության հոգեբանական անվտանգություն// Կոլեկտիվ մենագրություն, հեղ. Ռ. Վ. Աղուզումյան, Վ. Ռ. Պապոյան, Ա. Ս. Գալստյան, Ե. Բ. Մուրադյան, Դ. Յ. Սարգսյան, Ծ. Ս. Ամիրյան // Եր., 2015, էջ 12:

9. Նույն տեղում, էջ 144:
10. Նույն տեղում, էջ 101:
11. Նույն տեղում, էջ 104:
12. Практикум по психологии здоровья / Под ред. Г.С. Никифорова. СПб., 2005.
13. Шамионов Р.М. Психология субъективного благополучия личности. Саратов, 2004.
14. Герасимова В. Д. Угрозы информационно-психологической безопасности личности и их основные источники, Шуйский филиал Ивановского Государственного университета// <https://www.scienceforum.ru/2014/pdf/5619.pdf>

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### Հոգեբանական անվտանգության հիմնախնդրի սոցիալ- հոգեբանական կոնտեքստը Ռոզալյա Հարությունյան

Անվտանգություն հասկացությունը վերջին տարիներին ձեռք է բերել ոչ միայն հանրային, այլև համաշխարհային նշանակություն: Անվտանգությունը բարդ, բազմաբովանդակ, բազմակառույց կենսապահովական համակարգ է, որն ամեն առումով փոխկապակցված է կյանքի կարևոր ասպեկտների հետ: Հոգեբանական անվտանգությունը մեծապես հիմնվում է անձի սուբյեկտիվ աշխարհընկալման, հուզական դաշտի կայունության, անձնային փորձի, հոգեկանի գործունեության առանձնահատկությունների, բնավորության, խառնվածքի և այլ որակների վրա: Անվտանգության զգացողության ընկալման գործընթացը ավելի շատ կապված է սուբյեկտիվ պատկերացումների հետ, քան օբյեկտիվ: Այս և հոգեբանական անվտանգությանն առնչվող մի շարք հարցեր ենք փորձել վեր հանել սույն հոդվածի շրջանակներում:

## РЕЗЮМЕ

### Социально-психологический аспект психологической безопасности Розалия Арутюнян

*Ключевые слова:* безопасность, духовное здоровье, ценности, смысл жизни, мобилизация.

Психологическая безопасность за последние годы приобрела не только общественное, но и мировое значение. Безопасность представляет собой сложную, содержательную, многоуровневую систему, которая во всех смыслах связана с важными аспектами жизни. Психологическая безопасность в большей степени опирается на субъективное мировосприятие личности, стабильность эмоционального поля, личный опыт, особенности внутреннего мира, характера и темперамента. Процесс познания ощущения безопасности больше связан с субъективными понятиями, чем с объективными. Эти и некоторые вопросы, касающиеся психологической безопасности, мы попробовали осветить в данной статье.

**SUMMARY**

**Socio-psychological aspect of psychological safety  
Rozalya Harutyunyan**

**Keywords:** *security, spiritual health, values, meaning of life, mobilization*

Psychological safety has recently gained not only public, but global importance. Security is a complex, substantial, multilevel system that is completely associated with important aspects of life. Psychological security to a large extent relies on personality's subjective world perception, emotional field stability and personal experience, as well as peculiarities of the inner world, character and temperament. The process of cognition of the sense of security is more associated with subjective concepts than with the objective ones. These are some issues related to psychological safety, that we tried to highlight in this article.



**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՈՒՀՈՒՄ ԴԱՍԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆՆ ՈՒ  
ՄԱՏՈՒՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՀԱՆՁՆԵՐ\***  
(դիտարկումներ մեր պրակտիկ փորձի մասին)

**Արեգա Թևոյան**

**Բանալի բառեր`** Կրթական քաղաքականություն, կրթության որակ, որակի ապահովում, դասախոսության գրառում, մատուցման մատչելիություն, արդյունավետություն, ուսանողների ակտիվության ապահովում, ներկայացվող պահանջներ, փորձի բացահայտում:

*Բարձրագույն դպրոցի զարգացման արդի փուլը պահանջում է էապես բարձրացնել ուսանողների մասնագիտական պատրաստվածության որակը, որը նշանակում է բուհում կատարելագործել ուսուցման գործընթացի համակարգը, որոնել ու գտնել ուսանողների հետ տարվող աշխատանքների (դասախոսություն, գործնական, լաբորատոր պարապմունքներ, փորձուսուցում` անհատական, լսարանային և արտալսարանային) արդյունավետ կազմակերպման մեթոդներն ու ձևերը, բացահայտել այն բոլոր հնարավորությունները, որոնք կարող են լայնորեն օգտագործվել կրթության, արտադրության տարբեր ոլորտների մասնագետների պատրաստման գործում:*

*Այագա մասնագետների մասնագիտական պատրաստության բովանդակության մշակումը բուհական կրթության պրակտիկայում պահանջում է կոնկրետ խնդրի լուծում` մասնագիտական պատրաստվածության տեսական ամուր հիմքի ստեղծում: Այդպիսի հիմք ստեղծվում է դասախոսությունների, լաբորատոր, գործնական պարապմունքների ընթացքում տրվող գիտելիքների միջոցով:*

*Բուհում դասախոսության նշանակության գիտակցման մեջ մեծ ներդրում ունեն հայ գիտնականներ Գ. Էդիլյանը, Ա Շավարշյանը, Հ. Ր. Սիմոնյանը, Վ. Պարսամյանը, Հ. Ր. Թամրազյանը, Հ. Մախչանյանը, Ա. Բայլանը, ՀԱԱՀ-ի գիտնականներ Պ. Հակոբյանը, Խ. Երիցյանը, Ա. Լ. Արարատյանը, ինչպես նաև Արցախի բուհերի, (ԱրՊՀ, «Մետրոպ Մաշտոց», «Գրիգոր Նարեկացի» համալսարանի, այդ թվում` ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի) փորձառու դասախոսները, որոնք հիանալի գիտեն դասախոսության մշակման ու մատուցման ողջ տեխնոլոգիան, դասախոսություններին վերաբերվում են լուրջ և մտածված` ուշադրություն դարձնելով նրանց ոչ միայն գիտական, այլև մեթոդական կողմին և բովանդակությանը:*

*Մեզ համար ուղեցույց ունենալով վերոնշյալ հանրահայտ գիտնականների և մեր հանրապետության բուհերի վաստակաշատ դասախոսների ուսանելի խորհուրդներն ու փորձը` սույն հոդվածում մեր մանկավարժական փորձի հիման վրա ներկայացվում են որոշ նկատառումներ դասախոսության նախապատրաստման, ուսումնական նյութի մատուցմանը ներկայացվող մի քանի պահանջների մասին: Այսինքն` դիտարկվում են, թե ինչպես նախապատրաստվել ամենօրյա դասախոսություններին, դասախոսության ընթացքում մատչելի դարձնել հաղորդվող նյութը, ապահովել ուղիղ և հետադարձ կապը, ուսանողների ճանաչողական ակտիվությունը:*

*Բուհում դասախոսությունն ուսանողների համար գիտական մտածողության դպրոց է: Իր բովանդակությամբ ու ձևակերպումով, դասախոսի կերպարով և նրա*

\* Հոդվածն ընդունվել է 25.12.16:

Հոդվածը տպագրության է երաշխավորել մ.գ.դ., պրոֆեսոր Գ.Հարությունյանը:

խոսքի հուզականությամբ դասախոսությունը հսկայական ուսուցողական և դաստիարակչական ազդեցություն է գործում լսողների վրա: Դասախոսությունն իր ներգործության ուժով ավելի բարձր է կանգնած դասավանդման մյուս բոլոր ձևերից, անփոխարինելի է տեղեկատվության հաղորդման իմաստով և ավելի արդյունավետ՝ ժամանակի տնտեսման առումով: «Բարձրագույն դպրոցի մանկավարժության և հոգեբանության հիմունքները» աշխատության մեջ հեղինակներն ընդգծում են դասախոսության կարևորությունը որպես բուհում ուսումնական գործընթացի կազմակերպման առաջատար ձև. «Դասախոսությունից հրաժարվելը կարող է բերել միայն ուսանողների գիտական մակարդակի անկմանը, կիսամյակի ընթացքում ուսանողների աշխատանքի համակարգվածության և համաչափության խախտմանը: Դրա համար էլ ներկա ժամանակաշրջանում դասախոսությունը շարունակում է մնալ բուհերում ուսումնական գործընթացի կազմակերպման առաջատար ձև»:[1]

Պրակտիկ փորձը ցույց է տվել, որ լավ դասախոսությունը ուսանողին ուղեկցում է դեպի գիտություն, պատկերացում տալիս գիտության տվյալ բնագավառի մասին ամբողջությամբ վերցրած, ծանոթացնում նրան գիտական հիմնական դրույթների հետ, օգնում է հասկանալու գիտության առաջատար գաղափարները, նրա մեթոդաբանությունը, գիտելիքները պրակտիկայում օգտագործելու ուղիներն ու միջոցները:

Բովանակալից դասախոսությունը շատ հաճախ տալիս է այն, ինչ չկա դասագրքերում. նոր տվյալներ, ուսումնասիրվող հարցերի ուրույն մեկնաբանություններ, գիտության զարգացման հեռանկարայանին բնութագիր, կենդանի խոսքի անփոխարինելի ուժ և այլն: Ինչպես մատնանշում է պրոֆեսոր Ա. Բայանը, լավ դասախոսությունն արթնացնում է ուսանողի միտքը, ստիպում նրան խորհել տվյալ գիտության, առարկայի վերաբերյալ, որոնել դասախոսության ժամանակ ծագած հարցերի պատասխանները, ստուգել առավել հետաքրքրական և գիտական դրույթները: [2]

Բովանդակալից դասախոսությունը ուսանողին մղում է դեպի գրքերի աշխարհ, պահանջում խորացված ու համակարգված ինքնուրույն աշխատանք:

Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ դասախոսության բովանդակության և մատուցման բնույթը մեծապես կախված է նրա մանրակրկիտ և խոր նախապատրաստվածությունից: Ընդ որում, նկատի է առնվում տվյալ դասախոսության ոչ միայն անմիջական մշակումը, այլև հենց իր՝ դասախոսի ընդհանուր պատրաստվածությունը:

Բուհական պրակտիկայում հայտնի ճշմարտություն է այն, որ ուսումնագիտական հաստատությունում կրթադաստիարակչական ամբողջ գործընթացի շարժիչն ու դեկավարը բարձրագույն որակավորում ունեցող դասախոսն է, որը պետք է նվիրված լինի իր մանկավարժական աշխատանքին, լավ տիրապետի այն գիտությանը, որի վրա կառուցում է իր կողմից դասավանդվող առարկան: Անշուշտ, համալսարանի ուսանողների համակողմանի կրթության ու դաստիարակության բարդ խնդիրների հաջող լուծումը էապես կախված է ստեղծագործաբար աշխատող բարեխիղճ դասախոսից, նրա գաղափարական համոզմունքից, մանկավարժական վարպետությունից և նրա գործունեության մեջ դրսևորված որակական հատկանիշներից: Սկսնակ դասախոսների համար պետք է ուսանելի լինեն բարձրագույն դպրոցի պրակտիկայում ճանաչված վերոնշյալ երախտաշատ մանկավարժ-գիտնականների,, այդ թվում մեր հանրապետության բուհերի վաստակաշատ դասախոսների խորիմաստ դրույթներն այն մասին, որ դասախոսի կարևոր որակներից են համարվում նրա ստեղծագործելու, նորի, առաջավորի որոնման և հայտնագործման կարողությունը (ժամանակին տողերիս հեղինակի համար ուսանելի են եղել նաև նրանց խորհուրդները):

Լյծմ մեր աշխատանքային փորձի հիման վրա վերլուծաբար դիտարկենք ամե-

նօրյա դասախոսությունների նախապատրաստման և դասախոսության նյութի պարզ ու մատչելի հաղորդմանը ներկայացվող մի քանի պահանջներ:

Դասախոսությունը ժամանակի ընթացքում ստուգված, հիմնավորված և արդյունավետ մեթոդ է, որի կիրառումը չի բացառում արդիական մոտեցումներ, այն դիտելով ոչ թե սոսկ գիտելիքների, տեղեկատվության հաղորդման ձև, այլև դասախոսի և ուսանողների ակտիվ, ստեղծագործական նպատակասլաց և համատեղ գործունեություն:

Ըստ մեր պրակտիկ փորձի, դասախոսությունների նախապատրաստմանը ներկայացվող պահանջների մեջ կարևոր է ինքնակրթությամբ և ինքնազարգացմամբ զբաղվելը: «Ստեղծագործաբար աշխատող դասախոսի հատկություններից մեկը ինքնակրթությունն է, գիտելիքների մեծ պաշարը նա ձեռք է բերում ինքնակրթության միջոցով»: Պրոֆեսոր Ա. Բայյանը վերստին մատնանշում է. «Ստեղծագործաբար աշխատող ուսուցչի, (բուհում` դասախոսի) հատկություններից մեկը իր գործունեությունը մշտապես վերլուծելու կարողությունն է»: (Ա. Բայյան) [3]: Ըստ մեր պրակտիկ փորձի, ինքնակրթության նշանակությունը մեծանում է այն դասախոսների համար, ովքեր կոչված են ղեկավարելու ուսանողների ուսումնական գործունեությունը, գրքի հետ կատարվող նրանց մտավոր աշխատանքը: Կարևոր ենք համարում ընդգծել այն ճշմարիտ իրողությունը, որ բուհում ուսանողների ուսումնական գործունեության արդյունավետ կազմակերպման կարևորագույն նախապայմանը լավ կարդացվող դասախոսություններն են, գործնական, լաբորատոր պարապմունքների, ստուգաթղթերի, քննությունների ընթացքում տվյալ առարկայի դասախոսի մանկավարժական վարպետության, տակտի, ընդունակությունների, լավատեսության և որակական այլ հատկանիշների դրսևորումը: Այս` տեսակետից էլ դասախոսության հաջողությունն ու արդյունավետությունը պայմանավորված է դասախոսի` օրվա դասախոսությանը լավ նախապատրաստվելուց, որը կարելի է բաժանել երկու փուլի` նախապատրաստական` դասաԷձ-ձձձԱՍան բովանդակության մշակում, նախապատրաստում ընդհանուր դասընթացին, և իրագործման` դասախոսության նյութի մատչելի հաղորդում, ուսանողների ակտիվության, ուղիղ և հետադարձ կապի ապահովում, հարցերի, առաջադրանքների միջոցով ուսանողների կողմից ուսումնական նյութի յուրացման մակարդակի ստուգում և ուսանողների ինքնուրույն աշխատանքի հանձնարարում:

Իսկ ինչպե՞ս կազմակերպի սկսնակ դասախոսն ամենօրյա դասախոսության իր նախապատրաստումը, պլանավորի դրա կառուցման առանձնահատկությունները: Դրան հասնելու միակ ուղին անխոնջ ստեղծագործական աշխատանքն է, սեփական գիտելիքների խորացումն ու ընդլայնումը և իր աշխատանքի գիտական կազմակերպումը: Ուսանողը դասախոսի մեջ պետք է տեսնի խելացի, գիտուն, մտածող, մասնագիտական գիտելիքներին տիրապետող մարդու: Որքան խորն են դասախոսի գիտելիքները, մասնագիտական պատրաստվածությունը, որքան լայն է նրա մտահորիզոնը, բազմակողմանի է գիտական կրթվածությունը, այնքան ավելի մեծ է նա ոչ միայն որպես դասախոս, այլև դաստիարակ:

Դասախոսությունը կարելի է համարել արդյունավետ, եթե համատեղ համագործակցված կազմակերպվում են դասախոսի և ուսանողների գործունեության եղանակները` ուղղված դասախոսության նյութի ուսուցման խնդիրների բազմակողմանի լուծմանը: Այս առումով էլ դասախոսության նյութի մատուցմանը ներկայացվում է ևս մեկ կարևոր պահանջ` մատչելիություն, (բայց ոչ պարզեցում), պարզություն ու որոշակիություն, որը ընդհանուր դիդակտիկական սկզբունք է և կիրառվում է տվյալ նյութը յուրացնող ուսանողների ընկալման բարձր մակարդակը ապահովելու նպատակով: Դասախոսության նյութի գիտական ու մատչելի շարադրման լավագույն տարբերակի

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ընտրության անհրաժեշտ պահանջներն են (ընդգծում ենք, ելնելով մեր պրակտիկ փորձից)։

- Ղասախոսության նպատակի ճիշտ որոշումը։

- Ղասախոսության տիպի ընտրությունը պետք է պայմանավորված լինի թեմայի բովանդակությամբ, օրացուցային թեմատիկ պլանով և ուսանողների պատրաստակամությամբ ու նրանց առանձնահատկություններով։ Ղասախոսը պարտավոր է իմանալ յուրաքանչյուր ուսանողի ոչ միայն ներկա, այլև վաղվա իրական հնարավորությունները։ Մշտապես պետք է արթուն պահել սովորողների միտքը և արդյունավետ մեթոդների միջոցով ձևավորել նրանց ստեղծագործական մտածողությունը։

Մեր աշխատանքային փորձը ցույց է տվել, որ Ղասախոսության արդյունավետության բարձրացումը պահանջում է, որպեսզի ուսանողների կողմից այն գրի առնվի, քանի որ դա ունի բացառիկ նշանակություն։ Անվանի քիմիկոս Դ. Ի. Մենդելեևը նկատել է. «Գրի չառնված միտքը կորսված գանձ է»։ Հետևաբար Ղասախոսության գրառումը ունի մի շարք առավելություններ.

1. Այն հնարավորություն է տալիս հաղորդվող նյութը երկար ժամանակ հիշել և հարկ եղած դեպքում վերականգնել ունկնդրած Ղասախոսության հիմնական դրույթները։
2. Ղասախոսության գրառումը նպաստում է ուշադրության պահպանմանը։ Ինչպես մատնանշում է ռուս մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին. «Ուշադրությունը մեր հոգու այն միակ դուռն է, որով անցնում է այն ամենը, ինչ կա մեր գիտակցության մեջ»։[4]
3. Ճիշտ գրառումը ակտիվացնում է ուսանողի միտքը, քանի որ նա հարկադրված է ընտրել գլխավորը, վերլուծել Ղասախոսի արտահայտած մտքերը։
4. Ղասախոսության գրառումը նպաստում է նյութի լավ մտապահմանը։

Որպեսզի ուսանողի գրառումները լինեն լիարժեք և արդյունավետ, պետք է Ղասախոսության ընթացքում ապահովել ակտիվությունը, գրառել համակարգված և ոչ թե ընդհատումներով։ Գրի առնել Ղասախոսության թեման, պլանը, հանձնարարվող գրականությունը, ապա Ղասախոսության բովանդակությունը։

Դիտարկումները ցույց են տվել, որ Ղասախոսությունը գրառելու ժամանակ ուսանողների մեծ մասը խորությամբ չի մտածում նյութի շուրջ։ Անգամ Ղասավանդողի կողմից Ղասախոսության մի հատվածի նախնական բացատրությունից հետո, երբ ուսանողը այն ընկալում է և շարունակում գրառելու գործընթացը, վերջինս ընթանում է առանց մտածողության։ Եվ եթե Ղասախոսությունը թելադրվում է անընդհատ (առանց պարզաբանումների), ապա բոլոր ուսանողները վերածվում են գրառող մեքենաների։ Անշուշտ, Ղասավանդողի այդպիսի գործունեության արդյունքները բացասական ազդեցություն են ունենում ուսանողների ուսուցման հետագա ամբողջ ընթացքի վրա։

Մեր պրակտիկ փորձը ցույց է տվել, որ գրառումն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ ձեռքը հետևում է սեփական մտքին, ավելի ճիշտ` մտքի արդյունքներին, այլ ոչ թե Ղասավանդողի բառերին։ Օրինակ` մեր կողմից փորձ է արվել թեմայի առավել դժվար մասերի բացատրության ժամանակ օգտագործել նաև Ղասախոսության այսպիսի ձև. մենք բացատրում ենք, ուսանողները լսում են, այնուհետև նրանց առաջարկում ենք ինքնուրույն գրառել լսածը։ Ուսանողները սկզբում դժվարանում են դա անել։ Այդ ժամանակ մենք կրկնում ենք բացատրությունը այնպես, որ յուրաքանչյուր ուսանող մինչև վերջ հասկանա այն և դրանից հետո ինքնուրույն գրառի նյութը։ Այդ դեպքում ուսանողները վերափոխվում են, դառնում ավելի կենտրոնացած, ակտիվ, նրանք կարծիքներ են փոխանակում և փորձում հաղթահարել դժվարությունները, ընթանում է ըն-

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

կայման ակտիվ գործընթաց: Այս մեթոդը հոգեբանորեն դրական ազդեցություն է գործում և ապահովում յուրաքանչյուրի մտավոր ակտիվ աշխատանքը, ձևավորվում է գործունեության դրդապատճառային հիմքը, որը և մեթոդի հաջողության պարտադիր պայման է:

Ելնելով վերը նշվածից և մեր պրակտիկ փորձից՝ գտնում ենք, որ սկսնակ դասախոսը, դասախոսության ընթացքում ուսումնասիրելով իր ուսանողներին, որոշելով նրանց հնարավորություններն ուսումնական ամենատարբեր գործողությունների մեջ, նախ լսարանում ստեղծում է առողջ հոգեբանական մթնոլորտ, ապահովում նրանց ակտիվությունը և դասախոսության նյութը համակարգված, պարզ ու մատչելի շարադրում այնպես, որ ուսանողներն առանց դժվարությունների, ուշադիր լսում են դասախոսությունը, գրի առնում շարադրածը, մտածում դասախոսի հետ միասին, հետևում նրա մտքերի, ապացույցների, եզրահանգումների ընթացքին, կարողանում են տարբերել գլխավորը, էականը երկրորդականից:

Դասախոսության նյութի հաղորդմանը ներկայացվող պահանջներից է դասախոսության ժամանակ ուղիղ (դասախոսի) և հետադարձ (ուսանողի) կապի ապահովումը: Եթե դասախոսությունը համակարգված, պարզ ու մատչելի չի շարադրվում, ապահովում դասախոսության ժամանակ ուղիղ և հետադարձ կապը, ապա ուսանողը կորցնում է դասախոսի մտքերի տրամաբանությունը, և չի յուրացնում խոսքի տրամաբանական կառուցվածքը իր բոլոր կողմերով: Դասախոսության ժամանակ ուղիղ կապը ենթադրում է դասախոսի գիտական հարուստ ինֆորմացիայի հաղորդումը ուսանողներին, այսինքն՝ մասնագիտական խոր պատրաստվածության հիման վրա կարողանում է ղեկավարել ուսանողների ուսումնաձանաչողական ու պրակտիկ գործունեությունը, կիրառում բազմազան մեթոդներ, ապահովում ուսանողների ակտիվությունը:

Զափազանց կարևոր է նաև դասախոսության ժամանակ ապահովել հետադարձ կապը: Դա նշանակում է ուսանողների կողմից շարադրանքի գիտակցական յուրացումն ու ընկալումը: Դասախոսության բովանդակության ընկալման և հետադարձ կապի ապահովման հիմնախնդիրը սերտորեն առընչվում է ուսանողների կողմից ուսումնական տեղեկատվության ընկալման ծավալի հետ: Դասախոսական աշխատանքում մենք ուշադրություն ենք դարձնում հոգեբանության մեջ հայտնի նախնական ընկալման համար ծավալի սահմանափակման օրենքին, որի խախտումը պատճառ է դառնում ուսանողների կողմից տվյալ դասախոսության կամ նրա առանձին մասերի արդյունավետ ընկալմանը: Ավելի պարզ ձևակերպմամբ՝ ուսանողը կարող է մտապահել որոշակի քանակի տեղեկատվություն: Դրա խախտումը համարվում է համապատասխան հասկացությունների, երևույթների, գործընթացների դժվար ընկալման պատճառներից մեկը: Այդ տեսանկյունից դասախոսությունն ունենում է հետևյալ էական թերությունները՝ չընդհատվող, արագ շարադրանքը և հետադարձ կապի բացակայությունը:

Դասախոսության եզրափակիչ փուլում նաև հարցադրումների միջոցով պարզում ենք՝ արդյոք ուսանողների կողմից յուրացրած գիտելիքները իմաստավորվել, ընդհանրացվել, վերածվել են համոզմունքների թե ոչ: Ուրեմն, ըստ մեր փորձի, անհրաժեշտ է դասախոսության ժամանակ ապահովել արտաքին և ներքին հետադարձ կապը: Դրանք են.

ա) Դասախոսի կողմից վերահսկել նրանց ձեռք բերած գիտելիքների և կարողությունների արդյունքները, որն ապահովում է արտաքին հետադարձ կապը,

բ) Ինքնավերահսկողությունն ապահովում է ներքին հետադարձ կապը: Ուսանողները ինքնավերահսկողության միջոցով կարողանում են գաղափար կազմել իրենց ուսումնական գործունեության արդյունքների մասին:

Եթե արտաքին կապը ծառայում է ուսանողների ուսումնաձանաչողական գործունեության ղեկավարմանն ու կառավարմանը, ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպմանը դասախոսի կողմից, ապա ներքին կապը ծառայում է այն բանին, թե սովորողներն ինչպես և որքանով ճիշտ են կառավարում իրենց ուսումնաձանաչողական գործունեությունը, կատարելագործում գիտելիքները:

Կարծում ենք՝ ավելի արդյունավետ կլինի արտաքին ու ներքին հետադարձ կապի ապահովումը դասախոսության ժամանակ, եթե դասախոսը խելամտորեն կիրառի համագործակցության սկզբունքը, այսինքն՝ դասախոսը պետք է հրաժարվի հրամայողական մեթոդից և դաստիարակության գործընթացում հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի կարծիքը, ցանկությունները, պահանջմունքները, առաջարկությունները, հետաքրքրությունները: Պրոֆեսոր Հ. Մախչանյանը մատնանշում է, որ մանկավարժական համագործակցությանը տիրապետելը խիստ կարևոր է բոլոր առարկաների դասախոսների համար: Դասախոսության ընթացքը դիտարկելիս հարկավոր է ուշադրություն դարձնել ուսանողներին հարցեր առաջադրելու բնույթի, թույլ տված սխալների նկատմամբ արձագանքների հետ (ուսանողների կողմից) հաղորդակցման ոճի վրա, դիտողություններ անելու տոնի վրա, ընդհանրապես դասախոսության հուզական կողմի վրա, որը պետք է բավականաչափ բարձր լինի: [5]

Իհարկե, այդ ամբողջի մեջ բովանդակում է դասախոսի ստեղծագործական աշխատանքը: Այն պահանջում է նպատակասլաց աշխատասիրություն, ջերմ սեր մանկավարժական գործունեության նկատմամբ: Ուսանողի իմաստության առաջին հիմնական ակունքը դասախոսն է, որը պետք է լինի իմաստության օրինակ, գիտելիքների հզոր աղբյուր և բարոյական նորմեր մարմնավորող կերպար:

## **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Основы педагогики и психологии высшей школы (под ред. Петровского А. В.), М. Изд.во Московского университета, 1986, стр. 498
2. Բայան Ա., առաջին կուրսեցու ուղեցույց, Եր., 1973, էջ 5-6: Նաև այդ մասին տես, Պլատոնով Գ. Վ., Ինչպես նախապատրաստել դասախոսությունը, դասախոսական վարպետության կատարելագործման համար, (հեղինակային ձեռնարկ), Եր., 1979, էջ 9:
3. Բայան Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Եր., 1983, գլ. 5, էջ 368:
4. Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, 3-րդ բաժին, Ուշադրության դաստիարակում, Եր., 1981, էջ 289:
5. Մախչանյան Հ., Մանկավարժական համագործակցություն, Եր., 1989, էջ 13-14:

## **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Ժամանակակից բուհ-ում դասախոսության նախապատրաստմանն ու մատուցմանը ներկայացվող մի քանի պահանջներ**  
(դիտարկումներ մեր պրակտիկ փորձի մասին)  
**Արեգա Թևոյան**

Հոդվածում գիտական գրականության ուսումնասիրության և մեր պրակտիկ փորձի վերլուծության հիման վրա համառոտակի քննության են առնվել դասախոսության նախապատրաստմանն ու մատուցմանը ներկայացվող մի քանի պահանջներ: Կոնկ-

րեւտ օրինակներով լուսաբանվում են դասախոսության ընթացքում ուսանողների ճանաչողական ակտիվության ապահովման, դասախոսական նյութի գրառման, ուղիղ և հետադարձ կապի ապահովման, համագործակցության սկզբունքի կիրառման, դասախոսության եզրափակիչ փուլում ուսանողների կողմից ուսումնական նյութի յուրացման մակարդակի ստուգման և այլ հարցեր:

## РЕЗЮМЕ

**Ряд требований, предъявляемых к подготовке лекций в современном вузе  
(наблюдения из нашего практического опыта)**

**Арега Тевосян**

***Ключевые слова:** образовательная политика, качество образования, обеспечение качества, конспектирование, доступность преподавания, эффективность, обеспечение активности студентов, предъявляемые требования, раскрытие опыта.*

В статье рассматриваются роль и значение лекций в образовательном процессе современного вуза. На конкретных примерах демонстрируется способ повышения познавательной активности студентов; особое внимание уделяется требованиям к лекциям, прямой и обратной связи между преподавателем и студентом, применению принципа взаимодействия, проверке усвоения учебного материала на заключительных этапах лекции

## SUMMARY

**Some Requirements for the Preparation and delivery of lectures in Modern Universities  
(observations on our practical experience)**

**Areга Tevosyan**

***Key words.** Educational policy, quality of education, quality assurance, lecture record, providing accessibility, efficiency, students activity providing, represented requirements, disclosure of experience.*

The article examines several requirements for the preparation and delivery of lectures which is based on the study and analysis of scientific literature and our practical experience.

It also discusses some issues related to the efficiency of lectures. Specific examples show how to increase students' cognitive activity. Special attention is paid to the requirements for lectures, feedback between teacher and student, the application of the principle of interaction, the verification of the assimilation of educational material in the final stages of lecture.

## СИСТЕМА КЛЮЧЕВЫХ КОМПЕТЕНЦИЙ АРЦАХСКОГО МЕНЕДЖЕРА\*

Альвина Нерсесян

**Ключевые слова:** компетентностный подход, общекультурные компетенции, общепрофессиональные компетенции, профессиональные компетенции, компетентностная модель, арцахский менеджер

*Одной из основных задач, стоящих перед системой высшего образования на современном этапе развития общества, является обеспечение качества подготовки будущего профессионала. Реализация данной задачи становится возможной при модернизации учебного процесса, в котором главным направлением становится компетентностный подход, наиболее соответствующий условиям рыночной экономики. Данный подход предполагает формирование не только знаний, умений и навыков студентов, но и овладение ключевыми компетенциями, а также способность реализовывать их на практике в процессе профессиональной деятельности.*

*Социально-педагогическое значение компетентностного подхода состоит в привлечении внимания к проблемам образования широкой общественности, в значительном вкладе в миссию перевода образования из узковедомственной социальной системы в приоритетную сферу общественной жизни, в пространство развития сущностных сил человека<sup>[1]</sup>*

*Все чаще мы сталкиваемся с тем, что современным работодателям сегодня необходима не квалификация, ассоциирующаяся с обыкновенными умениями совершать те или иные операции, а компетентность, сочетающая в себе квалификацию и социальное поведение, умение работать в группе, инициативность.*

*Сегодня мы говорим о востребованности определенной модели выпускника арцахского вуза. В рамках нашего исследования основной целью профессионального образования является подготовка квалифицированного работника соответствующего уровня и профиля, конкурентоспособного на рынке труда, компетентного, свободно владеющего своей профессией и ориентирующегося в смежных областях деятельности, готового к постоянному профессиональному росту, социальной и профессиональной мобильности. Иными словами – это разносторонне развитый, высококвалифицированный, конкурентоспособный менеджер, обладающий определенным набором компетенций.*

*Какова же система компетенций, которыми должен обладать современный арцахский менеджер?*

*Изучение методической литературы по данному вопросу позволило нам определить следующие ключевые компетенции для выпускника специальности “Менеджмент”: общекультурные компетенции, общепрофессиональные компетенции и профессиональные компетенции.*

*Рассмотрим каждую из ключевых компетенций.*

### **Общекультурные компетенции менеджера.**

*Эти компетенции относятся к ключевым, согласно классификации А.В. Хуторского, которая включается в метапредметный уровень содержания образования. Поэтому формирование общекультурных компетенций осуществляется в рамках каждого предмета, реализующего содержание общего образования. [2]*

*Вслед за А.В. Хуторским будем считать, что общекультурная компетенция — это*

---

\* Հոդվածն ընդունվել է 03.02.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնը:



определенный спектр вопросов, в которых студент должен быть эрудирован больше всего. Сюда относятся познание и опыт деятельности в области национальной и общечеловеческой культуры; духовно-нравственные основы жизни человека и человечества, отдельных народов; культурологические основы семейных, социальных, общественных явлений и традиций; роль науки и религии в жизни человека, их влияние на мир; компетенции в бытовой и культурно-досуговой сфере, например, владение эффективными способами организации свободного времени.

Значимость общекультурной компетенции в процессе формирования современного профессионала обусловлена тем, что изначально общекультурная компетенция выступает некой первообразной и фундаментальной составляющей для таких образований, как профессиональная готовность и компетентность, профессионализм, мастерство, индивидуальное творчество и др. Общекультурные компетенции в отличие от других компетенций носят более устойчивый и неугасаемый характер. Так, если профессиональные компетенции могут быть недолговечными (в силу нарастающей смены технологий деятельности, устаревания прикладных знаний и пр.), то базовые компетенции человек проносит через всю жизнь, имея возможность каждый раз выстраивать на их основе свой новый профессиональный облик.

Мы вполне обоснованно считаем, что если будущий специалист обладает фундаментальной общекультурной подготовкой, то это в свою очередь способствует в дальнейшем более быстрому освоению специальных профессиональных компетенций, и даже не в одной сфере профессиональной деятельности. Тем самым общекультурная компетентность может рассматриваться как основа для формирования профессиональной мобильности специалиста.

О.Е. Лебедев предлагает следующую структуру общекультурных компетенций:

1) ориентация в первоисточниках культуры (произведениях художественной литературы, музыкального, изобразительного, театрального искусства). В реальной образовательной практике подавляющее большинство учащихся ограничивается знакомством с немногими первоисточниками, в основном, с некоторыми произведениями художественной литературы.

2) способность ориентироваться в источниках информации, отбирать их для решения познавательных задач по определенным критериям, в том числе по критерию достоверности информации.

3) способность объяснять явления действительности, по крайней мере, те, с которыми люди встречаются в повседневной жизни, с позиций науки. При этом речь идет не только о научном понимании таких явлений, но и о способности объяснять их другим людям.

4) способность ориентироваться в актуальных проблемах общественной жизни (в сути проблем, причинах их возникновения, мнениях о путях решения).

5) способность ориентироваться в мире социальных, нравственных и эстетических ценностей, что предполагает умение различать факты, суждения, оценки, устанавливать их связь с определенной системой ценностей, определять собственное аксиологическое поле. [3]

Исследователь Б.И. Ярмакеев считает, что общекультурная компетенция связана с ценностными ориентирами учащегося, его способностью видеть и понимать окружающий мир, ориентироваться в нем, осознавать свою роль и предназначение, уметь выбирать целевые и смысловые установки для своих действий и поступков, принимать решения, поскольку в интегрированном обществе с принятой культурой поведения и общения эти компетенции определяют человека высокой культуры. [4]

Исходя из вышеизложенного и рассмотрев требования ведущих вузов к специальности

“Менеджмент”, мы предлагаем следующие составляющие общекультурной компетенции (ОК) арцахского менеджера:

- ✓ способность к обобщению и анализу на основе общей культуры мышления, восприятию информации, постановке цели и выбору путей её оптимального достижения (ОК-1);
- ✓ способность к письменной и устной деловой (профессиональной) коммуникации на родном языке, логически ясно и аргументированно формировать устную речь и деловую переписку (ОК-2);
- ✓ способность к кооперации с коллегами, работе в коллективе (ОК-3);
- ✓ способность находить организационно-управленческие решения в нестандартных ситуациях и нести за них ответственность (ОК-4);
- ✓ способность к саморазвитию, повышению своей квалификации и мастерства (ОК-5);
- ✓ способность осознавать социальную значимость своей будущей профессии, обладать высокой мотивацией к выполнению профессиональной деятельности (ОК-6);
- ✓ способность применять основные положения естественнонаучных дисциплин в профессиональной деятельности (ОК-7);
- ✓ способность работать в коллективе, толерантно воспринимая социальные, этнические, конфессиональные и культурные различия (ОК-8);
- ✓ способность понимать сущность и значение информации в развитии современного общества, использовать основные методы, способы и средства получения, хранения, переработки информации (ОК-9).

Однако мы считаем, что при определении состава общекультурных компетенций будущего менеджера также необходимо учитывать и тот факт, что профессиональное образование должно носить опережающий характер. Образование выступает как социально-адаптивный механизм, способный реагировать на социальные преобразования. И в этом смысле необходимо таким образом разработать модель образования, чтобы оно (образование) функционировало как динамичная и гибкая система, способная реагировать на социальные изменения. [5]

**Общепрофессиональные компетенции** (в международной терминологии чаще встречается термин «ядерные»). Данные компетенции определяют инвариантный состав полномочий и задач специалистов всех видов профессий.

В литературе по стратегии управления с 90-ых годов доминирует и придается особое значение понятию «ядерная компетенция» как ключевому организационному ресурсу, который может использоваться для получения конкурентного преимущества. Hamel и Prahalad определяют «ядерные компетенции» как “коллективное знание организации, особенно то, как скоординировать различные производственные навыки, умения и разнообразные технологические потоки”. [6]

Принимая во внимание специфику рассматриваемой нами специальности “Менеджмент”, в эту группу мы должны включить следующие виды компетенций:

- познавательные, связанные с получением (приобретением), хранением, преобразованием и использованием различной информации;
- ценностно-ориентационные, раскрывающие целемотивационный аспект деятельности менеджера, его способность усвоить и принять ценности, нравственно-этические нормы и правила, сложившиеся в обществе и профессиональной среде;
- коммуникативные, определяющие круг межличностного взаимодействия, типовые проблемы коммуникации и способы их разрешения в сфере профессиональной деятельности, социуме, различных социальных институтах;
- технико-технологические, раскрывающие содержание операционно-инструментальной стороны деятельности, т. е. общие принципы, способы и средства

планирования собственной и коллективной деятельности, проектирования и расчета техники, технологии производственного (или иного) процесса;

- эстетические, связанные с совершенствованием как процесса профессиональной деятельности (достижение мастерства в профессии), так и продукта труда (дизайн и структурно-функциональное совершенство промышленных или иных изделий, продуктов, произведений и др.).

Опираясь на результаты наших исследований, мы составили следующий перечень составляющих общепрофессиональной компетенции (ОПК) арцахского менеджера:

- ✓ способность осознавать социальную значимость своей будущей профессии, обладать мотивацией к осуществлению профессиональной деятельности (ОПК-1);
- ✓ способность применять основные положения и методы социальных, гуманитарных и экономических наук при решении социальных, профессиональных и организационных задач и анализе социально-значимых проблем и процессов (ОПК-2);
- ✓ владение навыками поиска, анализа и использования нормативных и правовых документов в своей профессиональной деятельности (ОПК-3);
- ✓ владение основами речевой профессиональной культуры (ОПК-4);
- ✓ способность нести ответственность за результаты своей профессиональной деятельности (ОПК-5);
- ✓ способность решать стандартные задачи профессиональной деятельности на основе информационной и библиографической культуры с применением информационно-коммуникационных технологий и с учетом основных требований информационной безопасности (ОПК-6).

### **Профессиональные компетенции (ПК) менеджера**

Сегодня формирование профессиональной компетенции является одним из ключевых аспектов подготовки высококвалифицированного специалиста. Мы понимаем ПК менеджера как способность успешно действовать на основе практического опыта, умения и знаний при решении задач профессионального рода деятельности.

В англоязычном профессиональном сообществе часто принято вместо терминов «профессиональные» и «общие компетенции» использовать термин *hard skills* и *soft skills* (жесткие и мягкие навыки). Определение «жесткие» используется потому, что без этих знаний невозможно качественно осуществлять свою профессиональную деятельность. На формирование этих навыков, а особенно высоких уровней этих навыков, уходит много времени и других ресурсов. Именно эти навыки в наибольшей степени влияют на формирование добавленной стоимости компании.

Профессиональные компетенции также оказываются основным параметром, по которому оценивается человеческий и структурный капитал компании. Поскольку интеллектуальная составляющая сегодня оказывается ключевой для успеха компании, практика управления профессиональными компетенциями становится ключевой управленческой дисциплиной, за счет которой компания может не только выживать на рынке, но и самостоятельно влиять на его развитие.

Для развития малой гидроэнергетики в Армении к основным направлениям следует отнести: проведение работ по созданию атласа малых рек с определением сезонных расходов воды, скорости течения на разных уровнях высоты паводков и др. данных; уточнение потенциала гидроэнергетических ресурсов малых рек и существующих инженерных гидросооружений для строительства мини-ГЭС; разработку системы государственного стимулирования внедрения установок малой гидроэнергетики с учетом законодательной и правовой базы для оценки экологического ущерба при строительстве мини-ГЭС.

Министерством энергетики Армении разработан и действует проект «Схема развития малой гидроэнергетики», в который включены малые ГЭС, общей мощностью в 257 МВт и среднегодовой выработкой в 770 млн кВт·ч.

**Солнечная энергетика.** Солнечное излучение не только неисчерпаемый, но и абсолютно чистый источник энергии, обладающий огромным энергетическим потенциалом. Основными технологическими решениями по использованию этой энергии являются: превращение солнечной энергии в электрическую и получение тепловой энергии для целей теплоснабжения.

Солнечная энергия является наиболее мощным и доступным из всех видов нетрадиционных и возобновляемых источников энергии в Армении. Территория Армении (порядка 30 тыс. км<sup>2</sup>) по длительности солнечного сияния обладает значительным потенциалом плотности солнечной мощности, уровнем радиации интенсивности воздействия солнечного облучения, а полученная с подобной площади электроэнергия сопоставима с потреблением всего населения Земли за один год. В Республике Армения в году свыше 300 солнечных дней, но, увы, все они в целях энергетики практически игнорируются.

Наибольшая длительность солнечного сияния наблюдается на равнинных территориях, где горизонт не закрыт горами, в особенности этим отличается Араратская равнина, которая может сравниться с субтропическими зонами Средней Азии. В тёплый период длительность солнечного сияния в Республике составляет 82-87 % от годовой, а длительность солнечного сияния в среднем составляет 58 %. Четвертая часть Республики наделена запасом солнечной энергии в 1850 кВт·ч/м<sup>2</sup> в год.

Руководитель общественной организации «Чистая энергия» Ваге Давтян высказался, что Армения имеет «существенные преимущества для развития солнечной энергетики из-за близости к тропическому поясу», и что среднегодовая величина солнечной энергии на 1 м<sup>2</sup> горизонтальной поверхности составляет 1720 кВт·ч/м<sup>2</sup> (в Европе - 1000кВт·ч/мм<sup>2</sup>). Рекордная продолжительность солнечного сияния в бассейне озера Севан – 2800 часов в году. Доля прямого облучения на территории страны в годовом разрезе также значительна – 65-70 %, что достаточно с точки зрения использования концентрирующих коллекторов. Первую в Армении экспериментальную маломощную солнечную электростанцию (СЭС) планируют построить на берегу озера Севан в городе Мартуни [8].

Стоимость крупной СЭС сегодня доходит до 2,5 тыс. долл. за 1 кВт, т.е. по мощности это вдвое дешевле АЭС. Что же выгоднее, строить новые традиционные электростанции на импортируемом топливе или АВИЭ со своим бесплатным топливом? Мировой опыт свидетельствует в пользу второго варианта. Надо просто решить, сколько электростанций можно позволить себе и найти оптимальные места их расположения. Солнечная станция мощностью 1МВт, при нынешней 15% эффективности преобразования, займет площадь около двух футбольных полей.

**Фотоволновая энергетика.** Перспективность применения фотоэлектрического метода преобразования солнечной энергии обусловлено его максимальной экологической чистотой преобразования, значительным сроком службы фотоэлементов и малыми затратами на их обслуживание. В результате создания новых технологий и повышения технического уровня продукции может быть преодолен барьер, связанный с их высокой стоимостью и будет способствовать внедрению фотоэлектрических систем. Суммарная мощность солнечных батарей возросла в мире в конце прошлого столетия почти до 1 ГВт. Повышение эффективности солнечных элементов существенно снижает затраты на СЭС, которые можно строить любой мощности, практически в любом месте. Согласно прогнозу IEA, в следующие 50 лет основная часть электроэнергии в мире будет производиться за счёт солнечной генерации.

Простота обслуживания, небольшая масса, высокая надёжность и стабильность фотоэлектростанций делает их привлекательными для широкого использования в Армении.

Солнечная энергия в Армении может использоваться не только для производства электроэнергии, но и тепла. Подобными установками занимаются и в Армении. Их внедрение реально при широком распространении в Республике легко сооружаемых и высокоэффективных солнечных коллекторов.

Наиболее перспективными направлениями солнечного теплоснабжения на ближайшую перспективу являются: горячее водоснабжение индивидуальных и коммунальных потребителей сезонных объектов (детские, туристические, спортивные лагеря, объекты санаторно-курортной сферы, жилых и т.д.), главным образом в сельской местности и на берегу озера Севан; отопление малоэтажных жилых домов и промышленных сооружений; использование солнечной энергии в различных сельскохозяйственных производствах (растениеводство в закрытых грунтах, сушка зерна, табака и других сельхозпродуктов и материалов).

Проводимые в Армении НИР, ОКР и техническая подготовка научного потенциала

позволят даже освоить в Армении собственную (пока единственную в регионе) индустрию выпускающую специализированное оборудование для комплектации и строительства установок по использованию солнечной энергии.

**Ветровая энергетика.** Современная ветроэнергетика является одной из наиболее развитых и перспективных отраслей альтернативной энергетики, имеющая ряд преимуществ: экологически чистое производство без вредных отходов; экономию дефицитного дорогостоящего топлива (традиционного и для атомных станций); доступность; практическую неисчерпаемость. В ближайшем будущем ветер будет скорее дополнительным, а не альтернативным источником энергии.

Особо следует отметить, что в странах Европы, Америки, в Японии большинство ветроэнергетических установок (ВЭУ) создано частными объединениями, производственная база которых обеспечивает высокие требования стандартов к качеству изделий, растет единичная мощность ВЭУ и совершенствуются их конструкции.

Территория Армении обладает достаточно большим ветровым потенциалом для строительства ВЭУ, однако серьезные исследования по влиянию крупных ветряных электростанций (ВЭС) на окружающую природную среду в зоне их действия не проведены. Эти вопросы требуют дополнительных исследований и согласований с природоохранными организациями для принятия соответствующих законов. В Армении проведены исследования и составлен атлас ветроресурсов, установлен даже примерный тариф за производимую электроэнергию. Согласно материалу из Википедии, на территории Армении оценка общей мощности особо выгодных ВЭС составляет 490 МВт, подтверждённый мониторингом потенциал оценивается в 175 МВт: Пушкинский перевал – 20МВт / 50 млн кВт ч; Карахачский перевал (Восточное направление) – 90 МВт / 320 млн кВт ч; Сотк (Зодский) перевал -50 МВт / 120 млн кВт ч; Семеновский перевал - 15 МВт / 25 млн кВт ч (мониторинг не завершен); Карахачский перевал (Западное направление) – 125 МВт / 320 млн кВтч; Сисианский перевал – 140 МВт / 420—430 млн кВт ч; Чаренцаванский район – 50 МВт / 45 млн кВт ч.

Следует отметить, что особо выгодными местностями внедрения ветроэнергетики являются: Пушкинский, Джаджурский и Севанский перевалы, гора Арагац, Гегамское нагорье, возвышенность между Сисианом и Горисом, район Мегри (где в среднем минимальная скорость ветра составляет порядка 5-6 м/с, продолжительность потоков ветра доходит до 5200 час/год).

В декабре 2005г. Армении Ираном подарена первая ВЭС на Южном Кавказе (Лорийская область - Пушкинский перевал) «Лори-1», мощностью около 2,5МВт. Вторую предполагается построить на Карахачском перевале, установочная мощность которой будет составлять 20 МВт, с выработкой электроэнергии — 31 млн. кВт·ч в год.

По подсчетам экспертов, построенные в разных регионах республики сетевые ВЭС общей мощностью 1 ГВт смогут вырабатывать около 2 млрд кВт/ч в годовом разрезе.

Развитие ветроэнергетики в Армении обусловлено следующими причинами: дефицитностью традиционных природных невозобновляемых топливно-энергетических ресурсов; критическим состоянием генерирующих источников и неустойчивой работой действующей энергосистемы в целом; высокими экологическими требованиями к энергопроизводящим и топливно-потребляющим источникам; наличием свободных пригодных для размещения объектов ветроэнергетики земельных площадей.

Ветроэнергетика в Армении не может заменить традиционную энергетику, она может только дополнить ее. Необходимо разработать государственную программу развития ветроэнергетики на длительный срок (10—15 лет) во многовариантном исполнении по типам ВЭУ, площадкам, регионам и на тендерной основе определить организацию-исполнителя; создать условия для внедрения ветроэнергетики

(законодательные акты, стандарты, методика, определенные льготы, сертификационные центры, стимулировать частный бизнес на инвестиции, защитить капитал вложенный в ветроэнергетику и т.д.); определить кадастр ветра; финансировать пилотные ВЭУ на перспективных площадках ВЭС.

В современных условиях ветроэнергетика высокочатратна и в ближайшей перспективе не может быть рекомендована для внедрения в больших объемах из-за высокой удельной стоимости, низкого коэффициента использования установленной мощности ВЭУ. В масштабах Армении ориентироваться на применение только одного-двух типов ВЭУ ошибочно по многим причинам (только расчеты и технико-экономическое обоснование могут определить оптимальный тип ВЭУ для каждой площадки).

**Геотермальная энергетика.** За прошедшие 15 лет производство электроэнергии на геотермальных электростанциях в мире значительно выросло. Работы по изучению геотермальных источников и созданию прогрессивных систем для извлечения и практического использования геотермальной энергии проводятся во многих зарубежных странах. Прекрасным примером применения геозенергетики может служить Россия.

В течение предыдущих лет в Армении ограниченными средствами велись работы по изучению геотермических условий недр и оценке ресурсов. Анализ мирового опыта использования геотермальной энергии показывает, что по масштабам использования теплоты недр Армения существенно отстает от многих зарубежных стран. Одной из основных причин является отсутствие достаточных экономических и эффективных технологий извлечения и использования.

По данным Википедия, запасы геотермальной энергии Армении для выработки электроэнергии 150—200 МВт и использование для теплоснабжения, по мнению специалистов, вполне приемлемы. Геологические изыскания позволили обнаружить перспективные геотермальные и минеральные месторождения (Джермахпюр, Сисиан и др). Всемирный банк еще в 2009 году предоставил Армении 1,5 млн долларов на изучение территорий под строительство геотермальных электростанций. Согласно имеющимся данным, наиболее перспективными для строительства являются три местности: Джермахпюр и Каракар в области Сюник, а также и Гридзор в области Гегаркуник. Потенциал Джермахпюрского источника составляет 25-30 МВт мощности и 195 млн. кВт·ч выработки электороэнергии. Это довольно хорошая цифра. По сравнению со всеми остальными ресурсами возобновляемой энергетики, геотермальные ресурсы могут использоваться в течение довольно длительного времени независимо от сезонных факторов.

Для широкого развития геотермальной энергетике в Армении требуется: проведение первоочередных научно-технических работ в следующих направлениях: обоснование ресурсосырьевой базы; организация поисковых геологоразведочных работ; составление кадастров перспективных месторождений; перечня скважин наличия геотермальных ресурсов; проектирование и создание сети геотермальных энергоустановок небольшой мощности.

При дальнейшем развитии теплоснабжения Армении и техническом перевооружении всей теплоэнергетики необходимо также учитывать два основных взаимоисключающих фактора: снижение доли централизации в связи с предполагаемым массовым индивидуальным жилищным строительством, с одной стороны, и необходимость увеличения удельного веса теплофикационной выработки электроэнергии в связи с резким удорожанием органического топлива и возникающими проблемами топливообеспечения – с другой.

**Энергия биомассы.** Значительное развитие получила переработка биомассы, основанная на процессах газификации, теролиза и получения жидких топлив. При переработке биомассы в этанол образуются побочные продукты, прежде всего – промывочные воды и остатки перегонки. Последние являются серьезным источником



экологического загрязнения окружающей среды. Представляют интерес технологии, которые позволяют в процессе очистки этих отходов получать минеральные вещества, используемые в химической промышленности, а также применять их для производства минеральных удобрений.

Получение промышленного биогаза, растительного и животного происхождения, возможно за счет их сбраживания (метанового брожения) с получением метана и обеззараженных органических удобрений. Теплотворная способность 1 куб. м биогаза, состоящего из 50-80% метана и 20-50% углекислого газа, равна 10-24 МДж и эквивалентна 0,7-0,8 кг условного топлива.

Проблемы утилизации твердых бытовых отходов (бытового мусора) остро стоят перед всеми странами. Выход мусора составляет порядка 250–700 кг на душу населения в год, увеличиваясь на 4-6% в год, опережая прирост населения.

Армения обладает всеми необходимыми составляющими для реализации программы Киотского протокола по снижению выбросов в атмосферу парниковых газов, что привлекло внимание Японии. В этом направлении одним из популяризаторов «общения» с альтернативной энергетикой можно считать попытку использования мусора, которая довольно подробно описана Эдуардом Сахиновом в газете «Ноев Ковчег». Совместно с Японией на самой крупной свалке г.Еревана был начат эксперимент, который там же и «похоронили». Япония, после детального изучения материалов, предложила Армении реализовать проект по утилизации свалочного газа, метана, и строительство электростанции, взяв на себя все расходы по строительству и закупке оборудования. Проект стал одним из первых и значительных мероприятий в рамках Киотского протокола и первым в СНГ.

По непонятным причинам мэрия г.Еревана обратилась в Министерство экономики за разъяснениями по поводу целесообразности осуществления проекта, которое в свою очередь обратилось с запросом во Всемирный банк, а последний оценил проект как содержащий высокую «степень риска», с аргументами, вызывающими сомнения о профессиональной компетентности сотрудников этой организации. О каких финансовых рисках для Армении могла идти речь, если она не вкладывала в реализацию проекта ни копейки? Это содействовало началу процесса заморозки и уничтожения проекта. Следует обратить внимание на гениальную мысль автора статьи: «Остается только пожелать, чтобы факел на Нубарашенской свалке твердых бытовых отходов со временем не стал «вечным огнем» слабости государства и символом неосуществленных инноваций на долгие-долгие годы.»

## **СПИСОК ЛИТЕРАТУРЫ**

1. Энергетические ресурсы мира/ под ред. П.С.Непорожного, В.И.Попкова. М., Энергоатомиздат, 1995.
2. Лукунин Б.В., Суржикова О.А., Шандарова Е.Б. Возобновляемая энергетика в децентрализованном электроснабжении. М., Энергоатомиздат, 2008.
3. [https://ru.wikipedia.org/wiki/Энергетика\\_Армении](https://ru.wikipedia.org/wiki/Энергетика_Армении) ;22.06.2016
4. Новое Время 9 апреля 2016г.
5. 89 семинар Парламентской Ассамблеи НАТО “Rose-Roth”, Ер., июнь 2015.
6. [http://armtoday.info/default.asp?Lang=\\_Ru&NewsID=131996](http://armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=131996)
7. <http://club.berkovich-zametki.com/?p=18397> ;22.06.2016
8. В. Одабашян, С. Хачатрян Возобновляемая энергетика в Республике Армения “21-й Век” N2 (6), 2007.

РЕЗЮМЕ

Социально-экономические последствия развития альтернативной энергетики в РА  
Вачаган Хачатурян

Потребности в энергии растут гораздо быстрее прироста ее производства, в связи с чем энергия солнечных лучей, ветра, потока воды, тепла земных недр, большая часть которой игнорировалась, получила новый статус внимания. Общими плюсами «зеленой» энергетики являются неограниченность и требования, отвечающие охране окружающей среды. К недостаткам относятся: привязка генераторов, использующих определенные виды возобновляемой энергии, к определенным территориям; невысокая плотность и непостоянство во времени энергетических потоков и значительные затраты на аккумуляирование энергии. Альтернативные энергоресурсы Армении – это энергия солнца, ветра, биомассы, малых рек и геотермальная. «Зеленая» энергетика на сегодняшний момент, с финансовой точки зрения, проигрывает традиционной и может быть экономически целесообразной только в условиях ее искусственной поддержки, в ряде случаев являясь удачным дополнением к «большой» энергетике.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այլընտրանքային էներգետիկայի զարգացման սոցիալ-տնտեսական հետևանքները  
Հայաստանում  
Վաչագան Խաչատրյան

*Բանալի բառեր` այլընտրանքային վերականգնվող էներգիայի աղբյուրները, «կանաչ» էներգետիկա, արեւային էներգետիկա, արեգակնային ֆոտովոլտայիկ, արեւային կոլեկտորներ, հողմակայան, բիոէներգիա, երկրաջերմային էներգիա:*

Էներգետիկ պահանջներն աճում են շատ ավելի արագ, քան արտադրության աճը, հետևաբար և էներգիան արևից, քամուց, ջրի հոսքից, երկրի ընդերքի ջերմությունը, որի մեծ մասը անտեսված է եղել, հիմա նոր ուշադրության կարգավիճակում են: Ընդհանուր առմամբ` «կանաչ» էներգիայի առավելությունները անսահմանափակ են շրջակա միջավայրի պահպանության պահանջները բավարարելու համար: Նրա թերությունները ներառում են պարտադիր գեներատորների օգտագործում որոշակի տեսակի վերականգնվող էներգետիկայի կոնկրետ ոլորտներում: Էներգիայի հոսքերի ցածր խտությունը և անկայունությունը, և էներգետիկ պահեստավորման զգալի ծախսերը: Այլընտրանքային էներգետիկան Հայաստանում արևային, հողմային, կենսազանգվածի, երկրաջերմային և փոքր գետերն են: «Կանաչ» էներգետիկան այս պահին ֆինանսական տեսանկյունից տանուլ է տալիս ավանդականին, և կարող է տնտեսապես իրազործելի լինել միայն իր արհեստական աջակցությամբ: Ակնհայտ է, որ «կանաչ» էներգիան կարող է որոշ դեպքերում հաջող լրացում լինել «մեծ» էներգետիկային:

SUMMARY

**Socio-economic consequences of alternative energy development in Armenia**  
**Vachagan Khachatryan**

**Keywords:** *alternative renewable energy sources, "green" energy, solar energy, photovoltaics, solar collectors, wind energy, bioenergy, geothermal energy.*

Energy needs grow much faster than the growth in its production, so that the energy of sunlight, wind, water flow, heat of the earth's interior, most of which was ignored, received new attention. The general plus of "green" energy is its unlimitedness and correlation with environmental requirements. Among deficiencies we should mention linking to the generators that apply certain types of renewable energy to certain areas; low density and inconstancy of energy flows, significant costs for energy storage. Alternative energy resources in Armenia are solar energy, wind, biomass, small rivers and geothermal energy. "Green" energy presently, from a financial point of view, relinquishes to traditional, and can be economically feasible only in the conditions of its artificial support, in some cases being a successful addition to the "big" energy.

**ՀՀ ՉՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ԵՆԱԿԵՏ ՈՒՆԵՆԱԼՈՎ ՉՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ\***

**Արթուր Ծպնեցյան**

**Բանալի բառեր՝** գյուղատնտեսություն, համախառն ներքին արդյունք, զբաղվածություն, արտաքին ապրանքաշրջանառություն, գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսական առևտրային կազմակերպություն, գյուղատնտեսական համատարած հաշվառում, տնտեսությունների ներուժ:

*Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունը հանրապետության տնտեսության առաջատար ոլորտներից մեկն է, վերջինիս մասին վկայում են հետևյալ ցուցանիշները: Գյուղատնտեսության ոլորտում, 2015 թվականի տվյալներով ստեղծվել է երկրի համախառն ներքին արդյունքի 17.3 %-ը [1], ոլորտում զբաղված է հանրապետության ամբողջ զբաղվածների 35.3 %-ը[2], հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության կառուցվածքում 22.2 %-ը բաժին է ընկնում գյուղատնտեսական ծագման արտադրանքին, իսկ միայն արրտահանման՝ 26.2 % [3]: Տեղական արտադրության հաշվին ապահովվում է, էներգետիկ արժեքով գնահատված, առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ավելի քան 60 %-ը:*

*Հանրապետությունում գյուղատնտեսությունը, ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, վարվում է 339.2 հազ. գյուղացիական տնտեսությունների և շուրջ 100 գյուղատնտեսական առևտրային կազմակերպությունների միջոցով, մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 1.33 հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում՝ 1.1 հա վարելահող[4]:*

*Գյուղատնտեսական մթերքների բացարձակ գերակշռող մասը՝ 97.2 %-ը, արտադրվում է գյուղացիական տնտեսությունների (ընտանեկան տնտեսությունների) կողմից[5]:*

*Գյուղացիական տնտեսությունների միջին չափը, ըստ էության, չի բնորոշում դրանց իրական ներուժը, դրանց չափերի կառուցվածքը: Վերջին խնդրի լուծմանն էականորեն նպաստում է Հայաստանի Հանրապետության 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալները:*

*Համաձայն գործող մեթոդաբանության և «Գյուղատնտեսական համատարած հաշվառման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի՝ գյուղատնտեսական համատարած հաշվառումն իրենից ներկայացնում է գյուղատնտեսության կառուցվածքի վերաբերյալ համընդգրկուն տվյալների հավաքագրման, մշակման և տարածման վիճակագրական գործառույթ:*

*Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության համատարած հաշվառումն անցկացվել է 2014 թվականի հոկտեմբերի 11-31-ը ներառյալ: Հանրապետությունում գյուղատնտեսական համատարած հաշվառումը անցկացվել է առաջին անգամ և, համաձայն գործող օրենսդրության, այն պետք է իրականացվի տասը տարին մեկ:*

*Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման նպատակներն են[6]*

\* Հոդվածն ընդունվել է 13.02.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտ.դեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Է.Ս.Ղազարյանը:

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

- Գյուղատնտեսության կառուցվածքի՝ գյուղատնտեսական նշանակության հողեր, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակ, գյուղատնտեսական տեխնիկա, գյուղատնտեսական նշանակության շինություններ, առկա ներուժի՝ մարդկային, նյութական և դրա օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը՝ հանրապետական, մարզային և համայնքային կտրվածքով,
- Գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների հաշվառման ամբողջական համակարգի ձևավորումը,
- Գյուղացիական տնտեսությունների վիճակագրական ռեգիստրի ձևավորումը, միջազգային վիճակագրական տվյալների հետ համադրելիության ապահովումը:


Գյուղատնտեսական համատարած հաշվառմամբ հավաքագրված տվյալները հնարավորություն կստեղծեն բարելավելու գյուղատնտեսության ոլորտի ընթացիկ վիճակագրությունը, ձևավորել գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների ամբողջական համակարգ, ձևավորել գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների վիճակագրական ռեգիստրներ, բացահայտել գյուղատնտեսության ենթակառուցվածքների փոփոխությունների միտումները, հստակեցնել գյուղատնտեսության, որպես ձեռնարկատիրության առավել մանրամասն կազմն ու կառուցվածքը:

Գյուղատնտեսության համատարած հաշվառման տվյալները հնարավորություն են տալիս առավել ճշգրիտ գնահատելու գյուղացիական տնտեսությունների չափերը և դրանց ներուժը:

Գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքներով գյուղացիական մեկ տնտեսության չափերը, ըստ հանրապետության մարզերի, էականորեն տարբերվում են նախորդ հաշվառման տվյալներից: Այսպես օրինակ, եթե նախորդ հաշվառման արդյունքներով մեկ գյուղացիական տնտեսության միջին հաշվով բաժին են ընկել 1.33 հա գյուղատնտեսական հողատեսքեր, իսկ գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալներով այն կազմել է 1.48 հա:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից նախորդ հաշվառման և ՀՀ գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքներով գյուղացիական տնտեսությունների (ֆիզիկական անձանց տնտեսությունների) չափերը ըստ մարզերի ներկայացվում է գծապատկերի տեսքով:

Գծապատկերից երևում է, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախորդ հաշվառման տվյալներով ՀՀ մարզերի գերակշռող մասում տնտեսություններն ունեն առավել փոքր չափեր քան ՀՀ գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալներով: Նախորդ հաշվառման տվյալներով մեկ տնտեսության հաշվով առավել մեծ չափ գրանցվել է ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերում:



**Գծապատկեր: Գյուղացիական տնտեսությունների (ֆիզիկական անձանց տնտեսությունների) չափերը ըստ մարզերի**

Գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալներով ֆիզիկական անձի կարգավիճակով տնտեսությունների, դրանցից գյուղատնտեսական հողեր ունեցող տնտեսությունների, պատկանող գյուղատնտեսական հողերի և մեկ տնտեսության հաշվով գյուղատնտեսական հողերի չափը, ըստ մարզերի, ներկայացված է 1-ին աղյուսակում:

Աղյուսակում ներկայացված տվյալները վկայում են, որ վերջիններս էականորեն տարբերվում են նախորդ հաշվառման տվյալներից: Ըստ մարզերի՝ տնտեսությունների չափերը էականորեն տարբերվում են, մասնավորապես՝ միջինից բարձ չափեր ունեն Արագածոտնի (1.99 հա), Գեղարքունիքի (1.69 հա), Լոռու (1.68 հա), Շիրակի (2.54 հա), Սյունիքի (2.01 հա) և Վայոց ձորի (1.76 հա) մարզերը: ՀՀ մարզերից առավել փոքր տնտեսությունների միջին չափ գրանցվել է ՀՀ Արարատի մարզում:

Աղյուսակ 1

**ՀՀ ֆիզիկական անձի կարգավիճակով տնտեսությունների թիվը, դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերը և մեկ տնտեսության պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի չափը ըստ մարզերի[7]**

	Տնտեսություններ, ընդամենը, միավոր	որից՝		Գյուղատնտեսական նշանակության հողեր, ընդամենը, հա	Գյուղատնտեսական նշանակության հողերի միջին չափը մեկ տնտեսության հաշվով
		գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող տնտեսություններ, ընդամենը, միավոր	Գյուղատնտեսական նշանակության հողեր, ընդամենը, հա		
ՀՀ, ընդամենը այդ թվում	360611	345875	513000.21	1.48	
Արագածոտն	31795	30919	61478.55	1.99	
Արարատ	49116	48024	34496.00	0.72	
Արմավիր	41960	39491	56946.82	1.44	
Գեղարքունիք	53639	53356	90233.30	1.69	
Լոռի	37646	35712	59830.64	1.68	

**ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԱՄՈՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

Կոտայք	37764	36211	43843.14	1.21
Շիրակ	31695	30926	78423.74	2.54
Սյունիք	21361	20251	40747.35	2.01
Վայոց ձոր	10384	9969	17531.41	1.76
Տավուշ	35978	33755	29147.27	0.86
ք. Երևան	9273	7262	321.98	0.04

Գյուղացիական տնտեսությունների ներուժի գնահատման համար կարևոր է դիտարկել տնտեսությունների չափերը ըստ կառուցվածքի: Հաշվի առնելով նշվածը կարևոր ենք համարել դիտարկել տնտեսությունների չափերը և դրանց պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերը:

Ստորև ներկայացվում է տնտեսությունների թիվը, ըստ գյուղատնտեսական հողերի չափի, ինչպես նաև դրանց պատկանող գյուղատնտեսական հողերի ընդհանուր չափը և դրանց տեսակարար կշիռները բնութագրող տվյալները (2-րդ աղյուսակ):

Աղյուսակում ներկայացված տվյալները վկայում են հանրապետությունում ամբողջ 345875 տնտեսությունների բաշխումն ըստ չափերի: Տնտեսությունների մեծ մասը՝ 22.68 %-ը, բաժին է ընկնում մինչև 0.1 հա ունեցող տնտեսություններին, այնուհետև մեծ տեսակարար կշիռ ունի 1-1.99 հա չափեր ունեցող տնտեսությունները:

Աղյուսակ 2

**ՀՀ տնտեսությունների թիվը ըստ գյուղատնտեսական հողերի չափի, դրանց պատկանող գյուղատնտեսական հողերի ընդհանուր չափը և տեսակարար կշիռները բնութագրող տվյալները[8]**

Հողերի չափերը, հա	Միավոր	Տեսակարար կշիռը, %	Հեկտար	Տեսակարար կշիռը, %
մինչև 0.1	78447	22.68	3674.82	0.72
0.1-0.19	24461	7.07	3932.04	0.77
0.2-0.49	41391	11.97	16527.30	3.22
0.5-0.99	61971	17.92	51053.72	9.95
1-1.99	69878	20.20	106766.58	20.81
2-2.99	31217	9.03	79859.99	15.57
3-4.99	22295	6.45	89451.23	17.44
5-9.99	12359	3.57	84546.33	16.48
10-19.99	2857	0.83	37728.29	7.35
20-49.99	829	0.24	22202.43	4.33
50-99	119	0.03	8551.33	1.67
100-199	37	0.011	4214.31	0.82
200 և ավել	13	0.004	4491.84	0.88
Ընդամենը	345875	100.00	513000.21	100.00

Նշվածի հետ մեկտեղ այլ պատկեր գոյություն ունի տվյալ տնտեսություններին պատկանող հողատարածքների առումով: Այսպես՝ մինչև 0.1 հա չափեր ունեցող տնտեսությունների թվի 22.63 %-ի պայմաններում դրանց պատկանող գյուղատնտեսական հողերը կազմում են 0.72 %, այսինքն այդ տնտեսությունները ըստ էության ունեն փոքր ներուժ: 0.1-0.19 հա չափեր ունեցող տնտեսությունները, ունենալով տնտեսությունների թվի 7.07 %-ը, դրանց բաժին է ընկնում գյուղատնտեսական հողերի 0.77 %-ը:

Վերջինս հնարավորություն է տվել հանգեցնել որոշակի հետևությունների:

- Մասնավորապես՝ հանրապետությունում գյուղացիական տնտեսությունները ունեն չափազանց փոքր չափեր՝ մինչև 0.1 հա չափեր ունեցող տնտեսությունները կազմում են ընդհանուր տնտեսությունների թվի շուրջ 23.0 %-ը, որոնց բաժին է

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ընկնում տնտեսություններին պատկանող գյուղատնտեսական հողերի չափազանց փոքր մասը: Փաստորեն արտադրության ծավալների առումով այդ տնտեսությունները իրենցից կարևորություն չեն ներկայացնում: Այդ վիճակին մոտ վիճակ գոյություն ունի 0.1-0.19 հա չափեր ունեցող տնտեսությունների համար: Դրանք, ունենալով 7.0 %-ից ավել տեսակարար կշիռ, արտադրական առումով նույնպես շոշափելի նշանակություն չունեն:

- Արտադրական առումով կարևոր են համարվում 1-10 հա չափեր ունեցող տնտեսությունները, որոնց ներուժը հնարավորություն է տալիս ապահովելու արտադրանքի ավելի քան 70.0 %-ը:
- Գյուղացիական տնտեսությունների հաշվառման գործընթացում այլ մոտեցում պետք է ունենալ փոքր տնտեսությունների նկատմամբ, քանի որ դրանք արտադրական էական նշանակություն չեն կարող ունենալ, իսկ հաշվառման գործընթացը կարող է պահանջել մեծ ջանքեր:
- Գյուղացիական տնտեսությունների ներկայիս չափերի պայմաններում հրատապ է տնտեսությունների խոշորացման, համատեղ գործունեությանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը՝ հակառակ դեպքում տնտեսությունների ներուժի օգտագործումը կմնա ներկայիս ցածր մակարդակի վրա:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թվականի հունվար-սեպտեմբեր: ՀՀ ԱՎԾ: Եր., 2016, էջ 9:
2. Նույն տեղում, էջ 14:
3. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: Եր., 2016, էջ 119:
4. Գյուղացիական տնտեսությունների, առևտրային կազմակերպությունների քանակի և դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի մասին, 2006թ. հունվարի 1-ի դրությամբ: ՀՀ ԱՎԾ, Եր., 2006, էջ 3:
5. Վիճակագրական տարեգիրք-2016: ՀՀ ԱՎԾ: Եր., 2016, էջ 295:
6. Հայաստանի Հանրապետության 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները: ՀՀ ԱՎԾ: Եր., 2016, էջ 16
7. Հայաստանի Հանրապետության 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները: ՀՀ ԱՎԾ. Եր., 2016, էջ 31
8. Հաշվարկների համար հիմք է ընդունվել՝ Հայաստանի Հանրապետության 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները: ՀՀ ԱՎԾ: Եր., 2016, էջ 57, 59



ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ գյուղացիական տնտեսությունների չափերը և դրանց ներուժի օգտագործման  
խնդիրները՝ ելակետ ունենալով գյուղատնտեսական համատարած  
հաշվառման արդյունքները  
Արթուր Ծպնեցյան

Հոդվածում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության դերի ներկայացման համատեքստում տրվել է գյուղատնտեսության հիմնական արտադրական միավորների կազմը: Գյուղացիական տնտեսությունների հաշվառման գործընթացում առաջարկվում է ունենալ այլ մոտեցում փոքր տնտեսությունների նկատմամբ, քանի որ դրանք արտադրական էական նշանակություն չեն կարող ունենալ, իսկ հաշվառման գործընթացը կարող է պահանջել մեծ ջանքեր: Գյուղացիական տնտեսությունների ներկայիս չափերի պայմաններում հրատապ է տնտեսությունների խոշորացման, համատեղ գործունեությանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը:

РЕЗЮМЕ

Размеры крестьянских хозяйств Республики Армения и задачи использования их потенциала, принимая за основу результаты всеобщей сельскохозяйственной переписи  
Артур Цпнецян

*Ключевые слова:* сельское хозяйство, внутренний валовый продукт, занятость, внешний товарооборот, крестьянское хозяйство, сельскохозяйственная коммерческая организация, сельскохозяйственные земли, всеобщая сельскохозяйственная перепись, потенциал хозяйств

В статье в контексте представления роли сельского хозяйства в Республике Армения приводится основной состав его производственных единиц. В ходе учета крестьянских хозяйств в отношении малых хозяйств предлагается применить иной подход, поскольку они не могут иметь существенное производственное значение, а сам процесс учета может потребовать приложения больших усилий. В условиях существующих ныне размеров крестьянских хозяйств становится актуальным их укрупнение, осуществление мероприятий, направленных на совместную деятельность.

SUMMARY

The Size of Farms of the Republic of Armenia and the Usage Problems of their Potential having the Results of Agricultural Ubiquitous Accounting as a Basis  
Artur Tspnetsyan

*Keywords:* agriculture, gross domestic product (GDP), activity, external trade, farms, agricultural commercial organization, agricultural ubiquitous accounting, potential of farms

The article presents the group of major industrial units in the context of the role of agriculture in the Republic of Armenia. It is suggested to have another approach to the process of accounting when it comes to small farms, as they cannot have significant industrial importance. The process of accounting may require a lot of efforts. Regarding the present dimensions of farms it is urgent to plan programs to enlarge the farms and provide cooperation with them.

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԲԵՂՄՆԱԿՈՐ ՈւՂԻ  
(մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ՀՀ ՄԳԱ  
ակադեմիկոս ԼԱՎՐԵՆՏԻ ԱՇՈՏԻ ՄԻՐԶՈՅԱՆԻ ծննդյան 67-ամյակի առթիվ)**



*Լրացավ անվանի լեզվաբան և մանկավարժ, Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտի «Օր-Դար» հրատարակչության խմբագիր, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի վաստակաշատ դասախոս, Հայաստանի մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիկոս Լավրենտի Աշոտի Միրզոյանի ծննդյան 67 և լրագրողական գործունեության 55-ամյակը: Գերազանցությամբ ավարտել է Ներքին Կարմիր աղբյուրի միջնակարգ դպրոցը, ապա Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը: 1973-ին ավարտելով բուհը՝*

*նուղեգրվել է սովորելու ասպիրանտուրայում, համատեղությամբ աշխատել ժուռնալիստի-կայի ամբիոնում՝ տարրալուծաբան (լաբորանտ) և միևնույն ժամանակ կատարել «Երևանի համալսարան» թերթի պատասխանատու քարտուղարի պարտականությունները: Թերթում հանդես է եկել տարբեր ծածկանուններով: Կարճ ժամանակ անց հրավիրվել է աշխատելու հանրապետական մամուլում: 1975-ից մինչև 1980թթ. եղել է «Պիոներ կանչ»-ի բաժնի վարիչ, «Ավանգարդ»-ի պատասխանատու քարտուղար՝ ապա խմբագրի տեղակալ, իսկ 1987-ին նշանակվել «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» մանկավարժական ամսագրի գլխավոր խմբագիր: Այդ ժամանակաշրջանում դրսևորվում են երիտասարդ խմբագրի կազմակերպչական ունակությունները. մանկավարժական գիտական հանդեսը համընդհանուր ձանաչման է արժանանում, տպաքանակը հասնում է մոտ 100.000-ի՝ բազմաթիվ բաժանորդներ ունենալով սփյուռքում և ԽՍՀՄ-ում: Կարճ ժամանակում Լ.Միրզոյանը՝ ամենաերիտասարդ խմբագիրը, հրավիրվում է աշխատանքի Հայաստանի Կոմկուսի կենտրոնում՝ որպես գաղափարախոսական բաժնի մամուլի սեկտորի գլխավոր տեսուչ:*

*1990 թվականին Լ.Միրզոյանը ընտրվում է Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր, այնուհետև մշակույթի, լեզվի և լրատվության հանձնաժողովի նախագահ և Երթաղխորհրդի նախագահության անդամ: Լինելով անկախության հանրաքվեի քաղաքային հանձնաժողովի անդամ՝ զգալի աշխատանք է կատարել մայրաքաղաքում, նպաստել նորանկախ հայրենիքի կայացմանը և զարգացմանը:*

*Այդ տարիներին Լ.Միրզոյանը եղել է Հայաստանի հեռուստառադիոպետկոմի ինֆորմացիայի գլխավոր խմբագրության գլխավոր խմբագրի տեղակալ՝ «Լրաբեր» ծրագրի տնօրենը: Մեր երկրի համար այդ դժվար տարիներին մեծ աշխատանք էին կատարում լրաբերցիները, նրանց հետ՝ տնօրենը, ովքեր հայտնվում էին ռազմաճակատի թեժ կետերում, սահմանամերձ գոտիներում, հայրենիքի համար կարևոր իրադարձությունների կիզակետում:*

*Պետական, հասարակական գործունեությանը համընթաց՝ նա հավատարիմ է*

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

մնում իր կոչմանը. հիմնադրում և խմբագրում է «Հայ աշխարհ», «Համայնք», «Էրեբունի», «Քաղաքացիական ծառայություն» թերթերը, «Պայքար» և «Հանրային կառավարում» ամսագրերը:

1998-ին Լ.Միրզոյանը հրավիրվում է աշխատանքի ՀՀ կառավարման դպրոց (այժմ ՀՀ պետական կառավարման ակադեմիա)՝ որպես դասախոս և պրոֆեսոր Էդ. Օրդյանի հիմնադրած «Պետական ծառայություն» հրատարակչության բաժնի պետ՝ գլխավոր խմբագիր: Այդ հրատարակչությամբ մեր հանրապետությունում սկիզբ է դրվում պետական, տեղական ինքնա-կառավարման ոլորտներին վերաբերող գրքերի, ուսումնական դասագրքերի, ձեռնարկների, մեթոդական մշակումների և ուղեցույցների հրատարակչության գործընթացին (հրատարակվել է շուրջ 200 գիրք):

Պրոֆ. Էդ. Օրդյանի հետ համագործակցությամբ՝ հիմնադրվել է Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտի գիտական աշխատանքների ժողովածուն, որի պատասխանատու խմբագրի պարտականությունները կատարում է Լ.Միրզոյանը (լույս է տեսել ժողովածուի 7 հատոր): 2001 թվականին Լ.Միրզոյանը նշանակվել է ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի հրատարակչական գործի գործակալության պետի տեղակալ, 2004թ. մայիսին՝ ՀՀ լեզվի պետական տեսչության պետ: Այս ոլորտներում անգնահատելի են անվանի խմբագրի, հրատարակչի, լեզվաբանի ծառայությունները: Լինելով ՀՀ կառավարության անվանակոչություն-ների, անվանափոխությունների պետական հանձնաժողովի անդամ՝ Լ.Միրզոյանը խմբագրել է «Հայաստանի ազգային ատլաս»-ը (2 հատոր), Երևանի պատմաաշխարհագրական ատլասը, ԼՂՀ ատլասը, «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու»-ն, տառադարձել շուրջ 30 000 աշխարհագրական անուններ, մշակել և գործածության մեջ դրել բազմաթիվ տերմինների հայերեն համարժեքները:

1973-ից մինչև այսօր Լ.Միրզոյանը զբաղվում է նաև մանկավարժությամբ, տարբեր բուհերում՝ ԵՊՀ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում, ՀՀ ՊԿ ակադեմիայում, Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտում: Դասախոսում է «Հայոց լեզու», «Հայոց լեզվի մեթոդիկա», «Գրաբար», «Հայոց մամուլի պատմություն», «Պետական և պաշտոնական լեզու», «Պետական փաստաթղթաշրջանառություն», «Բանակցությունների վարման հմտություններ», «Ժողովների և խորհրդակցությունների վարման կառավարչական մեթոդներ», «Հանրության հետ կապերի կազմակերպում» և այլն: 2010-2011թթ. Միրզոյանը եղել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի պրոռեկտոր, իսկ 2011-2012թթ. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի աշխատակազմի ղեկավարը:

Լ.Միրզոյանը ՀՀ մի շարք բուհերի պրոֆեսոր է, 2006-ին ընտրվել է Հայաստանի մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, մի շարք գիտական հանդեսների և խմբագրական խորհրդների անդամ: Նա Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի «Լրատուի»՝ (գիտական հոդվածների պարբերական ժողովածուի) խմբագրական խորհրդի անդամ է, նույն համալսարանի պատվավոր պրոֆեսոր: Լ. Միրզոյանը ՀՀ ժուռնալիստների միության և Մարզական լրագրողների ֆեդերացիայի անդամ է 1975-ից, ՀՀ ժուռնալիստների միության մրցանակակիր: 2007-ին հանդիսավորությամբ նշվել է ճանաչված մտավորականի ժուռնալիստական գործունեության 45-ամյակը, իսկ 2010-ին՝ Հայաստանում և Արցախում պետականորեն նշվել է ծննդյան 60-ամյակը:

Անվանի լեզվաբան-մանկավարժը մեծ ներդրում ունի Հայաստանում մայրենիի առաջնությունն ու պահպանության, լեզվական քաղաքականության պետական

## **ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

ծրագրի մշակման ու իրականացման, տերմինաշինության, մատաղ սերնդի և երիտասարդության կրթության ու դաստիարակության, գրահրատարակչության, հայ մամուլի զարգացման գործում: Մեծ է նրա վաստակը հայոց լեզվի մեթոդիկայի, հայ մանկավարժության պատմության հետազոտման գործընթացում: Առանձնահատուկ են նրա ուսումնասիրությունները՝ նվիրված Մխիթարյան միա-բանության երևելի այրերին, Երևանին, Տավուշի տարածաշրջանին և այլն:

Լ. Միրզոյանը սերունդներին թողել է մի քանի արժեքավոր գրքեր: Հրատարակել է. «Խոսում են հերոսները» (Երևան, 1984), «Նորացման շնչով» (Երևան 1985), «Առ-ծեռն մայրենի» (Երևան 1992, 1993, 1994, 1995), «Ուղղագրական, հոմանիշների, դարձվածաբանական դպրոցա-կան բառգիրք» (Երևան 1997), «Իմացաբանական շտեմարան» (Երևան 1999), «Երևան» (Երևան 2000), «Գրպանի ուղղագրական բառարան» (Երևան 2002, 2004), «Սխալ և ճիշտ» (2005), «Մանվել Քաջունի» (Երևան 2005), «Հավերժության դողանջներ» (Երևան 2008), «Տավուշ» (Երևան 2010), «Կյանքի ուղե-ցույց» (Երևան 2012), «Կայացման ակնթարթներ» (Երևան 2014), «Տավշո արմատներ» (գրական-մարզամշակութային հանրագիտարան), (Երևան 2016):


Անվանի լեզվաբան-խմբագիրը շուրջ 3000 հոդվածների, հարցազրույցների, մեկ-նաբանությունների հեղինակ է, խմբագրել է մոտ 4000 մամուլ, մշակել մի շարք տեր-մինների հայերեն համարժեքները: Շուտով տպագրության կհանձնվեն Լ.Միրզոյանի և Վ.Մադոյանի «Անգլերեն-Ռուսերեն-Հայերեն պոլիտեխնիկական» 100.000 բառ և հոդ-ված ընգրկող արժեքավոր բառարանը, «Բազմավեպը և մանկավարժության հիմնա-հարցերը», «Երևելի Մխիթարյանները» ուշագրավ գրքերը:

Լավբենտի Միրզոյանը գիտամանկավարժական, լրագրողական և հասարակա-կան բեղմնավոր գործունեության համար արժանացել է բազմաթիվ պարգևների՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ոսկե հուշամեդալ», (2006), ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության «Ոսկե մեդալ» (2007), ՀՀ Ազգային գրադարանի «Հակոբ Մեղապարտ» մեդալ (2009), «Ֆրիտյոֆ Նանսեն» Ոսկե մեդալ (2009), ՀՀ պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհ» (2010), ԵԿՄ-ի «Ոսկե կրծքանշան» (2011), «20-ամյակի մեդալ» (2012): ԼՂՀ պետական՝ «Երախտա-գիտություն» մեդալ (2013), ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Ոսկե մեդալ» (2014):

Մեսրոպ Մաշտոց Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը սրտանց շնորհավորում է վաստակաշատ մտավորականի, հրաշալի մարդու ծննդյան 67-ամյա-կը՝ նրան ցանկանալով երկար տարիների կյանք, առողջություն և գիտամանկավար-ժական ստեղծագործական բեղուն գործունեություն:

**ՄՄՀ «Լրատու» պարբերական ժողովածուի  
խմբագիր, պ.գ.թ., պրոֆ. Արարատ Վարդանյան**

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԲԱԶՄԱՇԵՐՑ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ



1910 թվականին Հ. Թումանյանն իր «Ազգագրական գործը մեզանում» հոդվածում ընդգծել է. «Մեր ազգը, որ աշխարհքի ու Արևելքի ամենահին ազգերից մինն է և ազգագրության տեսակետից հանդիսանում է վերին աստիճանի հետաքրքրական մի աղբյուր ուսումնասիրության, և մեր աշխարհքը, որ մի լիքը թանգարան է ամեն տեսակի կենսադափնիսական, պատմական, կրոնական, բանահյուսական և այլ մեծարժեք նյութերի, տակավին մնում են խավարի մեջ, իրենց փառքերը ավերակների ու հողի տակ, իրենց պարծանքները մոռացության ու անհայտության մեջ: Իրար ետևից, անընդհատ կորչում կամ փչանում են այդ ամենը նոր կյանքի հոսանքների տակ ու նորանոր աղետների մեջ: Սրա համար էլ մեր աչքում մի առանձին նշանակություն է առնում Թիֆլիսի Հայոց Ազգագրական ընկերությունը իր թանգարանով ու հանդիսով, որ հիմնել է պ. Ե. Լալայանը և ան-

դուլ աշխատանքով ձգնում է ծավալել ու ճոխացնել: Այժմ էլ նա նոր է վերադարձել Վասպուրականի կողմերից ու հետը բերել է նոր գանձեր» (Հ. Թումանյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, «Հայաստանե հրատ.», 1969, էջ 109):

Ես, որ երկար տարիներ է, ինչ բուհում դասավանդում եմ «Հայ գրականության պատմություն» առարկան, ամեն անգամ անդրադարձնալով Մեծ Լոռեցու հրապարակախոսությանը, երախտագիտությամբ ու հպարտությամբ նշել եմ. «Մեծ Լոռեցու մարգարեական խոսքը և պահանջը վերաբերում է բոլոր նրանց, ովքեր զբաղվում են հայ ազգագրությամբ»: Միաժամանակ երազել եմ, որ որևէ մեկը կոնկրետ ուսումնասիրի մեր հայրենիքի տարբեր մարզերի արմատները, ստեղծի մեր ժողովրդի տարբեր բնակավայրերի հերոսական - մարտական անցյալի, նրանց նվիրյալ զավակների ժողովրդանվեր գործերի մասին արժանի երկեր:

Ճիշտ է, վերջին տարիներին առանձին գրքեր են տպագրվել հայկական տարբեր գյուղերի մասին, սակայն ընդհանրացված ազգագրական հետազոտություններ չեն ստեղծվել որևէ նահանգի կամ մարզի վերաբերյալ:

Եվ ահա հրապարակի վրա է «Տավճո արմատներ» խորագիրը կրող աննախադեպ մի աշխատություն, որի հեղինակը վաստակաշատ մտավորական, հայոց լեզվի և պատմության նորոտյա քրմերից մեկն է՝ Լավրենտի Աշոտի Միրզոյանը: Գիրքը տպագրվել է 2016-ին, Երևանում, «Լիմուշ» հրատարակչության կողմից:

Ժողովուրդը ժամանակին է գնահատել իր իմաստուն ու մեղվաջան զավակներին՝ նրանց համարելով իր հանձարի ու ակնկալիքների խորհրդանիշն ու ջահակիրը: Ուրախությամբ կարող ենք բարձրաձայնել, որ Լավրենտի Աշոտին մեր ժողովրդի բազմավաստակ նվիրյալներից է: Հայտնի է նրա բեղմնավոր ուղին՝ որպես լրագրող, խմբագիր, քաղաքական - պետական գործիչ, դասախոս, ՀՀ լեզվի պետական տեսչության պետ և այլն: Ընթերցողները ծանոթ են նրա «Խոսում են հերոսները», «Նորացման

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

շնչով», «Առձեռն մայրենի», «Ուղղագրական հոմանիշների, դարձվածաբանական բառգիրք», «Իմացաբանական շտեմարան», «Գրպանի ուղղագրական բառարան», «Մանվել Քաջունի», «Մանվել Քաջունու մանկավարժական ժառանգությունը», «Հավերժության դղանջներ», «Տավուշ», «Կյանքի ուղեցույց», «Կայացման ակնթարթներ» և այլ գրքեր: Նա նաև թերթերում տպագրված ավելի քան 3.000 հոդվածների, հարցազրույցների հեղինակ է:

Եվ օրինաչափ երևույթ ու հայտնություն պետք է համարել ճանաչված այդ մտավորականի «Տավուշ արմատներ» ուսումնասիրությունը՝ աստվածային մի պարզև մեր առօրյա պատմությանն ու դարերին: Ճիշտ է բնութագրել հենց ինքը՝ հեղինակը, աշխատությունը համարելով «Գրական - մարզամշակութային հանրագիտարան»: Շտապենք ընդգծել, որ նման ծավալի ու բազմաբովանդակ հետազոտությունը, որ կատարել է 20 տարիների ընթացքում, երևի այդպիսի որակով չկարողանա կատարել մասնագետների մի ամբողջ կոլեկտիվ: Երևի հենց միայն մեկ հեղինակ, հենց ինքը՝ Լավրենտի Աշոտին պետք է ստեղծեր այդ ոսկե ուլունքաշար - հանրագիտարանը, որի ամեն տողում, պատուհանի մեջ, պատկերների շարքերում ցուցադրեր հմուտ ոսկերիչի իր վարպետությունն ու ոճը, ասելիքի դիպուկությունն ու երանգավորված ձեռագիրը:

Գիրքը նվիրելով Տավուշի մարզի «Իջևան», «Դիլիջան», «Տավուշ» և «Նոյեմբերյան» տարածաշրջանների մտավորականներին՝ գրողներին, դերասաններին, նկարիչներին, ճարտարագետներին, քանդակագործներին, լրագրողներին, բանասացներին, հրատարակիչներին, քաղաքագետ - հասարակագետներին, ճարտասաններին, ժողովրդական վարպետներին, կրթա-մարզական գործիչներին, խորապես համոզվում ես, որ հեղինակը ոչ միայն հպարտության, այլև երախտագիտության սրբազան զգացումներով է մեծարում ու ներկայացնում նրանց, ովքեր ճանաչելի են դարձրել ու դարձնում են Հայաստանի հյուսիսարևելյան չնաշխարհիկ բնօրրանները, ընդհանրության մեջ՝ Հայաստանն ու մեծագործ զավակներ ծնող հայ ժողովրդին:

Թերթելով ստվարածավալ այդ գիրքը՝ սրտանց հիանում ես նյութերի ընտրության, առանձին շարքերի բաժանման ու խորագրերի անվանումների բանիմացությամբ:

Հեղինակը Առաջաբանի փոխարեն գրքի սկզբում տեղադրել է «Նախախոսք» ուղերձը՝ ուղղված հայերենակիցներին, որտեղ նշում է. «Ուր էլ եղել ենք՝ հայրենի բնաշխարհից հեռու թե մոտ, միշտ զգացել ենք մեզ տավուշեցի և հպարտացել ենք մեր արմատներով, հպարտացել Շամշադին - Տավուշով, Իջևան - Քարվանսարայով, Նոյեմբերյան - Բարանայով, Դիլիջանով ու նրա ստեղծագործ ժողովրդով»: (Լ. Միրզոյան, Տավուշ արմատներ, Եր., «Լիմուշ» հրատ., 2016, էջ 5)

Այդ առիթնընդ խոսքից հետո նա տեղադրել է Տավուշի մարզի քարտեզը՝ հետևյալ տեղեկությամբ. Տարածքը՝ 2704 քառ. կմ: Մարզկենտրոնը՝ ք. Իջևան: Ամենաբարձր կետը ծովի մակերևույթից - 2993մ /Միակիր լ.գ./: Ամենացածր կետը ծովի մակարդակից - 379 մ /Դեբեդավան գ./: Բնակչությունը- 132.000 մարդ /առ 01.01.2015թ./: Համայնքների թիվը - 56, սահմանամերձ՝ 46: Բնակավայրերի թիվը - 62, այդ թվում՝ քաղաքներ - 5, գյուղեր - 57: Հանրապետական դպրոցներ - 81: Նախադպրոցական հաստատություններ - 46: Մշակութային հիմնարկներ - 76: Բուհեր՝ 2 պետական, 2 մասնավոր: Մանրածախ առևտրի օբյեկտներ՝ 862:

Դժվար չէ նկատել, որ նման հանրագիտարանային աշխատության համար շատ կարևոր են այս տեղեկությունները, որոնք պարզ պատկերացման հնարավորություն են ընձեռում, թե ինչ է ներկայացնում իրենից Տավուշի մարզը Հայոց աշխարհի համար: Այդ տեղեկատվական խոսքից հետո սկսվում են գրքի շարքերը: Չես կարող գոհունա-

**ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

կույթանք չընդգծել այն երևույթը, որ գիրքը բացվում է «Գեղոն Տավուշի» շարքով: Հեղինակն այստեղ գետեղել է Տավուշին նվիրած բանաստեղծություններ՝ դրանք անվանելով «Գեղոն», այսինքն՝ «գեղգեղանք»: Ընթերցելով այդ չափածո գործերը՝ համոզվում ես, որ Լավրենտի Աշոտին ճիշտ ու տեղին է բնութագրել հայրենի եզերքը փառաբանող երգերը՝ գեղգեղանքները: Հայ բնապաշտական քնարերգության մեջ նշված է հավքերի գեղգեղանքը՝ որպես բնության հանդեպ ունեցած հիացմունքի արտահայտություն: «Գեղոն Տավուշի» շարքը բացվում է Թելման Մայիլյանի «Իջևան» օրհներգով, որտեղ կրկներգը հնչում է այսպես.

Դու իմ օրրան, անամպ իմ սեր,  
Անտառները քեզ վրան,  
Քեզ հետ եմ ես օր ու գիշեր,  
Իմ հին, իմ նոր Իջևան:

Շարքի մեջ ներառված են ավելի քան մեկ տասնյակ սրտառուչ բանաստեղծություններ: Հաճելի է ընդգծել, որ շարքում գետեղված են հայոց գեղարվեստական խոսքի վարպետներ Հ. Սահյանի ու Մ. Մարգարյանի ծոներգերը: Առանձին մի հմայիչ խոսք է Հ. Սահյանի բարձրարվեստ ծոնը, որն ի դեպ, քիչ է հայտնի ընթերցողներին: Դա սովորական ծոն չէ, այլ գորելեն, որտեղ սահյանական երանգներով պատկերված է Տավուշը: Այստեղ Տավուշը որակվում է որպես Անտառաբերդ, Սարաբերդ, Սիրաբերդ, Այգեսար, Այգեանտառ, Այգեբլուր և որդիական խանդաղատանքով ընդհանրացնում.

Ես քեզ զինվոր ասեմ, ես քեզ հնձվոր ասեմ,  
Ուտումնավոր ասեմ և ... հիմնավոր:  
Հիմա ականջդ բեր, էլի մի բան ասեմ  
Խորհուրդով ու խելքով քո բնության-  
Քեզ թանգարան ասեմ և տնկարան ասեմ  
Խոնարհության, խղճի ու բարության:  
Հետո առնեմ ու քեզ աշխարհամեջ հանեմ,  
Սխրանքներդ պատմեմ քո բարբառով...  
Ուր որ գնամ, ինձ հետ զինուդ գավը տանեմ,  
Ես քո լավը տանեմ, քո համբավը տանեմ...  
Ես քո ցավը տանեմ, մնաս բարով:

Ընթերցելով Սահյանի այս աստվածահաճո պատկերը՝ թվում է, թե Լավրենտի Աշոտին իր հոգու պարտքն է համարել իրականացնելու մեծ բանաստեղծի խորհուրդը՝ «Տավուշը աշխարհամեջ հանելու» պատգամով:

Գրքում լեգենդային մի հյուսվածք կարելի է համարել «Տավուշը տավուշցիների և հյուրերի գնահատմամբ» բաժինը: Այստեղ օրհներգային տողերի պես հնչում են Մեծն Մ. Գորկու, ռազմական գործիչներ Դ. Մարդովցևի, Հ. Բաղրամյանի, պատմաբան Կ. Ուրուսյանի, գրող Վ. Անանյանի, ակադեմիկոս Ա. Ալյանյանի, բանաստեղծներ Ն. Զարյանի, Ա. Սահակյանի, Ռ. Դավոյանի, դրամատուրգ Ա. Քալանթարյանի, արձակագիրներ Գ. Դևրիկյանի, Բ. Սեյրանյանի, Յու. Կիրիլովայի և այլ անվանի գործիչների հոգեպարար գնահատականները, որոնցում ծածանվում են բնութագրական թևավոր արժեքումներ. «Սա Շամշադինն է, սա այն երկիրն է, ուր ապրում են միայն քաջերե /ՆՍՀՄ մարշալ Հ. Բաղրամյան/, «Մեծ պատիվ է շամշադինցի լինելը» /ազգային գործիչ Լևոն - Բեկ/, «Դիլիջանի ծորը նման է կուսական անտառների մեջ մեծացած մատաղահաս գեղեցկուհու» /գեղանկարիչ Գ. Բաշինջադյան/, «Օ՛, Տե՛ր Աստված, ինչպես կարող է մարդը ծնվել այսպիսի մի հրաշք երկրում և հոգով բանաստեղծ չլինել» /ՆՍՀՄ ժողովրդական արտիստ Վ. Փափագյան/, «Եթե դրախտում էլ անտառներ լի-

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

նեին, հանքային ջրեր և մաքուր օդ, ապա դրախտը կնմանվեր *Դիլիջանին*» /ՌԴ գրող Յու. Կիրիլովա/:

Աշխարհի բոլոր մեծերը հաստատել են, որ մարդը և իր ծննդավայրի բնությունը նման են իրար, այստեղից էլ այն դիպուկ խորհուրդը՝ եթե ուզում ես արվեստագետին ճանաչել, նախ ճանաչիր նրա բնաշխարհը: Այս կենսափիլիսոփայության իմացությամբ Լավրենտի Աշոտին գրքի հաջորդ բաժիններում ներկայացրել է «Պատմությունը ցայսօր» բաժինը: Այստեղ նա ընթերցողին տանում է դարերի խորքը, ընդգծում այն ճշմարտությունը, որ նրա բնակչությունը տեղաբնակ է, վկայակոչում Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու, Կիրակոս Գանձակեցու հաղորդումները այն մասին, որ «Պատմագրության մեջ տարածաշրջանը ներառվել է Ուտիք և Գարդմանի գավառներում, մի մասը՝ անգամ Տավուշ - Տուշբուշտակի»: Ապա հանդես է բերում Արտաշես Ա-ի օրոք Մեծ Հայքի թագավորությունը, որի մի մասն է կազմել Տավուշի տարածքը, որի պատմական անցյալն առնչվում է նաև Բագրատունիների ազատագրած Հայոց աշխարհի ընթացքին: Հեղինակը բանիմացությամբ ստուգաբանում է մարզի մեջ մտնող տոհմանունների, բնակավայրերի տեղանունների պատմությունը: Վերջնականապես, ինպես գրում է հեղինակը. «1995-ին Հայաստանի Հանրապետությունում ըստ ՀՀ Սահմանադրության, ձևավորվում են մարզեր: Տավուշիմարզում ընդգրկվում են Դիլիջանի, Իջևանի, Տավուշի և Նոյեմբերյանի տարածաշրջանները, Մարզկենտրոն է դառնում Իջևան քաղաքը» (Նույն տեղում, էջ 26):

Հայ ժողովրդի հոգու գեղեցկության, հուզաշխարհի ծիածանագույն հյուսվածքի, գրասիրության, աստվածախոս բարբառի բազմաշերտության, հերոսականության, խաղաղասիրության, հանդուրժողականության, մարդասիրության և այլ բարեմասնությունների հավերժախոս վավերագրություններ են պատմաճարտարապետական հուշարձանները, որոնց մի առանձին բաժին է հատկացված գրքում: Նկարագարող էջերով ու կենսագրական ուղեցույցներով ներկայացված են Գոշավանքը, Խորանաշատը, Հաղարծինը, Մակարավանքը, Նոր Վարագ վանքը, Շխմուրադի վանքը, Տավուշ բերդը և այլ մշակութային - նյութական հուշարձաններ՝ հայագիր, հայախոս, հայաշունչ: Դրանք ոչ միայն Հայոց պատմության խոր անցյալից մեր օրերին հասած Հայկյան եռաթև նետով փրկված, աստվածախոս վկայություններ են, այլև հեռու տափաստաններից ու միջինասիական ավազուտներից Հայաստան ներխուժած վաչկատուն ցեղախմբի՝ ազերի - թուրք վայ պատմաբանների անհերքելի պատասխանն այն ստահող հերյուրանքների, թե իբր հայերը երկվոր են և հայկական հողերը իրենցն է, թե իբր Երևանը, նաև Թիֆլիսը կառուցել են իրենց խաշնարած նախնիները՝ մոռանալով, որ հովվական մահակներով տաճարներ ու քաղաքներ չեն կերտում:

Գրքում մի առանձին, խոսուն պատկերասրահ կարելի է համարել այն նկարագարող բաժինը, որտեղ ներակայացված են Տավուշի բնակավայրերի նորօրյա եկեղեցիները:

Ազգագրական շյոդ վկայություններ են այն պատկերները, որոնք վերաբերում են ժողովրդական տարազներին, արհեստներին, բնության իրաչքներին: Ապագայի հանդեպ հավատո մի հանգանակ է այն էջը, որտեղ լուսանկաններից ժպտում են Տավուշի վաղվա տերերը՝ ծովաչք ու արևահայացք երեխաները:

Պատանական լուրջ ու հավաստի տեղեկություններով ներկայացված են Իջևանին, Դիլիջանին, Բերդին, Նոյեմբերյանին, Այրումին վերաբերող պատումները, Տավուշի մարզի համայնքների կենսագրական համառոտ տվյալները:

Դժվար է գերազանահատել այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Արցախ-Ղարաբաղից Տավուշի մարզ տեղափոխված գյուղերին, հաստատելով այն անհերքելի



## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

իրողությունը, որ Արցախ- Ղարաբաղը եղել է Մայր Հայաստանի անբաժանելի մի մասը: Գրքից իմանում ենք, որ Տավուշի մարզի Այգեստան, Այգեձոր, Արծվաբերդ, Գանձաքար, Գետահովիտ, Լուսաձոր, Ներքին Կարմիրաղբյուր, Չորաթան, Զուջևան, Վերին Կարմիրաղբյուր գյուղերը բնիկ արցախցիներ են՝ տեղափոխված միջին դարերում և 19-րդ դարի սկզբներին: Խոսում - հաճելի փաստ է նաև Տավուշի և Արցախի տարագների նմանությունը, որ կա գրքում:

Աշխատության մեծ մասը «Կենսագրական հանրագիտարան» բաժինն է, որը բացվում է մեսրոպյան գրերի շողարծակումներով: Այբուբենի հերթական յուրովի ակրոստիքոսի ձևով ներկայացված են մարզի գիտության և մշակույթի անվանի գործիչները՝ համառոտ կենսագրություններով:

Ծանոթանալով այդ տվյալներին՝ կրկին ու կրկին հայարտության ծիածանն է կանարվում հոգուդ երկնակամարում, քանզի կարող ես բարձրաձայնել, որ հայ ժողովուրդը արարման երանգներով մի տիեզերք է, աստղաբույլի մայր, որի լույսը ճառագում է ոչ թե ինչ-որ սարի կամ լեռնապարի թիկունքից, այլ հենց իր հոգու խորքից: Կարիք չկա երևակայել, այլ ծանոթանալ գրքի այն էջերին, որտեղից ընթերցողի հետ զրուցում են 876 անվանի մտավորականները, որոնց շնորհիվ ոչ միայն տաղանդավորի անուն է վաստակում Տավուշը, այլև հարստանում և զարգանում է համաշխարհային քաղաքակրթության աստղաշող բաժինը կազմող հայկական մշակույթը:

Հսկայական մի թիվ է կազմում օգտագործված գրականության ցանկը, որից անհրաժեշտ փաստեր է վերցրել գրքի հեղինակը:

Հիացմունքի ու երախտագիտության խոսքին՝ ուղղված գրքի հեղինակին՝ Լավրենտի Աշոտի Միրզոյանին՝ նման դարակազմիկ գիրք ստեղծելու առիթով, միաժամանակ ընթերցողների անունից շնորհակալական խոսք ենք ուղղում գրքի հեղինակի ձեռնարկումին օգնող բոլոր ընկերներին, խմբագիրներին, սրբագրիչ - ոճաբանին նման որակյալ հանրագիտարան գլուխ բերելու համար և առանձնապես տնտեսագիտության թեկնածու Գարիկ Հրայրի Դարբինյանին և Վահրամ Մուշեղի Դարբինյանին, որոնք իրականացրել են մի այնպիսի գրքի տպագրություն, որի տեղն ու դերն ապահովված են ոչ միայն մերօրյա մշակույթի մեջ, այլև Հայոց ապագա Մատենադարանի ոսկեգօծ դարակներում:

**Սոկրատ ԽԱՆՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,**  
**ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ**

## Նոր գիրք ՃԱՐՏԱՐՆ ՈՒ ՃԱՐՏԱՐՑԻՆԵՐԸ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀՈՒՆԿՈՒՅԹՈՒՄ

Վերջերս մեծ հետաքրքրությամբ կարդացի մեր համերկրացի, անվանի գիտնական Սերգեյ Մելքունյանի «Հուշագրություն. մտորումներ, խոհեր» գիրքը, որը խորհելու և մտածելու առիթ տվեց բառի ամենալայն իմաստով: Առաջին հերթին ինձ հուզեց ազգագրության հիմնախնդիրը և նրա զարգացման ու հարստացման ընթացքը մեզանում, կոնկրետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում՝ մեր հերոսական նախնիների սրբազան օրրանում, որի տերերն այսօր մենք ենք, իսկ վաղը լինելու են մեր սերունդները...

Լավ հիշում եմ... Տարիներ առաջ հանդես էի եկել պատմաբան, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Խ. Ղազարյանի «Տումի» ազգագրական աշխատության վերաբերյալ, շնորհավորել, միաժամանակ ընդգծել, որ Արցախի մտավորականները պարտավոր են զարգացնել ու հարստացնել ժողովրդի պատմության համար չափազանց կարևոր այդ բնագավառը:

Այդպես էլ եղավ. լույս ընծայվեցին վաստակավոր մանկավարժ Ն. Ավետիսյանի «Հաղորտի», պատմական գիտությունների դոկտոր Հ. Աբրահամյանի «Քերթ», Փ. Հակոբյանի «Դրմբուն», Ե. Աբրահամյանի «Մեծ Թաղեր», Մ. Բեգլարյանի «Իմ Քարահունջը», Ժ. Գրիգորյանի «Ուլուբաբ», Ս. Մինասյանի «Չափար», Երվանդ և Նինա Աբրահամյանների «Արցախյան դեղաբույսեր» և այլ հեղինակների ազգագրական աշխատությունները: Ասել է թե՛ սկսեցինք ունենալ նկատելի ազգագրություն:

Այստեղ ավելորդ է մեծ համարում համառոտակի անդրադառնալ ազգագրության էությանն ու նշանակությանն ազգերի պատմական ընթացքին ծանոթանալու և ուսումնասիրելու համար: «Ազգագրությունը ժողովուրդների կենցաղը, սովորույթները, ծագումը, տարաբնակեցումը, էթնիկական յուրահատկությունները, պատմամշակութային առնչությունները հետազոտող գիտություն է» (Հայկական սովետական հանրագիտարան, ՀՍՍՀ, ԳԱ, Եր., հ. 1, էջ 103): Պետք է նշել, որ այս իմաստով առավել ակնառու է Հին Հունաստանի գրականությունը: Հերոդոտոսը, Քսենոփոնը, Ստրաբոնը, Պլուտարքոսը, Պլինիոս Ավագը, Տակիտոսը և ուրիշ մեծեր ազգագրական տեղեկություններ են հաղորդել ոչ միայն հույների, այլև հարևան, այդ թվում և հայ ժողովրդի ձևավորման, պատմական ընթացքի, կենցաղավարության և այլնի վերաբերյալ: Ինչ վերաբերում է հայ մշակույթի ներկայացուցիչներին, կարող ենք նշել Ազաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու, Կորյունի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Սեբեոսի, Մովսես Կաղանկատվացու, Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Կիրակոս Գանձակեցու, Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի, Ստեփանոս Օրբելյանի, Առաքել Դավրիժեցու և մեր մյուս պատմիչների երկերը: Հայ ժողովրդի ազգագրության ներկայացման ուղղությամբ ակնառու են միջնադարյան արաբ մատենագիրներ Իդրիսի, Իբն Բատուտայի, Աբուլ Հասանի, Իբն Հաուկալի, Եվրոպացի Մարկո Պոլոյի և մյուսների ձամփորդական նոթերը:

Ազգագրության զարգացման կարևորությունն է թելադրել 19-րդ դարի հայ գործիչներ Մ. Թաղիադյանին, Խ. Աբովյանին, Մ. Բժշկյանին, Մ. Էմինին, Ղ. Ալիշանին, Գ. Սրվանձտյանին, Ե. Լալայանին, Մ. Աբեղյանին, Խ. Սամվելյանին և այլ երախտավորների՝ լծվել կարևոր այդ գործին, որի արդյունքը պատմական մեծ արժեք է և անչափ ուրախացրել է Մեծ Լոռեցուն:

Ճիշտ է, խորհրդային տարիներին բավականին հարստացել է հայկական ազգագրությունը, բայց հայտնի պատճառներով շրջանցվել ու գրեթե մոռացվել է Հայոց Արցախը: Եվ եկել է ժամանակը՝ լուրջ վերաբերմունք ցուցաբերելու այդ կարևոր բնագավառ:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ռի նկատմամբ, առանձնապես մեր օրերում, երբ Ադրբեջանի և՛ քաղաքական, և՛ մտավոր ուժերն ամենուրեք հնչեցնում են իրենց մոզոնած սուտն ու կեղծիքը՝ ոչ միայն Արցախը սեփականելու, այլև Հայաստանը՝ Երևան մայրաքաղաքով, իրենցը համարելու բարբաջանքով:

Այսօր մեր պապերից մեզ ավանդված, մեր հերոս նահատակների արյան գնով փրկված Արցախ աշխարհի պատմական անցյալի, նրա հազարամյակների հավատալույս ուղին նկարագրող յուրաքանչյուր գիրք, գրքույկ, հողված մի-մի ռումբ են մեր երդվյալ թշնամու մտազարության դեմ:

Այս առումով ժամանակին ու տեղին հրապարակված կարևոր խոսք է Ս. Մելքունյանի վերոնշյալ աշխատությունը: Այն սովորական գիրք չէ, բազմաշերտ, բազմերանգ, բազմաբնույթ մի պատում է Հայոց Արցախի բարախուն սրտի առողջ երակներից մեկը հանդիսացող ճարտար գյուղի մասին:

Գիրքը բացվում է ճանաչված լրագրող, պատմաբան, երջանկափոխատակ Սուրեն Ռաշիդյանի բովանդակալից խոսքով, որն սկսվում է հետևյալ իմաստությամբ. «Հացահատիկի արժեքը որոշվում է նրա բերքատվությամբ, մարդու արժեքը՝ այն օգուտով, որ նա կարող է բերել իր մերձավորներին, ... հասարակությանը» (Ս. Մելքունյան, Հուշագրություն, մտորումներ, խոհեր, Եր., 2015, էջ 3):

Իտալիայի մեծ գավակ Ջուզեպե Գարիբալդու այս իմաստուն գնահատականը Ռաշիդյանը վերագրում է նաև այս գրքի հեղինակին՝ բազմավաստակ գիտնական Սերգեյ Մելքունյանին:

Հիրավի, այդպես է: Անվանի գիտնականի անցած բեղմնավոր ուղին կարող է զարդարել ականավոր յուրաքանչյուր մտավորականի գիտագործնական կենսագրությունը: Այդ են վկայում նրա 270 գիտական աշխատանքները, այդ թվում, շուրջ 30 ծավալուն մենագրությունները, դասագրքերը, ուսումնական ձեռնարկները, դրանց գունարած՝ նաև տաղանդավոր գիտնականի մանկավարժական գործունեությունը:

Ս. Մելքունյանի սույն աշխատությունը բազմաշերտ է: Գրքի ինը բաժիններում հեղինակը վերհիշում է իր անցած ուղին՝ մանկությունից մինչև գիտական առատ հունձքի ներկան: Սակայն գնահատելին այն է, որ նրա մանկության և պատանեկության տարիների տխուր և ուրախ, արցունքոտ և հուսավառ պահերը շաղախված են ճարտարքի իր սերնդակիցների միևնույն ապրումներին և ակնկալիքներին: Նշենք, որ նրա աշակերտական այդ տարիներն անցել են Հայրենական մեծ պատերազմի ծանր ժամանակներում, որ պատմության մեջ է մտել որպես ողբերգական ու հերոսական, կորուստների ու համաժողովրդական սխրանքների դարաշրջան: Իր պապի ու տատի, նահատակ հոր ու տառապած աստվածուհի մոր մասին բերված հուշապատումները համաժողովրդական կյանքի հուզիչ պատկերներ են, որոնց միջից հառնում է արցախցու արևակույի կերպարը:

Երախտագիտության ջերմ զգացումների խոսուն հյուսվածքներ են այն հիշողությունները, որոնք վերաբերում են իր անմոռանալի ուսուցիչներ Իսահակ Գրիգորյանին, Ռուբեն Հայրապետյանին, Սուրեն Աղամյանին, Սանջան Հովհաննիսյանին, Արսեն Ստեփանյանին, Լուսիկ Քամայանին և այլոց ու նաև գիտության և մշակույթի ճարտարքի գործիչներին:

Ս. Մելքունյանը կարոտով ու հպարտությամբ է խոսում իր հայրենի գյուղի մասին. ճարտարն Արցախ-Ղարաբաղի հնագույն և խոշորագույն բնակավայրերից է: Իսկ Արցախն ու Արցախի հայությունն այնքան հին են, որքան Հայաստանն ու հայ ժողովուրդը, քանզի Արցախ աշխարհը միշտ եղել է Հայաստանի անբաժանելի մասը: Դեռ ավելին պատմական Հայաստանի նահանգներից մեկը՝ 10-րդ նահանգը հանդիսացող Արցախը,

դարեր շարունակ եղել է կենտրոնական Հայաստանը արևելյան վայրի ցեղերի հաճախակի հարձակումներից պաշտպանող հզոր պատնեշ, անխորտակելի վահան, որին զարնվել, ջարդվել ու հետ են շարտվել օտար նվաճողները: Բազմավաստակ գիտնականը բերում է Արցախի զավակ, խոշոր պատմաբան Լեոյի խոսքը. «Առանց Ղարաբաղի լեռնաստանի անհնարին է երևակայել Հայաստանի սրտի, այն է՝ Արարատյան երկրի պաշտպանությունը հյուսիսային և արևելյան տափաստաններից» (Նույն տեղում, էջ 22):

Գրքում հեղինակը, անդրադարձնալով պատմական փաստերին, նշում է, որ Արցախը որպես Մեծ Հայքի անքակտելի մաս, մշտապես ակտիվ մասնակցություն է ունեցել Հայկական աշխարհը թշնամիներից պաշտպանելու գործընթացին: Արցախի այրուծին նշանակալից հաղթանակ է շահել նաև Ավարայրի ճակատամարտում: Արցախի մելիքներն իրենց զինված ջոկատներով խիզախաբար մարտնչել են թուրքերի դեմ՝ Դավիթ Բեկի ազատագրական պատերազմի ժամանակ: Հանրահայտ է նաև, որ Արցախի կամավորական զինված ջոկատները և արցախցի զորավարները՝ Դանիել Բեկ և Պողոս Բեկ Փիրումյանները, խոշոր դեր են խաղացել օսմանյան թուրքերի դեմ մղված Սարդարապատի ճակատագրական մարտում: Բազմավաստակ գիտնականն իր որդիական սիրտն է բացում հարազատ ծննդավայրի առջև ու նշում, որ նրա հողատարածքները գտնվում են դաշտային Ղարաբաղի սահմանային մասերում, ուստի միշտ եղել են առաջին գծում և մարտնչել հայրենի եզերքներում երևացող վայրի ցեղերի դեմ:

Ճարտարի կամավորական զինված ջոկատները 1918-1920թթ. մեծ օգնություն են ցույց տվել հարևան գյուղերի բնակչությանը՝ Մսնա գյուղի մոտ մասնակցելով թուրքազերիներին ջախջախելու հերոսամարտին: Այդ ճակատամարտին մասնակցած ջոկատներից մեկի հրամանատարը եղել է ապագա գիտնականի հայրը՝ 24-ամյա Ավանես Մելքումյանը:

Գրքի հեղինակն ընդգծում է, որ Ճարտարը միշտ ակնառու տեղ է ունեցել Լեռնային Ղարաբաղի տնտեսության, կրթության, կյանքի տարբեր ասպարեզներում: Նշվում է նաև 1988-1994 թթ. Ղարաբաղյան ազատագրական գոյամարտին Ճարտարցիների ակտիվ մասնակցությունը: Եվ դա պատահական չէ, հաստատում է նա: Հերոսության ավանդները շատ մեծ են: 1941-1945թթ. գերմանական ֆաշիզմի դեմ մղված պատերազմին մասնակցել են 1200 Ճարտարցիներ, որոնցից շուրջ 600-ը չի վերադարձել հեռավոր ափերից: Այդ նահատակների հիշատակին հուշակոթող և թանգարան են կառուցված գյուղի դեմ դիմաց՝ անտառապատ լանջին: Թանգարանի տուֆակերտ պատերին փորագրված են զոհվածների սուրբ անունները: Իսկ 1988-1994թթ. թուրքազերիների դեմ մղված պատերազմում մարտիրոսված հարյուրավոր ազատամարտիկների հիշատակը հավերժացնելու համար հուշարձան է կառուցվել գյուղի կենտրոնում, Ճարտարի տուֆակերտ, հրաշագեղ մշակույթի պալատի մոտ, որտեղ կանգնեցված է նաև Ճարտարի երկար տարիների լեգենդար նախագահ Սուրեն Ադամյանի հուշարձանը:

Ս. Մելքումյանը հպարտությամբ է նշում հարազատ գյուղի յուրաքանչյուր պատվաբեր քայլ կյանքի տարբեր ոլորտներում: Ընդգծում է հայրենակիցների ակտիվ մասնակցությունը 1991թ. սեպտեմբերի 2-ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման գործին:

Ազգագրական տվյալների խոսուն շտեմարան կարելի է համարել սույն գիրքը: Հեղինակը նշում է, որ Ճարտարցիները աչքի են ընկնում մեծին հարգելու, փոքրին սիրելու, հյուրին պատվելու հատկանիշներով, աշխատելու տոկունությամբ, հայրենիքը թշնամուց պաշտպանելու անձնագոհությամբ: Ճարտարցուն բնորոշ է հումորի բարձր զգացումը: Կատակն ու սրամտությունը նրա անբաժան ուղեկիցներն են: Ահա թե ինչու Ճարտարցիներից շատերն ունեն այսպես կոչված «փոթ» անուն: Այսպես՝ Ավանեսին

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

կոչում են Վանես, Սարգսին՝ Սաքի, Հարությունին՝ Թունի, Բագրատին՝ Բագի, Զոհրապին՝ Զոպի, Գաբրիելին՝ Կյապի, Միքայելին՝ Մուքի և այլն:

Ընթերցողը գրքից պարզ պատկերացում է կազմում պատմամշակութային դարավոր առնչությունների մասին: Այսպես՝ մինչև 19-րդ դարի վերջերը Ճարտարը բաղկացած է եղել երկու մասից՝ Գյունե Ճարտար (արևադեմ Ճարտար) և Ղուզե Ճարտար (հյուսիսահայաց Ճարտար): Երկու Ճարտարներն էլ տեղավորված են մի խոշոր լեռնահովտի բարձրադիր մասերում: Ժամանակի ընթացքում երկու Ճարտարների հողատարածքների հարթավայրային մասերում առաջացան նոր բնակավայրեր՝ Գյունե Կալեր և Ղուզե Կալեր անուններով: Այսպիսով՝ միացյալ Ճարտարը 20-րդ դարի սկզբներից բաղկացած է չորս խոշոր մասերից՝ Գյունե Ճարտար և Գյունե Կալեր, Ղուզե Ճարտար և Ղուզե Կալեր: Հետագայում Ճարտարի վարչական, մշակութային, կրթական կենտրոնները հիմնականում կենտրոնացան Գյունե Կալերում և Ղուզե Կալերում, քանի որ արտադրության կազմակերպման, ռելիեֆային ու տրանսպորտային հնարավորությունների առումներով գյուղի այդ հատվածներն ավելի բարենպաստ են: 2010թ. տվյալներով Ճարտարում կա 1048 տուն՝ 4250 բնակիչներով: Ճարտարն ամբողջ Արցախ աշխարհում դեռ հին ժամանակներից փառավոր, բարեկեցիկ կյանքով ապրող գյուղերից է եղել: Ռինգել է եկեղեցիներ, 19-րդ դարի վերջին կազմակերպվել են դպրոց, գինեգործարան և այլ արտադրական ձեռնարկություններ:

Ս. Մելքունյանը գոհունակությամբ է բերում այն փաստը, որ Ճարտարն իր բնակչության թվով, տնտեսության չափանիշներով, հնարավորություններով, կրթության, մշակութային, գիտական կադրերի առանձնահատկություններով յուրահատուկ տեղ ունի Արցախում, որ ԼՂՀ իշխանությունների որոշմամբ այս հանրահայտ բնակավայրին տրվել է քաղաքի կարգավիճակ: 2014 թվականից այն կոչվում է քաղաք: Հեղինակն ուրախությամբ է ընդգծում, որ իր հայրենի Ճարտարը հայ ժողովրդին տվել է 21 գիտության դոկտոր-պրոֆեսոր, այդ թվում՝ Ռուսաստանի ԳԱ ակադեմիկոս:

Գրքի հեղինակը չի ջրջանցում այն անարդար վերաբերմունքն Արցախի հանդեպ, որ ցուցաբերել են ԽՍՀՄ առաջնորդները 1921թ.: Նա գրում է. «Իմ հայրենի գյուղում՝ Ճարտարում, ինչպես նաև ամբողջ Ղարաբաղում, բնակչության թիվը շատ ավելին կլիներ, քան այժմ կա: Խնդիրը կայանում է նրանում, որ Լեռնային Ղարաբաղը 70 տարի գտնվելով թուրք-ազերիների (1918թ. ստեղծված Ադրբեջան կոչվող նորաթուխ հանրապետություն) տիրապետության տակ, ենթարկվել է ամենաստոր, բազում տեսակի ճնշումների, բռնությունների, որի հետևանքով, հատկապես երիտասարդությունը թողնում-հեռանում էր հազարամյակների պատմություն ունեցող իր հայրենիքից» (Նույն տեղում, էջ 33):

Նկատի ունենալով ազգագրության վիճակը՝ Ս. Մելքունյանը նշում է, որ Ճարտարի բնակչության թիվը կարող էր լինել ոչ թե 4250, այլ առնվազն 6500-7000 մարդ: Նա նաև գրում է, որ մինչև 1980-ական թվականները շատ Ճարտարցիներ տարբեր պատճառներով տեղափոխվել և բնակություն են հաստատել Բաքվում: Սոււմգայիթում, Մինգեչաուրում, Գրոզնիում, Հյուսիսային Կովկասի այլ քաղաքներում, Տաշքենդում, Սամարղանդում, Կոկանդում, Երևանում, Հրազդանում, Չարենցավանում և այլուր: Միայն Բաքվում ձևավորվել էր Ճարտարից սերված 600-ից ավելի, Գրոզնիում՝ 450, Երևանում՝ 500-560 ընտանիք: Իսկ Բաքվում, Սոււմգայիթում, Կիրովաբադում, Մինգեչաուրում գտնվող և այլ քաղաքների զարգացման ուղղությամբ վճռական դեր խաղացած բոլոր Ղարաբաղցիները, այդ թվում և Ճարտարցիները, 1988թ. թուրք-ազերիների կողմից բարբարոսական ամենաստոր մեթոդներով ենթարկվեցին ցեղասպանության: Ազերիներն անամոթաբար յուրացրին Ադրբեջանում արցախցիների ունեցած ավելի քան

10 մլրդ դոլարի արժողությամբ կարողություններն ու խնայողությունները:

Ի հեճուկես հարևան թշնամիների՝ Ս. Մելքունյանը կրկին ու կրկին ընդգծում է ճարտարգիների աշխատասիրությունը և նպատակին հասնելու համառությունը:

Գրքի հեղինակը բերում է նաև հարազատ գյուղի տարածքի տեղանունները, Ալաբալի, Կլագին ծոր, Չաղալ, Դուրդուչագ, Շուրխան, Ծարավաճուր, Դուդեն, Ստեփանանց, Շլոր, Գոփուն, Ծլլոկ, Թուզին, Թքեռն, Ննգի անուններով աղբյուրները: Ազգագրական անմոռանալի մի օրինակ է հետևյալ պատկերը. «Դուրդուչագ աղբյուրի մոտ կա մի սալորենի: Այդ աղբյուրի ջրից օգտվողները, հիմնականում կանայք, որպես երախտագիտություն, իրենց թաշկինակները կամ հագուստի որևէ կտոր կապում են անմիջապես աղբյուրի մոտ գտնվող սալորենու ճյուղերից, որի հետևանքով սալորենին զարդարված տոնածառի տեսք է ընդունում: Շատ այցելուներ ծառի տակ թողնում են նաև ծու, մետաղե դրամներ՝ որպես երախտագիտություն... Դուրդուչագը մեզ՝ ճարտարգիներիս համար մնում է որպես սրբավայր» (Նույն տեղում, էջ 35):

Գրքում զգալի տեղ է հատկացված ճարտարի տնտեսական, գիտական, մշակութային և այլ ասպարեզների տաղանդավոր ղեկավարների ու գործիչների կյանքին ու թողած ավանդին: Առանձնապես լուրջ ուշադրություն է դարձված ԽՍՀՄ սոցիալիստական աշխատանքի հերոս Սուրեն Աղամյանի նվաճումներին: Նրա ղեկավարության օրոք սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման են արժանացել դաշտավար-բրիգադավարներ Թևոս Սարգսյանը, Դուկաս Ավանեսյանը, օղակավարներ Մադաթ Առուստամյանը, Դանիել Բաղդասարյանը: Ճարտարի խաղողագործության զարգացման բնագավառում անմոռանալի հետք է թողել գյուղատնտես Զահան Լալայանը: Սուրեն Աղամյանի կենդանության օրոք ճարտար են այցելել Սովետական Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը, գրողներ Սերո Խանգադյանը, Սիլվա Կապուտիկյանը, Մետաքսեն, Լեոնիդ Հուրուցը և ուրիշներ:

Ս. Մելքունյանը ջերմ տողեր է նվիրել ճարտարի զավակ, Հայաստանի քաղաքական ու պետական ականավոր գործիչ Եղիշե Ասատրյանի հայրենասիրական գործունեությանը: Բացի այդ, գրքում նշվում են բոլոր անվանի ճարտարգիների անունները, կոնկրետ գնահատվում նրանց արած-դրածը:

Անվանի գիտնականի հուշերում շնչում ու թևածում է ճարտարն իր սովորույթներով ու ակնկալիքներով: Բերվում են ազգային կերակրատեսակները, աղանձը, թթի չամիչը, թթօղին, գինին և այլն: Հեղինակը չի շրջանցում մարդկային բնավորության ամենաջերմ ապրումը՝ կարոտը ծննդավայրի հանդե: Նա գրում է. «Իմ համոզմամբ, ազգի դեմքը բնորոշողը գյուղն է, որտեղ այսօր էլ պահպանվում են ազգային բոլոր տեսակի սովորույթները, որոնք ազգապահպան հզոր ուժերն են: Եվ որքան էլ երկար տարիներ ապրած լինես քաղաքում, այնուհանդերձ, եթե ծնվել, մանկության ու պատանեկության տարիներն անց ես կացրել գյուղում, անհնար է մոռանալ և շատ հաճախակի չկարոտել քո հարազատ գյուղին, սովորույթներին, շրջապատի բնությանը, աշակերտական ընկերներին: Որքան մարդ ավելի տարիքով է դառնում, այդ կարոտն ավելի է ուժեղանում» (Նույն տեղում, էջ 74):

Գրքի «Ուսանողական տարիներ», «Աշխատանքային գործունեության բարդ ուղի», «Աշխատանք բուհական համակարգում», «Մասնակցություն հասարակական-քաղաքական աշխատանքներին», «Ճանապարհորդություններ, մտորումներ, գիտական համաժողովներին մասնակցություն», «Իմ ընտանիքի մասին» բաժիններում ընթերցողին է ներկայանում մի անհատականություն, որին կարելի է համարել աստվածային նվեր ոչ միայն իր ընտանիքին, գյուղին ու Արցախին, այլև ողջ հայությանը, նրա գիտությանը, բուհական մանկավարժությանը և կենսաթրթիռ ու կենսահաստատ մյուս

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

բնագավառներին: Անհատականություն, որն իր տնտեսագիտության դոկտորներ-պրոֆեսորներ՝ Անահիտ դստեր և ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել որդու հետ մեկտեղ պատիվ են բերում ազգին՝ օրինակ հանդիսանալով նոր սերունդներին:

Գիրքն ավարտվում է «Իմ կենսամատենագրությունը» հատվածով, որը ոչ միայն մատնացույց է անում, այլև խորհրդանշում է ականավոր գիտնականի հարուստ ու զարմանահրաշ ուղին, այլև ժողովրդի արժանապատիվ զավակի ապրելու օրինակելի բանաձևը:

**Սուկրատ ԽԱՆՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,**  
**ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ**

**Մետրոպ Մաշտոց Համալսարանի «Լրատու»-ն 10 տարեկան է.**

Մետրոպ Մաշտոց Համալսարանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոչ պետական առաջին բուհերից է: Այն հիմնադրվել է 1996թվականի հոկտեմբերի 25-ին:

Համալսարանի ուսումնական գործընթացն սկսվել է 1997թ. սեպտեմբերից: 2007թ. բուհը հավատարմագրվել է ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

2006 թվականից համալսարանը հրատարակում է «Գիտական տեղեկագիր» հանդեսը, որը 2007թ. վերանվանվել է «Մետրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու» (գիտական հոդվածների ժողովածու): Այն լույս է տեսնում Մետրոպ Մաշտոց Համալսարանի և Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդների որոշմամբ և ՀՀ - բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից այն ընդգրկվել է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում:

2006թ. լույս է տեսել մեկ համար (խմբագիր՝ ֆիզ.մաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ Սյոմա Մարիանյան), 2007-ին երկու համար (խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Անահիտ Աթայան): 2008-ից առ այսօր «Լրատուի» խմբագիրն է պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արարատ Վարդանյանը: Սկսած 2006թ-ից՝ «Լրատուն» տպագրվում էր կամ Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» կամ Երևանի «Լիմուշ» գրահրատարակչություններում և միայն 2008թ. տպագրվել էր Ստեփանակերտի «Պոլիգրաֆ» հրատարակչությունում:

Ներկայումս այն նորից հրատարակվում է Երևանի «Լիմուշ» տպարանում:

«Լրատուն» ունեցել է և ունի շատ բարեկամներ: Պարբերական ժողովածուի խմբագրական խորհրդի կազմում ընդգրկված են ճանաչված և մեծ հեղինակություն վայելող գիտնականներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Սերգեյ Սարինյանը և Ռուբեն Սաֆրաստյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Հովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը, ՀՊՏՀ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանը, ՀՊՄՀ ռեկտոր, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղայանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը, միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանը, սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արթուր Մկրտչյանը, ԱրՊՀ հայոց լեզվի, գրականության և օտար լեզուների ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Էլենուրա Հայրապետյանը, ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Ավետիսյանը, քաղաքացիական իրավունքի ամբիոնի պատվավոր վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տարիել Բարսեղյանը, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Ծաղիկյանը, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր, Սոկրատ Խանյանը, ԵՊՀ միջազգային հարաբերություն-



**ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

ների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչ, պատմագիտության թեկնածու, դոցենտ Վահրամ Պետրոսյանը, ՀՀ ՊԿ ակադեմիայի «Պետական ծառայություն» հրատարակչության գլխավոր խմբագիր, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լավրենտի Միրզոյանը, ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Լուսինե Ղարախանյանը: Խմբագրական խորհրդի նախագահն է ՄՄՀ ռեկտոր, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Դոնարա Գաբրիելյանը:

Տասնամյակի (2006-2016թթ.) ընթացքում «Լրատուի» 18 համարում տպագրվել է շուրջ 600 հոդված և գրախոսություն (հայերեն, ռուսերեն և անգլերեն): Լրատուի հոդվածագիրների աշխարհագրությունը մեծասխյուռ է: Համալսարանի դասախոսներից, ասպիրանտներից ու հայցորդներից բացի՝ Արցախի պետական համալսարանի, ՀՀ և արտասահմանյան մի շարք երկրների (Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Վրաստանի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության) ուսումնասիրողների հոդվածներն են ընդգրկվել ժողովածուի ցանկում:

Տասնամյա այդ ճանապարհն արտոնում է մեզ վստահորեն ասելու, որ պարբերականն իր նշանակալի դերն ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գիտակրթական կյանքում և ուրույն դերակատարում՝ ԼԴՀ միջազգային ճանաչման գործընթացում:

«Լրատու» պարբերականի գլխավոր խմբագիր  
Ա.Վ. Վարդանյան

\* \* \* \*

Արտանց շնորհավորում են «Մետրոպ Մաշտոց համալսարանի Լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածուի հրատարակման 10-ամյակի կապակցությամբ:

Օրինակելի ավանդույթներ ունեցող Արցախի կրթական ու գիտական համակարգի դեպքում անչափ կարեւոր է գիտությամբ զբաղվող մարդկանց համար համապատասխան պայմանների ստեղծումը, երբ նրանք կարող են հանրությանն ու շահագրգիռ շրջանակներին ներկայացնել իրենց հետազոտությունների արդյունքները: Մեր օրերում, այդ պահանջված գործը մի հիմնական մասով իր վրա է վերցրել «Մետրոպ Մաշտոց համալսարանի Լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածուն:

Անցած տարիներին համալսարանի ղեկավարությանը հաջողվել է ժողովածուի խմբագրական խորհրդի կազմում միավորել հայկական գիտական հանրության մեջ ճանաչված գիտնականների, ինչը լուրջ նախապայման է հանդեսի գիտական ու ներկայացուցչական մակարդակն ապահովելու համար: Պարբերականում արժանվող թեմաները մեծամասամբ հումանիտար գիտությունների շարքից են եւ ամբողջովին համապատասխանում են գլխավոր չափանիշին. դրանք արդիական են ու օգտակար ոչ միայն բուհի գիտաուսումնական գործընթացի կազմակերպման, այլեւ գիտության ոլորտում առաջին քայլերն անող ուսանողների ստեղծագործ մտածողության ու իրենց մասնագիտության հանդեպ հետաքրքրության խթանման համար:

Հավատարիմ լինելով գիտական հանդեսի կոչմանը՝ «Լրատուն» այսօր իր արժանի տեղն է զբաղեցնում Արցախի Հանրապետության գիտական հետազոտությունների հրատարակչության ոլորտում, իսկ գիտական հոդվածների հեղինակների աշխարհագ-

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

րության ու տարիքային կազմի բազմազանությունը վստահություն ու լավատեսություն է ներշնչում պարբերականի ապագայի վերաբերյալ:

Պետք է հուսալ, որ «Լրատուն» կշարունակի հետետողական լինել իր ստանձնած պատասխանատվության ճանապարհին՝ ապահովելով 25-ամյա երիտասարդ հանրապետության հեռանկարային գիտական ներուժի ելքը դեպի միջազգային հարթակներ:

Վերստին շնորհավորում եմ «Լրատուի» բոլոր հեղինակներին ու պատասխանատուներին՝ 10-ամյա հորեյանի առթիվ եւ մաղթում գիտական ու ստեղծագործական նորանոր վերելքներ:

*ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյան*

\* \* \* \*

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ և «Լրատու» գիտական տեղեկագրի խմբագրական խորհրդին տեղեկագրի 10-ամյակի առթիվ:

Մենք ուրախությամբ ենք նշում, որ Արցախում արդեն 10 տարի տպագրվում է գիտական հոդվածների այդպիսի ժողովածու, որը կարևոր նշանակություն ունի Արցախում գիտության զարգացման և մասնավորապես երիտասարդ գիտնականների կայացման գործում:

Պետք է նկատել, որ տեղեկագիրը սկսեց տպագրվել երկրի համար բավական բարդ ժամանակներում, բայց և կարճ ժամկետում Ձեր և խմբագրական խորհրդի նվիրական ու հետևողական աշխատանքի շնորհիվ ձեռք բերեց հեղինակություն տեղի և արտերկրի գիտական շրջանակներում:

Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու» գիտական տեղեկագրի 10 տարիների փորձը թույլ է տալիս համոզված ասել, որ այն կենսունակ է, ժամանակին համահունչ և ունի բավական ներուժ՝ խթանելու երկրում գիտական հետազոտությունների աճը, նպաստելու արցախցի գիտնականների նորարարությունների ամրագրմանը գիտության միջազգային թատերաբեմում:

Կրկին շնորհավորում ենք հորեյանական տարեդարձի առթիվ և մաղթում բեղմնավոր ու կանաչ ճանապարհ:

*ԼՂՀ ԿԳՍ նախարար Սլավա Ասրյան*

\* \* \* \*

*Հարգելի տիկին Գաբրիելյան,  
Հարգելի պարոն Վարդանյան,*

Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու» գիտական հոդվածների ժողովածուի խմբագրական խորհրդի անդամ հարգելի՛ գործընկերներ,

Երևանի պետական համալսարանի անունից ջերմորեն շնորհավորում եմ Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի «Լրատու» գիտական հոդվածների ժողովածուի լույս ընծայման տասնամյակի կապակցությամբ:

Անկախ պետականության երիտասարդ տարիքում գտնվող հայկական երկու պետությունների Հայաստանի և Արցախի հանրապետությունների համար անչափ կարևոր նշանակություն ունի կենսագործունեության տարբեր ոլորտներում իրականացվող քաղաքականության գիտատեսական հիմքերն ստեղծելը: Այս տեսանկյունից

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

գոհունակությամբ կարող ենք նշել, որ իր տասնամյակը բոլորած «Լրատու» ժողովածուն գիտական արժեքավոր ստեղծագործությունների հանրայնացման նոր, բայց և հեղինակավոր հարթակ է հանդիսանում:

Խմբագրական խորհրդի անդամների արհեստավարժության, խմբագրության ու հրատարակության համար պատասխանատու բոլոր անձանց նախանձախնդիր մոտեցումների հանգամանքներով պայմանավորված՝ ժողովածուում տեղ են գտնում այդպիսի, գիտական պատշաճ մշակման ենթարկված ու արժեք ներկայացնող հոդվածներ: Ուրախ ենք, որ 2006 թվականին հիմնադրված ու Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ հրատարակվող «Լրատու» ժողովածուն նշանակալից մուտք ունեցավ հայկական գիտական պարբերական հրատարակությունների ասպարեզ և հետագա տարիներին ու ցայսօր գրանցեց հաջողություններ ու զարգացրեց դրանք: Լիահույս ենք ժողովածուի հետագա հաջող ընթացքի և այդ ընթացքով Արցախը միջազգային քաղաքակիրթ հանրությանը ճանաչելի դարձնելու հարցում: Ուստի մեր անկեղծ փափագն է՝ տեսնել հայկական այս բարեհամբավ պարբերականի հաջողությունների տարեց տարի աճն ու ընդլայնումը:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի «Լրատու» գիտական հոդվածների ժողովածուի լույս ընծայման տասներորդ տարեդարձի կապակցությամբ, մաղթում բարի ու անխոչընդոտ երթ:

Ա.Հ. Սիմոնյան

ԵՊՀ ռեկտոր,

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր

\* \* \* \*

«Լրատու» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի հարգարժան նախագահ,  
Հարգելի խմբագիր, խմբագրական խորհրդի պատվարժան անդամներ,  
Սիրելի հոդվածագիրներ,

Շնորհավորում եմ ձեզ «Լրատուի» հոբելյանական տարեդարձի առիթով: Գիտական հոդվածների այդ ժողովածուն Արցախի գիտական ու կրթական կյանքի արժանավոր խոսսափողն է: Իր համեստ կենսագրությամբ ու անցած ճանապարհով այն այսօր հպարտանալիք ունի, որովհետև ընդգրկված է ու ճանաչելի է հայ գիտական կյանքում:

Այն ոչ միայն Արցախի գիտական ներուժի արտահայտիչն է, այլև մեր՝ Մայր Հայրենիքում արարող գործիչներիս ուսումնասիրությունների, գիտական կյանքի նորույթների արձանագրողը:

Հանդեսը լավագույն հարթակ է երիտասարդ գիտնականների հնարավորությունների դրսևորման համար, և կարևոր է, որ միշտ ուղղորդողը փորձառու գիտնականների երաշխավորությունն է ու նրանց հետ նույն հանդեսում ներկայանալու պատիվը:

Խմբագրական խորհրդին ու հոդվածագիրներին մաղթում եմ գիտական բեղուն գործունեություն, իսկ հանդեսին՝ հայ գիտակրթական կյանքում առաջատար լինելու մղում ու պատասխանատվություն:

Աշոտ Մելքոնյան

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն,

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

\* \* \* \*

Մեծարգո պարոն Վարդանյան,  
Շնորհավորում եմ Մեսրոպ Մաշտոց Համալսարանի «ԼՐԱՏՈՒ» գիտական հոդ-  
վածների պարբերական ժողովածուի 10-րդ տարեդարձի առթիվ:

Շատ կարճ ժամանակահատվածում «ԼՐԱՏՈՒ»-ն կարողացավ ներգրավել ինչ-  
պես ճանաչված, այնպես էլ երիտասարդ տաղանդաշատ հեղինակների, որոնք իրենց  
հրապարակումներով կարևոր ներդրում են բերում Հայոց գիտության բնագավառում:

Լիառույս եմ, որ Ձեր հմուտ ղեկավարության ներքո «ԼՐԱՏՈՒ»-ն մոտակա տարի-  
ների ձեռք կբերի գիտական ավելի մեծ հեղինակություն:

Ռուբեն Սաֆրաստյան  
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
տնօրենի պաշտոնակատար,  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

\* \* \* \*

Ի սրտե շնորհավորում եմ «Լրատու» գիտական հանդեսի տասնամյա հոբելյանը:  
Անձնական հաճույքի բարձր զգացումով եմ նշում հանդեսի բացառիկ նվիրումը Արցա-  
խի գիտական մտքի զարգացման գործին: Ընդգրկելով գիտության զրեթե բոլոր բնա-  
գավառների փորձառությունը՝ հանդեսը խորապես նպաստել է տեղական կադրերի  
պատրաստման և ինտելեկտուալ դաշտ կազմավորելու նպատակին: Ըստ արժան-  
վույն գնահատելի է եռայեզու հանդեսի ձգտումը արցախյան միտքը համաշխարհային  
գիտական նորույթներին հաղորդակցելու ուղղությամբ:

Ստեղծագործական նորանոր որոնումներ եմ մաղթում «Լրատու» հանդեսի աշ-  
խատակազմին:

Կեցցե՛ հավերժորեն նախակերտ Արցախյան Հանրապետությունը:

ՍԵՐՉԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

\* \* \* \*

Հարգելի՛ գործընկերներ ողջունում եմ ձեզ պարբերականի տասնամյակի առի-  
թով: Յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատության գիտակրթական  
կյանքի կազմակերպվածության մակարդակը գնահատվում է նրա գիտական հրատա-  
րակություններով: Դա նաև հնարավորություն է տալիս բացահայտելու տվյալ բուհի  
գիտական ներուժը: Տասնամյակը դեռևս փոքր տարիք է գիտական պարբերականի  
գնահատության համար, բայց «Լրատու» հանդեսն այսօր գիտական ժողովածուների  
շարքում իր տեղն ունի, ու այդ տեղն առանձնահատուկ է նրանով, որ ներկայացնում է  
նախ և առաջ Արցախի գիտական միտքը, ու այդպիսով արցախյանը մաս դարձնում ոչ  
միայն հայ ընդհանուր գիտական մտքին, այլև այն ճանաչելի դարձնում միջազգային  
հանրությանը:

Շնորհավորում եմ ձեզ, խմբագրական խորհրդի բոլոր անդամներին ու հոդվածա-

**ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

գիրներին, մաղթում գիտական արգասաբեր ուղի, ու թող գիտական հանրության համար «Լրատուն» միշտ լինի Արցախի գիտական կյանքի բանբերը:

Լավրենտի Շահենի Հովհաննիսյան  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

\* \* \* \*

Հարգելի՛ գործընկերներ, ի սրտե շնորհավորում եմ ձեր հանդեսի 10-ամյակը և մաղթում ձեզ արգասաբեր գործունեություն և նորանոր տասնամյակներ, որոնք կնշանավորվեն բարձր գիտականությամբ, արդիականությամբ ու նորույթով, նորանոր հանդեսների լույսընծայմամբ՝ հարստացնելով հայ գիտական միտքն ու նրա զարգացման տարեգրությունը:

Որպես ձեր գործունեության անմիջական մասնակից և ընթերցող՝ ես բարձր եմ գնահատում այն վիթխարի աշխատանքը, որը կատարում էք անխոնջ ու հետևողական կերպով, մնայուն ու պիտանի արժեք ստեղծելու մեծ ձգտմամբ:

Թող գալիք տասնամյակներում ձեր գործունեությունը լինի նույնքան նպատակամետ, հարիր այն առաքելությանն ու կոչմանը, որ ստանձնել էք, ինչպես նաև չկորցնի իր ասելիքն ու թարմությունը՝ մնալով միշտ որոնող, բացահայտող, առաջընթաց կերտող:

Շնորհավոր լինի այն ծնունդը, որը կոչված է ծառայելու գիտությանը, կրթությանը, սերունդներին և մեր հայրենիքին:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ  
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

\* \* \* \*

Հարգելի՛ գործընկերներ, Արցախի պետական համալսարանի անունից շնորհավորում եմ «Մետրոպ Մաշտոց համալսարանի լրատու» գիտական հոդվածների ժողովածուի 10-ամյակը և ցանկանում արգասաբեր գործունեություն ու բեղմնավոր գրիչ:

Գիտություն տարածելը, քարոզելը նույնքան կարևոր է, որքան գիտական արժեք ստեղծելը:

Արցախում միշտ բարձր են գնահատել կրթության և գիտության դերը՝ պաշտամունքի առարկա դարձնելով դրանք սերմանողներին: Պատահական չէ, որ ցանկացած գիտական հրապարակում իր ծանրակշիռ ավանդն ունի մեր երիտասարդ պետության զարգացման գործում:

Թող ապագայում ևս ձեր գործունեությունը լինի նույնքան հանրահայտ, տարեցտարի գրանցի նոր հաջողություններ:

Իրավամբ կարող ենք նշել, որ «Լրատու»-ն այսօր գիտական ժողովածուների շարքում ունի իր ուրույն տեղը և գիտական արժեքավոր ստեղծագործությունների հանրայնացման յուրօրինակ հարթակ է հանդիսանում:

Մաղթում եմ բազում տասնամյակներ հայրենի գիտական ասպարեզում, աննկուն կամք, հետագա նվաճումներ և, իհարկե, հավատարիմ ընթերցողներ:

Մ.Մ.Մինասյան  
ԱրՊՀ ռեկտոր, տ.գ.թ., դոցենտ

\* \* \* \*

Դժվար է գերազհանատել «Լրատուի» տասը տարվա գործունեությունը, նրա անուրանալի դերն ու նշանակությունը կրթության և գիտության ոլորտի զարգացմանը նպաստելու գործում: Տարիներ շարունակ «Լրատուն» նպաստել է գիտական մտքի զարգացմանը՝ իր էջերում մշտապես գետնդեղնով հողվածներ գիտության գրեթե բոլոր ուղղություններով: Պարբերականում տպագրվում են պատմության, քաղաքագիտության, լեզվաբանության, փիլիսոփայության, իրավունքի, հոգեբանության, տնտեսագիտության, կրթության, մանկավարժության և այլ բնագավառների վերաբերյալ գիտական ուսումնասիրություններ, որոնցում արժաժվում են գիտության արդի հիմնխնդիրները:

«Լրատուի» դերը հատկապես կարևոր է երիտասարդության շրջանում գիտության հանդեպ հետաքրքրություն առաջացնելու, նրանց դեպի գիտության դեռևս չնվաճված տարածքները մղելու առումով:

Վստահ եմ, որ «Լրատուի» խմբագրակազմը այսուհետ ևս կլինի իր բարձրության վրա՝ շարունակելով հրատարակել հետաքրքիր ու բովանդակալից և գիտական շրջաններում պահանջված գիտական հանդեսը:

Կրկին շնորհավորելով պարբերականի տասնամյակի կապակցությամբ՝ «Լրատուին» մաղթում եմ երկարակեցություն ու բազում հետաքրքիր նյութեր, իսկ խմբագրական խորհրդին՝ արգասաբեր աշխատանք՝ ի փառս հայրենի գիտության:

ՀՀ պետական կառավարման ակադեմիա ռեկտոր  
Ա.Լոքյան

\* \* \* \*

Մեծարգո՝ տիկին Դոնարա Գաբրիելյան

Անձամբ Ձեր և Ձեր համախոհների ջանքերով «Մեսրոպ Մաշտոց» համալսարանը կայացավ որպես լիարժեք բարձրագույն ուսումնական հաստատություն: Անցած քսան տարիների ընթացքում Ձեր ղեկավարած բուհը յոթ մասնագիտությունների գծով պատրաստել է որակյալ կադրեր, որոնք աշխատում են ԼՂՀ և ՀՀ տարբեր պետական և մասնավոր հաստատություններում:

Ձեր ղեկավարած բուհն առաջինն էր Արցախի Հանրապետության բուհերից, որ մասնակցեց Եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելու աշխատանքներին: Շնորհիվ բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, գիտելիքասեր երիտասարդության՝ «Մեսրոպ Մաշտոց» համալսարանն աշխարհին ցույց տվեց, որ արցախցին ոչ միայն լավ զինվոր է, այլև լավ գիտնական ու քաղաքացի:

Համալսարանը արժանապատվորեն ներկայացվել է Եվրոպայում, Ռուսաստանի Դաշնությունում, Հայաստանի Հանրապետությունում: Համալսարանի դասախոսները և ուսանողները մասնակցել են Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Բուլղարիայում և Միացյալ Նահանգներում կազմակերպված տարբեր կոնֆերանսների և ֆորումների:

2006թ-ից Ձեր տնօրինած համալսարանը հրատարակում է «Լրատու» գիտական հողվածների ժողովածուն, որում հրատարակվում են բուհի դասախոսների, ասպիրանտների և գիտության ուղին բռնած ուսանողների գիտական հողվածները: Ողջունելի է հատկապես այն հանգամանքը, որ ժողովածուն լույս է տեսնում ոչ միայն հայերեն,

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

այլև ռուսերեն և անգլերեն, ինչն օտարալեզու ընթերցողներին հնարավորություն է տալիս ծանոթանալու հոդվածներին:

Շնորհավորելով «Լրատուի» հոբելյանական տարեդարձը՝ մաղթում եմ բազում նորանոր համարներ՝ հագեցած գիտության հորիզոնները նվաճել պատրաստվող հեղինակների հոդվածներով և Արցախ աշխարհի խաղաղության ձեռքբերման գրավականների մասին բացահայտումներով:

Ժորա Զհանգիրյան  
Երևանի «Գլաժոր» համալսարանի ռեկտոր,  
իր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

\* \* \* \*

Հարգարժան տիկին Դոնարա Մերգեյի,

ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդի, պրոֆեսորադասախոսական կազմի և անձամբ իմ անունից շնորհավորում եմք Ձեր կողմից հիմնադրած գիտական հոդվածների ժողովածու՝ «Լրատուի» 10-րդ տարեդարձը:

Անշուշտ, մեծ է «Լրատուի» հրատարակման դերը Արցախի գիտակրթական առաջընթացի, միջհանրապետական կրթամշակութային կապերի ամրապնդման գործում:

Գնահատելով Ձեր և խմբագրական կազմի տքնաջան աշխատանքը՝ մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, գիտամանկավարժական, ստեղծագործական արգասաբեր գործունեություն՝ ի փառս մեր հայրենիքի բարգավաճման ու հզորացման:

Վ.Տ. Հայրապետյան  
ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն

\* \* \* \*

Մեսրոպ Մաշտոց Համալսարանի ռեկտոր՝ Դ.Ս. Գաբրիելյանին

Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կոլեկտիվը ջերմորեն շնորհավորում է «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածուի հրատարակման 10-ամյակի առթիվ:

Ձեր հետևողական և խորիմաստ գործունեության շնորհիվ պարբերականը արժանի համբավ է ձեռք բերել ՀՀ կրթական հաստատություններում ներկայացված նյութերի գիտական արդիականությամբ, որը, անշուշտ, հակված է խորացնելու ուսանողների մասնագիտական գիտելիքները՝ որոշակի հետաքրքրություն առաջացնելով դասախոսների և գիտությամբ զբաղվողների շրջանում:

Հավաստիացնում եմ, որ այսուհետ ևս ձեռնամուխ եմք լինելու ընդլայնելու համագործակցությունը մեր հաստատությունների միջև:

Թող անսպառ լինի Ձեր ստեղծագործական եռանդը և ոգու անսանձելի երիտասարդությունը:

Լ.Ա. Ալավերդյան  
Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի տնօրեն

\* \* \* \*

Հարգելի՛ պարոն Վարդանյան,

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ և «Մետրոպ Մաշտոց համալսարանի լրատու» գիտական հոդվածների ժողովածուի ողջ խմբագրակազմին՝ հանդեսի 10-րդ տարեդարձի առթիվ: Բարձր եմ գնահատում Ձեր կատարած աշխատանքը պատմագիտության և իրավագիտության, բանասիրության, մանկավարժություն և մեթոդիկայի, միջազգային հարաբերությունների, փիլիսոփայության և այլ գիտական ոլորտների ուսումնասիրության շրջանում, ինչը, իրավամբ, մեծ նշանակություն ունի գիտական հրատարակությունների ասպարեզում: Քաջատեղյակ լինելով ոլորտի մարտահրավերներին ու խնդիրներին՝ վստահ եմ՝ իրականացնում եք արդյունավետ գործունեություն՝ այդ մարտահրավերներին դիմակայելով և խնդիրներին ճիշտ լուծում տալով:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ Ձեզ, մաղթում հանդեսի շուրջ աշխատող բոլոր մասնագետներին բեղուն գործունեություն, նորանոր մտահաղացումներ և հաջողություններ:

Միեր Հովհաննիսյան  
ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն

\* \* \* \*

Սրտանց շնորհավորում եմ «Լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածուի լույս ընծայման տասներորդ տարեդարձի առթիվ և մաղթում երկարակեցություն, աշխատանքային մեծ հաջողություններ՝ ի շահ Արցախի բարօրության և շենացման:

Սերգեյ Աղաջանյան  
ԲՈՀ-ի հասարակական գիտությունների բաժնի պետ,  
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

\* \* \* \*

Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողությունը, ի դեմս ձեզ, շնորհավորում են ԼՂՀ Մետրոպ Մաշտոց Համալսարանի գիտական հոդվածների ժողովածուի 10-ամյա հոբելյանի առթիվ:

«Լրատու»-ի խորհրդի հարգելի՛ նախագահ, գլխավոր խմբագիր և խմբագրական խորհրդի հարգարժան անդամներ, «Լրատու» ժողովածուն Արցախի լավագույն հասարակագիտական և հայագիտական պարբերականներից է: Հիմնվել է 2006թ. որպես պարբերաբար հրատարակվող գիտական հոդվածների ժողովածու: (Սկզբնական շրջանում տարին 3-ից 4 պարբերականությամբ, ապա՝ 1): Ժողովածուն խմբագրում է պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արարատ Վարդանյանը:

Ժողովածուն տպագրել ու տպագրում է պատմության, փիլիսոփայության, հասարակագիտության, բանասիրության, կրթության, մանկավարժության և հոգեբանության, քաղաքագիտության, իրավագիտության, տնտեսագիտության, լրագրության, միջազգային հարաբերությունների և մշակույթի վերաբերյալ հոդվածներ ու հրապարակումներ, արխիվային նյութեր, հասարակագիտական և հայագիտական լրատվություն: Այդ հոդվածների



**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

բովանդակության էական մասն են հայագիտական ուսումնասիրությունները: Ժողովածուի էջերում տպագրվել և շարունակում են տպագրվել արդիական հարցադրումներով և նորոպի մեկնաբանություններով հազեցած բազմաթիվ արժեքավոր հետազոտություններ, ինչպես, օրինակ, Հայկական հարցի, ցեղասպանության, Հայաստանի առաջին, երկրորդ և երրորդ հանրապետությունների պատմության, հայ գաղթօջախի և Սփյուռքի պատմության, մշակույթի, Արցախի պատմության, Արցախյան պատերազմի և այլնի վերաբերյալ: «Լրատու»-ի «Հողվածներ», «Սեր հորեյարները», «Գրախոսություններ», «Հաղորդումներ» և այլ բաժիններում ներկայացված են հայագիտական ու հասարակագիտական հետազոտությունները, ինչպես և տրվում է դրանց գիտական գնահատականը:

«Լրատու»-ի էջերում աճել և հասունանում է հայագետների և հասարակագետների, այդ թվում պատմաբանների նոր սերունդ: Ժողովածուին աշխատակցում են ոչ միայն հայրենական, այլև Սփյուռքի և օտարազգի գիտնականներ: Այստեղ տպագրվում են հայերեն, ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով հայագիտական նյութեր: Ժողովածուն տպագրվում է ՀՀ-ում և արտասահմանյան տարբեր երկրներում:

*Սիրելի բարեկամներ,*

«Լրատու»-ի անցած ուղու գնահատումը կարևոր է ոչ միայն արածներն ի մի բերելու, անելիքները հստակեցնելու, այլև ասպզան նախանշելու տեսանկյունից:

Ուրախությամբ պետք է նշել, որ գիտական ժողովածուի խորհրդի նախագահը, գլխավոր խմբագիրներն ու խմբագրական կազմն անցած մեկ տասնամյակի ընթացքում նվիրումի և մաքառումի արդյունքում կարողացել են ասպահովել «Լրատուի» լուրջ ու ծանրակշիռ տեղը Հայաստանի Հանրապետության հանդեսների շարքում:

*Հարգարժան Արարատ Վարդանյան,*

Մեկ տասնամյակի բարձրունքից հայացք նետելով Ձեր խմբագրած «Լրատու» գիտական ժողովածուի անցած ուղուն՝ ֆակուլտետի կոլեկտիվն ուրախությամբ նշում է, որ այն եղել է արգասաբեր և արդյունավետ: Թող առաջիկա տասնամյակները Ձեր դեկավարած հանդեսին բերեն նորանոր հաջողություններ՝ ի փառս հայագիտության և մեր անկախ հանրապետության:

*Էդիկ Մինասյան*

*ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան,  
պատմագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

\* \* \* \*

Շնորհավորում են բոլորին պարբերականի 10-ամյակի առիթով: Յուրաքանչյուր հանդեսի ծնունդ մեզ համար իրականում տոն է: Որովհետև իր ծնունդով հանդեսը վկայում է հայ մտքի առողջությունն ու արարումի արգասավորությունը:

«Լրատուն» յուրօրինակ է նրանով, որ Արցախի գիտակրթական կյանքի ազդարարներից է, նրա անվամբ մեր հայկական ընդհանուր պարբերականների ցանկը դառնում է ավելի ամբողջական:

Խմբագրական խորհրդի անդամներին, հողվածագիրներին մաղթում են արարումի անսպառ եռք, ու թող Լրատուի ճանապարհի ուղղորդը միշտ լինի գիտական առողջ միտքն ու ազգային շահը:

*Գեղամ Պետրոսյան*

*ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան,  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

\* \* \* \*

Ընդունեք ջերմ շնորհավորանքներս «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածուի հրատարակության 10-ամյակի կապակցությամբ: «Լրատու»-ն ստեղծման օրվանից նվիրված է եղել հայագիտության և գիտության տարբեր ոլորտների լուսաբանմանը: Պարբերականում տեղ գտած հոդվածներն աչքի են ընկնում մասնագիտական բարձր մակարդակով և հրատարակած նյութերի հրատապությամբ: Առանձնապես ուզում եմ նշել այն անուրանալի դերը, որն ստանձնել է «Լրատու»-ն ինչպես սկսնակ, այնպես էլ փորձառու հետազոտողների գիտական աշխատանքներն ընթերցողների լայն շրջանակին ներկայացնելու գործում:

Կրկին շնորհավորում եմ հոբելյանի կապակցությամբ և ցանկանում հետագա արգասաբեր ընթացք՝ ի փառս գիտության և Արցախի Հանրապետության:

